



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



ՏԻԳՐԱՆ ԵՓՐԵՄՅԱՆ

— ԱՄՆ —

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ



**YEREVAN STATE UNIVERSITY
AMERICAN STUDIES CENTER**

TIGRAN YEPREMYAN

**HISTORY OF THE UNITED
STATES OF AMERICA**

Textbook

**YEREVAN
YSU PRESS
2024**

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՄԵՐԻԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

ՏԻԳՐԱՆ ԵՓՐԵՄՅԱՆ

ԱՄՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Դասագիրք

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
2024

ՀՏԴ 94(73)(075.8)
ԳՄԴ 63.3(7ԱՄՆ)g73
Ե 987

*Հրատարակության է երաշխավորել
ԵՊՀ գիտական խորհուրդը:*

Խմբագիրներ՝ պ.գ.դ., պրոֆեսոր Ալբերտ Ա. Ստեփանյան
պ.գ.դ., պրոֆեսոր Ֆիլիպ Վանդերմիր (ԱՄՆ)

Գրախոսներ՝ պ.գ.դ., պրոֆեսոր Սթիվեն Բատալդեն (ԱՄՆ)
ք.գ.թ. Գոռ Պետրոսյան

Եփրեմյան Տիգրան
Ե 987 ԱՄՆ պատմություն / Տ. Եփրեմյան.- Եր.: ԵՊՀ հրատ.,
2024, 544 էջ:

Սույն դասագիրքը ներկայացնում է ԱՄՆ պատմության կառուցակազմիկ շրջափուլերը՝ գաղութատիրության դարաշրջանից մինչև արդի ժամանակներ: Այն ներառում է ամերիկյան ազգաշինության պատմական փորձառությունը՝ տասներեք գաղութների հիմնադրումից մինչև համաշխարհային գերտերություն: Գիրքը նախատեսված է համալսարանական ուսանողների, դասավանդողների և ընթերցողների լայն շրջանակի համար:

Դասագրքի հրատարակությունը ֆինանսավորվել է ԱՄՆ պետքարտուղարության դրամաշնորհի շրջանակում: Այստեղ արտահայտված կարծիքների, բացահայտումների, եզրակացությունների կամ դիրքորոշումների համընկնումը ԱՄՆ պետքարտուղարության դիրքորոշումներին պարտադիր չէ:

ՀՏԴ 94(73)(075.8)
ԳՄԴ 63.3(7ԱՄՆ)g73

ISBN 978-5-8084-2658-0
<https://doi.org/10.46991/YSUPH/9785808426580>

© ԵՊՀ հրատ., 2024
© Եփրեմյան Տիգրան, 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Foreword	11
Խոսք Խմբագրի	13
ՆԱԽԱԲԱՆ	15
ԳԼՈՒԽ 1. Նոր աշխարհ, Նոր Իսպանիա, Նոր Ֆրանսիա, Նոր Անգլիա. ընդհարվող մշակույթներ, մրցակցող կայսրություններ և գաղութացման տարբեր հարացույցներ	20
Առաջին ամերիկացիները.....	20
Նոր աշխարհի հայտնագործումը.....	23
Նոր Իսպանիա	26
Նոր Ֆրանսիա.....	30
Նոր Նիդերլանդներ	32
Գաղութացման անգլիական հարացույցը	33
Վիրջինիա	36
Նոր Անգլիա.....	38
Միջին կամ սեփականատիրական գաղութներ	41
ԳԼՈՒԽ 2. Գաղութային հասարակությունը բրիտանական Ամերիկայում.....	46
Սպառումն ու առևտուրը բրիտանական Ատլանտյան աշխարհում.....	46
Քաղաքական, կրոնական և անհատական ազատության ծգտումը	50
Յոթնամյա պատերազմը	52
ԳԼՈՒԽ 3. Ամերիկյան հեղափոխությունը. անկախության հարացույցը	56
Ամերիկյան հեղափոխության ակունքները	57
Ամերիկյան հեղափոխության պատճառները	60
Անկախության հռչակումը.....	65
Անկախության պատերազմը.....	75
Ամերիկյան հեղափոխության հետևանքները.....	77
ԳԼՈՒԽ 4. Ամերիկյան ազգաշինությունը. համակեցական փոխզիջման հարացույցը և Սահմանադրության ընդունումը	83
Շեյսի ապստամբությունը.....	83
Սահմանադիր համաժողովը.....	85
Սահմանադրության վավերացումը	87
Իրավունքներն ու փոխզիջումները.....	91
Համըլթոնի ֆինանսական համակարգը.....	92

Վիսկիի ապստամբությունը և Ջեյի պայմանագիրը.....	95
Ֆրանսիական հեղափոխությունը և ամերիկյան ազատության սահմանները	98
Կրոնական ազատությունը	102
1800 թվականի ընտրությունները	103
ԳԼՈՒԽ 5. Վաղ հանրապետությունը: Հանրապետության մարտահրավերները և Անկախության երկրորդ պատերազմը	107
Ջեֆերսոնյան հանրապետականությունը	107
Ջեֆերսոնի նախագահությունը.....	109
Աֆրոամերիկացիները և ստրկության մարտահրավերը.....	112
Բնիկ ամերիկացիների իշխանությունը և Միացյալ Նահանգները	113
Անկախության երկրորդ պատերազմը.....	115
ԳԼՈՒԽ 6. Վաղ հանրապետության հասարակական, տնտեսական և կրոնական փոխակերպումները	123
Շուկայական հեղափոխությունը	124
Հյուսիսային ստրկության անկումը և «բամբակյա թագավորության» վերելքը.....	126
Բամբակի հեղափոխությունը.....	127
Աշխատանքի կազմակերպման և ընկերային կյանքի փոփոխությունները	131
Ներգաղթը և արդյունաբերական աշխատանքի աճը.....	133
Կրոնական վերափոխումները	135
«Բարեգործական կայսրություն». ընկերային բարեփոխումների շարժումները.....	138
ԳԼՈՒԽ 7. Ժողովրդավարությունն Ամերիկայում Ջեքսոնի ժամանակաշրջանում	142
Միսսուրիի ճգնաժամը.....	143
Էնդրյու Ջեքսոնի վերելքը	145
Չեյլալացման ճգնաժամը.....	147
Բանկային պատերազմը.....	150
1837 թվականի խուճապը	152
Վիգերի վերելքը.....	154
Հակամասոնները, հականերգաղթյալները և Վիգերի դաշինքը	156
Ռասայական հիմնախնդիրը և Ջեքսոնյան ժողովրդավարությունը.....	157
ԳԼՈՒԽ 8. Մոնրոյի դոկտրինը և ճակատագրի կանխորոշումը. մայրցամաքային ընդլայնումը.....	160

Արտաքին քաղաքական հայեցակարգը. Մոնրոյի դոկտրինը.....	161
Արևմտյան միգրացիան և հնդկացիական տեղահանումը	167
Կյանքն ու մշակույթն Արևմուտքում	175
Ամերիկա-մեքսիկական պատերազմը. դեպի Խաղաղ օվկիանոս	177
Ճակատագրի կանխորոշումը և ոսկու տենդը.....	183
Մոնրոյի դոկտրինը և ճակատագրի կանխորոշումը	184
ԳԼՈՒԽ 9. Հատվածային համակեցական ճգնաժամը. պառակտման մարտահրավերները.....	189
Սեկցիոնալիզմը վաղ հանրապետությունում.....	190
Հատվածային ճգնաժամը.....	195
Մրցակցող հատվածային տեսլականները. ճգնաժամի խորացումը	199
Հատվածային ճգնաժամից դեպի ազգային ճգնաժամ	205
ԳԼՈՒԽ 10. Համադաշնությունն ընդդեմ Միության. Ամերիկյան քաղաքացիական պատերազմը (1861-1865 թթ.)209	
1860 թվականի ընտրությունները և անջատումը	209
Պատերազմ հանուն միության (1861-1863 թթ.).....	214
Պատերազմ հանուն ազատագրության (1863-1865 թթ.)	221
ԳԼՈՒԽ 11. Վերակառուցման ժամանակաշրջանը	227
Վերակառուցման քաղաքականությունը.....	227
Աֆրոամերիկացիների ազատության նշանակությունը.....	234
Վերակառուցումը և կանայք	235
Վերակառուցումը և ռասայական բռնությունը	237
Տնտեսական զարգացումը պատերազմի և վերակառուցման տարիներին	239
Վերակառուցման ավարտը.....	242
ԳԼՈՒԽ 12. «Ոսկեզօծ ժամանակաշրջանը» և Երկրորդ արդյունաբերական հեղափոխությունը.....	246
Արդյունաբերականացումը և տեխնոլոգիական նորարարությունը	247
Ներգաղթը և ուրբանիզացիան	251
Նոր հարավը և ռասայական հիմնախնդիրը.....	253
Կրոն, գենդեր և մշակույթ.....	257
Կապիտալի արշավը և անհավասարության աճը.....	260
Աշխատավորական շարժումը.....	264
Պոպուլիստական շարժումը.....	268
Սոցիալիստները.....	271
Ուիլյամ Ջեյմսի Բրայանը և ոսկու քաղաքականությունը	273

ԳԼՈՒԽ 13. Ամերիկյան կայսրությունը և իմպերիալիզմի դարաշրջանը.....	276
Հնդկացիական պատերազմները և բաշխման ժամանակաշրջանը դաշնային քաղաքականությունը և դիմադրությունը բնիկ Արևմուտքում	277
Արևմուտքի յուրացումը. տնտեսությունը և երկաթուղիները	284
Արևմուտքն իբրև պատմություն. Թրների տեսությունը	287
Ամերիկյան արտաքին միջամտությունների հարացույցները	290
«Ազատության կայսրությունն» իմպերիալիզմի դարաշրջանում.....	293
Թեոդոր Ռուզվելտը և ամերիկյան իմպերիալիզմը.....	298
Հասարակությունը, ներգաղթը և իմպերիալիզմը.....	305
ԳԼՈՒԽ 14. Առաջադիմական ժամանակաշրջանը.....	313
Համախմբում հանուն բարեփոխումների.....	313
Կանանց շարժումները.....	316
Առաջադիմական բնապահպանությունը	325
Զիմ Քրոու Հարավը և աֆրոամերիկացիները.....	328
ԳԼՈՒԽ 15. ԱՄՆ-ն և Առաջին համաշխարհային պատերազմը.....	333
Պատերազմի նախերգանքը	333
Պատերազմը Եվրոպայում.....	338
Ամերիկյան եվրոպական պատերազմում	340
Թիկունքային ճակատը	343
Պատերազմի ավարտը.....	344
Պատերազմը և գրիպի համավարակը	346
Տասնչորս կետերը և Ազգերի լիգան.....	347
Վուդրո Վիլսոնի դոկտրինը և նոր աշխարհակարգը.....	351
Առաջին աշխարհամարտի հետևանքները	358
ԳԼՈՒԽ 16. Նոր ժամանակաշրջանը և Մեծ ճգնաժամը.....	360
Հանրապետական տասնամյակը. «Հախուռն քսանականները»	362
Սպառողական մշակույթը.....	366
Մեծ ճգնաժամի ակունքները	368
Հերբերտ Հուվերի քաղաքականությունը և Մեծ ճգնաժամը	371
Ֆրանկլին Դելանո Ռուզվելտը և Առաջին «Նոր համաձայնությունը»..	377
Երկրորդ «Նոր համաձայնությունը» (1935-1936 թթ.)	385
«Նոր համաձայնության» եզրափակումը (1937-1939 թթ.).....	390
ԳԼՈՒԽ 17. ԱՄՆ-ն և Երկրորդ համաշխարհային պատերազմը.....	393
Խաղաղօվկիանոսյան պատերազմի ակունքները	393

Եվրոպական պատերազմի ակունքները.....	395
Միացյալ Նահանգները և Եվրոպական պատերազմը.....	398
Միացյալ Նահանգները և Ճապոնական պատերազմը.....	403
Պատերազմական ժամանակի տնտեսությունը	405
Պատերազմական ժամանակի հասարակությունը	407
Հետպատերազմյան աշխարհակարգի ճանապարհին	412
ԳԼՈՒԽ 18. Սառը պատերազմը և գաղափարաբանական առճակատումը.....	416
Սառը պատերազմի քաղաքական, տնտեսական և ռազմական չափումները	416
Սառը պատերազմը և տեխնոլոգիական առաջընթացը. սպառազինությունների և տիեզերական մրցավազքը	422
Սառը պատերազմի «կարմիր վախը» և լիբերալ հակակոմունիզմը.....	425
Ապագադրությամբ և «Ամերիկյան դարի» համաշխարհային հասանելիությունը.....	432
ԳԼՈՒԽ 19. Առատության հասարակությունը և քաղաքացիական իրավունքների ժամանակաշրջանը	438
Արվարձանների վերելքը	438
Առատության հասարակության մշակույթը	442
Առատության հասարակության քաղաքականությունը և գաղափարաբանությունը.....	445
Քենեդիի նախագահությունը և Կարիբյան ճգնաժամը.....	448
Քաղաքացիական իրավունքների շարժումը	451
Լինդոն Ջոնսոնի «Մեծ հասարակությունը»	459
ԳԼՈՒԽ 20. Վիետնամից Ուոթերգեյթ և լճացում	462
Վիետնամի պատերազմը և ամերիկյան ներքաղաքական լարվածությունը.....	462
Հասարակական և մշակութային բողոքը. 1968 թվականի ճգնաժամը.....	466
Ռիչարդ Նիքսոնի վերելքն ու անկումը	468
Ապարդյունաբերականացումը և Արևագոտու վերելքը	472
Լճացում և գնաճ՝ ստագֆլյացիա. թշվառության ինդեքսը.....	477
ԳԼՈՒԽ 21. Պահպանողականությունը ներլիբերալ ժամանակաշրջանում. Աջերի հաղթարշավը.....	483
Պահպանողականության վերելքը	484
Քարթերի նախագահության տարիների պահպանողականությունը ...	489

«Նոր աջերն» իշխանության մեջ. Ռեյգանի հեղափոխությունը.....	492
Հասարակական-տնտեսական և մշակութային կյանքը.....	498
Ռեյգանի արտաքին քաղաքականությունը	502
ԳԼՈՒԽ 22 . Նոր աշխարհակարգը. XXI դարի մարտահրավերները...	508
Միակ գերտերությունը և նոր աշխարհակարգը	508
Բուշի նախագահությունը. ահաբեկչության դեմ պատերազմը	516
Համաշխարհային տնտեսական ճգնաժամը.....	522
Օբամայի նախագահությունը.....	524
Թրամփի նախագահությունը.....	528
ՔՈՎԻԴ-19-ի համավարակը	531
XXI դարի մարտահրավերները. նոր հորիզոններ.....	532
SUMMARY	539
Հանձնարարվող գրականության ցանկ	541

Foreword

Choosing an American history textbook is a complicated decision for any instructor. There are many options with differing perspectives and foci, and textbooks tend to be extremely expensive for students. Over the course of several decades scholars and publishers have attempted to provide free texts, including the one available some years ago from the U.S. Department of State. While a laudable goal, those texts were usually thin, both in size and content, and not particularly useful for a regular American history academic course.

The options changed dramatically in 2019 when Stanford University Press published *The American Yawp* (available online at <http://www.americanyawp.com/>). This full-length, exceedingly well-written, scholarly, authoritative text is the collaborative effort of a large number of prominent historians. In addition to 2 editors and a 40-person editorial board of well-known scholars, it was created with the support of 29 digital content advisors, 30 chapter editors, 7 media curators, and 338 contributors.

Most importantly, it is an “open” online textbook, meaning that it is free and available for use in whole, or in part. As the authors note, “*The American Yawp* is an open resource: you are encouraged to use it, download it, distribute it, and modify it as you see fit. The project is formally operated under a Creative Commons Attribution-Share Alike 4.0 International (CC-BY-SA) License and is designed to meet the standards of a ‘Free Cultural Work.’ We are happy to share it and we hope you do the same” (quotation from “The American Yawp: About,” online at <http://www.americanyawp.com/text/about/>, accessed on 7/11/2024).

The American Yawp, a title drawn from a line by the American poet Walt Whitman, provides ideal options for Yerevan State University’s American Studies program. The text is both authoritative and free, and it was possible to select all or only portions of chapters to cover the subjects of primary interest to the project. In keeping with this goal, Professor Philip Vander Meer selected parts of relevant chapters from the text, which Dr. Tigran Yepremyan used as a base text in preparing his own American history text in Armenian. The original idea for this Armenian text dates from the fall of 2021 when Dr. Yepremyan was a scholar-in-residence at Arizona State University. His text is also complemented by *America’s Public Life: A History of Democracy in Documents*, a volume of original source materials in English prepared for the

YSU American Studies Center by Professor Vander Meer.

We are delighted that this American history textbook is now being published in an accessible Armenian edition. Major credit is owing both to the Yerevan State University American Studies Center that commissioned its preparation and, especially, to Dr. Yepremyan for such a significant achievement. Congratulations!

*Stephen Batalden
Philip Vander Meer
Arizona State University
February 2024*

Խոսք խմբագրի

Դիտարկվող դասագիրքն աննախադեպ է մեզանում: Ինդիր ունի հայ ընթերցողին ներկայացնելու ԱՄՆ-ի պատմականորեն կարճ, բայց հույժ ներունակ ուղին՝ հյուսիսամերիկյան գաղութների էթնիկ համախմբումից, ազգային ինքնության հաստատագրումից, ընտրախավի ձևավորումից, ընկերային-պետական կառույցի համաբերումից մինչև ակնառու նվաճումներ գիտության և տեխնոլոգիաների, մշակույթի և կրթության, իրավական ազատությունների և պետականաշինության այլևայլ ասպարեզներում: Շնորհիվ դրանց՝ ԱՄՆ-ն, անցնելով բազում դժվարությունների միջով, դարձավ արդի աշխարհի առաջատար քաղաքակրթական բևեռներից մեկը:

Տվյալ իրողության գիտակցումով է համաբերված դասագրքի իմաստային կառույցը: Խորքային առումով վերջինիս կիզակետը ամերիկյան ինքնության պատմական հոլովույթն է, և վերը հիշատակված համակեցական ավգորիթմները նրա կարևորագույն բաղադրիչներն են: Այլով բանիվ՝ առաջարկվում է ամերիկյան պատմության մի ըմբռնում, որ ագուցված է ըստ մարդակենտրոնության սկզբունքի: Ներգաղթյալներ, էթնիկ-ռասայական-կրոնական խմբեր, հասարակական դասեր, ընտրախավեր, կուսակցություններ, ականավոր պետական այրեր՝ ահա մարդկային այն ատաղձը, որը, չնայած շահերի անժխտելի տարբերություններին, ձևավորեց և զարգացրեց իր միասնական հայրենիքը:

Մյուս հիմնագաղափարը, որը հատկանշելի է դասագրքում, վկայում է այն մասին, որ հընթացս ժամանակի ԱՄՆ-ն կերպափոխվել է՝ շնորհիվ ներքին ու արտաքին ճգնաժամերի ճշգրիտ գնահատության: Ի տարբերություն այլ պատմական միջավայրերի՝ դրանք վերածվել են ԱՄՆ զարգացման խթանների: Այսու երկրի անցյալը և ներկան ցուլանում են իբրև պատմական ընթացք՝ «ճգնաժամից ճգնաժամ»: Եվ ամեն անգամ «ակներև ավարտից» հետո այն ներկայանում է պատմական նոր հանդերձանքով. 18-րդ դար, 60-80-ականներ՝ անկախության պատերազմ և հեղափոխություն, 19-րդ դար, 60-90-ականներ՝ քաղաքացիական պատերազմ և աննախադեպ զարգացում արտադրության ու համակեցական կյանքի ամենատարբեր ասպարեզներում, 20-րդ դար՝ Առաջին աշխարհամարտ և աշխարհաքաղաքական նկրտումների լուրջ փորձարկում, 30-40-ականներ՝ տնտեսական համընդհանուր ճգնաժամ, աշխարհաքաղաքական բևեռացում և Երկրորդ աշխարհամարտ, որից ԱՄՆ-ն դուրս

է գալիս իբրև համաշխարհային գերտերություն, 50–80–ականներ՝ Սառը պատերազմ՝ աշխարհի երկփեղկում, հյուժիչ մրցակցություն բոլոր ասպարեզներում, բայցև՝ գիտատեխնիկական և մշակութային աննախադեպ առաջընթաց, և ԱՄՆ–ն վերածվում է Արևմտյան աշխարհի առաջնորդի: Մեր օրերում երկիրը կրկին կանգնած է համակարգային ճգնաժամի առջև և պետք է համարժեք պատասխաններ մշակի ներքին ու արտաքին, մեծ ու փոքր մարտահրավերներին: Նրա անցած պատմական ուղին լոկ լավատեսություն է ներշնչում...

Եվ դասագրքի վերջին հատկագիծը, որին կցանկանայինք անդրադառնալ, արտահայտում է ԱՄՆ պատմական ընթացքի յուրահատուկ միասնությունը: Աստ բոլոր տարասեռությունները, որոնց մասին խոսվեց վերը, ներգրավված են մեզահամակարգի մեջ. կապը առանձին պատմական անցքերի և կարևորագույն իրադարձությունների միջև անմիջական է: Դրա կարևոր դրսևորումներից մեկը գիտատեխնիկական առաջընթացի ուղղակի ազդեցությունն է առօրեական կյանքի վրա, մյուսը ենթադրում է քաղաքացիների ներգրավվածությունը և պատասխանատվությունը հասարակական կարևորագույն հիմնախնդիրների լուծման մեջ: Ասվածի լավագույն օրինակը՝ ռասայական խտրականության վերացման երկարատև գործընթացն է իր իր տնտեսական, քաղաքական, մշակութային, կրոնական, հոգեբանական–մարդկային չափոյթներով:

Ասվածը մեծապես ազդել է դասագրքի հեղինակի շարադրանքի և ոճի վրա: Մեկնարկելով առանձին փաստերից և իրավիճակներից՝ նա ընթերցողին տանում է դեպի պատմական եզրույթներ, հասկացություններ և հղացքներ: Դա նրան հնարավորություն է տալիս հասնելու պատմության համակարգային–քաղաքակրթական հանգրվանին, երբ առանձին գործիչների ասույթներն ու գործերը հայտնվում են պատմության դատի առաջ: Արված է սա պատմանյութի խորքային ըմբռնմամբ և գիտական ու մանկավարժական պահանջվող տակտով: Եվ պատկերը, կրկնենք մեկ անգամ էլ, հույժ տպավորիչ է:

Մնում է միայն հավելել. ԱՄՆ պատմությունը պարունակում է հարացույցներ արդի բազում հիմնախնդիրների ըմբռնման, ձևակերպման և լուծման դիտանկյունից: Դրանց հանգամանակից յուրացումը կարող է օգտակար լինել հատկապես այն ազգերի համար, որք հանգամանքների բերումով «ուշացել են» նման զարգացումից:

պ.գ.դ., պրոֆ. Ալբերտ Ա. Սպեփանյան
ԵՊՀ համաշխարհային պատմության ամբիոնի վարիչ
Փետրվար, 2024 թ.

ՆԱԽԱԲԱՆ

Դասագիրքը ներկայացնում է ամերիկյան պատմության կառուցակազմիկ շրջափուլերն ու դիտանկյունները գաղութատիրության դարաշրջանից մինչև ներկա ժամանակներ՝ տասներեք գաղութների ստեղծումից մինչև համաշխարհային գերտերություն: Համապարփակ ներկայացվում և վերլուծվում են ամերիկյան հասարակության միասնությունն ու բազմազանությունը, և թե ինչպես են միջազգային հարաբերությունների, աշխարհագրության, էթնիկ պատկանելության, ռասայական, կրոնական, համայնքային, դասակարգային, հասարակական, տնտեսական, մշակութային և մարդկային փորձառությունների տարբերությունները ձևավորել Միացյալ Նահանգների պատմական ըմբռնումը, ինքնըմբռնումը և հավաքական հիշողությունը:

Ներկայացվում է, թե ինչպես են արտաքին քաղաքական հայեցակարգերը, աշխարհաքաղաքականությունը, դասակարգային ու ռասայական հարաբերությունները, ընկերային-իմաստասիրական գաղափարներն ու քաղաքական գաղափարաբանությունները, հասարակական և տնտեսական համակարգերի զարգացումները, գիտական և տեխնոլոգիական նորարարությունները ազդել ամերիկյան պատմության ընթացքի վրա: Իլլումն սրա՝ վերլուծության են ենթարկվել Միացյալ Նահանգների պատմության հիմնարար մի շարք սկզբնաղբյուր-փաստաթղթեր: Համաշխարհային պատմության համատեքստում դիտարկելով ժամանակի և տարածության համաշխարհային փոխազդեցությունները՝ այս բուհական դասագիրքը առավել խորը պատկերացում կտա պատմական, միջազգային, աշխարհաքաղաքական և ընկերային-տնտեսական այն գործոնների մասին, որոնք ձևավորել են ներկայիս Ամերիկայի Միացյալ Նահանգները: Այն հնարավորություն կտա ուսանողներին ուսումնասիրելու ամերիկյան ազգի առաջացումը և պատմական զարգացման ազդակներն ու փուլերը:

Եվ այնուամենայնիվ, ինչ է պատմությունը: Ինչ է նշանակում ուսումնասիրել անցյալը: Պատմությունը միայն դեպքերի, անունների և տարեթվերի պարզ հիշողությունը չէ: Պատմության ուսումնասիրությունը չափազանց համալիր խնդիր է և չափազանց շարժուն գործընթաց, քանզի, ուսումնասիրողներն են ինչ-որ առումով կյանք տալիս անցյալին: Պատմաբաններն առաջադրում են պատմական խնդիրներ, կշռադատում են սկզբնաղբյուրների վկայությունները (նյութեր, որոնք ստեղծվել են ուսումնասիրվող ժամանակաշրջանում), քննում և վիճարկում են մրցակից մեկ-

նաբանությունները՝ փաստարկելով իրենց եզրակացությունները: Պատմությունը, ուրեմն, նաև անցյալի մասին շարունակական տրամասույթ է:

Հին եզրահանգումները ենթարկվում են նոր ապացույցների, նոր հայացքների, նոր հղացքների, նոր տեսությունների և մեկնաբանությունների փորձաքննությանը: Պատմական մեկնաբանությունը պահանջում է մեթոդ, խստապահանջություն, հեռանկար և հակադարձ հեռանկար: Համաշխարհային պատմության ըմբռնման համար չափազանց կարևոր է անդրազգային գործընթացների ուսումնասիրությունը: Առաջնորդների անունները և իրադարձությունների տարեթվերը կարող են չփոխվել, բայց այն կշիռը, որն ուսումնասիրողները հաղորդում են դրանց, և այն համատեքստը, որում դրանք ձևավորվում են, անընդհատ զարգանում են: Այսպիսով, պատմությունը նաև զրույց է անցյալի և ներկայի միջև:

Պատմության ուսումնասիրությունը ոչ մասնագետների շրջանում կարող է զարգացնել տեսական և գործնական էական հմտություններ՝ ուշադիր ընթերցանություն, ստեղծագործական մտածողություն և հստակ հաղորդակցություն: Հատկանշական է իմաստասեր Ջորջ Սանտայանայի նշանավոր ձևակերպումը. «Նրանք, ովքեր չեն կարողանում սերտել պատմության դասերը, դատապարտված են կրկնելու դրանք»: Պատմական ժամանակի զգացողությունը ընձեռում է հեռանկար և համատեքստ, ինչպես նաև գիտակցության, ըմբռնման և մեկնաբանության առավել լայն հնարավորություններ: Այն ազատում է նեղ մասնավոր փորձառություններից՝ հաղորդակից դարձնելով «մարդկության փորձի աշխատանոցին»:

Ի հավելումն վերոհիշյալի՝ ամերիկյան ազգաշինության փորձառությունը պարառում է արևմտյան քաղաքակրթական արժեքների և ընկերային-քաղաքական ու իմաստասիրական մտքի լավագույն նվաճումների կիրարկումը: Դրանք ունեն համապատմական բովանդակություն և նշանակություն, ուստի և համընդհանրական են հանրապետական իդեալների հիման վրա ձևավորված հասարակությունների զարգացման պատմական ուղին ըմբռնելու համար:

Ըստ այդմ՝ գրքում բացահայտվում և բացատրվում են գաղութատիրության, ամերիկյան հեղափոխության և ամերիկյան ազգի ստեղծման հիմքում ընկած հիմնական պատմական գործընթացները, ինչպես նաև ճակատագրի կանխորոշման, ամերիկյան քաղաքակրթական սահմանի դեպի արևմուտք ընդարձակման և ընդլայնման գլխավոր ազդակները: Նաև ներկայացվում և մեկնաբանվում են ամերիկյան պատմության կարևորագույն իրադարձություններն ու գործընթացները, հասարակական համաձայնության և համակեցական տարաձայնությունների, ներհա-

սարակական համաձուլման և տարաբաժանման հիմնական ոլորտները, հատվածային համակեցական ճգնաժամը և Քաղաքացիական պատերազմի խորքային պատճառները, արդյունաբերական հեղափոխությունն ու կապիտալիզմը, Առաջին աշխարհամարտն ու Մեծ ճգնաժամը և դրա հաղթահարման հարացույցը, Երկրորդ աշխարհամարտն ու Սառը պատերազմը, նոր աշխարհակարգն ու հինը, պատմության ավարտն ու պատմության վերադարձը:

Այսպիսով, այս ընդգրկուն համապատկերը հնարավորություն է ընձեռում ավելի խորությամբ ըմբռնելու ԱՄՆ պատմության շարունակականությունն ու փոփոխությունը, ավանդույթն ու նորարարությունը, և թե ինչպես է ԱՄՆ-ն վերափոխվել վաղ հանրապետության հեռանկարից մինչև ներկա ժամանակներ: Հայսմ՝ համաշխարհային պատմության համատեքստում գնահատվում են Միացյալ Նահանգների համաշխարհային, միջազգային, ընկերային-տնտեսական, մշակութային, քաղաքական, քաղաքակրթական և պատմական ժառանգությունը, ինչպես նաև միջմշակութային հանդիպումների ազդեցությունը ամերիկյան հասարակության փոխակերպման վրա:

Սույն գրքի հիմքում ընկած են Սթենֆորդի համալսարանի հրատարակչության ԱՄՆ պատմության երկու լայնածավալ հատորները, որոնք բազմաթիվ պատմաբանների համագործակցության արդյունք են և ստեղծվել են իբրև բաց դասագիրք՝ Ջոզեֆ Լոքի և Բեն Ռայթի խմբագրությամբ: Առաջին հատորը ներկայացնում է Ամերիկայի պատմությունը նախագաղութային շրջանից մինչև Քաղաքացիական պատերազմ և Վերակառուցման ժամանակաշրջան¹: Երկրորդ հատորը շարունակում է մինչև վերջին անցյալը՝ XXI դարի առաջին տասնամյակը²:

Աշխատությունում օգտագործվել են ԱՄՆ պատմության այլ դասագրքեր, գիտական գրականություն, հոդվածներ և սկզբնաղբյուր-փաստաթղթեր: Օգտագործված գրականության շարքում հարկ ենք համարում առանձնացնել Արթուր Շլեզինգերի «Ամերիկյան պատմության փուլերը»³: Առանձին հատվածների համար օգտակար են եղել նաև Հենրի Քիսին-

¹*The American Yawp: A Massively Collaborative Open U.S. History Textbook*, Vol. 1: To 1877 / Edited by Joseph L. Locke and Ben Wright. Stanford, California: Stanford University Press, 2019. 456 p.

²*The American Yawp: A Massively Collaborative Open U.S. History Textbook*, Vol. 2: Since 1877 / Edited by Joseph L. Locke and Ben Wright. Stanford, California: Stanford University Press, 2019. 464 p.

³Arthur Schlesinger Jr., *The Cycles of American History*. New York: Houghton Mifflin Harcourt, 1999.

ջերի⁴, Էրիկ Ֆոների⁵, Ռոբերտ Ռեմինի⁶, Փոլ Բոյերի⁷, Ռենե Ռեմոնդի⁸, Վլադիմիր Սոգրինի⁹ և Էդուարդ Իվանյանի¹⁰ աշխատանքները, ինչպես նաև «Ամերիկյան արտաքին քաղաքականության հանրագիտարանը» և այլ աշխատություններ¹¹:

Օգտագործվել են նաև մի շարք սկզբնաղբյուր-փաստաթղթեր՝ ԱՄՆ անկախության հռչակագիրը, ԱՄՆ Սահմանադրությունը, Ջորջ Վաշինգտոնի հրաժեշտի ուղերձը, Ջեյմս Մոնրոյի ուղերձը (Մոնրոյի դոկտրինը), «Ռուզվելտի ուղղումը»՝ Թեոդոր Ռուզվելտի հետևությունը Մոնրոյի դոկտրինից, Վուդրո Վիլսոնի «Տասնչորս կետերը», ԱՄՆ նախագահների «Միության դրության մասին ուղերձներից» (State of the Union Address)¹² և այլն¹³: Եվ վերջապես, դասագիրքը կրում է նաև «ԱՄՆ պատմություն» առարկայի դասավանդման անձնական փորձառության և իմ մշակած դասախոսությունների ազդեցությունը:

⁴ Kissinger, Henry. *Diplomacy*. New York, Simon & Schuster, 1994.

⁵ Eric Foner, *Give Me Liberty!: An American History*, Full Sixth Edition. New York: W.W. Norton & Company, 2019.

⁶ Robert V. Remini, *A Short History of the United States: From the Arrival of Native American Tribes to the Obama Presidency*. New York: Harper Collins, 2009.

⁷ Paul S. Boyer, *American History: A Very Short Introduction*, Illustrated edition. New York and Oxford: Oxford University Press, 2012.

⁸ Ремонд Рене, *История Соединенных Штатов Америки*. Москва: АСТ Астрель, 2006.

⁹ Согрин В. В., *История США: учебник*. М.: Международные отношения, 2019.

¹⁰ Иванян Э. А., *История США*. Москва: Дрофа, 2004.

¹¹ *Encyclopedia of American Foreign Policy: Studies of the Principal Movements and Ideas*. 2nd ed. Ed. by Alexander DeConde et al. New York, Scribner, 2002.

Grant, Susan-Mary, *A Concise History of the United States of America*. Cambridge Concise Histories. Cambridge: Cambridge University Press, 2012.

Jerald A. Combs, *The History of American Foreign Policy from 1895*, 4th Edition (Routledge, 2012).

Եփրեմյան Տ., «Վուդրո Վիլսոնի դոկտրինը և նոր աշխարհակարգը»: Հոբելյանական գիտական նստաշրջանի հոդվածների ժողովածու: Երևան: ԵՊՀ հրատ., 2011, էջ 144-151:

¹² *Documents for America's History, Volume 1: To 1877*, Seventh Edition. Ed. by Melvin Yazawa, James A. Henretta, Rebecca Edwards, Robert O. Self. Boston and New York: Bedford / St. Martin's, 2011.

Documents for America's History, Volume 2: Since 1865, Sixth Edition. Ed. By Kevin J. Fernlund, James A. Henretta. Boston and New York: Bedford / St. Martin's, 2008.

¹³ Philip Ray VanderMeer, *America's Public Life: A History of Democracy in Documents*. Produced for the Melikian Center, Arizona State University, 2021 (unpublished manuscript, May 17 2023).

Երախտագիտության խոսք

Անխոնջ աջակցության և մեծարժեք խորհուրդների համար առանձնահատուկ շնորհակալություն ենք հայտնում Արիզոնայի պետական համալսարանի պրոֆեսորներ Սթիվեն Բատալդենին և Ֆիլիպ Վանդերմիրին: Այս աշխատանքը հաջողվեց նաև ԵՊՀ ամերիկյան հետազոտությունների կենտրոնի ղեկավարներ Ալեքսանդր Մարկարովի և Վահագն Ագլյանի անմիջական և հետևողական աջակցությամբ: Անչափ արժեքավոր խորհուրդների համար երախտագիտությունս եմ հայտնում ուսուցչիս՝ պրոֆեսոր Ալբերտ Ստեփանյանին, և շնորհակալ եմ Սմբատ Հովհաննիսյանին՝ հույժ օգտակար քննարկումների ու առաջարկների համար:

ԳԼՈՒԽ 1

Նոր աշխարհ, Նոր Իսպանիա, Նոր Ֆրանսիա, Նոր Անգլիա. ընդհարվող մշակույթներ, մրցակցող կայսրություններ և գաղութացման տարբեր հարացույցներ

Եվրոպացիներն Ամերիկյան անվանեցին «Նոր աշխարհ»: Բայց միլիոնավոր բնիկ ամերիկացիների համար, որոնց նրանք հանդիպեցին, այն ամենևին նոր չէր: Մարդիկ Ամերիկյա մայրցամաքում ապրել են ավելի քան տասը հազար տարի: Նրանք խոսում էին հարյուրավոր լեզուներով և ստեղծել էին բազում մշակույթներ: Բնիկ ամերիկացիները կառուցել էին մշտական բնակավայրեր և հետևում էին սեզոնային միգրացիայի օրինաչափություններին: Նրանք վարում էին պատերազմներ իրենց հարևանների հետ և հաստատում խաղաղություն դաշինքների ու դիվանագիտական հարաբերությունների միջոցով, ինչպես նաև զարգացրել էին ինքնաբավ տնտեսություններ և հաստատել առևտրային ցանցերի հսկայական համալիրներ, մշակել էին արվեստի տարբեր ձևեր, մշակութային և հոգևոր արժեքներ:

Սակայն եվրոպացիների ժամանումը և արդյունքում մարդկանց, կենդանիների, բույսերի և մանրէների համաշխարհային փոխանակումը, ինչը գիտնականներն անվանում են Կոլումբոսյան փոխանակում (Columbian Exchange), կամրջեց ավելի քան տասը հազար տարվա աշխարհագրական տարանջատումը, ծնեց խոշորագույն համաճարակներ, կենսաբանական աղետներ և բռնի ներխուժումներ՝ հեղափոխելով համաշխարհային պատմությունը:

Առաջին ամերիկացիները

Ամերիկայի պատմությունը սկսվում է առաջին ամերիկացիներից: Ամերիկայի բնիկ ժողովուրդները հազարամյակների ընթացքում փոխանցել են գրավոր և բանավոր բազմաթիվ պատումներ և պատմություններ իրենց ծագման մասին: Մինչդեռ հնագետներն ու մարդաբանները կենտրոնանում են միգրացիայի պատմության վրա: Ուսումնասիրելով արտեֆակտները, ոսկորները և գենետիկական հետքերը՝ գիտնականները պնդում են, որ Ամերիկյա մայրցամաքը ժամանակին «նոր աշխարհ» է եղել նաև բնիկ ամերիկացիների համար: Համաշխարհային վերջին սառցե դարաշրջանը աշխարհի ջրային մակերևույթի մեծ մասը ծածկել էր հսկայական մայրցամաքային սառցադաշտերով: Քսան հազար տա-

րի առաջ հսկայական սառցաշերտերում պարփակված էր մոլորակի ջրի այնքան մեծ քանակություն, որ համաշխարհային օվկիանոսների մակարդակը շատ ավելի ցածր էր, և ցամաքային կամուրջը միացնում էր Ասիան ու Հյուսիսային Ամերիկան Բերինգի նեղուցով: Տասներկուսից քսան հազար տարի առաջ բնիկ ամերիկացիների նախնիները հատել էին սառույցը, ջրերը և բացահայտել Ասիայի և Ամերիկայի միջև ընկած տարածությունները: Այնուհետև ճանապարհորդել էին Խաղաղ օվկիանոսի ափով, գետերի երկայնքով և բնակություն հաստատել այնտեղ, որտեղ տեղական էկոհամակարգերը բարենպաստ էին:

Սառցադաշտերը նահանջել են մոտ տասնչորս հազար տարի առաջ՝ միջանցք բացելով ավելի տաք կլիմայի և նոր ռեսուրսների համար: Ժամանակակից Չիլիում գտնվող Մոնտե Վերդեում հայտնաբերված գտածոները ապացուցում են, որ մարդկային գործունեությունն այնտեղ սկսվել է առնվազն 14,500 տարի առաջ: Նմանատիպ ապացույցները վկայում են նույն ժամանակաշրջանում Ֆլորիդայի բնակեցված լինելու մասին: Հյուսիս-արևմուտքում բնիկ ամերիկացիների խմբերը շահագործում էին սաղմոնով լի մեծ գետերը: Հարթավայրերում և տափաստանային հողերում որսորդական համայնքները հետևում էին բիզոնների հոտերին և շարժվում ըստ սեզոնային օրինաչափությունների: Լեռներում, անապատներում և անտառներում պալեո դարաշրջանի նրանց նախնիների մշակույթներն ու կենսակերպերը նույնքան բազմազան էին, որքան աշխարհագրությունը: Այս խմբերը խոսում էին հարյուրավոր լեզուներով և ունեին մշակութային տարբեր սովորույթներ:

Հարուստ և բազմազան սննդակարգը նպաստեց բնակչության զանգվածային աճին ողջ մայրցամաքում: Արևելյան և Արևմտյան կիսագնդերում գյուղատնտեսությունն առաջացել է գրեթե միաժամանակ՝ 5-ից 9 հազար տարի առաջ: Ժամանակակից Մեքսիկայի և Կենտրոնական Ամերիկայի մետամերիկացիները Ք.ա. 1200 թվականին ձևավորեցին կիսագնդի առաջին նստակյաց բնակչությունը՝ զարգացնելով եգիպտացորենի մշակությունը: Մետամերիկայի բերրի հողատարածքներում կարելի էր տարին երկու անգամ բերք հավաքել: Եգիպտացորենը բարձր կալորիականություն ուներ, հեշտությամբ էր չորացվում և պահպանվում: Գյուղատնտեսական տեխնոլոգիաների զարգացումները նպաստեցին բնիկ մեծ հասարակությունների ձևավորմանը, այդ թվում՝ Մեքսիկայի հովտում գտնվող Տենչտիտլանում, Միսիսիպի գետի երկայնքով Կահոկիայում և Մեծ հարավ-արևմուտքի անապատային օազիսներում:

900-1300 թվականներին հյուսիսային Նյու Մեքսիկոյում գտնվող Չա-

կո կիրճը (Chaco Canyon) Պուեբլա ժողովուրդների բնակատեղիներից էր, որն ուներ 15,000 բնակչություն: Հսկայական բազմահարկ բնակելի համալիրները, որոնք կառուցված էին ավազաքարերից և փայտանյութից, տեղավորում էին հարյուրավոր մարդկանց: Շենքերից մեկը՝ Պուեբլո Բոնիտոն, ձգվում էր երկու ակր և բարձրանում էր հինգ հարկ: Չակո կիրճի Պուեբլա բնակչությունը բախվեց բնապահպանական մի շարք մարտահրավերների, ինչն ի վերջո հանգեցրեց համայնքի փլուզմանը և նրա բնակիչների գաղթին: 1130 թվականին սկսվեց հիսուն տարվա ծայրահեղ դաժան երաշտ: Դրանից անմիջապես հետո Չակո կիրճը ամայացավ: Հետագայում ազատված տարածքներում հաստատվեցին Ապաչի և Նավախո ցեղախմբերը, որոնք ընդունեցին պուեբլան մի շարք սովորույթներ:

Նույն երաշտը, որը պատուհասել էր Պուեբլոյին, հավանաբար ազդել էր նաև Ամերիկայի Միջին Արևմուտքի և Հարավային Միսսիսիպի ժողովուրդների վրա: Միսսիսիպիները զարգացրել էին ամենամեծ քաղաքակրթություններից մեկը: Մոտավորապես 1000 տարի առաջ Միսսիսիպյան ամենամեծ բնակավայրը՝ Կահոկիան, որը գտնվում էր ժամանակակից Սենթ Լուիսից անմիջապես արևելք, իր զարգացման գագաթնակետին ուներ մինչև 30,000 բնակչություն: Այն չափերով համադրելի էր իր ժամանակի եվրոպական խոշոր քաղաքների հետ: Կահոկիան քաղաքականապես կազմակերպված էր ցեղապետությունների շուրջ՝ հիերարխիկ, կլանային համակարգով, որն առաջնորդներին տալիս էր ինչպես աշխարհիկ, այնպես էլ սրբազան իշխանություն: Միսսիսիպի գետը կարևորագույն առևտրային զարկերակ էր և կենսական նշանակություն ուներ հաղորդակցության համար: Տեղակայված լինելով Միսսիսիպի, Իլինոյս և Միսսուրի գետերի մոտ՝ Կահոկիան առանցքային առևտրային կենտրոն էր: Այս գետերի ավազանում ստեղծված հաղորդակցության ցանցերը ձգվում էին Մեծ լճերից մինչև Ամերիկայի հարավ-արևելք: Մինչև 1300 թվականը երբեմնի հզոր քաղաքն անկում էր ապրել՝ բախվելով էկոլոգիական և քաղաքական մի շարք մարտահրավերների:

Չնայած ընդհանրություններին՝ բնիկ մշակույթները մեծապես տարբերվում էին: Նոր աշխարհը նշանավորվում էր բազմազանությամբ և հակադրությամբ: Այն ժամանակ, երբ եվրոպացիները պատրաստվում էին անցնել Ատլանտյան օվկիանոսը, բնիկ ամերիկացիները խոսում էին հարյուրավոր լեզուներով և ապրում էին տարբեր կենսակերպերով՝ կիսագնդի բազմազան կլիմայական պայմաններին համապատասխան: Որոշներն ապրում էին քաղաքներում, մյուսները՝ որսորդական փոքր համայնքներում: Բնիկ ժողովուրդներն ունեին տեղական յուրահատուկ մշակույթներ

և քաղաքակրթություններ, կազմակերպել էին ցեղային միություններ և ընդարձակ կայսրություններ: Եվրոպացիների գալուստը փոխեց ամեն ինչ:

Նոր աշխարհի հայտնագործումը

Կոլումբոսից շատ առաջ Նոր աշխարհ էին հասել Սկանդինավյան ծովագնացները՝ վիկինգները: Նրանք գաղութներ հիմնեցին Իսլանդիայում և Գրենլանդիայում, և մոտ 1000 թվականին Լեյֆ Էրիկսոնը հասավ ներկայիս Կանադայի Նյուֆաունդլենդ կղզի: Սակայն սկանդինավյան գաղութը ձախողվեց. աշխարհագրորեն մեկուսացված՝ սկանդինավցիները հետ մղվեցին դեպի ծով սահմանափակ ռեսուրսների, անհյուրընկալ եղանակի, սննդի պակասի և բնիկների դիմադրության պատճառով: Այնուհետև խաչակրաց արշավանքները Եվրոպան կապեցին Մերձավոր Արևելքի և Ասիայի հարստության, հզորության և գիտելիքի հետ: Եվրոպացիները նորից հայտնաբերեցին հունական, հռոմեական և արաբական գիտելիքները: Ապրանքների և գիտելիքի տարածումը ոչ միայն նպաստեց Վերածննդի դարաշրջանի սկզբնավորմանը, այլև երկարաժամկետ հեռանկարում խթանեց եվրոպական քաղաքակրթության ընդլայնումը: Ասիական ապրանքները հեղեղեցին եվրոպական շուկաները՝ ստեղծելով նոր ապրանքների պահանջարկ: Այս առևտուրը ստեղծեց հսկայական նոր հարստություն և մրցակցություն առևտրային գերակայության համար: Հզոր արքաների իշխանության ներքո Եվրոպայում մեկնարկեց ազգային պետությունների համախմբման գործընթացը: Կրոնական հակամարտությունները փոխակերպվեցին քաղաքականի, իսկ երկարատև պատերազմները նպաստեցին պետական կառավարման համակարգերի արդիականացմանը:

Իսպանիայում Ֆերդինանդ Արագոնացու և Իզաբելլա Կաստիլացու ամուսնությունը համախմբեց Պիրենեյան թերակղզու երկու ամենահզոր թագավորությունները՝ հիմք դնելով միասնական իսպանական պետությանը: 1492 թվականին իսպանական գահն ավարտեց Ռեկոնկիստան (Reconquista)՝ Պիրենեյան թերակղզուց արտաքսելով մահմեդական նվաճողներին: Այդ նույն տարում Քրիստափոր Կոլումբոսը սկսեց իր նավարկությունը դեպի արևմուտք: Հզորացած Իսպանիան ձգտում էր հասնել առևտրային գերակայության և Ասիայի հարստություններին:

Իսպանիան և Պորտուգալիան, որոնք գտնվում էին Եվրոպայի ծայր արևմուտքում, ապավինում էին միջնորդներին և ավելի բարձր գներ էին վճարում ասիական ապրանքների համար: Ուստի նրանք ավելի կարճ

ճանապարհ էին փնտրում: Եվ այսպես, նրանք իրենց հայացքն ուղղեցին դեպի Ատլանտյան օվկիանոս: Պորտուգալիան մեծ ներդրումներ կատարեց հետախուզության մեջ: Արքայազն Հենրի Ծովագնացը Պորտուգալիայի Սագրեշ թերակղզու վրա գտնվող իր հարուստ առագաստանավային նավահանգստում ներդրումներ կատարեց հետազոտությունների և տեխնոլոգիաների մեջ՝ արձանագրելով տեխնոլոգիական բազմաթիվ նվաճումներ: XV դարում պորտուգալացի նավաստիները կատարելագործեցին կարավելլա առագաստանավերը օվկիանոսային հեռավոր ճանապարհորդությունների համար: Պորտուգալական առևտրային հենակետերը տարածվեցին Աֆրիկայի հսկայական ծովափնյա գծով: 1488 թվականին պորտուգալացի ծովագնաց Բարդուղիմեոս Դիաշը դեպի Հնդկաստան ծովային ուղու որոնումների ընթացքում հայտնագործեց Բարեհուստ հրվանդանը: XV դարի վերջին Վասկո դա Գաման, շրջանցելով Աֆրիկայի ափերը, հայտնաբերեց դեպի Հնդկաստան և ասիական այլ եկամտաբեր շուկաներ տանող ծովուղիները:

Իսպանիան ևս ձգտում էր հայտնաբերել և վերահսկել դեպի ասիական շուկաներ տանող ծովային ճանապարհները: Իտալական ծագումով հմուտ նավագն Բրիստափոր Կոլումբոսը, ով սովորել էր պորտուգալացի ծովագնացների մոտ, համոզեց Իսպանիայի թագավոր Ֆերդինանդին և թագուհի Իզաբելլային նավարկության համար իրեն տրամադրել երեք նավ՝ խոստանալով հայտնաբերել Եվրոպայից Հնդկաստան արևմտյան ճանապարհը: 1492 թվականի հոկտեմբերի 12-ին, երկու ամիս նավարկելուց հետո, Կոլումբոսի արշավախումբն ափ իջավ ժամանակակից Բահամյան կղզիներում: Կոլումբոսը Էսպանյոլա (La Española)՝ Հաիթի կղզում հիմնադրեց հենակետ, թողեց երեսունինը իսպանացիների՝ փառքով և ավարով վերադառնալով Իսպանիա: Կոլումբոսը նախաձեռնեց հետադարձ ճանապարհորդություններ՝ իսպանական գահին խոստանալով ոսկի և ստրուկներ: Կոլումբոսը ստացավ անհրաժեշտ համալրումները՝ տասնյոթ նավով և ավելի քան հազար մարդով վերադառնալով Արևմտյան Հնդկաստան (West Indies): Կոլումբոսը չորս ճանապարհորդություն կատարեց դեպի Նոր աշխարհ: Նա համոզված էր, որ հայտնաբերել է Եվրոպայից Հնդկաստան արևմտյան ճանապարհը և հասել է Արևելյան Հնդկաստան (East Indies): Միայն 1502 թվականին ծովագնաց Ամերիգո Վեսպուչին եզրակացրեց, որ հայտնաբերվել է նոր մայրցամաք, որը կոչվեց Նոր աշխարհ՝ ի տարբերություն եվրոպական Հին աշխարհի, և մի քանի տարի անց Նոր աշխարհին տրվեց «Ամերիկա» անվանումը՝ ի պատիվ նրա:

XVI դարի ընթացքում Իսպանիան իր տիրապետությունը հաստատեց Ամերիկա մայրցամաքի հսկայական տարածքներում՝ դառնալով ժամանակի հզորագույն տերությունը: Այս ժամանակահատվածում Իսպանական կայսրությունը իրեն ենթարկեց գրեթե ողջ Հարավային Ամերիկան: Պորտուգալիան փորձեց մրցակցել նրա հետ՝ 1500 թվականին հայտարարելով Բրազիլիայի միացման մասին: Պորտուգալիայի հաջողությունը հնարավոր չեղավ զարգացնել. 1581 թվականին Պորտուգալիան ևս ընդգրկվեց Իսպանական կայսրության կազմում: Իսպանիան վերջնականապես հաստատվեց Հարավային Ամերիկայում՝ ստեղծելով բազմաթիվ բնակավայրեր, ձուլելով հնդկացիներին, շահագործելով Աֆրիկայից ներկրված սևամորթ ստրուկներին, տարածելով կաթոլիկությունը: Սակայն հիմնական նպատակը Հարավային Ամերիկայից թանկարժեք մետաղների՝ ոսկու և արծաթի ամենահարուստ պաշարների յուրացումն էր:

Չնայած բնիկ բնակչության բազմազանությանը և մի քանի զորեղ կայսրությունների գոյությանը՝ բնիկ ամերիկացիները լիովին անպատրաստ էին եվրոպացիների ժամանմանը: Եվրոպական դաժանություններին գումարվեց կենսաբանությունը: Կտրված Հին աշխարհից, նրա ընտելացված կենդանիներից և ինունաբանական պատմությունից՝ բնիկ ամերիկացիներն ապրում էին զերծ սարսափելի հիվանդություններից, որոնք մոլեգնում էին Ասիայի, Եվրոպայի և Աֆրիկայի բնակչության շրջանում: Բնիկ ամերիկացիները չունեին այն իմունիտետը, որը եվրոպացիներն ու աֆրիկացիները զարգացրել էին մահացու համաճարակների դեմ դարերի ընթացքում, հետևաբար, երբ եվրոպացիները իրենց գալուստով ներմուծեցին ջրծաղիկ, տիֆ, գրիպ, դիֆթերիա, կարմրուկ, հեպատիտ և այլ վարակներ, բնիկ ամերիկացիների ամբողջական համայնքներ պարզապես ոչնչացան համաճարակներից: Շատերը մահացան պատերազմի և ստրկության մեջ, բայց միլիոնավոր մարդիկ մահացան համաճարակներից: Ըստ որոշ հետազոտությունների՝ Ամերիկաների բնակչության մոտ 90 տոկոսը զոհվել է եվրոպական ներխուժման առաջին մեկուկես դարում: Թեև բնիկ ամերիկացիները ուժասպառ էին եղել հիվանդություններից ու պատերազմներից, այնուամենայնիվ դիմադրեցին բռնությանը և հարմարվեցին գաղութատիրության մարտահրավերներին՝ հետագա դարերի ընթացքում շարունակելով ձևավորել կյանքի օրինաչափությունները ողջ Նոր աշխարհում: Բայց եվրոպացիները շարունակում էին ժամանել:

Նոր Իսպանիա

Նոր աշխարհում Իսպանական կայսրությունը տարածվեց Կարիբյան ավազանից: Իսպանացիները հեղեղեցին Նոր աշխարհը՝ հողերի, ոսկու և տիտղոսների ակնկալիքով: Նվաճված տարածքներում նրանք կառավարում էին աշխատանքային հարաբերությունները *էնկոմիենդա* (encomienda) իրավական համակարգի միջոցով, որը ֆեոդալական շահագործման մեխանիզմի կիրառմամբ հնդկացիներին կապում էր հսկայական կալվածքներին: Ըստ այդմ՝ իսպանական գահը մարդկանց շնորհում էր ոչ միայն հողատարածք, այլև հատկացնում նրանց որոշակի թվով բնիկների: *էնկոմենդերոսները* (Encomenderos)՝ գաղութարար ֆեոդալները, դաժան շահագործման և բռնության էին ենթարկում բնիկ աշխատավորներին: Իսպանիայի իշխանությունները 1542 թվականին վերացրին էնկոմիենդան՝ այն փոխարինելով ավելի մեղմ՝ *ռեպարտիմենտոյի* (repartimiento) համակարգով: Այնուամենայնիվ, բնիկ բնակչության գիշատիչ շահագործումը շարունակվեց, երբ Իսպանիան տարածեց իր կայսրությունը Ամերիկա մայրցամաքում:

Իսպանացի նվաճողները՝ կոնկիստադորները (conquistador), Կենտրոնական և Հարավային Ամերիկայում հանդիպեցին հսկայական կայսրությունների և քաղաքակրթությունների: Արևմտյան կիսագնդում ամենահզոր բնիկ քաղաքակրթությունը Ացտեկների կայսրությունն էր: Երբ իսպանացիները ժամանեցին Մեքսիկա, նրանք գտան լայնածավալ քաղաքակրթություն, որը կենտրոնացած էր Տենոչտիտլանի (Tenochtitlán)՝ հոյակերտ մի քաղաքի շուրջը, որը կառուցված էր մի շարք բնական և մարդակերտ կղզիների վրա՝ Տեքսկոկո լճի մեջտեղում (այն ներկայումս գտնվում է Մեխիկոյում): Տենոչտիտլանը, որը հիմնադրվել էր 1325 թվականին, աշխարհի խոշորագույն քաղաքներից էր թե՛ չափերով և թե՛ վեհությամբ: Իսպանացիները դժվարությամբ էին հավատում իրենց տեսածին. 70,000 շենքեր, որոնցում բնակվում էր հավանաբար 250,000 մարդ: Շենքերը կառուցված էին լճի կղզիների վրա և միմյանց կապված էին ճանապարհներով ու ջրանցքներով:

1519 թվականին իսպանացի կոնկիստադոր Էռնան Կորտեսը, ով հարստացել էր Կուբայի գրավման ժամանակ, կազմակերպեց արշավանք Ացտեկների կայսրության դեմ: Նավարկելով 600 մարդով, ձիերով և թնդանոթներով՝ նա ասի իջավ Մեքսիկայում՝ հրամայելով խորտակել նավերը, այդպիսով՝ հետդարձի հնարավորությունը: Խարդավանքների, դաժանությունների և տեղական քաղաքական հակասությունների օգ-

տագործամար նա ձեռք բերեց հազարավոր բնիկ դաշնակիցների, հաղթեց իսպանացի մրցակիցներին և արշավեց դեպի Տենչտիտլան: Այնուհետև Կորտեսը գերեվարեց կայսր Մոնտեսումային և օգտագործեց նրան ացտեկների ոսկու և արծաթի պաշարների ու նրանց հանքերի ցանցի վրա վերահսկողություն հաստատելու համար: 1521 թվականի օգոստոսի 18-ին՝ Ացտեկների կայսրության նվաճումից հետո, ստեղծվեց Նոր Իսպանիայի թագավորությունը, որը 1535 թվականին հաստատվեց իբրև Նոր Իսպանիայի փոխարքայություն (Virreinato de Nueva España): Նոր Իսպանիան ներառում էր հսկայական տարածք՝ ներկայիս Մեքսիկան, ԱՄՆ-ի հարավարևմտյան տարածքների և Կալիֆորնիայի մեծ մասը, Կենտրոնական Ամերիկան, Հարավային Ամերիկայի հյուսիսային հատվածները և խաղաղօվկիանոսյան մի քանի կղզիախմբեր, որոնցից ամենամեծը Ֆիլիպինյան կղզիներն էին:

Ավելի հարավ՝ Հարավային Ամերիկայի Անդյան լեռների երկայնքով, ինկերը կառավարում էին հսկայական լեռնային կայսրություն: Անդյան լեռնաշխարհի իրենց մայրաքաղաք Կուսկոյից նվաճումների, բանակցությունների և ճանապարհների կառուցման միջոցով ինկերը ստեղծել էին հավանաբար 12 միլիոն բնակչությամբ մի կայսրություն, որը տարածվում էր Հարավային Ամերիկայի արևմտյան կեսում՝ ներկայիս Էկվադորից մինչև կենտրոնական Չիլի և Արգենտինա: Բայց ինչպես ացտեկների դեպքում, ինկերի և նվաճված խմբերի միջև լարվածությունը նրանց խոցելի դարձրեց զավթիչների համար: Ջրծաղիկն իսպանացի նվաճողներից առաջ էր ընկել՝ հարվածելով ինկերի կայսրությանը 1525 թվականին: Համաճարակները կիսով չափ կրճատեցին կայսրության բնակչությունը: Կոնկիստադոր Ֆրանցիսկո Պիզարոն իր 168 մարդկանցով շարժվեց հարավ և տիրեց ինկերի կայսրությանը՝ 1533 թվականին գրավելով մայրաքաղաք Կուսկոն:

Իսպանացիները ստեղծեցին հսկայական վարչաքաղաքական աստիճանակարգային համակարգ. թագավորական պաշտոնյաները վերահսկում էին հսկայական տարածքները, մարդկանց և կարգավորում էին ոսկու ու արծաթի արդյունահանումը, վերահսկում ապրանքների փոխադրումը Ատլանտյան օվկիանոսով: Այդ ընթացքում շարունակվում էր իսպանացի վերաբնակիչների հոսքը Նոր աշխարհ: Իսպանացիները հաճախ միայնակ, երիտասարդ տղամարդիկ էին, որ գալիս էին հողի, հարստության ու սոցիալական առաջընթացի տարբեր խոստումների հետևից: Այնուամենայնիվ, հնդկացիները թվով միշտ գերազանցում էին իսպանացիներին, ուստի իսպանացիները և՛ ըստ անհրաժեշտության, և՛

ծրագրված կերպով բնիկ ամերիկացիներին ընդգրկում էին գաղութատիրական կյանքում: Սակայն դա չէր նշանակում հավասարություն: Հետզհետե զարգացած ռասայական աստիճանակարգությունը նշանավորեց հասարակական կյանքը իսպանական Նոր աշխարհում: Ինչպես ավելի ուշ Հյուսիսային Ամերիկայում հաստատված ֆրանսիացիները, իսպանացիները ևս հանդուրժում էին, երբեմն նույնիսկ խրախուսում միջռասայական ամուսնությունները: Կաթոլիկ եկեղեցին հավանություն տվեց միջռասայական ամուսնություններին՝ որպես բարոյական պատվար ընդդեմ անառակության և բռնաբարության:

Այսպիսով, Նոր Իսպանիայի և իսպանական լայնարձակ կայսրության բնիկ բնակչությունն ապահովում էր մշակութային և ռասայական համաձուլման մակարդակ, որը տրամագծորեն տարբեր էր բրիտանական Հյուսիսային Ամերիկայի իրողություններից: Անգլիացիներն իրենց տիրույթներում հետևում էին ռասայական մաքրության և սպիտակամորթների բացարձակ գերակայության սկզբունքներին: Նոր Իսպանիան՝ Իսպանական Հյուսիսային Ամերիկան, ստեղծեց հիբրիդային մշակույթ, որը մասամբ իսպանական էր, մասամբ էլ՝ հնդկացիական: Իսպանացիները ոչ միայն կառուցեցին Մեխիկո քաղաքը Տենոչտիտլանի տեղում, այլև ներառեցին բնիկ ամերիկացիների հասարակական և կենցաղային կենսակերպի տարրեր: Մեքսիկայից Նոր Իսպանիան ընդարձակվեց դեպի հյուսիս: Հսկայական արշավախմբերը, կազմված հարյուրավոր զինվորներից, վերաբնակիչներից, հոգևորականներից և ստրուկներից, հսկայական քանակությամբ անասուններով շարժվում էին մայրցամաքով: 1565 թվականին Պեդրո Մենենդես դե Ավիլեսը Ֆլորիդայում հիմնադրեց Սան Ագուստինը, որը ներկայիս Միացյալ Նահանգների շարունակաբար զբաղեցված ամենահին եվրոպական բնակավայրն է:

Կոլումբոսյան փոխանակումը կերպափոխեց Ատլանտյան օվկիանոսի երկու կողմերը, սակայն տրամագծորեն տարբեր արդյունքներով: Նոր հիվանդությունները Ամերիկա մայրցամաքում ոչնչացրին ամբողջական քաղաքակրթություններ և ժողովուրդներ, մինչդեռ ներմուծված հարուստ կալորիականությամբ նոր սննդամթերքները նպաստեցին եվրոպական բնակչության աճին: Նոր աշխարհի հարստությունները ամրապնդեցին իսպանական միապետությունը: Եվրոպական մյուս երկրները շտապեցին վիճարկվել Իսպանիայի գերիշխող դիրքերը: Պորտուգալիան, Ֆրանսիան, Նիդերլանդները և Անգլիան քայլեր ձեռնարկեցին Նոր աշխարհի իրենց մասնաբաժինը ստանալու համար: Բնիկ ժողովուրդների արձագանքները տարբեր էին՝ սկսած համագործակցության ողջույններից

մինչև զինված դիմադրություն: Սակայն հիվանդությունների արհավիրքը և առևտրային նոր հարաբերությունների հնարավորությունը եվրոպացիներին թույլ տվեցին բնակավայրեր ստեղծել Ատլանտյան աշխարհի արևմտյան եզերքի երկայնքով:

Արշավախմբերը սկսեցին ուսումնասիրել մայրցամաքը և եվրոպացիներին բերել ժամանակակից Միացյալ Նահանգների տարածք՝ կրոնական և տնտեսական գերակայություն հաստատելու հույսով: XVI դարի առաջին կեսին իսպանացի գաղութարարները հաճախակի էին կռվում Ֆլորիդայի բնիկ ժողովուրդների, ինչպես նաև այլազգի եվրոպացիների հետ: 1586 թվականին անգլիացի ծովահեն Ֆրենսիս Դրեյքն այրեց Սան Ագուստին փայտե բնակավայրը: XVII դարի սկզբին Իսպանիայի տարածքը Ֆլորիդայում տարածվում էր Սենտ Ջոնս գետի գետաբերանից հարավ մինչև Սան Ագուստինի շրջակայքը:

1610 թվականին իսպանացիները Նյու Մեքսիկոյում հիմնադրեցին Սանտա Ֆեն՝ ժամանակակից ԱՄՆ-ի հարավ-արևմուտքում առաջին մշտական եվրոպական բնակավայրը: Սակայն փոքրաթիվ իսպանացիներ տեղափոխվեցին այս տարածքներ: Մինչև 1680 թվականը միայն 3000 իսպանացի գաղութարարներ հաստատվեցին Նյու Մեքսիկոյի տարածքում: Իսպանացի միսիոներները դարձան Հյուսիսային Ամերիկայի արևմտյան հատվածի գաղութացման շարժիչ ուժը: Միսիոներները, որոնց մեծ մասը ֆրանցիսկյան կրոնական միաբանության անդամներ էին, Իսպանիայի առաջապահ արշավախմբերն էին Հյուսիսային Ամերիկայում: Կաթոլիկությունն արդարացնում էր իսպանական նվաճումները, իսկ գաղութացումը կրում էր կրոնական հրամայականներ՝ տարածելու կաթոլիկ հավատքը: XVII դարի սկզբին իսպանացի քահանաները տասնյակ առաքելություններ էին հիմնել Ռիո Գրանդե գետի երկայնքով և Կալիֆորնիայում:

Մինչ Իսպանիան թալանում էր Նոր աշխարհը, Հին աշխարհում մոլեգնում էր համաեվրոպական հակամարտությունը Ռեֆորմացիայի և Հակառեֆորմացիայի միջև: Եվրոպական երկու տերություններ միայն՝ Անգլիան և Ֆրանսիան, կարող էին վիճարկել Իսպանիայի դիրքերը: Երբ Եվրոպայում բռնությունը նվազեց, կրոնական և քաղաքական մրցակցությունը շարունակվեց Նոր աշխարհում: Նոր Իսպանիայի հարստությունների շահագործումը Իսպանական կայսրության կողմից ոգեշնչեց եվրոպացի մյուս միապետներին ներդրումներ կատարելու Նոր աշխարհի հետախուզման և նվաճման մեջ: Իսպանական վայրագությունների մասին տեղեկությունները տարածվեցին ողջ Եվրոպայում և մարդասիրական հիմնավորում տվեցին մյուս եվրոպական տերություններին գաղութացման համար:

Նոր Ֆրանսիա

Ֆրանսիական արշավախմբերի գործունեությունը Նոր աշխարհում մեկնարկեց XVI դարի սկզբին: Ֆրանսիացիների վաղ արշավախմբերը փնտրում էին առասպելական Հյուսիսարևմտյան անցումը՝ ջրային ճանապարհը, որն անցնում էր Հյուսիսային Ամերիկա մայրցամաքի հյուսիսով դեպի Ասիա: Չնայած Նոր աշխարհի հարստությանը՝ Ասիայի հարստությունները դեռևս հրապուրում էին եվրոպացիներին: Ենթադրվում էր, թե այդպիսի անցում է Կանադայի Սեն Լորան գետը, որը ձգվում է դեպի մայրցամաքի խորքերը և դեպի Մեծ լճերի ավազանը: XVI դարի վերջին Ֆրանսիան ավելի ակտիվորեն ներթափանցեց Հյուսիսային Ամերիկա, երբ Բուրբոնների արքայատոհմը փոխարինեց Վալուաներին՝ դնելով հզոր բացարձակ միապետության հիմքը:

Ֆրանսիական գաղութային տիրույթները կենտրոնացվեցին գետային ցանցի վրա՝ Սեն Լորանից Միսիսիպի գետով մինչև Նոր Օռլեանի նավահանգիստ: Ֆրանսիական գաղութացումը զարգացավ մասնավոր առևտրային ընկերությունների ներդրումների շնորհիվ: Առևտրականները 1603 թվականին հիմնեցին Պորտ Ռոյալը Ակադիայում և առևտրային արշավախմբեր ձեռնարկեցին Ատլանտյան օվկիանոսի ափով մինչև Քեյփ Քոդ: Մորթու առևտուրը ֆրանսիական գաղութացման շարժիչ ուժերից էր: 1608 թվականին Սամյուել դը Շամպլենի առաջնորդությամբ հիմնադրված Քվեբեկը հիմք դրեց Նոր Ֆրանսիայի (*La Nouvelle-France*) հաստատմանը: Ֆրանսիացի առևտրականները հնդկացիների հետ համագործակցությունը ավելի բարձր էին գնահատում, քան ֆրանսիական գաղութային կայսրության հաստատումն ու ընդլայնումը: Փոքրաթիվ ֆրանսիացիներ մեկնեցին Նոր աշխարհ՝ մշտական բնակություն հաստատելու: Բազմաթիվ հալածյալ ֆրանսիացի բողոքականներ՝ հուգենոտները, ձգտում էին արտագաղթել և հաստատվել Նոր Ֆրանսիայում այն բանից հետո, երբ 1685 թվականին Ֆրանսիան քրեականացրեց բողոքականությունը: Սակայն Նոր Ֆրանսիայում ևս բոլոր ոչ կաթոլիկների հաստատումն արգելված էր:

Ֆրանսիացիների նախապատվություն տալը առևտրին մշտական բնակության հաստատման նկատմամբ խթանեց ավելի համագործակցային և փոխշահավետ հարաբերությունները բնիկ ամերիկացիների հետ: Ինչպես Իսպանիան, այնպես էլ Ֆրանսիան ընդգծում էին հնդկացիների շրջանում կաթոլիկությունը տարածելու առաքելությունը, բայց ի տարբերություն Իսպանիայի՝ ֆրանսիացիները չկարողացան Նոր աշխարհից

անասելի հարստություն կորզել, քանզի տեղի բնիկները թանկարժեք մետաղներ չունեին, ինչպես ացտեկներն ու ինկերը:

Այսպիսով, Նոր աշխարհի յուրացման ֆրանսիական հարացույցը խիստ տարբերվում էր մրցակից իսպանացիների և անգլիացիների գաղութացման հարացույցներից: Ըստ այդմ՝ ֆրանսիացիները համագործակցում էին, իսպանացիները՝ ձուլում և փոխակերպում, իսկ անգլիացիները բնակեցնում էին:

Ըստ երևույթին, ցանկանալով վերացնել «Սև լեգենդի»՝ Նոր աշխարհում իսպանական դաժանությունների վերաբերյալ հակակաթոլիկ քարոզչությունը, ֆրանսիացիներն աշխատեցին զարգացնել համագործակցությունը հնդկացիների հետ: Ճիզվիտ միսիոներները, օրինակ, որդեգրեցին կրոնափոխության տարբեր, առավել մարդասիրական ռազմավարություններ, քան իսպանացի ֆրանցիսկյանները: Իսպանացի միսիոներները հնդկացիներին բերում էին փակ կրոնական առաքելությունների հենակետեր, մինչդեռ ճիզվիտներն ավելի հաճախ ապրում էին հնդկացիական խմբերի հետ կամ նրանց կողքին: Մորթու առևտրական ֆրանսիացիներից շատերը ամուսնանում էին բնիկ ամերիկուսիկների հետ: Հնդկացի կանանց և ֆրանսիացի տղամարդկանց սերունդներն այնքան տարածված էին Նոր Ֆրանսիայում, որ ֆրանսիացիներն այս երեխաների համար մշակեցին անվանում՝ *մետիս* (Métis - իմաստուն):

Հուրոն ժողովուրդը հատկապես սերտ հարաբերություններ էր զարգացրել ֆրանսիացիների հետ, և շատերն ընդունել էին քրիստոնեություն ու զբաղվում էին մորթու առևտրով: Սակայն այս ժողովրդին պատուհասեցին եվրոպական հիվանդությունները և ֆրանս-հոլանդական հակամարտությունը: Այնուամենայնիվ, որոշ բնիկ ժողովուրդներ պահպանեցին դաշինքները ֆրանսիացիների հետ: XVII դարի կեսերին արևելքում հզոր իրոկեզների ճնշումը ալգոնկինյան շատ ցեղերի մղեց դեպի ֆրանսիական տարածք, և նրանք միասին ստեղծեցին ընդհանուր հող կամ «միջին հարթություն»՝ յուրատեսակ միջմշակութային տարածք, որը թույլ էր տալիս կազմակերպել բնիկների և եվրոպացիների արդյունավետ փոխգործակցությունը: Ֆրանսիացի առևտրականները որդեգրեցին բանակցությունների, նվիրատվությունների և միջնորդության ռազմավարությունները, ինչը նրանք ակնկալում էին նաև բնիկ առաջնորդներից: XVII դարի վերջին և XVIII դարի սկզբին Մեծ լճերի ավազանի «միջին հարթությունը» բուռն հաջողություններ արձանագրեց մինչև անգլիական գաղութատիրության հաստատումը, երբ անգլիացի իշխանավորներն ու վերաբնակիչները հեղեղեցին տարածաշրջանը:

Նոր Նիդերլանդներ

Նիդերլանդները՝ մեծ նավատորմով փոքր պետությունը, զգալի գաղութային հաջողություններ արձանագրեց: 1581 թվականին Նիդերլանդները պաշտոնապես անջատվեց իսպանական Հաբսբուրգների տերությունից, հաստատեց բողոքականությունը և նվաճեց եվրոպական նոր ազգերից ամենաազատի համբավը: Հոլանդացիները հաստատեցին հանրապետություն՝ ներկայացուցչական կառավարման համակարգով, որն աչքի էր ընկնում ավելի մեծ կրոնական հանդուրժողականությամբ և խոսքի ազատությամբ, քան կար մյուս եվրոպական երկրներում: Նիդերլանդները կառուցեց իր գաղութային կայսրությունը փորձառու վաճառականների և հմուտ նավաստիների աշխատանքի շնորհիվ: Հոլանդացիները ժամանակի ամենաառաջատար կապիտալիստներն էին և ֆինանսական մեծ ռեսուրսներ կուտակեցին՝ ստեղծելով նորարարական ֆինանսական կազմակերպություններ, ինչպիսիք էին Ամստերդամի ֆոնդային բորսան (Amsterdam Stock Exchange) և Արևելյան Հնդկաստանի ընկերությունը (East India Company):

1609 թվականին հոլանդացիները հանձնարարեցին անգլիացի ծովագնաց Հենրի Հադսոնին հայտնաբերել առասպելական հյուսիսարևմտյան անցումը Հյուսիսային Ամերիկայով դեպի Ասիա: Նա իհարկե ձախողվեց, բայց ևայնպես հայտնաբերեց հետագայում իր անունով կոչված Հուդզոն (Հադսոն) գետը և հաստատեց հոլանդացիների հավակնությունները ժամանակակից Նյու Յորքի տարածքի վրա: Այնտեղ հոլանդացիները հիմնեցին Նոր Նիդերլանդները (Nieuw Nederland)՝ հոլանդական գաղութներից ամենախոշորը Նոր աշխարհում: 1621 թվականին Նիդերլանդները հիմնադրեց հոլանդական Արևմտյան Հնդկաստանի ընկերությունը (West India Company) և գաղութներ հիմնեց Աֆրիկայում, Կարիբյան ավազանում և Հյուսիսային Ամերիկայում: Մանհեթեն կղզին հոլանդացիների համար մեկնարկային հարթակ դարձավ Կարիբյան ավազանում գաղութներ և առևտրային դիրքեր ձեռք բերելու համար: Ի տարբերություն իսպանացիների և անգլիացիների՝ հոլանդացիները մշակեցին այլ ուղեցույցներ Նոր Նիդերլանդների ձևավորման համար, որոնք համապատասխանում էին նշանավոր իմաստասեր և իրավագետ Հուգո Գրոտիուսի գաղափարներին, ով հավատում էր, որ բնիկ ժողովուրդներն ունեն ինքնիշխանության իրավունք և բոլոր բնական իրավունքները, ինչ եվրոպացիները: Գաղութի առաջնորդները պնդում էին, որ հողը պետք է գնվի և ոչ թե նվաճվի: 1626 թվականին Պիտեր Մինյուիթը «գնեց» Մանհեթենը Մանսի հնդկացիներ

րից, թեև գործարքի արդարության որոշ հարցեր շարունակում են մնալ չբացահայտված: Նոր Նիդերլանդները դարձավ եվրոպական այլ երկրներից ժամանող բողոքականների ապաստարան:

Ինչպես ֆրանսիացիները, այնպես էլ հոլանդացիները ձգտում էին շահույթի, ոչ թե նվաճման: Բնիկ ժողովուրդների հետ առևտուրը դարձավ Նոր Նիդերլանդների առանցքային տնտեսական գործունեությունը: Առևտրային ցանցերը զարգացնելուց բացի, հոլանդացիները նաև հիմնեցին ֆերմաներ, բնակավայրեր և փայտանյութի ճամբարներ: Արևմտյան Հնդկաստանի ընկերության տնօրենները ներդրեցին հովանավորչական համակարգ գաղութացումը խրախուսելու համար: Հովանավորչական համակարգը մեծ կալվածքներ էր շնորհում հարուստ հողատերերին, որոնք իրենց հերթին պետք է վերաբնակիչներ բերեին իրենց հողերի վրա աշխատելու համար: Հոլանդական բնակավայրերի ընդլայնումը հանգեցրեց տեղի հնդկացիների հետ հարաբերությունների վատթարացմանը: Իսկ երբ հոլանդական բնակավայրերը հատեցին բնիկ ժողովուրդների բնակավայրերի և որսի հողերի սահմանները, զինված հակամարտություններ բռնկվեցին:

Բացի այդ, աշխատուժի պակասն էր խոչընդոտում հոլանդական գաղութի հետագա զարգացումն ու ընդլայնումը: Հովանավորչական համակարգը չկարողացավ ապահովել բավարար թվով հողի վարձակալներ, և գաղութը չկարողացավ ներգրավել անհրաժեշտ թվով վերաբնակիչներ: Այսպես, 1626 թվականին գաղութը ներմուծեց Արևմտյան Հնդկաստանի ընկերությանը պատկանող սևամորթ ստրուկների, այն նույն տարում, երբ Պիտեր Մինյուլիթը գնեց Մանհեթենը: Ստրուկներն օգտագործվեցին Նոր Ամստերդամի (ներկայիս Նյու Յորք քաղաքը)՝ ներառյալ գաղութի հյուսիսային եզրի երկայնքով պաշտպանական պատի (ժամանակակից Ուոլ Սթրիթի տեղում) կառուցման համար: Նրանք կառուցեցին ճանապարհներ և աշխատեցին Նոր Ամստերդամի նավահանգստում: Ռասայական խառնուրդից խուսափելու համար հոլանդացիները ներմուծեցին ստրկացված կանանց: 1650 թվականին Նոր Ամստերդամում կար առնվազն հինգ հարյուր աֆրիկացի ստրուկ:

Գաղութացման անգլիական հարացույցը

Բողոքական ռեֆորմացիան ցնցել էր Անգլիան, երբ 1558 թվականին Եղիսաբեթ I-ը (1533-1603 թթ.) բազմեց անգլիական գահին: Անգլիական մերկանտիլիզմը՝ պետության կողմից աջակցվող արտադրական և

առևտրային համակարգը, ստեղծում և պահպանում էր վաճառահանման շուկաները: Շուկաներն իրենց հերթին ապահովում էին սպառողների և աշխատավորների կայուն առաջարկ, խթանում էին տնտեսական ընդլայնումը և ավելացնում անգլիական հարստությունը: Անգլիայի բնակչությունը 1500 թվականի 3 միլիոնից XVII դարի կեսերին հասավ 5 միլիոնի: Սա հանգեցրեց հողի արժեքի աննախադեպ աճի, ինչը համընկավ գյուղատնտեսական եկամուտների կտրուկ անկմանը: Վարձավճարներն ու գները բարձրացան, սակայն աշխատավարձերն ու եկամուտները լճացել էին: Ավելին, հասարակական հողատարածքները սպառվում էին, որին նպաստեց նաև անգլիացի հողատերերի՝ գյուղատնտեսությունից անասնապահության անցումը: Սա իր հերթին նպաստեց գործազուրկ և հողազուրկ գյուղացիության աճին, որոնք լցվեցին քաղաքները: Բնակչության կեսն ապրում էր ծայրահեղ աղքատության մեջ:

Այս պայմաններում Անգլիայում աճում էր աջակցությունը Նոր աշխարհի գաղութացման գաղափարին: Սակայն անգլիական գաղութացման կողմնակիցները միշտ ավելին էին քարոզում, քան զուտ տնտեսական ու ազգային շահերն էին: Շատերը պնդում էին, որ գաղութացումը կփառավորի Աստծուն, Անգլիան և բողոքականությունը՝ քրիստոնեացնելով Նոր աշխարհի հեթանոս ժողովուրդներին: Ավելին, գաղութացման գաղափարախոսները հայտարարում էին, որ Նոր աշխարհի հնդկացիների քրիստոնեացումը Աստծու կամքն է և կփառավորի Անգլիայի «Կույս թագուհուն»՝ Եղիսաբեթ I-ին, որին Անգլիայում ոմանք գրեթե աստվածացնում էին:

Գաղութացման գաղափարախոսները պնդում էին, որ անգլիական գաղութացումը կապացուցի իսպանացիների և կաթոլիկության նկատմամբ անգլիական ու բողոքական գերազանցությունը և մարդասիրությունը: Այս վեհ հոռետորաբանությունը քողարկում էր ինքնաշահ տնտեսական դրդապատճառները, որոնք Անգլիային բերեցին Նոր աշխարհ: Անգլիայի վաճառականները հարստություն կառուցելու նոր ծրագրեր ունեին: Համագործակցելով կառավարության կողմից հովանավորվող նոր առևտրային մենաշնորհների հետ և կիրառելով ֆինանսական նորարարություններ, ինչպիսիք էին բաժնետիրական ընկերությունները՝ Անգլիայի վաճառականները ձգտում էին բարելավել և զարգացնել հոլանդական տնտեսական համակարգի հաջողությունները: Բաժնետիրական ընկերությունները՝ արդի կորպորացիաների նախորինակները, դարձան գաղութացման առաջնային գործիքները: Թագավորական մենաշնորհների, ընդհանուր շահույթի և կառավարվող ռիսկերի առկայության պարագայում շահույթ

հետապնդող այս ձեռնարկությունները կարող էին ներգրավել և կառավարել գաղութացման համար անհրաժեշտ հսկայական կապիտալը:

1606 թվականին Ջեյմս I-ը հաստատեց Վիրջինիա ընկերության (Կոյս թագուհու՝ Եղիսաբեթ I-ի պատվին) ձևավորումը: Եղիսաբեթ թագուհին հովանավորում էր նավաստիներին և ծովահեններին, ինչպիսիք էին Ջոն Հոքինսը և Ֆրենսիս Դրեյքը, որպեսզի թալանեին իսպանական նավերն ու քաղաքները Ամերիկայում: Այս վարձկան ծովահենները զգալի շահույթ էին ապահովում ինչպես իրենց, այնպես էլ անգլիական գահի համար: Ըստ էության, Անգլիան կիրառում էր ծովահենությունը այնպիսի մասշտաբներով, «որ հանցագործությունը փոխակերպում էր քաղաքականության»: Ֆրենսիս Դրեյքը հետապնդում էր իսպանական նավերին Արևմտյան կիսագնդում և ասպատակում դրանք մինչև Պերուի ափերը: 1580 թ. Եղիսաբեթ թագուհին իր հմուտ ծովահենին պարգևատրեց ասպետական կոչումով:

Անգլո-իսպանական բողոքական-կաթոլիկ լարվածությունն էլ ավելի սրվեց Շոտլանդիայի կաթոլիկ թագուհի Մերիի մահապատժից հետո: 1588 թվականին Իսպանիայի արքա Ֆիլիպ II-ն ուղարկեց հռչակավոր իսպանական *Արմադան* (Armada)՝ նավատորմը. 130 նավերով, 8000 նավաստիներով և 18,000 զինվորներով իսպանական արմադան սկսեց արշավանքը՝ ոչնչացնելու բրիտանական նավատորմը և տապալելու Եղիսաբեթին: Լինելով կղզի պետություն՝ Անգլիան առևտրի և տարածքային ընդլայնման համար ևս հզոր նավատորմ ուներ: Թեև Անգլիան ավելի քիչ նավեր ուներ, քան Իսպանիան, բայց դրանք ավելի փոքր էին և արագընթաց: Նրանք հաջողությամբ հետ մղեցին հարձակումը՝ ստիպելով իսպանացիներին նահանջել Նիդերլանդներ համալրման համար: Բայց պատահական փոթորիկը, որն Անգլիայում անվանում էին «աստվածային քամի», ոչնչացրեց իսպանական նավատորմի մնացած մասը: Արմադայի ոչնչացումը փոխեց համաշխարհային պատմության ընթացքը. այն ոչ միայն փրկեց Անգլիան և անգլիական բողոքականությունը, այլ նաև բացեց ծովերը անգլիական ծավալապաշտության առջև և ճանապարհ հարթեց Անգլիայի գաղութային կայսրության ստեղծման համար: 1600 թվականին Անգլիան արդեն պատրաստ էր հաստատելու իր գերիշխանությունը Հյուսիսային Ամերիկայում:

Նոր աշխարհի գաղութացման անգլիական հարացույցը խիստ տարբեր էր իսպանական կամ ֆրանսիական գաղութացման հարացույցներից: Հատկանշական է, որ Անգլիան երկար ժամանակ փորձում էր նվաճել կաթոլիկ Իռլանդիան: Իռլանդացիներին ինտեգրվելու և նրանց բողոքական-

նության դարձի բերելու փոխարեն Անգլիան ավելի հաճախ պարզապես բռնությամբ հողեր էր գրավում և դուրս մղում իռլանդացի բնակիչներին՝ բռնի տեղահանելով կամ սպանելով նրանց: Այս նույն մարտավարությունը հետագայում կիրառվելու էր Հյուսիսային Ամերիկայում բնիկ ամերիկացիների նկատմամբ:

XVI դարի վերջում Համֆրի Գիլբերտը փորձեց անգլիական գաղութ հիմնել Նյուֆաունդլենդում, սակայն չհաջողեց: 1587 թվականին Ջոն Ուայթը անգլիացի 150 գաղութարարներից բաղկացած խմբով վերահաստատվեց Հյուսիսային Կարոլինայի Ռոանոկ կղզու լքված բնակավայրում: Մատակարարման պակասը ստիպեց Ուայթին վերադառնալ Անգլիա՝ համալրումներ ստանալու համար, սակայն իսպանական արմադան և բրիտանական ռազմածովային ուժերի մոբիլիզացումը նրան մի քանի տարով արգելափակեցին Բրիտանիայում: Երբ նա վերջապես վերադարձավ Ռոանոկ, գաղութն ամբողջովին լքված էր. հանգամանքները մնում են անհայտ: 1603 թվականին Եղիսաբեթ թագուհին վախճանվեց, և այդ ժամանակամիջոցին դեռևս ոչ մի հյուսիսամերիկյան անգլիական մշտական գաղութ չէր ստեղծվել: 1604 թվականին Ջեյմս I-ը վերջապես հաշտություն կնքեց Իսպանիայի հետ՝ հնարավորություն ստեղծելով գաղութային ծավալման համար: 1606 թվականին թագավորական հրովարտակով հիմնադրված Վիրջինիա ընկերությունը՝ ոգեշնչված Կորտեսից և իսպանական նվաճումներից, հույս ուներ Նոր աշխարհում գտնել ոսկի և արծաթ, ինչպես նաև արժեքավոր առևտրային այլ ապրանքներ՝ ապակի, երկաթ, մորթի և այլն: Ընկերությունը նախատեսում էր հայտնաբերել նավարկելի գետ՝ խոր նավահանգստի հնարավորությամբ, իսպանացիների աչքից հեռու մի վայրում, որտեղ նրանք կարող էին հարստություն կորզել Նոր աշխարհից:

Վիրջինիա

1607 թվականի ապրիլին անգլիացիները երեք նավերով՝ «Սյուզան Կոնստանտ», «Գոդսպիտ» և «Դիսքավերի», նավարկեցին Ջեյմս գետով (Անգլիայի թագավորի պատվին) քառասուն մղոն դեպի վեր՝ հիմնադրելով Վիրջինիա գաղութը (Եղիսաբեթ I Կույս թագուհու պատվին): Նրանց ընտրած անմարդաբնակ թերակղզին նավարկելի գետի վրա էր և իսպանական պարեկների տեսադաշտից հեռու: Վայրը առաջարկում էր հեշտ պաշտպանություն ցամաքային հարձակումներից և գտնվում էր հնդկացիական բնակավայրերի ու առևտրային ցանցերի մոտ: Բայց բնակա-

վայրն անհյուրընկալ էր. հողը հարմար չէր գյուղատնտեսության համար, իսկ մակընթացային աղի ջրերը հանգեցնում էին հիվանդությունների: Չնայած այս հանգամանքներին՝ անգլիացիները կառուցեցին Ջեյմսթաունը՝ ներկայիս Միացյալ Նահանգների անգլիական առաջին մշտական գաղութը: Մինչև 1616 թվականը Ջեյմսթաուն ժամանած անգլիացի բոլոր վերաբնակիչների 80 տոկոսը զոհվել էր: Անգլիայի առաջին ամերիկյան գաղութի փորձառությունն աղետալի էր:

1614 թվականին անգլիացի գաղութարար Ջոն Ռոլֆի ամուսնությունը Փաուաթան ցեղի առաջնորդի դուստր Պոկահոնտասի հետ թուլացրեց լարված հարաբերությունները տեղացիների հետ: Գաղութարարները չկարողացան գտնել շահութաբեր ապրանքներ և մնացին կախված հնդկացիներից ու անգլիական մատակարարումներից: Բայց հետո ծխախոտը փրկեց Ջեյմսթաունը: 1617 թվականին գաղութում աճեցված ծխախոտի առաջին բեռները ուղարկվեցին Անգլիա: Ամերիկյան ծագմամբ «Վնասակար մոլախոտը» Եվրոպայում մեծ պահանջարկ առաջացրեց: Ծխախոտի մշակումը սկսվեց Վիրջինիայում, իսկ հետո տարածվեց Մերիլենդում: Ծխախոտը փրկեց Վիրջինիան և խթանեց անգլիական հետագա գաղութացումը: Վիրջինիան սկսեց ձգել ոչ միայն առևտրականներին, այլև նորանոր վերաբնակիչների: Նրանք հիմնականում երիտասարդ, արական սեռի պայմանագրային ծառայողներ էին, որոնք ստորագրում էին պայմանագրեր կամ պարտավորագրեր (indentures), որոնցով նրանք կապվում էին գործատուների հետ որոշակի տարիներ ծառայելու պայմանով՝ օվկիանոսից այն կողմ փոխադրելու դիմաց: Բայց նույնիսկ գրեթե ստրկական ծառայության այդպիսի դաժան պայմաններն ընդունելի էին անգլիացի գյուղացիների համար, որոնց նորանոր խմբերը շարունակում էին ժամանել հողի և հնարավոր շահույթի խոստման դիմաց: Այդուհանդերձ, նրանց թիվը դեռ բավական չէր: Ծխախոտը աշխատատար մշակաբույս է, իսկ ահռելի չափերի հողատարածքների մշակման համար հսկայական թվով և էժան աշխատուժ էր անհրաժեշտ: Գաղութի աշխատանքային մեծ վակուումը 1618 թվականին հանգեցրեց վերաբնակեցման նոր քաղաքականության. Վիրջինիա գաղթած յուրաքանչյուր անձ ինքնաբերաբար կստանար 50 ակր հող, ինչպես նաև ևս 50 ակր կստանար յուրաքանչյուր այլ ներգաղթյալի ճանապարհորդությունը ֆինանսավորելու համար:

1619 թվականին Վիրջինիա ընկերությունը ստեղծեց Բուրգեսների պալատը (House of Burgesses)՝ սահմանափակ ներկայացուցչական մարմին, որը բաղկացած էր սպիտակամորթ հողատերերից և առաջին անգամ հավաքվեց Ջեյմսթաունում: Նույն տարում նրանք հոլանդական ստրկա-

վաճառ նավից գնեցին քսան աֆրիկացիների: Այսպիսով, հիմք դրվեց հարավային ստրկատիրությանը: Աֆրիկյան թերաբժեքության եվրոպական գաղափարներն ու ռասիզմն օգտագործվեցին ստրկության տարածումը Ատլանտյան աշխարհում արդարացնելու համար: Անգլիացիներն աֆրիկացիներին հավասարեցնում էին կատեգորիկ սևամորթությանը, իսկ սևությունը՝ մեղքի, ստորության և ստորադասության հետ: Եվ այնուամենայնիվ, ամերիկյան ստրկության առաջին տարիներին ռասայի մասին գաղափարներն ու ստրկությունը դեռևս օրենսդրված չէին: Անգլիական Հյուսիսային Ամերիկայի աֆրիկացիների առաջին սերունդների ստրկությունը, ի տարբերություն ավելի ուշ ամերիկյան պատմության, պարտադիր չէ, որ մշտական և ժառանգական լիներ: Նախնական շրջանում աֆրիկացիները, ինչպես անգլիացի սպիտակամորթ պարտապան ծառաները, նույնպես կարող էին աշխատել որոշակի տարիներ, այնուհետև ազատվել՝ դառնալով ազատ հողատերեր:

Շուտով անգլիացի գաղութարարները դուրս եկան Ջեյմսթաունի թերակղզու սահմաններից՝ հակամարտության մեջ մտնելով Փաուաթան ցեղերի համադաշնության հետ: Պատերազմը և հիվանդությունները ոչնչացրին Չեսափիքի հնդկացիների մնացորդները՝ ուժերի հավասարակշռությունը վճռականորեն շրջելով անգլիական գաղութարարների կողմը: Վերջիններս Նոր աշխարհ բերեցին ռասայական, մշակութային և կրոնական գերակայության իրենց տեսլականները: Հյուսիսային Ամերիկայի բնիկ ժողովուրդները համարվում էին ստորադաս և բարբարոս: Քրիստոնեությունը, մետաղագործությունը, ինտենսիվ գյուղատնտեսությունը, անդրատլանտյան նավագնացությունը և նույնիսկ ցորենի մշակությունը բազմապատկում էին անգլիական գերազանցության զգացումը: Գերազանցության այս զգացումը, բռնության բռնկումների և մարտական գործողությունների հետ զուգորդված, անգլիացիներին ներշնչում էր բնիկ ամերիկացիների հողերի և ռեսուրսների նկատմամբ իրավունքի զգացում:

Նոր Անգլիա

Նոր Անգլիայի (New England) անգլիական գաղութների հիմնումը սկսվեց 1620 թվականից: Ի տարբերություն Վիրջինիայի՝ Նոր Անգլիայի գաղութները հիմնվում էին ավելի վեհ գաղափարներով և նպատակներով: Թեև այս գաղութներում վերաբնակները նույնպես ակնկալում էին տնտեսական շահույթ, սակայն կրոնական դրդապատճառները գերիշխում էին նրանց հռետորաբանության և հասարակական իրողությունների մեջ: XVII

դարում Նոր Անգլիայում հաստատվող ոչ բոլոր անգլիացիներն էին պուրիտան, բայց պուրիտաններն անկասկած գերիշխում էին Նոր Անգլիայի քաղաքականության, կրոնի և մշակույթի վրա: Նույնիսկ 1700 թվականից հետո պուրիտանական ժառանգությունը շարունակում էր ձևավորել տարածաշրջանի պատմության շատ տեսույթներ:

Պուրիտան (Puritan՝ մաքրակրոն) եզրույթը բնորոշում էր Անգլիկան եկեղեցու այն դժգոհ հետևորդներին, որոնք կարծում էին, որ Անգլիայի եկեղեցին դեռևս բավականաչափ հեռու չէր կաթոլիկությունից, նույնիսկ այն բանից հետո, երբ արքա Հենրի VIII-ը 1530-ականներին խզեց կապը Հռոմի հետ: Պուրիտանները ձգտում էին ոչ թե անջատվել, այլ «մաքրել» Անգլիկան եկեղեցին: Կրոնական վարդապետության հարցերում նրանք հիմնականում համաձայն էին եվրոպացի կալվինիստների՝ աստվածաբան ժան Կալվինի հետևորդների հետ: Նրանք պնդում էին, որ եկեղեցիների զարդարումը, զարդարված ծիսակատարություններն (ներառյալ Սուրբ Ծննդյան տոնակատարությունը) ու կոռումպացված քահանայությունը խախտում էին Աստծո պատգամը: Ուստի պուրիտանները հավածվում էին Անգլիայում:

1530-ական թվականներին անգլիական ռեֆորմացիայից հետո պուրիտանները ձգտում էին «մաքրել» (“purify”) Անգլիայի եկեղեցին կաթոլիկության հետ աղերսներ պարունակող բոլոր սովորույթներից՝ քարոզելով ավելի պարզ պաշտամունք, զարդարված եկեղեցիների վերացում և այլ վերափոխումներ: Նրանք որոշակի հաջողություն ունեցան Անգլիայի եկեղեցին ավելի կալվինիստական ուղղություն մղելու հարցում: Սակայն Չարլզ I-ի թագադրումը (1625–1649 թթ.) փոխեց իրավիճակը. արքան պուրիտաններին համարում էր ծայրահեղական և վտանգավոր թշնամի:

Աճող հավաճանքների բախվելով՝ պուրիտանները սկսեցին Մեծ գաղթը (Great Migration), որի ընթացքում՝ 1630-1640 թվականներին, մոտ 20,000 մարդ հաստատվեց Նոր Անգլիայում: Պուրիտանները, ի տարբերություն անջատողական «Ուխտավորների» (“Pilgrims”) փոքր խմբի, որը 1620 թվականին հիմնեց Պլիմուտի գաղութը, հավատարիմ մնացին Անգլիկան եկեղեցու բարեփոխման գաղափարին: Ջոն Ուինթրոփը և պուրիտան այլ առաջնորդներ պնդում էին, որ իրենք չէին բաժանվում եկեղեցուց կամ լքում Անգլիան, այլ մեկնում էին Ամերիկա՝ Նոր Անգլիայում աստվածապաշտ համայնք ստեղծելու, որը կլիներ «քաղաք բլրի վրա» (“City on a Hill”) և պայծառ օրինակ՝ հայրենիքում բարեփոխումների ու բարեփոխիչների համար:

Թեև պուրիտաններին չհաջողվեց կառուցել աստվածային ուտոպիա

Նոր Անգլիայում, պուրիտանական հատկությունների համադրությունը մի քանի արտաքին գործոնների հետ ստեղծեց այնպիսի գաղութներ, որոնք խիստ տարբերվում էին անգլիացիների կողմից բնակեցված ցանկացած այլ տարածաշրջանից: Ի տարբերություն Վիրջինիա մեկնողների՝ Նոր Անգլիայի գաղութարարները (Պլիմուտ 1620 թ., Մասսչուսեթս 1630 թ., Կոնեկտիկուտ 1636 թ. և Ռոդ Այլենդ 1636 թ.) հիմնականում հաստատվում էին ընտանեկան խմբերով: Նոր Անգլիայի ներգաղթյալների մեծ մասը Անգլիայի փոքր հողատերերն էին: Հաստատվելով Նոր Անգլիայում՝ նրանք հակված էին կրկնօրինակելու իրենց հայրենի միջավայրերը՝ հիմնելով անկախ հողատերերից կազմված քաղաքներ: Նոր Անգլիայի կլիման և հողը հարմար չէին լայնածավալ պլանտացիոն գյուղատնտեսության համար: Ուստի Վիրջինիայի գաղութներին բնորոշ խոշոր հողատերերի համակարգը, որն օգտագործում էր ստրուկների կամ պարտապան ծառաների զանգվածային աշխատուժը, չէր կիրառվում Նոր Անգլիայում:

Նոր Անգլիայի հասարակությունը շատ ավելի քիչ էր շերտավորված: Թեև Նոր Անգլիայի գաղութներում ևս կային հարուստ հողատեր ընտրախավեր, տարածաշրջանում հարստության անհավասարությունը անհամեմատ ավելի նեղ էր, քան հարավային գաղութներում: Փոխարենը, XVII դարի Նոր Անգլիան առավել համեստ էր իր բարգավաճման մակարդակով. տնտեսությունը հիմնված էր փոքր ֆերմաների, խանութների, ձկնորսության, փայտանյութի մշակման, նավաշինության և Ատլանտյան աշխարհի հետ առևտրի վրա:

Աշխարհագրության և պուրիտանական ընկերային էթոսի համադրությունը ստեղծեց նշանակալի կայունություն և հասարակական առողջ միջավայր: Նոր Անգլիայի ներգաղթյալները խուսափեցին արևադարձային հիվանդությունների մահացու բռնկումներից, որոնք պատուհասեցին Չեսափիքի գաղութները: Հիվանդությունները, փաստորեն, միայն օգնեցին տարածաշրջանի անգլիական բնակեցմանը՝ բնիկ ամերիկացիներից ազատելով շատ տարածքներ: 1610-ականներին ջրծաղիկի համաճարակը ոչնչացրեց տարածաշրջանի բնիկ ամերիկացիների բնակչության 90 տոկոսին: Համեմատաբար առողջ միջավայրը՝ զուգորդված քաղաքական կայունությամբ և վաղ ներգաղթյալների շրջանում ընտանեկան խմբերի գերակշռությամբ, նպաստեց Նոր Անգլիայի բնակչության բնական աճին: 1700 թվականին Նոր Անգլիայի նախնական 21,000 ներգաղթյալներից բնակչության թիվը հասավ 91,000-ի: Մինչդեռ Վիրջինիայի շրջանում հաստատված 120,000 անգլիացի ներգաղթյալներից 1700 թվականին մնացին միայն 85,000-ը: Թեև Նոր Անգլիայում գաղութացումը հաջողվեց,

նրա պուրիտան առաջնորդները ճախողվեցին ուտոպիական համայնք ստեղծելու իրենց առաքելության մեջ, որը կոգեշնչեր մայր Անգլիայի բարեփոխումը:

Վիրջինիայի և Մասաչուսեթսի գաղութները, որոնք ավելի շատ գնահատվում էին որպես մարգինալ ներդրումներ և սոցիալական ապահովության փեղկեր, որտեղ կարող էին արձակվել Անգլիայի աղքատները, այնուամենայնիվ հիմք ստեղծեցին հյուսիսամերիկյան հսկայական մայրցամաքում Բրիտանական կայսրության ծավալման համար: Թեև XVII դարը Բրիտանիայի համար նշանավորվեց կրոնական, հասարակական և քաղաքական ցնցումներով, մի արքայի գլխատամբ և մյուսի փախուստով, հանրապետության հռչակմամբ և միապետության վերականգնմամբ, Նոր Անգլիայի և Վիրջինիայի վերաբնակիչները այնուամենայնիվ կապված էին միմյանց զարգացող Ատլանտյան տնտեսությամբ: Մինևոյն ժամանակ, հարավային և հյուսիսային գաղութների տարբեր հասարակական-տնտեսական համակարգերը, Հարավի պլանտացիոն տնտեսության կախվածությունը ստրկատիրական աշխատանքից և Հյուսիսի կապիտալիստական հարացույցը ավելի կբարդացնեն մշակույթների բախումը Ամերիկա մայրցամաքում:

Միջին կամ սեփականատիրական գաղութներ

Մինչև XVII դարի կեսերը անգլիացիներն անտեսում էին Վիրջինիայի և Նոր Անգլիայի միջև ընկած տարածքը՝ չնայած ակնհայտ աշխարհագրական առավելություններին: Կլիման ավելի առողջ էր, քան Վիրջինիայի տարածաշրջանում և ավելի բարեխառն, քան Նոր Անգլիայում: Այս միջին տարածաշրջանը ուներ երեք նավարկելի գետեր՝ Սասքուեհաննա, Դելավեր և Հադսոն: Շվեդներն ու հոլանդացիները տարածաշրջանում հիմնել էին իրենց գաղութները՝ Նոր Շվեդիան (Nya Sverige) Դելավերի հովտում և Նոր Նիդերլանդները Հադսոնի հովտում:

Հադսոնի հովտի հոլանդական բնակավայրերը համեմատաբար փոքր էին: Հոլանդական Արևմտյան Հնդկաստանի ընկերությունը հասկացավ, որ այդ տարածքում մորթու առևտուրն ապահովելու համար անհրաժեշտ է ավելի մեծ ներկայություն հաստատել Նոր Նիդերլանդներում: Այդ նպատակով ընկերությունը 1625 թվականին Մանհեթեն կղզում հիմնադրեց Նոր Ամստերդամ քաղաքը: Թեև հոլանդացիները կրոնական հանդուրժողականություն էին ցուցաբերում Նոր Նիդերլանդներում հաստատվածների նկատմամբ, բնակչության թիվը շարունակում էր մնալ փոքր: Այդ հան-

գամանքը գաղութը խոցելի դարձրեց 1650-1660-ական թվականներին անգլիական հարձակման համար: Արդյունքում 1664 թվականին Նոր Նիդերլանդները հանձնվեց Անգլիային: Գաղութը վերանվանվեց Նյու Յորք նոր սեփականատիրոջ՝ Յորքի դուքս Ջեյմսի անունով, ով 1664 թվականին հոլանդացիների դեմ արշավախմբային ուժերի ֆինանսավորողն էր և Անգլիայի արքա Չարլզ II-ի եղբայրը: 1667 թվականին Նյու Յորքը կարճ ժամանակով վերանվաճվեց Նիդերլանդների կողմից, իսկ դասակարգային և էթնիկական հակամարտությունները Նյու Յորքում նպաստեցին անգլիական իշխանությունների դեմ ապստամբությանը 1688-1689 թվականների Փառահեղ հեղափոխության (Glorious Revolution) ընթացքում: Հոլանդական ծագում ունեցող գաղութաբնակները շարունակում էին պաշտպանել իրենց ինքնությունը և դիմադրել անգլիական մշակույթին մինչև XVIII դարը, ինչը ստիպեց Նյու Յորքի անգլիացիներին կարծել, որ գաղութը «ավելի շուտ նման էր նվաճված օտարերկրյա գավառի»:

Նոր Նիդերլանդների ձեռքբերումից հետո Չարլզ II-ը և Յորքի դուքսը ցանկանում էին ուժեղացնել անգլիական վերահսկողությունը Ատլանտյան օվկիանոսի ափին: Նյու Ջերսիի, Փենսիլվանիայի և Կարոլինաների՝ նոր սեփականատիրական գաղութների (proprietary colonies) շնորհումներն իրականացվեցին պարտքերի մարման և քաղաքական բարեհաճության նկատառումներով: 1664 թվականին Յորքի դուքսը Հադսոն և Դելավեր գետերի միջև ընկած տարածքը շնորհեց երկու անգլիացի ազնվականների: Այս հողերը բաժանվեցին երկու տարբեր գաղութների՝ Արևելյան Ջերսի և Արևմտյան Ջերսի:


Արևմտյան Ջերսիի սեփականատերերից մեկը նշանավոր քաղաքական իմաստասեր Ուիլյամ Փենն էր: Հավակնոտ Փեննը ցանկանում էր հիմնել ավելի մեծ, սեփական գաղութը, որի համար հողեր տրամադրվեցին և՛ Չարլզ II-ի, և՛ Յորքի դքսի կողմից: Այսպես հիմնադրվեց Փենսիլվանիան, որը զբաղեցնում էր ավելի քան 110 հազար քառակուսի կիլոմետր տարածք՝ Դելավեր գետից և նախկին Նոր Շվեդիայից դեպի արևմուտք: Փեննը Բարեկամների միության՝ Քվակերների (Quakers) անդամ էր, և մտադիր էր իր գաղութը կազմակերպել իբրև հասարակության կատարելատիպ՝ «Դրախտի գաղութ Լույսի զավակների համար» (“colony of Heaven for the children of Light”): Ինչպես Նոր Անգլիայի պուրիտանների ձգտումն էր լինել «քաղաք բլրի վրա» (City Upon a Hill), այնպես էլ Փենսիլվանիան հավակնում էր լինել աստվածահաճո բարեպաշտության օրինակ: Սակայն Փեննի երազանքն էր ստեղծել ոչ թե միասնության, այլ ավելի շուտ ներդաշնակության գաղութ: 1685 թվականին նա նշում էր, որ «ժողովուր-

դը Եվրոպայի տարբեր ազգերի հավաքածու է, ինչպիսիք են ֆրանսիացիները, հոլանդացիները, գերմանացիները, շվեդները, դանիացիները, ֆինները, շոտլանդացիները և անգլիացիները, իսկ վերջիններս հավասար են բոլոր մյուսներին»: Եվ քանզի Փենսիլվանիայի քվակերները տարածում էին նույն իրավունքները Ամերիկայի ուրիշների վրա, գաղութը ներգրավեց ներգաղթյալների ավելի բազմազան հավաքածու: Փենսիլվանիայի որոշ խաղաղարար քվակերների համար հատկապես անհանգստացնող էր *ստրկության հաստատությունը*, քանզի այն պահանջում էր բռնություն: 1688 թվականին Փենսիլվանիայի մայրաքաղաք Ֆիլադելֆիայի մոտ գտնվող Ջերմանթաունում Բարեկամների միության անդամները ստորագրեցին մի խնդրագիր՝ բողոքելով քվակերների շրջանում ստրկության հաստատության դեմ:

Ամփոփենք: XVII դարը Բրիտանիայի հյուսիսամերիկյան գաղութների ստեղծման ու հասունացման դարաշրջան էր: Գաղութարարները մեկ դար շարունակեցին պայքարը անհյուրընկալ կլիմայի, բնիկ ամերիկացիների և եվրոպացի այլ գաղութարարների դեմ: Անգլիացիները հիմնականում հաջողեցին իշխանության անողոք դրսևորումների միջոցով: Գաղութարարները նվաճեցին բնիկ ամերիկացիների տարածքները, հարձակվեցին եվրոպացի մրցակիցների վրա և միացան բարձր եկամտաբեր անդրատլանտյան տնտեսությանը, որը արմատավորված էր ստրկության հաստատության վրա: Մեկդարյա հուսահատության և պայքարի արդյունքում բրիտանացի հյուսիսամերիկյան գաղութաբնակները ձևավորեցին ավելի բարդ և համալիր հասարակություններ՝ յուրահատուկ կրոնական մշակույթներով, տնտեսական կապերով և քաղաքական ավանդույթներով: Այս հասարակություններն ապագայում ձևավորելու էին ոչ միայն արդի Հյուսիսային Ամերիկան, այլև Ատլանտյան աշխարհի ամբողջությունը:

Անգլիական հյուսիսամերիկյան գաղութները տարածատիպաբանական առումով սովորաբար բաժանվում են երեք խմբի: Թեև տարածական առումով կարելի է առանձնացնել հյուսիսային, միջին և հարավային գաղութները, այնուամենայնիվ աշխարհագրությունից զատ, տիպաբանորեն առանձնացվում են պուրիտանական, սեփականատիրական (հիմնադրված անգլիական ազնվականների կողմից) և ստրկատիրական գաղութները: Այս բաժանումները, սակայն, հույժ պայմանական են, և այնուամենայնիվ կարելի է գաղթօջախները բաժանել երեք խմբի՝ հիմք ընդունելով հիմնադրման ժամանակ դրանցում գերիշխող հասարակական-տնտեսական կարգը: Առաջին խումբը, որն ընդգրկում էր Նոր

Անգլիայի տարածաշրջանը, բուրժուա-պուրիտանական էր և ներառում էր Մասսաչուսեթսը, Ռոդ Այլենդը, Կոնեկտիկուտը և Նյու Հեմփշիրը: Երկրորդ խումբը սեփականատիրական գաղութներն էին, որոնք հիմնադրվել էին անգլիացի արիստոկրատների կողմից, սակայն հետագայում դրանց մի մասը՝ Փենսիլվանիան, Նյու Յորքը, Նյու Ջերսին, որոնք տարածական առումով միջին դիրք էին գրավում, տիպաբանորեն միացան հյուսիսային բուրժուական գաղութներին, իսկ մյուս մասը, որոնք էին Հյուսիսային և Հարավային Կարոլինաները, Մերիլենդը, Դելավերը՝ Հարավի ստրկատիրական գաղութներին: Երրորդ խումբը ստրկատիրական գաղութներն էին, որոնց հիմքը դրել էր Վիրջինիան, իսկ հետագայում ձևավորվեց նաև տասներեքերորդ՝ Ջորջիա գաղութը: Հատկանշական է, որ հիմնական ստրկատիրական նահանգից՝ Վիրջինիայից, դուրս եկան ԱՄՆ առաջին հինգ նախագահներից չորսը՝ Ջորջ Վաշինգտոնը, Թոմաս Ջեֆերսոնը, Ջեյմս Մեդիսոնը և Ջեյմս Մոնրոն: Նրանք խոշոր հողատեր-ստրկատերեր էին, բայց նաև լուսավորականության դարաշրջանի գաղափարների և XVII դարի վերջի Ամերիկյան հեղափոխության արժեքների և սկզբունքների կրողներն էին:



Բրիտանական, ֆրանսիական և իսպանական գաղութները Հյուսիսային Ամերիկայում XVIII դարի առաջին կեսին

ԳԼՈՒԽ 2

Գաղութային հասարակությունը բրիտանական Ամերիկայում

XVIII դարում ամերիկյան մշակույթը շարժվեց տարբեր մոդելների մրցակից ուղղություններով: Մեծ Բրիտանիայի և հյուսիսամերիկյան գաղութների միջև առևտրային, ռազմական և մշակութային կապերը շարունակում էին ամրանալ: Զուգահեռաբար սկսել էր ձևավորվել ամերիկյան նոր ինքնատիպ մշակույթը: Միևնույն ժամանակ, եվրոպական այլ երկրներից ներգաղթյալները, բնիկ ամերիկացիները և ստրկացված աֆրիկացիները միասին ստեղծելու էին ավելի բազմազան գաղութային բնակչություն: Բոլորը՝ տղամարդ թե կին, եվրոպացիները, բնիկ ամերիկացիները և աֆրիկացիները, տարբեր կենսակերպ էին վարում՝ ստեղծելով նոր համայնքներ: Այսպիսով, տասներեք գաղութները ձևավորվում էին անգլիական հարացույցի և ավելի մեծ Ատլանտյան աշխարհի տարակերպերի համադրմամբ, զարգացող մշակութային օրինաչափությունները հետզհետե փոխակերպում էին Հյուսիսային Ամերիկյան բոլորովին նոր մշակութային միավորի:

Սպառումն ու առևտուրը բրիտանական Ատլանտյան աշխարհում

Անդրատլանտյան առևտուրը մեծապես հարստացրեց Բրիտանիան, բայց այն նաև ստեղծեց բարձր կենսամակարդակ հյուսիսամերիկյան գաղութներում: Երկկողմանի այս հարաբերությունները ամրապնդեցին բրիտանական մշակույթի հետ ընդհանրության զգացումը գաղութներում: Միայն 1760-ական թվականներին, երբ առևտրային կապերը խաթարվել էին քաղաքական փոփոխությունների և Յոթնամյա պատերազմի (1756–1763 թթ.) հետևանքով, գաղութաբնակները սկսեցին կասկածի տակ դնել այդ կապերը:

XVII-XVIII դարերի ընթացքում արտադրության, փոխադրումների և վարկերի հասանելիության բարելավումները մեծացրին սպառողական ապրանքներ գնելու գաղութաբնակների հնարավորությունները: Սեփական գործիքներ, հագուստ և պարագաներ պատրաստելու փոխարեն գաղութաբնակներն աստիճանաբար ավելի շատ էին գնում մասնագիտացված արհեստավորների և արտադրողների կողմից պատրաստված շքեղ իրեր: Եվ քանի որ ամերիկացիների եկամուտները մեծանում էին, իսկ ապրանքների գները՝ նվազում, այդ ապրանքները շքեղությունից վերածվեցին սովորական սպառողական արտադրանքի: Միջին վիճա-

կագրական մարդկանց՝ սպառողական ապրանքների վրա գումար ծախսելու կարողությունը դարձավ նրանց հասարակական դիրքի նշան՝ վերածվելով ցուցադրական սպառման (conspicuous consumption): Հասարակական-տնտեսական փոխակերպության այս գործընթացը հայտնի է որպես «սպառողական հեղափոխություն» (“consumer revolution”):

Բրիտանիան ապավինում էր գաղութներին՝ որպես հումքի աղբյուրի, իսկ ամերիկացիները ներգրավված էին առևտրի և ֆինանսավորման նոր ձևերում, որոնք մեծացնում էին բրիտանական արտադրության ապրանքներ գնելու նրանց կարողությունը: Երբ վերաբնակիչները առաջին անգամ ժամանեցին Հյուսիսային Ամերիկա, նրանք շատ քիչ բրիտանական մետաղադրամներ ունեին իրենց հետ: Չհայտնաբերելով թանկարժեք մետաղներ և չունենալով մետաղադրամներ հատելու թագավորական իրավասություն՝ գաղութաբնակներն ապավինում էին առևտրի և փոխանակման ոչ ավանդական ձևերին՝ ներառյալ ապրանքափոխանակությունը: 1690 թվականին Մասաչուսեթսն առաջինն էր, որ թողարկեց արժեթղթեր որպես թղթադրամ օգտագործելու համար: Թղթադրամները կոչվում էին կրեդիտային մուրհակներ և թողարկվում էին գաղութի վարկով, սահմանափակ ժամկետով ու տարբեր անվանական արժեքներով: Թեև այս թղթադրամները ապրանքափոխանակության շատ անհրաժեշտ միջոցներ էին, դրանք նաև խնդիրներ էին հարուցում: Վիրջինիայում գործող արժույթը կարող էր անարժեք լինել Փենսիլվանիայում: Այս խնդիրները, ինչպես նաև արժեզրկված թղթադրամներ ընդունելու բրիտանացի վաճառականների դժկամությունը պատճառ դարձան, որ Առևտրային խորհուրդը սահմանափակի թղթադրամների օգտագործումը 1751 և 1763 թվականների արժութային օրենսդրական ակտերով:

Իհարկե, Արևմտյան կիսագնդում բրիտանական մայրցամաքային գաղութները միայն այդ տասներեքը չէին: Իրականում ֆինանսատնտեսական առումով դրանք զգալիորեն ավելի փոքր կարևորություն ունեին անգլիական թագի համար, քան Կարիբյան ծովի շաքար արտադրող կղզիները՝ ներառյալ Ջամայկան, Բարբադոսը, Լիվարդյան կղզիները, Գրենադան, Սենտ Վինսենթը և Դոմինիկան: Հատկանշական է, որ մինչև 1680 թվականը Բարբադոս փոքրիկ կղզուց շաքարի արտահանումն ավելի բարձր արժեք էր ապահովում, քան մայրցամաքային բոլոր գաղութների ընդհանուր արտահանումը: Ջամայկան, որն անգլիական տիրապետության էր անցել 1655 թվականին, XVII դարի վերջին շրջանցեց Բարբադոսին շաքարի արտադրությամբ:

Առևտրի այս համակարգերը գոյություն ունեին Մեծ Բրիտանիան

հարստացնելու նպատակով: Շահույթի հոսքը դեպի Բրիտանիա ապահովելու համար բրիտանական խորհրդարանը հարկեր սահմանեց առևտրի վրա՝ համաձայն Նավիգացիոն օրենքների (Navigation Acts): Այս հարկերը միահյուսեցին սպառումը քաղաքականության հետ: Մինչև 1763 թվականը Բրիտանիայում կարծում էին, որ իրենց ընդունած կարգավորիչ օրենքների կիրարկումը դժվարին խնդիր է և հաճախ արժենում է ավելի շատ, քան դրանց բերած հարկային եկամուտները: Արդյունքում, գաղութաբնակների համար ավելի դյուրին էր խախտել օրենքը և առևտուր անել օտարազգիների, ծովահենների կամ մաքսանենգների հետ, քան պահպանել բրիտանական օրենքը: Մաքսային ծառայողները հեշտությամբ կաշառվում էին, ուստի ամերիկյան նավահանգիստներում հաճախ էին հանդիպում արգելված ապրանքներով բեռնված հոլանդական, ֆրանսիական և արևմտահնդկական նավեր:

Սկսելով 1764 թվականի Շաքարի օրենքով (Sugar Act) և շարունակելով Դրոշմանիշի (Stamp Act) և Թաունշենդի օրենսդրական ակտերով (Townshend Acts)՝ բրիտանական խորհրդարանը հարկեր սահմանեց շաքարավազի, թղթի, կապարի, ապակու և թեյի վրա: Ի պատասխան՝ գաղութաբնակ հայրենասերները կազմակերպեցին չներմուծման ակտեր՝ ապավինելով հայրենական արտադրանքին:

Սպառողական հեղափոխությունը խթանեց գաղութների քաղաքների աճը: Գաղութային Ամերիկայի քաղաքները խաչմերուկներ էին մարդկանց և ապրանքների տեղաշարժի համար: Մինչև 1775 թվականը յուրաքանչյուր քսան գաղութաբնակներից մեկն ապրում էր քաղաքներում: Որոշ քաղաքներ աճում էին բնականոն կերպով ժամանակի ընթացքում, մինչդեռ մյուսները պլանավորված էին ի սկզբանե: Նյու Յորքի և Բոստոնի XVII դարի քաղաքային հատակագծերը և փողոցներն արտացոլում էին միջնադարյան եվրոպական քաղաքների անկանոն դասավորությունը: Այլ քաղաքներում, ինչպիսիք էին Ֆիլադելֆիան և Չարլսթոնը, քաղաքացիական առաջնորդները քաղաքաշինական հատակագծեր էին մշակել՝ ըստ կանոնավոր ուղղանկյունաձև թաղամասերի և հրապարակների հաշվարկված համակարգերի: Աննապոլիսի և Ուիլյամսբուրգի նախագծողները ևս կանոնավորություն և կարգուկանոն էին պարտադրում իրենց քաղաքների փողոցներում՝ կառավարական, քաղաքացիական և կրթական շենքերի տեղադրության միջոցով: 1775 թվականին Բոստոնը, Նյուպորտը, Նյու Յորքը, Ֆիլադելֆիան և Չարլսթոնը բրիտանական Հյուսիսային Ամերիկայի հինգ խոշորագույն քաղաքներն էին: Ֆիլադելֆիայի, Նյու Յորքի, Բոստոնի և Չարլսթոնի բնակչությունը կազմում էր համապա-

տասխանաբար՝ 40,000, 25,000, 16,000 և 12,000:

Քաղաքային հասարակությունը խիստ շերտավորված էր: Սոցիալական սանդղաթի հիմքում աշխատավոր դասակարգերն էին, որոնք ներառում էին ինչպես ստրկացված, այնպես էլ ազատ մարդկանց՝ սկսած աշակերտից մինչև վարպետ արհեստավորներ: Հաջորդը միջին խավն էր՝ խանութպաններ, արհեստավորներ և հմուտ ծովագնացներ: Ամենավերևում էին վաճառական վերնախավերը, որոնք հակված էին ակտիվորեն ներգրավվելու քաղաքների հասարակական և քաղաքական կյանքում, ինչպես նաև ապրանքների առևտրի մեջ: Ստրկացած տղամարդիկ և կանայք տեսանելի ներկայություն ունեին ինչպես հյուսիսային, այնպես էլ հարավային քաղաքներում: Ստրկացված բնակչության մեծ մասն ապրում էր գյուղական վայրերում և կատարում գյուղատնտեսական աշխատանք: Նավահանգստային քաղաքներում ստրուկները հաճախ աշխատում էին որպես տնային սպասավորներ, բանվորներ մասնագիտացված արհեստանոցներում, խմիչքի թորման ու փայտամշակման գործարաններում, նավահանգիստներում և նավաշինարաններում:

1725-1775 թվականներին ստրկությունը ավելի ու ավելի նշանակալի դարձավ հյուսիսային գաղութներում, քանզի քաղաքային բնակիչները ձգտում էին ավելի մեծ մասնակցության ծովային տնտեսության մեջ: Մասաչուսեթսը Նոր Անգլիայի առաջին ստրկատիրական գաղութն էր: Նյու Յորքի ստրկատիրության և ստրկավաճառության պատմության արմատները ձգվում էին XVII դարից՝ Նոր Նիդերլանդների հոլանդացի վերաբնակիչների ժամանակներից: Ֆիլադելֆիան ևս դարձավ Ատլանտյան ստրկավաճառության գործուն կենտրոն. 1770 թվականին ստրուկները կազմում էին քաղաքի բնակչության գրեթե 8 տոկոսը: Հարավային քաղաքներում՝ ներառյալ Չարլսթոնում, քաղաքային ստրկությունը կարևոր դեր ուներ շուկայական տնտեսության մեջ: Ամերիկյան հեղափոխության նախօրեին ստրուկները, ինչպես գյուղական, այնպես էլ քաղաքային վայրերում, աշխատավոր բնակչության մեծամասնությունն էին:

Ստրկությունը անդրատլանտյան հաստատություն էր, սակայն այն առանձնահատուկ բնույթ ուներ բրիտանական Հյուսիսային Ամերիկայում: Տեղական տնտեսական հրամայականները, ժողովրդագրական միտումները և մշակութային գործոնները միասին ներազդեցին ստրկության գաղութային տարբեր տարակերպերի ձևավորման վրա: 1750 թվականին ստրկությունը օրինական էր Հյուսիսային Ամերիկայի բոլոր գաղութներում:

Քաղաքական, կրոնական և անհատական ազատության ձգտումը

Սպառումը, առևտուրը և ստրկությունը գաղութներն ավելի մերձեցրին Մեծ Բրիտանիային, սակայն քաղաքականությունն ու կառավարումը նրանց ավելի բաժանեցին միմյանցից: Եվրոպայում ժողովրդավարությունն ավելի շատ օլիգարխիաներ էր հիշեցնում, քան հանրապետություններ, որտեղ պաշտոնների կարող էին ընտրվել միայն հասարակության ընտրախավի անդամները: Եվրոպական պետությունների մեծ մասում կանոնավոր ընտրություններ չէին անցկացվում, ընդ որում, Մեծ Բրիտանիան ու Նիդերլանդների Հանրապետությունը երկու հիմնական բացառություններն են: Այնուամենայնիվ, նույնիսկ այս երկրներում տղամարդկանց միայն մի փոքր մասը քվեարկելու իրավունք ուներ: Հյուսիսամերիկյան գաղութներում, հակառակը, սպիտակամորթ տղամարդկանց ընտրական իրավունքը շատ ավելի տարածված էր: Ժողովրդական ավելի մեծ ներգրավվածությունից բացի, գաղութների կառավարությունները նաև ավելի մեծ իշխանություն ունեին տարբեր ոլորտներում: Ժողովները և օրենսդիր մարմինները կարգավորում էին գործարարությունը, կրթական համակարգը, սահմանում էին հարկեր, հոգ էին տանում իրենց համայնքների աղքատների մասին, կառուցում էին ճանապարհներ և կամուրջներ: Ամերիկացիները հաճախ էին դիմում դատարաններ իրենց վեճերը կարգավորելու համար, ինչն իր հերթին հանգեցրեց տեղական դատավորների ավելի մեծ իշխանության և Երդվյալ ատենակալների ծառայության ավելի մեծ հեղինակության: Այսպիսով, իրավաբանները չափազանց կարևոր դիրք գրավեցին ամերիկյան հասարակության մեջ և իրենց հերթին ավելի մեծ դեր խաղացին ամերիկյան քաղաքականության մեջ: Ամերիկյան հասարակությունը ավելի քիչ էր վերահսկվում, քան եվրոպական հասարակությունը:

Սա հանգեցրեց տարբեր շահերի խմբերի առաջացմանը, որոնցից յուրաքանչյուրն ընդդիմանում էր մյուսին: Դրանք առաջացել էին տարբեր ոլորտներում ընդհանրությունների հիման վրա: Որոշ ընդհանրություններ առաջացան դասակարգային տարբերությունների պատճառով, մինչդեռ մյուսները պայմանավորված էին էթնիկ կամ կրոնական կապերով: Գաղութային քաղաքական մշակույթի հիմնական յուրահատկություններից մեկը հստակ, կայուն քաղաքական կուսակցությունների բացակայությունն էր: Գաղութային քաղաքականության մեջ հիմնական անհամաձայնությունը ընտրված ժողովների և թագավորական կառավարչի (նահանգապետի) միջև էր: Ընդհանուր առմամբ, գաղութների օրենսդիր մարմինները բա-

ժանված էին խմբակցությունների, որոնք կամ աջակցում էին, կամ ընդդիմանում էին գործող նահանգապետի քաղաքական գաղափարաբանությանը:

Հյուսիսամերիկյան գաղութների քաղաքական կառույցները դասվում էին երեք հիմնական կատեգորիաներից մեկին՝ պրովինցիալ-գավառական (Նյու Հեմփշիր, Նյու Յորք, Վիրջինիա, Հյուսիսային Կարոլինա, Հարավային Կարոլինա և Ջորջիա), մասնավոր-սեփականատիրական (Փենսիլվանիա, Դելավեր, Նյու Ջերսի և Մերիլենդ) և կանոնադրական-արտոնյալ (Մասաչուսեթս, Ռոդ Այլենդ և Կոնեկտիկուտ): Պրովինցիալ գաղութները ամենախիստ էին վերահսկվում անգլիական գահի կողմից. արքան էր նշանակում նահանգապետերին, և այս թագավորական կառավարիչները կարող էին վետո դնել իրենց գաղութի օրենսդիր ժողովների ընդունած ցանկացած որոշման վրա: Մասնավոր գաղութների կառուցվածքը նման էր իրար՝ մեկ կարևոր տարբերությամբ. կառավարիչները նշանակվում էին լորդ սեփականատիրոջ (lord proprietor) կողմից, ով անհատ սեփականատեր էր, որ գնել կամ ստացել էր գաղութատիրության իրավունքները Թագից: Ուստի մասնավոր գաղութները հաճախ ավելի շատ անկախություն և ազատություններ ունեին, քան հյուսիսամերիկյան մյուս գաղութները: Կանոնադրական գաղութներն (Charter colonies) ունեին կառավարման ամենաբարդ համակարգը. դրանք ձևավորվում էին քաղաքական կորպորացիաների կամ շահերի խմբերի կողմից, որոնք կազմում էին կանոնադրություն, որը հստակ սահմանում էր իշխանության գործադիր, օրենսդիր և դատական ճյուղերի միջև լիազորությունների սահմանները: Նշանակված նահանգապետի փոխարեն կանոնադրական գաղութներն ընտրում էին իրենց կառավարչին գաղութի սեփականություն ունեցող տղամարդկանց շրջանում:

Նահանգապետից հետո գաղութային իշխանությունը բաժանվում էր երկու հիմնական ճյուղերի՝ խորհուրդ (council) և ժողով (assembly): Խորհուրդը ըստ էության նահանգապետի կաբինետն էր, որը հաճախ կազմված էր գաղութի նշանավոր անձանցից, ինչպիսիք էին միլիցիայի (աշխարհագր) հրամանատարը և գլխավոր դատախազը: Նահանգապետն էր նշանակում այս պաշտոնյաներին, թեև նշանակումները հաճախ ենթակա էին բրիտանական խորհրդարանի հաստատմանը: Ժողովը կազմված էր ընտրված, սեփականատեր տղամարդկանցից, որոնց պաշտոնական նպատակն էր ապահովել գաղութային իրավունքի համապատասխանությունը անգլիական իրավունքին: Գաղութների ժողովներն էին հաստատում հարկերը և գաղութային բյուջեն: Այնուամենայնիվ, այս ժողովներից

շատերն իրենց պարտքն էին համարում զսպել նահանգապետի իշխանությունը և ապահովել, որ նա չափազանց մեծ իշխանություն չտնօրինի գաղութային կառավարման համակարգում: Ի տարբերություն բրիտանական խորհրդարանի՝ գաղութների ժողովներում ընտրված տղամարդկանց մեծ մասը շրջաններից էր, որտեղ ընտրողները կարող էին պատասխանատվության կանչել իրենց ընտրատարածքում ընտրված ներկայացուցիչներին և պաշտոնյաներին տրված խոստումների համար: Թեև գործնականում վերնախավերն էին վերահսկում գաղութային քաղաքականությունը, սակայն տեսականորեն շատ գաղութաբնակներ հավատում էին օրենքի առջև հավասարության գաղափարին և ընդդիմանում էին գաղութային հասարակության որևէ անդամի առանձնաշնորհյալ դիրքին:

Այսպիսով, ընտրված ներկայացուցչական ժողովը քաղաքացիական պարտքի գաղափարի մի շառավիղն էր: Ըստ այդմ՝ տղամարդիկ պատասխանատվություն ունեին աջակցելու կառավարությանը և պահպանելու նրան քվեարկության, հարկերի վճարման և աշխարհազորում ծառայության միջոցով: Ամերիկացիները հաստատականորեն ընդունեցին հասարակական դաշինքի (social contract) գաղափարը, այն գաղափարը, ըստ որի՝ իշխանությունը հաստատվում է ժողովրդի կողմից: Այս գաղափարը առաջ էին քաշել, մշակել և զարգացրել Լուսավորության դարաշրջանի իմաստասերները՝ Թոմաս Հոբսը, Ջոն Լոքը, Շառլ Լուի Մոնտեսքյոն և Ժան-ժակ Ռուսոն: Լուսավորական իմաստասերների գաղափարները մեծապես ներազդել էին հյուսիսամերիկյան գաղութների քաղաքական մշակույթի և գաղափարների ձևավորման վրա:

Յոթնամյա պատերազմը

Անգլիական Փառահեղ հեղափոխության (1688 թ.) և Ամերիկյան հեղափոխության (1775 թ.) միջև ընկած ժամանակահատվածում Բրիտանիան բազում պատերազմներ է մղել Ֆրանսիայի և նրա դաշնակից բնիկ ամերիկացիների դեմ: Ամերիկացի աշխարհազորայինները բրիտանացիների հետ կողք կողքի մարտնչում էին ֆրանսիացիների և հնդկացիների դեմ: Պատերազմը մեծ վնասներ պատճառեց բրիտանացի գաղութաբնակներին: Բրիտանական քաղաքները, որոնք գտնվում էին Նոր Անգլիայի և Նոր Ֆրանսիայի միջև սահմանին, ենթարկվում էին հարձակումների:

Ֆրանսիան և Բրիտանիան մրցակցում էին իրենց հյուսիսամերիկյան կայսրությունների սահմանների ընդլայնման համար: Առճակատումը վճռական փուլ մտավ 1754 թվականին, երբ բրիտանացի գաղութարարնե-

րի և նրանց բնիկ ամերիկացի դաշնակիցների ուժերը՝ երիտասարդ Ջորջ Վաշինգտոնի գլխավորությամբ, սպանեցին ֆրանսիացի դիվանագետի: Այս միջադեպը հանգեցրեց լայնածավալ պատերազմի, որը հիրավի համաշխարհային պատերազմ էր և հայտնի կդառնա որպես «Յոթնամյա պատերազմ», իսկ ամերիկացիների համար՝ «Ֆրանսիական և հնդկացիական պատերազմ»:

Հյուսիսային Ամերիկայում պատերազմի վաղ շրջանը ֆրանսիացիների համար հաջող էր ընթանում: Եվրոպայում պատերազմը սկսվեց 1756 թվականին, երբ Մեծ Բրիտանիայի դաշնակից Պրուսիայի արքա Ֆրիդրիխ II-ը ներխուժեց Սաքսոնիայի չեզոք պետություն: Ի պատասխան՝ Ֆրանսիայի, Ավստրիայի, Ռուսաստանի և Շվեդիայի հզոր կոալիցիան հարձակվեց Պրուսիայի և նրա դաշնակից մի քանի գերմանական պետությունների վրա: Եվրոպական պատերազմում բրիտանացիները ֆինանսական աջակցություն ցուցաբերեցին Պրուսիային և նրա դաշնակիցներին: Սա հնարավորություն տվեց գերմանական պետություններին կռվելու Ֆրանսիայի և նրա դաշնակիցների դեմ: Այնուամենայնիվ, ինչպես Հյուսիսային Ամերիկայում, պատերազմի սկզբնական հատվածը անհաջող էր բրիտանացիների համար: Ֆրանսիացիները ջախջախեցին Բրիտանիայի գերմանացի դաշնակիցներին և ստիպեցին նրանց հանձնվել 1757 թվականին: Նույն թվականին ավստրիացիները հաղթեցին պրուսացիներին Կոլինի ճակատամարտում, իսկ պրուսացիները հաղթեցին ֆրանսիացիներին Ռոսբախի ճակատամարտում: Վերջին ճակատամարտը թույլ տվեց բրիտանացիներին կրկին միանալ Եվրոպայի պատերազմին: Ընդամենը մեկ ամիս անց՝ 1757 թվականի դեկտեմբերին, Ֆրիդրիխի պրուսական բանակը Լեյտենի ճակատամարտում ջախջախեց ավստրիացիներին՝ վերադարձնելով կենսական նշանակություն ունեցող Սիլեզիայի երկրամասը: Հնդկաստանում և համաշխարհային օվկիանոսներում բրիտանական թագավորական նավատորմը հետևողական հաղթանակներ էր տանում ֆրանսիացիների նկատմամբ: Հունիսին Ռոբերտ Քլայվը և նրա հնդիկ դաշնակիցները հաղթեցին ֆրանսիացիներին Պլասեյի ճակատամարտում: Ամուր վերահսկողության տակ ունենալով ծովուղիները՝ բրիտանացիները կարող էին լրացուցիչ զորքեր ուղարկել Հյուսիսային Ամերիկա:

Թարմ ուժերը բրիտանացիներին թույլ տվեցին նոր հարձակումներ ձեռնարկել: 1758 թվականին բրիտանացիները գրավեցին ֆրանսիական խոշոր ամրոց-նավահանգիստ Լուիսբուրգը Նովա Սկոտիայում: 1759 թվականին բրիտանացի գեներալ Ջեյմս Վուլֆը հաղթեց ֆրանսիացի գեներալ Լուի-ժոզեֆ դե Մոնտկալմին Աբրահամի հարթավայրերի ճակատ

տամարտում՝ Քվեբեկ քաղաքի մերձակայքում: Եվրոպայում 1759 թվականին բրիտանացիները հաղթեցին ֆրանսիացիներին Մինդենի ճակատամարտում և կարողացան ոչնչացնել նաև ֆրանսիական նավատորմի մեծ մասը: Այսպիսով, 1759 թվականը բրիտանացիներն անվանում էին հրաշքների տարի (annus mirabilis): Այս հաղթանակները հանգեցրին ֆրանսիական Կանադայի անկմանը, և Հյուսիսային Ամերիկայում պատերազմն ավարտվեց 1760 թվականին՝ անգլիացիների կողմից Մոնրեալի գրավմամբ: Բրիտանացիները շարունակեցին պայքարել իսպանացիների դեմ, ովքեր պատերազմի մեջ մտան 1762 թվականին: Այս պատերազմում իսպանացիները բրիտանական հարձակումներից հաջողությամբ պաշտպանեցին Նիկարագուան, բայց չկարողացան կանխել Կուբայի և Ֆիլիպինների գրավումը:

Յոթնամյա պատերազմն ավարտվեց 1763 թվականին Փարիզի և Հուլերտուսբուրգի խաղաղության պայմանագրերով: Բրիտանացիները ֆրանսիացիներից ստացան Կանադայի և Հյուսիսային Ամերիկայի մեծ մասը, մինչդեռ պրուսացիները պահպանեցին Սիլեզիան: Հաղթանակը բրիտանացիներին տվեց ավելի մեծ կայսրություն, քան նրանք կարող էին վերահսկել, ինչը նպաստեց լարվածության աճին, որը պետք է հանգեցներ հեղափոխության: Մասնավորապես, այն բացահայտեց նոր ընդլայնված կայսրության ներսում տարածայնությունները՝ ներառյալ լեզվի, ազգային պատկանելության, կրոնական հայացքների և հավատարմության հարցերը: Երբ 1760 թվականին բրիտանացիները գրավեցին Քվեբեկը, ամերիկացի գաղութաբնակներն ուրախացան կաթոլիկ Ֆրանսիայի պարտությունից և ապահով զգացին, որ Քվեբեկի կաթոլիկներն այլևս չեն կարող սպառնալ իրենց: Անշուշտ, ամերիկյան որոշ գաղութներ XVII դարից ի վեր կրոնական փոքրամասնությունների համար ապաստան էին: Սակայն հասարակական և քաղաքական ասպարեզներում կատաղի հակակաթոլիկության կողքին գոյություն ուներ գործնական հանդուրժողականություն կաթոլիկների նկատմամբ: Այն հզոր և հարատև հռետորական գործիք էր, որը բխում էր Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի միջև պատերազմներից ու մրցակցությունից:

1763-1766 թթ. Պոնտիակի (հնդկացիական) պատերազմի (Pontiac's War) հետևանքները ևս նշանակալի էին և համատարած: Պատերազմն ապացուցեց, որ հարկադրանքը կայսերական վերահսկողության արդյունավետ ռազմավարություն չէ: Բացի այդ, անգլո-ամերիկյան բնակեցման արգելքը հնդկացիական երկրում, հատկապես Օհայո գետի հովտում, դժգոհություն առաջացրեց:

Յոթնամյա պատերազմը (1756-1763 թթ.) ամերիկյան տասներեք գաղութներին մղեց քաղաքական և մշակութային ավելի խորը մերձեցման: Պատերազմը ֆինանսապես չափազանց թանկ արժեցավ և արագացրեց հարկային, առևտրի և քաղաքականության կայսերական վերափոխումները: Մեծ Բրիտանիան ծախսել էր ավելի քան 140 միլիոն ֆունտ, ինչն աստղաբաշխական թիվ էր այդ ժամանակի համար, և ծախսերը շարունակվում էին, քանզի նոր տարածքները պահանջում էին անվտանգության նոր պարտավորություններ: Բրիտանիան ցանկանում էր փոխհատուցել իր որոշ ծախսեր: Լոնդոնում կարծում էին, որ ամերիկյան գաղութները ևս պետք է հոգան իրենց անվտանգության ծախսերը: Ուստի բրիտանական խորհրդարանը սկսեց օրենսդրություն մշակել բոլոր գաղութների վերաբերյալ, ինչը նախկինում հազվադեպ էր արվում: Արդյունքում գաղութները սկսեցին իրենց իբրև հավաքական խումբ ընկալել, այլ ոչ թե պարզապես առանձին միավորներ: 1763-1774 թվականներին գաղութներում փորձում էին իրականացնել հարկային տարբեր նախագծեր, ինչը վտանգում էր սպառումն ու առևտուրը՝ մայր Բրիտանիայի և գաղութների միջև կարևոր կապը: Հակաստրկության շարժման աճը Բրիտանիայում շատ ամերիկացիների ստիպեց անհանգստանալ, որ ստրկությունը ևս շուտով կարգելվի: Պոնտիակի հնդկացիական պատերազմից հետո Արևմուտքում՝ Ապալաչներից անդին, նոր բնակավայրերի հիմնադրման և բնակեցման բրիտանական արգելքը ևս նպաստում էր դժգոհության աճին: Ամերիկացիները բոլոր գաղութներում կայսերական բարեփոխումները դիտում էին որպես սպառնալիք բրիտանական ազատություններին, որոնք նրանք համարում էին իրենց բնական իրավունքը:

ԳԼՈՒԽ 3

Ամերիկյան հեղափոխությունը. անկախության հարացույցը

Ամբողջ XVIII դարի ընթացքում հյուսիսամերիկյան գաղութաբնակները զգալի զգացական կապեր էին զարգացրել ինչպես բրիտանական միապետության, այնպես էլ բրիտանական սահմանադրական կարգի հետ: Բրիտանացի հյուսիսամերիկյան գաղութաբնակները օգնել էին մայր Բրիտանիային հաղթելու Յոթնամյա պատերազմում, և շատերը հպարտ էին, որ բրիտանացի են: Եվ այնուամենայնիվ, մեկ տասնամյակից մի փոքր անց այդ նույն գաղութաբնակները պիտի հռչակեին իրենց անկախությունը և անջատվեին Բրիտանական կայսրությունից: 1763 թվականի լույսի ներքո ոչինչ այնքան անհավանական չէր թվում, որքան Ամերիկյան հեղափոխությունը:

Հեղափոխությունը կառուցեց հաստատություններ և ձևակերպեց այն լեզուն ու գաղափարները, որոնք դեռևս շարունակում են սահմանել ամերիկացիների ինքնութենական կերպարը: Հեղափոխականներն արդարացնում էին իրենց նոր ազգը արմատապես նոր իդեալներով, որոնք փոխեցին պատմության ընթացքը և սկզբնավորեցին հեղափոխությունների համաշխարհային դարաշրջանը: Բայց հեղափոխությունը որքան հակասական էր, այնքան էլ անկանխատեսելի էր: Ազատության համար մղված հեղափոխությունը թույլ տվեց, որ ստրկությունը պահպանվի: Կենտրոնացված իշխանության դեմ դիմադրությունը ավելի ու ավելի մերձեցրեց տարբեր գաղութներին նոր կենտրոնական կառավարության ներքո: Հեղափոխությունը կերտեց քաղաքական գործիչների, ովքեր ցանկանում էին խթանել հանրապետական անձնուրացությունը և պաշտպանել հանրային բարիքը, բայց նաև խրախուսեց անհատական ինքնաշահությունը և անձնական օգուտը: «Հիմնադիր հայրերը» հրահրեցին հեղափոխություն՝ պայքարելով Բրիտանիայից անկախանալու, այլ ոչ թե «ժողովրդավարություն» կերտելու համար: Այնուամենայնիվ, Բրիտանիայի դեմ հաջող ապստամբությունը պահանջում էր ասպարեզում ունենալ մի քանի տասնյակ «հիմնադիր հայրեր»: Հասարակ ամերիկացի գաղութաբնակները միացան պայքարին՝ հեղափոխությունը դարձնելով համաժողովրդական և սանձազերծելով ուժային պայքարի ձևեր, որոնք հաճախ չէին ողջունվում ընտրախավերի և առաջնորդների կողմից: Հենց ժողովրդական ուժերի ներգրավումն էլ շարունակեց մեծապես ներազդել նոր ազգի և ամերիկյան պատմության ձևավորման վրա:

Ամերիկյան հեղափոխության ակունքները

Ամերիկյան հեղափոխությունն ուներ և՛ երկարաժամկետ ակունքներ, և՛ կարճաժամկետ պատճառներ: XVII-XVIII դարերի Լուսավորականության դարաշրջանի երկարաժամկետ քաղաքական, մտահոգևոր, մշակութային և տնտեսական զարգացումները ստեղծեցին 1760-1770-ական թվականների ճգնաժամի ենթատեքստը: 1688 թվականի Փառահեղ հեղափոխությունից մինչև XVIII դարի կեսերը Մեծ Բրիտանիան հիմնականում չկարողացավ սահմանադրել գաղութների հարաբերությունները կայսրության կենտրոնի հետ և հաստատել կայսերական բարեփոխումների համահունչ ծրագիր: Այս անհաջողություններին նպաստեցին երկու գործոն: Նախ՝ Մեծ Բրիտանիան պատերազմական դրության մեջ էր Իսպանական ժառանգության պատերազմից (1701-1714 թթ.) մինչև Յոթնամյա պատերազմի ավարտը 1763 թվականին: Մշտական պատերազմները քաղաքականապես սպառող և տնտեսապես թանկ էին: Երկրորդ՝ կայսրության մրցակցող տեսլականները բաժանել էին Բրիտանիայի քաղաքական առաջնորդներին: Հին վիգերը և նրանց թորի կողմնակիցները պատկերացնում էին ավտորիտար կայսրություն, որը հիմնված էր տարածքներ նվաճելու և ռեսուրսներ կորզելու վրա: Նրանք ձգտում էին վերացնել Բրիտանիայի աճող պետական պարտքը՝ բարձրացնելով հարկերը և կրճատելով գաղութների վրա ծախսերը: Արմատական (կամ հայրենասեր) վիգերն իրենց կայսերական տեսլականը հիմնում էին առևտրի և արդյունաբերության վրա՝ հողի և ռեսուրսների փոխարեն: Նրանք պնդում էին, որ տնտեսական աճը, ոչ թե հարկերի բարձրացումը, կլուծի պետական պարտքի հիմնախնդիրը: Ավտորիտար կայսրության փոխարեն «հայրենասեր վիգերը» պնդում էին, որ գաղութները պետք է հավասար կարգավիճակ ունենան մայր երկրի հետ: Հատվածական փորձեր եղան բարեփոխելու գաղութների վարչաքաղաքական համակարգը, սակայն երկու կողմերի միջև բանավեճը թույլ չտվեց իրականացնել հետևողական բարեփոխումներ:

Գաղութաբնակները զարգացրին սեփական պատկերացումն այն մասին, թե որն է իրենց տեղը կայսրության մեջ: Նրանք իրենց համարում էին բրիտանական հպատակներ, որոնք Մեծ Բրիտանիայի իրենց համաքաղաքացիների նման իրավասու էին «բոլոր բնական, էական, անկասկածելի և անբաժանելի իրավունքներին»: XVIII դարը գաղութներում զգալի տնտեսական և ժողովրդագրական աճ բերեց: Ըստ նրանց պատկերացումների՝ այս հաջողությունը մասամբ բխում էր գաղութների նկատմամբ

Մեծ Բրիտանիայի հավասարակշիռ ու ձեռնպահ մոտեցումից: Ուստի XVIII դարի կեսերին գաղութաբնակները կարծում էին, որ իրենք հատուկ տեղ են զբաղեցնում կայսրությունում, ինչն արդարացնում էր Բրիտանիայի ձեռնպահության քաղաքականությունը:

Այս նույն ժամանակահատվածում գաղութները զարգացրին իրենց տեղական քաղաքական հաստատությունները: Գրեթե անմիջապես յուրաքանչյուր գաղութի բնակեցումից հետո նրանք ստեղծեցին գաղութային ժողովներ՝ խորհրդարաններ: Վերջիններս ստանձնում էին նույն պարտականությունները, ինչ Մեծ Բրիտանիայում իրականացնում էր Համայնքների պալատը՝ ներառյալ բնակչությանը հարկելը, գաղութների եկամուտներն ու ծախսերը կառավարելը և թագավորական պաշտոնյաներին աշխատավարձեր շնորհելը: 1700-ականների սկզբին գաղութների առաջնորդները անհաջող փորձ արեցին համոզելու բրիտանական կառավարությանը՝ սահմանելու իրենց ժողովների օրինական իրավասությունները, սակայն Բրիտանիան չափազանց զբաղված էր եվրոպական պատերազմներով: XVIII դարի առաջին կեսին Առևտրային խորհրդի հանձնարարությամբ թագավորական նահանգապետերը փորձեցին սահմանափակել գաղութային ժողովների իշխանությունը, բայց ժողովների իշխանությունը միայն աճեց: Շատ գաղութաբնակներ ավելի էին համոզվում, որ իրենց ժողովները տեղերում ունեին նույն իրավագործությունը, ինչ խորհրդարանը Անգլիայում: Նրանք բրիտանական անգործությունը մեկնաբանեցին որպես տեղական կառավարման իրենց ավանդույթի արդարացում: Բրիտանական գահը և խորհրդարանը, սակայն, այդ կարծիքին չէին:

Գաղութային քաղաքական մշակույթը նույնպես տարբեր կերպ էր զարգանում, քան մայր երկրում: Թե՛ Բրիտանիայում, թե՛ գաղութներում հողը քաղաքական մասնակցության բանալին էր, բայց քանի որ գաղութներում ավելի հեշտ էր հող ձեռք բերելը, տղամարդ գաղութաբնակների մեծ մասը մասնակցում էր քաղաքականությանը: Գաղութային քաղաքական մշակույթը ոգեշնչվում էր Մեծ Բրիտանիայի «Երկիր» կուսակցությունից: Նրանց հանրապետականության գաղափարաբանությունը ընդգծում էր իշխանության և ինքնակառավարման մեջ ներգրավվածների առաքինի լինելու անհրաժեշտությունը՝ «հանրային բարիքը» վեր դասելով սեփական շահից: Հայրենասերները պետք է մշտական զգոնություն ցուցաբերեին կենտրոնացված վերահսկողության և բռնակալության աճի դեմ: Ի տարբերություն Բրիտանիայի՝ հյուսիսամերիկյան գաղութներում այս գաղափարները լայնորեն ընդունվեցին:

1740-ական թվականներին երկու թվացյալ հակասող մտքի հոսանքներ՝ Լուսավորությունը և Մեծ զարթոնքը, սկսեցին միավորվել գաղութներում և վիճարկել իշխանության մասին ավելի հին գաղափարները: Անգլիացի նշանավոր իմաստասեր Ջոն Լոքի մտքի ազդեցությունը գաղութների լուսավորականության վրա ահռելի էր: Լոքը պնդում էր, որ մարդկային միտքն ու ըմբռնումն ի սկզբանե եղել են մաքուր տախտակ կամ դատարկ թերթիկ (tabula rasa), և որ անհատները հիմնականում ձևավորվում են իրենց միջավայրի ազդեցությամբ: Ուստի արիստոկրատիան հարուստ և հաջողակ էր, քանզի ուներ բարեկեցության, կրթության և հովանավորչության առավել մեծ հասանելիություն, այլ ոչ թե այն պատճառով, որ ուներ բնածին գերազանցություն: Լոքը հիմնովին նոր գաղափարներ զարգացրեց կրթության կարևորության վերաբերյալ. կրթությունը կատեղծեր բանական մարդկային էակներ, որոնք կարող էին մտածել ինքնուրույն և կասկածի տակ դնել իշխանության հեղինակությունը՝ ավանդույթը լռելյայն ընդունելու փոխարեն: Այս գաղափարները աստիճանաբար սկսեցին հեռահար ազդեցություն ունենալ գաղութներում, իսկ ավելի ուշ՝ նոր ազգի կերտման պատմական գործընթացում:

Գաղութները նաև կրեցին ավետարանական բողոքական վերածննդի ազդեցությունը: 1739-1740 թթ. քահանա Ջորջ Ուայթֆիլդը քարոզում էր իր ունկնդիրներին, որ փրկությունը կարելի է գտնել միայն Աստծո հետ անհատական անմիջնորդ հարաբերություններ հաստատելով և անձնական պատասխանատվություն ստանձնելով, մի գործընթաց, որը հայտնի դարձավ որպես «փոխակերպման» փորձառություն: Նա նաև պնդում էր, որ եկեղեցական աստիճանակարգությունը և գործող չվերափոխված հոգևոր սպասավորները արգելակում են անհատի և Աստծո միջև անմիջնորդ հարաբերությունները: Նրանից հետո շրջագայող նոր քարոզիչներն ընդունեցին նրա պատգամը և տարածեցին այս գաղափարները: Եվ Լոքը, և Ուայթֆիլդը անհատներին լիազորել էին կասկածի տակ առնել իշխանության հեղինակությունը և անձամբ տնօրինել իրենց ճակատագիրը:

Այլ ոլորտներում XVIII դարի գաղութաբնակները մշակութային առումով ավելի էին նմանվում բրիտանացիներին, մի գործընթաց, որը հաճախ կոչվում էր *անգլիականացում* (Anglicization): Գաղութների տնտեսություններն աճում էին և արագորեն վերաձվում բրիտանական արտադրության ապրանքների վաճառահանման կարևոր շուկայի: Եկամուտներ ունեցող և բրիտանական շուկաներ մուտք գործող գաղութաբնակները փորձում էին ընդօրինակել բրիտանական մշակույթը:

Ամերիկյան հեղափոխության պատճառները

Ամերիկյան հեղափոխությունը Յոթնամյա պատերազմի անմիջական արդյունքն էր և բխում էր Բրիտանական կայսրությունը վերափոխելու փորձերից: Յոթնամյա պատերազմը Եվրոպական տերությունների միջև գրեթե կեսդարյա պատերազմի գագաթնակետն էր: Դա իսկապես համաշխարհային պատերազմ էր մի շարք տերությունների միջև հինգ աշխարհամասերում: Արդյունքում Բրիտանական կայսրությունն ընդլայնվեց: Բրիտանիան արդեն վերահսկում էր Միսիսիպի գետից արևելք գտնվող հյուսիսամերիկյան մայրցամաքը՝ ներառյալ Ֆրանսիական Կանադան: Բրիտանիան նաև ամրապնդեց իր վերահսկողությունը Հնդկաստանի նկատմամբ: Սակայն հետպատերազմյան կայսրության իրողություններն ու պատասխանատվությունները սպառնալից էին: Հաղթանակը նման ծավալների պատերազմում չափազանց թանկ արժեցավ: Մեծ Բրիտանիան կրկնապատկել էր պետական պարտքը, որն այդժամ 13,5 անգամ գերազանցում էր իր տարեկան եկամուտը: Բրիտանիան բախվեց շոշափելի նոր ծախսերի, որոնք անհրաժեշտ էին իր հսկայական անդրծովյան կայսրությունը, հատկապես հյուսիսամերիկյան գաղութների արևմտյան սահմաններն ապահովելու և պաշտպանելու համար: Այս գործոնները ստիպեցին Մեծ Բրիտանիային 1760-ական թվականներին փորձել ամրապնդել վերահսկողությունը իր հյուսիսամերիկյան գաղութների վրա, ինչը իր հերթին հանգեցրեց դիմադրության:

1760 թվականին բրիտանական գահին բազմեց արքա Ջորջ III-ը և իշխանության բերեց թորիներին, որոնք ներկայացնում էին կայսրության ավտորիտար տեսլականը, որում գաղութները ստորադաս պետք է լինեին: 1763 թվականի Թագավորական հոչակագիրն (Royal Proclamation of 1763) արգելեց Ապալաչյան լեռներից արևմուտք ընկած տարածքների բնակեցումը՝ փորձելով սահմանափակել բնիկ ամերիկացիների հետ թանկ արժեցող պատերազմները: Գաղութարարները, սակայն, բողոքեցին և պահանջեցին մուտքի իրավունք այդ տարածքներ, որի համար նրանք կռվել էին բրիտանացիների կողքին: 1764 թվականին խորհրդարանն ընդունեց Շաքարի օրենքը (Sugar Act), որը կոչված էր պայքարելու Նոր Անգլիայում կերամաթի (մելասի) համատարած մաքսանենգության դեմ՝ կիսով չափ կրճատելով տուրքերը, բայց խստացնելով օրենքի կիրառումը: Մաքսանենգները պետք է դատվեին թագավորական փոխծովակալության դատարանների, այլ ոչ թե գաղութների երդվյալ ատենակալների կողմից: Նույն թվականին խորհրդարանն ընդունեց նաև Արժույթի

օրենքը (Currency Act), որը սահմանափակեց գաղութներում թղթադրամի թողարկումը: Գաղութներում ոսկե և արծաթե մետաղադրամները սուղ էին: Արժույթի սղությունը խանգարում էր գաղութների բարդ ու համալիր անդրատլանտյան տնտեսությունների զարգացմանը, բայց դա հատկապես զգացվեց 1764 թվականին, երբ հետպատերազմյան տնտեսական անկումն արդեն սկսվել էր: 1763 թվականի Թագավորական հռչակագրի, արժութային ու շաքարային օրենքների և այլ սահմանափակումների հետևանքով շատ գաղութաբնակներ սկսեցին վախենալ հարկերի ավելացման և ազատությունների սահմանափակման հետագա ընթացքից:

1765 թվականի մարտին խորհրդարանն ընդունեց Դրոշմանիշի օրենքը (Stamp Act): Օրենքը պահանջում էր փաստաթղթերի և հրատարակությունների վրա դրոշմակնիքի առկայություն՝ տուրքի վճարված լինելը ցույց տալու համար, այդ թվում՝ թերթերի, ամսագրերի, բրոշյուրների, դիպլոմների, իրավական փաստաթղթերի և նույնիսկ խաղաքարտերի: Եթե 1764 թ. Շաքարի օրենքով փորձ էր արվում ստիպել առևտրականներին վճարել արդեն իսկ գոյություն ունեցող տուրքը, ապա Դրոշմանիշի օրենքը ստեղծեց նոր ուղղակի («ներքին») տուրք: Խորհրդարանը նախկինում երբեք ուղղակիորեն չէր հարկել գաղութաբնակներին: Փոխարենը, գաղութներն իրենց ֆինանսական նպաստն էին բերում կայսրությանը անուղղակի («արտաքին») հարկերի՝ մաքսատուրքերի վճարման միջոցով: Ի տարբերություն Շաքարի օրենքի, որը հիմնականում ազդում էր առևտրականների վրա՝ Դրոշմանիշի օրենքն ուղղակիորեն ազդեց գաղութային հասարակության բազմաթիվ շերտերի և խմբերի վրա՝ ներառելով հրատարակիչներին, տպագրիչներին, իրավաբաններին, համալսարանական շրջանավարտներին և նույնիսկ նավաստիներին, ովքեր թղթախաղ էին խաղում: Սա իր հերթին հանգեցրեց ավելի լայն, ավելի ժողովրդական դիմադրության:

Դրոշմանիշի օրենքին դիմադրությունն արտահայտվեց երեք ձևով, որը հիմնականում դասակարգային բնույթ ուներ՝ օրենսդրական դիմադրություն ընտրախավերի կողմից, տնտեսական դիմադրություն վաճառականների կողմից և ժողովրդական բողոք հասարակ գաղութաբնակների կողմից: Գաղութային վերնախավերն արձագանքեցին իրենց ներկայացուցիչների ժողովներում բանաձևերի ընդունմամբ: Դրոշմանիշի օրենքի դեմ բանաձևերից ամենահայտնին 1765 թ. մայիսի 30-ին Բուրգեսների պալատի կողմից ընդունված Վիրջինիայի վճիռն էր (Virginia Resolves), որը հռչակում էր գաղութաբնակների իրավագործությունը՝ օգտվելու «բոլոր ազատություններից, արտոնություններից, իրավունքներից և ան-

ձեռնմխելիությունից ... ինչն ունի Մեծ Բրիտանիայի ժողովուրդը»: Սակայն երբ Վիրջինիայի որոշումները տպագրվում և տարածվում էին բոլոր գաղութներում, դրանք հաճախ ներառում էին մի քանի լրացուցիչ, շատ ավելի արմատական բանաձևեր, որոնք չէին ընդունվել Վիրջինիայի Բուրգեսների պալատի կողմից՝ նպաստելով արմատական տրամադրությունների աճին:

Այսպես, Վիրջինիայի բանաձևի տպագրությունների վերջին տարբերակը պնդում էր, որ միայն «այս գաղութի ընդհանուր ժողովն իրավունք և իշխանություն ունի որևէ հարկ պարտադրելու կամ սահմանելու», և որ յուրաքանչյուր ոք, ով վիճարկում է, «կհամարվի Նորին Մեծության գաղութի թշնամի»: Ի վերջո, 1765 թ. հոկտեմբերին Նյու Յորքում գումարվեց Դրոշմանիշի ակտի կոնգրեսը. ինը գաղութներ ուղարկեցին պատվիրակներ, որոնց թվում էին Բենջամին Ֆրանկլինը, Ջոն Դիկինսոնը, Թոմաս Հաթչինսոնը, Ֆիլիպ Լիվինգսթոնը և Ջեյմս Օտիսը: Կոնգրեսը հրապարակեց «Իրավունքների և բողոքների հռչակագիրը» (“Declaration of Rights and Grievances”), որը, ինչպես Վիրջինիայի բանաձևը, հայտարարեց իր հավատարմությունը թագավորին և «պատշաճ ենթակայություն» խորհրդարանին, բայց նաև վերահաստատեց այն գաղափարը, որ գաղութաբնակներն ունեն նույն իրավունքները, ինչ բրիտանացիները: Այդ իրավունքները ներառում էին երդվյալ ատենակալների դատավարությունը, որը կրճատվել էր Շաքարի օրենքով, և միայն իրենց ընտրած ներկայացուցիչների կողմից հարկվելու իրավունքը: Գաղութները չէին ընտրում բրիտանական խորհրդարանի անդամներին, հետևաբար գաղութաբնակները կարծում էին, որ իրենք ներկայացված չէին, ուստի և չէին կարող հարկվել այդ մարմնի կողմից, ինչն անգլիական սահմանադրական կարգի էական սկզբունքն էր: Ի պատասխան՝ խորհրդարանը և Թագը պնդում էին, որ գաղութաբնակները «փաստացի ներկայացված են» (virtual representation), ինչպես Անգլիայի այն քաղաքների կամ կոմսությունների բնակիչները, որոնք նույնպես չէին ընտրում խորհրդարանի անդամներ: Այնուամենայնիվ, գաղութաբնակները մերժեցին «փաստացի ներկայացուցչության» հասկացությունը՝ այն անվանելով «իրեշավոր գաղափար»:

Դրոշմանիշի օրենքի դեմ դիմադրության երկրորդ տեսակը տնտեսականն էր: Մինչ Դրոշմանիշի ակտի կոնգրեսը քննարկում էր խնդիրը, խոշոր նավահանգստային քաղաքների առևտրականները պատրաստում էին չներմուծման համաձայնագրեր՝ հուսալով, որ բրիտանական ապրանքների ներմուծումից հրաժարվելը կստիպի բրիտանացի վաճառա-

կաններին լոբբինգի միջոցով հասնել Դրոշմանիշի օրենքի չեղարկմանը: Ծրագիրն աշխատեց. 1766 թ. հունվարին լոնդոնյան վաճառականները նամակ հղեցին պառլամենտին՝ պնդելով, որ դրոշմատուրքի ակտի և դրան հաջորդած բոլկոտների պատճառով նրանք կործանարար վնասներ են կրում:

Դիմադրության երրորդ և թերևս ամենազորեղ տեսակը ժողովրդական բողոքն էր: Բոստոնում անկարգություններ սկսվեցին, ժողովրդական հուզումները, բռնությունն ու ահաբեկումը արագորեն տարածվեցին նաև մյուս գաղութներում: Թիրախավորվում էին դրոշմանիշներ բաշխող պաշտոնյաները: Մինչև 1765 թ. նոյեմբերի 16-ը դրոշմանիշների բոլոր տասներկու դիստրիբյուտորները հրաժարական տվեցին, և մինչև 1766 թվականը գաղութների մեծ մասում ստեղծվեցին խմբեր, որոնք իրենց անվանում էին «Ազատության որդիներ» (Sons of Liberty)՝ հետագա դիմադրությունն ուղղորդելու և կազմակերպելու համար: Այս մարտավարությունը կրկնակի ազդեցություն ունեցավ՝ ուղերձ հղելով բրիտանական խորհրդարանին և ստիպելով գաղութաբնակներին հրաժարվել դրոշմանիշների բաշխման գրասենյակներում պաշտոնների նշանակումներն ընդունելուց: Իսկ քանի որ ոչ ոք այլևս չէր բաշխում դրոշմանիշները, օրենքը դարձավ անգործունակ:

Խորհրդարանի վրա ճնշումն ահագնացավ: 1766 թ. փետրվարին այն չեղարկեց Դրոշմանիշի օրենքը: Բայց դեմքը փրկելու և ապագայում նման խնդիրներից խուսափելու համար խորհրդարանն ընդունեց նաև Հռչակագրային օրենքը (Declaratory Act)՝ հայտարարելով, որ բոլոր դեպքերում խորհրդարանն ունի «Ամերիկայի գաղութներին և ժողովրդին պարտավորեցնող օրենքներ ընդունելու լիակատար լիազորություն և իշխանություն...»: Նյու Յորքում բնակիչները կանգնեցրին արքա Ջորջ III-ի արձանը՝ ի պատիվ Դրոշմանիշի օրենքի չեղարկման:

Բայցևայնպես, Բրիտանիան իր գաղութներից եկամուտների կարիք ուներ: Գաղութներից եկամուտներ ստանալու Բրիտանիայի հաջորդ փորձը 1767 թվականի հունիսին ընդունված Թաունշենդի օրենքներն էին (Townshend Acts), որոնք ուղղակի հարկերի փոխարեն նոր մաքսատուրքեր սահմանեցին սովորական ապրանքների համար, ինչպիսիք էին կապարը, ապակին, ներկը և թեյը: Օրենսդրական ակտերը նաև ամրապնդվեցին օրենքի կիրառման պաշտոնական և վարչարարական մեխանիզմներով, ինչպիսիք էին Մաքսային հանձնակատարների ամերիկյան խորհրդի և ավելի մեծ թվով փոխծովակալական դատարանների (vice-admiralty courts) ստեղծումը՝ մաքսանենգներին դատելու համար: Մաքսային

առգրավումներից ստացված եկամուտները պետք է օգտագործվեին մաքսավորներին և թագավորական այլ պաշտոնյաներին՝ ներառյալ նահանգապետներին աշխատավարձ վճարելու համար՝ դրանով իսկ խրախուսելով նրանց պատասխանատվության ենթարկելու իրավախախտներին: Այս գործողությունները մեծացնում էին բրիտանական կառավարության ներկայությունը գաղութներում և սահմանափակում գաղութային ժողովների լիազորությունները, քանզի նահանգապետերի աշխատավարձերի վճարումը վաղուց գաղութային ժողովների իրավասությունն էր, ինչը զգալի իշխանություն և վերահսկողություն էր ապահովում նահանգապետերի նկատմամբ: Չարմանալի չէ, որ գաղութաբնակները կրկին դիմադրեցին:

Թեև դրանք մաքսատուրքեր էին, գաղութային դիմադրության շատ առաջնորդներ քննադատում էին Թաունշենդի տուրքերը՝ դրանք անվանելով «հարկեր», քանզի նախատեսված էին հիմնականում գաղութներից եկամուտներ կորզելու, այլ ոչ թե առևտուրը կարգավորելու համար: Ըստ այդմ՝ ի հայտ եկան դիմադրության նոր ձևեր, որոնց մասնակցում էին վերնախավը, միջին խավը և աշխատավոր դասակարգը: Վաճառականները վերահաստատեցին չներմուծման համաձայնագրերը, իսկ հասարակ գաղութաբնակները համաձայնեցին չսպառել այդ ապրանքները: Կանայք նույնպես չտեսնված ջանասիրությամբ ներգրավվեցին Թաունշենդի տուրքերի դեմ դիմադրության մեջ: Ձևավորվեցին մանող խմբակներ, որոնցում տեղացի կանայք հավաքվում էին իրենց տներից մեկում և հագուստներ կարում իրենց ընտանիքների և համայնքների համար: Տնահյուս գործվածքներն ու հագուստը արագորեն դարձան առաքինության և հայրենասիրության նշան, և կանայք այս մշակութային տեղաշարժի կարևոր մասն էին: Միևնույն ժամանակ, բրիտանական ապրանքներն ու շքեղությունը, որոնք նախկինում ցանկալի էին, այժմ դարձել էին բռնակալության խորհրդանիշներ:

Չներմուծման և հատկապես չսպառման համաձայնագրերը փոխեցին գաղութաբնակների մշակութային հարաբերությունները մայր երկրի հետ: Տեսչական կոմիտեները վերահսկում էին առևտրականներին և բնակիչներին՝ համոզվելու, որ ոչ ոք չի խախտում պայմանավորվածությունները: Իրավախախտները ենթարկվում էին հրապարակային պարսավանքի: Չներմուծումը և չսպառումը նպաստեցին գաղութային միասնության ձևավորմանը: Գաղութները ստեղծեցին Հաղորդակցության կոմիտեներ, որպեսզի միմյանց տեղեկացված պահեին տարբեր գաղութներում դիմադրության ջանքերի մասին:

Թերթերը վերատպում էին դիմադրության սխրանքները՝ գաղու-

թաբնականներին ներշնչելով այն զգացումը, որ նրանք ավելի լայն քաղաքական համայնքի մաս են: Այս նոր «մայրցամաքային տրամասույթը» զարգացավ հատկապես Բոստոնի «կոտորածից» հետո: 1770 թ. մարտի 5-ին բախում տեղի ունեցավ ագրեսիվ ամբոխի ու սակավաթիվ բրիտանացի զինվորների միջև, որի ժամանակ հինգ բոստոնցիներ զոհվեցին: Բոստոնի դատարանը արդարացրեց զինվորներին նրանց դատապաշտպան Ջոն Ադամսի ջանքերով: Բոստոնի «կոտորածի» մասին չափազանցված լուրերը արագ տարածվեցին դիմադրության հաղորդակցության նոր ցանցերի միջոցով՝ նպաստելով Բրիտանիայի նկատմամբ հակակրանքի աճին:

Դիմադրությունը կրկին հանգեցրեց օրենքի չեղարկման: 1770 թ. մարտին խորհրդարանը չեղյալ հայտարարեց բոլոր նոր տուրքերը, բացառությամբ թեյի տուրքի, որը, ինչպես և Հռչակագրային օրենքը, պահպանվեցին բրիտանական կառավարության դեմքը փրկելու և պնդելու համար, որ խորհրդարանը դեռևս պահպանում է գաղութները հարկելու իրավունքը: 1765-1770 թթ. գաղութների դիմադրության բնույթը փոխվեց: Դրոշմանիշի օրենքի դեմ դիմադրության ժամանակ ընտրախավերը համագումարներում բանաձևեր էին գրում և անցկացնում, մինչդեռ ամբոխներն այրում էին և քանդում հանրաճանաչ գործիչների տները՝ գաղութների միջև նվազագույն համակարգմամբ: Սակայն Թաունշենդի տուրքերի դեմ դիմադրության մեթոդները դարձան ավելի ընդգրկուն և ավելի համակարգված: Նախկինում քաղաքական բովանդակալից մասնակցությունից զրկված գաղութաբնակները այժմ ստորագրություններ էին հավաքում, իսկ դիմադրությունը մասնակցում էին բոլոր խավերից՝ բոլորովին բրիտանական ապրանքները:

Այսպիսով, 1760-ական թվականներին Մեծ Բրիտանիայի կայսերական վերափոխումների ծախսոված փորձերը ստեղծեցին ավելի զգոն և դիմադրող գաղութային բնակչություն և ամենակարևորը՝ ընդլայնված քաղաքական ոլորտ ինչպես գաղութային, այնպես էլ մայրցամաքային մակարդակներում: Ընդհանուր դժգոհության զգացումը և միասնական դիմադրությունը միավորեցին գաղութաբնակներին՝ նպաստելով ամերիկյան ընդհանուր քաղաքական ինքնության ձևավորմանը:

Անկախության հռչակումը

Հյուսիսամերիկյան գաղութների և Անգլիայի միջև լարվածությունը որոշ ժամանակով թուլացավ: Հետպատերազմյան անկումը նահանջեց

և գաղութային տնտեսությունը բարելավվեց: Սակայն պահպանվում էր Բրիտանիայի ցանկությունն ու անհրաժեշտությունը՝ վերափոխելու կայսերական վարչարարությունը: Ազատության որդիները որոշ գաղութներում ձգտում էին շարունակել չներմուծման գործողությունները նույնիսկ Թաունշենդի ակտերը չեղյալ հայտարարվելուց հետո:

1773 թվականի ապրիլին խորհրդարանը երկու նոր օրենսդրական ակտ ընդունեց՝ օգնելու Արևելահնդկական ընկերությանը (East India Company), որպեսզի այն կարողանա կատարել իր ֆինանսական պարտավորությունները և տարեկան վճարումները Բրիտանիային: Արևելահնդկական ընկերությունը խեղդվում էր ոչ միայն պարտքերի, այլև թեյի մեջ, որով լեցուն էին պահեստները: 1773 թվականին խորհրդարանն ընդունեց Կարգավորիչ օրենքը (Regulating Act), որով այդ խնդրահարույց ընկերությունը անցավ կառավարության վերահսկողության ներքո: Այնուհետև այն ընդունեց Թեյի օրենքը (Tea Act), որը թույլ էր տալիս ընկերությանը վաճառել իր թեյը գաղութներում ուղղակիորեն և առանց սովորական ներմուծման մաքսատուրքերի: Սա զգալիորեն կարող էր նվազեցնել թեյի արժեքը գաղութաբնակների համար, սակայն նրանք կրկին դիմադրեցին: Վաճառականները դիմադրեցին Թեյի օրենքին, քանզի նրանք դժգոհ էին Արևելահնդկական ընկերության մենաշնորհից: Բայց ինչպես Շաքարի օրենքը, այնպես էլ Թեյի օրենքը ազդեց մարդկանց միայն փոքր, մասնավոր խմբերի վրա: Թեյի օրենքին դիմակայելու լայնածավալ աջակցությունն ավելի շատ կապված էր սկզբունքների հետ. գնելով թեյ, թեև այն ավելի էժան էր, գաղութաբնակները կվճարեին տուրքը և դրանով իսկ անուղղակիորեն կճանաչեին իրենց հարկելու բրիտանական խորհրդարանի իրավունքը:

Թեյի օրենքը նախատեսում էր, որ տուրքը պետք է վճարվեր նավը բեռնաթափելիս: 1773 թվականի նոյեմբերին Բոստոնի «Ազատության որդիները» որոշեցին կանխել թեյի բեռնաթափումն ու վաճառքը և ըստ այդմ՝ տուրքի վճարումը: Նավահանգիստները հսկելու համար մարդկիկ նշանակվեցին՝ համոզվելու, որ թեյը մնում է նավերի վրա, մինչև դրանք վերադառնան Լոնդոն: Բայց դեկտեմբերի 16-ին նավերը դեռ այնտեղ էին: Ուստի տասնյակ տղամարդիկ, ծպտված մոհավկ հնդկացիների կերպարանքով, ճանապարհ ընկան դեպի նավահանգիստ և թեյով բեռնված երեք նավերի թեյապարկերը նետեցին Բոստոնի ծովածոցի ջրերը: Դեպքը պատմության մեջ հայտնի է որպես «Բոստոնյան թեյախմություն»:

Երբ լուրերը տարածվեցին մյուս գաղութներում, հայրենասերները համարձակվեցին նույնն անել իրենց նավահանգիստներում կայանած նավե-

րի թեյի բեռների հետ: Թեյը կամ թափվեց, կամ առգրավվեց Չարլսթոնում, Ֆիլադելֆիայում և Նյու Յորքում: Բազմաթիվ այլ փոքր «թեյախնջույքներ» տեղի ունեցան 1774 թվականին: Ժողովրդական բողոքը տարածվեց բոլոր մայրցամաքային գաղութներում և գաղութային հասարակության բոլոր մակարդակներում: Տասներեք գաղութների կանայք զորեղ կերպով արտահայտեցին իրենց քաղաքական զգացմունքները որպես թեյի սպառողներ և պատրաստողներ: Քանի որ կանայք էին հիմնականում որոշումներ կայացնում տնային տնտեսությունների գնումների վերաբերյալ, նրանց մասնակցությունը սպառողական ապրանքների բոյկոտներին առանձնահատուկ նշանակություն ունեցավ:

Մեծ Բրիտանիան արագ արձագանքեց. հաջորդ տարվա գարնանը խորհրդարանն ընդունեց չորս նոր օրենսդրական ակտեր, որոնք միասին Բրիտանիայում հայտնի էին որպես «Հարկադրական ակտեր» (Coercive Acts): Գաղութաբնակները, սակայն, դրանք անվանում էին «Անհանդուրժելի ակտեր» (Intolerable Acts): Նախ, Բոստոնի նավահանգստի օրենքով (Boston Port Act) փակվեց նավահանգիստը և դադարեցվեցին բոլոր առևտրային մուտքերն ու ելքերը: Մասաչուսեթսի կառավարման օրենքը (Massachusetts Government Act) գաղութի կառավարությունն ամբողջությամբ դրեց բրիտանական վերահսկողության տակ՝ ցրելով գաղութային ժողովը և սահմանափակելով քաղաքային ժողովները: Արդարադատության վարչարարության օրենքով (Administration of Justice Act) հանցագործության մեջ մեղադրվող յուրաքանչյուր թագավորական պաշտոնյա պետք է դատվեր Բրիտանիայում, այլ ոչ թե Մասաչուսեթսի դատարանների և երդվյալ ատենակալների կողմից: Վերջապես, բոլոր գաղութներին վերաբերող Ջորանոցային օրենքը (Quartering Act) բրիտանական բանակին թույլ էր տալիս նոր ժամանած զինվորներին տեղավորել գաղութաբնակների տներում: Բոստոնը համարվում էր բացահայտ ապստամբության կենտրոն, և թագավորը, նրա խորհրդականներն ու խորհրդարանը վճռականորեն գործեցին ապստամբությունը ճնշելու համար:

Լոնդոնում, սակայն, չէին սպասում, որ մյուս գաղութները օգնության կգան Մասաչուսեթսին: Գաղութաբնակները սնունդ էին հավաքում Բոստոն ուղարկելու համար: Մասաչուսեթսի մեկուսացման փոխարեն Հարկադրական ակտերը խթանեցին նախորդ տասնամյակի ընթացքում ձևավորված ընդհանուր ինքնության զգացումը: Ի վերջո, եթե բրիտանական գահը և խորհրդարանը կարողանային ցրել Մասաչուսեթսի կառավարությունը, ոչինչ չէր կարող խանգարել նրանց նույնն անել մյուս գաղութներում: Մասաչուսեթսում հայրենասերները ստեղծեցին Գավառական կոնգ-

րեսը (Provincial Congress), և 1774 թվականին նրանք վերահսկողություն հաստատեցին տեղական ինքնակառավարման և շրջանային իշխանությունների ու դատարանների վրա: Նյու Յորքում քաղաքացիները ընտրեցին հանձնաժողովներ՝ ուղղորդելու գաղութների պատասխանը հարկարական գործողություններին: 1774 թվականի սկզբին Հաղորդակցության կոմիտեներ (Committees of Correspondence) և արտասօրինական ժողովներ ստեղծվեցին բոլոր գաղութներում, բացառությամբ Ջորջիայի: Եվ ամբողջ տարվա ընթացքում նրանք, հետևելով Մասաչուսեթսի օրինակին, տեղերում զավթեցին թագավորական իշխանության լիազորությունները:

Հաղորդակցության կոմիտեները համաձայնեցին պատվիրակներ ուղարկել Մայրցամաքային կոնգրես (Continental Congress)՝ միջգաղութային պատասխանը համակարգելու համար: Առաջին Մայրցամաքային կոնգրեսը գումարվեց 1774 թվականի սեպտեմբերի 5-ին: Հաջորդ վեց շաբաթվա ընթացքում բոլոր գաղութներից, բացի Ջորջիայից, ընտրախավերի պատվիրակները թողարկեցին մի շարք փաստաթղթեր, այդ թվում՝ «Իրավունքների և բողոքների հռչակագիրը» (Declaration of Rights and Grievances): Այս փաստաթուղթը կրկնում էր այն փաստարկները, որոնք գաղութաբնակները ներկայացնում էին 1765 թվականից: Նրանք հայտարարում էին, որ պահպանում են բնիկ բրիտանացիների բոլոր իրավունքները՝ ներառյալ միայն իրենց ընտրված ներկայացուցիչների կողմից հարկվելու իրավունքը, ինչպես նաև երդվյալ ատենակալների դատավարության իրավունքը:

Ամենակարևորը, Կոնգրեսը հրապարակեց փաստաթուղթ, որը հայտնի է որպես «Մայրցամաքային ասոցիացիա» (“Continental Association”), որը դժբախտությունների պատճառ էր հայտարարում 1763 թվականին բրիտանական կառավարության կողմից ընդունված գաղութների կառավարման «կործանարար» համակարգը: Ըստ այդմ՝ պետք է ստեղծվեին տեսչական կոմիտեներ, հիմնականում բաղկացած պարզ գաղութաբնակներից, որոնք իրենց համայնքներում պետք է պահպանեին կարգուկանոն և հրապարակեին Ասոցիացիան խախտող յուրաքանչյուրի անունը՝ նրանց ենթարկելով հրապարակային պարսավանքի՝ իբրև «ամերիկյան ազատության թշնամիների»: Պատվիրակները նաև համաձայնության հասան մայրցամաքային չներմուծման, չսպառման և չարտահանման համաձայնագրի շուրջ և պետք է դադարեցնեին ստրկավաճառությունը: Ընդհանուր առմամբ, Մայրցամաքային ասոցիացիան այդ ժամանակաշրջանի թերևս ամենաարմատական փաստաթուղթն էր: Այն ձգտում էր միավորել և ուղղորդել ամերիկյան տասներկու գաղութների հեղափոխական կառա-

վարությունները, հաստատել տնտեսական և բարոյական քաղաքականություններ և զորեղացնել հասարակ գաղութաբնականներին՝ նրանց տալով քաղաքական իշխանության կարևոր և աննախադեպ աստիճան:

Սակայն ոչ բոլոր գաղութաբնականներն էին հայրենասերներ: Իրոք, շատերը հավատարիմ մնացին թագավորին և խորհրդարանին, մինչդեռ շատերն էլ չեզոք դիրք բռնեցին: 1774-1775 թթ. իրավիճակը սրվեց: Վաճառական ընտրախավերը, որոնք առևտուր էին անում հիմնականում Բրիտանիայի, անգլիկան հոգևորականների և թագավորական պաշտոններ զբաղեցնող գաղութաբնականների հետ, կախված էին և արտոնություններ էին ստանում անմիջապես Բրիտանիայից: Սկզբում նրանք ձգտում էին չափավոր ազդեցություն ունենալ դիմադրության կոմիտեների վրա, բայց Ասոցիացիայի հաստատումից հետո այս գաղութաբնականներից ոմանք սկսեցին անհանգստանալ, որ դիմադրությունը չափազանց արմատական բնույթ է ստանում և միտված է անկախությանը: Նրանք, ինչպես այս ժամանակաշրջանի գաղութաբնականների մեծ մասը, դեռևս ակնկալում էին խաղաղ հաշտեցում Բրիտանիայի հետ և հետզհետե ավելի կասկածամիտ էին դառնում դիմադրության շարժման նկատմամբ:

Այնուամենայնիվ, երբ 1775 թվականի մայիսին նորից գումարվեց Մայրցամաքային կոնգրեսը, Մասաչուսեթսում պատերազմն արդեն սկսվել էր: 1775 թվականի ապրիլի 19-ին բրիտանական զորագնդերը ձեռնամուխ եղան գրավելու Լեքսինգթոնում և Կոնկորդում տեղացի զինյալների զենքի և վառոդի պահեստները: Քաղաքային աշխարհագրորդ նրանց հանդիպեց Լեքսինգթոն Գրինում: Բրիտանացիները հրամայեցին աշխարհագրորին ցրվել, երբ ինչ-որ մեկը կրակեց, ի պատասխան՝ բրիտանացիները համազարկային կրակ բացեցին: Ճակատամարտը շարունակվեց մինչև մոտակա Կոնկորդ քաղաքը: Լեքսինգթոնի իրադարձությունների մասին լուրերը արագորեն տարածվեցին: Աշխարհագրայիններն արագ արձագանքեցին և զգալի կորուստներ պատճառեցին բրիտանական զորքերին՝ հետապնդելով նրանց մինչև Բոստոն: Մոտ 20-հազարանոց գաղութային աշխարհագրորդ պաշարեց Բոստոնը՝ փաստորեն թակարդը գցելով բրիտանացիներին: Հունիսին աշխարհագրայիններն ամբողջություններ կառուցեցին քաղաքին հանդիպակաց բլրի վրա: «Բունկեր բլրի» ճակատամարտում բրիտանացիները փորձեցին ճակատային գրոհով հեռացնել նրանց զբաղեցրած դիրքից: Բրիտանացիներին հաջողվեց ծանր կորուստների գնով նվաճել բարձունքը:

Մինչ Բոստոնում մարտեր էին ընթանում, Մայրցամաքային կոնգրեսը ջանում էր պատասխան գրոհ կազմակերպել: Մասաչուսեթսի արմատա-

կանպատվիրակները, այդ թվում՝ Ջոն Ադամսը, Սեմուել Ադամսը և Ջոն Հենքոքը, խնդրեցին Կոնգրեսին աջակցել Մասաչուսեթսի աշխարհագորայիններին, որոնք առանց մատակարարումների շարունակում էին Բոստոնի պաշարումը: Մինչդեռ Միջին գաղութներից (Նյու Յորք, Նյու Ջերսի և Փենսիլվանիա) շատ պատվիրակներ ավելի չափավոր դիրք գրավեցին՝ կոչ անելով հաշտեցման նոր փորձեր ձեռնարկել: Հարավային գաղութներից Վիրջինիայի պատվիրակության կազմում էին այնպիսի արմատականներ, ինչպիսիք էին Ռիչարդ Հենրի Լին և Թոմաս Ջեֆերսոնը, մինչդեռ Հարավային Կարոլինայի պատվիրակությունը ներառում էր չափավոր գործիչների, ինչպիսիք էին Ջոն և Էդվարդ Ռուֆլեջները: Չափավորներն անհանգստանում էին, որ Մասաչուսեթսի աշխարհագորայիններին աջակցելը հավասարազոր կլիներ պատերազմ հայտարարելուն:

Կոնգրեսը փոխզիջման գնաց՝ համաձայնելով ընդունել Մասաչուսեթսի աշխարհագորը և ձևավորել Մայրցամաքային բանակ (Continental Army)՝ նշանակելով Վիրջինիայի պատվիրակ Ջորջ Վաշինգտոնին գերագույն գլխավոր հրամանատար: Որոշումը հիմնավորելու համար Կոնգրեսը նաև հրապարակեց «Ջենք վերցնելու անհրաժեշտության պատճառների հռչակագիրը» (“Declaration of the Causes of Necessity of Taking Up Arms”): Միևնույն ժամանակ, չափավորները կազմեցին «Ձիթենու ճյուղի խնդրագիրը» (“Olive Branch Petition”), որը հավաստիացնում էր թագավորին, որ գաղութաբնակները «ամենայն ջերմեռանդությամբ ցանկանում են մայր երկրի և այս գաղութների միջև նախկին ներդաշնակությունը»: Շատերը հասկանում էին, որ հաշտության հնարավորությունները սպառվում են: Կոնգրեսի կողմից փաստաթղթի հաստատումից հետո Բենջամին Ֆրանկլինը գրում է. «Կոնգրեսը ևս մեկ խնդրագիր կուղարկի թագավորին, որը, կարծում եմ, նույն վերաբերմունքին կարժանանա, ինչ նախորդը և, հետևաբար, հավանաբար կլինի վերջինը»: Ըստ էության, Կոնգրեսը տարօրինակ դիրք էր գրավել՝ հաշտեցման փորձը զուգորդելով հրապարակավ զորահավաքին:

Խնդրագիրը Անգլիա հասավ 1775 թվականի օգոստոսի 13-ին, բայց մինչ այն կհասներ, թագավորը հրապարակեց «Ապստամբությունն ու խռովությունը ճնշելու մասին հռչակագիրը» (“Proclamation for Suppressing Rebellion and Sedition”): Նա կարծում էր, որ Հյուսիսային Ամերիկայում իր հպատակներին ծրագրված մոլորեցնում են մարդիկ, որոնք «դավաճանաբար պատրաստում և պատվիրում են պատերազմ մեր դեմ»: Հոկտեմբերին խորհրդարանում ունեցած ելույթով արքան մերժեց գաղութաբնակների խնդրագիրը: Թագավորը կասկած չուներ, որ դիմադրությունն

«ակնհայտորեն շարունակվում էր անկախ կայսրություն ստեղծելու նպատակով»:

1776 թվականի սկզբին անկախության մասին խոսույթն աճում էր, մինչդեռ հաշտության հեռանկարը՝ խամրում: 1776 թվականի առաջին ամիսներին անկախությունն առաջին անգամ դարձավ համաժողովրդական բանավեճի մաս: Քաղաքային ժողովները գաղութներում հաստատեցին անկախությանն աջակցող բանաձևեր: Այնուամենայնիվ, չափավորների ձայնը դեռևս ծանրակշիռ էր. ևս յոթ ամիս պիտի պահանջվեր, մինչև Մայրցամաքային կոնգրեսը պաշտոնապես ընդուներ անկախության մասին բանաձևը: 1776 թվականին Ֆիլադելֆիայում տպագրված «Ողջախոհություն» (*Common Sense*) գրքույկը, որը հեղինակել էր Անգլիայից նոր ներգաղթած լուսավորական Թոմաս Փեյնը, գրավեց ամերիկյան տրամասույթը: Թոմաս Փեյնի *ողջախոհությունը* փաստարկում էր ամերիկյան անկախությունը՝ դատապարտելով միապետությունը և վիճարկելով Բրիտանական կայսրության տրամաբանությունը՝ պնդելով. «Անհեթեթություն է ենթադրել, որ մայրցամաքը մշտապես պետք է կառավարվի կղզու կողմից»:

Ջորջ Վաշինգտոնը ստանձնել էր մայրցամաքային բանակի հրամանատարությունը և Բոստոնը պաշարելուց հետո ստիպեց բրիտանացիներին նահանջել Հալիֆաքս: Վիրջինիայում թագավորական նահանգապետ Լորդ Դանմորը հրապարակեց մի հռչակագիր, որով հայտարարում էր ռազմական դրություն և ազատություն առաջարկում «բոլոր պարտապան ծառաներին, նեգրերին և մյուսներին», եթե նրանք լքեին իրենց տերերին և միանային բրիտանացիներին: Ազատություն առաջարկելու բրիտանական շարժառիթները ավելի շուտ գործնական էին, քան մարդասիրական, սակայն հռչակագիրը ստրկացած մարդկանց առաջին զանգվածային ազատագրումն էր ամերիկյան պատմության մեջ: Դանմորի հռչակագիրը նյարդայնացրեց սպիտակամորթ հարավցիներին, ովքեր արդեն կասկածամտորեն էին հետևում մայր երկրում՝ Բրիտանիայում, հակաստրկատիրական տրամադրությունների աճին: Դանմորի հռչակագիրը սկսեց համոզել որոշ ստրկատերերի, որ նոր, անկախ ամերիկյան ազգը կարող է ավելի հուսալի պաշտպանություն առաջարկել ստրկության հաստատության համար:

1776 թվականի մայիսի 10-ին, Անկախության հռչակագրի ընդունումից մոտ երկու ամիս առաջ, Կոնգրեսն ընդունեց մի բանաձև, որը կոչ էր անում բոլոր գաղութներին, որոնք դեռևս չէին հաստատել հեղափոխական կառավարություններ, անել դա և զրկել թագավորական պաշտոնյա-

ներին վերահսկողությունից: Կոնգրեսը նաև խորհուրդ տվեց գաղութներին մշակել նոր սահմանադրություններ: Ըստ էության, սա Կոնգրեսի կողմից անկախության առաջին հռչակագիրն էր: Մի քանի շաբաթ անց՝ հունիսի 7-ին, Ռիչարդ Հենրի Լին առաջարկեց հետևյալ բանաձևը. «Վճռված է, որ այս Միացյալ գաղութները ազատ և անկախ պետություններ են և իրավամբ պետք է լինեն այդպիսին, որ նրանք ազատված են բրիտանական թագին ողջ հավատարմությունից, և որ նրանց ու Մեծ Բրիտանիա պետության միջև բոլոր քաղաքական կապերը խզված են և պետք է լինեն ամբողջությամբ լուծարված»: Հուլիսի 2-ին բանաձևը վերջնականորեն քվեարկության դրվեց՝ հաստատվելով 12 գաղութների կողմից. միայն Նյու Յորքը, գտնվելով բրիտանական ներխուժման անմիջական սպառնալիքի ներքո, ձեռնպահ մնաց: Լիի բանաձևը անկախության պաշտոնական իրավական հռչակագիրն էր, սակայն բանաձևի առաջադրման և քվեարկության միջև ընկած ժամանակահատվածում ստեղծվել էր հանձնաժողով՝ բանաձևի ընդունման դեպքում հանրային հռչակագիր մշակելու համար:

Վիրջինիայից Թոմաս Ջեֆերսոնը մշակեց անկախության հռչակագրի փաստաթուղթը, որի խմբագրումները արվել էին հանձնաժողովի իր գործընկեր անդամներ Ջոն Ադամսի և Բենջամին Ֆրանկլինի կողմից, այնուհետև կրկին Կոնգրեսի կողմից՝ որպես ամբողջություն: Անկախության հռչակագրի (Declaration of Independence) նշանավոր նախաբանն անցնում էր բրիտանական սահմանադրական օրենքներով հաստատված բրիտանական հպատակների իրավունքների վերաբերյալ փաստարկներից անդին՝ հղում կատարելով «բնական իրավունքին».

«Մենք ինքնակնհայտ ենք համարում այս ճշմարտությունները, որ բոլոր մարդիկ ստեղծված են հավասար (We hold these truths to be self-evident, that all men are created equal), որ նրանք իրենց Արարչի կողմից օժտված են որոշակի անկապելի իրավունքներով, որոնց թվում են Կյանքը, Ազատությունը և Երջանկության ձգտումը: Այս իրավունքներն ապահովելու համար Կառավարություններ են հաստատվում մարդկանց շրջանում՝ բխեցնելով իրենց արդար իշխանությունները կառավարվողների համաձայնությունից, որ երբ կառավարման որևէ ձև կործանարար է դառնում այդ նպատակների համար, ապա ժողովրդի իրավունքն է փոխել կամ վերացնել այն և հաստատել նոր Կառավարություն...»

Այսու՝ մենք՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների ներկայացու-

ցիչներս, ժողովված Ընդհանուր Կոնգրեսում, մեր մտադրությունների ազնվության համար ապավինելով աշխարհի Գերագույն Դատավորին, այս գաղութների բարեխիղճ ժողովրդի անունից և լիազորությամբ հանդիսավոր կերպով հրապարակում և հռչակում ենք, որ այս Միացյալ Գաղութները են և իրավամբ պետք է լինեն ԱՉԱՏ ԵՎ ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ (FREE AND INDEPENDENT STATES), որ նրանք ազատված են Բրիտանական Թագի հանդեպ հավատարմության ամենայն պարտավորությունից, և որ ամենայն քաղաքական կապ նրանց և Մեծ Բրիտանիա պետության միջև խզված է և պետք է լինի ամբողջովին լուծարված, և որ իբրև ազատ և անկախ պետություններ նրանք լիակատար իշխանություն ունեն պատերազմ հայտարարելու, խաղաղություն կնքելու, դաշինքներ կազմելու, առևտուր հաստատելու և իրականացնելու մյուս բոլոր գործառույթներն ու ձեռնարկները, որոնք իրավասու են կատարել անկախ պետությունները»:

Փաստաթղթի մեծ մասը ներկայացնում էր դժգոհությունների այն ցանկը, որոնք գաղութաբնակներն ունեին 1760-1770-ական թվականներին Բրիտանական կայսրության վարչարարության վերափոխման փորձերի առնչությամբ: Ո՛չ Նախաբանի հոետորաբանությունը և ո՛չ էլ դժգոհությունները նոր չէին. դրանք կայսերական վերափոխումների դեմ տասնամյակների ժողովրդական դիմադրության և երկարաժամկետ զարգացումների գազաթնակետն էին, որոնց արդյունքում երկու կողմերն էլ անհամատեղելի ըմբռնումներ էին զարգացրել Բրիտանական կայսրության և նրա ներսում գաղութների տեղի մասին: 1776 թ. հուլիսի 4-ին Կոնգրեսը հաստատեց փաստաթուղթը: Այնուամենայնիվ, անկախություն հռչակելը մեկ բան էր, և բոլորովին այլ բան էր այն մարտի դաշտում կռելը:

IN CONGRESS, JULY 4, 1776.

The unanimous Declaration of the thirteen united States of America.

When in the course of human events, it becomes necessary for one people to declare the political bands which have connected them with another, and to assume among the powers of the earth, the separate and equal station to which the Laws of Nature and of Nature's God entitle them...

It is therefore the Representatives of the united States of America, in General Congress, Assembled, appealing to the Supreme Judge of the world for the rectitude of our intentions...

John Hancock, John Adams, Abigail Adams, John Jay, John Dickinson, Thomas Jefferson, George Washington, James Mifflin, Robert Morris, Benjamin Franklin, Richard Henry Lee, Thomas Paine, Charles Carroll, James Wilson, George Clymer, Thomas Fitzsimons, George Taylor, James Smith, Robert Workman, John Vining, Samuel Johnston, James Smith, Robert Workman, John Vining, Samuel Johnston, James Smith, Robert Workman, John Vining, Samuel Johnston...

Անկախության հռչակագիր, հուլիսի 4, 1776 թ.

Անկախության պատերազմը

Պատերազմը սկսվել էր Լեքսինգթոնում և Կոնկորդում՝ Կոնգրեսի կողմից Անկախության հռչակագրի ընդունումից ավելի քան մեկ տարի առաջ: 1775 թ. բրիտանացիները կարծում էին, որ պատերազմի սպառնալիքը և միայն փոքր ռազմական գործողությունը բավական կլինի գաղութների ապստամբությունը տապալելու համար: Այդ փոքր ներխուժումները, սակայն, վերածվեցին ամբողջական ռազմական հակամարտության: Չնայած Բոստոնում ամերիկացիների հաղթանակին՝ նորաստեղծ տասներեք փոքր պետությունները (նահանգները) բախվեցին աշխարհի ամենահզոր ռազմական ուժերից մեկին դիմակայելու դժվարին խնդրին:

1776 թվականի ամռանը Բոստոնը լքած բրիտանական ուժերը ժամանեցին Նյու Յորք: Բրիտանական խոշոր ռազմական արշավախմբին անմիջապես հաջորդեցին տասնյակ հազարավոր գերմանացի վարձկաններ: Նյու Յորքում ափ իջած ռազմական արշավախմբի նպատակն էր վերահսկողություն հաստատել Հադսոն (Հուդզոն) գետի ավազանի վրա և մեկուսացնել Նոր Անգլիան մայրցամաքի մնացած մասից: Բացի այդ, Նյու Յորքում կային անգլիական գահին բազմաթիվ հավատարիմներ (լոյալիստներ), հատկապես քաղաքի վաճառական և անգլիկան համայնքներում: Հոկտեմբերին բրիտանացիները վերջապես հարձակում գործեցին Բրուքլինի և Մանհեթենի վրա: Մայրցամաքային բանակը լուրջ կորուստներ կրեց՝ նահանջելով Նյու Ջերսիով: Ձմռան սկզբին Վաշինգտոնին անհրաժեշտ էր հաղթանակ, որը կբարձրացներ ամերիկացիների բարոյահոգեբանական ոգին և կխրախուսեր զորքերի վերակազմավորումը: Հետևաբար, Վաշինգտոնը Սուրբ Ծննդյան գիշերը, մի քանի հազարանոց զորք տեղափոխելով Դելավեր գետով, անակնկալ հաջող հարձակում գործեց Տրենտոնում գտնվող հեսսիների (գերմանացի վարձկաններ) ճամբարի վրա: Հաղթանակը Մայրցամաքային բանակին ապահովեց անհրաժեշտ պաշարներով և բարձրացրեց բարոյահոգեբանական ոգին Նյու Յորքում կրած պարտությունից հետո:

1777 թվականին բրիտանացի գեներալ Ջոն Բուրգոյնը Կանադայից բանակն առաջնորդեց դեպի Հադսոն գետի շրջան, այնտեղ անվտանգությունն ապահովելու համար: Նյու Յորքի հյուսիսում նա պետք է հանդիպեր գեներալ Ուիլյամ Հաուի զորքերին, որը երթով շարժվում էր Մանհեթենից դեպի հյուսիս: Սակայն Հաուին հրաժարվեց ծրագրից՝ չտեղեկացնելով Բուրգոյնին, փոխարենը նավարկեց Ֆիլադելֆիա՝ գրավելու նոր պետության մայրաքաղաքը: Մայրցամաքային բանակը ջախջախեց Բուրգոյնի զորքերին Սարատոգայում (Նյու Յորք): Այս հաղթանակը դարձավ պա-

տերազմի հիմնական շրջադարձային կետը:

Բենջամին Ֆրանկլինը Փարիզում էր՝ փորձելով դաշինքի կնքել ֆրանսիացիների հետ: Վերջիններս չէին ցանկանում աջակցել, քանզի կատարվողը թվում էր անհավանական: Սարատոգայում հաղթանակի մասին լուրը համոզեց ֆրանսիացիներին: 1778 թ. փետրվարի 6-ին ստորագրվեց ֆրանս-ամերիկյան բարեկամության և առևտրի պայմանագիրը (Treaty of Amity and Commerce): Պայմանագիրը փաստորեն գաղութների ապստամբությունը վերածեց միջազգային խոշոր պատերազմի, քանզի շուտով Եվրոպայում և Հնդկաստանում մարտեր սկսվեցին բրիտանացիների և ֆրանսիացիների միջև:

Գեներալ Հաուին գրավել էր Ֆիլադելֆիան 1777 թվականին, բայց ձմռան ավարտից հետո վերադարձավ Նյու Յորք: Նա աստիճանաբար հասկացավ, որ եվրոպական ռազմական մարտավարությունը Հյուսիսային Ամերիկայում չի աշխատում: Եվրոպայում բանակները ճակատամարտեր էին մղում՝ փորձելով գրավել խոշոր քաղաքները: Թեև 1777 թվականին բրիտանացիները տիրեցին Ֆիլադելֆիային և Նյու Յորքին, այնուամենայնիվ նրանց դիրքերը շարունակում էին թուլանալ: Միևնույն ժամանակ, գեներալ Վաշինգտոնը Նյու Յորքի անկումից հետո հասկացավ, որ հիմնականում անպատրաստ Մայրցամաքային բանակը չի կարող հաղթել բրիտանական պրոֆեսիոնալ բանակին բաց ճակատամարտերում: Այսպիսով, նա մշակեց պատերազմի իր տրամաբանությունն ու ռազմավարությունը, որը ներառում էր ավելի փոքր հարձակումներ, ավելի հաճախակի փոխհրաձգություններ և խուսանավում խոշոր բախումներից, որոնք վտանգի տակ կղնեին իր ամբողջ բանակը: Քանի դեռ նա անձեռնմխելի և անհասանելի էր պահում Մայրցամաքային բանակը, պատերազմը կշարունակվեր, անկախ այն բանից, թե որքան քաղաքներ կգրավեին բրիտանացիները:

1778 թվականին բրիտանացիներն ուշադրությունը սևեռեցին դեպի հարավ, որտեղ, իրենց կարծիքով, ավելի շատ ժողովրդական աջակցություն էին վայելում: Վիրջինիայից մինչև Հարավային Կարոլինա և Ջորջիա ռազմարշավների ընթացքում բրիտանացիները գրավեցին խոշոր քաղաքները, սակայն նրանք չունեին բավականաչափ կենդանի ուժ՝ այդ լայնածավալ տարածքներում ռազմական վերահսկողությունը պահպանելու համար: Եվ նրանց հեռանալուց հետո տեղի ունեցան արյունալի բախումներ տեղացի հայրենասերների և հավատարիմների միջև՝ հաճախ ընտանիքի անդամներին հանելով միմյանց դեմ: Հարավի պատերազմն իսկապես քաղաքացիական պատերազմ էր:

1781 թվականին բրիտանացիները պատերազմում էին նաև Ֆրանսիայի, Իսպանիայի և Հոլանդիայի դեմ: Բրիտանիայում հանրային աջակցությունը Հյուսիսային Ամերիկայում ընթացող թանկարժեք պատերազմին արագորեն թուլանում էր: Ամերիկացիներն օգտվեցին Հարավում բրիտանական բանակի ռազմավարությունից՝ ֆրանսիական բանակի և նավատորմի նշանակալի օգնությամբ: Հոկտեմբերին գեներալ Վաշինգտոնն իր զորքերն առաջնորդեց Նյու Յորքից դեպի Վիրջինիա՝ փորձելով թակարդը զցել գեներալ Չարլզ Քորնուոլլիսի հրամանատարությամբ գործող բրիտանական հարավային բանակին: Լորդ Քորնուոլլիսն իր զորքերը դիրքավորել էր Յորքթաունում՝ սպասելով Նյու Յորքից մատակարարումների և համալրման: Սակայն Մայրցամաքային բանակը և ֆրանսիական զորքերը ժամանեցին ավելի շուտ, որից անմիջապես հետո ֆրանսիական նավատորմը շրջափակեց Քորնուոլլիսի բանակը և պաշարեց քաղաքը: Լորդ Քորնուոլլիսը ստիպված էր հանձնվել: Այս բանակի գերեվարումը բրիտանացիներին թողեց առանց նոր ռազմավարության և առանց հանրային աջակցության՝ պատերազմը շարունակելու համար: Ֆրանսիայում մեկնարկեցին խաղաղության բանակցությունները, և պատերազմը պաշտոնապես ավարտվեց 1783 թվականի սեպտեմբերի 3-ի Փարիզի պայմանագրով:

Ամերիկյան հեղափոխության հետևանքները

Իր ծագումնաբանության ու պատճառների պես ամերիկյան հեղափոխությունը ունեցավ կարճաժամկետ և երկարաժամկետ հետևանքներ: Անկախության հռչակման ամենակարևոր անմիջական հետևանքը 1776-1777 թվականներին տասներեք պետությունների (նահանգների) սահմանադրությունների ստեղծումն էր: Նոր պետությունները մշակեցին գրավոր սահմանադրություններ, ինչը այն ժամանակ կարևոր նորամուծություն էր ավանդաբար գրավոր կերպով չարձանագրված բրիտանական սահմանադրության համեմատությամբ: Հեղափոխությունը նաև ասպարեզ բերեց քաղաքական, հասարակական և տնտեսական հզոր ուժեր, որոնք պիտի կերպափոխեին նոր ազգ-պետության քաղաքականությունն ու հասարակությունը, քաղաքականության և կառավարման մեջ մասնակցության աճը, կրոնական հանդուրժողականության իրավական հաստատութենացումը և բնակչության աճն ու տարածումը, հատկապես դեպի արևմուտք: Հեղափոխությունը մեծապես ազդեց բնիկ ամերիկացիների վրա՝ թույլ տալով արևմտյան տարածքների բնակեցումը և ստեղծելով նոր նահանգ-

ներ ու կառավարություններ, որոնք թշնամաբար էին տրամադրված բնիկ ամերիկացիների տարածքային պահանջմունքների հանդեպ: Ավելի լայն համապատկերում հեղափոխությունը վերջ դրեց մերկանտիլիստական տնտեսությանը՝ ստեղծելով նոր հնարավորություններ առևտրի և արդյունաբերության ոլորտում:

Պետական այս նոր սահմանադրությունները հիմնված էին «ժողովրդական ինքնիշխանության» (“popular sovereignty”) գաղափարի վրա. այն է՝ պետական իշխանությունը, հեղինակությունը և իշխանական լիազորությունները բխում են ժողովրդի կամքից: Այս պետությունների գերակշիռ մասը ստեղծեց թույլ կառավարիչների և ուժեղ օրենսդիր մարմինների հաստատություններ ավելի կանոնավոր ընտրություններով՝ միայն չափավոր ավելացնելով ընտրողների թիվը: Մի շարք պետություններ հետևեցին Վիրջինիայի օրինակին և իրենց սահմանադրության մեջ ներառեցին իրավունքների օրինագիծ (“bill” of rights), որը նախատեսված էր պաշտպանելու անհատների անձնական իրավունքներն ու սահմանագծելու կառավարության իրավասությունը:

Փենսիլվանիայի հանրապետության (Commonwealth of Pennsylvania) առաջին պետական սահմանադրությունը ամենաարմատականն ու ժողովրդավարականն էր: Այնտեղ ստեղծվեց միապալատ օրենսդիր մարմին և Գործադիր խորհուրդ: Բոլոր ազատ մարդիկ կարող էին քվեարկել՝ ներառյալ նրանք, ովքեր սեփականություն չունեին: Մասաչուսեթսի հանրապետության (Commonwealth of Massachusetts) սահմանադրությունը, որն ընդունվեց 1780 թվականին, կառուցվածքով ավելի քիչ ժողովրդավարական էր, բայց ենթարկվեց վավերացման ավելի հանրային գործընթացի: 1779 թվականի աշնանը Մասաչուսեթսի բոլոր քաղաքները պատվիրակներ էին ուղարկել մասնակցելու Քեմբրիջում կայանալիք սահմանադիր ժողովին: Սահմանադրության նախագիծը և առաջարկները նախատեսում էին ավելի ուշ ընդունվելիք դաշնային սահմանադրության հնարավորությունը: Ըստ այդմ՝ Մասաչուսեթսը ստեղծեց իշխանության երեք ճյուղեր՝ հիմնված դրանց միջև փոխզույգումների և հավասարակշռության սկզբունքների վրա:

Անկախությունը հռչակվել էր 1776 թվականին, ինչը և ազդարարեց սահմանադրության ստեղծման, ազգաշինության և պետականաշինության շրջանի մեկնարկը: 1781 թվականին Մայրցամաքային կոնգրեսը վավերացրեց Համադաշնության հոդվածները (Articles of Confederation): Դրանք յուրաքանչյուր նահանգի տալիս էին մեկ ձայն Մայրցամաքային կոնգրեսում: Համադաշնության հոդվածները, թերևս, առավել աչքի էին

ընկնում արգելող դրույթներով: Կոնգրեսին իրավունք չէր տրվում հարկեր սահմանելու, բարձրացնելու կամ գանձելու, կարգավորելու արտաքին և միջնահանգային առևտուրը կամ հիմնելու համադաշնային դատական համակարգ: Այս արգելքները հետպատերազմյան Կոնգրեսը դարձրեցին թույլ և ընդհանուր առմամբ անարդյունավետ:

Անկախությունից հետո քաղաքական և հասարակական կյանքը կտրուկ փոխվեց: Քաղաքական մասնակցությունն աճեց, քանզի ավելի շատ մարդիկ ստացան ընտրելու իրավունք, ինչը հանգեցրեց այն բանին, որ ավելի մեծ նշանակություն տրվեց կառավարման համակարգում ներկայացվածությանը: Բացի այդ, ավելի շատ սովորական քաղաքացիներ («նոր մարդիկ») ավելի ու ավելի կարևոր դեր էին խաղում տեղական և նահանգային կառավարման մեջ: Նահանգների ներսում հասարակական-քաղաքական աստիճանակարգությունը զգալի փոփոխություններ կրեց: Հասարակությունը դարձավ ավելի հավասար, ավելի քիչ արիստոկրատական և ավելի շատ մետիտոկրատական:

Ամերիկյան հեղափոխության ամենակարևոր երկարաժամկետ տնտեսական հետևանքը մերկանտիլիզմի ավարտն էր: Բրիտանական կայսրությունը տարբեր արգելքներ էր մտցրել գաղութատիրական տնտեսությունների համար՝ սահմանափակելով առևտուրը, բնակեցումը և արտադրությունը: Հեղափոխությունը բացեց նոր շուկաներ և առևտրային նոր հարաբերություններ: Ամերիկացիների հաղթանակը նաև բացեց արևմտյան տարածքները ներխուժման և բնակեցման համար, ինչը ստեղծեց ներքին վաճառահանման նոր շուկաներ: Ամերիկացիները սկսեցին հիմնել իրենց սեփական արտադրությունները՝ այլևս չապավինելով Մեծ Բրիտանիային:

Չնայած այս կարևոր փոփոխություններին՝ Ամերիկյան հեղափոխությունն ուներ իր սահմանները: Հեղափոխությունը չտարածեց քաղաքացիական հավասարությունը կանանց վրա: Այնուամենայնիվ, անմիջապես հետպատերազմյան ժամանակաշրջանում կանայք որոշ չափով ներգրավվեցին քաղաքականության մեջ՝ որպես քաղաքական համայնքի «հանրապետական մայրեր»: Հանրապետական հասարակությունները պահանջում էին առաքինի քաղաքացիներ, և ապագա քաղաքացիներին դաստիարակելն ու կրթելը դարձավ մայրերի պարտականությունը: Սա կանանց համար հնարավորություն բացեց կրթության ոլորտում, բայցևայնպես, նրանք դեռևս հիմնականում շարունակում էին մնալ ամերիկյան քաղաքական նոր համակարգի լուսանցքում:

Հեղափոխության պատճառով մոտ 60 հազար լոյալիստներ լքեցին Ամերիկան: Բրիտանական գահին հավատարիմներ կային ամերիկյան


հասարակության բոլոր շերտերում, և շատերը ստիպված էին իրենց կյանքի մնացած մասն ապրել վտարանդիության մեջ: Փարիզի պայմանագրի դրույթներով պետք է պաշտպանվեր նրանց ունեցվածքը, և ամերիկացիները պետք է փոխհատուցեին այն հավատարիմներին, որոնք կորցրել էին ունեցվածքը պատերազմի ընթացքում իրենց հավատարմության պատճառով: Ամերիկացիները, սակայն, հրաժարվեցին այս խոստումից, և 1780-ական թվականների ընթացքում նահանգները շարունակեցին բռնագրավել լոյալիստների ունեցվածքը: Որոշ գաղութաբնակ հավատարիմներ մեկնեցին Անգլիա, որը նրանք համարում էին իրենց մայր երկիրը, սակայն որտեղ նրանք օտար էին ընկալվում: Շատերը բնակություն հաստատեցին Բրիտանական կայսրության ծայրամասերում ամբողջ աշխարհում, հատկապես Կանադայում՝ Նովա Սկոտիայում, Նյու Բրանսուիկում և Քվեբեկում: Հավատարիմները հայտնվել էին հեղափոխության պարտված կողմում, և շատերը կորցրին այն ամենը, ինչ ունեին ու ստիպված եղան նոր կյանք ստեղծել իրենց ծննդավայրից հեռու:

1783 թվականին հազարավոր նախկին ստրուկներ փախան բրիտանական բանակի հետ: Նրանք հույս ունեին, որ բրիտանական կառավարությունը կպահպանի ազատության խոստումը և կօգնի իրենց նոր տներ հիմնելու կայսրության այլ վայրերում: Փարիզի պայմանագիրը պահանջում էր, որ բրիտանական զորքերը չընդունեին փախած ստրուկներին, բայց բրիտանացի զինվորական հրամանատարները պահպանեցին նախկին խոստումները և տարհանեցին հազարավոր ազատված ստրուկների՝ նրանց տեղափոխելով Կանադա, Կարիբյան ծովի կղզիներ կամ Մեծ Բրիտանիա: Ազատության համար պայքարը դրդեց ամերիկացիների մի մասին ազատել իրենց ստրուկներին, և հյուսիսային նահանգների մեծ մասը շուտով ընդունեց աստիճանական ազատագրության (եմանսիպացիոն) օրենքներ: Ոմանք ձեռնամուխ եղան ստրուկների ազատմանը նաև Վերին Հարավում, բայց Ստորին Հարավում ստրկատերերից շատերը չեղյալ հայտարարեցին ծառայության դիմաց ազատության իրենց խոստումները, իսկ բազմաթիվ ազատվածներ բռնի վերադարձվեցին ստրկության: Հեղափոխության բարձրացրած հավասարության գաղափարը և հռետորաբանությունը ստեղծեցին ստրուկների և ազատ սևամորթ ամերիկացիների «հեղափոխական սերունդ», որն ի վերջո պետք է նպաստեր հակաստրկատիրական շարժմանը: Ստրուկների ապստամբությունները սկսեցին ներառել հեղափոխական իդեալների վրա հիմնված ազատության պահանջներ: Սակայն նույնիսկ միջնաժամկետ հեռանկարում հեղափոխությունը չկարողացավ հաշտեցնել ստրկությունը նոր՝ հավասար

րապաշտ, հանրապետական հասարակությունների հետ. լարվածությունն աճեց և ի վերջո եռաց 1830-1840-ական թվականներին և, փաստորեն, երկու մասի բաժանեց ազգը 1850-1860-ական թվականներին՝ հանգեցնելով Քաղաքացիական պատերազմին՝ «Երկրորդ ամերիկյան հեղափոխությանը»:

Բնիկ ամերիկացիները նույնպես մասնակցեցին հեղափոխությանը և ազդվեցին դրանից: Բնիկ ամերիկացիների բազմաթիվ ցեղեր, ինչպիսիք էին շոնին, քրիքը, չերոկին և իրոկեզները (իրոքուա), անցել էին բրիտանացիների կողմը: Նրանք հույս ունեին, որ բրիտանական հաղթանակը կշարունակեր զսպել ամերիկացի գաղութարարներին, որպեսզի չչարժվեն Ապալաչյան լեռներից այն կողմ՝ դեպի արևմուտք: Սակայն ամերիկացիների հաղթանակը և բնիկ ամերիկացիների աջակցությունը բրիտանացիներին պատրվակ դարձավ արդարացնելու գաղութարարների արագ և հաճախ դաժան ծավալապաշտությունը դեպի արևմտյան տարածքներ: Ամերիկայի բնիկ ժողովուրդները շարունակ տեղահանվելու և ավելի հեռուն էին մղվելու դեպի արևմուտք ամբողջ XIX դարում: Ի վերջո, ամերիկյան անկախությունը նշանավորեց բնիկ ամերիկացիների անկախության մնացորդների վերացման գործընթացի մեկնարկի սկիզբը:

Ամփոփենք: Ամերիկյան հեղափոխությունը գաղութաբնականներին ազատեց բրիտանական տիրապետությունից և խթանեց համաշխարհային պատմության այն փուլը, որը հայտնի է իբրև «հեղափոխությունների դարաշրջան»: Ամերիկյան հեղափոխությունը համաշխարհային իրադարձություն էր: Հեղափոխությունները հաջորդեցին Ֆրանսիայում, հետո՝ Հաիթիում, ապա՝ Հարավային Ամերիկայում: Ամերիկյան հեղափոխությունը միևնույն ժամանակ զգալի փոփոխությունների հանգեցրեց Բրիտանական կայսրությունում: Բրիտանացի շատ պատմաբաններ նույնիսկ օգտագործում են հեղափոխությունը որպես «առաջին Բրիտանական կայսրության» և «Երկրորդ Բրիտանական կայսրության» միջև բաժանարար կետ: Հեղափոխությունը ստեղծեց նոր ազգ-պետություն՝ Ամերիկայի Միացյալ Նահանգները: 1783 թվականի սեպտեմբերին Փարիզի պայմանագրով ԱՄՆ անկախությունը միջազգայնորեն ճանաչվեց: Այն, թե ինչպիսին էր լինելու նորաստեղծ ազգը, պայմանավորեցին հաջորդ տասնամյակների իրադարձությունները: 1780-ական թվականներին ամերիկացիները ձևավորեցին և ապա վերածնեցին այդ ազգ-պետությունը, նախ՝ 1781 թվականին վավերացված Համադաշնության հողվածներով, իսկ հետո՝ 1787-1788 թվականներին մշակված ԱՄՆ Սահմանադրությամբ:



ԱՄՆ-ն 1783 թ. Փարիզի պայմանագրով

ԳԼՈՒԽ 4

Ամերիկյան ազգաշինությունը. համակեցական փոխզիջման հարացույցը և Սահմանադրության ընդունումը

1788 թվականի հուլիսի 4-ին ֆիլադելֆիացիները դուրս եկան «մեծ դաշնային շքերթի»՝ ի պատիվ նոր ազգային սահմանադրության: Մեծ շքերթը ներկայացնում էր այն, ինչ շատ ամերիկացիներ հույս ունեին, որ Միացյալ Նահանգները կդառնա՝ բազմազան, բայց համախմբված և բարգավաճ դաշնային պետություն: 1789 թվականի ապրիլին հազարավոր մարդիկ հավաքվեցին Նյու Յորքում՝ տեսնելու Ջորջ Վաշինգտոնի նախագահական երդմնակալության արարողությունը: 1789 թ. նոյեմբերին Վաշինգտոնը կոչ արեց իր համաքաղաքացիներին ամեն տարի նշելու Գոհաբանության օրը որպես ազգային տոն և ի նշանավորումն կառավարության ստեղծման «խաղաղ և բանական կերպի»: Սակայն նոր ազգը այնքան էլ համերաշխ չէր, որքան ակնկալում էին նրա ջատագովները: Թեև նոր դաշնային կառավարության պաշտոնյաները և կենտրոնական իշխանության աջակիցները մեծ ուշադրություն էին դարձնում միասնությանն ու համագործակցությանը, երկիրը դեռևս միասնականացված չէր: Սահմանադրությունն ինքնին վիճելի փաստաթուղթ էր, որն ընդունվել էր դաշնային իշխանությունն ուժեղացնելու համար, որպեսզի այն կարողանա դիմակայել ներքին հակամարտություններին: Նոր ազգ-պետության ապագան դեռևս անորոշ էր: 1788-1789 թթ. ազգային տոնակատարություններից երկու տարի առաջ Միացյալ Նահանգները դեռևս կանգնած էր փլուզման վտանգի առջև:

Շեյսի ապստամբությունը

1786 և 1787 թվականներին՝ հեղափոխության ավարտից մի քանի տարի անց, արևմտյան Մասաչուսեթսի հազարավոր ֆերմերներ ճգնում էին պարտքերի ծանր բեռի տակ: Նրանց գործերը վատթարացան տեղական և ազգային թույլ տնտեսությունների պատճառով: Բազմաթիվ քաղաքական առաջնորդներ և պարտքը, և տնտեսական ճգնաժամը դիտում էին որպես Համադաշնության հողվածների թուլության հետևանք, որը դաշնային կառավարությանը հնարավորություն չէր տալիս եկամուտներ հավաքելու և թույլ միությամբ կապակցված տարբեր պետություններից (նահանգներից) համախմբված ազգ-պետություն ստեղծելու համար:

Ֆերմերները ցանկանում էին, որ Մասաչուսեթսի կառավարությունը

պաշտպանի իրենց պարտատերերից, սակայն կառավարությունն աջակցեց վաշխառու-պարտատերերին: Եվ քանի որ պարտատերերը սպառնում էին բռնագանձել պարտապան-ֆերմերների ունեցվածքը, նրանցից շատերը, այդ թվում՝ Հեղափոխական պատերազմի վետերանները, զենք վերցրին: Վետերաններից Դենիել Շեյսի գլխավորությամբ այս զինված մարդիկ՝ «շեյսիտները» (“Shaysites”), դիմեցին այն մարտավարությանը, որը հայրենասերներն օգտագործում էին մինչ հեղափոխությունը. շրջափակում էին դատարանները, որպեսզի դատավորները չհրապարակեին բռնագրավման որոշումներ: Այս ցուցարարներն իրենց գործն ու մեթոդները համարում էին «1776 թվականի ոգու» ընդլայնում. նրանք պաշտպանում էին իրենց իրավունքները և պահանջում բավարարել ժողովրդի պահանջները: Մասաչուսեթսի նահանգապետ Ջեյմս Բոուդինը, սակայն, շեյսիտներին համարում էր ապստամբներ, ովքեր ցանկանում են վերահսկել կառավարությունը բռնության միջոցով: Նա հազարավոր աշխարհագորայիններ և ոստիկաններ կանչեց նրանց ցրելու համար: Նախկին հեղափոխական գեներալ Բենջամին Լինքոլնը առաջնորդեց նահանգային զինված ուժերը՝ պնդելով, որ Մասաչուսեթսը պետք է կանխի «անարխիայի, խառնաշփոթի և ստրկության իրավիճակը»: 1787 թվականի հունվարին Լինքոլնի աշխարհագորայինները ձերբակալեցին ավելի քան հազար շեյսիտների և վերաբացեցին դատարանները: Դենիել Շեյսը և մյուս առաջնորդները մեղադրվեցին դավաճանության համար, մի քանիսը դատապարտվեցին մահվան, բայց ի վերջո Շեյսին և նրա հետևորդներից շատերին ներում շնորհվեց:

Նրանց բողոքը, որը հայտնի դարձավ որպես Շեյսի ապստամբություն, առաջացրեց բուռն ազգային բանավեճ: Մինչ որոշ ամերիկացիներ, ինչպես Թոմաս Ջեֆերսոնը, կարծում էին, որ «մի փոքր ապստամբությունը երբեմն-երբեմն» օգնում է երկիրը ազատ պահել, մյուսները վախենում էին, որ ազգը սահում է դեպի անիշխանություն և բողոքում էին, որ նահանգները չէին կարողանում վերահսկողություն պահպանել: Վիրջինիայից Ջեյմս Մեդիսոնի պես ազգայնականների համար Շեյսի ապստամբությունը վառ օրինակ էր, թե ինչու էր երկրին անհրաժեշտ ուժեղ կենտրոնական իշխանություն: Ինչպես նախազգուշացնում էր Մեդիսոնը. «Ազատությունը կարող է վտանգվել ինչպես ազատության չարաշահումների, այնպես էլ իշխանության չարաշահումների պատճառով»:

Սահմանադիր համաժողովը

Ապստամբությունը Մասաչուսեթսում համոզեց երկրի առաջնորդներին գործել իշխանության հիմնախնդիրը լուծելու ուղղությամբ: Ջեյմս Մեդիսոնի և այլ ազգայնականների խթանիչ գործունեության արդյունքում 1787 թվականի ամռանը տասներեք նահանգներից տասներկուսի պատվիրակները հանդիպեցին Ֆիլադելֆիայում՝ Փենսիլվանիայի նահանգային պալատում: Միայն Ռոդ Ալենդը հրաժարվեց պատվիրակ ուղարկել: Պատվիրակները համաժողով էին գումարել Համադաշնության հողվածները վերանայելու հանձնարարականներով: Ամենամեծ խնդիրը, որը համաժողովը պետք է լուծեր, դաշնային կառավարության՝ հարկեր գանձելու անկարողությունն էր: Դա նշանակում էր, որ Հեղափոխական պատերազմի պարտքերը մարելու բեռը ընկնում էր նահանգների վրա: Նահանգներն, իրենց հերթին, հայտնվեցին վաշխառուների կողքին, ովքեր գնել էին իրենց պատերազմական պարտատոմսերը: Ահա թե ինչու Մասաչուսեթսը կանգնեց իր պարտատոմսերի հարուստ սեփականատերերի կողմը և ոչ թե արևմտյան աղքատ ֆերմերների:

Ջեյմս Մեդիսոնը ոչ թե մտադիր էր պարզապես վերանայել Համադաշնության հողվածները, այլ ստեղծել բոլորովին նոր ազգային սահմանադրություն: Նախորդ տարում նա ավարտել էր երկու լայնածավալ հետազոտական նախագիծ՝ մեկը Միացյալ Նահանգների կառավարման պատմության վերաբերյալ, մյուսը՝ աշխարհի հանրապետությունների պատմության: Նա օգտագործեց այս հետազոտությունները որպես հիմք իր առաջարկ-նախագծի ներկայացման համար, որն իր հետ բերել էր Ֆիլադելֆիա: Այն կոչվեց Վիրջինիայի նախագիծ՝ Մեդիսոնի հայրենի նահանգի անունով:

Ըստ դասական մոտեցման՝ կառավարման հանրապետական ձևը պահանջում էր փոքր և միատարր պետություն՝ հանրապետական Հռոմի օրինակով: Ըստ ընդհանուր պատկերացումների՝ Միացյալ Նահանգները պետք է ունենար շատ թույլ կենտրոնական կառավարություն, որը պետք է պարզապես ներկայացներ նահանգները միայն որոշակի ընդհանուր հարցերի շրջանակում: Մյուս բոլոր դեպքերում իշխանությունը պետք է մնար նահանգային կամ տեղական մակարդակներում: Սակայն Մեդիսոնի հետազոտությունները նրան այլ ուղղությամբ էին տանում: Նա կարծում էր, որ հնարավոր է ստեղծել «ընդլայնված հանրապետություն» (“an extended republic”), որը կներառեր մարդկանց, կլիմաների և սովորույթների բազմազանությունը:

Վիրջինիայի նախագիծը, հետևաբար, առաջարկում էր, որ Միացյալ Նահանգները պետք է ունենա ուժեղ դաշնային կառավարություն: Այն պետք է ունենար երեք ճյուղ՝ օրենսդիր, գործադիր և դատական, որոնք կարող էին գործել ազգային մտահոգության ցանկացած հարցով: Օրենսդիր մարմինը կամ Կոնգրեսը պետք է ունենար երկու պալատ, որտեղ յուրաքանչյուր նահանգ ներկայացված կլիներ ըստ իր բնակչության թվի կամ հարկային բազիսի: Ազգային օրենսդիր մարմինը վետոյի իրավունք պետք է ունենար նահանգային օրենքների վրա:

Համաժողովի մյուս պատվիրակներն ընդհանուր առմամբ համաձայնեցին Մեդիսոնի հետ, որ Համադաշնության հողավածները ձախողվել են: Բայց նրանք ընդհանուր հայտարարի չէին գալիս այն հարցի շուրջ, թե ինչպիսի իշխանություն պետք է փոխարիներ համադաշնային կառավարությանը: Նրանք մասնավորապես անհամաձայն էին նոր Կոնգրեսում ներկայացվածության մեթոդին: Ներկայացուցչության հարցը հույժ կարևոր խնդիր էր, որն ազդեց մի շարք այլ որոշումների ընդունման վրա, այդ թվում՝ ազգային գործադիր իշխանության իրավասության վերաբերյալ, թե ինչ հատուկ լիազորություններ պետք է ունենար դաշնային կառավարությունը, կամ ինչպես լուծել ստրկության պառակտիչ հիմնախնդիրը: Ավելի քան մեկ տասնամյակ յուրաքանչյուր նահանգ ուներ մեկ ձայն Մայրցամաքային կոնգրեսում: Փոքր նահանգները՝ Նյու Ջերսին և Դելավերը, ցանկանում էին կարգը այդպես պահել: Իսկ Կոնեկտիկուտի պատվիրակ Ռոջեր Շերմանը պնդում էր, որ Կոնգրեսի անդամները պետք է նշանակվեն նահանգային օրենսդիր մարմինների կողմից: Ըստ Շերմանի՝ սովորական ընտրողները բավականաչափ տեղեկացված չէին համազգային կամ դաշնային հիմնախնդիրներին և կարող էին մոլորեցվել: Իսողոր նահանգները այնուամենայնիվ նախընտրում էին Վիրջինիայի նախագիծը, որն իրենց քաղաքացիներին կօժտեր շատ ավելի մեծ իշխանությամբ ազգային օրենսդիր իշխանության նկատմամբ:

Ի վերջո, Ռոջեր Շերմանը փոխզիջում առաջարկեց: Կոնգրեսը կունենար ստորին պալատ՝ Ներկայացուցիչների պալատ (House of Representatives), որտեղ անդամները կնշանակվեին ըստ յուրաքանչյուր նահանգի բնակչության թվի, և վերին պալատ՝ Սենատ (Senate), որտեղ յուրաքանչյուր նահանգ կունենար մեկ ձայն: Այս առաջարկը ամիսներ տևած բանավեճերից հետո ընդունվեց փոփոխված տեսքով՝ որպես Մեծ փոխզիջում (Great Compromise). յուրաքանչյուր նահանգ կունենար երկու սենատոր, որոնք կարող էին ինքնուրույն քվեարկել: Ի հավելումն երկու տեսակի ներկայացուցչության հաստատման՝ այս փոխզիջումը ներկայա-

ցուցչության և հարկային նպատակներով նկատի էր առնում նաև ստրուկներին՝ մեկ ստրուկը որպես անձի երեք հինգերորդը:

Պատվիրակներից ավելի երկար ժամանակ պահանջվեց ազգային գործադիր իշխանության ձևը որոշելու համար: 1787 թ. հունիսի 1-ին Ջեյմս Ուիլսոնն առաջարկեց, որ ազգային գործադիր իշխանության կրող հանդիսանա մեկ անձ: Ամերիկյան հեղափոխությունից ընդամենը չորս տարի անց այդ առաջարկը չափազանց վիճելի էր և ընտրովի միապետության պատկեր էր հիշեցնում: Պատվիրակները նաև անհանգստացած էին գործադիր իշխանությունը կոռուպցիայից կամ անհարկի վերահսկողությունից պաշտպանելու հարցերով: Սեպտեմբերի սկզբին որոշվեց, որ նախագահն ընտրվելու է հատուկ ընտրական կոլեգիայի կողմից:

Ի վերջո, Սահմանադիր համաժողովը առաջարկեց կառավարության ձև, որը նման չէր կառավարման այլ համակարգերի, և որը միավորում էր անտիկ հանրապետությունների և անգլիական քաղաքական ավանդույթների տարրերը՝ ներմուծելով որոշ սահմանափակ ժողովրդավարական նորարարություններ և փորձելով պահպանել նուրբ հավասարակշռություն ազգային և նահանգային ինքնիշխանությունների միջև: Կառավարման այս համակարգը բարդ և խիստ հակասական լիազորությունների համալիր էր:

Սահմանադրության վավերացումը


Սահմանադիր համաժողովը որոշեց իր առաջարկած Սահմանադրությունը Ջորջ Վաշինգտոնի ուղեկցող նամակով ուղարկել Կոնգրեսին, որի նստավայրն այն ժամանակ Նյու Յորքն էր: Նոր Սահմանադրության նախագծի ընդունումը, սակայն, պահանջում էր վավերացում ոչ միայն Կոնգրեսի, այլև նահանգների հատուկ համաժողովների կողմից: Վավերացման գործընթացում Սահմանադրության քննադատները արշավ կազմակերպեցին՝ համոզելու տարբեր նահանգների ընտրողներին ընդդիմանալու նախագծին: Այս հակաֆեդերալիստներից շատերը պնդում էին, որ առանց հատուկ իրավունքների երաշխիքի, ամերիկյան քաղաքացիները վտանգում են կորցնել իրենց անձնական ազատությունը՝ հոգուտ հզոր դաշնային կառավարության: Մյուս կողմից, վավերացման կողմնակից ֆեդերալիստները պնդում էին, որ իրավունքների օրինագծի (bill of rights) ներառումը ոչ միայն ավելորդ է, այլև վտանգավոր. դա կարող էր սահմանափակել ապագայի քաղաքացիներին նոր իրավունքներով օժտելը:

Քաղաքացիները քննարկում էին Սահմանադրության արժանիքնե-

րը թերթերում, նամակներում, քարոզներում և սրճարաններում ամբողջ Ամերիկայում: «Ֆեդերալիստական թղթերում» (Federalist Papers) զետեղված ամենահայտնի և ամենակարևոր փաստարկներից մի քանիսի հեղինակները Ալեքսանդր Համիլթոնը, Ջոն Ադեյը և Ջեյմս Մեդիսոնն էին. դրանք տպագրվեցին Նյու Յորքի տարբեր թերթերում 1787-1788 թվականներին: 1788 թվականի սկզբին Մասաչուսեթսում կայացավ առաջին վճռորոշ քվեարկությունը: Սկզբում Մասաչուսեթսի վավերացնող համաժողովի հակաֆեդերալիստներն առավելություն ունեին, բայց շաբաթներ տևած բանավեճերից հետո բավականաչափ պատվիրակներ փոխեցին իրենց ձայները՝ Սահմանադրությունը հաստատելու համար: Նրանք հավանություն տվեցին նաև առաջարկվող մի շարք փոփոխությունների ու լրացումների, որոնք պետք է ներկայացվեին առաջին Կոնգրեսին: Այս օրինակին հետևեցին մյուս նահանգային համաժողովները՝ վավերացնելով Սահմանադրությունը, բայց կցելով փոփոխությունների և լրացումների առաջարկներ:

Ամենաբարձր մակարդակի համաժողովը տեղի ունեցավ 1788 թվականի հունիսին Ռիչմոնդում (Վիրջինիա), երբ ազդեցիկ ֆեդերալիստներ Ջեյմս Մեդիսոնը, Էդմունդ Ռենդոլֆը և Ջոն Մարշալը, պայքարում էին նույնքան ազդեցիկ հակաֆեդերալիստների՝ Պատրիկ Հենրիի և Ջորջ Մեյսոնի դեմ: Վիրջինիան Ամերիկայի ամենամեծ բնակչությամբ նահանգն էր, որտեղից էին նաև երկրի առաջնակարգ առաջնորդներից շատերը, և նոր կառավարության հաջողությունը կախված էր Վիրջինիայի հետ համագործակցությունից: Մոտ մեկ ամիս տևած բանավեճերից հետո Վիրջինիան 89 կողմ և 79 դեմ ձայներով քվեարկեց Սահմանադրության վավերացման օգտին:

1788 թվականի հուլիսի 2-ին Կոնգրեսը հայտարարեց, որ նահանգների մեծ մասը վավերացրել է Սահմանադրությունը, և որ փաստաթուղթն այժմ ուժի մեջ է: Սակայն դա չէր նշանակում, որ բանավեճերն ավարտվել են: Հյուսիսային Կարոլինայի, Նյու Յորքի և Ռոդ Այլենդի համաժողովները չէին ավարտել վավերացման գործընթացները, և հակաֆեդերալիստները դեռ պնդում էին, որ Սահմանադրությունը կհանգեցնի բռնակալության: Նյու Յորքի համաժողովը վավերացնելու էր Սահմանադրությունը ընդամենը 3 ձայնի առավելությամբ, և վերջապես Ռոդ Այլենդը այն վավերացնելու էր 2 ձայնի առավելությամբ՝ Ջորջ Վաշինգտոնի երդմնակալությունից և նախագահի պաշտոնը ստանձնելուց մեկ տարի անց:



**ԱՄՆ հիմնադիր հայրերը
Ջորջ Վաշինգտոն, ԱՄՆ առաջին նախագահ**



**Թոմաս Ջեֆերսոն, Բենջամին Ֆրանկլին, Ջոն Ադամս,
Ջեյմս Մեդիսոն, Ջոն Ջեյ, Ռոջեր Շերման,
Ջեյմս Մոնրո, Ռիչարդ Հենրի Լի, Ալեքսանդր Համիլթոն
(ձախից աջ)**

Իրավունքներն ու փոխզիջումները

Թեև բանավեճերը շարունակվում էին, Ջորջ Վաշինգտոնի նախագահ ընտրվելն ամրացրեց Սահմանադրության հեղինակությունը: Մինչև 1793 թվականը հակաֆեդերալիստ եզրույթը էապես զրկվեց իր բովանդակությունից: Այնուամենայնիվ, քննարկումների և բանավեճերի արդյունքում ստեղծվեց մի Սահմանադրություն, որը հետագա որոշ լրացումներով գործում է առ այսօր: 1791 թվականին ավելացվեցին տասը ուղղումներ (amendments): Դրանք միասին կազմում են Իրավունքների օրինագիծը (Bill of Rights): Ջեյմս Մեդիսոնը, ի հեճուկս իր սկզբնական ցանկության, աջակցեց այս լրացումներին՝ որպես անհրաժեշտության և քաղաքական փոխզիջման գործողություն: Նա հաղթել էր Ներկայացուցիչների պալատի ընտրություններում՝ խոստանալով Վիրջինիայի իր ընտրողներին իրավունքների նման ցանկ:

Շատ հարցեր դուրս էին մնացել Իրավունքների օրինագծից: Կանայք կառավարման համակարգում հատուկ պաշտպանություն կամ ձայնի իրավունքի երաշխիք չէին ստացել: Նահանգներից շատերը շարունակում էին սահմանափակել քվեարկության իրավունքը՝ դա վերապահելով միայն այն տղամարդկանց, որոնք ունեին զգալի ունեցվածք: Իսկ ստրկությունը ոչ միայն շարունակեց գոյություն ունենալ. այն թույլատրված և պաշտպանված էր Սահմանադրությամբ:

Սահմանադրությունը ձևավորող կարևոր փոխզիջումներից էր ստրկավաճառության խնդիրը: Ամերիկացիներն անդրատլանտյան ստրկավաճառությունն ընդհանուր առմամբ ընկալում էին որպես ավելի բռնի և անբարոյական, քան բուն ստրկատիրությունը: Մեծ թվով հյուսիսցիներ ընդդիմանում էին դրան բարոյական նկատառումներով: Բայց նրանք նաև հասկանում էին, որ ավելի շատ աֆրիկացիների ներմուծելու թույլտվությունը կուժեղացներ հարավային նահանգների քաղաքական իշխանությունը: Սահմանադրությունը յուրաքանչյուր սևամորթ անձի հաշվում էր որպես անձի երեք հինգերորդը ներկայացուցչական մարմիններում պատվիրակների համամասնության նպատակներով: Ուստի ստրկներով հարուստ շրջաններում սպիտակ ընտրողները լրացուցիչ ազդեցություն ունեին: Մյուս կողմից՝ Վերին Հարավի նահանգները նույնպես ողջունեցին Ատլանտյան ստրկավաճառության արգելքը, քանզի նրանք արդեն ունեին ստրկների ավելցուկ: Ներմուծման արգելքը նշանակում էր, որ Վիրջինիայի և Մերիլենդի ստրկատերերը կարող էին ավելի բարձր գներով վաճառել իրենց ստրկներին այնպիսի նահանգների, ինչպիսիք

էին Հարավային Կարովինան և Ջորջիան, որոնք կախված էին ստրկավաճառության շարունակությունից:

Նոր Անգլիան և Խորը հարավը համաձայնության հանգեցին 1787 թ. Սահմանադիր համաժողովում «կեղտոտ փոխզիջում» անվանումը ստացած անդրատլանտյան ստրկավաճառության արգելքի դրույթների շուրջ: Նոր անգլիացիները համաձայնեցին ներառել սահմանադրական դրույթ, որը պաշտպանում էր ստրուկների արտաքին առևտուրը ևս քսան տարի: Փոխարենը, Հարավային Կարովինայի և Ջորջիայի պատվիրակները խոստացան աջակցել այն սահմանադրական դրույթին, որն ընդլայնում էր առևտրային օրենսդրություն ընդունելու Կոնգրեսի լիազորությունները: Արդյունքում ատլանտյան ստրկավաճառությունը թույլատրվեց մինչև 1808 թվականը, երբ արդեն օրենքով արգելվեց:

Երբ 1803 թվականին Միացյալ Նահանգները Ֆրանսիայից գնեց հսկայածավալ Լուիզիանան, որով կրկնապատկվեց Միացյալ Նահանգների տարածքը, ազգային օրակարգում առաջնահերթ դարձավ ստրկության ընդլայնման հարցը: Շատ սպիտակամորթ ամերիկացիներ, այդ թվում նախագահ Թոմաս Ջեֆերսոնը, կարծում էին, որ ստրկավաճառության արտաքին առևտրի դադարեցումը և ներքին ստրուկների ցրումը բնակչության մեջ Միացյալ Նահանգները կպահպանի իբրև սպիտակամորթների հանրապետություն և, գուցե, նույնիսկ կհանգեցնի ստրկության վերացմանը: Ստրկավաճառության արգելքը, սակայն, չունեի կիրառման արդյունավետ միջոցներ և ֆինանսավորում: Ավելին, ապօրինի ներկրված աֆրիկացիներին ազատելու փոխարեն ստրկավաճառության արգելքի օրենքը նրանց ճակատագիրը վերապահեց նահանգներին, և դրանցից շատերը պարզապես աճուրդում վաճառում էին բռնված՝ ապօրինի ներկրված ստրուկներին: Այսպիսով, նշյալ արգելքը պահպանեց մարդկանց նկատմամբ գույքային սեփականության իրավունքի տրամաբանությունը:

Համիլթոնի ֆինանսական համակարգը

Նախագահ Ջորջ Վաշինգտոնի նշանակումները վարչակազմում արտացոլում էին շարունակվող քաղաքական լարվածությունը՝ կապված դաշնային կառավարության իշխանական լիազորությունների հետ: Փոխնախագահը Ջոն Ադամսն էր: Վաշինգտոնը գանձապետարանի քարտուղար նշանակեց Ալեքսանդր Համիլթոնին: Երկուսն էլ ցանկանում էին ունենալ գործուն դաշնային կառավարություն, որը կխթաներ բարեկեցությունը՝ աջակցելով ամերիկյան արդյունաբերությանը: Վաշինգտոնը

պետքարտուղար նշանակեց Թոմաս Ջեֆերսոնին, ով ձգտում էր սահմանափակել դաշնային իշխանությունը և պահպանել գյուղատնտեսության վրա հիմնված տնտեսությունը: Վաշինգտոնը ձգտում էր հաշտեցնել իր վարչակազմում ֆեդերալիստական և դեմոկրատական-հանրապետական խմբակցություններին:

Ալեքսանդր Համիլթոնը կարծում էր, որ անձնական շահը «մարդկանց գործողությունների ամենահզոր խթանն է»: Անձնական շահն էր մղում մարդկանց սեփականություն կուտակելու, և այդ ջանքերն էլ ստեղծում էին առևտուր ու արդյունաբերություն: Ըստ Համիլթոնի՝ կառավարությունը կարևոր դեր պետք է խաղար այս գործընթացում՝ պաշտպանելով մասնավոր սեփականությունը և մարդկանց ենթարկելով հանրային բարօրության գաղափարին: Այլ կերպ ասած՝ իմաստուն կառավարությունը պետք է օգտագործեր սեփականության նկատմամբ իր քաղաքացիների ցանկությունը հօգուտ և՛ մասնավոր անձանց, և՛ պետության: Համիլթոնը, ինչպես իր ժամանակի պետական գործիչներից շատերը, չէր կարծում, որ պետությունը պետք է ապահովի սեփականության հավասար բաշխում: Անհավասարությունն ընկալվում էր իբրև «հասարակության մեծ և հիմնարար տարբերանշան», և Համիլթոնը պատճառ չէր տեսնում, թե ինչու դա պետք է փոխվի: Փոխարենը, Համիլթոնը ցանկանում էր կապել հարուստ ամերիկացիների տնտեսական շահերը դաշնային կառավարության ֆինանսական առողջության հետ: Այնպես, որ հարուստներն ունենային կառավարության կարիքը և իրենց ուժերն ուղղորդեին այն վճարունակ պահելուն: Հետևաբար, Համիլթոնը կարծում էր, որ դաշնային կառավարությունը պետք է լինի «հարուստների իրավունքների շտեմարան»: Դրան հասնելու համար, որպես երկրի առաջին գանձապետարանի քարտուղար, նա առաջարկեց հավակնոտ ֆինանսական ծրագիր:

Համիլթոնի ծրագրի առաջին մասը ներառում էր պետական պարտքերի դաշնային «հանձնառումը», որոնք հիմնականում մնացել էին Հեղափոխական պատերազմից: Դաշնային կառավարությունը պատասխանատվություն էր ստանձնելու նահանգների չվճարված պարտքերի համար, որոնք կազմում էին մոտ 25 միլիոն դոլար: Երկրորդ՝ Համիլթոնը ցանկանում էր, որ Կոնգրեսը ստեղծեր կենտրոնական բանկ՝ Միացյալ Նահանգների բանկ (Bank of the United States): Այս առաջարկների նպատակն էր երկրի տնտեսական կենտունակությունը պայմանավորել դաշնային իշխանության գործողություններով: Ըստ այդմ՝ նահանգների պարտատերերը (պետական պարտատոմսեր կամ մուրհակներ ունեցող անձինք) իրենց հին արժեթղթերը կփոխանցեին գանձապետարան

և կստանային նույն անվանական արժեքով նոր դաշնային թղթադրամներ: Համիլթոնը կանխատեսում էր, որ այս պարտատոմսերը փողի պես կշրջանառվեին՝ գործելով որպես «գործարարության շարժիչ և արդյունաբերության ու առևտրի գործիք»: Նրա ծրագրի այս մասը, սակայն, հակասական էր երկու պատճառով:

Նախ՝ շատ հարկատուներ դեմ էին հին արժեթղթերի ամբողջ անվանական արժեքը վճարելուն, քանի որ դրանց շուկայական արժեքը նվազել էր: Դրանց սեփականատերերը հաճախ այդ պարտատոմսերը գնել էին իրական պարտատերերից չնչին գումարներով: Դրանց լրիվ անվանական արժեքով վճարելը կնշանակեր սպեկուլյանտներին պարզևատրել հարկատուների հաշվին: Համիլթոնը հակադարձում էր, որ պետական պարտքերը պետք է ամբողջությամբ մարվեն, այլապես քաղաքացիները կկորցնեն կառավարության նկատմամբ վստահությունը: Բացի այդ, շատ հարավցիներ առարկեցին, որ իրենք արդեն իսկ վճարել են իրենց չմարված պետական պարտքերը, ուստի դաշնային հանձնառությունը կնշանակեր նրանց ստիպել նորից վճարել, հիմա արդեն նոր անգլիացիների պարտքերը:

Այնուամենայնիվ, նախագահ Վաշինգտոնը և Կոնգրեսը ընդունեցին Համիլթոնի փաստարկները: Արդեն 1794 թվականի վերջին երկրի ներքին պարտքի 98 տոկոսը փոխակերպվել էր նոր դաշնային պարտատոմսերի: Համիլթոնի ծրագիրը Միացյալ Նահանգների բանկի վերաբերյալ նույնպես արժանացավ Կոնգրեսի հավանությանը՝ չնայած ուժեղ ընդդիմությանը: Թոմաս Զեֆերսոնը և այլ հանրապետականներ պնդում էին, որ ծրագիրը հակասահմանադրական է. Սահմանադրությունը Կոնգրեսին չէր լիազորել բանկ ստեղծել: Համիլթոնը, սակայն, պնդում էր, որ ԱՄՆ բանկը ոչ միայն սահմանադրական է, այլև կարևոր է երկրի բարգավաճման համար: Մասնավորապես, Միացյալ Նահանգների բանկը կհոգար մի շարք կարիքներ. այն կգործեր որպես դաշնային միջոցների դրամարկը և կթողարկեր թղթադրամներ՝ ապահովված ոսկով կամ արծաթով: Բանկի գործակալները նաև կօգնեին վերահսկելու ինֆլյացիան՝ պարբերաբար թղթադրամներ տանելով իրենց ծագման բանկերը և դրա դիմաց պահանջելով համարժեք ոսկե մետաղադրամ՝ այդ կերպ սահմանափակելով նահանգային բանկերի կողմից տպագրվող թղթադրամների քանակը: Ավելին, դա կշահագրգռեր մեծահարուստներին դաշնային կառավարության ֆինանսական առողջության հարցում: Դաշնային կառավարությունը կվերահսկեր բանկի բաժնետոմսերի ընդամենը 20 տոկոսը. մնացած 80 տոկոսը կպատկաներ մասնավոր ներդրողներին:

1791 թվականին Կոնգրեսը հաստատեց Միացյալ Նահանգների բանկի կանոնադրությունը 20 տարվա համար: Բանկի բաժնետոմսերը և դաշնային պարտատոմսերը միասին կազմեցին ավելի քան 70 միլիոն դոլար: Սա խթանեց արժեթղթերի շուկաների ճնաժողովումը, ինչը դաշնային կառավարությանը թույլ տվեց ավելի շատ գումար տնօրինել, և 1790-ականներին նպաստեց պետականորեն արտոնագրված բանկերի ու մասնավոր այլ բիզնես կորպորացիաների արագ տարածմանը: Ֆեդերալիստների համար դա դաշնային կառավարության հիմնական նպատակներից էր: Ընդդիմախոսներին, ովքեր ցանկանում էին դաշնային իշխանության ավելի սահմանափակ դեր տնտեսության մեջ, կամ ովքեր ապրում էին սահմանին և չունեին կապիտալի հասանելիություն, թվում էր, թե Համիլթոնի համակարգը ամրացնում է դասակարգային սահմանները և հարուստներին տալիս է դաշնային կառավարության վրա չափազանց մեծ ազդեցություն: Բացի այդ, Համիլթոնի ծրագիրն ուներ ևս մեկ խիստ հակասական տարր. նոր պարտատոմսերի վրա ունեցած պարտքը վճարելու համար դաշնային կառավարությանը հարկային եկամուտների հուսալի աղբյուրներ էին անհրաժեշտ: 1791 թվականին Համիլթոնն առաջարկեց դաշնային ակցիզային հարկ սահմանել մի շարք ապրանքների արտադրության, վաճառքի և սպառման համար, այդ թվում՝ վիսկիի:

Վիսկիի ապստամբությունը և Ջեյի պայմանագիրը

Հացահատիկը ամերիկացի ֆերմերներից շատերի համար ամենաթանկ կանխիկ բերքն էր: Արևմուտքում տեղական թորման ակոհոլի արտադրության համար գործարաններին հացահատիկ վաճառելը սովորաբար ավելի շահավետ էր, քան այն Ապալաչների վրայով արևելյան շուկաներ առաքելը: Այսպիսով, Համիլթոնի վիսկիի հարկը հատկապես ծանրացավ արևմտյան ֆերմերների վրա: Թվում էր՝ հարկը երիտասարդ հանրապետությունը կիսում էր՝ աշխարհագրորեն Արևելքի և Արևմուտքի, տնտեսապես՝ վաճառականների և ֆերմերների, և մշակութային առումով՝ քաղաքների և գյուղերի միջև:

1791 թվականի աշնանը, արևմտյան Փենսիլվանիայում տասնվեց տղամարդիկ, քողարկված կանանց հագուստներով, հարձակվեցին հարկահավաքի վրա: Տեղացի իրավապահները ևս հարձակման ենթարկվեցին: Ապստամբ ֆերմերները նաև որդեգրեցին բողոքի այլ մեթոդներ, որոնք կիրառվել էին Հեղափոխության և Շեյսի ապստամբության ժամանակ: Հաջորդ երկու տարիներին տարածաշրջանում հարկերի հավաքագրումները նվազեցին: Այնուհետև 1794 թվականի հուլիսին զինված

Ֆերմերների խմբերը հարձակվեցին դաշնային մարշալների և հարկահավաքների վրա՝ այրելով առնվազն երկու հարկահավաքների տներ: Ամսվա վերջին մոտ 7000-անոց զինված ապստամբների խմբավորումը՝ արմատական փաստաբան Դեյվիդ Բրեդֆորդի գլխավորությամբ, թալանեց ԱՄՆ փոստային ծառայության գրասենյակները և տեղակայվեց Փիթսբուրգից մոտ 8 մղոն դեպի արևելք: Նախագահ Վաշինգտոնն արագ արձագանքեց դեպքերին:

Նախ, Վաշինգտոնը երեք նշանավոր փենսիլվանիացիներից բաղկացած հանձնաժողով ուղարկեց՝ հանդիպելու ապստամբների հետ և փորձելու խաղաղ լուծում գտնել: Միևնույն ժամանակ, նա հավաքեց 13,000-անոց բանակ Քարլայլում (Փենսիլվանիա): 1794 թվականի սեպտեմբերի 19-ին Վաշինգտոնը դարձավ միակ գործող նախագահը, որն անձամբ գլխավորեց զորքերը դաշտում, թեև շուտով բանակի հրամանատարությունը հանձնեց հեղափոխական պատերազմի հերոս և Վիրջինիայի նահանգապետ Հենրի Լիին: Երբ դաշնային բանակը շարժվեց դեպի արևմուտք, ֆերմերները ցրվեցին: Իբրև դաշնային իշխանության ուժի ցուցադրում՝ Ալեքսանդր Համիլթոնը կարգադրեց ձերբակալել և դատել մի շարք ապստամբների: Վիսկիի ապստամբությունը ցույց տվեց, որ դաշնային կառավարությունն ի վիճակի է սանձել ներքին անկարգությունները: Բայց այն նաև ցույց տվեց, որ որոշ քաղաքացիներ, հատկապես արևմտյան աղքատ բնակիչները, կառավարությանը համարում էին իրենց թշնամի:

Նույն ժամանակահատվածում բուռն բողոքի տեղիք տվեց ազգային մեկ այլ խնդիր. հզոր ֆինանսական համակարգի իր տեսլականով հանդերձ՝ Համիլթոնը նաև ուներ արտաքին առևտրով զբաղվող առաջատար ազգի տեսլականը: Նրա կարծիքով՝ դա նշանակում էր բարեկամական հարաբերությունների հաստատում հատկապես Մեծ Բրիտանիայի հետ: Հեղափոխության ավարտից հետո Ամերիկայի հարաբերությունները Բրիտանիայի հետ լարված էին, մասամբ բրիտանացիների և ֆրանսիացիների միջև պատերազմի պատճառով: Նրանց ծովային պատերազմը սպառնում էր ամերիկյան նավագնացությանը, բեռնափոխադրումներին, իսկ բրիտանական նավատորմի սպառնալիքն ու պարբերական բռնագրավումներն ահաբեկում էին ամերիկացի նավաստիներին: Այս հանգամանքը ամերիկյան անդրծովյան առևտուրը դարձնում էր ռիսկային և թանկ: Այդուհանդերձ, նախագահ Վաշինգտոնը, գիտակցելով ԱՄՆ թուլությունը, ջանում էր չեզոքություն պահպանել: 1793 թվականի ապրիլին նա պաշտոնապես հայտարարեց, որ Միացյալ Նահանգները կմնա չեզոք:

Նրա օրհնությամբ Համիլթոնի քաղաքական դաշնակից Ջոն Ջեյը, ով Գերագույն դատարանի գլխավոր դատավորն էր, նավարկեց Լոնդոն՝ բանակցելու պայմանագրի շուրջ, որը կբավարարեր ԱՄՆԸ Բրիտանիային, ԱՄիացյալ Նահանգներին:

Ջեֆերսոնը և Մեդիսոնը կտրականապես դեմ էին այս բանակցություններին: Նրանք չէին վստահում բրիտանացիներին՝ համարելով, որ համաձայնագրով ամերիկյան պետությունը նախապատվություն է տալիս Մեծ Բրիտանիային Ֆրանսիայի փոխարեն: Դեմոկրատ-հանրապետականները կարծում էին, որ Միացյալ Նահանգները պետք է ջանա պահպանել բարեկամությունը նոր հեղափոխական Ֆրանսիայի հետ, քանզի Ֆրանսիական հեղափոխությունը, ինչպես Ամերիկյանը, տապալել էր միապետությունը: Նրանք նաև դժգոհում էին, որ Բրիտանիայի հետ պայմանագիրը բխում էր առևտրաարդյունաբերական Հյուսիսի շահերից՝ ի վնաս գյուղատնտեսական Հարավի:

1794 թվականի նոյեմբերին, չնայած նրանց անհանգստությանը, Ջոն Ջեյը կնքեց Մեծ Բրիտանիայի հետ «Բարեկամության, առևտրի և նավարկության պայմանագիրը»: Այսպես կոչված՝ Ջեյի պայմանագիրը պահանջում էր, որ մինչև 1796 թվականը Բրիտանիան հրաժարվի իր ռազմական հենակետերից Հյուսիսարևմտյան տարածքում (Ֆորտ Դետրոյթ, Ֆորտ Մակինակ և Ֆորտ Նիագարա): Բրիտանիան նաև համաձայնեց փոխհատուցել ամերիկացի վաճառականների կորուստները: Ի պատասխան՝ ԱՄՆ-ն համաձայնեց Բրիտանիային վերաբերվել որպես իր առաջնային առևտրային գործընկերոջ, ինչը նշանակում էր լռելյայն աջակցել Բրիտանիային Ֆրանսիայի հետ ընթացող հակամարտությունում: Այդուհանդերձ, Ջեյին չհաջողվեց վերջ տալ բռնագրավումներին:

Ֆեդերալիստների համար Ջեյի պայմանագիրը նշանակալի ձեռքբերում էր: Պայմանագիրը դեռևս թույլ Միացյալ Նահանգներին հնարավորություն տվեց պաշտոնապես չեզոք մնալու եվրոպական պատերազմներում և պահպանելու ամերիկյան տնտեսական բարգավաճումը՝ պաշտպանելով առևտուրը: Սակայն ըստ Ջեֆերսոնյան դեմոկրատ-հանրապետականների՝ պայմանագիրը ֆեդերալիստների դավաճանության ապացույցն էր. ֆեդերալիստները միապետության կողմնակիցն էին ընդդեմ հանրապետության և ենթարկվել էին բրիտանական ազդեցությանը՝ նույնիսկ վերջ չդնելով բռնագրավումներին: Կոնգրեսում Ջեյի պայմանագրի շուրջ բանավեճը ֆեդերալիստներին և հանրապետականներին ժամանակավոր խմբակցություններից վերածեց երկու տարբեր (թեև դեռևս թույլ կազմակերպված) քաղաքական կուսակցությունների:

Ֆրանսիական հեղափոխությունը և ամերիկյան ազատության սահմանները

Ֆեդերալիստները ձգտում էին մերձենալ Մեծ Բրիտանիայի հետ, քանզի վախենում էին դեմոկրատական մտքի ամենաարմատական ձևերից: Շեյսի ապստամբության, վիսկիի ապստամբության և այլ ներքին բողոքների համապատկերում ֆեդերալիստները ձգտում էին պահպանել երկրի հասարակական կայունությունը: Ֆրանսիական հեղափոխության բռնի ընթացքը կարծես արդարացնում էր նրանց մտահոգությունները:

1789 թվականին Ֆրանսիական հեղափոխության մասին լուրերը հասան Ամերիկա: Ամերիկացիների մեծ մասը երևակայում էր, որ ազատությունը տարածվում է Ամերիկայից դեպի Եվրոպա վերադարձած ֆրանսիացի հերոսների միջոցով, ովքեր մասնակցել էին Ամերիկյան հեղափոխությանը: Սկզբում գրեթե բոլոր ամերիկացիները գովաբանում էին Ֆրանսիական հեղափոխությունը: Ամերիկյան քաղաքներում հուլիսի 14-ին նույնիսկ հեղափոխության տարեդարձն էր նշվում՝ Բաստիլի գրավման օրը:

1793 թվականի ապրիլին Միացյալ Նահանգներ ժամանեց Ֆրանսիայի նոր դեսպանը՝ «քաղաքացի» Էդմոն-Շառլ Ժենետը: Մի քանի քաղաքներում շրջագայության ժամանակ ամերիկացիները նրան դիմավորեցին բուռն ոգևորությամբ: Քաղաքացի Ժենետը հորդորում էր ամերիկացիներին գործել ընդդեմ Բրիտանիայի դաշնակից Իսպանիայի՝ հարձակվելով Ֆլորիդայի և Լուիզիանայի նրա գաղութների վրա: Երբ նախագահ Վաշինգտոնը հրաժարվեց, Ժենետը սպառնաց ուղղակիորեն դիմել ամերիկացի ժողովրդին: Ի պատասխան՝ Վաշինգտոնը Ֆրանսիայից պահանջեց հետ կանչել իր ամբարտավան դիվանագետին: Այդ ընթացքում, սակայն, Ժենետի խմբակցությունը իշխանությունից հեռացվել էր Ֆրանսիայում: Իմանալով, որ հայրենիք վերադառնալը կարող է արժենալ իր գլուխը, նա որոշեց մնալ Ամերիկայում:

Ֆրանսիայում իշխանությունը զավթել էր հեղափոխականների ամենաարմատական դաշինքը, որը նախաձեռնեց իր թշնամիների արյունալի զտումը. դա կոչվեց «Ահաբեկչության ժամանակաշրջան»: Երբ ամերիկացիները իմացան Ժենետի անպատկառության և Ֆրանսիայում գլխատումների աճող թվերի մասին, շատերը սկսեցին փոխել իրենց դիրքորոշումը Ֆրանսիական հեղափոխության վերաբերյալ: Այն ամերիկացիները, որոնք զգուշանում էին Ֆրանսիական հեղափոխության վտանգավոր անկանխատեսելիության աճից, հակված էին դառնալու ֆեդերալիստ-

ներ: Նրանք, ովքեր հույսեր էին կապում Ֆրանսիական հեղափոխության հետ, հակված էին դառնալու հանրապետականներ: Թոմաս Ջեֆերսոնը հայտարարեց, որ ավելի լավ է տեսնել «երկրի կեսն ամայացած», քան Ֆրանսիական հեղափոխության ձախողումը: Մինչդեռ ֆեդերալիստները ձգտում էին ավելի սերտ կապեր հաստատել Բրիտանիայի հետ:

Չնայած ներքաղաքական լարվածությանը՝ 1796 թվականի վերջին հույսի մեկ նշույլ երևաց. Միացյալ Նահանգները խաղաղ ճանապարհով ընտրեց նոր նախագահին: Վաշինգտոնը վայր դրեց իր լիազորությունները, և գործադիր իշխանությունը փոխվեց. երկիրը չհայտնվեց անարխիայի մեջ, որից շատ առաջնորդներ վախենում էին: Նոր նախագահը Վաշինգտոնի փոխնախագահ Ջոն Ադամսն էր: Վերջինս ավելի քիչ սիրելի էր, քան իր նախորդը, և ստիպված էր կառավարել խորապես պառակտված ազգը: Ֆրանսիական հեղափոխության առաջացրած միջազգային ճգնաժամը նրա համար նույնպես մեծ փորձություն էր: Ի պատասխան Ջեյի պայմանագրի՝ Ֆրանսիայի կառավարությունը լիազորեց իր նավերին հարձակվել ամերիկյան նավերի վրա: Այդ խնդիրը լուծելու համար նախագահ Ադամսը 1797 թվականին բանագնացներ ուղարկեց Ֆրանսիա: Ֆրանսիացիները վիրավորեցին ԱՄՆ դիվանագետներին: Ֆրանսիացի որոշ պաշտոնյաներ, որոնց ամերիկացիներն իրենց նամակագրության մեջ անվանում էին X, Y և Z ծածկագրերով, ակնարկել էին, որ բանակցությունները կարող էին վերսկսվել միայն ամերիկացիների կողմից կաշառք առաջարկվելու դեպքում: Երբ պատմությունը հայտնի դարձավ, XYZ-ի այս գործը վրդովեցրեց ամերիկյան քաղաքացիներին: Տասնյակ քաղաքներ ուղերձներ հղեցին նախագահ Ադամսին՝ խոստանալով աջակցել նրան Ֆրանսիայի դեմ: Շատերը կարծես պատերազմ էին տեսնում: Հարավային Կարոլինայի ներկայացուցիչ, կոնգրեսական Ռոբերտ Գուդլո Հարփերը հայտարարեց. «Միլիոններ պաշտպանության համար, բայց ոչ մի ցենտ տուրք»:

1798 թվականին Չարլսթոնի բնակիչները տագնապով էին նայում օվկիանոսի հորիզոնին, քանզի վախենում էին ցանկացած պահի ֆրանսիական նավատորմի ժամանումից: Շատերն անհանգստանում էին, որ նույն նավերը, որոնք օգնել էին ամերիկացիներին Հեղափոխական պատերազմի ժամանակ, կարող են ներխուժել իրենց երկիրը: Հարավցիներին ոմանք վստահ էին, որ այդ զորքերը բաղկացած կլինեն Ֆրանսիայի Կարիբյան գաղութներից ձևավորված սևամորթներից, որոնք կհարձակվեն հարավային նահանգների վրա՝ հրահրելով ստրուկների ապստամբություն: Շատ ամերիկացիներ անհանգստացած էին, որ Ֆրանսիան

գաղտնի գործակալներ ուներ իրենց երկրում: Չարխթոնի փողոցներում երիտասարդ տղամարդկանց զինված խմբերը որոնում էին ֆրանսիացի գործակալների:

Այս ճգնաժամի ժամանակ նոր անգլիացիները Ֆրանսիայի ամենաբացահայտ հակառակորդներն էին: 1798 թվականին ֆրանկոֆոբիայի նոր պատճառ հայտնվեց. Մասաչուսեթսում ազդեցիկ հոգևորական Ջեդիդիա Մորզը հայտարարեց, որ Ֆրանսիական հեղափոխությունը ստեղծվել է դավադրության արդյունքում, որը գլխավորում էր խորհրդավոր հակաքրիստոնեական կազմակերպությունը՝ Իլյումինատները: Պատմությունը շինծու էր, բայց Իլյումինատների ներթափանցման մասին լուրերը հրդեհի պես տարածվեցին ամբողջ Նոր Անգլիայում՝ նոր չափում ավելացնելով արտաքին սպառնալիքին:

Այսպես կոչված՝ ֆրանսիական քվազի-պատերազմը (French Quasi-War) մղվեց Ատլանտյան օվկիանոսում, հիմնականում ֆրանսիական ռազմածովային նավերի և ամերիկյան առևտրային նավերի միջև: Այս ճգնաժամի ընթացքում, սակայն, օտարերկրյա գործակալների առնչությամբ անհանգստությունը խորացավ, և Կոնգրեսի անդամները քայլեր ձեռնարկեցին ներքին դիվերսիան կանխելու համար: Այս քայլերից ամենավիճահարույցը Օտարերկրացիների և Խռովության մասին օրենքներն (Alien and Sedition Acts) էին: 1798 թվականին ընդունված այս երկու օրենսդրական ակտերը նպատակ ունեին կանխել ֆրանսիական գործակալներին և նրանց համախոհներին, բայց դրանք կիրառվեցին նաև այն ամերիկացիների դեմ, որոնք քննադատում էին նախագահին և Ֆեդերալիստական կուսակցությանը:

Օտարերկրացիների մասին օրենքը թույլ էր տալիս դաշնային կառավարությանը արտաքսել օտարերկրյա այն քաղաքացիներին կամ «օտարականներին», որոնք կասկածվում էին ազգային անվտանգության սպառնալիք լինելու մեջ: Իսկ Խռովության մասին օրենքը թույլ տվեց կառավարությանը քրեական պատասխանատվության ենթարկել յուրաքանչյուրին, ով խոսում, քննարկում կամ հրապարակում էր «կեղծ, սկանդալային և չարամիտ գրություններ» կառավարության դեմ:

Այս օրենքներն արտացոլում էին ընդհանուր ենթադրություններ Ամերիկյան հեղափոխության բնույթի և ազատության սահմանների (limits of liberty) վերաբերյալ: Փաստորեն, Սահմանադրության և նրա Առաջին ուղղման (First Amendment) ջատագովների գերակշիռ մասի համար խոսքի ազատությունը պարզապես նշանակում էր նախնական գրաքննության կամ սահմանափակման բացակայություն, այլ ոչ թե պատժի դեմ երաշ-

խիք: Ըստ այդ տրամաբանության՝ «անբարեխիղճ» կամ անկարգ խոսքը հասարակությանը դարձնում էր ավելի քիչ ազատ: Սահմանադրության ճարտարապետներից Ջեյմս Ուիլսոնը պնդում էր, որ «յուրաքանչյուր հեղինակ պատասխանատու է» կառավարության անվտանգության կամ բարօրության վրա հարձակման համար:

1798 թվականին ֆեդերալիստների մեծ մասը համաձայն էր այս ըմբռնումների հետ: Խռովության օրենքի պայմանների համաձայն՝ մեղադրվեցին և քրեական պատասխանատվության ենթարկվեցին դեմոկրատ-հանրապետական մի քանի հրատարակիչներ և նույնիսկ մի հանրապետական կոնգրեսական, ով քննադատել էր նախագահ Ադամսին: Միևնույն ժամանակ, թեև Ադամսի վարչակազմը չէր կիրառում Օտարականների օրենքը, դրա ընդունումը բավական էր, որ որոշ օտարերկրացիներ լքեին երկիրը: Նախագահի և այլ ֆեդերալիստների մեծ մասի համար Օտարականների և Խռովության մասին օրենքները պահպանողական էին, այլ ոչ թե արմատական ազատական Ամերիկյան հեղափոխության շարունակությունը:

Այնուամենայնիվ, Օտարականների և Խռովության մասին օրենքները հակադարձ արձագանք առաջացրեցին երկու առումներով: Նախ՝ ցնցված հակառակորդները ձևակերպեցին ազատության նոր և ընդարձակ տեսլականը: Շատ ամերիկացիներ պնդում էին, որ խոսքի ազատությունը նշանակում է գործնականում ամեն ինչ ասելու հնարավորություն՝ առանց քրեական հետապնդման վախի: Երկրորդ՝ Ջեյմս Մեդիսոնը և Թոմաս Ջեֆերսոնն օգնեցին կազմակերպելու նահանգների կառավարությունների ընդդիմությունը դաշնային կառավարության դեմ: Երկու առաջնորդներն էլ հակադրվեցին վերոնշյալ օրենքներին սահմանադրականության հիմքերով: 1798 թվականին Ջեֆերսոնն այս շեշտադրումն արեց Քենթաքի նահանգի օրենսդիր մարմնի կողմից ընդունված բանաձևում: Կարճ ժամանակ անց Վիրջինիայի օրենսդիր մարմինն ընդունեց Մեդիսոնի կողմից գրված նմանատիպ փաստաթուղթ: Քենթաքիի և Վիրջինիայի բանաձևերը պնդում էին, որ ազգային կառավարության լիազորությունները սահմանափակված են ԱՄՆ Սահմանադրությամբ ուղղակիորեն տրված լիազորություններով: Եվ որ ավելի կարևոր էր, նրանք պնդում էին, որ նահանգները կարող են դաշնային օրենքները հակասահմանադրական հռչակել: Այս բանաձևերը դեռևս պարզապես անհնազանդության ժեստեր էին: Նրանց այս համարձակ պնդումը, սակայն, կարևոր ազդեցություն պետք է ունենար հետագա տասնամյակների ընթացքում:

Կրոնական ազատությունը

Ֆրանսիական հեղափոխության շուրջ բանավեճերի ու հակադրությունների պատճառներից մեկն այն էր, որ ամերիկացիները վստահ չէին իրենց կրոնական ապագայի վերաբերյալ: 1798 թվականի Իլյումինատների սարսափը այս վախի միայն մեկ դրսևորումն էր: Միացյալ Նահանգներում կրոնի և կառավարության հանդեպ վերաբերմունքի դանդաղ, բայց խորը փոփոխություն սկսվեց: 1776 թվականին ամերիկյան նահանգային կառավարություններից ոչ մեկը չիրականացրեց եկեղեցու և պետության տարանջատումը: Ընդհակառակը՝ բոլոր տասներեք նահանգները կան ունեին պետական եկեղեցիներ, որոնք վայելում էին պաշտոնական և հարկային աջակցություն, կան առնվազն պահանջում էին, որ իրենց պաշտոնատար անձինք դավանեին որոշակի հավատք: Պաշտոնյաների մեծ մասը կարծում էր, որ դա անհրաժեշտ է բարոյականությունը և հասարակական կարգը պաշտպանելու համար: Հաջորդ վեց տասնամյակների ընթացքում, սակայն, իրավիճակը փոխվեց:

1833 թվականին Մասաչուսեթսը վերջին նահանգն էր, որ դադարեցրեց աջակցությունը պաշտոնական դավանանքին: Պետությունից եկեղեցու տարանջատման աստիճանական գործընթացը բնորոշվում էր *կազմալուծում* (disestablishment) եզրույթով: Շատ նահանգներում կազմալուծման կամ աշխարհիկացման (սեկուլարիզացիայի) գործընթացը սկսվել էր դեռևս ԱՄՆ Սահմանադրության ստեղծումից առաջ: Հարավային Կարոլինան, օրինակ, մինչև հեղափոխությունը անվանապես անգլիկան էր, սակայն 1778 թվականի իր սահմանադրությամբ այն հրաժարվեց դավանաբանական սահմանափակումներից: Փոխարենը, թույլատրեց առնվազն տասնհինգ չափահաս տղամարդուց կազմված ցանկացած համայնքի «կազմակերպվել» իբրև եկեղեցի կամ հարկային նպատակներով ճանաչվել որպես պետության կողմից աջակցվող եկեղեցի: Եկեղեցիներին անհրաժեշտ էր միայն համաձայնել մի շարք հիմնական քրիստոնեական աստվածաբանական դրույթների, որոնք այնքան անորոշ էին, որ դավանանքների մեծ մասը կարող էին ընդունել դրանք:

Հարավային Կարոլինան փորձեց հավասարակշռել կրոնական ազատությունը գործնական դավանության հետ, որը ենթադրաբար անհրաժեշտ էր հասարակական կարգի պահպանման համար: Պաշտոնատարներից դեռևս ակնկալվում էր լինել քրիստոնյաներ. նրանք պետք է քաղաքացիական երդում ընդունեին Աստծու առաջ, կրոնական համոզմունքները պետք է ստիպեին նրանց լինել ճշմարտախոս և ապրել Աստվածաշնչի համաձայն: Նվազագույն պահանջների այս ցանկը որոշեց ընդունելի

քրիստոնեության սահմանները շատ նահանգներում: 1780-1840 թվականներին, երբ բազմաթիվ նոր քրիստոնեական դավանանքներ առաջացան, ավելի ու ավելի շատ քրիստոնյաներ դուրս մնացին այս սահմանումից:

Հարավային Կարոլինան պահպանեց այս օրենքը մինչև 1790 թվականը, երբ սահմանադրական վերանայումը վերացրեց այդ դրույթը և պաշտոնատար անձանց կրոնական սահմանափակումները: Շատ այլ նահանգներ, սակայն, XIX դարի ընթացքում շարունակեցին աջակցել իրենց հիմնական եկեղեցիներին: Դաշնային Սահմանադրությունը չխանգարեց դրան: Իրավունքների օրինագծի (Bill of Rights) կրոնական ազատության դրույթը այս տասնամյակների ընթացքում սահմանափակեց դաշնային կառավարությանը, բայց ոչ նահանգային կառավարություններին: Միայն 1833 թվականին նահանգային Գերագույն դատարանի որոշմամբ դադարեցվեց Մասաչուսեթսի աջակցությունը Ժողովական եկեղեցուն (Congregational Church):

Քաղաքական առաջնորդներից շատերը, այդ թվում՝ Թոմաս Ջեֆերսոնը և Ջեյմս Մեդիսոնը, կողմակից էին կազմալուծմանը, քանի որ նրանք դիտում էին եկեղեցու և պետության հարաբերությունները որպես հարկադրանքի գործիք: 1779 թվականին Ջեֆերսոնը Վիրջինիայի նահանգային ժողովում առաջարկեց կրոնական ազատության կանոնադրություն, սակայն նրա օրինագիծը ձախողվեց այդ գերազանցապես անգլիկան օրենսդիր մարմնում: Մեդիսոնը կրկին առաջարկեց այն 1785 թվականին, և այս անգամ հաղթեց մրցակից օրինագծին, որը հավասար եկամուտներ էր խոստանում բողոքական բոլոր եկեղեցիներին: Փոխարենը Վիրջինիան չէր օգտագործի հանրային միջոցները կամ պետական ֆինանսները կրոնին աջակցելու համար: Դաշնային մակարդակում 1787 թվականին Սահմանադիր համաժողովի պատվիրակները հեշտությամբ համաձայնեցին, որ ազգային կառավարությունը չպետք է ունենա պաշտոնական կրոն: Այս սկզբունքը պահպանվեց նաև 1791 թ., երբ վավերացվեց Առաջին լրացումը՝ իր կրոնական ազատության երաշխիքով:

1800 թվականի ընտրությունները

1800 և 1801 թվականներին Խոռվության և Օտարականների մասին օրենքների ժամկետներն ավարտվեցին: Թեև դրանք համեմատաբար անարդյունավետ էին այլախոհությունը ճնշելու հարցում, այդուհանդերձ շատ ավելի կարևոր էին իրենց ներշնչած բուռն արձագանքների առումով: Դրանք շատ ամերիկացիների օգնել էին որոշելու, թե ինչ չէին ուզում

իրենց դաշնային կառավարությունից: Այսպես, մինչև 1800 թվականը նախագահ Ադամսը կորցրել էր ամերիկացիների զգալի մասի վստահությունը: Դրա դրսևորումները ուշացնել չտվեցին: 1798 թվականին նախագահը հրապարակել էր ազգային գոհաբանության հրովարտակ: Գոհաբանության տոնակատարության օրը վայելելու փոխարեն Ադամսն ու իր ընտանիքը անկարգությունների պատճառով ստիպված էին փախչել մայրաքաղաք Ֆիլադելֆիայից մինչև օրվա ավարտը: Ավելին, նախագահ Ադամսը հակասական հարաբերություններ ուներ նաև իր կուսակցության առաջնորդ Ալեքսանդր Համիլթոնի հետ: Չորս տարի պաշտոնավարելուց հետո Ադամսը լայնորեն պարսավանքի էր արժանանում:

Այսպես, 1800 թվականի ընտրություններում հանրապետականները հաղթեցին Ադամսին նախագահական բարդ մրցավազքում: Ընտրապայքարի ժամանակ ֆեդերալիստական թերթերից մեկը կանխատեսում էր, որ հանրապետականների հաղթանակը Ամերիկյան կլցնի «սպանությամբ, կողոպուտով, բռնաբարությամբ, դավաճանությամբ և արյունապղծությամբ»: Մյուս կողմից՝ հանրապետական թերթերից մեկը պարսավանքներ էր հնչեցրել նախագահ Ադամսի հասցեին՝ ասելով, որ նա «ոչ տղամարդու ուժ ու հաստատակամություն ունի, ոչ էլ կնոջ մեղմություն ու զայրություն»: Երկու կողմերն էլ կանխատեսում էին աղետ և հնարավոր պատերազմ, եթե մյուսը հաղթեր:

Ի վերջո, նախագահական մրցապայքարն ավարտվեց երկու դեմոկրատ-հանրապետականների՝ Վիրջինիայից Թոմաս Ջեֆերսոնի և Նյու Յորքից Ահարոն Բերրի առավելությամբ, որոնցից յուրաքանչյուրն ուներ 73 ընտրիչների ձայներ, իսկ Ադամսը ստացել էր 65 ձայն: Բերրը պետք է լիներ փոխնախագահի թեկնածու, ոչ թե նախագահի, բայց Սահմանադրության նախնական կանոնների համաձայն՝ Ներկայացուցիչների պալատում պետք է տեղի ունենար այս հարցով որոշիչ քվեարկություն: Ներկայացուցիչների պալատը ֆեդերալիստների վերահսկողության տակ էր, որոնք դեմ էին Ջեֆերսոնին: Ներկայացուցիչների պալատի անդամները քվեարկեցին տասնյակ անգամներ՝ առանց խախտելու ձայների հավասարակշռությունը: Միայն 36-րդ քվեարկության արդյունքում Թոմաս Ջեֆերսոնը հաղթեց: Դեմոկրատ-հանրապետականները կարծում էին, որ իրենք փրկել էին Միացյալ Նահանգները կործանման վտանգից և արիստոկրատական տիրապետությունից: Նյու Յորք քաղաքի դեմոկրատ-հանրապետականների ժողովն ընտրություններն անվանեց «անարյուն հեղափոխություն»:

Իր առաջին երդմնակալության ուղերձում, սակայն, Թոմաս Ջեֆեր-

սոնը «ձիթենու ճյուղ» առաջարկեց ֆեդերալիստներին: Նա խոստացավ հետևել ամերիկյան ժողովրդի մեծամասնության կամքին, որը, իր կարծիքով, դեմոկրատ-հանրապետական էր, բայց և հարգել ֆեդերալիստական փոքրամասնության իրավունքները: Ջեֆերսոնի ընտրությունը կարևոր նախադեպ ստեղծեց. Ադամսն ընդունել էր իր պարտությունը ընտրություններում և խաղաղ լքել Սպիտակ տունը: Տարիներ անց Ջեֆերսոնը պետք է գրեր, որ «1800 թվականի հեղափոխությունը» ամերիկյան սկզբունքների համար արեց այն, ինչ արել էր 1776 թվականի հեղափոխությունն իր կառուցվածքի համար: Բայց այս անգամ հեղափոխությունն իրականացվեց ոչ թե «սրով», այլ «բարեփոխումների բանական և խաղաղ գործիքով՝ ժողովրդի ընտրական իրավունքով»:

Չնայած կուսակցական քաղաքականությանը ընտելացնելու Ադամսի և Ջեֆերսոնի փորձերին՝ դաշնային իշխանության և նահանգների ու անհատների ազատությունների միջև լարվածությունը շարունակելու էր գոյատևել XIX դարում: Եվ մինչ նախագահ Ջեֆերսոնի վարչակազմը փորձում էր նվազեցնել դաշնային ազդեցությունը, գերագույն դատավոր Ջոն Մարշալը, ով նշանակվել էր Ադամսի կողմից, աշխատում էր բարձրացնել Գերագույն դատարանի հեղինակությունը: Այս մրցակցող օրակարգերը բխավեցին 1803 թվականին *Մարբերին ընդդեմ Մեդիսոնի* (Marbury v. Madison) գործով, որը Մարշալն օգտագործեց հիմնարար նախադեպ ստեղծելու համար:

1801 թվականի սկզբին՝ պաշտոնը թողնելուց մեկ օր առաջ, Ադամսն իր մարդկանցից մի քանիսին նշանակել էր Վաշինգտոնի շրջանի ընդհանուր իրավասության դատավորներ: Կատարելով այս «կեսգիշերային նշանակումները»՝ Ադամսը վերջին պահին փորձել էր ֆեդերալիստներին թափուր պաշտոններում տեղավորել: Սակայն պաշտոնը ստանձնելուց հետո նախագահ Ջեֆերսոնը և նրա պետքարտուղար Ջեյմս Մեդիսոնը հրաժարվեցին դաշնային հանձնաժողովները հանձնել Ադամսի նշանակած մարդկանց: Նշանակվածներից մի քանիսը, այդ թվում՝ Ուիլյամ Մարբերին, դատի տվեցին կառավարությանը, և գործը վիճարկվեց Գերագույն դատարանում: Մարշալն օգտագործեց Մարբերիի գործը՝ խելացի վճիռ կայացնելու համար: *Մարբերին ընդդեմ Մեդիսոնի* գործով Գերագույն դատարանը վճիռ կայացրեց հօգուտ Ջեֆերսոնի վարչակազմի: Սակայն գլխավոր դատավոր Մարշալն ավելի հեռուն գնաց իր որոշման մեջ՝ վճռելով, որ Գերագույն դատարանն իրեն իրավունք է վերապահում որոշելու՝ Կոնգրեսի որևէ օրենսդրական ակտ խախտում է արդյոք Սահմանադրությունը, թե՛ ոչ: Այսինքն՝ Գերագույն դատարանն իր վրա վերցրեց

դատական վերանայման վճռաբեկ լիազորությունը: Սա մեծ և հարատև հարված էր հանրապետական օրակարգին, հատկապես 1810 թվականից հետո, երբ Գերագույն դատարանը դատական վերանայման իր լիազորությունը տարածեց նաև նահանգային օրենքների վրա: Այս որոշումից հիասթափված էր հատկապես Ջեֆերսոնը՝ պնդելով, որ դատական վերանայման լիազորությունը «դատական իշխանությունը կդարձնի բռնապետական ճյուղ»:

Ամփոփենք: Ազգաշինության նոր փուլ մտած երիտասարդ Միացյալ Նահանգները հայտնվել էր քաղաքական իշխանության և կառավարման համակարգի շուրջ մեծ բանավեճի մեջ: Սակայն համակեցական փոխզիջման արդյունավոր հարացույցը հաստատված էր: Սահմանադրությունը երաշխավորում էր ուժեղ դաշնային կառավարություն, որն ի վիճակի կլիներ հարկել, պատերազմ վարել, խաղաղություն հաստատել և օրենքներ ընդունել: Սակայն այն չէր կարող իսպառ վերացնել երիտասարդ ազգպետության բազմաթիվ հակամարտ խմբակցությունների, ընտրատարածքների և նահանգային-տեղական հիմնախնդիրների առճակատման պատճառները: Վիսկիի ապստամբությունն ապացուցեց, որ պետությունը կարող է ճնշել ներքին այլախոհությունը, բայց ներքին ազատության համար նոր վտանգներ բացահայտեց: Համիլթոնի բանկային համակարգը Միացյալ Նահանգներին ֆինանսական ավյուն էր ներարկում, բայց նաև կաշկանդում էր ամերիկյան սահմանի ֆերմերներին: Սահմանադրությամբ կրոնական ազատության երաշխիքը հակասում էր ժողովրդական բազմաթիվ իրավասությունների:

1790-ականների ընթացքում տարածայնությունները միայն խորացան. ամերիկյան հասարակությունը բաժանվեց տարբեր մասերի քաղաքական կուսակցությունների գաղափարաբանությունների և արտաքին քաղաքական հարցերի շուրջ: Եվ քանզի կուսակցական տարածայնություններն ու տարածաշրջանային առճակատումները փորձության էին ենթարկում դաշնային կառավարությանը, նորաստեղծ ազգն ավելի ու ավելի էր բացահայտում իր ժողովրդավարության սահմանները: Թեև հակաֆեդերալիստները լուրջ մտահոգություններ ունեին Սահմանադրության վերաբերյալ, այնուամենայնիվ նրանք նույնպես տոնում էին ազգային միասնության գաղափարը: Մասնավորապես, 1800 թվականին կայացավ իշխանության առաջին հաջող և խաղաղ փոխանցումը մի քաղաքական կուսակցությունից մյուսին: Բայց տարին կարևոր էր մեկ այլ իրադարձությամբ ևս. Վաշինգտոնում վերջապես բացվեց ԱՄՆ Կապիտոլիումը՝ Կոնգրեսի նստավայրը:

ԳԼՈՒԽ 5

Վաղ հանրապետությունը: Հանրապետության մարտահրավերները և Անկախության երկրորդ պատերազմը

Թոմաս Ջեֆերսոնի ընտրական հաղթանակը Ջոն Ադամսի նկատմամբ և հանրապետականների ավելի մեծ հաղթանակը ֆեդերալիստների նկատմամբ վաղ հանրապետության հասարակական-քաղաքական բազմաթիվ փոփոխություններից միայն մեկն էին: Որոշ փոփոխություններ, ինչպես Ջեֆերսոնի հաղթանակը, իրականացվել էին խաղաղ ճանապարհով, իսկ մյուսները՝ բռնությամբ: Հարուստներն ու հզորները, միջին խավի և աղքատ սպիտակամորթները, բնիկ ամերիկացիները, ազատ և ստրկացած աֆրոամերիկացիները, ազդեցիկ և աղքատ կանայք. բոլորը պահանջում էին ձայնի իրավունք նոր ազգ-պետության մեջ, որը Թոմաս Փեյնը կոչում էր «ապաստան» ազատության համար: Բոլորն էլ իրենց ձևով պահանջում էին Ամերիկյան հեղափոխության կողմից խոստացված և ոչ ամբողջությամբ իրականացված ու իրացված ազատությունը և հավասարությունը:

Ջեֆերսոնյան հանրապետականությունը

Ազատ և ստրկացած աֆրոամերիկացիները միակը չէին հասարակական-քաղաքական հիերարխիայի դեմ պայքարում: 1800 թվականին Ջեֆերսոնի ընտրությունը նախագահի պաշտոնում ոչ ընտրախավային սպիտակամորթ ամերիկացիների հաղթանակն էր կառավարության վրա ավելի անմիջական վերահսկողություն ստանձնելու ձգտումներում: Ընտրախավերը չէին թաքցնում իրենց թշնամական վերաբերմունքը ժողովրդի կողմից կառավարության անմիջական վերահսկողության նկատմամբ: Եվ իրենց մասնավոր նամակագրության մեջ, և՛ հրապարակված աշխատություններում ազգի հիմնադիրներից շատերը պնդում էին, որ մաքուր ժողովրդավարությունը կհանգեցնի անարխիայի, քանզի այն կախված է քմահաճ և հարափոփոխ հասարակական կարծիքից: Ջեֆերսոնի ընտրությունը ֆեդերալիստների համար ազդարարում էր սահք «ժողովրդավարության ցեխի մեջ»:

Իրոք, բազմաթիվ քաղաքական առաջնորդներ և հասարակ քաղաքացիներ կարծում էին, որ Ջեֆերսոնն ընդունում էր զանգվածների քաղաքականությունը: Ինը տարի անց, հետ նայելով իր ընտրությանը, Ջեֆերսոնը իր հաղթանակը կրկին կապում էր հասարակ քաղաքացիների

քաղաքական ներգրավվածության հետ: 1810 թվականին Ջեֆերսոնը գրում էր. «Մեր նման կառավարության համակարգում գլխավոր մագիստրատի պարտականությունն է... իր մեջ համախմբել ողջ ժողովրդի վստահությունը»: Ջեֆերսոնը ցանկանում էր համոզել ամերիկացիներին և ամբողջ աշխարհին, որ մի կառավարություն, որն ուղղակիորեն արձագանքում է ժողովրդին, կհանգեցնի կայուն ազգային միության, այլ ոչ թե անիշխան տարաբաժանման: Նա ցանկանում էր ապացուցել, որ ազատ մարդիկ կարող էին ինքնակառավարվել ժողովրդավարական ճանապարհով: Ջեֆերսոնը ձեռնամուխ եղավ տարբերելու իր վարչակազմը ֆեդերալիստներից: Նա ամերիկյան միությունը սահմանում էր որպես համաքաղաքացիների կամավոր կապեր միմյանց և կառավարության հետ: Ի հակադրություն դրա՝ ֆեդերալիստները ենթադրաբար պատկերացնում էին միություն, որը կազմակերպված էր ծավալուն պետական իշխանությամբ և ընտրախափվերի ազնվապետական իշխանությանը հանրային ենթակվածության միջոցով: Ըստ Ջեֆերսոնի՝ ամերիկյան ազգն իր «էներգիան» և իր ուժը բխեցնում էր «խելամիտ» և «բանական» ժողովրդի «վստահությունից»:

Հանրապետական քարոզչությունը հաճախ Ջեֆերսոնին ներկայացնում էր ազգային հանրապետական սկզբունքները փրկողի կերպարով: Ֆեդերալիստներին հատկապես վրդովեցնում էր այն, որ հանրապետականներն օգտագործեցին Ջորջ Վաշինգտոնի կերպարը, ով մահացել էր 1799 թվականին՝ կապելով Վաշինգտոնի հանրապետական առաքինությունը այն ժողովրդավարական ազատության հետ, որը պաշտպանում էր Ջեֆերսոնը: Թիկունքում թողնելով դաշնային իշխանության մոլի ջատագով ֆեդերալիստների ռազմական փառքը՝ հանրապետականները խաղաղ ճանապարհով ընտրել էին ազգային անկախության գրագրին՝ իմաստասեր-հայրենասերին, ով բռնակալության դեմ պայքարել էր իր գրչով, ոչ թե սրով կամ հրացանով: Ջեֆերսոնի հաղթանակը նախագահական ընտրություններում և ֆեդերալիստների պարտությունը արտահայտեցին բազմաթիվ քաղաքացիների՝ կառավարության վրա ավելի մեծ անմիջական վերահսկողություն հաստատելու պատրաստականությունը:

Քաղաքացիության սահմանումը ևս փոխվում էր. վաղ ամերիկյան ազգային ինքնությունը որոշարկված էր առնականության երանգով, ճիշտ այնպես, ինչպես այն որոշարկված էր սպիտակամորթի ու հարուստի երանգով: Հեղափոխությունից ի վեր կանայք բազմիցս կոչեր էին հնչեցնում այս տրամասույթի մեջ տեղ գտնելու համար: Ամերիկյան պատմագիտության մեջ կիրառվում է *հանրապետական մայրություն* (Republican

Motherhood) եզրույթը՝ նկարագրելու վաղ ամերիկյան համոզմունքն առ այն, որ կանայք էական նշանակություն ունեն քաղաքացիների ազատության սկզբունքների ձևավորման գործում: Կանայք անկախության և առաքինության կարևոր արժեքներ էին փոխանցելու իրենց երեխաներին՝ ապահովելով, որ յուրաքանչյուր սերունդ փայփայի Ամերիկյան հեղափոխության նույն արժեքները: Թեև կանայք զիջում էին տղամարդկանց քաղաքական իրավունքների հավասարության տեսանկյունից, սակայն գաղափարական-քաղաքական հայտարարությունները վկայում էին այն առանցքային դերը, որ կանայք խաղում էին որպես քաղաքականության ակտիվ մասնակիցներ:

Ջեֆերսոնի նախագահությունը

Ունենալով հանրային մեծ աջակցություն՝ Ջեֆերսոնը ձգտում էր իրականացնել այնպիսի քաղաքականություն, որը կարտացոլեր իր քաղաքական գաղափարաբանությունը: Նա աշխատում էր նվազեցնել հարկերը և կրճատել կառավարության բյուջեն՝ հավատալով, որ դա կընդլայնի ազատ ամերիկացիների տնտեսական հնարավորությունները: Նրա կրճատումները ներառում էին նաև ազգային պաշտպանության ոլորտը. Ջեֆերսոնը սահմանափակեց կանոնավոր բանակը մինչև երեք հազար զինվորականի: Նա վճռական էր խաղաղության դարաշրջան բացելու իր համոզմունքների մեջ: Ըստ այդմ՝ իր պաշտոնավարման առաջին ժամկետի ընթացքում նա նվազեցրեց ԱՄՆ պետական պարտքը՝ միաժամանակ ազատվելով բոլոր ներքին հարկերից:

Ջեֆերսոնի նախագահության խոշորագույն ձեռքբերումը թերևս Լուիզիանայի գործարքն էր: 1803 թվականին նախագահը լիազորեց իր դիվանագետներին Ֆրանսիայից ձեռք բերել Լուիզիանան, որը համարվում է ամերիկյան պատմության մեջ անշարժ գույքի ամենամեծ գործարքը: Ջեֆերսոնը մտահոգված էր ամերիկյան մուտքով դեպի Նոր Օռլեան, որը կարևոր նավահանգիստ էր արևմտյան ֆերմերների համար: Ֆրանսիայում Միացյալ Նահանգների դեսպան Ռոբերտ Ռ. Լիվինգսթոնը փորձում էր փոխզիջման հասնել: Եվրոպայում պատերազմական ծախսերը և Հաիթիում ստրուկների ապստամբությունը ստիպեցին ֆրանսիական հանրապետության առաջին կոնսուլ Նապոլեոն Բոնապարտին վերանայել Ֆրանսիայի հյուսիսամերիկյան հսկայական տարածքների հարցը: Նապոլեոնն առաջարկեց վաճառել Լուիզիանայի ամբողջ տարածքը 15 միլիոն դոլարով, ինչն այսօրվա փոխարժեքով համարժեք է մոտ 250

միլիոն ԱՄՆ դոլարին: Լիվինգսթոնի և Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Թալեյրանի միջև բանակցությունները ավելի տպավորիչ հաջողություն ունեցան, քան Ջեֆերսոնը կամ Լիվինգսթոնը կարող էին պատկերացնել: Լուիզիանայի գնումը (Louisiana Purchase) կրկնապատկեց Միացյալ Նահանգների տարածքը:

Ջեֆերսոնի արտաքին քաղաքականությունը, մասնավորապես 1807 թվականի Էմբարգոյի (բեռնարգելք) ակտը, առաջացրեց նրա ֆեդերալիստ քննադատների բուռն զայրոյթը: Երբ Նապոլեոն Բոնապարտի բանակներն առաջ էին շարժվում Եվրոպայում, Ատլանտյան օվկիանոսը շուտով դարձավ Ջեֆերսոնի արտաքին քաղաքականության ամենամեծ փորձության վայրը, քանզի Անգլիան, Ֆրանսիան և Իսպանիան հրաժարվեցին հարգել ամերիկյան նավերի չեզոքությունը: Բոլորից շատ հարձակվում էին բրիտանացիները, որոնք վերսկսեցին բռնագրավումների քաղաքականությունը՝ գերեվարելով հազարավոր ամերիկացի նավաստիների և ստիպելով նրանց կռվել բրիտանական նավատորմի համար: Երբ 1807 թվականին բրիտանացիները հարձակվեցին ամերիկյան «Չեսափիք» (USS Chesapeake) ռազմանավի վրա, ԱՄՆ-ում շատերը պատերազմի կոչ արեցին: Նախագահը, այնուամենայնիվ, նախընտրեց «խաղաղ հարկադրանքի» (“peaceable coercion”) քաղաքականությունը, և Կոնգրեսը համաձայնեց:

1807 թվականի Բեռնարգելքի օրենքի (Embargo Act) համաձայն՝ ամերիկյան նավահանգիստները փակվեցին ամբողջ արտաքին առևտրի համար՝ պատերազմից խուսափելու հույսով: Ջեֆերսոնը հույս ուներ, որ բեռնարգելքի սահմանումը կստիպի եվրոպական երկրներին հարգել ամերիկյան չեզոքությունը: Սկզբում թվում էր, թե հակամարտությունների ոչ բռնի լուծման վերջնական միջոցը առևտրի դադարեցումն է, այլ ոչ թե պատերազմի հայտարարությունը: Գործնականում, սակայն, բեռնարգելքը վնաս հասցրեց ԱՄՆ-ի տնտեսությանը: Նույնիսկ Ջեֆերսոնի անձնական ֆինանսները տուժեցին: Երբ շատ ամերիկացիներ դիմեցին մաքսանենգ ճանապարհների իրենց ապրանքները արտահանելու համար, Ջեֆերսոնն ընդլայնեց կառավարական լիազորությունները՝ փորձելով պարտադրել նրանց գործունեության համապատասխանությունը օրենքին, ինչի պատճառով ոմանք նախագահին «բռնակալ» անվանեցին:

Ջեֆերսոնի քաղաքականության և դեմոկրատ-հանրապետականների դեմ քննադատությունն արտացոլում էր նույն հռետորաբանությունը, որն ավելի վաղ օգտագործել էին նրա կողմնակիցները Ադամսի և Ֆեդերալիստների դեմ: Ամերիկայի ժողովրդավարացման համար ողբացող

Ֆեդերալիստների փաստարկները շատ ավելի քիչ արդյունավետ էին, քան այն փաստարկները, որոնք փոխառվում էին ժողովրդավարական լեզվից՝ պնդելով, որ Ջեֆերսոնի գործողությունները խաթարում են ժողովրդի ինքնիշխանությունը: Ըստ այդմ՝ ֆեդերալիստները սկսեցին մեղադրել Ջեֆերսոնին, որ նա գործում է հասարակության շահերի դեմ: Այս մարտավարությունը բեկումնային զարգացում էր քաղաքական դաշտում: Մինչ ֆեդերալիստները ջանում էին մնալ քաղաքականապես արդիական, պարզ դարձավ, որ նրանց գաղափարաբանությունը, որը սերում էր առաքինության մասին XVIII դարի պատկերացումներից՝ հեղինակավոր ու հարուստ վերնախավի հայրական կառավարման և արժանիների ազնվապետության հանդեպ հասարակ քաղաքացիների հարգանքից, այլևս ընկալելի չէր ամերիկյան հանրությանը:

Ֆեդերալիստների կողմից դեմոկրատ-հանրապետականների քաղաքական հոետորաբանության ընդունումը ազդարարեց նոր քաղաքական լանդշաֆտ, որտեղ երկու կողմերն էլ ընդունեցին քաղաքացիների անմիջական ներգրավվածությունը: Հանրապետական կուսակցությունը հասավ իշխանության՝ խոստանալով ընդլայնել քվեարկության իրավունքը և նպաստել քաղաքական առաջնորդների ու ընտրողների միջև ավելի անմիջական կապի հաստատմանը: Ամերիկայի բնակչությունը շարունակում էր պահանջել ավելի անմիջական մուտք դեպի քաղաքական իշխանություն: Ջեֆերսոնը, Ջեյմս Մեդիսոնը և Ջեյմս Մոնրոն ձգտում էին ընդլայնել քվեարկության իրավունք ունեցողների թիվը՝ հեշտացնելով ամերիկացիների հող գնելու հնարավորությունները. հողը շարունակում էր մնալ քաղաքական մասնակցության հիմնական բանալին, սակայն իրավիճակը փոխվում էր: Նրանց ղեկավարության շրջանում ԱՄՆ կազմ ընդունվեցին յոթ նոր նահանգներ: Մինչև 1824 թվականը ընդամենը երեք նահանգներ դեռ ունեին ընտրական իրավունքի ունեցվածքային ցենզի մասին կանոնակարգ՝ թե որքան սեփականություն պետք է ունենար քաղաքացին, որպեսզի կարողանար քվեարկել: Այլևս երբեք ֆեդերալիստները չէին վերականգնի իշխանությունը ո՛չ Կոնգրեսում, ո՛չ էլ Սպիտակ տանը: Նախագահի պաշտոնի համար առաջադրված վերջին ֆեդերալիստ թեկնածուն Ռուֆուս Քինգն էր, ով պարտվեց Ջեյմս Մոնրոյին 1816 թվականի նախագահական ընտրություններում:

Աֆրոամերիկացիները և ստրկության մարտահրավերը

Ամերիկյան նոր հանրապետության առաջին տասնամյակները համընկան ռասայական հասկացությունների արմատական փոփոխությանը: Քաղաքական և մշակութային առումով Լուսավորական մտածողությունը խթանում էր հավատը ընդհանուր մարդկության, հասարակության առաջընթացի հնարավորության, անձի վերափոխման և հասարակական ու բնական միջավայրերի կարևորության վերաբերյալ՝ մարտահրավեր նետելով հասարակական և ռասայական աստիճանակարգությանը: Այնուամենայնիվ, բնական աշխարհը կարգաբերելու և դասակարգելու լուսավորական մտածողների գաղափարները տարբեր էին:

Կարոլուս Լիննեուսը, Կոմս դը Բուֆոնը, Յոհան Ֆրիդրիխ Բլումենբախը և այլք ստեղծեցին ռասայի վերաբերյալ նոր պատկերացումներ՝ բաժանելով աշխարհի ռասայական «տեսակները» ըստ մաշկի գույնի, գանգուղեղային չափումների և մազերի: Նրանք պնդում էին, որ շոգ արևը և Աֆրիկայի արևադարձային կլիմայական պայմանները ժամանակի ընթացքում մգացրել էին մաշկը և վերակազմավորել աֆրիկյան ցեղերի գանգերը, մինչդեռ Եվրոպայի սառը հյուսիսային լայնությունները ձևավորել և պահպանել էին «կովկասյան» ռասան: Շրջակա միջավայրերը երկու ռասաներին էլ օժտել էին համապատասխան հատկանիշներով, ինչով բացատրվում էին մարդկության միջև եղած տարբերությունները: Հետևաբար, մարդկային համընդհանուր բնույթը պարունակում էր ոչ թե հիմնարար տարբերություններ, այլ ավելի շուտ հասարակական առաջընթացի մասշտաբի երկու բևեռներ՝ «քաղաքակիրթ» և «պարզունակ»:

Ամերիկացիներն առերեսվում էին իրենց ուրույն ռասայական լանդշաֆտին: 1787 թվականին Սամուել Սթենհոուսի Սմիթը ենթադրում էր, որ հասարակական միջավայրի բարելավումը կխթանի մարդկության բնածին հավասարությունը և կտրուկ կբարձրացնի ոչ սպիտակ ռասաներին: Ըստ նրա՝ պատշաճ հասարակությունը կարող էր աստիճանաբար «սպիտակեցնել» մարդկանց: Թոմաս Ջեֆերսոնը համաձայն չէր: Ջեֆերսոնը կարծում էր, որ բնիկ ամերիկացիները կարող են կատարելագործվել և դառնալ «քաղաքակիրթ», իսկ սևամորթներն ի վիճակի չեն մտավոր բարելավման: 1784 թ. իր *Ծանոթագրություններ Վիրջինիայի նահանգի մասին* (Notes on the State of Virginia) աշխատության մեջ Ջեֆերսոնը ենթադրում էր, որ սևամորթները կարող էին ունենալ նույնիսկ առանձին ծագում, տեսություն, որը հայտնի է որպես պոլիգենեզ (բազմածագություն): Նրա ենթադրությունը պոլիգենեզի մասին քիչ էր արդարացնում ստրկու-

թյունը. ստրկատերերը մերժում էին այս տեսությունը որպես հակաբիր-
լիական և, հետևաբար, սպառնալիք իրենց հիմնական արդարացման մի-
ջոցի՝ Աստվածաշնչի համար: Պոլիգենեզի տեսությունը ավելի շատ դիտ-
վում էր որպես սպիտակ Ամերիկայի գաղափարի արդարացման միջոց
և ազատված ստրուկներին աստիճանաբար Աֆրիկա ուղարկելու ծրագրի
հիմնավորում: Շատ ամերիկացիներ կարծում էին, որ բնությունը սպիտակ
և սև ռասաներին չափազանց տարբեր էր դարձրել խաղաղ գոյակցության
համար, և սևամորթներին Աֆրիկա ետ ուղարկելը համարում էին Ամերի-
կայի ռասայական խնդրի լուծում: Այնուամենայնիվ, անկախ իրենց գաղա-
փարական-տեսական համոզմունքներից, ամերիկացիներից շատերը կի-
սում էին սպիտակամորթների գերակայության մասին համոզմունքները:

1800 թվականի օգոստոսի վերջին մոտ 1000 ստրուկների ապստամ-
բությունը Գաբրիելի գլխավորությամբ ծրագրում էր վերջ տալ ստրկությա-
նը Վիրջինիայում՝ հարձակվելով Ռիչմոնդի վրա: Ծրագիրը հայտնի դար-
ձավ և Գաբրիելին ձերբակալեցին ու 25 համախոհների հետ դատապար-
տեցին կախաղանի: Այս մահապատիժները ուղերձներ էին մյուսներին,
որ ստրկությանը մարտահրավեր նետողները դաժանաբար կպատժվեն:
Հաիթիում ստրուկների ապստամբությունը՝ Հաիթիի հեղափոխությունը
(1791–1804 թթ.), ոգեշնչել էր ազատ և ստրկացված աֆրոամերիկացիներ-
ին ու սարսափեցրել սպիտակամորթ ամերիկացիներին: Վիրջինիայի
կառավարությունը մեծացրեց սահմանափակումները նաև ազատ գունա-
վոր մարդկանց նկատմամբ: Գաբրիելի ապստամբությունը Վիրջինիայի
սպիտակամորթ բնակիչներին ցույց տվեց, որ ստրկացած սևամորթներն
ի վիճակի էին պատրաստել և իրականացնել բարդ ու կատաղի հեղափո-
խություն՝ խարխուլելով սպիտակամորթների գերակայության ենթադրու-
թյունները սևամորթների բնածին մտավոր թերարժեքության վերաբերյալ:

Բնիկ ամերիկացիների իշխանությունը և Միացյալ Նահանգները

Հավասարության ջեֆերսոնյան հռետորաբանությունը խիստ հա-
կադրվում էր այն իրականությանը, որում ապրում էր սեռի, դասակարգի,
ռասայի և էթնիկ պատկանելության բնութագրերով շերտավորված ամե-
րիկյան ազգը: Բնիկ ամերիկացիների իշխանությունների և տեղական,
նահանգային ու ազգային կառավարությունների միջև դիվանագիտական
հարաբերությունները ի ցույց էին դնում այդ անհավասարությունների
վտանգները: Բնիկ ամերիկացի դիվանագետների և առաջնորդների հետ
իրենց բոլոր շփումներում ամերիկացիների հիմնական մղումը ավելի շատ

հողեր ձեռք բերելն էր: Բայց սահմանների հարցը լարվածության միայն մեկ աղբյուրն էր: Առևտուրը, քրեական իրավասությունը, ճանապարհները, ոգելից խմիչքների վաճառքը և դաշինքների ստեղծումը նույնպես բանակցային առանցքային կետեր էին:

Ամերիկյան հեղափոխությունից հետո բնիկ ամերիկացի ազգերը հարաբերություններ ստեղծեցին Միացյալ Նահանգների հետ, պահպանեցին կամ դադարեցրին հարաբերությունները Բրիտանական կայսրության ու Իսպանիայի հետ և իրենց հարաբերությունների համալիրի շուրջ բանակցում էին բնիկ այլ ազգերի հետ: Բնիկ ազգերի դիվանագիտությունը վկայում էր բնիկ մշակույթների բարդության և ամերիկյան համայնքների, նահանգների ու դաշնային կառավարության քաղաքականության ձևավորման գործում նրանց դերի մասին: Այնուամենայնիվ, սպիտակամորթների վերաբերմունքը, տրամասույթը և քաղաքականությունը հաճախ բնիկ ժողովուրդներին՝ իբրև «անկիրթ վայրենիների», արտաքսում էին բառացի և փոխաբերական լուսանցք: Նման վատ վերաբերմունքը թշնամանք էր ներշնչում, և տարբեր բնիկ ազգերի առաջնորդներ, այդ թվում՝ շոնի առաջնորդ Թեքումսեն, կոչ էին անում համահնդկացիական դաշինքներ ստեղծելու: Թեքումսեն և նրա եղբայր մարգարե Թենսկվատավան նպաստեցին Հյուսիսային Ամերիկայի բնիկ ազգերի դաշինքի մասին պատկերացումների ձևավորմանը, որը վերջ կտար Միացյալ Նահանգների ոտնձգություններին: Նրանք ստեղծեցին համահնդկացիական քաղաքներ ներկայիս Ինդիանայի տարածքում. սկզբում՝ Գրինվիլը, ապա, ի հեճուկս Գրինվիլի պայմանագրի (1795 թ.)՝ Փրոփեթսթաունը: Թեքումսեն ճամփորդեց և բանակցեց բազմաթիվ ու տարբեր հնդկացիական ազգերի հետ՝ Կանադայից մինչև Ջորջիա՝ կոչ անելով միավորման, դիմադրության և սրբազան իշխանության վերականգնման: Թեքումսեի և Թենսկվատավայի համահնդկացիական համադաշնությունը XVIII դարի բնիկ ամերիկացիների շարժումների գագաթնակետն էր, որն ընդգրկեց Հյուսիսային Ամերիկան:

Թեքումսեի համադաշնության կորիզը հիմնականում Հին հյուսիսարևմուտքի բնիկ ազգերն էին, որոնք դիմադրում էին ամերիկացիների ծավալապաշտությանը: Թեքումսեն ձեռք բերեց մեծ թվով դաշնակիցներ՝ համառորեն հրաժարվելով տարածքներ զիջել: Բնիկ շատ առաջնորդներ էլ հրաժարվեցին միանալ Թեքումսեին և փոխարենը պահպանեցին իրենց հավատարմությունը ամերիկյան հանրապետությանը: Համահնդկացիական միասնության ձախողումներից և 1811 թվականին Տիպեկանոեի ճակատամարտում կորուստներից հետո Թեքումսեի համադաշնությունը

տապալվեց: 1812 թվականի պատերազմը Միացյալ Նահանգների և Մեծ Բրիտանիայի միջև նոր հնարավորություններ ընձեռեց Թեքումսեի և նրա հետևորդների համար: Սակայն համադաշնությունը պարտվեց դաժան ճակատամարտերում, որոնց արդյունքում ամերիկյան ռազմածովային ուժերը 1813 թ. սեպտեմբերին ապահովեցին վերահսկողությունը Մեծ լճերի վրա: 1813 թվականի հոկտեմբերին Թեքումսեն զոհվեց Մորավիան-թաունի մարտադաշտում (Օնտարիո): Նրա մահը ծանր հարված հասցրեց ԱՄՆ-ի դեմ համահնդկացիական դիմադրությանը:

Անկախության երկրորդ պատերազմը

1808 թվականին՝ Ջեֆերսոնի նախագահության ժամկետի ավարտից հետո, Կոնգրեսը դադարեցրեց բեռնարգելքը, և բրիտանացիները մեղմեցին իրենց քաղաքականությունը ամերիկյան նավերի նկատմամբ: Չնայած էմբարգոյի քաղաքականության հարուցած դժգոհությանը՝ Ջեֆերսոնը դեռ հավատում էր, որ ժամանակը կապացուցի խաղաղ հարկադրանքի քաղաքականության արդյունավետությունը: Այդուհանդերձ, Մեծ Բրիտանիայի հետ պատերազմ էր հասունանում. պատերազմ, որը կխթաներ ամերիկյան ազգաշինությունը:

1812 թվականի պատերազմը բխում էր միջազգային երկու տարբեր հիմնախնդիրներում ամերիկյան խճճվածությունից: Առաջինը կապված էր ԱՄՆ ցանկության հետ՝ պահպանելու չեզոք առևտրական երկրի իր դիրքը անգլո-ֆրանսիական պատերազմների շարքի ընթացքում, որոնք սկսվել էին 1793 թվականին Ֆրանսիայի դեմ հակահեղափոխական դաշինքների ձևավորմամբ: Երկրորդն ավելի հին արմատներ ուներ, որոնք սերում էին բրիտանական գաղութատիրության և ամերիկյան հեղափոխության ժամանակներից: Երկու դեպքում էլ ամերիկյան շահերը հակասում էին Բրիտանական կայսրության շահերին: Բրիտանական բռնագրավումները և ամերիկացի նավաստիներին բրիտանական նավատորմում ծառայել ստիպելու գործողությունները երկու երկրների միջև հակամարտության ամենաառանցքային աղբյուրներից էին:

XIX դարի առաջին տասնամյակում, նաև Եվրոպայի հետ առևտրով պայմանավորված, ամերիկյան տնտեսությունն սկսեց արագ աճել, որի հետևանքով առաջացավ աշխատուժի պակաս ամերիկյան նավագնացության ոլորտում: Ուստի նավաստիների վարձատրության դրույքաչափերը բարձրացան, և ամերիկյան նավապետներ էին հավաքագրվում նաև բրիտանացի նավաստիների շարքերից: Արդյունքում, ամերիկյան

առևտրային նավերում աշխատող նավաստիների մոտ 30 տոկոսը բրիտանացիներ էին: Իբրև հանրապետություն՝ ամերիկացիները առաջ քաշեցին այն գաղափարը, որ մարդիկ կարող են քաղաքացի դառնալ՝ հրաժարվելով մայր երկրին իրենց հավատարմությունից: Ի տարբերություն դրա՝ բրիտանացիների համար Բրիտանական կայսրությունում ծնված մարդը ցկյանս համարվում էր այդ կայսրության հպատակը: Բրիտանական նավատորմը ներքաշված էր ծանր պատերազմի մեջ և չէր ցանկանում կորցնել իր անձնակազմն ու աշխատուժը: Բրիտանացիները հաճախ կանգնեցնում էին ամերիկյան նավերը՝ իրենց նավաստիներին վերադարձնելու նպատակով: Իհարկե, այս «բռնագրավումներով» նաև շատ ամերիկացի նավաստիներ հայտնվեցին բրիտանական նավատորմում ծառայության մեջ: 1803-1812 թվականներին մոտ 6000 ամերիկացիներ արժանացան այս ճակատագրին: Բրիտանացիները խոստացան ազատել այն ամերիկացիներին, ովքեր կարող են ապացուցել իրենց ինքնությունը, բայց այս գործընթացը կտևեր տարիներ, մինչդեռ նավաստիները ենթարկվում էին ծառայության ծանր պայմաններին և թագավորական նավատորմի վտանգներին:

1806 թվականին՝ Մեծ Բրիտանիայի լիակատար ծովային շրջափակման մասին Ֆրանսիայի հայտարարությանն ի պատասխան, բրիտանացիները պահանջեցին, որ չեզոք երկրների նավերը իրենց ապրանքները տեղափոխեին նախ Բրիտանիա՝ տարանցիկ տուրք վճարելու համար, որից հետո թույլտվություն կստանային անցնել Ֆրանսիա: 1807-1812 թթ. այս քաղաքականության ընթացքում Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան և նրանց դաշնակիցները բռնագրավեցին մոտ 900 ամերիկյան նավեր: Ջեֆերսոնի բռնարգելքն իր հերթին նպաստեց ԱՄՆ-ում խորը տնտեսական ճգնաժամին՝ նվազեցնելով արտահանումը 1807 թ. 108 միլիոն դոլարի սանդղակից մինչև 1808 թ. 22 միլիոն դոլարի. Ջեֆերսոնի խաղաղ հարկադրանքի քաղաքականությունը շատ քիչ ազդեցություն ունեցավ եվրոպացիների վրա: Տասնհինգ ամիս անց Կոնգրեսը չեղյալ հայտարարեց Բռնարգելքի օրենքը՝ փոխարինելով այն Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի հետ առևտրի ավելի փոքր սահմանափակումներով: Թեև Մեծ Բրիտանիային ընդդիմանալու ջանքերը ձախողվեցին, բրիտանական առևտրային քաղաքականության հանդեպ դժգոհությունը մնաց համատարած:

Ամերիկյան սահմանին՝ Ատլանտյան օվկիանոսից հեռու, ամերիկացիները նույնպես առճակատվում էին Բրիտանական կայսրությանը: Կանադայում իրենց դիրքերից բրիտանացիները հարաբերություններ էին պահ-

պանում Հին հյուսիս-արևմուտքի բնիկ ամերիկացիների հետ՝ մատակարարելով նրանց ապրանքներ ու զենք, փորձելով լավ կապեր պահպանել բնիկ ազգերի հետ Միացյալ Նահանգների դեմ պատերազմի դեպքում: Բնիկ ամերիկացիներին զինելու և մատակարարելու բրիտանական ջանքերը նպաստեցին ԱՄՆ-ում հակաբրիտանական տրամադրությունների աճին: Իլինոյսի տարածքային նահանգապետ Ուիլյամ Հենրի Հարիսոնը համոզեց նախագահ Մեդիսոնի վարչակազմին թույլ տալ ռազմական գործողություններ սկսել Օհայոյի հովտում բնիկ ամերիկացիների դեմ: Հանրապետականները սկսեցին խոսել պատերազմի մասին՝ պնդելով, որ անհրաժեշտ է ավարտին հասցնել Անկախության համար պատերազմը՝ կանխելով ծովում և ցամաքում Ամերիկյան հպատակեցնելու բրիտանական ջանքերը: Պատերազմը նաև ընթանալու էր լոյալիստների դեմ, որոնցից մոտ 38,000-ը հեղափոխությունից հետո հաստատվել էին Կանադայի սահմանամերձ գոտում:

1812 թվականին հանրապետականները զբաղեցնում էին Ներկայացուցիչների պալատի մանդատների 75 տոկոսը և Սենատի 82 տոկոսը, ինչը նրանց ազատություն տվեց սահմանելու և իրականացնելու ազգային քաղաքականությունը: Նրանց թվում էին «Պատերազմի բազենները» (War Hawks), ինչպիսիք էին Հենրի Բլեյր Բենթաքից և Ջոն Բ. Բալիունը Հարավային Կարոլինայից, որոնք էլ համոզեցին նախագահ Ջեյմս Մեդիսոնին: Նախագահը պատրաստեց հայտարարություն բրիտանացիների հետ վեճերի վերաբերյալ և 1812 թվականի հունիսի 1-ին դիմեց Կոնգրեսին պատերազմի հայտարարության խնդրանքով: Հանրապետականները հույս ունեին, որ ներխուժումը Կանադա կարող էր բրիտանացիներին հեռացնել իրենց հարևանությունից և ստիպել նրանց փոխել իրենց կայսերական ծովային քաղաքականությունը: Պատերազմի հայտարարության մանրամասների շուրջ Կոնգրեսում երկար բանակցություններից հետո Մեդիսոնը 1812 թվականի հունիսի 18-ին ստորագրեց պատերազմի հայտարարության հռչակագիրը:

Պատերազմը դասակարգվում է ըստ երեք հիմնական թատերաբեմերի և փուլերի: Առաջինը՝ Ատլանտյան թատերաբեմը, տևեց մինչև 1813 թվականի գարունը: Այդ ընթացքում Մեծ Բրիտանիան հիմնականում ներգրավված էր Եվրոպայում Նապոլեոնի դեմ պատերազմում, իսկ Միացյալ Նահանգները ներխուժեց Կանադա և ուղարկեց իր նոր նավատորմը բրիտանական նավերի դեմ: Երկրորդ փուլում՝ 1813 թվականի սկզբից մինչև 1814 թվականը, Միացյալ Նահանգները սկսեց իր երկրորդ հարձակումը Կանադայի և Մեծ լճերի ավազանի ուղղությամբ: Այս շրջանում

ամերիկացիները գրանցեցին իրենց առաջին հաջողությունները: Երրորդ փուլը՝ հարավային թատերաբեմը, ավարտվեց 1815 թվականի հունվարին Լուիզիանայում՝ Նոր Օռլեանի ճակատամարտում Էնդրյու Ջեքսոնի գլխավորած ամերիկյան բանակի հաղթանակով:

Պատերազմի ժամանակ ամերիկացիներին մեծապես հետաքրքրում էին Կանադան և Մեծ լճերի ավազանի տարածքները: 1812 թվականի հուլիսին Միացյալ Նահանգները սկսեց իր առաջին հարձակումը Կանադայի ուղղությամբ: Օգոստոսին, սակայն, բրիտանացիներն ու նրանց դաշնակիցները հակահարված տվեցին՝ զրկելով ԱՄՆ-ին Դետրոյթի և Միչիգանի տարածքի մի մասի վրա վերահսկողությունից: 1813 թվականի վերջին ամերիկացիները վերագրավեցին Դետրոյթը, ջախջախեցին Հնդկացիական Համադաշնությունը, սպանեցին առաջնորդ Թեքումսեին և վերացրեցին բրիտանական վտանգն այդ ուղղությամբ:

Այդուհանդերձ, 1812 թվականի ցամաքային արշավը չկարողացավ ապահովել Ամերիկայի պատերազմական նպատակները: Ուստի 1813 թվականին ԱՄՆ-ն գործի դրեց իր նորաստեղծ նավատորմը: Թեև թագավորական նավատորմն աշխարհում ամենահզորն էր, սակայն Մեծ Բրիտանիայի հիմնական ռազմածովային ուժերը կռվում էին Նապոլեոնյան պատերազմներում, և Հյուսիսային Ամերիկայում տեղակայված ավելի փոքր նավերն ու սպառազինությունները ընդհանուր առմամբ համադրելի էին հակառակորդ ամերիկյան ուժերի հետ: Սկզբում ամերիկացիները փոքր հաղթանակներով նվաստացնում էին բրիտանացիներին մեկ նավի մարտերում: Ի պատասխան՝ 1813 թվականի հունիսի 1-ին բրիտանական «Շենոն» ռազմանավը (HMS Shannon)՝ կապիտան Ֆիլիպ Բրոքի հրամանատարությամբ, հարձակվեց ամերիկյան «Չեսափիք» ռազմանավի (USS Chesapeake) վրա, որի հրամանատարն էր Ջեյմս Լոուրենսը: Վեց ռոպեի ընթացքում «Չեսափիքը» ոչնչացվեց, իսկ Լոուրենսը մահացու վիրավորում ստացավ: Երկուսուկես ամիս անց ամերիկյան «Սահմանադրություն» ռազմանավը (USS Constitution) մարտի բռնվեց թագավորական «Գուերրիեր» ռազմանավի (HMS Guerriere) հետ. երեսունհինգ ռոպե անց «Գուերրիերը» հրդեհվեց:

1814 թվականին ամերիկացիները ռազմածովային հաղթանակներ տարան Պլատսբուրգի մոտ գտնվող Շամփլեյն լճում՝ կանխելով բրիտանական ցամաքային ներխուժումը Միացյալ Նահանգներ, ինչպես նաև Չեսափիքի հրվանդանի մոտ՝ Բալթիմորում գտնվող Ֆորտ Մաքհենրիի համար մարտերում: Ֆորտ Մաքհենրին ետ մղեց բրիտանական տասնինը նավերից կազմված նավատորմի հարձակումը՝ դիմանալով 27-ժամյա ու-

բակոծությանը: Այստեղ մարտերի ականատես ամերիկացի բանաստեղծ Ֆրենսիս Աքոթ Քին գրեց ամերիկյան ազգային օրհներգի՝ «Աստղազարդ դրոշի» (*The Star-Spangled Banner*) տեքստը:

Թեև այս նվաճումները տպավորիչ էին, այդուհանդերձ իրականում սա վատ իրականացված ռազմարշավ էր բրիտանացիների դեմ: ԱՄՆ ռազմածովային ուժերը Ատլանտյան օվկիանոսում իրենց ամենակարևոր հաղթանակները տարան 1813 թվականին: Սակայն 1814 թվականի սկզբին Նապոլեոնի պարտությունը թույլ տվեց բրիտանացիներին կենտրոնանալ Հյուսիսային Ամերիկայի վրա և շրջափակել ամերիկյան նավահանգիստները: Շրջափակման շնորհիվ 1814 թվականի օգոստոսի 24-ին բրիտանացիները կարողացան այրել Վաշինգտոնը և բացել ռազմական գործողությունների նոր թատրերաբեմ հարավում: Բրիտանացիները նավարկեցին դեպի Նոր Օռլեան, որտեղ նրանք ռազմածովային հաղթանակ տարան Բորն լճում: Սակայն 1815 թվականի հունվարին գեներալ-մայոր Էնդրյու Ջեքսոնի զորքերին հաջողվեց ցամաքային ճակատամարտում պարտության մատնել բրիտանացիներին: Ամերիկայի այս հաղթանակը փաստորեն տեղի ունեցավ հաշտության պայմանագրի կնքումից հետո, որի մասին լուրը օվկիանոսի մյուս կողմից ռազմաճակատ պետք է հասնել ամիսներ անց միայն: 1814 թվականի դեկտեմբերի 24-ին Բելգիայում Միացյալ Նահանգները և Միացյալ Թագավորությունը արդեն ստորագրել էին Գենտի խաղաղության պայմանագիրը: Այնուամենայնիվ, Նոր Օռլեանի ճակատամարտը նաև հոգեբանական հաղթանակ էր, որը բարձրացրեց ամերիկացիների բարոյական ոգին և ազդեց այն բանի վրա, թե ինչպես պետք է նրանք հիշեին այս պատերազմը:

Բայց ոչ բոլոր ամերիկացիներն էին աջակցում պատերազմին: 1814 թվականին Նոր Անգլիայի ֆեդերալիստները հանդիպեցին Կոնեկտիկուտի Հարթֆորդ քաղաքում՝ փորձելով վերջ տալ պատերազմին և սանձել Հանրապետական կուսակցության իշխանությունը: Նրանք պատրաստեցին մի փաստաթուղթ, որն առաջարկում էր վերացնել երեք հինգերորդի կանոնը, որը հարավային ստրկատերերին թույլ էր տալիս անհամաչափ ներկայացվածությունն ապահովել Կոնգրեսում, սահմանափակել նախագահի պաշտոնավարումը մեկանգամյա ժամկետով և սահմանել Կոնգրեսի երկու երրորդի մեծամասնության կանոն, այլ ոչ թե պարզ մեծամասնություն՝ պատերազմ հայտարարելու, Միության կազմ նոր նահանգներ ընդունելու և առևտուրը կանոնակարգելու համար: Նոր Անգլիայի ֆեդերալիստ քաղաքական գործիչները կարծում էին, որ երկու երրորդի մեծամասնության կարգով կարող էին սահմանափակել իրենց քաղաքական

հակառակորդների իշխանությունը:

Այս առաջարկներն ուղարկվեցին Վաշինգտոն, բայց, ի դժբախտություն ֆեդերալիստների, Նոր Օուլեանում ամերիկյան հաղթանակը նպաստեց նախագահ Մեդիսոնի վարչակազմի ժողովրդականության աճին: Արդյունքում, թերթերը և հանրային գործիչները մեղադրեցին Հարթֆորդի համաժողովի պատվիրակներին անջատման դավադրություն կազմակերպելու մեջ: Դրվագը ցույց տվեց ֆեդերալիզմի ազդեցության նվազումը և բացահայտեց տարածաշրջանի քաղաքական գործիչների կողմից իրենց ազնվապետական և անգլամետ կերպարը թոթափելու անհրաժեշտությունը: Նոր Անգլիայի հաջորդ քաղաքական գործիչը, որը ստանձնելու էր նախագահությունը 1824 թվականին, Ջոն Բուլինսի Ադամսն էր, ով առաջադրվելու էր ոչ թե ֆեդերալիստների շրջանակից, այլ Վիրջինիայի հանրապետականների առաջնորդ, ԱՄՆ նախագահ Ջեյմս Մոնրոյի վարչակազմում պետքարտուղարի պաշտոնը զբաղեցնելու շնորհիվ:

Գենտի պայմանագիրը ըստ էության վերադարձրեց Միացյալ Նահանգների և Մեծ Բրիտանիայի հարաբերությունները իրենց նախապատերազմյան կարգավիճակին: Պատերազմը, սակայն, քաղաքական մեծ նշանակություն ունեցավ և ուժեղացրեց ամերիկյան ազգայնականությունը: Պատերազմի ժամանակ ամերիկացիները կարդում էին հայրենասիրական թերթերի պատմությունները, երգում էին հայրենասիրական երգեր և գնում էին սպառողական ապրանքներ՝ զարդարված ազգային խորհրդանիշներով ու զինանշաններով: Պատերազմի սարսափն ու հայրենասիրական քարոզը միասին նպաստեցին, որ ԱՄՆ քաղաքացիներն ավելի ամուր կապ զգան իրենց երկրի հետ: Պատերազմը մեծապես խզել էր Ամերիկայի առևտուրը Եվրոպայի հետ՝ խթանելով ամերիկացիների՝ իբրև էապես տարբեր և անջատ վերածնված քաղաքական հանրույթի ինքնագիտակցությունը:

Քաղաքական գործիչներն առաջարկում էին ամրապնդել փխրուն Միությունը կապիտալիզմի և ազգայնականության միջոցով: Միացյալ Նահանգները շարունակեց ընդլայնվել դեպի հնդկացիական տարածքներ՝ բնակեցնելով արևմուտքը և հիմնադրելով նոր նահանգներ, ինչպիսիք էին Թենեսին, Օհայոն, Միսսիսիպին և Իլինոյսը: 1817 թվականին Հարավային Կարոլինայի կոնգրեսական Ջոն Քալիունը կոչ արեց կառուցել ենթակառուցվածքներ՝ «ճանապարհների և ջրանցքների կատարյալ համակարգով հանրապետությունը հանգուցելու համար»: Նա միացավ այլ զորեղ քաղաքական գործիչների, ինչպիսին էր Հենրի Բլեյր Քենթաքից, խթանելու այն, ինչը հայտնի դարձավ իբրև *Ամերիկյան համակարգ*

(American System): Նրանք նպատակ ունեին Ամերիկյան տնտեսապես անկախ դարձնել և խրախուսել միջնահասնգային առևտուրը՝ ի հակակշիռ Եվրոպայի և Վեստ Ինդիայի հետ առևտրի:

Ամերիկյան համակարգը պետք է ներառեր Միացյալ Նահանգների նոր բանկը՝ կապիտալ տրամադրելու համար, բարձր պաշտպանիչ մաքսատուրքերը՝ ներմուծվող ապրանքների գները բարձրացնելու և ամերիկյան արտադրության ապրանքները ավելի մրցունակ դարձնելու համար, ինչպես նաև ենթակառուցվածքների՝ ճանապարհների և ջրանցքների ցանցը, որը մարդկանց թույլ կտար ամերիկյան ապրանքները շուկա հանել՝ ապահովելով մարդկանց, կապիտալի, ապրանքների և ծառայությունների արդյունավետ շրջանառություն Միության ողջ տարածքում: Այս նախագծերը հակասական էին: Շատերը կարծում էին, որ դրանք հակասահմանադրական են կամ կավելացնեն դաշնային կառավարության իշխանությունը նահանգների հաշվին: Նույնիսկ Քալիուրը հետագայում մտափոխվեց և միացավ ընդդիմությանը: 1812 թվականի պատերազմը այնուամենայնիվ ամրապնդել էր քաղաքական և տնտեսական կյանքում միասնական ազգ-պետության կարևորության մասին ամերիկացիների զգացումը: Նույնիսկ երբ դաշնային կառավարությունը չէր գործում, նահանգներն իրենք էին ստեղծում բանկեր, կառուցում ճանապարհներ և ջրանցքներ:

Ամերիկայի հետպատերազմյան ամենահամարձակ հոչակագիրն ընդունվեց 1823 թվականին: Նախագահ Ջեյմս Մոնրոն վերջնագիր ներկայացրեց Եվրոպայի կայսրություններին՝ աջակցություն հայտնելով Լատինական Ամերիկայում անկախության համար պատերազմներին: Մոնրոյի դոկտրինով Միացյալ Նահանգները Արևմտյան կիսագունդը՝ ինչպես Հյուսիսային, այնպես էլ Հարավային Ամերիկյան, հոչակում էր ամբողջովին փակ եվրոպական նոր գաղութացման համար: Թեև Մոնրոն ջեֆերսոնյան քաղաքական գործիչ էր, նրա որոշ սկզբունքներ բխում էին ֆեդերալիստական գաղափարաբանությունից: Եթե Ջեֆերսոնը կրճատեց բանակի թվակազմը և վերացրեց բոլոր ներքին հարկերը իր առաջին ժամկետում, ապա Մոնրոն պաշտպանում էր ուժեղ բանակի և ազրեսիվ արտաքին քաղաքականության անհրաժեշտությունը: Քանի որ ամերիկացիները ընդլայնվում էին մայրցամաքում՝ բնակեցնելով նորանոր տարածքներ, Մոնրոն լիազորեց դաշնային կառավարությանը ներդրումներ կատարել ենթակառուցվածքային նախագծերում՝ ջրանցքների և ճանապարհների վրա, որոնք, ըստ նրա, «կկրճատեին հեռավորությունները և, յուրաքանչյուր մաս դարձնելով ավելի հասանելի և մյուսից կախված...»

ավելի սերտորեն կկապակցեին Միությունը»: Ինչպես երկու տասնամյակ առաջ փորձել էին ֆեդերալիստները, Անկախության երկրորդ պատերազմից (1812-1815թթ.) հետո հանրապետական առաջնորդները հանդես էին գալիս դաշնային կառավարության հզորացման օգտին՝ ազգ-պետությունն ուժեղացնելու համար:

Ամփոփենք: Անկախության երկրորդ պատերազմի ավարտից հետո Մոնրոյի ընտրությունն ազդարարեց ֆեդերալիստների քաղաքական վախճանը: Ոմանք կանխատեսում էին «բարի զգացմունքների ժամանակաշրջան» (“Era of Good Feelings”) և կուսակցական պառակտումների ավարտ: Պատերազմը միության խորը զգացում էր առաջացրել բազմազան և պառակտված ամերիկյան ժողովրդի մեջ: Այնուամենայնիվ, այդ «բարի զգացմունքների ժամանակաշրջանը» իրականում չհաստատվեց: Քաղաքական պառակտումը շարունակվեց: Թեև ֆեդերալիստները դուրս մնացին քաղաքական ասպարեզից, Հանրապետական կուսակցության ներսում պառակտումը պետք է հանգեցներ ջեքսոնյան դեմոկրատների վերելքին: Բացի այդ, քաղաքական սահմանաբեկումները շարունակվեցին դասակարգային, սեռային, ռասայական և էթնիկական հատկանիշներով: Միևնույն ժամանակ, արդյունաբերականացումը և ամերիկյան կապիտալիզմի զարգացումը պահանջում էր համակեցական անհավասարության նոր հիմնավորումներ: Հասարակական-տնտեսական փոփոխությունները և աճող ներգաղթն առաջ բերեցին *նատիվիստական* (nativist) արձագանքներ, որոնք բաժանելու էին «իսկական» ամերիկացիներին վտանգավոր կամ անարժան «մյուսներից»: Այդուհանդերձ, ոմանք պայքարում էին նոր ընկերային կարգի հաստատման համար, որը համատեղելի կլիներ ազատության և հավասարության իդեալների հետ: Ինչպես միշտ, ժողովրդավարության իմաստը հոսում էր:

ԳԼՈՒԽ 6

Վաղ հանրապետության հասարակական, տնտեսական և կրոնական փոխակերպումները

Հեղափոխության և քաղաքացիական պատերազմի միջակայքում ամերիկյան հասարակությունը հիմնարար փոփոխություններ ապրեց: Ամերիկացիներին հաջողվեց միասնացնել արդյունաբերական հեղափոխության տեխնոլոգիաները նոր առևտրային տնտեսության մեջ: Շոգեշարժիչները՝ շոգենավերն ու գնացքները շարժող տեխնոլոգիան, խթանեց ամերիկյան արդյունաբերության վերելքը՝ սնուցելով գործարանները և տրանսպորտային նոր ցանցերը: «Շուկայական հեղափոխությունը» վերափոխեց Միացյալ Նահանգները:

Շուկայական հեղափոխությունն արձագանք գտավ ամբողջ երկրում: Ավելի ու ավելի շատ ֆերմերներ աճեցնում էին բերքը շահույթի, այլ ոչ թե ինքնաբավության համար: Հյուսիսում առաջացան հսկայական գործարաններ և քաղաքներ: Հսկայական հարստություններ նյութականացվեցին, իսկ նոր միջին խավի տեսակարար կշիռը շարունակ ընդլայնվում էր: Եվ քանզի ավելի շատ տղամարդիկ և կանայք աշխատում էին կանխիկ աշխատավարձով նոր տնտեսության մեջ, նրանք ազատվեցին ծառայական կախվածությունից: Բայց շուկայական հեղափոխությունն ունեցավ նաև իր բացասական կողմը. երբ Հյուսիսի տեքստիլ գործարանները վերելք ապրեցին, Հարավի բամբակի պահանջարկը մեծացավ, և ամերիկյան ստրկատիրությունը ծաղկում ապրեց: Հյուսիսային մանր ֆերմերները վերածվեցին շուկաների և վաճառականների քմահաճույքներից կախված բանվորների:

Շուկայական հեղափոխությունը նաև հանգեցրեց պայթյունավտանգ տնտեսական աճի, նոր անձնական հարստության, բայց դրա արդյունքում ստվարացավ սեփականազուրկ աշխատավորների ստորին դասակարգը և բռնկվեցին մի շարք խորը տնտեսական ճգնաժամեր՝ «խուճապներ» (“panics”): Շատ ամերիկացիներ աշխատում էին ծանր պայմաններում ու ցածր վարձատրության դիմաց, ենթարկվում դաժան շահագործման և հայտնվում էին աղքատության անվերջ շրջափուլերի մեջ: Հյուսիսային խոշոր տեքստիլ ձեռնարկությունները հարավային բամբակը վերածում էին էժան կտորի: Ու թեև հյուսիսային նահանգները ազատվել էին ստրկատիրությունից, նրանց գործարանները մեծացրել էին ստրկական աշխատանքով աճեցված հարավային բամբակի պահանջարկը, և

նրանց բանկերը տրամադրում էին ֆինանսավորում, որն ապահովում էր ամերիկյան ստրկատիրական համակարգի շահութաբերությունն ու շարունակական գոյությունը:

Եվ այսպես, տնտեսության առաջանցիկ զարգացմանը զուգընթաց՝ շուկայական հեղափոխությունը Միացյալ Նահանգներին մղեց նոր ուղիություններով, քանզի այն դարձավ ազատ աշխատանքի և ստրկության, հարստության և անհավասարության, անվերջ խոստումների ու անասելի վտանգների ազգ-պետություն:

Շուկայական հեղափոխությունը

Ամերիկյան տնտեսության աճը վերափոխեց ամերիկյան հասարակական կյանքը: Ամերիկացիներն ավելի ու ավելի շատ էին արտադրում վաճառքի, այլ ոչ թե սպառման ապրանքներ: XIX դարի սկզբին ամերիկացիների առևտրային անվերջանալի հավակնությունները, ինչը 1815 թվականին Բալթիմորյան թերթերից մեկն անվանեց «առաջ գնալու գրեթե համընդհանուր հավակնություն», վերափոխեց ամերիկյան ազգ-պետությունը: Բարելավված փոխադրումների հնարավորությունները ստեղծեցին շուկայական փոխանակման ավելի լայն ցանց: Շուկայական հեղափոխությունը իրականություն դարձրեց հեղափոխական սերնդի առաջընթացի մասին ակնկալիքները, բայց նաև ներմուծեց նոր միտումներ. դասակարգային պայքար, մանուկների աշխատանք, արագացված ներգաղթ և ստրկության ընդլայնում: Այս ամենը վերափոխեց ամերիկյան քաղաքները:

1812 թվականի պատերազմից հետո ամերիկացիները շտապեցին կառուցել դաշնային նոր ենթակառուցվածքներ՝ ճանապարհների, ջրանցքների և երկաթուղիների նոր ցանցեր: Նահանգային օրենսդիր մարմինները միաժամանակ մղում էին կապիտալը տնտեսության մեջ՝ արտոնելով բանկերին: Տնտեսական աճը, սակայն, անհամաչափ էր ընթանում: 1819, 1837 և 1857 թվականների տնտեսական ճգնաժամերը կործանարար էին. յուրաքանչյուրը հետևանք էր տարբեր ապրանքների համատարած շահարկումների և սպեկուլյացիաների:

Այսպես կոչված տրանսպորտային հեղափոխությունը բացեց Ապալաչյան լեռներից արևմուտք ընկած հսկայական տարածքները: 1825 թվականին Նյու Յորք նահանգն ավարտեց Էրի ջրանցքի կառուցումը, որը նպաստեց ջրանցքաշինության առաջընթացին: Մինչև 1840 թվականը Օհայոն կառուցեց երկու նավարկելի ջրանցքներ, որոնք կապում էին Էրի

լիճը Օհայո գետի հետ: 1807 թվականին Ռոբերտ Ֆուլթոնը հիմնադրեց առաջին առևտրային շոգենավերի ծառայությունը Նյու Յորքում Հադսոն գետի վրա: Դրանից անմիջապես հետո շոգենավերը գործարկվեցին նաև Միսիսիպի և Օհայո գետերի ավազանում:

1827 թվականին Մերիլենդում գործարկվեց Միացյալ Նահանգների առաջին հեռահար երկաթուղային գիծը: 1860 թվականին ԱՄՆ-ում երկաթգծերի ընդհանուր երկարությունն արդեն անցնում էր 30,000 մղոնից: Երկաթուղիների, ճանապարհների և ջրանցքների այս համատարած ցանցը նշանակում էր, որ հյուսիսարևելյան կամ միջինարևմտյան շրջանների ֆերմերները կարող էին ապրանքները հասցնել խոշոր քաղաքային շուկաներ և նավահանգիստներ: Երկաթուղու զարգացումն ավելի դանդաղ էր Հարավում, բայց այնտեղ երկաթուղային գծերի և նավարկելի գետերի համադրությունը թույլ էր տալիս բամբակ աճեցնողներին իրենց արտադրանքը տեղափոխել Հյուսիսարևելյան Ամերիկայի և Անգլիայի տեքստիլ գործարաններ:

Տրանսպորտային հեղափոխությանը հաջորդեց կապի հեղափոխությունը: Հեռագիրը վերասահմանեց մարդկային հաղորդակցության սահմանները: 1843 թվականին Սեմյուել Մորզեն համոզեց Կոնգրեսին ֆինանսավորել 40 մղոնանոց հեռագրական գծի անցկացումը, որը ձգվում էր Վաշինգտոնից մինչև Բալթիմոր:

Տրանսպորտային և հաղորդակցության հեղափոխությունները վերափոխեցին ամերիկացիների կյանքը: Ֆերմերները, ովքեր նախկինում բերք էին արտադրում հիմնականում սեփական ընտանիքի համար, այժմ կարող էին շատ ավելին արտադրել՝ դուրս գալով շուկաներ: Նրանք կանխիկ գումար էին վաստակում, իսկ հավակնոտ ֆերմերները ներդրումներ էին կատարում նոր տեխնոլոգիաների մեջ: Մասնավորապես, Սայրուս Մակ-Քորմիքի ձիաքարշ մեխանիկական հնձիչ մեքենան մասամբ մեքենայացրեց ցորենի բերքահավաքը, իսկ Ջոն Դիրի պողպատե շեղբերով գութանը հնարավորություն տվեց ավելի հեշտությամբ յուրացնելու խոպան հողերը՝ վերածելով դրանք բերրի գյուղատնտեսական հողատարածքների:

Շուկայական հեղափոխությունը խթանեց քաղաքների աճը և վերափոխեց քաղաքային աշխատավորների կյանքը: 1820 թվականին միայն Նյու Յորք քաղաքն ուներ ավելի քան 100,000 բնակիչ: Մինչև 1850 թվականը ամերիկյան 6 քաղաքներ հասան այդ շեմին՝ ներառյալ Չիկագոն, որը հիմնադրվել էր դրանից ընդամենը երկու տասնամյակ առաջ: Նոր տեխնոլոգիաները և ենթակառուցվածքներն էին ճանապարհ հարթել նման աճի համար: Էրի ջրանցքը ներգրավեց Մեծ լճերի տարածաշրջան-

նի առևտրի մեծ մասը՝ ապահովելով Նյու Յորքի գերակա կարգավիճակն իբրև երկրի ամենամեծ և տնտեսապես ամենակարևոր քաղաք: Շոգենավային հաղորդակցության շնորհիվ Սենթ Լուիսն ու Յինցինատին դարձան առևտրային կենտրոններ, իսկ Չիկագոն վերելք ապրեց՝ դառնալով արևմտյան Մեծ Լճերի և Մեծ Հարթավայրերի (Great Plains) տարածաշրջանների երկաթուղային հանգույցը:

Միևնույն ժամանակ, կանխիկ տնտեսությունը խաթարեց փոխանակման և առևտրի հին, տեղական ոչ ֆորմալ համակարգերը: Հայտնվեցին տնտեսական կազմակերպման նոր ձևեր՝ բաժնետիրական ընկերությունները: Նահանգներն առաջարկում էին միավորման արտոնություններ՝ պաշտպանելու ձեռներեցների ունեցվածքն ու պարտավորությունները, ովքեր ներդրումներ էին կատարում վաղ արդյունաբերական ձեռնարկումներում: Կորպորատիվ կանոնադրությունը ներդրողներին և տնօրեններին թույլ էր տալիս խուսափել ընկերության պարտքերի համար անձնական պատասխանատվությունից:

Հյուսիսային ստրկության անկումը և «բամբակյա թագավորության» վերելքը

Ստրկական աշխատանքը նպաստեց շուկայական հեղափոխությանը: 1832 թվականին ամերիկյան 106 կորպորացիաներից 88-ը տեքստիլ ընկերություններն էին, որոնց արժեքը գերազանցում էր 100,000 դոլարը: Այս տեքստիլ գործարանները, որոնք հիմնված էին ազատ աշխատուժի վրա, այնուամենայնիվ կախված էին հարավային բամբակի մատակարարումներից, ուստի շուկայական նոր հսկայական տնտեսությունը խթանեց ստրկական աշխատանքի վրա հիմնված Հարավի պլանտացիաների ընդլայնումը:

XIX դարի սկզբին Մեյսոն-Դիքսոն գծից հյուսիս գտնվող նահանգները քայլեր էին ձեռնարկել ստրկությունը վերացնելու համար: 1804 թվականին Նյու Ջերսին դարձավ հյուսիսային նահանգներից վերջինը, որը ընդունեց աստիճանական ազատագրության ծրագիր: Ազատ աֆրոամերիկացիների թիվը 1790 թ. 60,000-ից մինչև 1810 թ. ավելացավ՝ հասնելով 186,000-ի: Այնուամենայնիվ, ընդհանուր առմամբ ստրկացված բնակչության թիվը շարունակում էր աճել՝ 1790-ի 700,000-ից 1820 թ. հասնելով մինչև 1,5 միլիոնի: Հյուսիսում ստրկության վերացումը և Հարավում ստրկության ընդլայնումը ստեղծեցին հասարակական-քաղաքական պառակտման աճող վտանգ: Բամբակն ավելի շատ խթանեց այս գործըն-

թացը, քան ցանկացած այլ մշակաբույս: Ստրկատիրությունը ավելի քիչ եկամտաբեր էր ծխախոտագործական շրջաններում, ինչպիսին էր Վիրջինիան, սակայն բամբակի մշակության և եկամտաբերության աճը ավելի հարավ և արևմուտք մեծացրեց ստրկության պահանջարկը: Բամբակի մշակությամբ զբաղվող ստրկատերերը իրենց նոր շահույթը ներդրեցին ավելի շատ ստրուկներ ձեռք բերելու համար: Իսկ նոր ազգային և միջազգային շուկաները խթանեցին պլանտացիաների աճը:

Բամբակի հեղափոխությունը

XIX դարի առաջին կեսին հարավային նահանգները ևս աննախադեպ աճ ապրեցին՝ կարևորելով տարածաշրջանը և նրա դերը Ամերիկայի պատմության մեջ: 1830-ական թվականներից մինչև 1861 թվականի քաղաքացիական պատերազմի սկիզբը ամերիկյան Հարավը մշակութային և հասարակական ավանդույթների փոփոխություններ գրանցեց, ընդլայնեց իր հարստությունն ու բնակչությունը և դարձավ աճող համաշխարհային տնտեսության կարևոր մասը: Հարավը մեկուսացած չէր հաղորդակցության, առևտրի և արտադրության ընդլայնվող համակարգից, որը կապում էր Եվրոպան և Ասիան Ամերիկա մայրցամաքին: Ճիշտ հակառակը. Հարավը ակտիվորեն ներգրավեց նոր տեխնոլոգիաներ և առևտրային ուղիներ՝ միաժամանակ ձգտելով յուրացնել և արդիականացնել իր առավել «ավանդական» և մշակութապես արմատացած կենսակերպը արդիականացող աշխարհում՝ ներառյալ ստրկությունը և գյուղատնտեսական արտադրությունը:

Սկսած 1830-ական թվականներից՝ ԱՄՆ-ի հյուսիս-արևելքի, Եվրոպայի, Կանադայի, Մեքսիկայի և Կարիբյան ավազանի վաճառականները հաստատվեցին Հարավի քաղաքներում՝ հիմնելով առևտրային ընկերություններ, պահեստներ, նավահանգիստներ և շուկաներ: Արդյունքում, այս քաղաքները՝ Ռիչմոնդը, Չարլսթոնը, Սենթ Լուիսը, Մոբիլը, Սավաննան և Նոր Օռլեանը, կրկնապատիկ և նույնիսկ եռապատիկ մեծացան չափերով և համաշխարհային նշանակությամբ: Բնակչությունը դարձավ ավելի կոսմոպոլիտ, ավելի կրթված և հարուստ: Սկսեցին զարգանալ դասակարգերի համակարգերը՝ ստորին, միջին և վերին խավի համայնքները, որոնք նախկինում այս քաղաքներում այդքան էլ ակնհայտ չէին: Նավահանգիստները, որոնք ժամանակին ամբողջությամբ կենտրոնացած էին ստրկացված բանվորների ներմուծման վրա և միայն տարածաշրջանային նշանակություն ունեին, դարձան ամենօրյա և շաբաթական նավագնա-

ցությունների հանգրվաններ և բեռնափոխադրման գծեր դեպի Նյու Յորք, Լիվերպուլ, Մանչեսթեր, Լե Հավր և Լիսաբոն: Աշխարհամասերը դանդաղ, բայց հաստատակամորեն մոտենում էին իրար, իսկ ստրկությունը հենց մեջտեղում էր:

Ամերիկյան բամբակի արտադրության աստղաբաշխական աճը հանգեցրեց հարավային հիմնական բերքի՝ ծխախոտի մշակության անկմանը, որի արտադրությունը թանկ էր և քիչ եկամտաբեր, մասամբ նաև ստրուկների աշխատուժի համատարած օգտագործման պատճառով: Այն նաև պահանջում էր հսկայական, ժամանակավոր դաշտեր, մեծ թվով բանվորներ և մշտական տեղաշարժ: Բամբակի մշակությունը տարբերվում էր: Հատկապես Փոքր ծոցի բամբակը (Petit Gulf cotton) համեմատաբար արագ էր աճում շատ ավելի էժան և լայնորեն մատչելի հողերի վրա: 1794 թվականին բամբակի ցինի՝ մանող մեքենայի գյուտով և երեք տասնամյակ անց շոգեշարժիչների կիրառությամբ, բամբակը դարձավ սովորական սպառողական ապրանք, այն ապրանքը, որով Միացյալ Նահանգները կարող էր ընդլայնվել դեպի արևմուտք՝ արտադրելով տեքստիլ և վերարտադրելով Թոմաս Ջեֆերսոնի տեսլականը փոքր ֆերմերների իդեալական հանրապետության մասին՝ ընտանիքների և ֆերմերների ազգ-պետության, որը մշակում էր իր հողը, քաղում էր ազնիվ, ազատ և ինքնապահով աշխատանքի բարիքները, ընդարձակվում և բնակեցնում՝ յուրացնելով վայրի արևմուտքը: Բայց այս ամենը իրական կյանքում բռնություններով էր ընթանում:

Հողերի սեփականության իրավունքի ժողովրդավարացումը և տարածումը կատարվում էր բնիկ ամերիկացիների արտաքսման, դաշնային աճուրդների, մատչելի վարկերի միջոցով և բամբակի անմիջական շահույթի համընդհանուր ձգտման երազանքով: Այս ամենը դարձավ Հարավի հարատև ընկերային ավանդույթներից մեկը և արմատացավ հասարակական երևակայության մեջ: Եվ 1861 թվականին հենց այդ ավանդույթը, որը համարվում էր հարավային հասարակության և մշակույթի ողնաշարը, ազգ-պետությունը բաժանելու էր երկու մասի:

Բամբակի մշակության աճը և դրա շնորհիվ ԱՄՆ-ի համաշխարհային տնտեսական դիրքի վերելքը նպաստեցին Հարավի ստրկության ծաղկմանը: Հումքի զանգվածային արտադրությունը և «Բամբակի թագավորությունը», որը ձգվում էր ահռելի հողատարածությունների վրա, առանց ստրկության հնարավոր չէր: Բամբակն աճում էր ստրկության հետ: Ստրկության գոյությունը և դրա կարևորությունը հարավային տնտեսության համար դարձավ որոշիչ գործոն, որը բնորոշում էր ստրկատիրական Հարավը:

Թեև ստրկությունն Ամերիկայում հաստատվել էր բամբակի եկամտաբեր ապրանք դառնալուց շատ առաջ, ստրուկների օգտագործումն ու առևտուրը, ստրկության շարունակման բարոյական և տնտեսական հիմնավորումները նոր թափ ստացան բամբակի հեղափոխության և դրա հաջողությանը ուղեկցող տնտեսական, հասարակական և մշակութային աճի արդյունքում: 1830-1850-ական թվականներին ստրկությունն այնքան բնորոշ դարձավ Բամբակի գոտուն, որ ճանապարհորդները, գրողներն ու վիճակագիրները սկսեցին այդ տարածքը անվանել «Սև գոտի»՝ ոչ միայն պարարտ հողի, այլև այնտեղ աշխատող ստրկացված բանվորների մաշկի գույնը նկարագրելու համար:

1850-ական թվականներին ստրկությունն ու բամբակամշակությունն այնքան էին միահյուսվել, որ փոփոխության գաղափարը նզովք դարձավ հարավային տնտեսական և մշակութային ինքնության համար: Թե՛ մշակաբույսերի բազմազանության կիրառումը, թե՛ հակաստրկատիրական գաղափարաբանությունը, թե՛ տնտեսական դիվերսիֆիկացիայի գաղափարը և թե՛ ստրուկներ գնելու ու պահելու ապշեցուցիչ ծախսերի աճը չէին կարող համոզել ստրկատիրության վերացման անհրաժեշտության մեջ: Բամբակը դարձել էր Հարավի տնտեսության հիմքը: Թերևս բացի Լուիզիանայի շաքարեղեգից, բամբակը միակ հիմնական արտադրանքն էր, որը Հարավը կարող էր արդյունավետորեն վաճառել միջազգային շուկայում:

Նախքան բամբակի հեղափոխությունը Հարավն ուներ մի քանի խոշոր նավահանգիստներ, որոնցից գրեթե ոչ մեկն ակտիվորեն չէր պահպանում միջազգային առևտրային ուղիներ կամ նույնիսկ ներքին մատակարարման ուղիներ: Ներքին ճանապարհորդությունն ու մատակարարումը ևս դժվար էին, հատկապես Միսիսիպի գետի ջրերում: Բամբակի աճին նպաստեց տրանսպորտային հաղորդակցության և փոխադրման տեխնոլոգիայի փոփոխությունը՝ Հարավի բամբակը դարձնելով աշխարհի առաջատար ապրանքներից և հումքերից մեկը: 1812 թ. հունվարին «Նոր Օռլեան» ամերիկյան նավը ժամանեց համանուն քաղաքը: 1817 թ. Նոր Օռլեանի նավահանգիստն արդեն 17 շոգենավ էր ընդունում Միսիսիպի գետի կանոնավոր երթուղով, 1840-ականների կեսերին՝ ավելի քան 700 շոգենավ, իսկ 1860 թ. Նոր Օռլեանի նավահանգիստն ընդունեց և բեռնաթափեց 3,500 շոգենավ, որոնք ամբողջությամբ կենտրոնացած էին ներքին առևտրի վրա:

Շոգեշարժիչները փոխեցին Հարավը և ամբողջ Միացյալ Նահանգները: Այն ամենը, ինչ կարող էր գործի դրվել շոգեշարժիչով, մեքենայաց-

վեց. բամբակի ջինները՝ մանող մեքենաները, գնացքները, սրճաղացները, ալրաղացները, ջուլիակահաստոցները և բաղնիքները, ի շարս այլոց, ընկան այս նոր տեխնոլոգիայի ցանցի մեջ: Առափնյա նավահանգիստները, ինչպիսիք էին Նոր Օռլեանը, Չարլսթոնը, Նորֆոլկը և նույնիսկ Ռիչմոնդը, դարձան շոգենավերի հանգրվան:

1860 թվականին Հարավում ապրում էր մոտ 4 միլիոն ստրկացված մարդ՝ ամբողջ հարավային բնակչության ավելի քան 45 տոկոսը: Բնականաբար, այս մարդիկ թեև սկզբունքորեն անազատ էին, բայց զարգացրել էին իրենց մշակույթը: Նրանք ստեղծել էին ազգակցական և ընտանեկան ցանցեր, հաճախ ապօրինի առևտրի համակարգեր, լեզվական ծածկագրեր, կրոնական ժողովներ և նույնիսկ բարեգործական և սոցիալական օգնության կազմակերպություններ՝ բոլորը ստրկության տիրույթում, համակարգ, որը նվիրված էր աշխատանքային շահագործմանը և արտադրությանը, այլ ոչ թե զարգացմանը, համայնքին և զգացմունքներին:

Տնտեսական աճը, բռնությունը և շահագործումը գոյակցեցին և փոխադարձաբար ամրապնդեցին ավետարանական քրիստոնեությունը հարավում: Երկրորդ Մեծ զարթոնքի վերածնունդը հաստատեց տարածաշրջանի գերակա կրոնական մշակույթը: Մեթոդիստների, բապտիստների և ավելի փոքր չափով պրեսբիտերականների գլխավորությամբ կրոնական վերածնունդը տարածվեց հարավի խորքերը: Քաղաքացիական պատերազմի նախաշեմին հավատացյալ հարավցիների ճնշող մեծամասնությունը պատկանում էր կամ բապտիստական, կամ մեթոդիստական դավանանքին: Հարավի այս երկու եկեղեցիները սկզբնական շրջանում քննադատում էին ստրկատիրությունը. հետագայում դրանք վերածվելու էին ստրկության և հարավային հասարակական կարգի պաշտպանների: Ստրկացված հարավցիների շրջանում միսիոներական ջանքերը հիմնականում հաջող էին, և բողոքականությունը արագորեն տարածվեց աֆրոամերիկացիների շրջանում, ինչը հանգեցրեց երկուսսայական միաբանությունների և նշանավոր անկախ Սևամորթ եկեղեցիների ստեղծմանը:

Երբ ստրկության հաստատությունը կարծրացրեց ռասիզմը հարավում, միսիոներների և բնիկ ամերիկացիների հարաբերությունները նույնպես փոխվեցին: Սահմանային միսիոներական դպրոցները քրիստոնեական քարոզչության և ազդեցության շարունակական հոսք էին ապահովում բնիկ ամերիկացիների համայնքներում: Որոշ միսիոներներ սովորել էին բնիկների լեզուները, բայց շատերը աշխատում էին թույլ չտալ, որ բնիկ երեխաները խոսեն իրենց մայրենի լեզուներով՝ պնդելով քրիստոնեությունը անգլերենով ըմբռնելու անհրաժեշտությունը:

Ստրկացված աֆրոամերիկացիները ամենից հաճախ քրիստոնեական դաստիարակություն էին ստանում սպիտակամորթ քարոզիչներից կամ ստրուկներից, որոնց կրոնական ուղերձը, որպես կանոն, շեշտում էր ստրկացված մարդկանց ստորադասությունը: Շատ ստրկացված աֆրոամերիկացիներ նախընտրեցին ստեղծել և կիրառել քրիստոնեության իրենց տարբերակները, որոնք սովորաբար ներառում էին աֆրիկյան ավանդական կրոնների տարրերը: Նաթ Թըրները՝ ստրուկների մեծ ապստամբության առաջնորդը, ևս ոգեշնչվել էր կրոնից: 1831 թ. Վիրջինիայի Սաութհեմփթոն շրջանում Նաթ Թըրները և նրա համախոհները փորձեցին ազատագրել շրջանի ստրկացված բնակչությանը: Ապստամբությունը դաժանորեն ճնշվեց, որից հետո խստացվեցին հակազրագիտության օրենքները, և սևամորթների ղեկավարած եկեղեցիները լուծարվեցին ու դրվեցին սպիտակամորթ պաասավորների հսկողության տակ:

Աշխատանքի կազմակերպման և ընկերային կյանքի փոփոխությունները

Թեև արդյունաբերականցումը շրջանցեց ամերիկյան Հարավի մեծ մասը, այնուամենայնիվ հարավային բամբակի արտադրությունը սնուցեց Հյուսիս-արևելքի և Միջին արևմուտքի արդյունաբերականցումը: Տեքստիլ արդյունաբերությունը փոխեց ամերիկյան աշխատուժի համակարգը: Վաղ հանրապետություն շրջանում արդյունաբերության աշխատավորները սովորաբար աշխատում էին արտադրության բոլոր փուլերում: Սակայն նոր համակարգը՝ հատվածային աշխատանքը, արտադրության մեծ մասը բաժանեց առանձին փուլերի, որոնք կատարվում էին տարբեր աշխատողների կողմից: Դեռևս 1790-ական թվականներին Նոր Անգլիայի ձեռնարկատերերը սկսեցին փորձարկել մեքենայացված արտադրամասերը, որոնք փոխարինում էին արհեստանոցային համակարգին: 1821 թվականին Լոուելի պլանավորված ջրաղացային քաղաքում լիարժեքորեն գործարկվեց արդիական տեքստիլ գործարանը: Մասաչուսեթսի հյուսիսում գտնվող Մերիմակ գետի ջրային էներգիայի սնուցմամբ գործող Լոուելի գործարանները կենտրոնացրին տեքստիլի արտադրության գործընթացը մեկ հարկի տակ: Այսպես հիմնադրվեցին ամերիկյան առաջին արդյունաբերական գործարանները:

Արդյունաբերողները, ովքեր ցանկանում էին մեծացնել արտադրությունը, վարձում էին ոչ հմուտ վարձու աշխատողների, որոնց պարզապես կարող էր հանձնարարվել առաջադրանքի մեկ, անընդհատ կրկնվող

փուլը: Գործարանները աստիճանաբար փոխարինեցին արհեստանոցներին: Հին հայրապետական աշկերտական համակարգը, որը ներառում էր երկարաժամկետ պարտավորություններ աշակերտի և վարպետի միջև, իր տեղը զիջեց ավելի ոչ անձնական և ավելի ճկուն աշխատանքային համակարգին, որտեղ ոչ հմուտ բանվորները կարող էին վարձվել և աշխատանքից ազատվել շուկայի թելադրանքով: Թեև նոր աշխատանքային համակարգը ամբողջ հյուսիսային Միացյալ Նահանգներում նշվում էր իբրև «ազատ աշխատանք», այն միաժամանակ խորհրդանշում էր աշխատավորների աճող դասակարգի անզրոությունը:

Այսպիսով, հյուսիսային Միացյալ Նահանգները արագ մուտք էին գործում առևտրայնացման և վաղ կապիտալիստական տնտեսություն: Մինչդեռ շատ ամերիկացիների համար այս գործընթացը խորացնում էր հարուստ գործարարների և աղքատ վարձու աշխատողների միջև աճող անջրպետը: Վարձու բանվորները, որոնք անհամաչափորեն կազմված էին ներգաղթյալներից և աղքատ ամերիկացիներից, բախվում էին ցածր աշխատավարձերի, երկար աշխատաժամերի և աշխատանքային վտանգավոր պայմանների խնդրին:

XIX դարի առաջին կեսին հյուսիսային Միացյալ Նահանգների ընտանիքները ավելի ու ավելի էին մասնակցում շուկայական հեղափոխության ստեղծած կանխիկ տնտեսությանը: Շուկայական հեղափոխությունը ոչ միայն վերափոխեց տնտեսությունը, այլև փոխեց ամերիկյան ընտանիքի բնույթը, քանզի աշխատանքի և արտադրության նոր համակարգերը վերաձևակերպեցին նաև գենդերային դերերը: Կանանց և երեխաների իդեալականացված ոլորտը աստիճանաբար ավելի էր բնութագրում ընտանիքների դասակարգային կարգավիճակը: Կանայք և երեխաներն աշխատում էին՝ լրացնելու շատ տղամարդ աշխատավորների ցածր աշխատավարձը: Սոցիալական անապահով խավերի երեխաները դպրոց հաճախելու փոխարեն ծառայում էին իրենց ընտանիքների համար կամ դիմում էին ցածր վարձատրվող աշխատանքների: Մինչդեռ միջին դասի երեխաները կրթություն էին ստանում, որը ներդրում էր ապագայի համար և երաշխիք էր դառնում նրանց ապագա տնտեսական արտոնյալ դիրքերի համար: Ֆորմալ կրթությունը հատկապես կարևոր էր երիտասարդ տղամարդկանց համար:

Այսպես, միջին և վերին խավերը ամրապնդեցին իրենց կարգավիճակը՝ պաշտպանելով իրենց կանանց և երեխաներին վարձու աշխատանքի ծանր իրողություններից: Կանայք պետք է լինեին մայրեր և մանկավարժներ, այլ ոչ թե արտադրության ոլորտի աշխատավորներ: Սակայն ստորին

դասի և անապահով խավերի կանայք աշխատում էին տեքստիլ արդյունաբերության գործարաններում իբրև վարձու բանվորներ, սպասավորներ վաճառակետերում, պանդոկներում և ունևոր խավերի տներում: Մինչ շուկայական հեղափոխությունը վերացնում էր կանանց տնտեսական և ավանդական շատ դերեր, նրանց իրավական և քաղաքական կարգավիճակը ըստ էության մնում էր անփոփոխ:

Ներգաղթը և արդյունաբերական աշխատանքի աճը

1820-1860 թվականներին ավելի քան 5 միլիոն ներգաղթյալներ ժամանեցին Միացյալ Նահանգներ: Իռլանդացի, գերմանացի և հրեա ներգաղթյալները փնտրում էին նոր կյանք և տնտեսական հնարավորություններ: Առանց կապիտալ և ֆերմաներ ձեռք բերելու ու շահագործելու համար պահանջվող հմտությունների իռլանդացի ներգաղթյալները բնակություն հաստատեցին հիմնականում հյուսիսարևելյան քաղաքներում: 1840-1860 թվականներին 1,7 միլիոն իռլանդացիներ էին փախել սովից և անգլիական բռնաճնշումներից: Նրանք հաստատվեցին ԱՄՆ-ում իբրև վարձու բանվորներ՝ զբաղվելով հմտություն չպահանջող աշխատանքներով ամերիկյան քաղաքների ամենակեղտոտ և ամենավտանգավոր աշխատավայրերում: Հյուսիսային քաղաքների իռլանդացի աշխատավորներին շատերը համեմատում էին աֆրոամերիկացիների հետ, իսկ հականերգաղթյալ թերթերը նրանց պատկերում էին կապիկի նմանությամբ:

Մինչ իռլանդացիները հիմնականում բնակություն հաստատեցին արևմտյան քաղաքներում, գերմանացի ներգաղթյալների մեծ մասը օգտագործեց ամերիկյան նավահանգիստներն ու քաղաքները որպես ժամանակավոր ճանապարհակետեր գյուղատնտեսական շրջաններում հաստատվելուց առաջ: Այս ընթացքում Գերմանիայի տարբեր հատվածներից ավելի քան 1,5 միլիոն ներգաղթյալներ ժամանեցին Միացյալ Նահանգներ: Գերմանացիները հաստատվեցին Հին հյուսիս-արևմուտքի գյուղատնտեսական շրջաններում, այդ թվում Սենթ Լուիսում, Տինցինատիում և Միլուքիում՝ երեք քաղաքներ, որոնք ձևավորեցին այն, ինչը հայտնի դարձավ որպես գերմանական եռանկյունի (German Triangle):

Հրեա ներգաղթյալները, որոնք ծագումով հարավարևմտյան Գերմանիայից էին և Լեհաստանի որոշ մասերից, տեղափոխվեցին Միացյալ Նահանգներ շրջայական միգրացիայի միջոցով և որպես ընտանեկան միավորներ: Ի տարբերություն գերմանացիների՝ հրեա ներգաղթյալները հազվադեպ էին բնակություն հաստատում գյուղական վայրերում: Հաս-

տատվելուց հետո հրեա ներգաղթյալները տեղավորվում էին մանրածախ առևտրի, վաճառական և արհեստագործական ոլորտներում, ինչպիսին էր դերձակությունը:

Ներգաղթյալների հանկարծակի ներհոսքը հակազդեցություն առաջացրեց «բնիկ»՝ Ամերիկայում ծնված անգլո-բողոքական ամերիկացիների շրջանում: Այս նատիվիստական շարժումը, զգուշանալով հատկապես կաթոլիկների աճող ներկայությունից, ձգտում էր սահմանափակել եվրոպական ներգաղթը և թույլ չտալ կաթոլիկներին եկեղեցիներ և այլ հաստատություններ հիմնել: 1850-ականներին հյուսիսային խոշոր քաղաքներում, ինչպիսիք էին Բոստոնը, Չիկագոն, Ֆիլադելֆիան և կաթոլիկ մեծաթիվ բնակչությամբ այլ քաղաքներ, նատիվիզմը նույնիսկ ստեղծեց իր քաղաքական կուսակցությունը: Ամերիկյան կուսակցությունը (American Party), որն ավելի հայտնի է որպես «Ոչինչ չգիտեմ» կուսակցություն (Know-Nothing Party), հաջողություններ արձանագրեց Հյուսիսի տեղական և նահանգային ընտրություններում: 1852 և 1856 թվականներին կուսակցությունը նույնիսկ առաջադրեց նախագահի թեկնածուներ: 1855 թվականից հետո ներգաղթը կտրուկ անկում ապրեց, քանզի նատիվիզմը, Ղրիմի պատերազմը և Եվրոպայում տնտեսական պայմանների բարելավումը նպաստեցին հավանական միգրանտների քանակի նվազմանը:

Արդյունաբերական Հյուսիսի քաղաքներում աշխատավորները ստեղծեցին արհմիություններ, օրինակ՝ Ֆիլադելֆիայի վարձու կոշկակարների դաշնային միությունը (Philadelphia's Federal Society of Journeymen Cordwainers) և Բոստոնի ատաղձագործների միությունը (Carpenters' Union of Boston): Այս արհմիություններն աշխատում էին պաշտպանել իրենց անդամների տնտեսական դրությունը՝ ստեղծելով փակ արհեստանոցներ և աշխատատեղեր, որտեղ գործատուները կարող էին վարձել միայն արհմիության անդամներին: Աշխատանքային պայմանները բարելավելու համար արհմիությունները նաև կազմակերպում էին գործադուլներ: Քաղաքական առաջնորդները դատապարտեցին այդ կազմակերպությունները որպես անօրինական և դավադիր միավորումներ, որոնք կոչված էին առաջ մղելու աշխատողների նեղ անձնական շահերը՝ ի վնաս սեփականատերերի իրավունքների և հասարակության ընդհանուր բարօրության:

1840-ականներին աշխատավորները կազմակերպվեցին աշխատաժամերը սահմանափակելու և գործարաններում երեխաներին պաշտպանելու նպատակով: Նոր Անգլիայի ֆերմերների, մեխանիկների և այլ աշխատավորների ասոցիացիան մոբիլիզացվեց արդյունաբերության ոլորտներում 10-ժամյա աշխատանքային օր սահմանելու համար: 1835

թվականին Բոստոնում համաքաղաքային գործադուլից հետո «Տասը-ժամյա շարժումը» արագորեն տարածվեց Ֆիլադելֆիայում և այլ խոշոր քաղաքներում: Կանայք, որոնք 1800-ականների սկզբից գործարաններում աշխատուժի արդեն զգալի մասն էին կազմում, ևս սկսեցին գործադուլներ ավելի լավ պայմանների համար: 1840-ականների «Տասըժամյա շարժումը» կին աշխատավորները կարևոր աջակցություն էին ցուցաբերում: Չնայած 10-ժամյա աշխատանքային օրվա պահանջին լայնածավալ աջակցությանը՝ շարժումը միայն մասնակի հաջողության հասավ:

Նախագահ Մարտին Վան Բուրենը 10-ժամյա աշխատանքային օր սահմանեց դաշնային հանրային աշխատանքների նախագծերում աշխատողների համար: 1847 թվականին Նյու Հեմփշիրն ընդունեց օրենք 10-ժամյա աշխատանքային օրվա մասին ամբողջ նահանգի համար, իսկ մեկ տարի անց՝ Փենսիլվանիան: Այնուամենայնիվ, երկու նահանգներն էլ աշխատողներին թույլ էին տալիս կամավոր համաձայնություն տալ օրական 10 ժամից ավելի աշխատանքին: 1842 թվականին երեխաների աշխատանքը դարձավ գերիշխող խնդիր ամերիկյան բանվորական շարժման մեջ: Երեխաների պաշտպանությունն ավելի շատ աջակցություն ստացավ միջին խավի կողմից, քան չափահաս աշխատավորների պաշտպանությունը: Մասաչուսեթսում օրենք ընդունվեց, որն արգելում էր մինչև 12 տարեկան երեխաներին աշխատել օրական 10 ժամից ավելի: XIX դարի կեսերին Նոր Անգլիայի բոլոր նահանգները հետևեցին Մասաչուսեթսի օրինակին: 1840-1860-ական թվականներին նման օրենքները աստիճանաբար ավելացրին աշխատանքի պաշտպանության և դպրոցական ապահովման տարիքը:

Կրոնական վերափոխումները

XIX դարի սկիզբը Միացյալ Նահանգներում հսկայական փոփոխությունների շրջան էր: Տնտեսական, քաղաքական, ժողովրդագրական և տարածքային վերափոխումները արմատապես փոխեցին այն, թե ինչ էին ամերիկացիները մտածում իրենց, իրենց համայնքների և արագորեն ընդլայնվող ազգի մասին: Դա մեծ լավատեսության ժամանակաշրջան էր: Այնուամենայնիվ, դա նաև մեծ հակամարտությունների ժամանակաշրջան էր, քանզի արդյունաբերականացման և ժողովրդավարացման օգուտները գնալով ավելանում էին սեռային, ռասայական և դասակարգային խիստ անհավասար բնութագրերի վրա:

Ամերիկացիներն այս փոփոխությունները ընդունում էին խանդավա-

նությանը և կասկածամտությանը՝ առերեսվելով նոր ազգ-պետության բարոյական և մտահոգևոր կառուցվածքային վերափոխումներին և առաջացող ընկերային մարտահրավերներին: Տարատեսակ փոխակերպումները հասկանալու և կառավարելու համար շատերը դիմում էին երկու հզոր գործիքների՝ հոգևոր վերածննդին և ընկերային կարգի բարեփոխումներին: Արձագանքելով XVIII դարի Լուսավորության ռացիոնալիզմին՝ երկրորդ Մեծ զարթոնքի (Second Great Awakening) կրոնական վերածնունդը XIX դարի սկզբին վերստին ճարակեց բողոքական հոգևորությանը: Շատերը ազդվեցին այս կրոնական վերածննդից՝ համոզվելով, որ մարդկային հասարակությունը կարող է փոխվել և ավելի դրախտային դառնալ: Հոգևոր ցանցերը միացան արագ զարգացող հասարակական բարեփոխումների ցանցերին, որոնք ձգտում էին մեղմել ընկերային կարգի և բարոյական արատները: Շոշափելով բազմաթիվ խնդիրներ՝ ներառյալ ավիոհիվանդ, ստրկությունը և կանանց անհավասարությունը՝ բարեփոխիչները անխոնջ աշխատում էին իրենց շրջապատող աշխարհը վերափոխելու ուղղությամբ:

XIX դարի սկզբին կրոնական վերածննդի հաջորդականությունը, որը հավաքականորեն հայտնի է որպես երկրորդ Մեծ զարթոնք, վերափոխեց ազգային կրոնական լանդշաֆտը: Վերածննդի քարոզիչները ճանապարհորդում էին՝ շատերին փոխանցելով հոգևոր և բարոյական նորոգության պատգամը: Քաղաքային կենտրոնների, գյուղական տարածքների և սահմանային տարածքների բնակիչները հավաքվում էին կրոնական վերածննդի և ճամբարային հանդիպումների, որտեղ ֆիզիկական և էմոցիոնալ բուռն խանդավառությունն ուղեկցում էր ավետարանական դարձի ծեսերին: Ճամբարային հանդիպումները գրավեցին ամերիկյան հեղափոխության ժողովրդավարական ոգին: Վերածնունդը նաև միավորող բարոյականություն և հոգևոր համայնքի նոր զգացում հաղորդեց ամերիկացիներին: Վերածնունդը տարածվեց ողջ Միացյալ Նահանգներում՝ ընդլայնելով եկեղեցական անդամությունները, ծնունդ տալով նոր քրիստոնեական դավանանքների և ոգեշնչելով հասարակական բարեփոխումները:

Եկեղեցիների պետական աջակցության վերացումով առաջացավ այն, ինչը պատմաբաններն անվանում են ամերիկյան հոգևոր շուկա: Մեթոդիզմը հասավ ավելի ուշագրավ հաջողության՝ գրանցելով ամերիկյան պատմության մեջ ամենանշանակալի դավանական աճը: 1850 թվականին մեթոդիզմը համարվում էր ամերիկյան ամենահայտնի ուղղությունը: Մեթոդիստներն օգտագործում էին շրջիկ քարոզիչներին՝ կրոնականացնելով նաև նորաբնակներին և ներգաղթյալներին: Շրջիկ քարոզիչները

կանոնավոր ընդմիջումներով այցելում էին տներ, ժողովատներ և եկեղեցիներ: Նոր ուղղություններից նշանակալի էր Ջոզեֆ Սմիթի հիմնադրած մորմոնների դավանանքը: Բացի իրենց ուրույն դավանաբանության քարոզչությունից՝ մորմոնները փորձարարական հասարակաշինության ծրագիր էին իրականացնում՝ ավելի հեռուն գնալով քրիստոնեական ուղղափառության սահմաններից:

Հեղափոխական իդեալները նաև նպաստեցին ուղղափառ կալվինիզմի էական աստվածաբանական քննադատությանը, որը հեռու գնացող հետևանքներ ունեցավ կրոնական անհատների և ընդհանուր առմամբ հասարակության համար: Կալվինիստները հավատում էին, որ ողջ մարդկությունը խաթարված է մեղքով, և Աստվածային նախախնամությամբ միայն ոմանք կարող էին փրկվել: Արմատական վերածննդի քարոզիչները, որոնցից էր Չարլզ Գրանդիսոն Ֆիննին, մի կողմ դրեցին աստվածաբանական խնդիրները՝ ապավինելով հավատավորների զգացմունքներին: Նույնիսկ ավելի պահպանողական հոգևոր առաջնորդները, ինչպիսին էր Լայման Բիչերը, կոչ արեցին երիտասարդ ամերիկացիներին ընդունել կալվինիստական ուսմունքի նկատմամբ ավելի քիչ ուղղափառ մոտեցում: Այս հոգևոր առաջնորդները նպաստեցին ձևավորվող համաձայնությանը, որ բոլոր հոգիները հավասար են փրկության առաջ, և որ բոլոր մարդիկ կարող են փրկվել՝ ապավինելով Աստծուն: Երկրորդ Մեծ զարթոնքը նաև բարոյապես զորեղացրեց ավետարանական քրիստոնյաներին՝ փորձելով արմատախիլ անել բազմաթիվ հասարակական խնդիրները, որոնք բխում էին ժողովրդագրական կտրուկ փոփոխություններից:

XIX դարի առաջին կեսին շատ ամերիկացի քրիստոնյաներ արձագանքեցին արդյունաբերականացման և ուրբանիզացման բարոյական հիմնախնդիրներին և հասարակական կարիքներին: Հասարակական խնդիրները, այդ թվում՝ հարբեցողությունը և հանցագործությունը, նոր և անհանգստացնող ծավալների հասան: Բարեփոխումների շարժումների արմատները գալիս էին Եվրոպայից, քանզի Ատլանտյան օվկիանոսի երկու կողմերն էլ բախվել էին նույնական խնդիրների՝ ուրբանիզացիան, արդյունաբերականացումը և դասակարգային պայքարը: Բրիտանացի և ամերիկացի բարեփոխիչների միջև կապերը հատկապես զգալի էին հասարակական բարեփոխումների բազմաթիվ նախագծերում:

«Բարեգործական կայսրություն». ընկերային բարեփոխումների շարժումները

Պետության և եկեղեցու տարանջատումից ու կրոնական կազմալուծումից հետո Միացյալ Նահանգների քաղաքացիները բախվեցին երկընտրանքի՝ ինչպե՞ս ձևավորել բարոյական և առաքինի հասարակություն: Արդյունաբերական հեղափոխությունը և կապիտալիզմի տարածումը հանգեցրել էին բազմաթիվ հասարակական խնդիրների՝ կապված քաղաքների և առևտրի աճի հետ: Երկրորդ Մեծ զարթոնքը մասամբ հոգևոր արձագանքն էր նման փոփոխությունների: 1815-1861 թվականներին Միացյալ Նահանգներում բազմացան նաև բարեփոխական հասարակական միավորումները՝ միաձուլելով կրոնը և բարեփոխումները ամերիկյան մշակույթի զորեղ ցանցի մեջ, որը հայտնի է որպես բարեգործական կայսրություն (Benevolent Empire):

Բարեգործական բարեփոխումների շարժման առաջնորդներից էր արմատական վերածննդի ջատագով Չարլզ Գրանդիսոն Ֆիննին, ով առաջ մղեց «կատարելապաշտության» (“perfectionism”) շարժումը: Նա ելնում էր այն համոզմունքից, որ իսկապես փրկության արժանի քրիստոնյաները մղում ունեն ապրելու մեղքից ազատ և այդպիսով կմիանան բարեփոխումների շարժումներին՝ ստեղծելու Աստծո թագավորությունը երկրի վրա: Թեև կատարելապաշտությունը և անշահախնդիր բարեգործությունը բարեփոխումների միավորումների շարժիչ ուժերն էին, որոշ քարոզիչներ պնդում էին, որ քրիստոնյաների պարտականությունն էր բարելավել իրենց շրջապատող աշխարհը և ճանապարհի հարթել փրկության ու Քրիստոսի վերադարձի համար:

Բարեգործական կայսրությանն առնչվող հասարակական բարեփոխումների բոլոր շարժումներից ամենահաջողը ժուժկալության խաչակրաց արշավանքն էր: XIX դարի սկզբին ակոհոլի օգտագործումը կտրուկ աճել էր, և ակոհոլիզմը 1820-ականներին դարձել էր անհանգստացնող խնդիր Միացյալ Նահանգներում: Ժուժկալության շարժման բարեփոխիչները անմիջական կապ էին տեսնում ակոհոլի ու արատավոր այլ երևույթների միջև և, ամենակարևորը, համարում էին, որ դա վտանգում է ընտանեկան կյանքը: 1826 թվականին ավետարանական սպասավորները կազմակերպեցին Ամերիկյան ժուժկալության միությունը (American Temperance Society)՝ ակոհոլիզմի դեմ խաչակրաց արշավանքը համազգային մակարդակով տարածելու համար:

Կարևոր դեր ունեւր նաև Ամերիկյան աստվածաշնչային ընկերություն-

նը (American Bible Society), որը հազարավոր Ա. Գրքեր բաժանեց սահմանային տարածաշրջաններում, որտեղ եկեղեցիներն ու հոգևորականները սակավ էին: Բարեգործական կայսրության համար դժվարություններ առաջացան, երբ շարժումը փորձեց լուծել քաղաքական խնդիրներ: Հնդկացիների հեռացման դեմ շարժումը դրա առաջին խոշոր օրինակն էր: Շարժման կողմնակիցները ցնցված էին, երբ նախագահ Էնդրյու Ջեքսոնի ընտրությամբ նոր ազդակ տրվեց բնիկ ամերիկացիներին Միսիսիպի գետից արևելք ընկած տարածքներից հեռացնելու քաղաքականությամբ: 1830 թվականին ընդունված Հնդկացիների տեղափոխման օրենքը (Indian Removal Act) կատաղի հակազդեցության հանդիպեց բնիկ ամերիկյան համայնքների, ինչպես նաև բարեգործական կայսրության կողմից:

Փրկության, կատարելագործման և անշահախնդիր բարեգործության վերածննդի վարդապետությունները ստիպեցին շատ ավետարանական բարեփոխիչների հավատալ, որ ստրկությունը բոլոր մեղքերից վատագույնն է և ամենասարսափելի վնասն է հասցնում Միացյալ Նահանգների բարոյական առաքինությանը: Թեև ստրկության վերացման շահագրգռվածություն կար նաև սպիտակամորթների շրջանում, կազմակերպված հակաստրկատիրական քարոզչությունը հիմնականում սահմանափակված էր աստիճանական ազատագրման ծրագրերով, ինչպես կատարվեց ամերիկյան հեղափոխությունից հետո հյուսիսային նահանգներում, և պայմանական ազատագրման տեսլականով, ըստ որի՝ աֆրոամերիկացիները ազատվելուց հետո պետք է տեղափոխվեին Աֆրիկա: XIX դարի սկզբին աֆրիկյան գաղութացման այս շարժումը միավորել էր ամերիկացիների քաղաքական լայն շրջանակներ՝ խոստանալով աստիճանաբար վերջ դնել ստրկությանը Միացյալ Նահանգներում՝ հեռացնելով ազատ սևամորթ բնակչությանը Հյուսիսային Ամերիկայից:

Արևմտյան Աֆրիկայում Լիբերիայի գաղափարը սկիզբ առավ XIX դարի սկզբին՝ որպես Ամերիկյան գաղութային ընկերության (American Colonization Society) նախագիծ, որը կարծում էր, որ սևամորթներն Աֆրիկայում ազատության և բարգավաճման ավելի լավ հնարավորություններ կունենան, քան Միացյալ Նահանգներում: 1821 թ. ընկերությունը աֆրիկյան առաջնորդներից գնեց Փրովիդենս կղզին և նրա մոտակա ցամաքի հատվածը: Այդ տարածքում հիմնվեց ազատագրված աֆրոամերիկացիների բնակավայր Մոնրոպիա անվանումով՝ ի պատիվ ԱՄՆ նախագահ Ջեյմս Մոնրոյի, իսկ գաղութը կոչվեց Լիբերիա՝ ազատների երկիր: 1847 թվականին հռչակվեց Լիբերիայի Հանրապետությունը: Ներգաղթյալ աֆրոամերիկացիները՝ ամերիկա-լիբերիացիները, տիրապետող դիրք գրա-

վեցին պետական, վարչական մարմիններում և տնտեսության մեջ:

Այնուամենայնիվ, մինչև 1830-ական թվականները, հյուսիսային ազատ աֆրոամերիկացիների և միջին դասի ավետարանականների աճող նվիրումը հասարակական բարեփոխումներին, ինչպես նաև հակագաղութացման աճող տրամադրությունները արմատականացրին հակաստրկատիրական շարժումը: Առաջ մղվեց անհապաղ ազատագրման գաղափարը իբրև բարեփոխումների առաջնային օրակարգ: 1831 թ. Ուիլյամ Լլոյդ Գարիսոնը հիմնեց «Ազատարար» (The Liberator) թերթը, որի միջոցով կազմակերպեց և գլխավորեց աննախադեպ արշավ՝ հանուն անհապաղ ազատագրման և սևամորթների քաղաքացիական իրավունքների: 1833 թ. Գարիսոնը նախագահեց տասը նահանգների բարեփոխիչների հիմնած Ամերիկյան հակաստրկատիրական միությունը (American Anti-Slavery Society):

Վերածննդի և բարեփոխումների ժամանակաշրջանում կանայք ավելի տեսանելի և ակտիվ դարձան հասարակական ոլորտում, քան երբևէ: Երկրորդ Մեծ զարթոնքի ազդեցությունը, զուգորդված կանանց հասանելի նոր կրթական հնարավորություններով, միջին դասի սպիտակամորթ կանանց հնարավորություն տվեց ձևավորելու հասարակական կազմակերպություններ, որոնց հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում էր գրական հարցերից մինչև հակաստրկատիրական շարժում: Երբ 1830-1840-ականներին հակաստրկատիրական շարժումը մեծ թափ ստացավ հյուսիսային նահանգներում, մեծացան նաև կանանց իրավունքների համար ջանքերը:

1840 թ. Լոնդոնում կայացած Հակաստրկատիրական համաշխարհային համաժողովը մերժեց կին պատվիրակներին նստատեղ տրամադրել կամ թույլ տալ նրանց քվեարկել համաժողովում: Նման վերաբերմունքից զայրացած՝ Մոթն ու Էլիզաբեթ Քեդի Սթենթոնները վերադարձան Միացյալ Նահանգներ՝ հետամուտ լինելով կանանց իրավունքների պաշտպանությանը: 1848 թվականին Նյու Յորք նահանգում նրանք կազմակերպեցին Սենեկա Ֆոլսի համաժողովը, որտեղ կանանց իրավունքների պաշտպանները հավաքվեցին՝ քննարկելու կանանց առջև ծառայած խնդիրները: Սթենթոնը գրեց Սենեկա Ֆոլսի համաժողովի Զգացմունքների հռչակագիրը (Declaration of Sentiments for the Seneca Falls Convention), որը պաշտպանում էր սեփականության իրավունքը, մասնագիտությունների հասանելիությունը և քվեարկելու իրավունքը: Այնուամենայնիվ, կանանց իրավունքների շարժումը դեռևս դանդաղ էր զարգանում:

Ամփոփենք: XIX դարի առաջին կեսին ստրկացված աշխատուժի

վրա հիմնված հարավային գյուղատնտեսությունը սնուցում էր վարձու աշխատուժի վրա հիմնված և նոր միջին խավի կողմից կառավարվող հյուսիսային արդյունաբերությունը: Նոր տրանսպորտը, նոր կապը, նոր մեքենաները և աշխատանքի նոր կազմակերպությունները միասնացրեցին նախկին գաղութային տնտեսության մեկուսացված հատվածները ազգային արդյունաբերական գործունեության մեջ: Արդյունաբերականացումը և կանխիկ տնտեսությունը փոխկապակցեցին տարբեր տարածաշրջաններ, միևնույն ժամանակ, գաղափարաբանությունը և տարբեր տեսլականները միմյանցից վանեցին ամերիկացիներին:

Այսպիսով, մինչև 1861 թ. քաղաքացիական պատերազմը վերածննդի և բարեփոխումների շարժումները անջնջելի հետք էին թողել ամերիկյան հասարակության վրա: Երկրորդ Մեծ զարթոնքը խթանեց բողոքականությունը՝ միավորելով ավետարանական քրիստոնյաներին: Հասարակական բարեփոխումների շարժումները դրդեցին միջին խավի ամերիկացիներին առաջ մղելու ազգային բարոյականությունն ու հանրային բարիքը: Այնուամենայնիվ, ոչ բոլոր բարեփոխումների նախագծերն էին հաջողված:

Բամբակի հեղափոխությունը փոխակերպեց Հարավը: Այս եկամտաբեր ապրանքը բացեց նախկինում փակ հասարակությունը և փոխկապակցեց համաշխարհային շուկայի ու ազգային հասարակական հարթությունների հետ: Այս կերպ Հարավը և աշխարհը օգուտ քաղեցին Բամբակի հեղափոխությունից: Բայց այն ամենը, ինչ փայլում է, ոսկի չէ. ստրկությունը մնաց, և ներքին ստրկավաճառությունը հասավ անասելի բարձունքների: Աբոլիցիոնիստական հակաստրկատիրական շարժումը ճանապարհ հարթեց հատվածային համակեցական ճգնաժամի համար:

ԳԼՈՒԽ 7

Ժողովրդավարությունն Ամերիկայում Ջեքսոնի Ժամանակաշրջանում

Մարդկանց լայն շրջանակներ էին մասնակցել ամերիկյան հեղափոխությանը և վաղ հանրապետության քաղաքականությանը, հատկապես տեղական մակարդակում: Բայց հասարակ քաղաքացիների աճող անմիջական ազդեցությունը կառավարության վրա վախեցնում էր հիմնադիր ընտրախավերին:

1787 թվականի Սահմանադիր ժողովի ժամանակ Ալեքսանդր Համիլթոնը զգուշացրեց «ժողովրդավարության արատների» մասին և հայտարարեց, որ ինքը համարում է բրիտանական կառավարման համակարգը՝ իր թագավորով և հզոր խորհրդարանով, «աշխարհում լավագույնը»: Բազմության չափից շատ մասնակցությունը, ընտրախավերի կարծիքով, կխաթարեր լավ կարգը: Այն կկանխեր անվտանգ ու միասնական հանրապետական հասարակության ստեղծումը: Ֆիլադելֆիացի բժիշկ և քաղաքական գործիչ Բենջամին Ռաշը նկատում էր, որ հեղափոխությունը ժողովրդական ապստամբական ալիք էր բարձրացրել, որը կարող էր հանգեցնել վտանգավոր նոր տեսակի դեսպոտիզմի: «Միապետությանը հակադրվելով,- գրել է նա,- մենք մոռացել ենք, որ բռնակալության տաճարը երկու դուռ ունի: Դրանցից մեկը մենք ամրացրինք համապատասխան ամրագոտիներով. բայց մյուսին բաց թողեցինք՝ անտեսելով մեր տգիտության և անառակության հետևանքներից պաշտպանվելու անհրաժեշտությունը»:

XVIII դարի վերջին և XIX դարի սկզբին նման նախազգուշացումները չկարողացան ճնշել ամերիկացիների ժողովրդավարական ազդակները: Ընտրական գործընթացներին և քվեարկություններին ամերիկացիների մասնակցության աճող թվերը տպավորիչ էին: Քաղաքացիները նաև ակտիվորեն մասնակցում էին արտաընտրական գործընթացներին և կազմակերպում էին հրապարակային ցույցեր, ելույթներ էին ունենում կուսակցական միջոցառումներին, դիմումներ էին հղում Կոնգրեսին կամ բացահայտ քննադատում էին կառավարությանը և նախագահին՝ համարելով, որ ազատ ժողովուրդը չպետք է կաշկանդված լինի ընտրված ղեկավարներից: Շատերի աչքում ամերիկյան հանրապետությունը ժողովրդավարական հանրապետություն էր. ժողովուրդն ինքնիշխան էր ամբողջապես և մշտապես ոչ միայն ընտրությունների օրը:

Միսսուրիի ճգնաժամը

XIX դարի առաջին տասնամյակների ընթացքում ամերիկյան քաղաքականության առավել մտահոգիչ օրինաչափություն էր դառնում «հատվածային» (“sectional”) հակամարտությունը Հյուսիսի, Հարավի և Արևմուտքի նահանգների միջև: 1789 թվականին Սահմանադրության վավերացումից ի վեր Վիրջինիա նահանգն ավելի մեծ ազդեցություն ուներ դաշնային կառավարության վրա, քան ցանկացած այլ նահանգ: Առաջին հինգ նախագահներից չորսը Վիրջինիայից էին: Շուկայական հեղափոխության հետևանքով արագացած ներգաղթը խթանեց երկրի բնակչության արագ աճը հատկապես հյուսիսային նահանգներում, ինչպիսին Նյու Յորքն էր: Հյուսիսի քաղաքական առաջնորդները զգուշանում էին Վիրջինիայի և հարավային այլ նահանգների դաշնային քաղաքականության վրա անհամաչափ ազդեցությունից: Ավելին, շատ հյուսիսցիներ վախենում էին, որ ստրկությունը պաշտպանելու հարավային նահանգների ընդհանուր շահն ու հանձնառությունը Կոնգրեսում ստեղծում էր քվեարկության դաշինք, որը «ազատ նահանգների» համար դժվար կլիներ հաղթահարել: Հյուսիսը և Հարավը սկսեցին բախվել դաշնային քաղաքականության շուրջ, քանզի հյուսիսային նահանգները աստիճանաբար վերջ դրեցին ստրկությանը, բայց հարավային նահանգները սկսեցին ավելի ու ավելի շատ կախված լինել ստրկական աշխատանքից:

Այս աճող լարվածությունը ամենացայտուն կերպով դրսևորվեց Միսսուրիի ճգնաժամի (Missouri Crisis) ընթացքում: Երբ 1819 թվականին Միսսուրիի սպիտակամորթ վերաբնակիչները՝ Լուիզիանայի տարածաշրջանից վերակազմված նոր տարածքով, դիմեցին պետականության-նահանգի կարգավիճակի համար, հյուսիսային և հարավային նահանգների միջև քաղաքական ուժերի հավասարակշռությունը դարձավ հանրային բանավեճի կիզակետը: Միսսուրին արդեն ուներ ավելի քան 10 հազար ստրուկներ և պատրաստ էր Կոնգրեսում միանալ հարավային ստրկատիրական նահանգներին:

Համապատասխանաբար՝ Նյու Յորքից կոնգրեսական Ջեյմս Թալմեջը առաջարկեց ուղղում կատարել Միսսուրիի նահանգի կարգավիճակի հայտում: Թալմեջը պնդում էր, որ ստրկության հաստատությունը ծաղրում էր Անկախության հռչակագիրը և այն ազատությունը, որն այն խոստացել էր «բոլոր մարդկանց»: Նա առաջարկեց, որ Կոնգրեսը պետք է Միսսուրին ընդունի որպես նահանգ միայն այն դեպքում, եթե ստրուկների հետագա ներմուծումը այնտեղ արգելվի, իսկ տեղի ստրուկներից ծնված

երեխաները ազատ արձակվեն 25 տարեկանում: Թալմեջը և նրա համախոհ կոնգրեսականները դեմ էին ստրկությանը նաև բարոյական նկատառումներով, բայց նրանք նաև ցանկանում էին պահպանել ուժերի սեկցիոն հավասարակշռությունը: Չարմանալի չէ, որ Թալմեջի ուղղումը (Tallmadge Amendment) հանդիպեց հարավային քաղաքական գործիչների ամուր դիմադրությանը: Այն ընդունվեց Ներկայացուցիչների պալատում գրեթե բոլոր հյուսիսային կոնգրեսականների աջակցության շնորհիվ, որոնք այնտեղ մեծամասնություն ունեին, բայց արագորեն պարտվեց Սենատում:

Երբ Կոնգրեսը կրկին գումարվեց 1820 թվականին, Իլինոյսից՝ նոր արևմտյան նահանգից սենատոր Ջեսսի Թոմասը փոխզիջում առաջարկեց: Թոմասը հույս ուներ, որ իր առաջարկը ոչ միայն կավարտի Միսսուրիի ճգնաժամը, այլև կկանխի ստրկության և պետականության վերաբերյալ ապագա սեկցիոն-հատվածային վեճերը: Քենթաքից սենատոր Հենրի Բլեյը նպաստեց համաձայնության կայացմանը՝ վաստակելով «Մեծ փոխզիջող» (“the Great Compromiser”) մականունը: Նրանց գործարքը՝ 1820 թ. Միսսուրիի փոխզիջումը (Missouri Compromise), պարունակում էր երեք մաս: Նախ՝ Կոնգրեսը Միսսուրիին կընդուներ որպես ստրկատիրական նահանգ: Երկրորդ՝ Մեյնը, որը մինչ այդ Մասսչուսեթսի տարածքն էր, կընդունվեր որպես ազատ նահանգ՝ պահպանելով ազատ և ստրկատիրական նահանգների թվային հավասարակշռությունը: Երրորդ՝ Լուիզիանայի գնված տարածքի մնացած մասը կբաժանվեր 36°30' լայնության գծով, այն է՝ Միսսուրիի հարավային սահմանի երկայնքով: Ստրկությունը կարգելվեր այս գծից հյուսիս գտնվող այլ նոր նահանգներում, բայց այն կթույլատրվեր դրանից հարավ ընկած նոր նահանգներում: Փոխզիջումն ընդունվեց Կոնգրեսի երկու պալատների կողմից, և Միսսուրիի ճգնաժամն ավարտվեց խաղաղությամբ: Սակայն ոչ բոլորն էին իրենց թեթևացած զգում: Միսսուրիի ճգնաժամը անհնարին դարձրեց ամերիկյան քաղաքականության հատվածային բնույթի անտեսումը:

Միսսուրիի ճգնաժամը պառակտեց Դեմոկրատական-հանրապետական կուսակցությունը ամբողջությամբ հատվածային գծերով, ինչը հուշում էր առաջիկա անախորժությունների մասին: Ճգնաժամը ցույց տվեց ստրկության վերաբերյալ բանավեճի անկայունությունը: Շատ ամերիկացիներ՝ ներառյալ նախկին նախագահ Թոմաս Ջեֆերսոնը, անհանգստացած էին, թե ինչ պատրաստակամությամբ են որոշ ամերիկացիներ խոսում այդ հարցի շուրջ ապամիասնացման և նույնիսկ քաղաքացիական պատերազմի մասին: Միսսուրիի փոխզիջումը չկարողացավ լուծել դեպի նոր արևմտյան տարածքներ ստրկության ընդլայնման հարցը:

Էնդրյու Ջեքսոնի վերելքը

Էնդրյու Ջեքսոնի գործունեությունը (1767-1845) վաղ հանրապետության քաղաքական կյանքի թե՛ հնարավորությունների և թե՛ վտանգների վառ դրսևորումն էր: Իրավաբան, ստրկատեր ու գեներալ և, ի վերջո, Միացյալ Նահանգների 7-րդ նախագահ. այս բարդ ճանապարհն էր անցել նա՝ հասարակ սահմանային գաղութաբնակից դառնալով XIX դարի ամենահզոր ամերիկացիներից մեկը: Էնդրյու Ջեքսոնը ծնվել էր 1767 թվականի մարտի 15-ին Հյուսիսային և Հարավային Կարոլինաների սահմանին Հյուսիսային Իռլանդիայից ներգաղթյալների ընտանիքում: 13 տարեկանում նա միացել էր ամերիկյան աշխարհագրին և մասնակցել Հեղափոխական պատերազմին ու գերեվարվել. բրիտանացի մի սպա սրով հարվածել էր նրա գլխին այն բանից հետո, երբ նա հրաժարվել էր փայլեցնել սպայի կոշիկները: Պատերազմի ժամանակ հիվանդությունը խլել էր նրա երկու եղբայրների և մոր կյանքը՝ թողնելով նրան որբ: Նրանց մահը և իր վերքերը Ջեքսոնի մեջ Մեծ Բրիտանիայի նկատմամբ խորը և մշտական ատելություն թողեցին:

Պատերազմից հետո Ջեքսոնը տեղափոխվեց արևմուտք՝ սահմանամերձ Թենեսի, որտեղ նա բարգավաճեց՝ աշխատելով որպես իրավաբան և ձեռք բերելով հող ու ստրուկներ: 1796 թվականին Ջեքսոնն ընտրվեց ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի անդամ, իսկ մեկ տարի անց՝ Սենատի անդամ, թեև մեկ տարվա ընթացքում հրաժարական տվեց՝ վկայակոչելով իր ֆինանսական դժվարությունները:

1812 թվականի պատերազմի բռնկումից հետո իր քաղաքական կարգերի շնորհիվ Ջեքսոնը ստացավ գեներալի կոչում: Չնայած պատշաճ մարտական փորձի բացակայությանը՝ գեներալ Ջեքսոնն արագ տպավորեց իր զորքերին: Ջեքսոնն առաջնորդեց իր զորքը դեպի հարավարևելք, նախ՝ Քրիքի պատերազմում, որը սկսվեց ներկայիս Ալաբամայում գտնվող Մասքոգի (Քրիք) հնդկացիների տարբեր խմբավորումների միջև: Այդ պատերազմում նա վճռական հաղթանակ տարավ թշնամական ուժերի նկատմամբ 1814 թվականին: 1815 թ. հունվարին նա նաև ջախջախեց բրիտանական մեծ զորաբանակը Նոր Օռլեանի ճակատամարտում: Այնտեղ Ջեքսոնի զորքերը՝ ներառյալ աշխարհագրայինները, ազատ աֆրոամերիկացիները, բնիկ ամերիկացիները և ստրկավաճառ ծովահենները միասին հաջողությամբ պաշտպանեցին քաղաքը և ավելի քան երկու հազար զինվորի կորուստ պատճառեցին բրիտանացիներին՝ տալով մոտ երեք հարյուր զոհ: Նոր Օռլեանի ճակատամարտը Միացյալ Նա-

հանգների համար ոգևորիչ հաղթանակ էր, բայց այն տեղի ունեցավ Եվրոպայում պատերազմի ավարտն ավետող խաղաղության պայմանագրի ստորագրումից հետո: Պայմանագրի լուրը դեռ չէր հասել Նոր Օռլեան: Անկախության երկրորդ պատերազմի ավարտը չավարտեց Ջեքսոնի ռազմական կենսագրությունը:

1818 թվականին, որպես ԱՄՆ հարավային ռազմական շրջանի հրամանատար, Ջեքսոնը ներխուժեց իսպանացիներին պատկանող Ֆլորիդա: Նա գործում էր Պատերազմի քարտուղարության անորոշ հրամաններով՝ կոտրելու տարածաշրջանի սեմինոլ հնդկացիների դիմադրությունը, որոնք պաշտպանում էին փախած ստրուկներին և հարձակվում սահմանից այն կողմ ամերիկացի վերաբնակիչների վրա: 1816 թվականին Ջեքսոնի հրամանով ԱՄՆ զինվորները և նրանց Քրիքի դաշնակիցներն արդեն ավերել էին «Նեգրո Ֆորտը»՝ իսպանական տարածքի վրա կառուցված բրիտանական ամրոցը:

1818 թվականին Ջեքսոնի զորքերը կրկին հատեցին սահմանը: Նրանք գրավեցին Պենսակոլան՝ տարածաշրջանի գլխավոր իսպանական քաղաքը, և ձերբակալեցին երկու բրիտանահպատակների, որոնց Ջեքսոնը մահապատժի ենթարկեց սեմինոլներին օգնելու համար: Այս երկու բրիտանացիների մահապատժը առաջ բերեց միջազգային դիվանագիտական ճգնաժամ: Նախագահ Ջեյմս Մոնրոյի վարչակազմի պաշտոնյաներից շատերը կոչ արեցին դատապարտել Ջեքսոնին: Սակայն պետքարտուղար Ջոն Քուինսի Ադամսը՝ նախկին նախագահ Ջոն Ադամսի որդին, Ջեքսոնի վարքագիծն օգտակար համարեց: Նա պաշտպանում էր ինքնագլուխ գեներալին՝ պատճառաբանելով, թե նա ստիպված է գործել:

Ադամսն օգտագործեց Ջեքսոնի ռազմական հաջողությունները սեմինոլների դեմ առաջին պատերազմում, որպեսզի համոզի Իսպանիային ընդունել 1819 թվականի Ադամս-Օնի պայմանագիրը (Adams-Onís Treaty), որով Ֆլորիդան անցավ Միացյալ Նահանգներին: Ջոն Քուինսի Ադամսի և Էնդրյու Ջեքսոնի միջև ընկերական հարաբերությունները, սակայն, երկար չպահպանվեցին: 1824 թվականի ընտրություններում չորս թեկնածուներ էին մրցում նախագահի պաշտոնի համար՝ Ադամսը Մասաչուսեթսից, Ջեքսոնը Թենեսիից, Ուիլյամ Հ. Քրոուֆորդը Ջորջիայից և Հենրի Քլեյը Քենթաքիից: Ջեքսոնը հավաքեց ավելի շատ ժողովրդական ձայներ: Սակայն ընտրական կոլեգիայում թեկնածուներից ոչ ոք մեծամասնություն չունեցավ, և ընտրությունները փոխադրվեցին Ներկայացուցիչների պալատ: Այնտեղ Ադամսն օգտագործեց իր քաղաքական ազդեցությունը նախագահի պաշտոնը ստանալու համար՝ համոզելով Քլեյին աջակցել իրեն:

Ջեքսոնը երբեք չէր ներելու Ադամսին, որին իր կողմնակիցները մեղադրում էին Քլեյի հետ «կոռուպցիոն գործարք» կազմակերպելու մեջ՝ ժողովրդական կամքը շրջանցելու համար:

Չորս տարի անց՝ 1828 թվականին, Ադամսն ու Ջեքսոնը կրկին մրցեցին նախագահական ընտրություններում, որը մինչ օրս համարվում է ԱՄՆ նախագահական ամենակեղտոտ ընտրապայքարներից մեկը: Ջեքսոնի կողմնակիցները մեղադրում էին Ադամսին էլիտարիզմի մեջ: Նրանք նաև վատաբանեցին Ադամսին՝ հայտարարելով, որ Ռուսաստանում որպես դիվանագետ ծառայելիս նա իբր թե ռուսաց կայսերն առաջարկել էր ամերիկուհի մարմնավաճառի: Մյուս կողմից՝ Ադամսի կողմնակիցները մեղադրեցին Ջեքսոնին մարդասպանության մեջ և հարձակվեցին նրա ամուսնության բարոյականության վրա՝ մատնանշելով, որ Ջեքսոնն ամուսնացել էր իր կնոջ՝ Ռեյչելի հետ, նախքան վերջինիս նախորդ ամուսնության ամուսնալուծության ավարտը: Այս անգամ Էնդրյու Ջեքսոնը հեշտությամբ հաղթեց ընտրություններում, սակայն Ռեյչել Ջեքսոնը հանկարծամահ եղավ նրա երդմնակալությունից առաջ: Ջեքսոնը երբեք չներեց այն մարդկանց, ովքեր քարոզարշավի ժամանակ հարձակվել էին իր կնոջ բարոյական կերպարի վրա:

1828 թվականին Ջեքսոնի՝ պատերազմի հերոսի համբավը նրան նախագահ դարձրեց. նա «Նոր Օռլեանի հերոսն» էր և ներկայանում էր իբրև հասարակ ժողովրդի առաջնորդ: Պատերազմի ժամանակ նրա ձեռքբերումները առաջացնում էին շատ ընտրողների հպարտությունը: Հաջորդ ութ տարիներին Ջեքսոնը պնդելու էր, որ ներկայացնում է հատկապես Հարավի և Արևմուտքի հասարակ սպիտակամորթ ամերիկացիների շահերը երկրի հարուստ և հզոր ընտրախավերի դեմ:

Չեղյալացման ճգնաժամը

Նախագահ Ջեքսոնը ամերիկացիների մի մասի համար մարմնավորում էր ժողովրդավարական կառավարությունը և ժողովրդական իշխանությունը: Մյուսների համար նա զորեղ, բայց անպատասխանատու և ամբարտավան նախագահ էր: Նրա նախագահության ընթացքում ամերիկացիներին բաժանող հիմնական հարցերից մեկը ազգային հարկային քաղաքականության վերաբերյալ հատվածային վեճն էր: Երբ Էնդրյու Ջեքսոնը տեղափոխվեց Սպիտակ տուն, հարավցիների մեծամասնությունն ակնկալում էր, որ նա կվերացնի 1828 թվականի ատելի մաքսատուրքը, այսպես կոչված՝ Չագրելի հարկացուցակը (Tariff of Abominations): Ներ-

մուծման այս մաքսատուրքը պաշտպանում էր հյուսիսային արտադրական շահերը՝ բարձրացնելով եվրոպական ապրանքների գները Ամերիկայում: Հարավացիները, սակայն, մեղադրում էին, որ մաքսատուրքի քաղաքականությունը միտված է հարստության զանգվածային փոխանցմանը Հարավից Հյուսիս: Դա նրանց ստիպում էր ապրանքներ գնել Հյուսիսի արտադրողներից ավելի բարձր գներով, և դա դրդեց եվրոպական երկրներին հակահարված տալ իրենց մաքսատուրքերի բարձրացմամբ՝ նվազեցնելով Հարավի հումքի արտահանման ծավալները:

Սակայն միայն Հարավային Կարոլինայում անհանգստությունը վերածվեց կազմակերպված գործողությունների: Նահանգը դեռ փորձում էր թոթափել 1819 թվականի տնտեսական խուճապի (Panic of 1819) հետևանքները: Հարավային Կարոլինայի ընտրախավերը հատկապես անհանգստացած էին, որ մաքսային օրենսդրությունը պարզապես նախաքայլ էր ստրկությունը սահմանափակող դաշնային օրենսդրության ընդունման համար:

Էնդրյու Ջեքսոնի փոխնախագահ Ջոն Քալիունը, ով Հարավային Կարոլինայից էր, հայտնվեց նեղ դրության մեջ: 1828 թվականին Քալիունը գաղտնի ձևակերպեց «Հարավային Կարոլինայի բացատրությունն ու բողոքը» (“South Carolina Exposition and Protest”) էսսեն և բանաձևերի մի շարք, որոնք ներկայացնում էին չեղյալացման դոկտրինը: Ելնելով Վիրջինիայի և Քենթաքիի 1798 և 1799 թվականների բանաձևերից՝ Քալիունը պնդում էր, որ Միացյալ Նահանգները դաշինք էր նահանգների, այլ ոչ թե ամբողջ ամերիկյան ժողովրդի միջև: Քանզի նահանգներն (պետություններն) էին ստեղծել Միությունը, նա պատճառաբանեց, որ նրանք դեռ ինքնիշխան էին, հետևաբար նահանգը կարող էր չեղյալացնել այն դաշնային օրենքը, որը համարում էր հակասահմանադրական: Ուստի մյուս նահանգները կամ պետք է ընդունեին չեղյալացման իրավունքը կամ համաձայնեին լրամշակելու Սահմանադրությունը: Անհրաժեշտության դեպքում չեղյալացնող նահանգը կարող էր դուրս գալ Միությունից:

Երբ Քալիունի կողմից էսսեն հեղինակելու հանգամանքը հանրայնացվեց, Ջեքսոնը զայրացավ՝ մեկնաբանելով այն որպես անձնական դավաճանություն և իր՝ որպես նախագահի հեղինակության դեմ ուղղված մարտահրավեր: Նրա ամենադրամատիկ դիմակայությունը Քալիունի հետ տեղի ունեցավ 1832 թվականին՝ Թոմաս Ջեֆերսոնի հիշատակի միջոցառման ժամանակ: Ընթրիքի ժամանակ նախագահը վեր կացավ և կենաց ասաց. «Մեր դաշնային միությունը՝ այն պետք է պահպանվի»: Քալիունը պատասխանեց սեփական կենսոգով. «Միությունը՝ մեր ամենա-

թանկ Ազատությունից հետո»: Մարտին վան Բյուրենը՝ Նյու Յորքի քաղաքական առաջնորդներից, որը գործարքներ կնքելու հմտության շնորհիվ վաստակել էր «Փոքրիկ հրաշագործ» մականունը, փոխարինեց Քալիուինին փոխնախագահի պաշտոնում, երբ Ջեքսոնը վերընտրվեց 1832 թվականին:

Քալիուինը վերադարձավ Հարավային Կարոլինա, որտեղ հատուկ նահանգային համաժողովը չեղյալ հայտարարեց 1828 և 1832 թվականների դաշնային մաքսատուրքերը: Այն հայտարարեց, որ դրանք հակասահմանադրական են և, հետևաբար, «գրոյական, անվավեր և անօրինական» Հարավային Կարոլինայում: Համաժողովը հրամայեց Հարավային Կարոլինայի մաքսային ծառայողներին չհավաքել մաքսային եկամուտները և հայտարարեց, որ մաքսատուրքերը պարտադրելու ցանկացած դաշնային փորձ կհանգեցնի նահանգի անջատմանը Միությունից:

Նախագահ Ջեքսոնը կտրուկ արձագանքեց: Նա դատապարտեց դաշնային օրենքը անվավեր ճանաչելու որոշումը և հայտարարեց, որ «զինված ուժով անջատումը դավաճանություն է»: Խոստանալով կախել Քալիուինին և ցանկացած այլ չեղյալացնողի ու դաշնային իշխանության դեմ ըմբոստացողի՝ նախագահը համոզեց Կոնգրեսին ընդունել ուժի կիրառման մասին օրինագիծ (Force Bill), որը լիազորում էր նրան զորքեր ուղարկել՝ մաքսատուրքերը կիրառելու համար:

Նման սպառնալիքների առաջ կանգնելով՝ հարավային մյուս նահանգները հրաժարվեցին միանալ Հարավային Կարոլինային: Այնուամենայնիվ, մասնավոր կերպով Ջեքսոնը պաշտպանեց փոխզիջման գաղափարը և թույլ տվեց իր քաղաքական հակառակորդ Հենրի Քլեյին միջնորդել ու լուծում գտնել Քալիուինի հետ: Կոնգրեսն ընդունեց փոխզիջումային օրինագիծ, որը դանդաղորեն նվազեցրեց դաշնային մաքսերի դրույքաչափերը: Հարավային Կարոլինան չեղյալ հայտարարեց իր ընդունած մաքսերի չեղյալացման օրենքը, բայց և անվավեր հայտարարեց ուժի կիրառման մասին դաշնային օրինագիծը: Չեղյալացման ճգնաժամը (Nullification Crisis) հաղթահարվեց Ջեքսոնի վճռական գործողություններով, բայց ճգնաժամը նաև միավորեց անջատման և նահանգների իրավունքների գաղափարները՝ երկու հղացքներ, որոնք նախկինում փոխկապակցված էին:

Բանկային պատերազմը

Էնդրյու Ջեքսոնի նախագահության առաջին ժամկետը լի էր հակասություններով: Չնայած ռազմական և քաղաքական առաջնորդի իր համբավին՝ նրա նախագահության ամենաբնութագրական պայքարը ֆինանսական ոլորտում էր: Որպես նախագահ նա «պատերազմում» էր Միացյալ Նահանգների բանկի դեմ: Վիճահարույց ազգային բանկի կանոնադրության գործողության ժամկետը, որը Կոնգրեսը ստեղծել էր Ալեքսանդր Համիլթոնի ֆինանսական ծրագրով, լրացել էր 1811 թվականին: Բայց հինգ տարի անց Կոնգրեսը հաստատել էր Միացյալ Նահանգների բանկի նոր կանոնադրությունը: Բանկի գլխամասային գրասենյակը գտնվում էր Ֆիլադելֆիայում: Բանկը կոչված էր կայունացնելու ամերիկյան աճող տնտեսությունը: Մյուս բանկերից պահանջելով անհապաղ վճարել իրենց պարտքերը ոսկով՝ ենթադրվում էր, որ այն պետք է թույլ չտար նրանց թողարկել չափազանց շատ թղթադրամներ՝ կանխելով հանկարծակի արժեզրկումը: Իհարկե, Միացյալ Նահանգների բանկը նաև պետք է առողջ շահույթ ապահովեր իր մասնավոր բաժնետերերի համար:

Թեև շատ դեմոկրատ-հանրապետականներ աջակցել էին նոր բանկին, ոմանք էլ երբեք չհրաժարվեցին ջեֆերսոնյան կասկածամտությունից, որ նման հզոր հաստատությունը վտանգավոր էր հանրապետության համար: Էնդրյու Ջեքսոնը թերահավատներից մեկն էր: Նա և իր համախոհներից շատերը մեղադրում էին բանկին 1819 թվականի ֆինանսական խուճապի համար, որը վերածվել էր ծանր տնտեսական ճգնաժամի: Ազգային բանկը նպաստել էր այդ ճգնաժամի խորացմանը՝ նախ անպատասխանատու կերպով վարկավորելով, իսկ հետո, երբ խուճապը սկսվեց, կուտակելով ոսկի արժույթ՝ փոքր բանկերի և նրանց հաճախորդների հաշվին իրեն փրկելու նպատակով: Ջեքսոնի կողմնակիցները նաև կարծում էին, որ բանկը կոռումպացրել է բազմաթիվ քաղաքական գործիչների՝ նրանց ֆինանսական արտոնություններ տալով:

1829 թվականին, մի քանի ամիս պաշտոնավարելուց հետո, Ջեքսոնն իր հայացքն ուղղեց բանկի և նրա տնօրեն Նիկոլաս Բիդլի վրա: Ջեքսոնն ավելի համառ դարձավ հաջորդ երեք տարիներին, երբ Բիդլը և բանկի աջակիցները պայքարում էին այն փրկելու համար: Ջեքսոնի համար պայքարը անձնական ճգնաժամ էր: «Բանկը փորձում է սպանել ինձ,- ասել էր նա Մարտին վան Բյուրենին,- բայց ես կսպանեմ նրան»: Բանկի կանոնադրության վերջնաժամկետի երկարաձգմանը դեռ մի քանի տարի կար, բայց 1832 թվականին, երբ Ջեքսոնը վերընտրության մրցապայքարի մեջ

էր, Կոնգրեսը վաղաժամ քվեարկություն անցկացրեց Միացյալ Նահանգների բանկի վերահաստատման համար: Նախագահը վետո դրեց օրինագծի վրա: Վետոյի իր ուղերձում Ջեքսոնը բանկն անվանեց հակասահմանադրական և «վտանգավոր մարդկանց ազատությունների համար»: Նա բացատրեց, որ կանոնադրությունը բավարար չափով չի երաշխավորում բանկի պաշտպանությունը իր բրիտանացի բաժնետերերից, որոնք կարող էին անտեսել ամերիկացիների շահերը: Բացի այդ, ըստ Ջեքսոնի՝ Միացյալ Նահանգների բանկը գործնականում դաշնային գործակալություն էր, բայց այն ուներ լիազորություններ, որոնք սահմանադրությամբ ոչ մի տեղ տրված չէին: Եվ ամենավատն այն էր, որ բանկը լավ կապեր ունեցող մարդկանց համար ուրիշների հաշվին հարստանալու միջոց էր:

Թեև կանոնադրությունը չերկարաձգվեց, Միացյալ Նահանգների բանկը դեռ կարող էր գործել ևս մի քանի տարի: Այսպիսով, 1833 թվականին բանկի հզորությունը նվազեցնելու նպատակով Ջեքսոնը նաև հրահանգեց իր վարչակազմին դադարեցնել դաշնային միջոցների ներդրումը բանկում: Փոխարենը կառավարությունն այսուհետ իր ֆինանսական գործերը կվարեր ընտրված այլ բանկերի հետ: Քննադատները դրանք անվանեցին Ջեքսոնի «ընտանի բանկեր»:

Ջեքսոնի բանկային վետոն կատաղի հակասությունների տեղիք տվեց: Ֆիլադելֆիայում հակառակորդները հանդիպում անցկացրին և հայտարարեցին, որ նախագահի գաղափարները վտանգավոր են մասնավոր սեփականության համար: Նրանք ասում էին, որ Ջեքսոնը մտադիր էր «աշխատասեր քաղաքացու ազնիվ վաստակը դնել անբանների տրամադրության տակ», այլ կերպ ասած՝ հարստությունը վերաբաշխել ծույլ մարդկանց միջև ու դառնալ «բռնապետ»: Նրա ընդդիմախոս թերթերից մեկը հայտարարում էր, որ Ջեքսոնը փորձում է «աղքատներին ընդդեմ հարուստների» հանել, հավանաբար, որպեսզի ստանձնի ռազմական բռնակալի իշխանությունը: Բայց Ջեքսոնի կողմնակիցները գովաբանում էին նրան: Ջեքսոնի կողմնակից թերթերը գրում էին, որ նա կանխում է «դրամականացված արիստոկրատիայի» կողմից ժողովրդի նվաճումը:

Նախագահ Ջեքսոնին օժտելով հարուստներին ու հզորներին դիմակայողի վառ կերպարով՝ Բանկային պատերազմը (Bank War) նախագահի կողմնակիցներին տվեց հատուկ «ժողովրդավարական» գաղափար, որի շուրջը պետք է համախմբվեին: Ավելի քան ցանկացած այլ հարց, ազգային բանկին ընդդիմանալը որոշիչ դարձավ նրանց համոզմունքների համախմբման և կարծրացման համար: Բանկային պատերազմը մի կողմից Ջեքսոնին դրդեց Կոնգրեսի դեմ կիրառելու գործադիր իշխանությունը,

մյուս կողմից օգնեց նրա քաղաքական թշնամիներին կազմակերպվելու:

Ըստ այդմ՝ Էնդրյու Ջեքսոնի կողմնակիցներն իրենց դեմոկրատներ էին անվանում: Մարտին վան Բյուրենի ռազմավարական ղեկավարությամբ նրանք կառուցեցին բարձր կազմակերպված ազգային քաղաքական կուսակցություն՝ առաջին արդի քաղաքական կուսակցությունը Միացյալ Նահանգներում: Ի տարբերություն վաղ շրջանի քաղաքական կուսակցությունների՝ Դեմոկրատական կուսակցությունն (Democratic Party) ուներ կենտրոնացված ղեկավար կառույց և հետևողական գաղափարաբանական ծրագիր կառավարման բոլոր մակարդակների համար: Միևնույն ժամանակ, Ջեքսոնի թշնամիները, ծաղրելով նրան իբրև «Արքա Էնդրյու Առաջին» (“King Andrew the First”), իրենց կուսակցությունն անվանեցին Ամերիկյան հեղափոխության հայրենասերների՝ վիգերի (Whigs) անունով:

1837 թվականի խուճապը

Ջեքսոնյան դեմոկրատների և ամերիկացիների մեծամասնության հաղթանակը Միացյալ Նահանգների բանկի նկատմամբ ավելի վատթարացրեց երկրի տնտեսական խնդիրները: Սկզբում գործերը լավ էին թվում: 1834-1836 թվականներին բամբակի բարձր գները ազատորեն հասանելի օտարերկրյա և ներքին վարկերի ու Եվրոպայից հնչուն դրամի՝ ոսկու և արծաթի հետ համակցմամբ խթանեցին ամերիկյան տնտեսության կայուն վերելքը: Միևնույն ժամանակ, դաշնային կառավարության կողմից արևմտյան հողերի վաճառքը նպաստեց ֆինանսական սպեկուլյացիաներին և վատ կանոնակարգված վարկավորման գործընթացին՝ ստեղծելով անշարժ գույքի հսկայական փուչիկ:

Պետական հավատարմագրում ունեցող բանկերի թիվը 1830 թվականի 329-ից ընդամենը վեց տարի անց հասավ 713-ի: Արդյունքում 1834-1836 թվականներին Միացյալ Նահանգներում թղթադրամների շրջանառության ծավալը մեկ շնչի հաշվով աճեց 40 տոկոսով: Մեծ Բրիտանիայում ցածր տոկոսադրույքները նաև խրախուսեցին բրիտանացի կապիտալիստներին ռիսկային ներդրումներ կատարել Ամերիկայում: Բրիտանական վարկերը Ատլանտյան օվկիանոսից անդին աճեցին՝ նույն երկու տարվա ընթացքում ամերիկյան արտաքին պարտքը 110 միլիոն դոլարից հասցնելով 220 միլիոն դոլարի: Ֆինանսական ոլորտի արագ աշխուժացմանը զուգընթաց՝ բանկերն ավելի անփույթ դարձան իրենց թղթադրամները հատուցելու համար պահվող պինդ արժույթի քանակի նկատմամբ:

Ու թեև Ջեքսոնը հույս ուներ, որ իր բանկային վետոն կնվազեցնեք բանկիրների և սպեկուլյանտների իշխանությունը տնտեսության վրա, այն իրականում ավելի խորացրեց խնդիրները:

Ջեքսոնի վարչակազմի վերջին երկու դաշնային գործողությունները նույնպես վատթարացրին իրավիճակը: 1836 թվականի հունիսին Կոնգրեսը որոշեց ավելացնել դաշնային ավանդներ ստացող բանկերի թիվը: Այս ծրագիրը վնասում էր այն բանկերին, որոնք արդեն իսկ ստանում էին դաշնային դրամական միջոցներ, քանզի իրենց տրվելիք միջոցները վերաբաշխվում էին այլ բանկերի վրա: Այնուհետև, ձգտելով նվազեցնել վարկային սպեկուլյացիաները, ԱՄՆ գանձապետարանը 1836 թվականի հուլիսին հրաման արձակեց, որը կոչվում էր Հնչուն դրամի շրջաբերական (Specie Circular), որը պահանջում էր բոլոր դաշնային հողերի գնումների համար վճարել պինդ արժույթով: Արդյունքում՝ հողի գնորդները դատարկեցին արևելյան բանկերի ոսկին և արծաթը:

1836 թվականի աշնան վերջին Ամերիկայի տնտեսական փուչիկները սկսեցին պայթել: Դաշնային հողերի վաճառքը կտրուկ նվազեց, իսկ գները ընկան. սկսվեց սղաճը: 1837 թվականի մայիսի 4-ին Նյու Յորքում սկսվեց բանկային ճգնաժամը. խուճապի մատնված հաճախորդները լցվում էին բանկերը և փորձում էին փոխանակել իրենց թղթադրամները պինդ արժույթով: Մայիսի 10-ին Նյու Յորքի բանկերը, սպառելով ոսկու և արծաթի պաշարները, դադարեցին հատուցել թղթադրամների համար: Երբ լուրերը տարածվեցին, ամբողջ երկրի բանկերը նույնն արեցին: Մայիսի 15-ին Փենսիլվանիայի պատմության մեջ ամենամեծ բազմությունը հավաքվեց Ֆիլադելֆիայում Անկախության պալատի մոտ՝ դատապարտելով բանկային գործունեությունը որպես «խարդախության և ճնշումների համակարգ»:

1837 թվականի խուճապը (Panic of 1837) հանգեցրեց ընդհանուր տնտեսական ճգնաժամի: 1839-1843 թվականներին ամերիկյան բանկերի ընդհանուր կապիտալը նվազեց 40 տոկոսով, քանզի գներն ընկել էին, իսկ տնտեսական ակտիվությունը ողջ երկրում՝ նվազել ու դանդաղել: Նախորդ տասնամյակի ընթացքում ամերիկյան տնտեսությունը հասել էր աներևակայելի նոր բարձունքների և կտրուկ ընկել՝ ընկղմվելով նոր խորը ճգնաժամի մեջ: Փակվեցին երկու հարյուր բանկեր, կանխիկ դրամն ու վարկերը սակավացան, գները նվազեցին և առևտուրը դանդաղեց: Այս անկման ընթացքում ութ նահանգներ և մեկ տարածքային կառավարություն հայտնվեցին դեֆոլտի շեմին՝ չկարողանալով սպասարկել բրիտանական բանկերի կողմից տրված վարկերը, որոնք փոխառվել էին ներքին

բարելավումները ֆինանսավորելու համար: Բնականոն բանկային գործունեությունը երկրում վերականգնվեց միայն 1842 թվականի վերջին:

Վիգերի վերելքը

1837 թվականի տնտեսական ճգնաժամը հնարավորություն ստեղծեց վիգերի կուսակցության համար, որը մասամբ ծնվել էր Ջոն Քուինսի Ադամսի և Հենրի Բլեյի քաղաքական դաշինքից և հակադրվել էնդրյու Ջեքսոնին ու Դեմոկրատական կուսակցությանը: Հյուսիս-արևելքում կենտրոնացած Ազգային հանրապետականների թույլ դաշինքը դարձել էր հակաջեքսոնյան նոր շարժման առանցքը: Սակայն Ջեքսոնի քաղաքական հակառակորդները բազմազան խմբեր էին ներկայացնում. դրանք ներառում էին ստրկության կողմնակից հարավցիների, որոնք զայրացած էին Չեյլալացման ճգնաժամի ժամանակ Ջեքսոնի գործողություններից, ինչպես նաև հակաստրկատիրական Յանկիների (Yankees): Այն բանից հետո, երբ նրանք չկարողացան կանխել էնդրյու Ջեքսոնի վերընտրությունը, այս փխրուն դաշինքը 1834 թվականին պաշտոնապես կազմակերպվեց որպես նոր կուսակցություն՝ հանուն «կառավարության և հանրային ազատության փրկության»: Հենրի Բլեյը, ով նախագահական ընտրություններում Ջեքսոնի մրցակիցներից էր և այդժամ կրկին սենատոր էր, մասնավոր հանդիպումներ անցկացրեց՝ փորձելով համոզել հակաջեքսոնյան շարժման տարբեր առաջնորդներին միավորվել: Նա նաև նոր Վիգ կուսակցությանը (Whig Party) տվեց իր հակամիապետական անվանումը:

Սկզբում վիգերը հիմնականում կենտրոնանում էին Կոնգրեսում տեղեր ստանալու վրա՝ «արքա էնդրյուին» օրենսդիրում ընդդիմանալու համար: Այնուամենայնիվ, վիգերը շարունակում էին մնալ բաժանված տարածաշրջանային և գաղափարաբանական տարբերություններով: Դեմոկրատական կուսակցությունից նախագահի թեկնածու փոխնախագահ Մարտին վան Բյուրենը, որպես Ջեքսոնի իրավահաջորդ, հեշտությամբ հաղթեց 1836 թվականի նախագահական ընտրություններում: Սակայն 1837 թվականի խուճապից հետո վիգերը ձեռք բերեցին զգալի հանրային աջակցություն: Աստիճանաբար նրանք ավելի ու ավելի լավ կազմակերպված կուսակցություն էին դառնում:

1839 թվականի վերջին նրանք իրենց առաջին ազգային համաժողովն անցկացրեցին Հարիսբուրգում (Փենսիլվանիա): Համաժողովը քվեարկեց ոչ թե Հենրի Բլեյի, այլ Օհայոյից գեներալ Ուիլյամ Հենրի Հարիսոնի օգտին՝ 1840 թվականի ընտրություններում նախագահի թեկնածու առաջադրելու համար: Հարիսոնը հիմնականում հայտնի էր նրանով, որ հաղթել էր բնիկ ամերիկացիների ուժերին 1812 թվականի պատերազ-

մից առաջ և դրա ընթացքում, մասնավորապես, 1812 թ. Տիպպեկանոյի ճակատամարտում՝ ներկայիս Ինդիանայի տարածքում: Վիգերի առաջնորդները նրան դիտարկում էին լայն հայրենասիրական լույսի ներքո և ներկայացնում էին իբրև ժողովրդական թեկնածու, երկրի պարզ մարդ՝ ի հակադրություն արևելքի Մարտին վան Բյուրենի: Հարավի ընտրողներին սիրաշահելու համար վիգերը փոխնախագահի պաշտոնի համար առաջադրեցին Վիրջինիայի ստրկատեր սենատոր Ջոն Թայլերին: Թայլերը Ջեքսոնի կողմնակիցն էր, բայց նրա հետ խզել էր իր կապերը նահանգների իրավունքների համար պայքարի՝ Չեյլալացման ճգնաժամի ժամանակ:

Թեև «Տիպպեկանոն և Թայլերը ևս» (Tippecanoe and Tyler Too) զույգը հեշտությամբ հաղթեց 1840 թվականի նախագահական ընտրություններում, այս ձևաչափի ընտրությունը աղետալի եղավ վիգերի կուսակցության համար: Հարիսոնը հիվանդացավ (անհասկանալի պատճառներով, թեև, ըստ լուրերի, նա հիվանդացել էր թոքաբորբով այն բանից հետո, երբ մոտ երկու ժամ տևած երդմնակալության ելույթն ունեցել էր առանց վերարկուի և գլխարկի) և մահացավ ընդամենը 31 օր պաշտոնավարելուց հետո: Հարիսոնը նախագահական երդմնակալության ամենաերկար ելույթն ունեցած և ամենակարճ ժամկետը պաշտոնավարած ԱՄՆ նախագահն էր: Այսպիսով, փոխնախագահ Թայլերը դարձավ նախագահ և շուտով որդեգրեց այնպիսի քաղաքականություն, որն ավելի շատ նման էր Էնդրյու Ջեքսոնի մոտեցումներին, քան վիգերի պատկերացումներին: Այն բանից հետո, երբ Թայլերը երկու անգամ վետո դրեց Միացյալ Նահանգների բանկի կանոնադրության հաստատման վրա, նրա գրեթե ողջ վարչակազմը հրաժարական տվեց, և Կոնգրեսի վիգերը հեռացրին նրան կուսակցությունից:

Թայլերի վարչակազմի ճգնաժամը վեր հանեց Վիգ կուսակցության ներքին դժվարությունները դեմոկրատների դեմ հակազդեցությունից զատ այլ խնդիրների շուրջը համախմբվելու համար: Վիգերի կուսակցությանը հաջողվեց ընտրել ևս երկու նախագահներ: Այդուհանդերձ, նրանք շարունակեցին մնալ խորապես բաժանված: 1850-ականներին կուսակցության խնդիրները շարունակեցին մեծանալ, քանզի ստրկության հիմնահարցը լարեց Միության ներքաղաքական իրավիճակը: Այսպիսով, չկարողանալով համաձայնության գալ ստրկության վերաբերյալ համահունչ ազգային դիրքորոշման շուրջ և չկարողանալով գտնել համախմբող մեկ այլ ազգային խնդիր, 1856 թվականին վիգերը բաժանվեցին:

Հակամասոնները, հականերգաղթյալները և Վիգերի դաշինքը

Վիգերի դաշինքն ուժ ստացավ ավելի վաղ ձևավորված մի քանի կուսակցություններից, այդ թվում 1820-ականներին ստեղծված Հակամասոնական կուսակցությունից (Anti-Masonic Party): Այն նպատակ ուներ ոչնչացնել մասոնականությունը (Freemasonry), որն առաջացել էր միջնադարյան Եվրոպայում՝ իբրև քարտաշների արհմիություն: Այնուամենայնիվ, XIX դարում այն դարձել էր համընդհանուր աշխարհիկ եղբայրական միաբանություն, որը հռչակում էր իր հավատարմությունը Լուսավորության իդեալներին: Մասոնությունը նոր ամերիկյան հանրապետության ընտրախափ տղամարդկանց ընկերային կյանքի կարևոր մասն էր, սակայն մասոնական եղբայրության գաղտնիությունը, էլիտարությունը, ծեսերը և աշխարհիկ իդեալները շատ ամերիկացիների մեջ խորը կասկածներ առաջացրին կազմակերպության նկատմամբ:

1820-ականներին Նյու Յորքի հյուսիսում, որը պարարտ հող էր կրոնական և հասարակական բարեփոխումների նոր շարժումների համար, հակամասոնական կասկածներ և տրամադրություններ առաջացան՝ կապված Ուիլյամ Մորգանի տարօրինակ անհետացման և հավանական սպանության հետ: Մորգանը հայտարարել էր մասոնական գաղտնի ծեսերը հրապարակելու իր ծրագրի մասին, և դա զայրացրել էր տեղի մյուս մասոններին: Նրանք ձեռնարկեցին մի շարք փորձեր՝ կանխելու գրքի հրատարակումը: Այնուհետև Մորգանը անհետացավ. վերջին անգամ տեսել էին, թե ինչպես են չորս տղամարդիկ ստիպել նրան նստել կառքը, որոնք հետագայում ճանաչվել էին որպես մասոններ: Մորգանի պատմությունը և դատավարությունները տեղական զայրույթը վերածեցին քաղաքական շարժման, որը թեև փոքր, բայց զգալի ուժ էր Նյու Յորքում և Նոր Անգլիայի որոշ մասերում: Այս շարժումը նաև հասցեագրեց ամերիկացիների լայնածավալ դժգոհությունը տնտեսական և քաղաքական փոփոխությունների վերաբերյալ՝ վատթար իրավիճակը կապելով մասոնականության հետ և հայտարարելով, թե հանրապետությունը վերահսկվում է գաղտնի հասարակության կողմից:

1828 թվականին հակամասոնական քաղաքական գործիչները առաջադրվեցին Նյու Յորքի նահանգային ընտրություններում՝ ստանալով նահանգապետական ընտրությունների ձայների 12 տոկոսը: 1830 թվականին հակամասոնները Ֆիլադելֆիայում անցկացրին ազգային համագումար: 1832 թվականի նախագահական ընտրություններից հետո հակամասոնական կուսակցության առաջնորդներն իրենց շարժումն ուղղոր-

դեցին նոր Վիգ կուսակցության շարքերը: Հակամասոնական կուսակցության ներծծումը վիգերի դաշինքի մեջ ցույց տվեց դավադրության տեսությունների կարևորությունը ամերիկյան քաղաքականության մեջ: Այնպես, ինչպես Էնդրյու Ջեքսոնի հետևորդներն էին հայտնաբերել օտարերկրյա մեծ դավադրություն՝ ի դեմս Միացյալ Նահանգների բանկի, նրա որոշ հակառակորդներ դավադրություն հայտնաբերեցին մասոնների գործունեության մեջ:

Նատիվիստներն էլ հասարակական խնդիրների համար մեղադրում էին ներգաղթյալներին: Նրանք հայտնաբերեցին բազմաթիվ արտաքին սպառնալիքներ, բայց կաթոլիկությունը ամենագլխավորներից էր: Նատիվիստները սարսափով էին հետևում, թե ինչպես էին ավելի ու ավելի շատ կաթոլիկ ներգաղթյալներ, հատկապես Իռլանդիայից և Գերմանիայից, ժամանում ամերիկյան քաղաքներ: Ներգաղթյալները դավանում էին տարբեր համոզմունքներ, հաճախ խոսում էին անծանոթ լեզուներով և մասնակցում օտար մշակութային ծեսերի և ավանդույթների: 1834 թվականի ամռանը բողոքականների ամբոխը հարձակվեց Բոստոնի մոտ գտնվող կաթոլիկ միաբանության վրա: Խռովարարները թերթերում լուրեր էին կարդացել, որ միանձնուհիներն իրենց մոտ կամքին հակառակ պահում են մի կնոջ: Ջայրացած տղամարդիկ ներխուժեցին մենաստան և այրեցին այն:

Այս հարձակումը նատիվիզմի բազմաթիվ դրսևորումներից մեկն էր: XIX դարի առաջին կեսին նատիվիզմը լայն տարածում ուներ հատկապես Նոր Անգլիայում և հյուսիսարևելյան այլ տարածքներում: Բողոքականներից շատերը կաթոլիկ դավանանքը համարում էին սնահավատություն, որը զրկում էր անհատներին ինքնուրույն մտածելու իրավունքից՝ նրանց դնելով Հռոմում գտնվող բռնապետի՝ Հռոմի պապի վերահսկողության տակ: Նրանք մեղադրում էին կաթոլիկ քահանաներին իրենց ծխականներին վերահսկելու համար: Նրանք վախենում էին, որ կաթոլիկությունը կհաղթահարի և կնվաճի ամերիկյան քաղաքական համակարգը, ինչպես որ իրենց նախնիներն էին վախենում, որ այն կգրավի Անգլիան:

Ռասայական հիմնախնդիրը և Ջեքսոնյան ժողովրդավարությունը

Ամեն ինչից առավել ռասայական անհավասարությունն էր բացահայտում ամերիկյան ժողովրդավարության սահմանները: Մի քանի տասնամյակների ընթացքում նահանգների կառավարությունները նվազեցրել էին սեփականության ցենզի պահանջները, որպեսզի ավելի աղքատ տղա-

մարդիկ քվեարկելու իրավունք ստանան: Բայց երբ հյուսիսային նահանգները վերջ դրեցին ստրկությանը, սպիտակամորթները անհանգստացան, որ մեծ թվով ազատ սևամորթ տղամարդիկ նույնպես կարող են քվեարկության մասնակցել: Ի պատասխան՝ նրանք ընդունեցին նոր օրենքներ, որոնք ռասայական խտրականությունը դարձրին ամերիկյան ժողովրդավարության հիմքը:

Հեղափոխության ժամանակ միայն երկու նահանգներ էին բացահայտորեն սահմանափակել սևամորթների ձայնի իրավունքը: Մինչև 1839 թվականը գրեթե բոլոր նահանգներն այդպես վարվեցին: Չորս բացառություններից բոլորը Նոր Անգլիայի նահանգներից էին, որտեղ Դեմոկրատական կուսակցությունն ամենաթույլն էր: 1821 թ. Նյու Յորք նահանգի սահմանադրությունը քվեարկելու իրավունք տվեց գրեթե բոլոր սպիտակամորթ տղամարդ հարկատուներին, իսկ սևամորթ տղամարդկանցից միայն ամենահարուստներին: 1838 թ. Փենսիլվանիայի սահմանադրությունն ամբողջությամբ արգելեց սևամորթների քվեարկությունը:

1830-ականների ընթացքում սոցիալական լարվածությունը, որը նպաստել էր Էնդրյու Ջեքսոնի վերելքին, նաև վատթարացրեց ռասայական հարաբերությունները: Տասնամյակի վերջին շուրջ 400,000 ազատ սևամորթ մարդիկ էին ապրում ԱՄՆ-ում: Հարավում և արևմուտքում սպիտակամորթների ծավալապաշտության ճանապարհին կանգնած էին բնիկ ամերիկացիները: Իսկ իռլանդացի կաթոլիկ ներգաղթյալները, բանվոր դասակարգի ամերիկացի սպիտակամորթների հետ, հաճախ հակադրվում էին ոչ սպիտակամորթներին՝ որպես սակավ աշխատատեղերի, բնակարանի և կարգավիճակի համար մրցակիցների: Ֆիլադելֆիայում հազարավոր սպիտակամորթ ապստամբներ հարձակվեցին և հրկիզեցին հակաստրկատիրական ժողովի շենքը, հարձակումներ կազմակերպվեցին սևամորթների եկեղեցիների և տների վրա: Սենթ Լուիսի մոտ սպանվեց արբիլիցիոնիստական թերթի խմբագիր Էլիջա Լավջոյը իր հրատարակչությունը պաշտպանելիս:

Ամփոփենք: Այսպիսով, 1830-ական թվականներին ռասայական և էթնիկական դժգոհությունները նպաստեցին ամերիկյան քաղաքներում խռովությունների ալիքին: Որոշ սպիտակամորթներ այնուամենայնիվ միացան ազատ սևամորթ ակտիվիստներին՝ բողոքելով ռասայական անհավասարության դեմ: Սովորաբար նրանք ապրում էին հյուսիսային քաղաքներում և սերում էին հմուտ աշխատավորների դասակարգից, կամ այլ կերպ ասած՝ ցածր միջին խավից: Այս կերպ, ստրկության մասին բանավեճերն արտացոլում էին փոփոխվող հասարակության մեջ ավելի լայն

լարվածությունները: Ի վերջո հարցն այն էր, թե արդյոք ամերիկյան ժողովրդավարությունը տեղ ունի տարբեր ռասաների, ինչպես նաև կրոնների և դասակարգերի մարդկանց համար: Որոշ մարդիկ ասացին այո և պայքարեցին ամերիկյան հասարակությունն ավելի հյուրընկալ դարձնելու համար: Սակայն ճնշող մեծամասնությունը՝ լինեին դեմոկրատներ թե վիգեր, համաձայն չէին:

Ընդհանուր առմամբ, 1790-1830-ական թվականներին յուրաքանչյուր նահանգի և կուսակցության վերնախավը սովորեց լսել կամ ձևացնել, թե լսում է բազմության ձայնը: Հատկանշական է, որ ԱՄՆ նախագահը, զբաղեցնելով այնպիսի պաշտոն, որը հիշեցնում էր սահմանադրական միապետի լիազորություններ, խորհրդանշում էր ամերիկյան քաղաքականության ժողովրդավարական ոգին:

ԳԼՈՒԽ 8

Մոնրոյի դոկտրինը և ճակատագրի կանխորոշումը. մայրցամաքային ընդլայնումը

Ճակատագրի կանխորոշումը հիմնավորվում էր այն համոզմունքով, որ ժողովրդավարական, ագրարային հանրապետությունը կփրկեր աշխարհը: Այն իր անվանումը ստացավ 1845 թվականին: Ճակատագրի կանխորոշումը լայնորեն ընդունված, բայց անորոշ համոզմունք էր, որը սկիզբ էր առել ամերիկյան ազգաշինության ակունքներից: Նախ՝ շատ ամերիկացիներ համոզված էին, որ ամերիկյան արժեքների և հանրապետական հաստատությունների հզորությունը արդարացնում է կիսագնդի առաջնորդության բարոյական պահանջները: Երկրորդ՝ նրանք կարծում էին, որ Միսիսիպի գետից արևմուտք ընկած հյուսիսամերիկյան մայրցամաքի հողերը, այնուհետև՝ նաև Կարիբյան ավազանը, նախասահմանված էին Ամերիկայի քաղաքական և գյուղատնտեսական ընդհանուր բարելավման համար: Երրորդ՝ նրանք հավատում էին, որ Աստված և Սահմանադրությունը սահմանել էին անզսպելի ճակատագիր՝ իրագործելու ողջ աշխարհի փրկությունը և ժողովրդավարացումը: Այս երեք պնդումներն էլ դրդեցին շատ ամերիկացիների, անկախ այն բանից՝ նրանք կիրառում էին ճակատագրի կանխորոշում արտահայտությունը, թե ոչ, գործունե կերպով նպաստել իրենց հանրապետության ընդլայնմանը: Այս համոզմունքները և դրանցից բխող գործողությունները հաճախ աղետալի էին շատերի համար, ովքեր հայտնվում էին ամերիկյան ծավալման ճանապարհին: Ամերիկյան ժողովրդավարության նոր կրոնը տարածվեց դեպի արևմուտք շարժվող վերաբնակիչների ոտքերի և ձիասայլերի վրա՝ տոգորված հույսով, որ իրենց հաջողությունը կդառնա ամերիկյան ազգի հաջողությունը:

Հանրահայտ հրապարակախոս Ջոն Լուիս Օ՛Սալիվանը ձևակերպեց ամերիկյան երկարամյա հավատամքը Միացյալ Նահանգների աստվածատուր առաքելության վերաբերյալ. առաջնորդել աշխարհի խաղաղ անցումը դեպի ժողովրդավարություն: 1845 թ. «Միացյալ Նահանգներ ամսագրում» (The United States Magazine) և «Ժողովրդավար հանդեսում» (Democratic Review) տպագրված իր հոդվածում Օ՛Սալիվանն ընդգծեց Տեխասը Միացյալ Նահանգներին միացնելու կարևորությունը՝ օգտագործելով «ակնհայտ նախասահմանում» կամ «ճակատագրի կանխորոշում» (Manifest Destiny) եզրույթը՝ հիմնավորելով մայրցամաքում ծավալվելու նախախնամությամբ ավետված առաքելությունը և դրա անխուսափելիու-

թյունը: Օ՛Սալիվանը և շատ ուրիշներ ընդլայնումն անհրաժեշտ էին համարում Ամերիկայի ճակատագրի իրագործմանը հասնելու և ամերիկյան շահերը պաշտպանելու համար: Ժողովրդավարություն տարածելու քվադի-կրոնական կոչը զուգորդվում էր հազարավոր վերաբնակիչների դեպի արևմուտք տարածման իրողության հետ:

«Երիտասարդ Ամերիկա» (Young America) շարժումը, որն ամենահզորն էր ոչ միայն Դեմոկրատական կուսակցության անդամների շրջանում, այլև ողջ քաղաքական ասպարեզում, անցավ ստրկության և էթնիկ պատկանելության բաժանումներից անդին՝ ընդունելով ազգային միասնությունը և ընդգծելով ամերիկյան բացառիկությունը, տարածքային ընդլայնումը, ժողովրդավարական մասնակցությունը և տնտեսական փոխկախվածությունը:

Ճակատագրի կանխորոշման հակառակորդների համար երիտասարդ ամերիկացիների վեհ հռետորաբանությունը ոչ այլ ինչ էր, քան իմպերիալիզմի մի տեսակ, որը մերժվել էր ամերիկյան հեղափոխությամբ: Վիգ կուսակցության (և ավելի ուշ՝ Հանրապետական կուսակցության) շատ անդամներ պնդում էին, որ Միացյալ Նահանգների առաքելությունը պետք է լինի օրինակով առաջնորդելը, այլ ոչ թե նվաճումներով: 1859 թվականին Աբրահամ Լինքոլնը նույնպես քննադատում էր երիտասարդ ամերիկացիների այդ մոտեցումները: Սակայն ծավալապաշտության գաղափարը գերիշխում էր հանրային կարծիքում: Ամերիկյան ազգը՝ ոգևորված ճակատագրի կանխորոշման սկզբունքներով, շարունակում էր ծավալվել դեպի արևմուտք: Ճանապարհին ամերիկացիները կռվում էին ինչպես բնիկ ժողովուրդների, այնպես էլ այլ պետությունների դեմ՝ հավակնելով հսկայական տարածքների մինչև մայրցամաքի ծայր արևմուտքը: Բայց դեպի արևմուտք ընդլայնումը թանկ արժեցավ: Այն սրեց ստրկության հիմնահարցը, մղեց ամերիկացիներին դեպի քաղաքացիական պատերազմ և, ի վերջո, վտանգեց ամերիկյան ժողովրդավարության առաքելությունը, որին պետք է օժանդակեր:

Արտաքին քաղաքական հայեցակարգը. Մոնրոյի դոկտրինը

Միացյալ Նահանգների պատմության սկզբնական շրջանում երկրի արտաքին քաղաքական գլխավոր խնդիրներից էր անկախության պահպանումը: ԱՄՆ-ի հիմնադիր հայրերը կարծում էին, որ միջազգային կարգը կախված է հակադիր ազգային շահերի միջև հավասարակշռության պահպանումից: Հետևաբար՝ Եվրոպայում ուժերի հավասարակշռության

պահպանումը ամերիկյան անկախության երաշխիքներից էր նաև: ԱՄՆ-ի հիմնադիր հայրերը ղեկավարվում էին ուժերի հավասարակշռության պահպանման սկզբունքով ոչ միայն ամերիկյան անկախության պահպանման, այլև Ամերիկյան սահմանի ընդարձակման և մայրցամաքում գործողությունների ազատության համար: Մարտահրավերներով լի էր հատկապես Ֆեդերալիստական տասնամյակը Ֆրանսիական հեղափոխության ժամանակաշրջանում: Ջորջ Վաշինգտոնը (1789-1797 թթ.) Ֆրանսիական հեղափոխության տարիներին դժվարությամբ էր զսպում ներքին հուզումները և ձգտում էր չեզոքության:

Հավատարիմ մնալով «ամերիկյան Յինցինատուսի» իր կերպարին՝ Վաշինգտոնը հրաժարվեց 3-րդ անգամ նախագահ ընտրվելու հնարավորությունից, թեև այն ժամանակ ղեռ գոյություն չունեի հայտնի սահմանադրական արգելքը: Իր վերջին նախագահական ուղերձում, որը հնչեց իբրև քաղաքական կտակ, Վաշինգտոնը խորհուրդ էր տալիս հեռու մնալ եվրոպական գործերից: 1796 թ. սեպտեմբերին ամերիկյան ժողովրդին ուղղված հրաժեշտի ուղերձում նախագահ Վաշինգտոնն ավանդում էր. «...Յուզաբերեք բարի կամք և հեղուկ արդարությանը բոլոր ազգերի հեղ հարաբերություններում, պահպանեք խաղաղություն և ներդաշնակություն բոլորի հետ... Պեպոությունը, որը այլ պեպության նկատմամբ տածում է արդեն սովորույթ դարձած արելություն կամ համակրանք, որոշակի աստիճանի ստրուկ է... Մեզ համար այլ պեպությունների հետ փոխհարաբերություններում հիմնարար դրույթ է [պեպք է լինի] նրանց հետ մեր առևտրական հարաբերությունների զարգացումը հնարավոր նվազագույն քաղաքական կապերով»...: Ավելի քան մեկ դար Միացյալ Նահանգների արտաքին քաղաքականությունը հետևում էր այս պատգամին, իսկ ամերիկյան հասարակական միտքը՝ ավելի երկար:

Այս համոզմանն էր նաև Ֆեդերալիստ նախագահ Ջոն Ադամսը (1797-1801 թթ.), իսկ դեմոկրատ-հանրապետականներն ու նրանց առաջնորդ նախագահ Թոմաս Ջեֆերսոնը (1801-1809 թթ.) թեև ողջունում էին Ֆրանսիական հեղափոխությունը և համակրում էին Ֆրանսիային ընդդեմ Մեծ Բրիտանիայի, սակայն ԱՄՆ ազգային շահերի համաձայն՝ բանական և հավասարահեռ դիրք էին գրավում մեծ տերությունների հակամարտության փուլում: Անգամ 1812-1814 թթ. անգլո-ամերիկյան պատերազմի ընթացքում Ջեֆերսոնը չէր ողջունում Նապոլեոնի հաջողությունները Մեծ Բրիտանիայի դեմ պատերազմում. «Մեր շահերին չի կարող համապատասխանել ողջ եվրոպայի միավորումը միասնական միապետության մեջ,- գրում է Ջեֆերսոնը,- եթե Նապոլեոնը նորից շարժվեր Մոսկվա, ես

նորից նրան նույն պարտությունը կցանկանայի, որը կխանգարեր նրան հասնել Պեյտերբուրգ: Եթե, անգամ դրա հեղափոխությունը լիներ մեր պարտերազմի ձգձգումը Մեծ Բրիտանիայի դեմ, ես ավելի շուտ կհամաձայնեի դրան, քան թե Եվրոպայի ողջ հզորությունը կենտրոնանա մեկի ձեռքերում»:

Եվրոպայի նկատմամբ ամերիկյան ինքնասահմանափակման քաղաքականության մյուս կողմը եվրոպական միջամտության բացառումն էր Արևմտյան կիսագնդում: Ահա այսպիսի քաղաքականություն հռչակեց «Մոնրոյի դոկտրինը» (Monroe Doctrine), որը ստեղծվեց XIX դարի 20-ական թվականներին Իսպանիայում և նրա գաղութներում հեղափոխությունը ճնշելու Սրբազան դաշինքի փորձի անմիջական հետևանքով: Նապոլեոնի պարտությունից հետո Եվրոպայում հեղափոխական շարժումները ճնշելու նախագիծը պետք է շարունակվեր նաև ամերիկյան մայրցամաքում ապստամբած իսպանական գաղութներում: Նախագծին խիստ ընդդիմացան Մեծ Բրիտանիան և ԱՄՆ-ն՝ հանդես գալով նորանկախ պետությունների ինքնիշխանության իրավունքի պաշտպանությամբ: Ամերիկյան մայրցամաքում Իսպանիայի ապստամբ գաղութները վերանվաճելու եվրոպական ծրագրերի առիթով նախագահ Ջեյմս Մոնրոն (1817-1825 թթ.) հստակեցրեց Միացյալ Նահանգների դիրքորոշումը իր նշանավոր հռչակագրով: Այդ ժամանակ ֆրանսիական արշավախմբային կորպուսը նոր էր վերականգնել Ֆերդինանդ VII-ի իշխանությունը Իսպանիայում: Եղած իրավիճակը արժանահավատություն էր տալիս լուրերին, որոնց համաձայն՝ եվրոպական մեծ տերությունները մտադիր էին միջամտել ամերիկյան մայրցամաքի գործերին, որպեսզի ապստամբած գաղութները ենթարկեցնեն իրենց «օրինական տիրոջը»:

Միացյալ Նահանգների քաղաքականության ողջ էությունը ներխուժման այդ մտադրությունն արգելակելն էր, քանզի նրա շահերից չէր բխում, որ իր հարևանությամբ հայտնվեին եվրոպական հզոր տերություններ նորաստեղծ և դեռևս թույլ հանրապետությունների փոխարեն: Բացի այդ, կարևոր էր նաև ամերիկյան ժողովրդի համակրանքը ապստամբների նկատմամբ, որոնց համար նրանք օրինակ էին ծառայել: Այդժամ նախագահ Մոնրոն որոշեց ճանաչել Իսպանիայից իրենց անկախությունը հռչակած պետությունների ինքնիշխանության իրավունքը և նախագգուշացնել Եվրոպային: Ամերիկյան մայրցամաքը եվրոպական գաղութացման համար փակ հայտարարելու միտքը պատկանում էր նախագահ Ջեյմս Մոնրոյի վարչակազմում պետքարտուղար Ջոն Բուիսիսի Ադամսին: Միացյալ Նահանգները արձագանքեց «Մոնրոյի դոկտրինով», որը հռչակվեց 1823

թ. դեկտեմբերի 2-ին՝ Իսպանիային և «Սրբազան դաշինքի» երկրներին զգուշացնելու նպատակով.

«...Մենք միշտ անհանգստությամբ և հեղափոխությամբ ենք հետևել Երկրագնդի այդ հարավածի իրադարձություններին, որի հետ ունենք ոչ միայն մտերիմ փոխհարաբերություններ, այլև որի հետ կապված է մեր ծագումը: Միացյալ Նահանգների քաղաքացիները տառապանքով են ամենաբարեկամական զգացմունքները Ալբանիայի օվկիանոսից անդին գտնվող իրենց եղբայրակիցների ազատության ու երջանկության նկատմամբ: Մենք երբեք չենք մասնակցել եվրոպական տերությունների պատերազմներին՝ միայն իրենց վերաբերող, և դա համապատասխանում է մեր քաղաքականությանը: Անհրաժեշտաբար մենք առավել շատ ներքաշված և անմիջականորեն կապված ենք մեր կիսագնդում կատարվող իրադարձությունների հետ... Դաշնակից տերությունների քաղաքական համակարգը այս իմաստով էլ պետք է արբերվում է Ամերիկայի քաղաքական համակարգից... Ուստի Միացյալ Նահանգների և այդ տերությունների միջև անկեղծ ու բարեկամական հարաբերությունների պահպանման համար մենք պարտավոր ենք հայտարարել, որ ստիպված կլինենք նրանց կողմից մեր կիսագնդի ցանկացած մասում իրենց համակարգը տարածելու փորձը դիտարկել որպես մեր խաղաղությանը և մեր անվտանգությանը սպառնացող վտանգ: Մենք չենք միջամտել և չենք միջամտելու եվրոպական տերությունների արդեն գոյություն ունեցող գաղութների և կախյալ տարածքների գործերին: Բայց ինչ վերաբերում է իրենց անկախությունը հռչակած և պահպանող պետություններին, և նրանց, որոնց անկախությունը արդարության սկզբունքների հիման վրա մենք արդեն ճանաչել ենք, չենք կարող որևէ եվրոպական տերության ցանկացած միջամտություն այս երկրներին ճնշելու և նրանց նկատմամբ որևէ վերահսկողություն սահմանելու փորձը դիտարկել այլ կերպ, քան անբարյացակամ վերաբերմունք Միացյալ Նահանգների հանդեպ»...:

Մոնրոյի հայեցակարգի հռչակումը հետևանք էր «Սրբազան դաշինքի» երկրների՝ Ռուսաստանի, Ֆրանսիայի, Ավստրիայի ու Պրուսիայի փորձերի՝ ճնշելու հեղափոխական փոթորիկները Իսպանիայում ու իսպանական գաղութներում և առիթն օգտագործելով՝ հաստատվելու Արևմտյան կիսագնդում: Դեռևս 1821 թվականին ռուսաց կայսր Ալեքսանդր I-ը հայ-

տարարել էր Հյուսիսային Ամերիկայում իր հետաքրքրությունների շրջանակների մասին: Այս իրադարձությունները անհանգստացնում էին նաև Մեծ Բրիտանիային, որը ևս չէր ցանկանում բրիտանական Վեստ Ինդիայի հարևանությամբ տեսնել եվրոպական հզոր տերություններ, որոնց հետ ստիպված կլինեի համաձայնեցնել իր քաղաքականությունը տվյալ տարածաշրջանում և ընդհանրապես Արևմտյան կիսագնդում: Ամերիկյան մայրցամաքի հարավում իր կորսված գաղութները վերականգնելուն ուղղված Իսպանիայի գործողությունների քննադատությունը պայմանավորված էր Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարար լորդ Ջ. Կաննինգհի նախաձեռնությամբ: Նա առաջարկեց ԱՄՆ կառավարությանը հանդես գալ միասնական հայտարարությամբ Իսպանիայի քայլերը «չողջունելու» մասին:

Թեպետ ԱՄՆ նախկին նախագահներ Թոմաս Ջեֆերսոնը և Ջեյմս Մեդիսոնը ողջունեցին այդպիսի հավաքական դեմարշի անհրաժեշտությունը, պետքարտուղար Ադամսը ավելի նպատակահարմար գտավ հայտարարություն անել միայն Միացյալ Նահանգների անունից: Նախագահ Մոնրոն համաձայնվեց իր պետքարտուղարի հետ, բայց ավելի խելամիտ համարեց այս հայտարարությունը տարածել ոչ թե դիվանագիտական ուղիներով, այլ այն ընդգրկելով հերթական ամենամյա նախագահական ուղերձում՝ ուղղված Միացյալ Նահանգների Կոնգրեսին, ուր և այն հռչակվեց 1823 թ. դեկտեմբերի 2-ին: Սակայն մինչ Մոնրոն կհռչակեր իր նշանավոր հայեցակարգը, «Սրբազան դաշինքի» երկրները արդեն հրաժարվել էին իսպանական գաղութային կայսրության վերականգնմանը մասնակցելու իրենց ծրագրերից:

Այն ժամանակ եվրոպական տերությունները դժվար թե մեծ նշանակություն տվեցին այս զգուշացումներին, քանզի Միացյալ Նահանգները բոլոր դեպքերում չէր կարող ստիպել նրանց հետևել այս սկզբունքներին: Եվ, երևի թե, այս ընթացքում, ինչպես Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարար լորդ Կաննինգհն էր հայտարարում, «Մոնրոյի դոկտրինի» երաշխավորը դարձան բրիտանական թագավորական ռազմածովային ուժերը:

Եվ այնուամենայնիվ, Մոնրոյի դոկտրինը հույժ կարևոր նշանակություն ունեցավ ավելի լայն պատմական հեռանկարում՝ իբրև ԱՄՆ արտաքին քաղաքականության կառուցակազմիկ հարացույց: Այն հաստատում էր չեզոքության հղացքը, որն ավանդել էր Վաշինգտոնը, բայց միևնույն ժամանակ ճշգրտում և մեկնաբանում էր դրա էությունը, բովանդակությունը և տարածում դրա կիրառության սահմանները ողջ Նոր աշխար-

հի վրա: Միացյալ Նահանգները մերժում էր եվրոպական տերությունների «իրավունքը»՝ տարածելու իրենց ազդեցությունը ամերիկյան մայրցամաքի անկախացած կամ գաղութացումից խուսափած տարածքների վրա, և ընդգծում, որ դիտարկելու է ցանկացած գործողություն իր անկախությունը հռչակած ցանկացած պետության դեմ որպես անբարյացակամության դրսևորում Միացյալ Նահանգների նկատմամբ: Մոնրոյի դոկտրինը սահմանում էր Միացյալ Նահանգների արտաքին քաղաքականության հիմնական սկզբունքները. ամերիկացիները չէին խառնվում եվրոպական գործերին, փոխարենը պահանջում էին չխառնվել ամերիկյան գործերին: Այսպիսով, ցանկացած տերություն, որը այդուհետ կփորձեր իր ազդեցությունը տարածել ամերիկյան որևէ տարածքի վրա կամ ճնշում գործադրել ամերիկյան որևէ պետության վրա, ստիպված կլիներ ընդհարվել ոչ միայն այդ պետության, այլև ԱՄՆ-ի հետ: Առաջին անգամ ձևակերպվեց մայրցամաքային հայեցակարգ, որը հաջողությամբ իր արտահայտությունը գտավ «Ամերիկյան ամերիկացիների համար» կարգախոսում: Այսպիսով, դրվեցին այն սաղմերը, որոնցից պանամերիկանիզմի քողի տակ պետք է առաջանար մեծ Հանրապետության փաստացի գերիշխանությունը Ամերիկաների վրա:

Եվրոպայից մեկուսանալը, որը այն ժամանակ համաշխարհային քաղաքականության կենտրոնն էր, և հզոր հարևանների բացակայությունը թույլ տվեցին Միացյալ Նահանգներին երկար ժամանակ հեռու մնալ դիվանագիտական բարդացումներից: Իզոլիացիոնիզմը երբեք չի նշանակել Ամերիկայի առանձնացում, անջատում մնացյալ աշխարհից: Դրա էությունը այլ պետությունների նկատմամբ պարտավորությունները մերժելն ու ԱՄՆ-ի համար անարգել գործողությունների ազատություն ապահովելն էր:

Կախված ժամանակի պահանջներից՝ Մոնրոյի դոկտրինը շարունակ վերամեկնաբանվում էր, իսկ իմաստը աստիճանաբար լայնանում՝ արդյունքում վերածվելով Արևմտյան կիսագնդում ամերիկյան գերիշխանության արդարացման: 1845 թ. նախագահ Ջեյմս Նոքս Փոլկը Տեխասի միացումը բացատրում էր ԱՄՆ-ի անվտանգությանը սպառնացող վտանգով՝ անկախ Տեխասի օտար ավելի հզոր տերության դաշնակից կամ կախյալ տարածք դառնալու պարագային: ԱՄՆ-ն հետևողականորեն ծավալվում էր դեպի արևմուտք՝ յուրացնելով նորանոր տարածքներ: Հատկապես մեծ էին 1846-1848 թվականների ամերիկա-մեքսիկական պատերազմի արդյունքում տարածքային ձեռքբերումները: Ամերիկացիները Հյուսիսային Ամերիկայում իրենց ծավալապաշտությունը դիտարկում էին

որպես «առաքելություն», որ տրված էր ի վերուստ: Ըստ այդմ՝ «հավերժական ցրտի» շրջաններից մինչև Մեքսիկական ծոց՝ ներառյալ Կուբան, և այն, ինչ ընկած է երկու օվկիանոսների միջև «ծագման ընդհանրության ու քաղաքական ձգողականության» ուժով պետք է միավորվեին Միացյալ Նահանգներին: 1861-1865 թթ. Քաղաքացիական պատերազմը կարճ ժամանակով սառեցրեց ամերիկյան հետաքրքրությունը տարածքային ծավալապաշտության նկատմամբ: Այս ընթացքում ԱՄՆ արտաքին քաղաքականության գլխավոր խնդիրը եվրոպական երկրների կողմից Հարավի՝ Ամերիկայի համադաշնային նահանգների անկախության ճանաչումը կանխելն էր:

Արևմտյան միգրացիան և հնդկացիական տեղահանումը

1812 թվականի պատերազմից հետո ամերիկացիները արագորեն բնակեցրին Մեծ լճերի տարածաշրջանը, մասամբ դաշնային կառավարության կողմից հողերի ագրեսիվ վաճառքի շնորհիվ: Միսսուրին որպես ստրկատիրական նահանգ ընդունելը առաջացրեց առաջին խոշոր ճգնաժամը դեպի արևմուտք միգրացիայի և Միացյալ Նահանգների ընդլայնման պատմական գործընթացում: Կապարի և երկաթի հանքաքարի արդյունահանումը խթանեց զարգացումը ավելի հյուսիս՝ Վիսկոնսինում: 1830-1840-ականներին գերմանացի և սկանդինավցի ներգաղթյալները միացան ամերիկացի արևելցիներին՝ բնակեցնելով Վերին Միսսիսիպիի ջրբաժանի տարածաշրջանը: Միսսուրիից արևմուտք բնակեցման ծավալները փոքր էին, քանզի միգրանտներն այդժամ Մեծ հարթավայրերը (Great Plains) դիտում էին որպես հողագործության համար անբարենպաստ միջավայր: Ավելի արևմուտք՝ ժայռոտ լեռների (Rocky Mountains) տարածաշրջանը շատերին գրավիչ չէր թվում, բացառությամբ մորթու վաճառականների: Բացի այդ, Միսսիսիպիից արևմուտք գտնվող բնիկ ամերիկացի ժողովուրդները դեռ հզոր էին, ինչը զսպում էր սպիտակ ամերիկացիների ծավալապաշտությունը դեպի արևմուտք:

«Քաղաքներում մի հանգստացեք»։ 1841 թ. նման կոչ էր անում հրատարակիչ Հորաս Գրիլին. «Երկրում տեղ և առողջություն կա՝ հեռու անբանների և անմիտների ամբոխից: Գնացե՛ք դեպի արևմուտք, քանի դեռ ձեզ համար, բացի գործարանի կյանքից, այլ հարմար բան չկա»: «Նյու Յորք Յորք տրիբուն» (The New York Tribune) թերթը պնդում էր՝ ամերիկյան բացառիկությունը պահանջում է, որ Միացյալ Նահանգները բարեհոգաբար նվաճի մայրցամաքը՝ որպես ամերիկյան կապիտալիզմի և ամերիկյան

ժողովրդավարության տարածման հիմնական միջոց: Այնուամենայնիվ, հսկայական Արևմուտքը դատարկ չէր: Բնիկ ամերիկացիներն էին վերահսկում Միսսիսիպի գետից արևելք ընկած տարածքի մեծ մասը և գրեթե ողջ Արևմուտքը: Ընդլայնումը կախված էր բնիկ ամերիկացիների տեղահանման դաշնային քաղաքականությունից:

Բնիկ ամերիկացիների նկատմամբ ոտնձգությունն ու սեփականազրկումը, պայմանավորված թե՛ ԱՄՆ կառավարության պաշտոնական քաղաքականությամբ, թե՛ առանձին ամերիկացիների ու նրանց համայնքների գործողություններով, բխում էին ճակատագրի կանխորոշման հավատամքից: Իհարկե, որոշ ռասիզմը նույնպես այդ հավատամքի մաս էր: Ընդլայնման քաղաքական և իրավական գործընթացները միշտ կախված էին այն համոզմունքից, որ սպիտակամորթ ամերիկացիները կարող են լավագույնս օգտագործել նոր հողերն ու հնարավորությունները: Այս համոզմունքը հիմնված էր այն գաղափարի վրա, որ միայն ամերիկացիներն էին մարմնավորում Թոմաս Ջեֆերսոնի կողմից բարձրացված և ջեքսոնյան ժողովրդավարության շրջանում ընդլայնված փոքր հողատերերի գյուղատնտեսականության (yeoman agriculturalism) դեմոկրատական իդեալները:

Ֆլորիդան նոր հողերի ամերիկանացման (Americanization) փորձառության վաղ օրինակ էր: Տարածքը ռազմավարական նշանակություն ուներ Կարիբյան ավազանում երիտասարդ պետության աճող տնտեսական և ռազմական շահերի համար: Ֆլորիդայի բռնակցմանը հանգեցրել էին մի շարք գործոններ, այդ թվում՝ ստրուկների փախուստը դեպի այդ տարածքներ, տարածաշրջանի նկատմամբ իսպանացիների հարաբերական անտարբերությունը և բնիկ ամերիկացի ցեղերի սպառնալիքը, որոնք վերահսկում էին բարեբեր հողատարածքների մեծ մասը:

XIX դարի սկզբին Իսպանիան, ցանկանալով բարձրացնել արտադրողականությունը Ֆլորիդայում, խրախուսեց ամերիկացիների՝ հիմնականում հարավային ստրկատերերի միգրացիան: 1800-ականների երկրորդ տասնամյակում անգլոամերիկացի վերաբնակիչները զբաղեցրել էին Սենտ Ջոնս գետի երկայնքով ձգվող պլանտացիաները՝ Ջորջիայի սահմանից մինչև Ջորջ լիճը: Իսպանիան սկսեց կորցնել վերահսկողությունը, քանզի տարածքը արագորեն վերածվեց մաքսանենգ ստրկավաճառների հանգրվանի, որոնք ապօրինի բեռներ էին տեղափոխում Միացյալ Նահանգներ: Պլանտացիաների սեփականատերերը սկսեցին անհանգստանալ փախչող ստրուկների աճող թվից, որոնք փախչում էին դեպի ճահիճներ և Ֆլորիդայի հնդկացիների կողմից վերահսկվող տարածքներ: Ամե-

րիկացի ստրկատերերը ճնշում էին գործադրում ԱՄՆ կառավարության վրա՝ հարկադրելու իսպանական իշխանություններին՝ արտահանձնել փախստական ստրուկներին: Հարավային ստրկատերերը չէին ցանկանում համակերպվել Ֆլորիդայում զինված սևամորթների ներկայության հետ: 1812 թվականի պատերազմի ժամանակ աշխարհազոր կազմելով՝ Ջորջիայի ստրկատերերը արշավեցին իսպանացիներին և բրիտանացիներին պատկանող Սենտ Ջոնս գետի ավազանի պլանտացիաների վրա: 1816 թվականի հուլիսի 27-ին այստեղի քաղաքացիները ստացան ԱՄՆ կառավարության օգնությունը, երբ ԱՄՆ կանոնավոր բանակը հարձակվեց Նեգրո Ֆորտի վրա, որը 1812 թվականի պատերազմի ժամանակ հիմնվել էր բրիտանացիների կողմից և գտնվում էր Ջորջիայի սահմանից մոտ 60 մղոն դեպի հարավ: Այս գրոհը հիմք նախապատրաստեց 1817 թվականին գեներալ Էնդրյու Ջեքսոնի ներխուժմանը Ֆլորիդա և Առաջին սեմինոլ պատերազմին:

Ամերիկացիները նաև կարծում էին, որ Քրիքի և Սեմինոլի հնդկացիները, որոնք զբաղեցնում էին Ապալաչիկոլա գետից մինչև կենտրոնական Ֆլորիդա ընկած տարածքները, ինքնին վտանգավոր էին: Այս ցեղերը, որոնք միասին ամերիկացիներին հայտնի էին որպես սեմինոլներ, գաղթել էին տարածաշրջան XVIII դարի ընթացքում, հիմնել բնակավայրեր և զբաղվում էին երկրագործությամբ ու անասնապահությամբ: Իսպանացիների, բնիկ ամերիկացիների և նախկին ստրուկների դեմ ամերիկացիների պատերազմի արդյունքում Իսպանիան, որն այդ ժամանակ պատերազմում էր նաև իր ապստամբ գաղութների դեմ, ի վերջո համաձայնեց տարածքը փոխանցել Միացյալ Նահանգներին:

1819 թվականի Ադամս-Օնի պայմանագրով Ֆլորիդան փոխանցվեց Միացյալ Նահանգներին 5 միլիոն դոլար փոխհատուցման դիմաց: Արդյունքում Միացյալ Նահանգների ծովեզերքն արդեն ձգվում էր Նոր Շոտլանդիայից մինչև Միսսիսիպիի դելտայի շրջանը: Ֆլորիդայում սկսեցին հաստատվել ամերիկացի վերաբնակիչները Կարոլինայից, Ջորջիայից և Վիրջինիայից: Այնուամենայնիվ, վերաբնակիչների ներհոսքը Ֆլորիդայի տարածք ժամանակավորապես դադարեցվեց 1830-ականների կեսերին Երկրորդ սեմինոլ պատերազմի (1835-1842 թթ.) բռնկման պատճառով: 1845 թվականին Ֆլորիդան նահանգի կարգավիճակ ստացավ, և բնակեցումը ընդլայնվեց նախկին հնդկացիական հողերում: Ֆլորիդայում գրավելով հնդկացիների արևելյան հողերը՝ Միացյալ Նահանգները կրճատեց ստրուկների փախուստի համար հասանելի հողերը և ամբողջությամբ բնաջնջեց կամ հեռացրեց բնիկ ամերիկացիներին ավելի

հեռու արևմուտք: Սա դարձավ հետագա գործողությունների ձևանմուշը:

Նախագահները, առնվազն Թոմաս Ջեֆերսոնից ի վեր, երկար ժամանակ քննարկում էին բնիկ ամերիկացիների տեղահանումը, բայց նախագահ Էնդրյու Ջեքսոնը ձեռնարկեց ամենաարմատական գործողությունները: Ջեքսոնը հավատում էր, որ արագ տեղահանումը կհաստատի «խիտ և քաղաքակիրթ բնակչություն երկրի մեծ տարածքներում, որոնք այժմ զբաղեցնում են որոշ վայրի որսորդներ»: Բնիկ ամերիկացիներին արժեքավոր գյուղատնտեսական հողերից հեռացնելու ցանկությունը դրդեց նահանգային և դաշնային կառավարություններին դադարեցնելու բնիկներին ձուլելու փորձերը և փոխարենը ծրագրելու հարկադիր տեղահանումը:

1830 թվականին Կոնգրեսն ընդունեց Հնդկացիների տեղափոխման օրենքը (Indian Removal Act)՝ դրանով իսկ նախագահին լիազորելով պայմանագրային բանակցություններ սկսել, որով բնիկ ամերիկացիներին հող կտրամադրվեր Արևմուտքում՝ Միսիսիպիից արևելք գտնվող նրանց հողերի փոխարեն: Տեղահանման շատ ջատագովներ՝ ներառյալ նախագահ Ջեքսոնը, պնդում էին, որ դա կպաշտպանի բնիկ ամերիկյան համայնքներին արտաքին ազդեցություններից, որոնք վտանգում էին «քաղաքակիրթ» ֆերմերներ դառնալու նրանց հնարավորությունները: 1830 թ. Երկրի վիճակի մասին ուղերձում (State of the Union Address) նախագահ Ջեքսոնն ընդգծում է քարոզչական այն մոտեցումը, ըստ որի՝ կառավարությունը գործում է ի շահ բնիկ ժողովուրդների, որոնք «կառավարության պաշտպանության և բարի խորհուրդների ազդեցության ներքո կթողնեն իրենց վայրի սովորությունները և կդառնան հետաքրքիր, քաղաքակիրթ և քրիստոնեական համայնք»:

Չերոկի ցեղի տեղահանման փորձությունը հատկապես դաժան էր: Թեև ցեղերի շատ անդամներ որդեգրեցին եվրո-ամերիկյան զարգացման որոշ ուղիներ՝ ներառյալ արտադրողական գյուղատնտեսությունը, ստրկատիրությունը և քրիստոնեությունը, նահանգային և դաշնային կառավարությունները ճնշում գործադրեցին Չոկտաու, Չիքասո, Քրիք և Չերոկի ազգերի վրա՝ պայմանագրեր ստորագրելու և իրենց հողերը հանձնելու համար: Այս ցեղային ազգերից շատերը օգտագործում էին օրենքը՝ իրենց հողերը պաշտպանելու հույսով: Այս ջանքերից ամենաուշագրավը *Չերոկի ազգն ընդդեմ Ջորջիա նահանգի* (Cherokee Nation v. Georgia) դատական գործն էր:

1826 թվականից սկսած՝ Ջորջիայի պաշտոնյաները դաշնային կառավարությանը խնդրեցին բանակցել Չերոկիի հետ՝ շահութաբեր հողեր

ստանալու համար: Ադամսի վարչակազմը դիմադրեց նահանգի խնդրանքին, սակայն տեղի վերաբնակիչների կողմից Չերոկիի դեմ հետապնդումները ստիպեցին Ադամսի և Ջեքսոնի վարչակազմերին լուրջ բանակցություններ սկսել Չերոկիի հետ: Չսպասելով բանակցային գործընթացի ավարտին՝ Ջորջիան չեղյալ հայտարարեց Չերոկիի հետ գոյություն ունեցող պայմանագրերը, որոնք երաշխավորում էին տեղաշարժի իրավունքներն ու ցեղային իրավունքի իրավասությունը: Պաշտոնը ստանձնելուց անմիջապես հետո նախագահ Էնդրյու Ջեքսոնը նամակ հղեց՝ հորդորելով Չերոկիին, ի թիվս այլոց, կամավոր տեղափոխվել Արևմուտք: 1829 թվականի աշնանը Ջորջիայում ոսկու հայտնաբերումն էլ ավելի սրեց իրավիճակը:

Չերոկիներն իրենց պաշտպանում էին Ջորջիայի օրենքներից՝ վկայակոչելով Միացյալ Նահանգների հետ ստորագրված պայմանագրերը, որոնք երաշխավորում էին Չերոկի ազգի տարածքը և անկախությունը: Սեփականագրկումը կանխելու համար 1831 թվականին Չերոկին դիմեց ԱՄՆ Գերագույն դատարան՝ ընդդեմ Ջորջիայի: Դատարանը թեև կարեկցում էր Չերոկիի դժբախտությանը, որոշեց, որ ինքն իրավասություն չունի քննելու «Չերոկի ազգն ընդդեմ Ջորջիայի» գործը: 1832 թվականին կապակցված մեկ այլ գործով՝ «Վուսթերն ընդդեմ Ջորջիայի» (Worcester v. Georgia), Գերագույն դատարանը որոշեց, որ Ջորջիայի օրենքները կիրառելի չեն Չերոկիի տարածքում: Անկախ այս որոշումներից՝ նահանգի կառավարությունը անտեսեց ԱՄՆ Գերագույն դատարանի որոշումը և քայլեր չձեռնարկեց կանխելու հակամարտությունը վերաբնակիչների և Չերոկիի միջև:

Ջեքսոնը այնպիսի լուծման էր ձգտում, որը կարող էր պահպանել խաղաղությունն ու իր հեղինակությունը: Նա ուղարկեց պատերազմի քարտուղար Լյուիս Կասսին արևմուտքում հողեր առաջարկելու լիազորությամբ՝ արևելյան հողերից հրաժարվելու Չերոկիի ցեղային առաջնորդների խոստման դիմաց: Այս բանակցությունները պառակտեցին Չերոկի ազգը ներսից: Չերոկիի առաջնորդ Ջոն Ռիջը կարծում էր, որ տեղահանումն անխուսափելի է և առաջարկում էր պայմանագրային լուծում՝ հնարավոր լավագույն պայմանները ստանալու համար: Մյուսները՝ Ջոն Ռոսի գլխավորությամբ, հրաժարվեցին բանակցություններում քննարկել տեղափոխության հարցը: Ջեքսոնի վարչակազմը մերժեց ցանկացած գործարք, որը չէր ապահովելու Չերոկիի լայնածավալ տեղահանումը Ջորջիայից՝ դրանով իսկ հրահրելով ավերիչ և կատաղի ներցեղային պայքար երկու խմբերի միջև: Ի վերջո, Չերոկի ազգի ներսում լարվածությունը հասավ

այն աստիճանի, որ տեղափոխության պայմանագրային լուծման մի քանի պաշտպաններ սպանվեցին ազգայնական խմբավորման անդամների կողմից:

1835 թվականին Չերոկի ազգի մի մասը՝ Ջոն Ռիջի գլխավորությամբ, հույս ունենալով կանխել հետագա ներգեղային արյունահեղությունը, ստորագրեց Նոր Էքոտայի պայմանագիրը (Treaty of New Echota): Համաձայն պայմանագրի՝ Ջորջիայում հողերը հանձնվելու էին 5 միլիոն դոլար փոխհատուցման դիմաց. ստորագրողները հույս ունեին կանխել ապագա հակամարտությունները չերոկիների և սպիտակամորթ վերաբնակիչների միջև: Այնուամենայնիվ, Չերոկի ազգի մեծ մասը մերժեց պայմանները՝ պայմանագիրը համարելով անօրինական բանակցությունների արդյունք: Ցեղային առաջնորդներից Ջոն Ռոսը մեղադրեց ԱՄՆ կառավարությանը կեղծ խոստումների համար.

«Դուք մեզ խնդրեցիք հրաժարվել որսորդի ու մարտիկի կենսակերպից. մենք այդպես արեցինք: Դուք մեզ խնդրեցիք սրեղծել հանրապետական կառավարում. մենք այդպես էլ արեցինք՝ ընդունելով ձեր մոդելը իբրև մերը: Դուք մեզ խնդրեցիք մշակել երկիրը և սովորել մեխանիկական արհեստը. մենք այդպես էլ արեցինք: Դուք մեզ խնդրեցիք կարդալ սովորել. մենք այդպես էլ արեցինք: Դուք մեզ խնդրեցիք դեն նետել մեր կուռքերը և երկրպագել ձեր Աստծուն. մենք այդպես էլ արեցինք: Հիմա դուք պահանջում եք, որ մենք ձեզ հանձնենք մեր հողերը: Դա մենք չենք անի»:

1838 թվականին նախագահ Մարտին վան Բյուրենը օգտագործեց Նոր Էքոտայի պայմանագրի դրույթները՝ հրամայելով բանակին բռնի կերպով տեղահանել այն չերոկիներին, որոնք չէին ենթարկվում տարածքի հանձնման պայմանագրին: Վատ եղանակը, վատ պլանավորումը, տեղահանության և ճանապարհորդության դժվարին պայմանները հանգեցրին ողբերգական հետևանքների, որը հայտնի դարձավ որպես Արցունքների արահետ (Trail of Tears). 16 հազար չերոկիներից ողջ մնաց ընդամենը 10 հազարը: Բնիկ ամերիկացիների տեղահանման մյուս փորձառությունները ևս աղետալի էին՝ հանգեցնելով ժողովրդագրական ողբերգության: Որոշ բնիկ ցեղեր դիմադրում էին տեղահանմանը, որն ուղեկցվում էր արյունալի բախումներով դաշնային կամ նահանգային ուժերի հետ:

Ճակատագրի կանխորոշման գաղափարի գրավչությունը խրախուսում էր ծավալապաշտությունն՝ անկախ տեղանքից և տարածքից: Բնիկ ամերիկացիների տեղահանումը ավելի փոքր չափերով կատարվում էր

նաև հյուսիսային տարածքներում: Հին հյուսիս-արևմուտքում Միչիգանի, Վիսկոնսինի և Մինեսոտայի Օդավա և Օջիբվե համայնքները հաջողությամբ դիմադրեցին տեղահանությանը, քանզի նրանցից շատերն ապրում էին ցանկալի գյուղատնտեսական հողերից անդին՝ դեպի հյուսիս: Ավելին, Օջիբվե և Օդավա ցեղերի որոշ ներկայացուցիչներ հողեր էին գնել ինքնուրույն: Նրանք նաև հաջող դաշինքներ էին կազմել միսիոներների հետ՝ հեռացման դեմ պաշտպանվելու օգնության համար, ինչպես նաև որոշ վաճառականների հետ, ովքեր կախված էին բնիկ ժողովուրդների հետ առևտրից: Այնուամենայնիվ, հնդկացիների տեղահանումն իրականացվեց նաև հյուսիսում: 1832 թվականի «Սև բազեի» պատերազմը (Black Hawk War) հանգեցրեց բազմաթիվ Սաուկների տեղափոխմանը Կանզաս: Չնայած տեղահանությունների աղետալի հետևանքներին՝ որոշ ցեղային ազգեր դանդաղորեն վերակառուցեցին իրենց մշակույթները Հնդկացիական տարածքում (Indian Territory):

Որոշ հնդկացիական խմբեր դեռևս չափազանց հզոր էին տեղահանման ենթարկվելու համար: XVIII դարի վերջից Կոմանչի (Comanche) ազգն իշխում էր Հարավային հարթավայրերում՝ ներկայիս Միացյալ Նահանգների հարավ-արևմուտքում: Արագորեն յուրացնելով ծիսապահության մշակույթը, որն առաջին անգամ ներմուծվել էր իսպանացիների կողմից, Կոմանչի ցեղը հավաքչության և որսորդության վրա հիմնված տնտեսությունից անցավ խառը որսորդական և անասնապահական գյուղատնտեսության վրա հիմնված հասարակության: 1821 թվականից հետո մեքսիկական նոր պետությունը տարածաշրջանը համարում էր հյուսիսային Մեքսիկայի մաս, սակայն չէր վերահսկում այն: Փոխարենը Կոմանչի ազգն էր վերահսկում էին Հարավային հարթավայրերի տնտեսությունը: Կոմանչի ազգի ճկուն քաղաքական կառույցը թույլ էր տալիս նրան գերիշխել հնդկացիական այլ ցեղերի, ինչպես նաև մեքսիկացի և ամերիկացի վերաբնակիչների վրա:

1830-ականներին կոմանչիներն արշավանքներ սկսեցին դեպի հյուսիսային Մեքսիկա՝ վերջ տալով Մեքսիկայի հետ անշահավետ, բայց խաղաղ դիվանագիտական հարաբերություններին: Միևնույն ժամանակ, նրանք նոր առևտրային հարաբերություններ հաստատեցին Տեխասի անգլո-ամերիկացի վաճառականների հետ: Այս ամբողջ ժամանակահատվածում Կոմանչին և մի քանի այլ անկախ բնիկ ամերիկյան ազգեր, մասնավորապես՝ Կիովան, Ապաչին և Նավախոն, բազում դաժան բախումներ ունեցան հյուսիսային մեքսիկացիների հետ: 1830-1840-ական թվականների այս բախումները հավաքական առումով շարունակական պատե-

րազմ էին, քանի որ ցեղային ազգերը պայքարում էին իշխանության և հարստության համար: 1840-ական թվականներին Կոմանչիի իշխանությունը հասավ իր հզորության գագաթնակետին՝ ըստ էության դառնալով մի կայսրություն, որը վերահսկում էր հսկայական տարածք Անդր-Միսիսիպիի արևմուտքում, որը հայտնի էր որպես Կոմանչերիա (Comancheria): Տարածաշրջանում շարունակվող հակամարտությունը ավերիչ հետևանքներ ունեցավ ինչպես մեքսիկական, այնպես էլ ամերիկյան քաղաքականության վրա: 1846 թվականին սկսված ամերիկա-մեքսիկական պատերազմը կարող է համարվել այս հակամարտության գագաթնակետը:

Մեքսիկայի անկախությունը նույնպես լարեց իրավիճակը Մեծ ավազանի (Great Basin) տարածաշրջանում: Իսպանական կայսրության ծայրամասում գտնվող այս տարածաշրջանը ինտեգրված էր Արևմուտքի առևտրային հսկայական ցանցին: Մեքսիկացի պաշտոնյաները և անգլո-ամերիկացի վաճառականները տարածաշրջան մտան իրենց կայսերական նախագծերով: Գաղութացման վտանգը կախվեց Պայուտ և Արևմտյան Շոշոն ցեղերի հայրենիքների վրա: Առևտրականները, վերաբնակիչները և մորմոն կրոնական փախստականները, որոնց աջակցում էին ԱՄՆ պաշտոնյաներն ու զինվորները, ամենօրյա բռնության գործողություններ էին իրականացնում՝ հիմք դնելով տարածաշրջանի բռնի նվաճմանը: Ամերիկյան պետության ընդլայնումը դեպի Մեծ ավազան նշանակում էր, որ տեղի ցեղերը՝ Յուտան, Շայենը և Արապահոն, պետք է մրցեին հողի, ռեսուրսների և առևտրային կապերի համար անգլո-ամերիկացիների հետ: Ի վերջո, ամերիկյան ներխուժումը և շարունակվող հնդկացիական պատերազմները հանգեցրին բռնի հողազրկման և գոյության համար պայքարի:

Բնիկ ամերիկացիների բռնի տեղահանման քաղաքականությանը զուգահեռ՝ դաշնային կառավարությունը որդեգրել էր նաև հնդկացիներին «քաղաքակրթելու» ռազմավարություն, որը պետք է ծառայեր ընդլայնման «ամերիկանացնող» (“Americanizing”) տեսլականին՝ փորձելով հավասարակշռել աճող սպիտակ բնակչության ագրեսիան դաշնային «ծնողական» խնամքի հետ: Թոմաս Լ. Մաքքենին, ով 1816-1822 թթ. հնդկացիական առևտրի գլխավոր տեսուչն էր, իսկ 1824-1830 թթ.՝ հնդկացիական գործերի կառավարիչը (Superintendent of Indian Affairs), դարձավ այս քաղաքակրթական քաղաքականության գլխավոր ճարտարապետը: Նա պնդում էր, որ ամերիկյան հնդկացիները բարոյական և մտավոր հատկանիշներով հավասար էին սպիտակամորթներին՝ ձգտելով ստեղծել ազգային հնդկացիական դպրոցական համակարգ:

Կոնգրեսը մերժեց Մաքքենիի ծրագիրը, սակայն փոխարենը 1819 թ. ընդունեց Քաղաքակրթության հիմնադրամի օրենքը (Civilization Fund Act): Այս օրենքն առաջարկում էր տարեկան 10,000 դոլար հատկացնել այն հասարակական կազմակերպություններին, որոնք ֆինանսավորում էին միսիոներներին՝ հնդկացիական ցեղերի շրջանում դպրոցներ հիմնելու համար: Սակայն քաղաքակրթության ծրագրի շրջանակներում բնիկ ամերիկացիների համար դպրոցներ հիմնելու ձեռնարկը դաշնային կառավարությունն օգտագործեց արդարացնելու նոր հողերի բռնագրավումը: Տեղահանման ու ամերիկանացման քաղաքականություններն ամրապնդեցին ամերիկացիների մշակութային գերակայության զգացումը:

1830-ականներին՝ բռնի տեղահանման ենթարկվելուց հետո, Չերոկի, Չոկտաու և Չիկասո ազգերը սկսեցին համագործակցել միսիոներների հետ՝ սեփական դպրոցական համակարգերը ստեղծելու համար: Ցեղային առաջնորդները հույս ունեին, որ կրթությունը կօգներ հետագա սերունդներին պաշտպանելու իրենց քաղաքական ինքնիշխանությունը: 1841 թվականին Չերոկի ազգը բացեց իր հանրային դպրոցական համակարգը, որն արդեն 2 տարի անց ներառում էր 18 դպրոցներ: Մինչև 1852 թ. համակարգը ընդլայնվեց՝ ներառելով 21 դպրոցներ 1100 աշակերտներով: Ցեղերի կողմից վերահսկվող այս դպրոցներում կրթություն ստացած ուսանողներից շատերը հետագայում ծառայեցին իրենց ազգերին որպես ուսուցիչներ, իրավաբաններ, բժիշկներ, բյուրոկրատներ և քաղաքական գործիչներ:

Կյանքն ու մշակույթն Արևմուտքում

Արևմուտքում ժողովրդավարական ուտոպիա ստեղծելու երազանքը հիմնականում հենվում էր նրանց վրա, ովքեր իրենց ունեցվածքով ու ընտանիքներով տեղափոխվեցին Արևմուտք: Արևմտյան վերաբնակիչները սովորաբար ընտանիքներով գաղթում էին և բնակություն հաստատում նավարկելի և խմելու ջրով գետերի երկայնքով: Բնակավայրերը հաճախ միավորվում էին տեղական ավանդույթների, հատկապես կրոնի շուրջը, որոնք փոխադրվում էին արևելյան բնակավայրերից: Այս ընդհանուր ըմբռնումները խրախուսեցին համագործակցության ամուր զգացումը արևմտյան վերաբնակիչների միջև, որոնք համայնքներ էին ստեղծում ամերիկյան սահմանին: Ամերիկա-մեքսիկական պատերազմից առաջ արևմուտք ասելով ամերիկացիների մեծ մասը դեռևս հասկանում էր Ապալաչյան լեռների և Միսիսիպի գետի շրջանում ընկած բերրի տա-

րաճքները: Արևելքում հողի համար աճող մրցակցության պայմաններում վաղ արևմտյան վերաբնակիչների մեծ մասը ձգտում էր ավելի մեծ կայունության և ինքնաբավության՝ զբաղվելով փոքր հողագործությամբ:

Ամերիկյան հանրային տրամասույթում էր կառավարության դերը դեպի արևմուտք ընդարձակման մեջ: Ոմանք սահմանային զարգացումը դիտում էին որպես ինքնակառավարվող ձեռնարկում, որը պահանջում էր մասնավոր ռիսկեր և ներդրումներ՝ կառավարության միջամտությունից անդին: Մյուսները դաշնային կառավարության դերը տեսնում էին ենթակառուցվածքային զարգացում ապահովելու մեջ, որն անհրաժեշտ էր վերաբնակիչներին ավելի լայն ազգային տնտեսության մեջ ներգրավվելու համար: Ի վերջո, դաշնային աջակցությունը կարևոր էր տարածաշրջանի նվաճման, բնակեցման և միասնացման համար:

Տնտեսական անկումները մշտապես սպառնում էին արևմտյան ֆերմերներին և համայնքներին: Տնտեսական դրությունը վատթարացավ 1819 թ. խուճապից հետո: Գների անկումը և հողի սպառվածությունը նշանակում էր, որ ֆերմերները չէին կարող վճարել իրենց վարկերը: Ապրուստի և կայունության երազանքը հանկարծակի ավարտվեց, քանի որ շատ վերաբնակիչներ կորցրեցին իրենց հողը և զգացին հեռավոր շուկայական տնտեսության ճեղքը, որը ստիպում էր նրանց ավելի արևմուտք փախչել պարտքերից: Արդյունքում, դաշնային կառավարությունը հետևողականորեն ձգտում էր մեծացնել արևմուտքում հողատարածքների ձեռքբերման հասանելիությունը՝ ներառյալ գնման համար պահանջվող հողատարածքի նվազագույն չափի նվազեցմամբ: Ավելի փոքր չափի հողաբաժինները հեշտացրին ավելի շատ ֆերմերների համար հող գնելը, արագ մշակելը և գյուղատնտեսական աշխատանքները:

Հատկապես կարևոր էր նոր ճանապարհների ու ջրանցքների կառուցումը, որոնք ուղիներ էին ապահովում նոր հողերի բնակեցման և յուրացման համար: 1820-1830-ական թվականներին ճանապարհորդության և փոխադրման բարելավումները խթանեցին տնտեսական աճը: Ջրանցքների համակարգը բարելավվեց և ընդարձակվեց Արևելքում, իսկ ճանապարհաշինությունը գերակշռում էր Արևմուտքում: Կոնգրեսը շարունակեց միջոցներ հատկացնել ներքին բարելավումների և ենթակառուցվածքների համար: Դաշնային ֆինանսները տարեցտարի ավելի արևմուտք էին մղում Ազգային ճանապարհը (National Road), որի կառուցումը սկսվել էր դեռևս 1811 թվականին: Այս ենթակառուցվածքների շինարարությունն ավելացնում էր աշխատատեղերի ու զբաղվածության հնարավորությունները և խրախուսում նաև ոչ միայն ֆերմերներին, այլև մյուս աշխատա-

վորներին տեղափոխվել Արևմուտք: Այնուամենայնիվ, ճանապարհների կառուցումն ու պահպանումը թանկ արժեին, և ամերիկացիների մի մասը կտրականապես դեմ էր այդ ենթակառուցվածքային ծախսերին:

1810-1820-ական թվականներին արագ աճեց նաև շոգենավերի օգտագործումը: Տեղական, նահանգային և դաշնային միջոցներն օգնեցին միացնելու գետերն ու ջրանցքները, քանզի ջրային առևտրի և ճանապարհորդության ծավալներն աճում էին: Արևելքում հարյուրավոր մղոններ նոր ջրանցքներ կառուցվեցին: Այս վաղ շրջանի խոշոր նախագծերից ամենաուշագրավը էրի ջրանցքն էր, որն ավարտվեց 1825 թվականին: Այն կապեց Մեծ լճերի ավազանը Նյու Յորքի հետ: Զրանցքի շահութաբերությունն օգնեց Նյու Յորք քաղաքին առաջ անցնել Արևելյան ափի իր մրցակիցներից՝ դառնալով ԱՄՆ-ի առևտրային ներմուծման ու արտահանման խոշորագույն կենտրոնը:

Վաղ երկաթուղիները, ինչպիսիք էին Բալթիմորի և Օհայոյի ուղղությունները, միտված էին կապելու միջինատլանտյան քաղաքները արևմտյան շահութաբեր առևտրային ուղիների հետ: Երկաթուղիները նպաստեցին իրենց երթուղիների վրա գտնվող քաղաքների արագ աճին: Երկաթուղային գծերը ոչ միայն նպաստում էին առևտրաշրջանառության արագացմանն ու ծավալների աճին, այլև խթանում էին քաղաքների զարգացումը ավանդական ջրային ուղիներից ավելի հեռու ընկած տարածքներում: Տեխնոլոգիական սահմանափակումները, մշտական վերանորոգումների անհրաժեշտությունը, հակամարտությունները բնիկ ամերիկացիների հետ և քաղաքական տարաձայնությունները խոչընդոտում էին երկաթուղային ճանապարհների հետագա զարգացումը և պահում էին ջրանցքներն ու շոգենավերը որպես տրանսպորտային համակարգի անբաժանելի մասեր: Այնուամենայնիվ, երկաթուղիների կառուցման այս վաղ ձեռնարկումները հիմքեր նախապատրաստեցին Քաղաքացիական պատերազմից հետո երկաթգծային ցանցի արագ անդրմայրցամաքային ընդլայնման համար: Այսպիսով, Ամերիկայի ճակատագրի կանխորոշումը կապված էր ոչ միայն տարածքային ընդլայնման, այլև տնտեսական զարգացման հետ:

Ամերիկա-մեքսիկական պատերազմը. դեպի Խաղաղ օվկիանոս

Ստրկության վերաբերյալ բանավեճը դարձավ Տեխասի հեղափոխության և դրա արդյունքում ձևավորված Տեխասի Հանրապետության Միացյալ Նահանգներին միանալու հիմնական խթաններից մեկը: 1821 թվա-

կանին Իսպանիայից անկախություն ձեռք բերելուց հետո Մեքսիկան հույս ուներ նոր վերաբնակիչներ ներգրավելու իր հյուսիսային շրջաններ՝ իր և հզոր Կոմանչերիայի միջև բուֆերային գոտի ստեղծելու համար: Նոր ներգաղթյալները, որ հիմնականում հարավային Միացյալ Նահանգներից էին, հաստատվեցին մեքսիկական Տեխասում: Հաջորդ քսանհինգ տարիներին անգլո-ամերիկացիների ազդեցության աճի և այդ տարածքի նկատմամբ ամերիկյան հնարավոր հավակնությունների վերաբերյալ մտահոգությունները մեծ հակասություններ առաջացրին մեքսիկացիների և այդ տարածքում հաստատված ամերիկացի վերաբնակիչների միջև: 1829 թվականին Մեքսիկան, հույս ունենալով զսպել ամերիկացիների ներգաղթը, արգելեց ստրկությունը և բոլոր նոր ներգաղթյալներից պահանջեց ընդունել կաթոլիկություն: Ամերիկացի ներգաղթյալները, որոնք ցանկանում էին ընդլայնել իրենց գյուղատնտեսական կարողությունները, հիմնականում անտեսեցին այս պահանջները: Ի պատասխան՝ Մեքսիկայի իշխանությունները 1830 թվականին փակեցին իրենց տարածքը ցանկացած նոր ներգաղթի համար: Արգելքը կրկին անտեսվում էր ամերիկացիների կողմից, ովքեր շարունակում էին զբաղեցնել մեքսիկական հանրային հողերը:

1834 թվականին ֆեդերալիստների և ցենտրալիստների միջև Մեքսիկայի կառավարության ներքին հակամարտությունը հանգեցրեց գեներալ Անտոնիո Լոպես դե Սանտա Աննայի քաղաքական իշխանության հաստատմանը: Գեներալ Սանտա Աննան հրաժարվեց 1824 թվականի դաշնային սահմանադրությունից, ստանձնեց դիկտատորական լիազորություններ և սկսեց վարել ավտորիտար կենտրոնացված վերահսկողության քաղաքականություն: Սանտա Աննան ճնշեց մի շարք ապստամբություններ ողջ Մեքսիկայի տարածքում: Մեքսիկական Տեխասի անգլո-ամերիկացի վերաբնակիչները դեմ էին Սանտա Աննայի կենտրոնացման քաղաքականությանը և 1834 թվականի նոյեմբերին համաժողով գումարեցին: Նրանք հրապարակեցին նպատակային հայտարարություն, որն ընդգծեց նրանց հավատարմությունը 1824 թվականի Մեքսիկայի դաշնային Սահմանադրությանը՝ Տեխասը հռչակելով առանձին պետություն Մեքսիկայի կազմում: Երբ Մեքսիկայի կառավարությունը զայրացած մերժեց առաջարկը, Տեխասի առաջնորդները շուտով հրաժարվեցին 1824 թվականի Սահմանադրության վերահաստատման համար պայքարից և 1836 թվականի մարտի 2-ին հռչակեցին Տեխասի անկախությունը: 1835-1836 թվականների Տեխասի հեղափոխությունը հաջող անջատողական շարժում էր Մեքսիկայի Կոաուիլա և Տեխաս (Coahuila y Tejas) նահանգի հյուսիսային

հատվածում, որի արդյունքում ստեղծվեց անկախ Տեխասի Հանրապետությունը:

Ալամոյում և Գոլիադում Սանտա Աննան ջախջախեց ապստամբների ավելի փոքր ուժերը: Մեքսիկական բանակը հետապնդեց նահանջող տեխասական բանակին դեպի Արևելյան Տեխասի խորքը՝ առաջացնելով զանգվածային խուճապ և տարհանում: Վստահ լինելով հաղթանակին՝ Սանտա Աննան չիրականացրեց պաշտպանական նախապատրաստություն: Արդյունքում 1836 թվականի ապրիլի 21-ին Սեմ Հյուսթոնի գլխավորած տեխասական բանակն անսպասելի հարձակման անցավ: Սան Խասինտոյի (San Jacinto) ճակատամարտը տևեց ընդամենը տասնութ րոպե և հանգեցրեց տեխասցիների վճռական հաղթանակին, ովքեր վրեժխնդիր եղան Մեքսիկայի նախկին դաժանությունների համար՝ սպանելով փախչող և հանձնվող մեքսիկացի զինվորներին: Այնուհետև Սանտա Աննան նույնպես գերեվարվեց և ստիպված էր 1836 թվականի մայիսի 14-ին ստորագրել Վելասկոյի պայմանագիրը (Treaty of Velasco), որով նա համաձայնեց դուրս բերել իր բանակը Տեխասից և ճանաչեց Տեխասի անկախությունը: Թեև Մեքսիկայի նոր կառավարությունը չճանաչեց Տեխասի Հանրապետությունը, Միացյալ Նահանգները և մի քանի այլ երկրներ նոր պետության դիվանագիտական ճանաչման որոշումներ ընդունեցին:

1836 թվականին Մեքսիկայից Տեխասի անկախության հռչակումից հետո, ամերիկացի քաղաքական գործիչները մտավախություն ունեին, որ Միության կազմ Տեխասի ընդունումը պատերազմ կիրահրեր Մեքսիկայի հետ և կբորբոքեր լարվածությունը Միացյալ Նահանգների ներսում՝ խախտելով ազատ և ստրկատիրական նահանգների սեկցիոն հավասարակշռությունը: Այնուամենայնիվ, Վիգ կուսակցությունից իր հեռացումից հետո նախագահ Ջոն Թայլերը Տեխասի ընդունումը Միության կազմ նահանգի կարգավիճակով դիտարկում էր որպես իր քաղաքական կենսագրության փրկության միջոց: 1842 թվականին նա սկսեց գործել միացման հարցը ազգային խոսույթ բերելու ուղղությամբ: Օգտագործելով հանրային դժգոհությունը այս հարցի շուրջ՝ դեմոկրատ Ջեյմս Լոքս Փոլքը վեր բարձրացավ փաստացի քաղաքական անհայտությունից և հաղթեց 1844 թվականի նախագահական ընտրություններում: Փոլքը և նրա կուսակցությունը քարոզարշավն իրականացրին դեպի արևմուտք ընդլայնման խոստումներով՝ հայացքներն ուղղելով դեպի Տեխաս, Օրեգոն և Կալիֆորնիա: Իր նախագահության վերջին օրերին Թայլերը վերջապես 1845 թ. մարտի 3-ին Տեխասին պաշտոնական առաջարկ ներկայացրեց: Հուլիսի 4-ին Տեխասի հանրապետությունն ընդունեց առաջարկը՝ դառնալով ԱՄՆ-ի քսանութ-

րորդ նահանգը: Մեքսիկան դատապարտեց բռնակցումը որպես «ագրեսիվայի ակտ, ամենասանարդարը, որը կարելի է գտնել արդի պատմության տարեգրության մեջ»:

Տեխասի միացումից հետո նախագահ Փոլքի վարչակազմում առաջնահերթություն ստացավ նաև Օրեգոնի հարցը: Ծավալման ծրագիրը հստակ շարադրված էր 1845 թ. դեկտեմբերի 2-ի Կոնգրեսին ուղղված նախագահական ուղերձում: Այն փաստորեն Մոնրոյի դոկտրինի հետագա վերամեկնաբանումն ու զարգացումն էր: Ամերիկյան ծավալման կարևորագույն ուղղություն էր նաև Վերին Կալիֆորնիան: Նման հավակնությունների և ծավալապաշտական միտումների գաղափարաբանական հիմնավորման համար մեծ նշանակություն ունեին մոքերի համակարգերը, որոնց մեջ առանցքային էին «ճակատագրի կանխորոշման» և «բնական սահմանների» տեսությունները, ըստ որոնց՝ ԱՄՆ-ի համար Արևմուտքում այդպիսի բնական սահման էր Խաղաղ օվկիանոսը: Սրանից բխում էր, որ ողջ Օրեգոնը, Կալիֆորնիան և միջակայքում ընկած տարածքները պետք է մտնեն Միացյալ Նահանգների կազմի մեջ: Ինչպես Տեխասի պարագային, այնպես էլ Օրեգոնում ամերիկյան վերաբնակիչների ներհուսքը իր թվաքանակով ծածկել էր բրիտանացի գաղութաբնակներին: Հակամարտության մեջ լինելով Մեքսիկայի հետ և չցանկանալով հակամարտության մեջ մտնել նաև Բրիտանիայի հետ Օրեգոնի պատճառով՝ ԱՄՆ-ն որոշեց դիմել փոխգիջման Անգլիայի արտաքին գործերի նախարար լորդ Էբերդիին առաջարկությամբ: 1846 թ. հունիսի 15-ին ԱՄՆ պետքարտուղար Բյուքենենը և Անգլիայի ներկայացուցիչ Պակենհեմը Վաշինգտոնում ստորագրեցին պայմանագիր, որը հաստատում էր երկու տերությունների միջև սահմանը 49-րդ զուգահեռականով: Այսպիսով, բրիտանական Կանադայի հետ ամերիկյան սահմանը դարձավ անդրմայրցամաքային՝ ձգվելով օվկիանոսից օվկիանոս:

Եթե Տեխասի բռնակցումը և Օրեգոնի մեծ մասի միացումը Միացյալ Նահանգներին հաջողվեց իրականացնել առավելապես դիվանագիտական մեթոդներով, ապա Կալիֆորնիայի և Նյու Մեքսիկոյի համար ստիպված էին պատերազմել: Բացի Տեխասից, ԱՄՆ-ն և Մեքսիկան հավակնություններ ունեին նաև սահմանային երկու գետերի միջև գտնվող տարածքի նկատմամբ: Մեքսիկան գծեց Տեխասի հարավարևմտյան սահմանը Նուեսես գետով, սակայն տեխասցիները պնդում էին, որ սահման անցնում էր մոտ 150 մղոն դեպի արևմուտք՝ Ռիո Գրանդե գետով: Երկու կողմերի պնդումներն էլ իրատեսական չէին, քանի որ նոսր բնակեցված այդ տարածքը, որը հայտնի է որպես Նուեսեսի գոտի (Nueces strip), իրա-

կանում վերահսկվում էր բնիկ ամերիկացիների կողմից:

1845 թվականի նոյեմբերին նախագահ Փոլքը գաղտնի կերպով Մեքսիկայի մայրաքաղաք Մեխիկո գործուղեց Ջոն Սլայդելին՝ գնելու Նուեսեսի գոտին Նյու Մեքսիկոյի և Կալիֆորնիայի մեծ հատվածների հետ միասին: Առաքելությունը դատարկ ժեստ էր, որը հիմնականում նախատեսված էր խաղաղեցնելու Վաշինգտոնում բոլոր նրանց, ովքեր պնդում էին դիվանագիտական ջանքերի անհրաժեշտությունը նախքան պատերազմի դիմելը: Կանխատեսելի էր, որ Մեքսիկայի կառավարությունը հրաժարվեց ընդունել Սլայդելին: Նախապատրաստվելով բանակցությունների սպասվող ձախողմանը՝ նախագահ Փոլքը գեներալ Ջաքարի Թեյլորի գլխավորությամբ նախօրոք չորսհազարանոց զորք էր ուղարկել Կորպուս Քրիստի, Տեխաս՝ Նուեսես գետից հյուսիս-արևելք: 1846 թվականի հունվարին, Սլայդելի մերժման մասին լուրը ստանալուց հետո, Փոլքը հրամայեց Թեյլորին մտնել վիճելի տարածք: Նախագահը հույս ուներ, որ այս ձևով ուժի ցուցադրումը Կալիֆորնիայի հողերը նույնպես կդնի սակարկությունների սեղանին: Սակայն նա վատ էր պատկերացնում իրավիճակը: Տեխասը կորցնելուց հետո մեքսիկական հասարակությունը կտրականապես դեմ էր ԱՄՆ-ին այլ տարածքներ հանձնելուն: Այս գերակշռող հանրային կարծիքը Մեքսիկայի թույլ և անկայուն կառավարությանը բանակցությունների հնարավորություն չէր թողնում:

1846 թվականի ապրիլի 24-ին մեքսիկացի հեծելազորայինները հարձակվեցին Թեյլորի զորախմբի ջոկատներից մեկի վրա Ռիո Գրանդեից անմիջապես հյուսիս գտնվող վիճելի տարածքում՝ սպանելով տասնմեկ ամերիկացի զինվորի: Երկու շաբաթ պահանջվեց, որ լուրը հասնի Վաշինգտոն: Նախագահ Փոլքը մայիսի 11-ին ուղերձ հղեց Կոնգրեսին, որն ամփոփում էր Միացյալ Նահանգների ենթադրություններն ու մտադրությունները. «Մեքսիկան անցել է Միացյալ Նահանգների սահմանը, ներխուժել է մեր տարածք և ամերիկյան արյուն է թափել ամերիկյան հողի վրա: Նա հայտարարել է, որ ռազմական գործողությունները սկսվել են, և որ երկու երկրներն այժմ պատերազմի մեջ են»: Մայիսի 13-ին Կոնգրեսը պատերազմի հայտարարության հռչակագիր ընդունեց: Երկու կուսակցությունների միայն մի քանի անդամներ, այդ թվում՝ Ջոն Քուինսի Ադամսը և Ջոն Բ. Բալիունը, ընդդիմացան: 1846 թվականին պատերազմ հայտարարելուց հետո Կոնգրեսը 50,000 կամավոր զինվորների հավաքագրման կոչ հղեց: Արտասահմանում արկածների և նվաճումների խոստումներից ռզևորված հազարավոր եռանդուն տղամարդիկ ամբողջ երկրում մեկնեցին հավաքակայաններ: Սակայն դիմադրությունը «Պր. Փոլքի պատե-

րազմին» շուտով մեծացավ:

1846 թվականի վաղ աշնանը ԱՄՆ բանակը ներխուժեց Մեքսիկա մի քանի ճակատներով: Մեկ տարվա ընթացքում գեներալ Ուինֆիլդ Սքոթի զորքերը վերահսկողություն հաստատեցին մայրաքաղաք Մեխիկոյի վրա: Սակայն մայրաքաղաքի անկումը չհանգեցրեց պատերազմի ավարտին: Սքոթի զորքերը ավելի քան չորս ամիս նվաճված պահեցին Մեքսիկայի մայրաքաղաքը, քանի դեռ երկու երկրները բանակցում էին: Միացյալ Նահանգներում պատերազմն ի սկզբանե հակասական էր: Լրագրողները մանրամասն զեկույցներ էին ուղարկում առաջնագծից, և բևեռացած մամուլում դաժան բանավեճ էր ընթանում: Կամավորները պարզեցին, որ պատերազմն այն չէ, ինչ իրենք էին ակնկալում: Հիվանդությունները յոթ անգամ ավելի շատ ամերիկացի զինվորների սպանեցին, քան մարտական գործողությունները: Կարգապահական խնդիրները, ոչ կանոնադրային հարաբերությունները զինվորականների միջև և խաղաղ բնակիչների հետ բախումները հանգեցրին մեծաթիվ դասալքությունների:

Խաղաղությունը վերջապես հաստատվեց 1848 թվականի փետրվարի 2-ին՝ Գուադալուպե Հիդալգոյի պայմանագրի ստորագրմամբ: ԱՄՆ-ն ստացավ հսկայական տարածքներ, որոնք պետք է կազմեին ապագա Կալիֆորնիա, Յուտա և Նևադա նահանգները, Արիզոնայի մեծ մասը, Նյու Մեքսիկոյի, Կոլորադոյի և Վայոմինգի մասերը: Մեքսիկան նաև հրաժարվեց Տեխասից և ճանաչեց Ռիո Գրանդեն որպես Տեխասի հարավային սահման: Միացյալ Նահանգներն այդ ամենի համար առաջարկեց 15 միլիոն դոլար: Ամերիկյան բանակի կողմից մայրաքաղաք Մեխիկոյի գրավման հանգամանքը Մեքսիկայի կառավարությանն այլ ելք չէր թողնում, քան վերջնագիրը ստորագրելը: Ամերիկյան նոր Հարավ-արևմուտքը (American Southwest) խթանեց ձեռներեցների և վերաբնակիչների բազմազան խմբերի ներհուր դեպի Նյու Մեքսիկոյի առևտրային քաղաքները, մասնավորապես Սանտա Ֆե, արևելյան Տեխասի բերրի հողերը, Կալիֆորնիայի ոսկու հանքավայրերը և Ժայռոտ լեռների տարածաշրջանը: 1854 թվականին Գադսդենի գնումը (Gadsden Purchase) ավելացրեց ամերիկյան տարածքները Մեքսիկայի հյուսիսում: Այսպիսով, Միացյալ Նահանգների տարածքը ուղիղ կես դարում՝ 1803-1854 թթ., ավելի քան եռապատկվեց՝ հասնելով 7,8 մլն քառ.կմ-ի:

1846-1848 թթ. ամերիկա-մեքսիկական պատերազմը հսկայական ազդեցություն ունեցավ երկու երկրների վրա: Հաղթանակը Միացյալ Նահանգներին դուրս բերեց համաշխարհային տերություն դառնալու մայրուղի: Հաղթանակը բարձրացրեց գեներալ Ջաքարի Թեյլորի համբավը՝

նրան բերելով Սպիտակ տուն որպես նախագահ: Այն նաև զորավարժանք դարձավ Քաղաքացիական պատերազմի ապագա հրամանատարներից շատերի համար: Ամենանշանակալի հետևանքը, սակայն, այն էր, որ Մեքսիկան կորցրեց իր տարածքի մոտավորապես կեսը: Այնուամենայնիվ, հաղթանակը նաև վտանգներ ստեղծեց Միացյալ Նահանգների համար: Ըստ այդմ՝ նոր նվաճված տարածքներում ստրկությունը տարածելու խնդրի շուրջ հակամարտությունը ամերիկյան ազգին ավելի մոտեցրեց պառակտման և քաղաքացիական պատերազմի շեմին:

Ճակատագրի կանխորոշումը և ոսկու տենդը

Կալիֆորնիան, որը մինչև պատերազմը պատկանում էր Մեքսիկային, առնվազն երեք ամիս տևողությամբ բարդ ճանապարհ էր ամերիկյան մոտակա բնակավայրերից: Ամերիկացի միսիոներները երբեմն-երբեմն ճամփորդում էին Սակրամենտոյի հովիտ, որը նույն բնակեցված էր: Օրեգոնի բերրի հողատարածքները, ինչպես Միսիսիպիի հովտի սևահողերը, գրավում էին ավելի շատ վերաբնակիչների, քան Կալիֆորնիան: Հնդկացիական հարձակումների մասին վառ պատմությունները շատ վերաբնակիչների հեռու էին պահում Կալիֆորնիայում հաստատվելուց, թեև նրանցից շատերը կյանքում ընդհանրապես բնիկ ամերիկացիների չէին հանդիպել: Ճանապարհի դժվարությունները, հիվանդությունները, սովը, սուղ մատակարարումները, աշխարհագրական պայմանները, ուղեցույցների բացակայությունը, վայրի բնության վտանգները, եղանակային վայրիվերումները և ընդհանուր խառնաշփոթը ավելի սարսափելի ու հաճախակի էին, քան հնդկացիների հարձակումները:

Չնայած ճանապարհորդության դժվարություններին՝ մինչև 1848 թվականը մոտ 20 հազար ամերիկացիներ էին հաստատվել Ժայռոտ լեռներից արևմուտք, որոնց մոտ երեք քառորդը միայն Օրեգոնում: Շատերը, ովքեր տեղափոխվեցին, ձևավորեցին կյանքի ռոմանտիկ տեսլական՝ գրավելով ավելի շատ ամերիկացի վերաբնակիչների, ովքեր ավելին էին փնտրում, քան գյուղատնտեսական կյանքն ու ընտանեկան պարտականություններն էին: Եթե դեպի Արևմուտք ներհոսքը ընկալվում էր որպես ճակատագրի կանխորոշում, ապա Կալիֆորնիայում ոսկու հայտնաբերումը խթանեց նոր տեսակի ներհոսք: Ամերիկացի վերաբնակիչների մեծ մասը ձգտում էր հողի սեփականատիրության, բայց արագ հարստանալու գայթակղությունը շատերին, հիմնականում երիտասարդ ամուրի տղամարդկանց ձգեց դեպի Արևմուտքի ոսկու արդյունահանման վայրերը: Այս

արկածախնդիրներն ու բարեբախտություն փնտրողներն իրենց հետևից ձգեցին այլ վերաբնակիչների, որոնք ծառայություններ էին մատուցում ոսկու տենդի հետ կապված բնակավայրերում: Քաղաքներն ու ավաններն արագորեն աճեցին ամբողջ Արևմուտքում, հատկապես Սան Ֆրանցիսկոյում, որի բնակչությունը 1848 թվականից մինչև 1853 թվականը հարյուրապատկվեց՝ 500-ից հասնելով գրեթե 50,000-ի: Անօրինությունը, բախտ որոնողների մեծ մասի կանխատեսելի ձախողումը, ռասայական հակամարտությունները և ստրկության հարցը հարցականի տակ էին դնում ճակատագրի կանխորոշման խոստումները:

1850-ականներին Կալիֆորնիայի բնակիչները Կոնգրեսին խնդրում էին անդրմայրցամաքային երկաթուղի կառուցել՝ սպասարկելու Միջին արևմուտքից և Արևելյան ափից եկող ուղևորների և ապրանքների շրջանառությունը: Առաջարկվող երկաթուղու երկայնքով համայնքների համար հնարավոր տնտեսական օգուտների հանգամանքը երթուղիների շուրջ կատաղի բանավեճ հարուցեց: Ստրկության խնդրի վերաբերյալ աճող այլակարծությունը նույնպես մեծացրեց լարվածությունը:

Բազմազան մարդկանց մեծ հոսքը, լեզվական, մշակութային, տնտեսական և ռասայական հակամարտությունները ցնցեցին ինչպես քաղաքային, այնպես էլ գյուղական շրջանները: 1850-ականների վերջին չինացի և մեքսիկացի ներգաղթյալները կազմում էին Կալիֆորնիայի հանքարդյունաբերության ոլորտում զբաղված բնակչության մեկ հինգերորդը: Այս սահմանային բնակավայրերի էթնիկ կարկատանները խզում էին հստակորեն սահմանված ընկերային-տնտեսական կարգը, ըստ որի՝ գազաթում սպիտակամորթներն էին իբրև հողատերեր և կառավարիչներ, իսկ աղքատ սպիտակամորթներն ու էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներն աշխատում էին հանքերում և ծանր աշխատանք պահանջող այլ աշխատատեղերում: Հողի, ռեսուրսների և հարստությունների համար մրցակցությունը խթանեց անհատական և հավաքական չարաշահումները, հատկապես բնիկ ամերիկացիների և մեքսիկական հին համայնքների նկատմամբ: Կալիֆորնիայի քաղաքները դժվարանում էին հավասարակշռել անվտանգությունը տնտեսական զարգացման և քաղաքացիական իրավունքների ու ազատությունների պաշտպանության հետ:

Մոնրոյի դոկտրինը և ճակատագրի կանխորոշումը

Ամերիկյան մայրցամաքում ԱՄՆ ազդեցության տարածումը և տարածքների ընդլայնումը դարձավ դեպի արևմուտք ծավալման կարևոր ար-

դյունք: ԱՄՆ կառավարությունը ձգտում էր եվրոպական երկրներին հեռու պահել Արևմտյան կիսագնդից և կիրառեց ճակատագրի կանխորոշման (Manifest Destiny) սկզբունքները մնացյալ կիսագնդում: Նախագահ Ջեյմս Մոնրոյի վարչակազմում պետքարտուղար Ջոն Բուինսսի Ադամսը Միացյալ Նահանգների, Անգլիայի, Իսպանիայի և Ռուսաստանի միջև շարունակվող սահմանային վեճերի լուծման բանակցությունների պատասխանատուն էր: Ամերիկյան արտաքին քաղաքականության վերաբերյալ Ադամսի տեսակետները գործնականում դրսևորվեցին Մոնրոյի դոկտրինում, որի մշակման մեջ նա մեծ ազդեցություն ուներ: ԱՄՆ նոր արտաքին քաղաքական հայեցակարգի հռչակումը պայմանավորված էր միջազգային համակարգում սրվող տարաբնույթ խնդիրների համալիրով: Հայսմ՝ Հարավային Ամերիկայի վերանվաճման իսպանացիների նկրտումները, Կանադայում բրիտանացիների հետ շարունակվող սահմանային վեճերը, հյուսիս-արևմուտքում ռուսական ծավալապաշտությունը և Կարիբյան ծովում բրիտանական աբուլիցիոնիզմը ամբողջության մեջ ձևավորեցին ամերիկյան արձագանքը: 1821 թվականի հուլիսի 4-ին ԱՄՆ Ներկայացուցիչների պալատում ունեցած ելույթում պետքարտուղար Ադամսը հայտարարեց ԱՄՆ-ի ուժեղ արտաքին քաղաքականության անհրաժեշտության մասին, որը միաժամանակ կպաշտպաներ և կխրախուսեր երկրի աճող և շարժուն տնտեսությունը:

Ադամսի մտահոգությունը տարածքային կորուստը չէր: Նա կասկած չուներ, որ Հյուսիսային Ամերիկայում ռուսական և բրիտանական շահերը կարող էին արգելափակվել: Ադամսը լավ հարաբերություններ ուներ Ռուսաստանի դեսպանի հետ և 1824 թվականին Կոնգրեսի միջոցով ռուսների համար ավելի բարենպաստ առևտրային պայմանագիր հաստատեց: Ադամսը լրջորեն անհանգստացած էր Լատինական Ամերիկայի և Կարիբյան ավազանի առևտրում բրիտանացիների հետ Միացյալ Նահանգների մրցակցելու կարողությամբ: Այս մտահոգությունը խորացավ այն հիմնավոր անհանգստությամբ, որ ԱՄՆ գլխավոր լատինամերիկյան առևտրային գործընկեր Կուբան վտանգավոր չափով կախված էր Բրիտանիայից: Մոնրոյի դոկտրինի հաստատման և Կարիբյան կղզիներում աշխարհաքաղաքական իրադարձությունների շուրջ Վաշինգտոնում ընթացող բանավեճերը աշխարհի այդ հատվածը ձևակերպեցին իբրև ԱՄՆ ռազմական և առևտրային շահերի ապագա պաշտպանության բանալի՝ այդ շահերի հիմնական սպառնալիք համարելով բրիտանացիներին: Տնտեսական հնարավորությունների ընդլայնումը և արտաքին ճնշումներից պաշտպանվածությունը դարձան ԱՄՆ արտաքին քաղաքականու-

թյան գերակա նպատակները: Սակայն, չնայած Մոնրոյի վարչակազմի հռչակագրում առկա իմաստասիրական վստահությանը, սահմանափակ ռազմական հզորության իրողությունը պահպանեց Մոնրոյի դոկտրինը իբրև նկրտումային հայտարարություն:


Մեքսիկայից նվաճված նոր հողերում ստրկության ընդլայնման շուրջ խորը տարաձայնությունները սկսվել էին նույնիսկ պատերազմի ավարտից առաջ: Հյուսիսային գործարարներից և հարավային ստրկատերերից շատերը պաշտպանում էին ստրկությունը Կարիբյան ավազանում ընդլայնելու գաղափարը՝ իբրև մայրցամաքային ընդլայնմանը օգտավետ այլընտրանք, քանզի ստրկությունն արդեն իսկ գոյություն ուներ այդ տարածքներում: Ոմանք քննադատում էին այս փորձերը՝ դրանք դիտելով որպես ստրուկների աճող իշխանության դավադրության ապացույց: Շատերն էլ աջակցում էին ընդլայնման փորձերին, ինչպես նախկինում տեղի էր ունեցել Արևելյան Ֆլորիդայում մինչև ամերիկյան նվաճումը, նույնիսկ եթե այդ փորձերն անօրինական էին: Դա ներառում էր մասնավոր հատվածից ֆինանսավորվող ծրագրեր, որոնք ուղղված էին օտարերկրյա տարածքների զբաղեցմանը և յուրացմանը՝ առանց ԱՄՆ կառավարության հետ համաձայնեցման: Ամերիկյան երևակայության մեջ Ֆլորիդայի փորձառության կիրառումը Կուբայում, այն է՝ «ֆիլիբաստերինգի» (Filibustering) ձեռնարկումը, նշանակալի տեղ գրավեց: Կուբայում հնարավոր ռասայականացված հեղափոխության նկատմամբ ամերիկացի ստրկատերերի վախը (ինչպես նախկինում եղել էր Հաիթիում), ինչպես նաև Կարիբյան ավազանում ստրկության վերացման Բրիտանիայի հետևողական քաղաքականությունը խթանեցին Կուբան ԱՄՆ-ին միացնելու շարժումը: Այնուամենայնիվ, Կուբայի բռնակցումը, չնայած գաղափարի մեծ ժողովրդականությանը և կուբացի այլախոհ Նարցիսո Լոպեսի գլխավորած ռազմական արշավախմբերին, երբեք չհաջողվեց:

Նմանատիպ արշավախմբեր ձեռնարկվեցին նաև դեպի այլ տարածքներ, այդ թվում՝ երկուսը նախկին ամերիկացի զինվորական Ուիլյամ Ուոքերի գլխավորությամբ: Ուոքերը գրավեց Մեքսիկայի Ստորին Կալիֆորնիա (Baja California) թերակղզու մի մասը, հետագայում զավթեց իշխանությունը և ստրկատիրական ռեժիմ հաստատեց Նիկարագուայում: Ի վերջո, Ուոքերին մահապատժի ենթարկեցին Հոնոլուլուում: Այս առաքելությունները խախտում էին Միացյալ Նահանգների օրենքները, բայց ևայնպես մեծահարուստ ամերիկացիները ֆինանսավորում էին ֆիլիբաստերների տարբեր արշավախմբեր, իսկ ոչ հարուստ արկածախնդիրները ուրախությամբ անդամագրվում էին: *Ֆիլիբաստերինգի* ձեռնարկումներն

ամերիկյան հասարակության մեջ կարճատև ժողովրդականություն վայելեցին մինչև 1850-ական թվականների վերջը, երբ Քաղաքացիական պատերազմի նախաշեմին ստրկության և նահանգների անջատողականության հետ կապված մտահոգությունները հայտնվեցին առաջին պլանում: Շատերը ֆիլիբաստերինգի փորձերը համարում էին պարզապես տարածքային գողություն:

Ամփոփենք: Մայրցամաքային ընդլայնման, տնտեսության, դիվանագիտության և ճակատագրի կանխորոշման շուրջ բանավեճերը և հանրային տրամասույթը բացահայտեցին ամերիկյան համակարգի որոշ թույլ կողմեր: Ազգայնականության քաղաքականությունները, ինչպիսիք էին բնիկ ամերիկացիների տեղահանությունը, մեքսիկական պատերազմը և ֆիլիբաստերինգը, գործառում էին անորոշ ապագայի վերաբերյալ աճող անհանգստության համապատկերում:

Ճակատագրի կանխորոշումը փորձեց ամերիկյան հինավուրց պատմության բացակայությունը դարձնել արժանիք և այն վերածել ապագայամետ ազգության և ազգաշինության հիմքի: Նման ակունքները հաստատելու համար Ջոն Օ'Սալիվանը և ճակատագրի կանխորոշման մյուս ջատագոյները պատվաստեցին կենսաբանական և տարածքային հրամայականները ամերիկյան քաղաքական մշակույթի վրա: Ըստ նրանց պատկերացումների՝ ԱՄՆ-ն ժողովրդավարական կատարելատիպի մարմնացումն էր: Ժողովրդավարությունը պետք է լիներ հավերժական, անսահման և շարժական: Տրանսպորտի, կապի և հաղորդակցության նոր մեթոդները, երկաթուղու և հեռագրի արագությունը, միջազգային շուկայական տնտեսության աճը և ամերիկյան սահմանի ընդլայնումը միասին ամերիկացիներին ընդհանուր հարթակներ ու տեղեկատվական միասնականության միջավայր էին տրամադրում՝ օգնելով մտածելու տեղական ինքնություններից անդին և վերահաստատելու ազգային բնութագիրը:



ԱՄՆ տարածքային ընդլայնումը XIX դարում

ԳԼՈՒԽ 9

Հատվածային համակեցական ճգնաժամը. պառակտման մարտահրավերները

Ստրկության արևմտյան ընդլայնումը հենց սկզբից խնդիրներ ստեղծեց Միացյալ Նահանգների համար: Ստրկության դեպի արևմուտք ընդլայնման և ստրկատերերի շահերը պաշտպանելու դաշնային կառավարության դերի հարցում բախումները շարունակական էին: Հյուսիսի աշխատավորները համարում էին, որ ստրկությունը զսպում է աշխատավարձերի բարձրացումը և զբաղեցնում հողը, որը կարող էր օգտագործել աղքատ սպիտակամորթ ամերիկացիների տնտեսական անկախության հաստատման համար: Հարավցիները վախենում էին, որ առանց ստրկության ընդլայնման արդյուցիոնիստական խմբակցությունը կգերակշռի ազգային քաղաքականության մեջ, և ստրուկների աճող խիտ բնակչությունը Հարավում կհանգեցնի արյունալի ապստամբության և ռասայական պատերազմի:

Ստրկացված մարդկանց մշտական դիմադրությունը պահանջում էր ստրկության կողմնակից ուժեղ կառավարություն՝ կարգուկանոն պահպանելու համար: Հենց Հյուսիսը աստիճանաբար վերացրեց ստրկությունը, ստրկացած տղամարդիկ և կանայք փախչում էին այնտեղ: Հյուսիսցիները և հարավցիները խիստ տարածայնություններ ունեին դաշնային կառավարության դերի վերաբերյալ՝ ազատություն փնտրողներին բռնելու և վերադարձնելու հարցում: Մինչ հյուսիսցիներն ապավինում էին իրենց նահանգների իրավունքներին՝ հրաժարվելու փախստական ստրուկներին բռնելուց և վերադարձնելուց, սպիտակ հարավցիները պահանջում էին ստրկության նկատմամբ երաշխիքի ազգային պարտավորություն: Միևնույն ժամանակ, ստրկական աշխատուժը կենսականորեն կարևոր էր երկրի տնտեսության համար՝ սնուցելով ոչ միայն հարավային պլանտացիաների տնտեսությունը, այլև հումք ապահովելով արդյունաբերական Հյուսիսի համար:

Միացյալ Նահանգների ընդլայնմանը զուգահեռ՝ ստրկության ճակատագրի վերաբերյալ տարածայնությունները ամերիկյան քաղաքականության մեջ խորանում էին: Տասնամյակներ տևած հակամարտության ընթացքում Հյուսիսի և Հարավի ամերիկացիները սկսել էին վախենալ, որ երկրի հակառակ հատվածը կարող էր զավթել վերահսկողությունը դաշնային կառավարության նկատմամբ: 1860 թվականի նոյեմբերին Հանրա-

պետական կուսակցության ներսում ուժեղացավ ստրկության ընդլայնման հակառակորդ թեր: Դրան հաջորդած անջատման ճգնաժամի ընթացքում շուրջ մեկդարյա արմատներով մտավախությունները վերածեցին արյունալի քաղաքացիական պատերազմի:

Սեկցիոնալիզմը վաղ հանրապետությունում

Անգլիական Ամերիկայի գաղութները հյուսիսում և հարավում ապավինում էին ստրկական աշխատուժին: Ստրուկները ծխախոտ և շաքար էին աճեցնում ու աշխատում էին նավահանգիստներում: Նրանք հսկայական եկամուտներ էին ապահովում ինչպես գաղութների ստրկատերերի, այնպես էլ մայր Բրիտանայի համար: Ստրկության հաստատության գոյությունը նաև նպաստեց հեղափոխական նոր իդեալների առաջացմանը, որոնք ժամանակի ընթացքում դարձան հատվածային ճգնաժամի (sectional crisis) գաղափարաբանական հիմքերը: Հատկապես անգլիացի քաղաքական տեսաբանները սկսեցին վերանայել բնական իրավունքը և ստրկության հիմնավորումները: Նրանք մերժեցին այն վաղեմի գաղափարը, որ ստրկությունը մարդկանց որոշ խմբերի համար բնական պայման էր: Անդրատլանտյան հակաստրկատիրական նոր շարժումը սկսեց պնդել, որ մարդկության բնական վիճակը ազատությունն է:

Հեղափոխականները կիրառեցին այս գաղափարները XVIII դարի վերջին: Միացյալ Նահանգներում, Ֆրանսիայում և Հաիթիում հեղափոխականները սկսեցին հին կարգերը կազմաքանդելու գործընթացը: Յուրաքանչյուր հեղափոխություն կարծես արմատականացնում էր հաջորդը: Հավասարության և ազատության մասին ավելի համարձակ և ընդարձակ հայտարարություններն ու հռչակագրերը հաջորդում էին միմյանց: 1776 թվականին ամերիկացի հեղափոխականները ԱՄՆ անկախության հռչակագրում հայտարարեցին. «Բոլոր մարդիկ ստեղծված են հավասար»: 1789 թվականին ֆրանսիացի հեղափոխականները հրապարակեցին իրենց տեսլականը «Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագրում» (Déclaration des Droits de l'Homme et du Citoyen). «Մարդիկ ծնվում և մնում են ազատ ու իրավահավասար: Ընկերային տարբերությունները կարող են հիմնվել միայն ընդհանուր բարիքի նկատառումների վրա: Յուրաքանչյուր քաղաքական ընկերակցության նպատակն է մարդու բնական և անկապտելի իրավունքների պահպանումը»:

Սակայն ամերիկացի ստրկատերերի համար ամենասարսափելի զարգացումը տեղի ունեցավ Հաիթիում 1803 թվականին: Կղզու ապստամբ

ստրուկների գլխավորած հեղափոխությունը Ֆրանսիայի ամենաեկամտաբեր շաքարային գաղութը վերածեց անկախ երկրի, որը կառավարվում էր նախկին ստրուկների կողմից: Հաիթիի հեղափոխությունը նշանավորեց հատվածային ճգնաժամի սկիզբը: Այն օգնեց բաժանելու Ատլանտյան ավազանը ազատության և անազատության հստակ գոտիների՝ ջախջախելով այն վաղեմի ենթադրությունը, որ աֆրիկյան ծագում ունեցող ստրուկները չէին կարող լինել կառավարիչներ: Չնայած ստրկության հաստատության հանդեպ ամերիկյան հեղափոխության հստակ ձեռնպահությանը՝ ժամանակաշրջանը նշանավորեց ստրկության պատմության հզոր բեկում: Եվ անգլիական, և՛ ամերիկյան բանակում զինվորական ծառայությունն ազատեց հազարավոր ստրուկների: Շատերն էլ օգտագործեցին պատերազմի խառնաշփոթը փախուստի համար: Արդյունքում, ի հայտ եկան ազատ սևամորթների համայնքներ, որոնք կվերսկսեին հակաստրկատիրական պայքարը: Ստրկության հարցում տարբեր փոխզիջումները հետաձգում էին խոշոր ներամերիկյան հակամարտությունը:

Ստրկության հիմնահարցի շուրջ հատվածականությունը (սեկցիոնալիզմ) և ազգային պառակտումը հասունացավ տևական ժամանակաշրջանում և ընդգրկեց լայն աշխարհագրություն: Հատկապես առանցքային էր ստրկության հիմնախնդրի շուրջ բանավեճը ամերիկյան Արևմուտքում: Երբ Միացյալ Նահանգներն ընդլայնվեց դեպի արևմուտք, հարց բարձրացավ՝ այդ նոր նահանգները պետք է լինեին ստրկատիրական, թե՛ ազատ: Սահմանադրության նախագծողներն այս հարցերը չէին լուծել պետության մայր օրենսգրքում: 1787 թ. Հյուսիսարևմտյան կանոնադրության (Northwest Ordinance) 4-րդ հոդվածն արգելում էր ստրկությունը Օհայո գետից հյուսիս և արևմուտք: Շատերը ենթադրում էին, որ հիմնադիր հայրերը մտադիր էին ստրկությունը դատապարտել աստիճանական վերացման:

1791 թ. Կոնգրեսը իրավազորեց Վերմոնտի, իսկ 1792 թ.՝ Քենթաքիի ընդունումը Միության կազմ. ընդ որում՝ Վերմոնտը Միություն ընդունվեց որպես ազատ նահանգ, իսկ Քենթաքին՝ որպես ստրկատիրական նահանգ: Թեև այն ժամանակ ամերիկացիները համեմատաբար քիչ էին կիրառում ստրկատիրական և ազատ նահանգների ընդունման հավասարակշռող ակտեր, այդ օրինաչափությունը դառնում էր ավելի ու ավելի կարևոր, հատկապես Միացյալ Նահանգների Սենատում իշխանական հավասարակշռության պահպանման համար: 1820 թվականից հետո՝ Միասուրիի ճգնաժամի և փոխզիջման արդյունքում, ազատ և ստրկատիրական նահանգների հավասարակշռության պահպանումը սկսեց դիտվել

որպես ազգային անվտանգության հարց:

Նահանգների միջև նուրբ հավասարակշռությունը կրկին վիճարկվեց Արևմուտքում՝ հանգեցնելով նոր ճգնաժամերի և փոխզիջումների: 1803 թվականին Լուիզիանայի գնումը ավելի քան կրկնապատկել էր Միացյալ Նահանգների տարածքը: Անմիջապես հարց ծագեց՝ ինչպիսին պետք է լինեին այդ տարածքներում ձևավորվող նահանգները՝ ստրկատիրական, թե՛ ազատ: Իրավիճակն ավելի բարդացավ պլանտացիոն ստրկության արագ ընդլայնումով, որը խթանել էր 1793 թվականին բամբակ մանող մեքենայի գյուտը: Այնուամենայնիվ, նույնիսկ բամբակի բարգավաճող տնտեսության պայմաններում, շատ ամերիկացիներ՝ ներառյալ Թոմաս Ջեֆերսոնը, կարծում էին, որ ստրկությունը ժամանակավոր հաստատություն է և շուտով կվերանա: Լարվածությունը մեծացավ Լուիզիանան գնելուց հետո, սակայն ներազգային հատվածային հակամարտությունը դեռևս հիմնականում լուծվում էր խաղաղ փոխզիջումների միջոցով:

Արևմուտքում պլանտացիոն ստրկության ընդլայնմամբ պայմանավորված հատվածային տարբերությունները հատկապես սուր արտահայտվեցին 1803 թվականից հետո: Օհայո գետի հովիտը դարձավ գալիք հատվածային պայքարի վաղ խզվածքի գոտին: Քենթաքին և Թենեսին կայացան իբրև ստրկատիրական նահանգներ, մինչդեռ ազատ նահանգները՝ Օհայոն (1803 թ.), Ինդիանան (1816 թ.) և Իլինոյսը (1818 թ.), Միության կազմ ընդունվեցին գետի հյուսիսային ափերի երկայնքով: Սահմանային բանակցությունները Օհայո գետի երկայնքով խթանեցին սպիտակամորթների գերակայության հղացքի տարբերակիչ տեսակը, քանզի օրենքները փորձում էին սևամորթներին ամբողջովին հեռու պահել Արևմուտքից: 1803 թվականին Օհայոյի այսպես կոչված Սևական օրենքները (Black Laws) նախանշում էին Ինդիանայի, Իլինոյսի և Հին հյուսիս-արևմուտքի որոշ նահանգների, իսկ ավելի ուշ Հեռավոր Արևմուտքի բացառական մշակույթները: Այս օրենքները հաճախ արգելում էին աֆրոամերիկացիների քվեարկությունը, նրանց մուտքը հանրային դպրոցներ և անհնարին էին դարձնում ոչ սպիտակամորթների համար երդվյալ ատենակալների դատական և տեղական ոստիկանական համակարգերում ծառայելը՝ ի թիվս այլ սահմանափակումների և խոչընդոտների:

Միսսուրիի տարածքը, որը Լուիզիանայի տարածքի ամենամեծ հատվածներից էր, հատվածային ճգնաժամի շրջադարձային հանգրվան դարձավ: Միսիսիպիի գետափնյա Սենթ Լուիս քաղաքը ստրկատերերի հզոր կենտրոն էր, նաև կարևոր առևտրային կենտրոն էր Միսիսիպիի հյուսիսային հովտում և Մեծ Արևմուտքում գտնվող առևտրային ցանցերի հա-

մար: 1817 թվականին Կոնգրեսում քննարկումներ սկսվեցին Միսսուրիի՝ Միության ընդունվելու վերաբերյալ. բանավեճի կիզակետում նահանգի հասարակարգի հարցն էր՝ ազանտ, թե՛ ստրկատիրական: Միությունը ցնցվեց խորը հատվածային հակասությունից:

Կոնգրեսը փոխզիջման հասավ Միսսուրիի ընդունելության հարցում՝ հիմնականում Քենթաքի սենատոր Հենրի Բլեյի ջանքերի շնորհիվ: Ըստ այդմ՝ Մեյնը ընդունվելու էր Միություն որպես ազատ նահանգ, փոխարենը Միսսուրին՝ որպես ստրկատիրական նահանգ: Օրենսդիրները ձգտում էին կանխել ապագա հակամարտությունները՝ Միսսուրիի հարավային սահմանը $36^{\circ}30'$ զուգահեռականով դարձնելով ստրկության և ազատության միջև նոր բաժանարար գիծ Լուիզիանայի գնման գործարքով ձեռք բերված տարածքներում: Այդ գծից հարավ, որը ձգվում էր Միսսուրիից դեպի արևելք և դեպի Լուիզիանայի գործարքով գնված տարածքների արևմտյան եզրը, ստրկությունը կարող էր ընդլայնվել: Դրանից հյուսիս, որն ընդգրկում էր 1820 թվականին դեռևս «անկազմակերպ տարածքը» (“unorganized territory”), հայտարարվում էր ստրկությունից ազատ:

Միսսուրիի փոխզիջումը (Missouri Compromise) շրջադարձային հանգրվան դարձավ Ամերիկայի հատվածային ճգնաժամում, քանզի այն հանրության առջև բարձրացրեց ստրկության պառակտիչ հիմնահարցը: Բանավեճն ընթանում էր մամուլում և Կոնգրեսում: Հակաստրկության և ստրկության օգտին դիրքորոշումներն այդուհետ բազմիցս վերադառնում էին Միսսուրիի ճգնաժամի ընթացքում բարձրացված դրույթներին: Օրենսդիրները շարունակ վիճում էին այն հարցի շուրջ, թե արդյոք Սահմանադրության հեղինակները մտադիր են վերացնել ստրկությունը: Վիճարկվում էին նույնիսկ թվացյալ պարզ և ուղիղ արտահայտությունները, ինչպիսին էր «բոլոր մարդիկ ստեղծված են հավասար» դրույթը: Ստրկության ընդլայնման վերաբերյալ հարցերը բաց մնացին, բայց շատերը շարունակում էին եզրակացնել, որ Սահմանադրությունը պաշտպանում էր ստրկությունն այնտեղ, որտեղ այն արդեն իսկ գոյություն ուներ:

Հարավացիները դեռևս չէին փաստարկում, թե ստրկությունը դրական բարիք է, բայց և Միսսուրիի ճգնաժամի ընթացքում նրանք պնդում էին, որ սահմանադիրները պաշտպանում են ստրկությունը և նախատեսում են դրա ընդլայնվելու հնարավորությունը: Ըստ այդ փաստարկի՝ Սահմանադրության երկրորդ բաժնի առաջին հոդվածը հնարավորություն էր տալիս Հարավային նահանգներին, որ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատում ներկայացվածությունը հիմնված լիներ այն կանոնների վրա, որոնք սահմանում էին ստրկացված անձին որպես ընտրողի երեք հին-

գերորդը, ինչը փաստացի հարավցիներին Կոնգրեսում ներկայացվածության առավելություն էր ընձեռում: Ըստ Սահմանադրության՝ Կոնգրեսը չէր կարող միջամտել ստրկավաճառությանը մինչև 1808 թվականը: Այն նաև Կոնգրեսին հնարավորություն էր ընձեռում մշակելու փախստական ստրուկների մասին օրենքներ:

Ստրկության հակառակորդները պնդում էին, որ սահմանադիրները երբեք մտադիր չէին ընդլայնել ստրկությունը, այլ իրականում հույս ունեին, որ այն կվերանար խաղաղ միջոցներով: Սահմանադրություն կազմողները չէին օգտագործել ստրուկ բառը. ստրուկներին անվանում էին «ծառայության մեջ պահվող անձինք»՝ հավանաբար նկատի ունենալով անգլիական ընդհանուր իրավունքի նախադեպերը, որոնք կասկածի տակ էին դնում «մարդու նկատմամբ սեփականության» օրինականությունը: Ստրկության հակառակորդները նաև մատնանշում էին, որ թեև Կոնգրեսը չէր կարող ընդունել ստրկավաճառությունը սահմանափակող օրենք մինչև 1808 թվականը, սահմանադիրներն այդ կերպ հնարավորություն էին ստեղծել ստրկավաճառությունն արգելող օրենսդրության համար՝ սահմանված վերջնաժամկետը լրանալուց հետո: Նրանք պնդում էին, որ ըստ Տասներորդ ուղղման՝ ստրկությունը կարող էր արգելվել նահանգի կարգավիճակ չունեցող ԱՄՆ տարածքներում և մատնանշում էին Հինգերորդ ուղղման պատշաճ ընթացակարգային դրույթը, ըստ որի՝ գույքը կարող է բռնագրավվել համապատասխան օրենսդրության միջոցով: Ի վերջո, Միսսուրիի հարցի շուրջ բանավեճերն անցան Սահմանադրության վերաբերյալ փաստարկներից անդին՝ վերածվելով ուրույն համապարփակ հանրաքվեի ամերիկյան անցյալի, ներկայի և ապագայի վերաբերյալ:

Միսսուրիի բանավեճը նաև խորապես անհանգստացրեց աֆրոամերիկացիներին և բնիկ ամերիկացիներին: Միսսուրիի փոխգիջումային բանավեճերը երկու խմբերին էլ ցույց տվեցին, որ սպիտակ ամերիկացիները մտադիր չէին իրենց ընդունել իբրև Միացյալ Նահանգների քաղաքացիներ: Միսսուրիի ճգնաժամը խթանեց նաև ոչ սպիտակամորթների քաղաքացիության հարցի վերաբերյալ առաջին բանավեճերը, քանզի Միսսուրի նահանգի սահմանադրությունը ցանկանում էր կոշտ արգելք սահմանել ապագա սևամորթ միգրանտների վրա: Օրենսդիրները, ի վերջո, համաձայնեցին, որ այս կոշտ արգելքը խախտում է ԱՄՆ Սահմանադրությունը, սակայն հաստատեցին աֆրոամերիկացիների քաղաքացիությունը մերժելու Միսսուրիի իրավունքը:

Հատվածային ճգնաժամը

1821 թվականին Միսսուրիի ընդունելությունը Միության կազմ բացահայտեց ամերիկյան հասարակության խորը բաժանարար գծերը: Սակայն փոխզիջումը ստեղծեց հատվածային համակեցական նոր համաձայնություն, որով սպիտակամորթ ամերիկացիների մեծամասնությունը ձգտում էր ապահովել հարատև խաղաղություն: Տևական բանավեճերից և փաստարկներից հետո սպիտակամորթ ամերիկացիները համաձայնեցին, որ ԱՄՆ Սահմանադրությունը չէր արգելում ստրկությունը, որտեղ այն արդեն իսկ գոյություն ուներ, և որ ստրկությունը, բացառությամբ Միսսուրիի նահանգի, երբեք չէր ընդլայնվի $36^{\circ}30'$ զուգահեռականից հյուսիս:

Այս համակեցական համաձայնությունը կրկին վիճարկվեց դեպի արևմուտք նոր ընդլայնման ժամանակ, և այս անգամ արդյունքներն էլ ավելի վտանգավոր էին: Ինչ խոսք, ստրկացված հարավցիներն առաջիններից էին, որ ազդարարեցին իրենց դժգոհությունը: ԱՄՆ կրոնական առաջնորդները նույնպես դժգոհություն արտահայտեցին իրավիճակի վերաբերյալ: Երկրորդ Մեծ զարթոնքը ևս սրեց քաղաքական տարաձայնությունները՝ առաջ բերելով խզումներ հիմնական բողոքական եկեղեցիներում, տարաբաժանումներ, որոնք իրենց հատվածային բնույթով խորացնում էին սեկցիոն ճգնաժամը: 1820-1846 թվականներին սեկցիոնալիզմը (sectionalism) սկսեց հիմնվել քաղաքական նոր կուսակցությունների, կրոնական նոր կազմակերպությունների և բարեփոխումների նոր շարժումների վրա: Այդուհանդերձ, քաղաքական առաջնորդներից շատերը ձգտում էին ապահովել հասարակական համերաշխությունը՝ սպիտակամորթների գերակայության ներքո:

1820-ական թվականների սկզբին ստրկությունը կարճ ժամանակով անհետացավ հասարակական ուշադրությունից: Զեքսոնյան ժողովրդավարության ընկերային փոփոխություններով սպիտակամորթ տղամարդիկ՝ անկախ իրենց կարգավիճակից, ստացան ոչ միայն հող և աշխատանք, այլև ընտրելու, երդվյալ ատենակալների կազմում ծառայելու, հանրային դպրոցներ հաճախելու, ոստիկանությունում և բանակում ծառայելու իրավունքներ: Միսսուրիի փոխզիջումից հետո, ամերիկյան սահմանի ընդլայնմանը զուգահեռ, հատվածային ճգնաժամը կրկին խորացավ:

Թվում էր՝ Դեմոկրատական կուսակցությունը համոզիչ պատասխան էր առաջարկել սեկցիոնալիզմի մարտահրավերներին՝ բարիքներ խոստանալով Հյուսիսի, Հարավի և Արևմուտքի սպիտակամորթ աշխատավորներին և այդ կերպ միաժամանակ համախմբելով գյուղական և քա-

ղաքային բնակիչներին: Իրոք, 1828 թվականի նախագահական ընտրությունների ժամանակ արևմտյան, հարավային և հյուսիսային մեծ թվով աշխատավորներ համախմբվեցին Էնդրյու Ջեքսոնի շուրջը: Դեմոկրատական կուսակցությունը փորձեց խուսափել ստրկության խնդրից՝ փոխարենը ձգտելով համախմբելու ամերիկացիներին սպիտակամորթների գերակայության (white supremacy) ընդհանուր պարտավորությունների և ամերիկյան սահմանն ընդլայնելու ցանկությունների շուրջը: Դեմոկրատները խստորեն քննադատվում էին հյուսիսիցիների կողմից: Դաժան քննադատության էին արժանանում հատկապես Հյուսիսի դեմոկրատները, որոնք մեղադրվում էին սեփական համայնքների փոխարեն հարավի ստրկատերերին ավելի լավ ծառայելու մեջ: Այս կերպ հյուսիսիցիները ձգտում էին հեռացնել նրանց երկրի ղեկավարությունից կամ Դեմոկրատական կուսակցության շարքերից:

Վիգերը ամերիկյան ժողովրդին առաջարկեցին կազմակերպված և խոշոր կուսակցական այլընտրանք դեմոկրատների վարչակարգին: Վիգերի ազդեցության սահմանները հաճախ արտացոլում էին Նոր Անգլիայից դեպի արևմուտք միգրացիայի միջոցով ձևավորված նոր համայնքների գոտին: Վիգերը ներկայացնում էին հարուստ վաճառականներին, միջին և բարձր խավի ֆերմերներին, վերին Հարավի խոշոր հողատերերին և Մեծ լճերի ավազանի վերաբնակիչներին: Իր սոցիալական հենարանի խայտաբղետությամբ պայմանավորված՝ կուսակցությունը 1830-ական թվականներին պայքարում էր ընտրողներին ընդհանուր գաղափարի շուրջը համախմբելու համար: Վիգերի առաջնորդները քարոզում էին բողոքական մշակույթը և պաշտպանում դաշնային կառավարության ներքին բարելավումների քաղաքականությունը, աջակցում բարեփոխումների ծրագրերին ու առաջադեմ շարժումներին՝ ներառյալ նույնիսկ հակաստրկատիրությունը, թեև նրանցից քչերն էին հավատում ռասայական հավասարությանը: Այս դիրքորոշումները գրավեցին հասարակական-քաղաքական գործիչների լայն շրջանակի, այդ թվում՝ երիտասարդ Աբրահամ Լինքոլնին: 1830-ական թվականներին Լինքոլնը ակնածանքով էր հետևում Քենթաքի վիգերի առաջնորդ Հենրի Բլեյին:

Վիգերի կուսակցությունը մեղադրում էր դեմոկրատներին ամերիկյան ժողովրդի հաշվին ստրկատիրությունը պաշտպանելու համար: Այդուհանդերձ, հակաստրկատիրությունը վիգերի քաղաքական ծրագրի հիմնական բաղադրիչներից չէր: Ուստի որոշ արվիցիոնիստներ, չընդունելով վիգերի քաղաքական գիծը, ստեղծեցին իրենց կուսակցությունը՝ իսկական հակաստրկատիրական կուսակցություն: 1839 թվականին Նյու

Յորքի Վարչավա քաղաքում կազմակերպվեց հակաստրկատիրական «Ազատություն» կուսակցությունը (Liberty Party): Կուսակցության առաջնորդները պահանջում էին վերացնել ստրկությունը Կոլումբիայի շրջանում, դադարեցնել միջնահանգային ստրկավաճառությունը և արգելել ստրկության ընդլայնումը դեպի Արևմուտք: Քիչ ամերիկացիներ քվեարկեցին «Ազատություն» կուսակցության օգտին: Դեմոկրատներն ու վիգերը շարունակում էին գերիշխել ամերիկյան քաղաքականության մեջ:

Դեմոկրատները և վիգերը նպաստեցին ստրկության հիմնահարցի շուրջ հարաբերական հանգստությանը՝ մի որոշ ժամանակով արգելելով հակաստրկատիրական խնդրագրերի քննարկումը: 1836 թ. Արկանզաս, իսկ 1837 թ. Միչիգան նահանգները ընդունվեցին Միության կազմ. Արկանզասը՝ որպես ստրկատիրական նահանգ, իսկ Միչիգանը՝ որպես ազատ նահանգ: Միչիգանը ընդունվեց Հյուսիսարևմտյան կանոնադրությամբ հաստատված դրույթների միջոցով, մինչդեռ Արկանզասը՝ Միասուրիի փոխգիջման կանոններով, քանզի վերջինիս տարածքը 36°30' զուգահեռականից հարավ էր: Ստրկության և ազատության գոտիների միջև հավասարակշռող գործողությունը շարունակվում էր:

Տեխասի հեղափոխությունը խախտեց հավասարակշռությունը: 1837 թ. Տեխասի Հանրապետությունը ճանաչվեց Էնդրյու Ջեքսոնի վարչակազմի կողմից: Սակայն Ջեքսոնի հաջորդը՝ նախագահ Մարտին վան Բյուրենը, որը նույնպես դեմոկրատ էր, շուտով խնդիրներ էր ունենալու Տեխասի հարցով: Տեխասը հակամարտության մեջ էր Մեքսիկայի և Կոմանչի հնդկացիների հետ: 1844 թվականին նախագահի թեկնածու դեմոկրատ Ջեյմս Փոլքը փորձում էր կամրջել հատվածային բաժանումը՝ խոստանալով նոր հողեր հյուսիսում և հարավում: Փոլքի քարոզարշավի հիմնաքարն էր Տեխասի և Օրեգոնի տարածքների միացումը: Այնուամենայնիվ, մինչ Փոլքը պաշտպանում էր այս հսկայական նոր տարածքների ձեռքբերումը, հյուսիսային դեմոկրատները ընդդիմանում էին հարավային դեմոկրատներին, երբ խոսվում էր Տեխասի մասին:

Տեխասը Միության կազմ ընդունելու վերաբերյալ բանավեճերը ցույց տվեցին, որ դաշնային կառավարությունը ակնհայտորեն ստրկության կողմնակից էր: 1845 թ. Տեխասի նախագահ Սեմ Հյուսթոնին հաջողվեց գործարք կնքել նախագահ Փոլքի հետ, և Տեխասը ընդունվեց Միություն: Ստրկատիրությանը դեմ հյուսիսցիները նաև անհանգստացած էին 1845 թ. Ֆլորիդայի ընդունմամբ, որը Միության կազմ մտավ որպես ստրկատիրական նահանգ: Հատվածային ճգնաժամի տարեգրության մեջ 1845 թվականը դարձավ առանցքային տարի: Ամերիկյան ճակատագրի կան-

խորոշման ոգևորությանը զուգահեռ՝ Ֆլորիդայի և Տեխասի ընդունումը որպես ստրկատիրական նահանգներ ուղենշեց հատվածային համակեցական ճգնաժամի խորացման վտանգը:

1840-ականները բացվեցին մի շարք անհանգստացնող զարգացումներով հակաստրկատիրական շարժման առաջնորդների համար: 1842 թվականին ԱՄՆ Գերագույն դատարանի *Փրիգն ընդդեմ Փենսիլվանիայի* (Prigg v. Pennsylvania) գործով որոշում կայացվեց, որ դաշնային կառավարության փախստական ստրուկների մասին օրենքը հակասում է Փենսիլվանիայի անձնական ազատության մասին օրենքին: Նրանք կարծում էին, որ դաշնային կառավարությունը ծառայում էր միայն հարավային ստրկատերերին և ոտնահարում էր Հյուսիսի նահանգների իրավունքները: Հյուսիսային մի շարք նահանգներ արձագանքեցին՝ ի նշան բողոքի՝ 1843 թվականին ընդունելով անձնական ազատության մասին նոր օրենքներ:

Փախստական ստրուկների կարգավիճակի շուրջ աճող հակասությունները մասամբ մեծացան փախած նախկին ստրուկների, այդ թվում՝ Ֆրեդերիկ Դուգլասի ազդեցության շնորհիվ: Դուգլասի մուտքը հյուսիսային քաղաքականություն նշանավորեց կարևոր նոր զարգացում հատվածային ճգնաժամում: 1845 թվականին Դուգլասը հրատարակեց իր ինքնակենսագրությունը՝ «Ֆրեդերիկ Դուգլասի կյանքի պատմությունը» (Narrative of the Life of Frederick Douglass), որն ազդարարեց ստրուկների պաշտպանի իր գործունեության սկիզբը և նպաստեց աֆրոամերիկյան քաղաքականության հետագա աճին: Նախկին ստրուկներից և ազատ աֆրոամերիկացիներից շատերը միացան Դուգլասին՝ աջակցելով հակաստրկատիրությանը: Աֆրոամերիկացի ակտիվիստները, ի հեճուկս փախստական ստրուկների մասին օրենքների, նաև օգնում էին հազարավորներին փախչելու:

Նախագահ Փոլքը և նրա դեմոկրատ դաշնակիցները ցանկանում էին արևմտյան տարածքները ընդգրկել Միության կազմ՝ ընդլայնելով ամերիկյան սահմանը մինչև Խաղաղ օվկիանոսի ափերը: Վիգերը, այդ թվում Աբրահամ Լինքոլնը, իրենց բողոքներն էին արտահայտում պատերազմի և ստրկատիրության ընդլայնման դեմ: 1846-1848 թթ. ամերիկա-մեքսիկական պատերազմից հետո հատվածային համակեցական ճգնաժամը իրական պառակտման մարտահրավեր առաջացրեց՝ ընդգծելով ներհասարակական և քաղաքական խզման գիծը: Հակասության կիզակետում ստրկատիրության ընդլայնման հարցն էր՝ արդյոք նոր տարածքները լինելու էին ստրկության, թե՛ ազատության գոտիներ: Հարավը սկսեց

պաշտպանել ստրկությունը որպես դրական բարիք: 1846 թվականի վերջին կոնգրեսական Դեյվիդ Վիլմոտը ներկայացրեց մի բանաձև (Wilmot Proviso), որն արգելելու էր ստրկության ընդլայնումը Մեքսիկայից նվաճված նոր տարածքներում: Բանաձևը ստացավ լայնածավալ հյուսիսային աջակցություն և նույնիսկ երկկուսակցական աջակցությամբ անցավ Ներկայացուցիչների պալատում, սակայն ձախողվեց Սենատում:

Մրցակցող հատվածային տեսլականները. ճգնաժամի խորացումը

Ամերիկա-մեքսիկական պատերազմի ավարտն ավետող 1848 թվականի Գվադալուպե Հիդալգոյի պայմանագրի վրդովեց Միացյալ Նահանգների հակաստրկատիրական շարժման առաջնորդներին, ովքեր պատերազմն արդեն համարում էին ստրկատերերի դավադրություն և պահանջում էին, որ ոչ մի նոր տարածք չբացվի ստրկության համար: Պատերազմի ավարդ տպավորիչ էր, բայց պարզ էր, որ դա կօգներ ընդլայնելու ստրկությունը: Չվստահելով «Ազատություն» կուսակցությանը՝ հակաստրկության շարժման առաջնորդները ստեղծեցին նոր՝ «Ազատ հող» կուսակցությունը: Հակաստրկության առաջնորդները կարծում էին, որ ստրկությունից բաժանված դաշնային կառավարության իրենց տեսլականը կարող էր իրականություն դառնալ նույն տարվա նախագահական ընտրություններում խոշոր կուսակցությունների թեկնածուների միջոցով, բայց և՛ վիգերը, և՛ դեմոկրատները առաջադրեցին ստրկության կողմնակից հարավցիների: Չներկայացված մնալով՝ հակաստրկատիրական «Ազատ հող» կուսակցության առաջնորդները գործի անցան:

Պահանջելով ստրկության կողմնակիցների իշխանությանն այլընտրանք՝ «Ազատ հողի» առաջնորդները հավաքեցին այսպես կոչված «Իդիոկրատները» (Conscience Whigs): Նոր դաշինքը ազգային համագումար հրավիրեց 1848 թվականի օգոստոսին Բուֆալոյում (Նյու Յորք): Մի շարք նախկին դեմոկրատներ անմիջապես միացան կուսակցությանը, այդ թվում՝ Մարտին վան Բյուրենին հավատարիմ նյույորքցիների մի կարևոր խումբ: «Ազատ հող» կուսակցության ծրագիրը կամրջեց արևելյան և արևմտյան առաջնորդներին և կոչ արեց վերջ տալու ստրկությանը Վաշինգտոնում՝ Կոլումբիայի շրջանում, և դադարեցնելու ստրկության ընդլայնումը ԱՄՆ տարածքներում: «Ազատ հող» շարժումը հեռու էր 1848 թվականի նախագահական ընտրություններում հաղթանակից, բայց այն հավաքեց ավելի քան չորս անգամ ավել համաժողովրդական քվեներ, քան նախկինում «Ազատություն» կուսակցությունը: Սա խոստումնալից սկիզբ էր: 1848 թ.

«Ազատ հողի» առաջնորդները հավակնում էին ժողովրդական քվեների ընդամենը 10 տոկոսին, սակայն կարողացան ստանալ մեկ տասնյակից ավելի տեղեր Ներկայացուցիչների պալատում և նույնիսկ կարողացան նվաճել մեկ տեղ Սենատում, որը ստացավ Սալմոն Պ. Չեյզը Օհայոյից: Այսպիսով, Կոնգրեսում «Ազատ հողի» անդամներն ունեին բավականաչափ ձայներ՝ իշխանության հավասարակշռությունը փոխելու կամ վիզերի, կամ դեմոկրատների օգտին:

1848 թվականի մայիսին Վիսկոնսինի ընդունումը Միության կազմ որպես ազատ նահանգ օգնեց թուլացնելու Տեխասի և Ֆլորիդայի ընդունումից հետո առաջացած լարվածությունը: Միևնույն ժամանակ, եվրոպական մի շարք ձախողված հեղափոխությունների մասին լուրերը անհանգստացրին ամերիկացի բարեփոխիչներին, բայց երբ վտարված եվրոպացի հեղափոխականները հաստատվեցին Միացյալ Նահանգներում, ամրապնդվեց նաև կանանց իրավունքների շարժումը՝ մեկնարկելով Սենեկա Ֆոլսում (Նյու Յորք): Կանանց շարժումը խորը կապեր ուներ արվիցիոնիստների հետ:

1848 թվականի նախագահական ընտրություններում Վիզերի թեկնածու Զաքարի Թեյլորը հաղթեց Միչիգանից դեմոկրատ Լյուիս Կասսին: 1848 թվականի ցնցումներն արագ ավարտվեցին: Թեյլորի պաշտոնավարումը կարճատև էր. նա անսպասելիորեն հիվանդացավ ու մահացավ 1850 թվականին: Թեյլորի վարչակազմը պայքարում էր Մեքսիկայից նվաճված տարածքների խաղաղ միասնացման միջոցներ գտնելու համար: Կալիֆորնիայի, Նյու Մեքսիկոյի և Յուտայի՝ Միության կազմ ընդունելության պահանջների աճը երկիրը մոտեցրեց եզրագծին: Կալիֆորնիայում ոսկի էր հայտնաբերվել, և քանի դեռ շարունակվում էր հազարավոր մարդանց հոսքը դեպի Արևմտյան ափ և Միսիսիպից արևմուտք, մոտենում էր նաև նոր նահանգների մուտքը Միության կազմ: Թեյլորին փոխարինեց վիզ Միլլարդ Ֆիլմորը:

Կոնգրեսի առաջնորդներից Հենրի Բլեյը և նորեկ օրենսդիրներից Սթիվեն Դուգլասը (Իլինոյսից) ստանձնեցին փոխզիջման միջնորդական առաքելությունը, բայց այս անգամ պարզ էր, որ ոչ մի փոխզիջում չէր կարող կամրջել երկրի հատվածների բևեռացող շահերը և տարբեր տեսլականները: Բլեյն ի վերջո հուսահատված հեռացավ Վաշինգտոնից: Կոնգրեսում օրինագծերի անցկացումն առաջնորդեց երիտասարդ Սթիվեն Դուգլասը: 1850 թվականի վերջին օրենսդիրներն ընդունեցին փոխզիջումը, օրինագծերի ամբողջությունը, որն արտացոլում էր Միասուրիի փոխզիջման խոստումները:

1850 թվականի փոխզիջումը փորձեց ինչ-որ բան առաջարկել բոլորին, սակայն վերջին հաշվով այն միայն խորացրեց հատվածային ճգնաժամը: Հարավցիների համար փաթեթն առաջարկում էր նոր կոշտ օրենք փախստական ստրուկների մասին, որը դաշնային կառավարությանը լիազորում էր փախած ստրուկներին ձերբակալելու հարցում օգտվել սովորական քաղաքացիների ծառայություններից: Նյու Մեքսիկոյին և Յուտային կթույլատրվեր ժողովրդական ինքնիշխանության սկզբունքով որոշել իրենց ճակատագիրը՝ Միության կազմ մուտք գործել որպես ստրկատիրական կամ ազատ նահանգներ: Փոխզիջումը նաև թույլ տվեց տարածքներին հայցեր ներկայացնել անմիջապես ԱՄՆ Գերագույն դատարան՝ իրենց սահմաններում փախստական ստրուկների կարգավիճակի վերաբերյալ: Կալիֆորնիայի ընդունումը Միության կազմ որպես ազատ նահանգ ուրախացրեց շատ հյուսիսցիների, սակայն այս հսկայական նոր նահանգի ընդունումը, որը լի էր բնական պաշարներով և բարեբեր գյուղատնտեսական հողերով, բավարար չէր: Ի հավելումն Կալիֆորնիայի՝ հյուսիսցիները փոխզիջմամբ հասան նաև Վաշինգտոնում՝ Կոլումբիայի շրջանում, ստրկավաճառության արգելքին, բայց ոչ ստրկատիրության վերացմանը և ամբողջական ազատագրմանը, որի համար երկարատև պայքար էին մղում:

Ըստ 1850 թվականի փոխզիջման՝ Տեխասը, որն արդեն Միության կազմ էր ընդունվել իբրև ստրկատիրական նահանգ, պետք է իր տարածքի մի հատվածը զիջեր Նյու Մեքսիկոյին՝ նախկին Տեխասի Հանրապետության պարտքի մի մասը դաշնային կառավարության կողմից մարելու դիմաց: 1850 թվականի փոխզիջումից հետո հակաստրկատիրական ուժերը վստահ էին, որ ստրկատերերն են ընտրել դաշնային կառավարությունը, և որ հարավային ստրկատիրական ուժերը գաղտնի վերահսկում են Վաշինգտոնը և նկրտումներ ունեն ստրկությունը դարձնել համազգային հաստատություն: Բացի այդ, 1850-ականներին հակաստրկատիրական շարժման առաջնորդները նաև պնդում էին, որ դաշնային կառավարությունը գործում է հոգուտ ստրկատերերի՝ անտեսելով սպիտակամորթ աշխատավորների շահերը:

1850 թվականի փոխզիջման միջոցներից ստրկությանը դեմ ամերիկացիների համար առավել խնդրահարույց էր Փախստական ստրուկների օրենքը (Fugitive Slave Act): Ստրկության ազդեցությունը ողջ երկրում տարածելու հստակ միտումով այս օրենսդրական ակտը ստեղծեց հատուկ դաշնային հանձնակատարներ՝ որոշելու ենթադրյալ փախածների ճակատագիրը՝ առանց երդվյալ ատենակալների դատավարության կամ

նույնիսկ դատարանում վկայության: Համաձայն օրենքի դրույթների՝ հյուսիսի տեղական իշխանությունները չէին կարող միջամտել փախստական ստրուկների ձերբակալությանը: Ավելին, հյուսիսային քաղաքացիները, ըստ դաշնային գործակալների պահանջի, պետք է աջակցեին փախստական ստրուկների ձերբակալությանը: Փախստական ստրուկների օրենքը հիմք ստեղծեց դաշնային իշխանության զանգվածային ընդլայնման, ինչպես նաև դաշնային ոստիկանական լիազորությունների տագնապալի աճի համար: Շատ հյուսիսցիներ նաև անհանգստացած էին, թե ինչպես էր օրինագիծը խաթարում տեղական և նահանգային օրենքները: Օրենքն ինքնին խթանում էր կոռուպցիան և ազատ սևամորթ հյուսիսային բնակիչների ստրկացումը: Դաշնային հանձնակատարներին, որոնք քննում էին այս գործերը, վճարում էին 10 դոլար, եթե նրանք որոշեին, որ մեղադրյալը փախստական ստրուկ է, և միայն 5 դոլար, եթե որոշեին, որ նա ազատ մարդ է: Շատ սևամորթ հյուսիսցիներ օրենքի պատճառով գաղթեցին ավելի հյուսիս՝ դեպի Կանադա:

1852 թվականի նախագահական ընտրություններում պարտությունը փաստորեն վերջ դրեց վիզերի՝ իբրև ազգային քաղաքական կուսակցության գոյությանը: Վիզերը հավաքեցին հաղթելու համար անհրաժեշտ 254 ընտրիչների ձայներից միայն 42-ը: 1850 թվականի փոխզիջումով խաղաղ համաձայնությունը կարծես հորիզոնում էր: Այնուամենայնիվ, հատվածային ճգնաժամը շարունակում էր խորանալ: Թեև մինչև 1853 թվականը դեմոկրատներն արդեն խիստ բաժանված էին հատվածային գծերով ստրկության հիմնախնդրի պատճառով, բայց նրանք նաև հիմքեր ունեին վստահորեն գործելու: 1852 թվականին ընտրողները նրանց վերադարձրել էին Սպիտակ տուն:

Իլինոյսից դեմոկրատ սենատոր Սթիվեն Դուգլասը մի շարք լրացուցիչ փոփոխություններ առաջարկեց մի օրինագծի մեջ, որը մշակվել էր 1853 թվականի վերջին՝ օգնելու կազմակերպել Նեբրասկայի տարածքը, որը վերջինն էր Լուիզիանայի գնման գործարքով ձեռք բերված տարածքներից: 1853 թվականին Նեբրասկայի տարածքը հսկայական էր՝ տարածվելով Տեխասից մինչև Կանադայի սահմանը: Ընդհանուր առմամբ, այն ընդգրկում էր ներկայիս Նեբրասկան, Վայոմինգը, Հարավային Դակոտան, Հյուսիսային Դակոտան, Կոլորադոն և Մոնտանան: 1854 թվականին Դուգլասն առաջարկեց համարձակ ծրագիր՝ կտրելու Նեբրասկայի հարավային մեծ հատվածը և ստեղծելու առանձին Կանզասի տարածք:

Դուգլասը մի շարք նպատակներ ուներ: Նա ցանկանում էր կազմակերպել տարածքը՝ հեշտացնելու ազգային երկաթուղու կառուցման ավար-

տը, որն անցնելու էր Չիկագոյով դեպի Իլինոյս: Բայց մինչ նա կավարտեր ու կներկայացներ օրինագիծը, ընդդիմությունն արդեն մոբիլիզացվել էր: Սալմոն Պ. Չեյզը հյուսիսային թերթերում բացահայտեց Կանգաս-Նեբրասկա օրինագիծը՝ այն ներկայացնելով որպես Միսսուրիի փոխգիջումը տապալելու և արևմտյան հողերը ստրկության համար բացելու միջոց: 1854 թվականին ողջ Հյուսիսում Կանգաս-Նեբրասկայի օրինագծի դեմ բողոքի ցույցեր տեղի ունեցան: Կանգասը կղառնար ստրկատիրական, թե ազատ նահանգ՝ կախված էր տեղական ընտրությունների արդյունքներից: Ուստի այս ընտրությունների վրա մեծ ազդեցություն կունենային միգրանտները, որոնք հեղեղում էին տարածքը՝ պաշտպանելու կամ խոչընդոտելու ստրկության տարածումը:

1854 թ. մայիսի 19-20-ը Կոնգրեսում իր ելույթից հետո Մասաչուսեթսի սենատոր Չարլզ Սամներին ձեռնափայտով դաժան ծեծի ենթարկեց Հարավային Կարոլինայի ներկայացուցիչ Փրեսթոն Բրուքսը Սենատի նիստերի դահլիճում: Ի թիվս այլ մեղադրանքների՝ Սամները մեղադրել էր Հարավային Կարոլինայի սենատոր Էնդրյու Բաթլերին՝ Բրուքսի զարմիկին, ստրկությունը պաշտպանելու մեջ, որպեսզի պահպանի սևամորթ կանանց հետ սեռական հարաբերություններ ունենալու իր հնարավորությունը: Բրուքսը հանդես էր եկել իր ազգականի պատվի պաշտպանությամբ՝ դաժան ծեծի ենթարկելով Սամներին: Բրուքսը, այնուամենայնիվ, հրաժարական տվեց, սակայն նույն տարում նորից վերընտրվեց: Վաշինգտոնից դուրս բռնությունների և սպանությունների ալիքն ահազանում էր Կանգասում: Ստրկության կողմնակիցները հարձակվել էին Կանգասի Լոուրենս քաղաքի վրա:

Հյուսիսիցիները ավելի ու ավելի էին դիմադրում իրենց պատկերացմամբ ստրկության կողմնակից դաշնային կառավարությանը: Բացի այդ, փախստական ստրուկների մասին օրենքի կիրառումը ևս արմատականացնում էր շատ հյուսիսիցիների: Այսպես, Հյուսիսի կազմակերպություններից Նոր Անգլիայի Էմիգրանտների օգնության ընկերությունը (New England Emigrant Aid Company), զենք և այլ ապրանքներ տրամադրեց նրանց, ովքեր ցանկանում էին գնալ Կանգաս և ժողովրդական ինքնիշխանության միջոցով այդ տարածքը հաստատել որպես ստրկատիրությունից ազատ: Ստրկության հարցի բոլոր կողմերում քաղաքականությունը հետզհետե ավելի ռազմականացվում էր:

1855 թվականին նոր քաղաքական ուժ ստանձնեց հականերգադրյալների շարժումը, որն օգտվեց վիզերի փլուզումից և առաջնորդեց հակակառավարական գործողությունները՝ իր ջանքերն ուղղելով ամերիկյան

քաղաքներում հիմնականում կաթոլիկ գերմանացի և իռլանդացի ներգաղթյալների դեմ կռիվներին: Իրենց գործունեության մասին հարցումներին անգիտություն ձևացնելու իրենց հակվածության պատճառով այսպես կոչված «ոչինչ չիմացողները» (Know-Nothings)՝ «Ոչինչ չգիտեմ» կամ Ամերիկյան կուսակցությունը, տպավորիչ ձեռքբերումներ ունեցավ 1854 և 1855 թվականներին, հատկապես Նոր Անգլիայում և Միջին ատլանտյան շրջանում: Սակայն հակաանգլոֆոբիայի շարժումը չկարողացավ գրավել համազգային ուշադրությունը այնպես, ինչպես դա արդեն արել էր հակաստրկատիրական շարժումը:

1854 թվականին մեկնարկած հակաստրկատիրական քաղաքական շարժումները միավորվեցին նոր քաղաքական կուսակցության ստեղծմամբ: Վերադառնալով հիմնադիր հայրերին՝ այս քաղաքական ուժի կազմակերպիչներն այն անվանեցին Հանրապետական կուսակցություն (Republican Party):

Հատվածային խորը լարվածության պայմաններում երկու կողմերն էլ պատրաստվեցին գալիք նախագահական ընտրություններին: 1856 թվականի հունիսին Հանրապետական կուսակցությունը Ֆիլադելֆիայում անցկացրեց իր համագումարը և նախագահի թեկնածու առաջադրեց Կալիֆորնիայից Ջոն Չարլզ Ֆրեմոնտին: Վերջինիս տաղանդավոր կինը՝ Ջեյի Բենթոն Ֆրեմոնտը, ժողովրդականություն էր վայելում արմատական աբոլիցիոնիստների շրջանում:

Կանգաս-Նեբրասկայի բանավեճը, Հանրապետական կուսակցության կազմակերպումը և 1856 թվականի նախագահական նախընտրական քարոզարշավը միասին խթանեցին քաղաքական առաջնորդների նոր սերնդի առաջխաղացումը, որոնց թվում էր Աբրահամ Լինքոլնը: 1854 թվականին Իլինոյս նահանգի Պեորիա քաղաքում իր ելույթից ի վեր Լինքոլնը ձևակերպեց մի ուղերձ, որը լավագույն կերպով էր ներառում Հանրապետական կուսակցության հիմնական գաղափարներն ու տեսլականները: Ֆրեմոնտը պարտվեց ընտրություններում, սակայն հանրապետականները կարողացել էին հաղթել 16 ազատ նահանգներից 11-ում, ինչն իսկապես տպավորիչ ցուցանիշ էր նախագահական ընտրություններին առաջին անգամ մասնակցող նորաստեղծ կուսակցության համար: Այնուամենայնիվ, վճռորոշ նահանգներում հյուսիսային դեմոկրատներն անդրդվելի մնացին՝ չարձագանքելով Հանրապետական կուսակցության կոչերին:

Հատվածային ճգնաժամից դեպի ազգային ճգնաժամ

Հանրապետական կուսակցությունը խոստացել էր ստեղծել հակաստրկատիրական դաշինք, սակայն ընտրողները չարձագանքեցին այս խոստմանը: 1856 թվականին ընտրությունների ժամանակ Կանզասում իրավիճակը շիկացավ: Կանզասում ընտրակեղծիքների պատմությունը սկսվել էր տարիներ առաջ՝ 1854 թվականին, երբ հարևան Միսսուրիի բնակիչները հատում էին սահմանը՝ միջամտելու Կանզասի ընտրություններին: Ընդդիմությունը քննադատեց նախագահ Ֆրանկլին Փիթսի վարչակազմին՝ ժողովրդական ինքնիշխանության իդեալներին համապատասխան արդար ընտրություններ չապահովելու համար: Այդտեղից ճգնաժամը միայն խորացավ: Կանզասը քվեարկեց Միության կազմ իբրև ազատ նահանգ մտնելու օգտին, սակայն դաշնային կառավարությունը հրաժարվեց ճանաչել ընտրության արդյունքները՝ փոխարենը ճանաչելով ստրկության կողմնակից կեղծ օրենսդիր մարմինը: Այսպիսով, հատվածային ճգնաժամը վերածվեց ազգային ճգնաժամի: Կանզասը առաջին վայրն էր, որը ցույց տվեց, որ հատվածային ճգնաժամը հեշտությամբ կարող էր և իրականում արդեն իսկ վերածվել էր պայթյունավտանգ ազգային ամբողջական ճգնաժամի:

Կանզասը գրավեց ստրկության հիմնախնդրի շուրջ հակամարտության երկու կողմերի ծայրահեղական զինյալներին: 1856 թվականի նախագահական ընտրություններից հետո նախագահ Ջեյմս Բյուքենենը հստակ ներկայացրեց իր ծրագրերը: Նրա երդմնակալությունից շատ չանցած՝ Գերագույն դատարանը վճիռ կայացրեց *Սքոթն ընդդեմ Սենդֆորդի* (Scott v. Sandford) գործով՝ որոշելով, որ սևամորթ ամերիկացիները չեն կարող լինել Միացյալ Նահանգների քաղաքացիներ: Դատարանը վճռեց, որ Միսսուրիից ստրուկ Դրեդ Սքոթն իրավունք չունեի հայց ներկայացնել Միացյալ Նահանգների դատարաններում: Սա նշանակում էր Բյուքենենի վարչակազմի և նրա հարավային դաշնակիցների կողմից Միսսուրիի փոխզիջման ուղղակի հերքում: Դրեդ Սքոթի վերաբերյալ որոշումն ազդարարեց, որ դաշնային կառավարությունը լիովին հավատարիմ էր ստրկությունը ընդլայնելու իր ցանկությանը: Այնուամենայնիվ, Կանզասում շարունակվող իրադարձություններն էին, որ վերջապես ապացուցեցին շատ հյուսիսցիների, որ հատվածային ճգնաժամը չի վերանա, քանի դեռ չի վերացել ստրկությունը:

1858 թվականին Իլինոյսի Սենատի մրցապայքարը ամբողջությամբ դրսևորեց հատվածային ճգնաժամի շրջանակը: Հանրապետական թեկ-


նածու Աբրահամ Լինքոլնը մարտահրավեր նետեց ազդեցիկ դեմոկրատ Սթիվեն Դուգլասին ԱՄՆ Սենատում տեղի համար: Ապավինելով սպիտակամորթների գերակայության ջատագոյների աջակցությանը՝ Դուգլասը հանրապետական ընդդիմությանն անվանեց «սևական հանրապետական» կուսակցություն, որը ձգտում էր ռասայական հավասարության: Հանրապետականները, այդ թվում Լինքոլնը, պաշտպանական դիրք ընդունեցին: Լինքոլնը պարտվեց Սթիվեն Դուգլասին, բայց այդ մրցապայքարի ընթացքում հաստատվեց իբրև ազգային մակարդակով առաջատար հանրապետական: Հաշվի առնելով 1854 թվականից ի վեր Հանրապետական կուսակցության հաջողությունները՝ ակնկալվում էր, որ 1860 թվականի նախագահական ընտրությունները կարող էին Սպիտակ տուն բերել երկրի առաջին հակաստրկատեր նախագահին:

Միսսուրիի փոխգիշումից հետո անհանգիստ տասնամյակների ընթացքում հատվածային ճգնաժամը վերաճեց ազգային պառակտման: 1850-ականների կեսերին ամերիկացիներն արդեն փաստացի պատերազմում էին Կանզասի և Միսսուրիի հարթավայրերում: Զինյալներն ակնկալում էին գալիք փլուզումը և աշխատում էին այն օգտագործելու ուղղությամբ: Զոն Բրաունը մշակեց Վիրջինիայում (այժմ՝ Արևմտյան Վիրջինիա) գտնվող դաշնային զինանոցը՝ Հարփերս Ֆերրին (Harper's Ferry), գրավելու ծրագիր: Նա ծրագրում էր օգտագործել զենքերը՝ առաջնորդելու ստրուկների ապստամբությունը: Բրաունի արշավանքը սկսվեց 1859 թվականի հոկտեմբերի 16-ին: Հոկտեմբերի 18-ին Ռոբերտ Էդվարդ Լիի գլխավորած ուժերը ճնշեցին ապստամբությունը: Դեկտեմբերին Բրաունը կախադան բարձրացվեց:

Հարավացիները սպասում էին, որ 1860 թվականի գալիք ընտրությունները կլինեն անջատման և բաժանման յուրատեսակ հանրաքվե: Հանրապետականները փորձում էին իրենց ներկայացնել իբրև չափավորներ, որոնք հակադրվում էին և՛ աբոլիցիոնիստներին, և՛ ստրկության ծավալման ջատագոյներին: Այս մթնոլորտում կուսակցությունները մեկնարկեցին իրենց մրցապայքարը 1860 թվականի նախագահական ընտրություններում:

Ամփոփենք: Ստրկության հիմնախնդիրը ժամանակի ընթացքում Միացյալ Նահանգների քաղաքականությունը բաժանել էր անհաշտելի հատվածային գծերով: Հատվածային համակեցական ճգնաժամը առաջին անգամ նշմարվեց 1821 թվականին Միսսուրի նահանգի ընդունման շուրջ հակասությունների ժամանակ: Մինչ դեպի արևմուտք ընդլայնումը

շարունակվում էր, խորանում էին նաև ներազգային խզվածքը հատվածային գծերով և Միության ապամիասնացման վտանգը: 1850-ականների կեսերին ստեղծվեց նոր հակաստրկատիրական դաշինք՝ Հանրապետական կուսակցությունը: Ցանկանալով շրջափակել ստրկությունը և սահմանափակել այն այնտեղ, որտեղ արդեն իսկ գոյություն ուներ, հանրապետականները հաղթեցին 1860 թվականի նախագահական ընտրություններում: Հակաստրկատիրական շարժման հիմնական հոսքը դեռևս հավատարիմ էր ստրկության խնդրի խաղաղ հանգուցալուծման ջանքերին, որոնք ժամանակի ընթացքում կնպաստեին ստրկության «վերջնական վերացմանը»: Սակայն անջատման ճգնաժամը բացահայտեց, որ Հարավը չէր կարող հանդուրժել ստրկության տարածական ընդլայնման դեմ գործող դաշնային կառավարության գոյությունը: Ի վերջո, հարավային նահանգների անջատումը մեծացրեց պատերազմի միջոցով ազատագրության (էմանսիպացիայի) հնարավորությունը: Ըստ այդմ՝ նոր համակեցական փոխզիջումն անհնար էր դառնում, և կողմերը դիմեցին ծայրահեղ փաստարկին: 1861 թվականին ստրկության հաստատության և ամերիկյան ազգի ճակատագրի կանխորոշումը կախված էր Քաղաքացիական պատերազմից:



ԱՄՆ ազատ և ստրկատիրական նահանգները. հատվածային բաժանումը

ԳԼՈՒԽ 10

Համադաշնությունն ընդդեմ Միության. Ամերիկյան քաղաքացիական պատերազմը (1861-1865 թթ.)

Ամերիկյան քաղաքացիական պատերազմն ամենաարյունալին է երկրի պատմության մեջ: Զոհերի թիվը շուրջ 750,000 էր: Պատերազմը շոշափեց գրեթե յուրաքանչյուր ամերիկացու կյանքը. կենտրոնացվել էին երկրի ամբողջ ռեսուրսները: Զորահավաքի ծավալները հասան այնպիսի մակարդակի, որը նախկինում երբևէ չէր գրանցվել ամերիկյան պատմության մեջ. մոբիլիզացվել էր շուրջ 3 միլիոն մարդ: Հյուսիսի բանակը պատերազմը սկսեց գերազանցապես Միությունը պահպանելու համար, բայց պատերազմը ի վերջո վերածվեց ստրկությունը վերացնելու պայքարի: Աֆրոամերիկացիները՝ և՛ ստրկացած, և՛ ազատ, բարձրացնում էին ազատագրության խնդիրը և նպաստում էին այս հասարակական փոխակերպմանը: Միևնույն ժամանակ, կանայք իրենց վրա էին վերցնում պատերազմական ժամանակի համար անհրաժեշտ մյուս դերերը՝ լրացնելով բազմաթիվ զինվորական տարիքի տղամարդկանց բացակայությունը երկրի հասարակական-տնտեսական կյանքում:

Ամերիկյան մուտք էր գործում ազգաշինության վճռորոշ փուլ, որը, ըստ էության, ամերիկյան հեղափոխության գաղափարաբանական և տրամաբանական շարունակությունն էր: Հատվածային համակեցական ճգնաժամի և այն հաղթահարող պատերազմի արդյունքում ձևավորվելու էր ընդհանուր ամերիկյան ազգային ինքնությունը: Քաղաքացիական պատերազմը շրջադարձային իրադարձություն էր Միացյալ Նահանգների պատմության մեջ, որի ավարտն ավետեց ամերիկյան ժողովրդի համար նոր ժամանակաշրջանի սկիզբը:

1860 թվականի ընտրությունները և անջատումը

1860 թվականի նախագահական ընտրությունները քառսային էին: Ապրիլին Հարավային Կարոլինայի Չարլսթոն քաղաքում գումարվեց Դեմոկրատական կուսակցության համագումարը՝ նախագահի իրենց թեկնածուին առաջադրելու համար, բայց կուսակցությունը խորապես պառակտված էր: Հյուսիսային դեմոկրատները կողմ էին սենատոր Սթիվեն Դուգլասին, որը ժողովրդական ինքնիշխանության ջատագովի էր, մինչդեռ հարավային դեմոկրատները մտադիր էին սատարել այլ թեկնածուի, միայն ոչ Դուգլասին: Ստրկության կողմնակիցներին հարթակ ներառելու

ցանկության մերժումը կուսակցության առաջնորդների կողմից հանգեցրեց այն բանին, որ հարավային պատվիրակները լքեցին համագումարը՝ թույլ չտալով Դուգլասին ստանալ առաջադրման համար անհրաժեշտ ձայների երկու երրորդը: Հաջորդաբար Բալթիմորում անցկացված համագումարը առաջադրեց Դուգլասին, մինչդեռ հարավցիներն առաջադրեցին նախագահի իրենց թեկնածուին՝ գործող փոխնախագահ Ջոն Բրեքինրիջին Քենթաքից:

Հանրապետական կուսակցությունում նախագահի թեկնածու առաջադրվելու համար պայքարում էին մի քանի առաջատար գործիչներ: 1860 թվականի մայիսին կայացած համագումարում ձեռք բերվեց փոխզիջումային համաձայնություն, ըստ որի՝ կուսակցության թեկնածուին պետք է աջակցեին բոլոր ազատ նահանգները, քանզի միայն այդ իրավիճակում հանրապետական թեկնածուն ընտրություններում հաղթելու հնարավորություն կունենար: Նյու Յորքի սենատոր Ուիլյամ Սյուարդը առաջատար հավակնորդն էր: Սակայն հավանական թեկնածուների շարքից երրորդ քվեարկության ժամանակ պատվիրակները նախագահի թեկնածու ընտրեցին Աբրահամ Լինքոլնին Իլինոյսից, որը համեմատաբար անհայտ, բայց առավել համակրելի քաղաքական գործիչ էր:

Ընտրապայքարն էլ ավելի բարդացավ չորրորդ թեկնածուի՝ Թենեսիից Ջոն Բելի հայտնվելով, որը գլխավորում էր «Սահմանադրական միություն» կուսակցությունը: Սահմանադրական յունիոնիստները, որոնք կազմված էին նախկին վիգերից և նրանց հետ միավորված որոշ հարավային դեմոկրատներից, իրենց առաքելությունն էին դարձրել անջատման ուրվականից խուսափելը:

Աբրահամ Լինքոլնի առաջադրումը անսպասելի մեծ առավելություն տվեց Հանրապետական կուսակցությանը: Լինքոլնին աջակցում էին բոլոր ազատ նահանգները՝ բացառությամբ Նյու Ջերսիի, որտեղ ձայները կիսվում էին նրա ու Դուգլասի միջև: Քվեարկությանը մասնակցեց ընտրողների ընդհանուր թվի 81,2 տոկոսը, ինչն աննախադեպ բարձր ցուցանիշ էր ԱՄՆ նախագահական ընտրությունների համար: Լինքոլնը ստացավ ժողովրդական ձայների գրեթե 40 տոկոսը, սակայն քաղաքական դաշտն այնքան բաժանված էր, որ այդ ցուցանիշով նա ապահովեց միայն 180 ընտրիչների ձայներ: Լինքոլնին հետևում էր Ջոն Բրեքինրիջը՝ իր 72 ընտրիչների ձայներով՝ հաղթելով տասնհինգ ստրկատիրական նահանգներից տասնմեկում: Երրորդ տեղում էր Ջոն Բելը՝ 39 ընտրիչների ձայներով: Վերջին տեղում հայտնվեց Դուգլասը, որը կարողացել էր հավաքել միայն 12 ընտրիչների ձայներ՝ չնայած ստացել էր ժողովրդական ձայների գրեթե 30 տոկոսը:

Լինքոլնի ընտրությունը և ստրկության հաստատությանը սպառնացող վտանգը չափազանց շոշափելի էր երևում Խորը հարավի (Deep South) նահանգներին: Հարավային Կարոլինան արձագանքեց գրեթե անմիջապես: 1860 թվականի դեկտեմբերի 20-ին Հարավային Կարոլինայի համաժողովը 169-0 հարաբերակցությամբ միաձայն քվեարկեց Միացյալ Նահանգների հետ իրենց միությունը լուծարելու և անջատման որոշման օգտին: Խորը հարավի մյուս նահանգներն արագ հետևեցին այս օրինակին: Միսիսիպին ընդունեց իր համանման բանաձևը 1861 թվականի հունվարի 9-ին, Ֆլորիդան՝ հունվարի 10-ին, Ալաբաման՝ հունվարի 11-ին, Ջորջիան՝ հունվարի 19-ին, Լուիզիանան՝ հունվարի 26-ին և Տեխասը՝ փետրվարի 1-ին: Շատ հարավցիներ պնդում էին, որ անջատումը հիմնականում պայմանավորված էր նահանգների իրավունքները պահպանելու մտահոգությամբ: Հարավային նահանգները նաև բախվեցին նոր ազգի ձևավորման մարտահրավերներին: Փետրվարին նորաստեղծ Ամերիկայի Համադաշնային Նահանգները (Confederate States of America (CSA)) մշակեցին ստրկությունը պաշտպանող սահմանադրություն և իրենց նախագահ ընտրեցին Միսիսիպիից Ջեֆերսոն Դևիսին:



Կոնֆեդերատները արագորեն հրաժարվեցին իրենց ամերիկյան ինքնությունից և ընդունեցին նոր՝ համադաշնային ազգայնականությունը (Confederate nationalism): Համադաշնային ազգայնականությունը հիմնված էր մի քանի իդեալների վրա, որոնցից գլխավորը ստրկության հաստատություն էր: Կրոնը նույնպես ներազդեց համադաշնային ազգայնականության ձևավորման վրա, քանզի հարավցիները կարծում էին, որ Համադաշնությունն իրագործում էր Աստծո կամքը՝ իրենց հիմնադիր փաստաթղթում հստակորեն հղում կատարելով քրիստոնեությանը: Այնուամենայնիվ, անջատման բոլոր հիմնավորումները անխզելիորեն կապված էին ստրկության հիմնախնդրի հետ:

Ոչ բոլոր հարավցիներն էին համադաշնային ազգայնականության ջատագովներ: Հարավի միութենականները՝ յունիոնիստները, որոնք առավել տարածված էին Վերին հարավի նահանգներում, որտեղ ստրկատիրությունն առավել թույլ էր, պահպանեցին իրենց հավատարմությունը Միությանը: Այս հարավցիները միացան Միության բանակին, այսինքն՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների բանակին և պայքարեցին Համադաշնությանը հաղթելու համար: Սևամորթ հարավցիները, որոնց մեծագույն մասը ստրկացված էր, ճնշող մեծամասնությամբ աջակցում էր Միությանը՝ հաճախ փախչելով պլանտացիաներից և միանալով Միության բանակին:


Նախագահ Ջեյմս Բյուքենենը ուղղակիորեն չանդրադարձավ հարա-

վային նազանգների անջատման խնդրին մինչև իր լիազորությունների ավարտը՝ 1861 թ. մարտի սկիզբը: Հետևաբար՝ խնդիրը լուծելու բոլոր ջանքերն ընկան Կոնգրեսի վրա, մասնավորապես Տասներեքի հանձնաժողովի (Committee of Thirteen) վրա, որը ներառում էր այնպիսի նշանավոր գործիչների, ինչպիսիք էին Սթիվեն Դուգլասը, Ուիլյամ Սյուարդը, Ռոբերտ Թումբսը և Ջոն Քրիտենդենը: Հանձնաժողովի ջանքերի արդյունքը հայտնի դարձավ որպես «Քրիտենդենի փոխզիջում» (“Crittenden’s Compromise”): Սենատոր Քրիտենդենն առաջարկեց սահմանադրական մի շարք փոփոխություններ և լրացումներ, բայց դրանք ձախողվեցին Սենատի ամբողջական քվեարկության ժամանակ՝ 23-ն ընդդեմ 25-ի ձայների հարաբերակցությամբ: Հաշտեցումն անհնարին էր թվում:

1861 թվականի փետրվարի 4-ին Ալաբամա նահանգի Մոնտգոմերի քաղաքում հանդիպեցին յոթ անջատվող նահանգների ներկայացուցիչները՝ կազմակերպելու նոր ազգ-պետությունը: Պատվիրակներն Ամերիկայի Համադաշնային Նահանգների նախագահ ընտրեցին Ջեֆերսոն Դեյվիսին: Մայրաքաղաք դարձավ Մոնտգոմերին, սակայն մայիսին այն տեղափոխվեց Ռիչմոնդ (Վիրջինիա): Արդյո՞ք Վերին հարավի մյուս նահանգները կմիանային Համադաշնությանը, մնում էր անորոշ, բայց պարզ էր, որ Վերին հարավում հավատարմությունը Միությանը խիստ պայմանական էր և հիմնված էր դաշնային կառավարության կողմից ակնհայտ միջամտության բացակայության վրա: Ահա այս անորոշ քաղաքական իրավիճակին առերեսվեց նորընտիր նախագահ Աբրահամ Լինքոլնը 1861 թվականի մարտի 4-ին իր երդմնակալությունից հետո:



ԱՀՆ նախագահ Ջեֆերսոն Դեյվիս **ԱՄՆ նախագահ Աբրահամ Լինքոլն**



Միության և Համադաշնության նահանգները 1861 թ. (կարմիրով՝ ստրկական նահանգները, որոնք կազմեցին Ամերիկայի Համադաշնային Նահանգները, դեղինով՝ սահմանային ստրկական նահանգները, որոնք չեն անջատվել՝ պահպանելով հավատարմությունը Միությանը, մուգ կապույտով՝ Միության ազատ նահանգները, բաց կապույտով՝ Միության ազատ տարածքները և նարնջագույնով՝ ԱՄՆ ստրկական տարածքները, որոնք վիճարկվում էին Համադաշնության կողմից):

Պատերազմ հանուն միության (1861-1863 թթ.)

Իր երդմնակալության ուղերձում Լինքոլնը հռչակեց անջատումն իբրև «իրավականորեն անվավեր»: Թեև նա ռազմական ներխուժման մտադրություն չունեց հարավային նահանգներում, սակայն ուժ կիրառեց անջատված նահանգներում դաշնային սեփականության տիրապետումը պահպանելու համար: Հարավային Կարոլինա նահանգի Չարլսթոն քաղաքում գտնվող Ֆորտ Սամթերը պաշարների կարիք ուներ, և Լինքոլնը մտադիր էր մատակարարել անհրաժեշտ պաշարները: Հարավային Կարոլինան կոչ արեց ԱՄՆ զինվորներին տարհանել ամրոցից: Հրամանատար մայոր Ռոբերտ Անդերսոնը մերժեց տարհանումը: 1861 թվականի ապրիլի 12-ին Համադաշնության բանակի բրիգադային գեներալ Պիեռ Գուստավ Բորեգարը հրամայեց կրակ բացել ամրոցի վրա: Ապրիլի 13-ին Անդերսոնը հանձնվեց, և Միության զորքերը տարհանվեցին: Ի պատասխան հարձակման՝ նախագահ Աբրահամ Լինքոլնը եռամսյա ժամկետով 75,000 կամավորների զորակոչ հայտարարեց՝ ապստամբությունը ճնշելու համար: Այսպիսով, բռնկվեց Ամերիկայի քաղաքացիական պատերազմը:

Ֆորտ Սամթերի վրա հարձակումը և դրան հաջորդած զորահավաքի կոչը նպաստեցին, որ Վերին հարավի մի քանի նահանգներ ևս միանան Համադաշնությանը: Ընդհանուր առմամբ, 11 նահանգներ հրաժարվեցին ԱՄՆ-ին իրենց հավատարմությունից՝ լուծարված հռչակելով Միության հետ իրենց կապերը: Նոր պետությունը՝ Ամերիկայի Համադաշնային Նահանգները, հիմնված էր ստրկության հաստատության և այդ նպատակն ամրապնդող յուրաքանչյուրի ու բոլորի շահերի պաշտպանության ու առաջնության վրա: Որոշ հարավցիներ ստրկության պաշտպանությունը հիմնավորում էին նահանգների ինքնիշխանության իրավունքների պահպանման սկզբունքներով: Սակայն, ինչպես ժամանակին շատերն էին հեզնում, ստրկության հաստատությունը պաշտպանելու համար Համադաշնության սահմանադրությունը նույնիսկ ավելի քիչ ինքնիշխանություն էր թողել նահանգներին, քան ԱՄՆ Սահմանադրությունը:

Սահմանային Դելավեր, Մերիլենդ, Միսսուրի և Քենթաքի նահանգները աշխարհագրական, հասարակական, քաղաքական և տնտեսական կապեր էին պահպանում ինչպես Հյուսիսի, այնպես էլ Հարավի հետ: Չորս նահանգներն էլ վճռական նշանակություն ունեին հակամարտության ելքի համար: Ինքնին դրանք բավականաչափ նշանակալի չէին, բայց թե ում կմիանային, կարող էր ազդել հակամարտության ելքի վրա: Լինքոլնը և նրա ռազմական խորհրդականները հասկանում էին, որ սահմանային

նահանգների կորուստը կնշանակեր Միության ռեսուրսների զգալի նվազում և կվտանգեր մայրաքաղաք Վաշինգտոնը: Հետևաբար, նախագահը քայլեր ձեռնարկեց ապահովելու այդ նահանգների քաղաքացիների հավատարմությունը: Չնայած Միասուրիում և Քենթաքիում պարտիզանական պատերազմին՝ չորս սահմանային նահանգները հավատարիմ մնացին Միությանը պատերազմի ամբողջ ընթացքում:

Օտար երկրները, առաջին հերթին եվրոպական տերությունները, նույնպես խորը հետաքրքրությամբ էին հետևում ծավալվող ամերիկյան քաղաքացիական պատերազմին: Միացյալ Նահանգների ներսում ժողովրդավարական համակարգի փորձությանը ուշադրությամբ էին հետևում նաև Եվրոպայի ժողովրդավարական շարժումների ներկայացուցիչները: Փոխարենը, բամբակի արդյունաբերության հետ սերտ կապեր ունեցողները ծավալվող իրադարձությունները դիտարկում էին բոլորովին հակառակ մտահոգություններով: Պատերազմը նշանակում էր բամբակի մատակարարման հնարավոր խաթարում, ինչը կարող էր աղետալի հետևանքներ ունենալ տարբեր երկրների տեքստիլ արդյունաբերությունների համար, ինչպես նաև միջազգային առևտրային և ֆինանսական շուկաներում:

Մինչ նախագահ Լինքոլնը, նրա վարչակազմը և պատերազմի քարտուղարությունը մշակում էին ապստամբությունը ճնշելու ռազմավարություններ, աֆրոամերիկացիներն արագ բարձրացրին ստրկության վերացման հարցը՝ պահանջելով այն դիտարկել որպես առաջնային խնդիր: Դեռևս 1861 թվականին աֆրոամերիկացիները Լինքոլնի վարչակազմին խնդրեցին իրավունք տալ ծառայելու ԱՄՆ բանակում և նավատորմում: Լինքոլնը սկզբում վարում էր պահպանողական, սահմանափակ պատերազմ: Նա կարծում էր, որ աֆրոամերիկյան զորքերի առկայությունը կսպառնար ստրկատիրական սահմանային նահանգների հավատարմությանը, և որ սպիտակամորթ կամավորները կարող էին հրաժարվել սևամորթների հետ կողք կողքի ծառայելուց: Այնուամենայնիվ, բանակի հրամանատարները չէին կարող անտեսել նախկինում ստրկացած մարդկանց աճող բնակչության թիվը, ովքեր փախել էին ստրկությունից՝ ազատություն փնտրելով Միության բանակի բնագծերի թիկունքում:

1861 թ. մայիսին գեներալ Բենջամին Ֆ. Բաթլերը, անտեսելով իր վերադասներին, սկսեց ընդունել ազատություն փնտրող աֆրոամերիկացիներին, ովքեր եկել էին Վիրջինիայի Ֆորտ Մոնրո՝ համարելով նրանց պատերազմական ավար: Կոնգրեսը հաստատեց Բաթլերի քաղաքականությունը՝ ընդունելով Առաջին բռնագրավման օրենքը (First Confiscation Act),

բայց «պատերազմի մաքսանենգ ապրանքները» (“contraband of war”), ինչպես կոչվում էին փախստական աֆրոամերիկացիները, թողնվեցին անորոշ կարգավիճակում: Երբ ստրկացված անձը փախչում էր Միության կողմը, նրա ստրկատիրոջ հայցը չեղյալ էր հայտարարվում: Այս աֆրոամերիկացիները Միացյալ Նահանգների ազատ քաղաքացիներ չէին համարվում: Այդուհանդերձ, կյանքը «մաքսանենգ ապրանք» համարվողներին առաջարկեց ուղի դեպի հնարավոր ազատություն, և հազարավոր ստրկացված մարդիկ օգտվեցին այդ հնարավորությունից:

Միության զինվորականների համար փախստական ստրուկների հարցը երկրնտրանք էր առաջացնում: Զինվորներին արգելված էր միջամտել ստրկությանը կամ օգնել փախստականներին, սակայն շատ զինվորներ նման քաղաքականությունը համարում էին ոչ քրիստոնեական: Նույնիսկ նրանք, ովքեր անտարբեր էին ստրկության հանդեպ, դժկամությամբ էին հեռացնում հնարավոր աշխատուժը, քանզի այդ կերպ փաստացի օգնում էին հակառակորդին: Բացի այդ, ստրկացված մարդիկ կարող էին օգտակար տեղեկատվություն տրամադրել տեղանքի և համադաշնային զորքերի տեղաշարժերի մասին: Միության բանակի սպաները դժկամությամբ էին վերաբերվում ազատություն փնտրող մարդկանց հեռացնելու գաղափարին, հատկապես երբ Համադաշնության հրամանատարները սկսել էին պարտադրել ստրկացած բանվորներին աշխատել իրենց պաշտպանական ամրաշինությունների վրա: Յուրաքանչյուր ստրուկ, ով փախել էր Միության կողմը, կորուստ էր Համադաշնության պատերազմական ջանքերի համար:

Կարճ հակամարտության հույսերը ի չիք դարձան, երբ Միության և Համադաշնության զորքերը հանդիպեցին Բուլ Ռանի ճակատամարտում՝ Մանասասի մոտակայքում (Վիրջինիա): Ճակատամարտում Համադաշնության հաղթանակը ցույց տվեց, որ Քաղաքացիական պատերազմը երկար և ծախսատար է լինելու: Բուլ Ռանի ճակատամարտից հետո մոտ մեկ տարի պատերազմի Արևելյան թատերաբեմը համեմատաբար լուռ մնաց:

Պաշտոնական Վաշինգտոնում և ԱՄՆ Կոնգրեսում հարավցիների բացակայությունը հանրապետականներին հնարավորություն տվեց վերջապես ընդունելու վիզերի տնտեսական փաթեթը, որը ներառում էր Հոմստեդ ակտը (Homestead Act)՝ տնամերձ հողաբաժինների մասին օրենքը, Քոլեջների հողաբաժինների հատկացման օրենքը կամ Մորիլի օրենքը (Land-Grant College Act (aka the Morrill Act)) և Խաղաղօվկիանոսյան երկաթուղու օրենքը (Pacific Railroad Act): Դաշնային կառավարությունը նաև սկսեց շարժվել դեպի պետության կողմից ավելի վերահսկվող արժու-

թային համակարգի՝ կանաչ դուլարի և ազգային բանկերի հաստատման ուղղությամբ: Նման գործողությունները նպաստեցին դաշնային կառավարության իշխանության և արդյունաբերության ընդլայնմանը:

Դեմոկրատական կուսակցությունը իր հարավային առաջնորդների բացակայության պայմաններում բաժանվեց երկու ճամբարի: Պատերազմի դեմոկրատները հիմնականում կանգնած էին նախագահ Լինքոլնի թիկունքում: Խաղաղության դեմոկրատները, որոնք հայտնի էին նաև իբրև «պղնձյա գլուխներ» (Copperheads), համակրում էին Համադաշնությանը. նրանք շահարկում էին հանրային հակապատերազմական տրամադրությունները և փորձում էին նախագահ Լինքոլնին մղել անհապաղ խաղաղության շուրջ բանակցությունների:

Երկար ուշացումով Միության զորահրամանատարներից Ջորջ Մակ-Քլեյլանի 120,000-անոց Պոտոմակի բանակը նավերով շարժվեց դեպի Յորք և Ջեյմս գետերի միջև ընկած թերակղզի (Վիրջինիա): Մանասաս հանգույցի նախկին մարտադաշտով ցամաքով անցնելու փոխարեն, Մակ-Քլեյլանը փորձեց շրջանցել ապստամբական ուժերին և մտնել Համադաշնության մայրաքաղաք Ռիչմոնդ՝ անակնկալի բերելով հակառակորդին: Մակ-Քլեյլանը, սակայն, չափազանց զգուշավոր մարդ էր, ով հետևողականորեն գերազնահատում էր իր հակառակորդների թիվը: Այս զգուշավոր մոտեցումը ձեռնտու էր Համադաշնության ուժերին, որոնք տեղակայված էին Ռիչմոնդի ծայրամասում: Համադաշնության գեներալ Ռոբերտ Է. Լին, որը նշանակվել էր Հյուսիսային Վիրջինիայի բանակի հրամանատար, ստիպեց Մակ-Քլեյլանին նահանջել Ռիչմոնդից: Թերակղզու արշավանքը (Peninsular Campaign) Միության համար դարձավ ահռելի ձախողում:

Արևմտյան թատերաբեմը հույս ներշնչեց Միացյալ նահանգներին: 1862 թվականի փետրվարին Միության գեներալ Ուլիսես Ս. Գրանտի զորքերը գրավեցին Թենեսի գետի երկայնքով տեղակայված Հենրի և Դոնելսոն ամրոցները: Արևմուտքում ծավալվող ռազմական գործողությունները մեծապես տարբերվում էին արևելյան ռազմաճակատից: Բուլ Ռանի առաջին ճակատամարտում, օրինակ, երկու մեծ բանակներ կռվում էին պետությունների մայրաքաղաքները վերահսկելու համար, մինչդեռ Արևմուտքում Միության և Համադաշնության ուժերը պայքարում էին գետերի վերահսկողության համար, քանզի Միսիսիպի գետը և նրա վտակները Միության Անակոնդա պլանի (Anaconda Plan) իրագործման հիմնական բաղադրիչներն էին: Այս ճակատի գլխավոր բախումներից մեկը տեղի ունեցավ 1862 թվականի ապրիլի 6-7-ին Թենեսի գետի ափին՝ Շայլոհի

ճակատամարտում: Ճակատամարտը, որը տևեց ընդամենը երկու օր, մինչ այդ պահը ամերիկյան պատմության մեջ ամենակորստաբեր մարտն էր: Միության հաղթանակը ցնցեց և Միությունը, և Համադաշնությունը: Մարտի դաշտում ընկան 23,000 զինվորներ, մի թիվ, որը գերազանցում էր Միացյալ Նահանգների բոլոր նախորդ պատերազմների զոհերի թիվը միասին վերցրած: Հաջորդաբար Նոր Օռլեանի գրավումը Միության զորքերի կողմից ծանր հարված էր Համադաշնությանը: 1862 թվականի գարունն Արևմտյան թատերաբեմում ավարտվեց Միության բանակի հաջողությամբ:

Միության և Համադաշնության նավատորմերը նույնպես ակտիվորեն ներգրավված էին քաղաքացիական պատերազմում: Հակամարտ կողմերից յուրաքանչյուրի նավատորմն օգտագործում էր վերջին տեխնոլոգիաները՝ մյուսներին գերազանցելու համար: Ծովային պատերազմի ապագան ուրվագծվեց 1862 թվականի գարնանը, երբ երկու երկաթե զրահակիր ռազմանավեր մենամարտեցին Վիրջինիա նահանգի Հեմփթոն Ռոուդս կոչվող վայրի մերձակայքում:

1862 թվականի ամռանը աֆրոամերիկացիների գործողությունները Միությանը մղում էին դեպի լիակատար ազատագրության պատերազմ: Առաջին բռնագրավման օրենքից հետո՝ 1862 թվականի ապրիլին, Կոնգրեսը վերացրեց ստրկության հաստատությունը Վաշինգտոնում՝ Կոլումբիայի շրջանում: 1862 թվականի հուլիսին Կոնգրեսն ընդունեց Երկրորդ բռնագրավման օրենքը (Second Confiscation Act)՝ փաստացի ազատագրելով ստրկացված մարդկանց Միության վերահսկողության տակ անցած Համադաշնության տարածքներում: Օրենսդրության մասին լուրերն արագ տարածվեցին Հարավի ստրկացված մարդկանց շրջանում, և սա հանգեցրեց փախստական ստրուկների ավելի մեծ հոսքի դեպի Միության բնագծեր: Նախագահ Աբրահամ Լինքոլնը սկսեց վերաբժնորել իր քաղաքականությունը: 1862 թվականի ամռանը Լինքոլնն առաջին անգամ իր վարչակազմի անդամներին ներկայացրեց Ազատագրության հռչակագրի (Emancipation Proclamation) գաղափարը: 1862 թվականի օգոստոսին նա առաջարկեց Էմանսիպացիոն (Ազատագրության) հռչակագրի փաստաթուղթ ընդունել: Մինչ նրա վարչակազմը պաշտպանում էր նման գաղափարը, պետքարտուղար Ուիլյամ Սյուարդը պնդում էր, որ Լինքոլնը սպասի Միության «վճռական» հաղթանակին, որպեսզի այդ հռչակագիրը չթվա ձախողված կառավարության կողմից չափազանց հուսահատ միջոց:

1862 թվականի սեպտեմբերի 17-ին Մակ-Քլեյլանի և Լիի բանակները բախվեցին Մերիլենդում՝ Անտիետամի ճակատամարտում, երբ ավելի

քան 20,000 զինվորներ զոհվեցին, վիրավորվեցին կամ անհետ կորան: Թեև Անտիետամի ճակատամարտը Միության համար դեռևս վճռական հաղթանակ չէր, այդուհանդերձ Լինքոլնին բավարարում էր Ազատագրության հռչակագիրը հրապարակելու համար, որն ազատեց ստրկացած մարդկանց Համադաշնության վերահսկողության տակ գտնվող տարածքներում: Ազատագրության հռչակագրում նաև զգալի բացառություններ կային սահմանային նահանգների համար և Համադաշնության անդամ որոշ նահանգների տարբեր մասերի համար: Ստրկության համընդհանուր վերջից հեռու՝ Ազատագրության հռչակագիրը այնուամենայնիվ կենսական նշանակություն ունեցավ՝ պատերազմի նպատակները Միության պահպանումից տեղափոխելով ստրկության վերացում: Նախագահ Լինքոլնը և նրա վարչակազմը ազատագրումը դիտարկում էին նաև որպես պատերազմի միջոց, որը ոչ միայն կզրկեր Համադաշնությանը աշխատուժից և կթուլացներ Հարավի տնտեսությունը, այլև կհարվածեր Համադաշնության բարոյահոգեբանական վիճակին: Ավելին, Անտիետամի ճակատամարտը և Ազատագրության հռչակագրի ընդունումը նաև երաշխավորեցին, որ Համադաշնությունը չի ճանաչվի եվրոպական տերությունների կողմից:



Գեներալ Ուինֆիլդ Սքոթի Անակոնդա պլանը (Anaconda Plan, 1861)

Պատերազմ հանուն ազատագրության (1863-1865 թթ.)

Համադաշնության տարածքի խորքերը Միության բանակների ներթափանցմանը զուգահեռ՝ քաղաքական գործիչներն ու գեներալները առավել խորությամբ գիտակցեցին աֆրոամերիկացիներին բանակ և նավատորմ զորակոչելու անհրաժեշտությունն ու օգուտը: Այնուամենայնիվ, լայնածավալ զորակոչ սկսվեց միայն 1863 թվականի հունվարի 1-ին Ազատագրության հռչակագրի ուժի մեջ մտնելուց հետո: Թեև ավելի քան 180,000 աֆրոամերիկացիներ (միության բանակի 10 տոկոսը) զորակոչվեցին պատերազմի ընթացքում, Միացյալ Նահանգների գունավոր զորքերի մեծ մասը (United States Colored Troops (USCT)) մնաց ռազմաճակատային գծերի թիկունքում որպես կայազորային ուժեր՝ հաճախ կատարելով ինժեներական աշխատանքներ և ոչ մարտական առաջադրանքներ:

Միության բանակի սևամորթ զինվորները ենթարկվում էին ծայրահեղ խտրականության և անհամեմատ քիչ էին վարձատրվում, քան սպիտակամորթ զինվորները, մինչդեռ գերեվարվելու պարագայում ենթարկվում էին դաժան կտտանքների, սպանության կամ ստրկության: Աֆրոամերիկացի զինվորների մեծ մասը նախկին ստրուկներ էին, և նրանց ներկայությունը որպես զինված, կապույտ համազգեստով զինվորներ, ավեցունց ազդեցություն ունեցավ Համադաշնության ողջ տարածքում: Աֆրոամերիկացի զինվորներն իրենց ընկերների և ընտանիքների համար խորհրդանշում էին ազատագրումն ու ստրկության վերացումը: Սպիտակամորթ հարավցիները, ի դեմս նրանց, Հին հարավի ռասայական և ընկերային աստիճանակարգության ամբողջական կազմաքանդման մոտալուտ վտանգ էին զգում:

Միացյալ Նահանգների գունավոր զորքերը մեծամասամբ տեղակայվում էին Հարավում՝ կատարելով կայազորային պարտականություններ: Աֆրոամերիկացիները նաև լավագույնս դրսևորվում էին մարտադաշտում՝ ջախջախելով սպիտակ առասպելներն առ այն, որ հնազանդ, վախկոտ սևամորթ ստրուկները կձնկեին պատերազմի հորձանուտում: Իրենց կամավորության, մարտադաշտում ծառայությունների և արյան գնով սևամորթ զինվորները ներկայացրին քաղաքացիություն ստանալու իրենց պահանջները:

1863 թվականին Հյուսիսային Վիրջինիայի բանակը գեներալ Լիի գլխավորությամբ շարունակեց իր հարձակողական ռազմավարությունը արևելքում: 1863 թվականի ապրիլի 30-ից մայիսի 6-ը Վիրջինիա նահանգի Չանսելորսվիլ գյուղի մոտակայքում տեղի ունեցավ պատերազմի

գլխավոր ճակատամարտերից մեկը: Չանսելորսվիլի ճակատամարտը Համադաշնության ակնառու հաղթանակը լինելով հանդերձ՝ նաև հանգեցրեց մեծ զոհերի, որոնց թվում էր համադաշնային զորքերի գեներալ-մայոր Սթոունուոլ Ջեքսոնը: Չնայած Ջեքսոնի մահվանը՝ գեներալ Լին շարունակեց իր հարձակումը դաշնային ուժերի դեմ և 1863 թվականի ամռանը ներխուժեց Փենսիլվանիա: Հուլիսի 1–3-ը Գետիսբուրգի եռօրյա ճակատամարտում երկու կողմերն էլ ծանր կորուստներ կրեցին: Այնուամենայնիվ, հուլիսի 3-ին հետևակային հարձակումը Միության զորքերի կենտրոնի վրա, որը նաև հայտնի է որպես Պիկետի գրոհ, կործանարար էր Համադաշնության զորքերի համար, ինչը ստիպեց գեներալ Լինին նահանջել Փենսիլվանիայից: Գետիսբուրգի արշավանքը Լիի վերջին հյուսիսային ներխուժումն էր, իսկ Գետիսբուրգի ճակատամարտը մնում է քաղաքացիական պատերազմի և ամերիկյան պատմության ամենաարյունալի բախումը՝ 51,000 զոհերով:

Միաժամանակ արևմուտքում Միության ուժերը շարունակեցին իրենց զորաշարժը Միսիսիպի գետի և նրա վտակների երկայնքով: 1862 թվականի ձմռանը գեներալ Գրանտը սկսեց իր արշավանքը դեպի Վիկսբուրգ, Միսիսիպի: Վիկսբուրգը, որը հայտնի էր որպես «Արևմուտքի Ջիբրալթար», արևմուտքում Համադաշնության գլխավոր հենակետն էր, որի նվաճումը Միության ուժերին թույլ կտար անարգել արշավել Միսիսիպի գետի երկայնքով: Գրանտի արշավանքը դեպի Վիկսբուրգ ավարտվեց 1863 թվականի հուլիսի 4-ին քաղաքի նվաճմամբ: Վիկսբուրգի անկումը Համադաշնությունը բաժանեց երկու հատվածի:

Չնայած 1863 թ. ամռանը ռազմաճակատում Միության հաջողություններին՝ պատերազմի դեմ դժգոհությունը Հյուսիսում եռում էր: Դժգոհության ալիք բարձրացավ հատկապես Ջինվորագրման օրենքի (Enrollment Act) պատճառով, որը քաղաքացիական պատերազմի ժամանակ հյուսիսային բնակչության շրջանում պարտադիր զորակոչի առաջին փորձն էր: Հյուսիսային աշխատավոր դասակարգի ներկայացուցիչները հատկապես զայրացած էին, որ հարուստները կարող էին 300 դոլար վճարել իրենց փոխարինողների համար՝ խուսափելով զորակոչից: «Հարուստի պատերազմը, բայց աղքատի կոիվը» աշխատավորների բողոքի հայտնի ասույթն էր:

Բացի այդ, Ազատագրության հռչակագիրն անհանգստացնում էր հյուսիսային քաղաքների բազմաթիվ ներգաղթյալների և աշխատավորների, քանզի, նրանց կարծիքով, ստրկությունից ազատված մարդիկ շուտով կտիրանային իրենց աշխատատեղերին: Տնտեսական և ռասայական այս անհանգստությունները գագաթնակետին հասան 1863 թվականի հուլի-

սին Նյու Յորքում տեղի ունեցած զանգվածային անկարգությունների ժամանակ: Քաղաքացիական պատերազմից զատ, Նյու Յորքի ապստամբությունը (New York City Draft Riots) ամերիկյան պատմության մեջ մինչ օրս ամենամեծ քաղաքացիական անկարգությունն էր, որը կասեցվեց միայն Միության զորքերի տեղակայմամբ, որոնց մի մասը Նյու Յորք ուղարկվեց անմիջապես Գետիսբուրգի մարտադաշտից: Հյուսիսի մյուս հատվածները՝ հատկապես Հին Հյուսիս-արևմուտքում, ցուցաբերեցին համերաշխության բարձր մակարդակ՝ հանգանակելով միլիոնավոր դուլարներ Միության զինվորների համար:

Համանման իրավիճակ էր ստեղծվել նաև Համադաշնությունում: 1862 թվականի գարնանը Համադաշնության Կոնգրեսն ընդունեց իր առաջին զորակոչային օրենքը, որում պարտադիր զինվորական ծառայության էին զորակոչվում 18-35 տարեկան բոլոր աշխատունակ տղամարդիկ, սակայն դասակարգային նշանակալի բացառություններով: 1863 թվականի գարնան ընթացքում սննդամթերքի մշտական պակասը հանգեցրեց «հացի խռովությունների» Համադաշնության մի քանի քաղաքներում, հատկապես Վիրջինիա նահանգի Ռիչմոնդ և Ջորջիայի Օգաստա, Մակոն և Կոլումբոս քաղաքներում: Բողոքի զանգվածային ցույցերն առաջնորդում էին կանայք՝ բողոքելով Հարավում սննդի պակասի և գնաճի դեմ: Համադաշնության իշխանությունները բազմակողմ պայքար էին մղում մի կողմից Միության ներխուժման, մյուս կողմից ներքին այլախոհության դեմ:

1864 թվականին Միության ռազմավարությունը փոխվեց: Աստիճանաբար ընդունվեց «կոշտ պատերազմի» նոր մարտավարությունը, և Հարավի խաղաղ բնակիչների ու նրանց ունեցվածքի նկատմամբ զսպվածությունն ի վերջո իր տեղը զիջեց հարավցիներին բարոյալքելու և հարավային տնտեսությունը ոչնչացնելու ջանքերին: Գրանտի հաջողությունները Վիկսբուրգում, իսկ 1863 թ. նոյեմբերին Չաթանուգայում (Թենեսի) և Գետիսբուրգի ճակատամարտից հետո Լիի զորքերի հետապնդումը զգուշավոր գեներալ Ջորջ Միդի կողմից ստիպեցին Լինքոլնին 1864 թ. սկզբին Միության բանակի գլխավոր հրամանատար նշանակել գեներալ Գրանտին: Հրամանատարության այս փոփոխությունը հանգեցրեց Արևելյան թատերաբեմի ամենաարյունալի մարտերին: Գրանտի ցամաքային արշավանքը՝ ներառյալ Վայրի բնության ճակատամարտը (Battle of the Wilderness), Սառը նավահանգստի ճակատամարտը (Battle of Cold Harbor) և Պետերսբուրգի պաշարումը, ցույց տվեցին գեներալի անխոնջ պատրաստակամությունը՝ հարձակվելու Հյուսիսային Վիրջինիայի բանակի վրա:

1864 թվականի հունիսին Գրանտի բանակը շրջապատեց Համադաշնության Պետերսբուրգ քաղաքը (Վիրջինիա): Պաշարման այս գործողությունները կտրեցին Համադաշնության ուժերը և մատակարարումները մայրաքաղաք Ռիչմոնդից: Միևնույն ժամանակ, արևմուտքում Միության բանակները՝ գեներալ Ուիլյամ Թեքումսե Շերմանի հրամանատարությամբ, կոշտ պատերազմի ռազմավարության կիրառմամբ աստիճանաբար առաջ շարժվեցին կենտրոնական Թենեսիում և հյուսիսային Ջորջիայում՝ 1864 թվականին սեպտեմբերին գրավելով Ատլանտան իր կարևոր երկաթուղային հանգույցով:

1864 թվականին պատերազմի երկու թատերաբեմերում ռազմական գործողություններն էլ ավելի շատ զոհերի պատճառ դարձան, որին նպաստեց նաև համաճարակների տարածումը: Հիվանդությունները հետապնդում էին երկու բանակներին էլ. Քաղաքացիական պատերազմի զոհերի ընդհանուր թվի կեսից ավելին բաժին է ընկնում հիվանդություններին: Քաղաքացիական պատերազմի ընթացքում բժշկությունը կենտրոնացած էր գրեթե բացառապես հիվանդների բուժման, այլ ոչ թե հիվանդությունների կանխարգելման վրա: Փորձերի և սխալների միջոցով զինվորները սկսեցին պաշտպանվել առավել կանխարգելիչ վարակի աղբյուրներից: Բժշկական վիրահատությունը սահմանափակ էր և դաժան: Մարտական վերքերի մեծ մասը պահանջում էր բուժում անդամահատման միջոցով: Հյուսիսում հիվանդանոցային պայմանները ավելի բարվոք էին: Կանայք առանցքային դերեր ստանձնեցին ինչպես հյուսիսային, այնպես էլ հարավային հիվանդանոցներում:

1864 թվականի աշնանը ռազմական և հասարակական իրադարձություններն ընթանում էին նախագահական ընտրությունների համապատկերում: Մինչ պատերազմը մոլեգնում էր, նախագահական մրցապայքարը ի ցույց դրեց վերափոխված ընտրազանգվածի գոյությունը: 1860 թվականից ի վեր ավելացել էին երեք նոր նահանգներ՝ Արևմտյան Վիրջինիան, Նևադան և Կանզասը, մինչդեռ Համադաշնության տասնմեկ նահանգները չէին մասնակցում ընտրություններին: Լինքոլնը և նրա փոխնախագահի թեկնածու Էնդրյու Ջոնսոնը (Թենեսիից) առաջադրվել էին «Ազգային միություն» կուսակցության (National Union Party) կողմից:

Ընտրապայքարում Լինքոլնի գլխավոր մրցակիցը նրա կողմից նշանակված Միության բանակի նախկին հրամանատար գեներալ Ջորջ Բ. Մակ-Բլեյլանն էր: Թեև Մակ-Բլեյլանն ինքը «պատերազմի դեմոկրատ» էր, 1864 թվականին Դեմոկրատական կուսակցության պաշտոնական ծրագիրը պատվում էր Քաղաքացիական պատերազմի անհապաղ ավար-

տի վերաբերյալ բանակցությունների շուրջը: Մակ-Քլեյլանի փոխնախագահի թեկնածուն Ջորջ Հ. Փենդլթոնն էր Օհայոյից, որը հայտնի «խաղաղության դեմոկրատ» էր:

1864 թվականի նախագահական քարոզարշավի ընթացքում Լինքոլնը հիմնականում նսեմացնում էր վերընտրվելու իր հնարավորությունները, և Մակ-Քլեյլանը ենթադրում էր, որ Միության զինվորների մեծ մասն իրեն կաջակցի: Այնուամենայնիվ, 1864 թվականի սեպտեմբերի 2-ին գեներալ Ուիլյամ Շերմանի կողմից Ատլանտան գրավելու խանդավառության և Միության զորքերի ճնշող մեծամասնության աջակցության շնորհիվ Լինքոլնը հեշտությամբ հաղթեց ընտրություններում: Բացի այդ, Լինքոլնն աջակցություն ստացավ ավելի արմատական հանրապետական խմբակներից և «Ռեպիկալ Ժողովրդավարություն» կուսակցության անդամներից, որոնք պահանջում էին վերջ տալ ստրկությանը: Ժողովրդական քվեարկության արդյունքում Լինքոլնը հաղթեց Մակ-Քլեյլանին՝ ստանալով ձայների 55,1 տոկոսը 44,9-ի դիմաց: Ընտրիչների կոլեգիայում Լինքոլնի հաղթանակն առավել ցայտուն էր՝ 212-ն ընդդեմ 21-ի: Լինքոլնը հաղթեց քսաներկու նահանգներում, իսկ Մակ-Քլեյլանը միայն երեքում՝ Նյու Ջերսի, Դելավեր և Քենթաքի:

1865 թվականի մարտի 4-ին, իր վերընտրությունից հետո, նախագահ Աբրահամ Լինքոլնն իր երկրորդ երդմնակալության ուղերձում գթասրտության, իրավունքի մեջ հաստատականության, երկրի վերքերն ամոքելու և համազգային համերաշխության կոչ արեց՝ ընդգծելով ներազգային և միջազգային արդար ու հարատև խաղաղության գաղափարները:

1864-1865 թվականները Քաղաքացիական պատերազմի ամենադաժան տարիներն էին: Երկու կողմերի համար ահռելի կորուստներով արդյունավորված Միության բանակների արշավանքները ինչպես Արևմուտքում, այնպես էլ Արևելքում ոչնչացրեցին Համադաշնության ենթակառուցվածքները և ցույց տվեցին Միության ռազմավարության արդյունավետությունը: Ատլանտայի նվաճումից հետո Ուիլյամ Շերմանը 1864 թվականի աշնանն իրականացրեց իր դեպի ծով արշավանքը՝ գրավելով Սավաննան և լուրն ուղարկելով Աբրահամ Լինքոլնին իբրև Սուրբ Ծննդյան նվեր: Այնուհետև՝ 1865 թվականի սկզբին, գեներալ Շերմանի ավերիչ արշավանքը տեղափոխվեց Համադաշնության սիրտը՝ Հարավային Կարոլինա. Կոլումբիայի հրդեհումով և Չարլսթոնի նվաճմամբ պատերազմի արհավիրքը հասավ անջատողականության ծննդավայր: Ի վերջո, Միության բանակի հրամանատար գեներալ Ուիլիսես Գրանտի գլխավորած Պոտոմակի բանակը համառորեն հետապնդեց Հյուսիսային Վիրջինիայի բանակին, և 1865

թվականի ապրիլի 9-ին Ապոմատոքսի դատարանի շենքում Համադաշնության բանակի հրամանատար գեներալ Ռոբերտ Է. Լին հանձնվեց Միության բանակի հրամանատար գեներալ Ուլիսես Գրանտին՝ փաստորեն վերջ դնելով Քաղաքացիական պատերազմի հիմնական ռազմական գործողություններին:

Ամփոփենք: Հատվածային համակեցական ճգնաժամը հաղթահարվեց պատերազմում Հյուսիսի լիակատար հաղթանակով և Հարավի անվերապահ հանձնվելով: Ամերիկյան մուտք էր գործում ազգաշինության նոր փուլ: Երբ 1865 թվականին մարտադաշտերը լռեցին, նահանգների Միությունը լքելու մարտահրավերը պատասխան ստացավ, ստրկությունն արմատախիլ արվեց, և վերականգնվեց Ամերիկայի Միացյալ Նահանգների տարածքային ամբողջականությունը: Այդուամենայնիվ, Քաղաքացիական պատերազմի ավարտը նաև նոր մարտահրավերներ ծնեց: Թե ինչպիսին կլինեք համակեցական համաձայնության նոր հարացույցը, պիտի որոշարկվեր հետագա տասնամյակի ընթացքում: Պատասխաններ էին պահանջում ազգային վերամիասնացման, հասարակական-տնտեսական, մշակութային, քաղաքական և ինքնութենական վերակառուցման հիմնահարցերը: Հյուսիսային և հարավային հարյուրհազարավոր զինվորներ տուն վերադարձան, որոնցից շատերը կոտրված էին մարմնապես կամ հոգեպես: Պլանտացիաների սեփականատերերը հող ունեին, բայց ոչ աշխատուժ: Ազատագրված աֆրոամերիկացիներն ունեին իրենց աշխատուժը, բայց ոչ հող: Նախկինում ստրկացված մարդիկ նաև առերեսվեցին հնարավորությունների նոր աշխարհի՝ օրինական ամուսնության, ընտանիքի վերամիավորման, աշխատանքի և այլ նոր սկիզբների, բայց նաև դառնության, բռնության և սահմանափակ հնարավորությունների ռասիստական աշխարհին: Պատերազմն ավարտված էր, սակայն խաղաղության համար պայքարը դեռ նոր էր սկսվում:

ԳԼՈՒԽ 11

Վերակառուցման ժամանակաշրջանը

Քաղաքացիական պատերազմից հետո Հարավի մեծ մասը ավերակների մեջ էր: Հարավի ապագան անորոշ էր: Օրակարգում հարավային նահանգների Միության կազմում վերամիասնացման հարցն էր: Հարավի նահանգները կլինեին նվաճված տարածքներ, թե՛ իրավահավասար նահանգներ: Ինչպե՞ս էին նրանք վերակառուցելու իրենց կառավարությունները, տնտեսությունները և ընկերային-հասարակական համակարգերը: Ի՞նչ իրավունքներ էր ընձեռում ազատությունը նախկինում ստրկացած մարդկանց:

Վերակառուցման (Reconstruction) բազմաթիվ հարցերի պատասխանները կախված էին «քաղաքացիություն» և «հավասարություն» հասկացություններից: Թերևս, Վերակառուցման ժամանակաշրջանը ԱՄՆ հիմնադրումից ի վեր քաղաքացիության մասին ամենաբաց և լայն քննարկումների ժամանակն էր՝ հեղափոխական հնարավորության և բուռն արձագանքի շրջանը: Աֆրոամերիկացիներն ու արմատական հանրապետականները դրդեցին պետությանը վերջապես իրականացնելու Անկախության հռչակագրի խոստումներն առ այն, որ «բոլոր մարդիկ ստեղծված են հավասար» և ունեն «որոշակի անօտարելի իրավունքներ»: Աֆրոամերիկացիները ստացան օրինական ազատություն, բայց դեռևս ոչ ավելին: Երբ նախկինում ստրկացված անձանց հաջողվեց ստանալ քաղաքացիություն, նոր պայքար մեկնարկեց՝ որոշելու ամերիկյան քաղաքացիության իրավական, քաղաքական և հասարակական հետևանքները: Դիմադրությունը շարունակվեց, և վերակառուցումն ի վերջո փլուզվեց: Հարավում մարդկային ազատության սահմանափակումները պահպանվեցին և պիտի շարունակեին մնալ կաշկանդված շուրջ մեկ դար ևս:

Վերակառուցման քաղաքականությունը

Վերակառուցումը՝ հարավային նահանգները Միության կազմ վերադարձնելու և ամերիկյան հասարակության մեջ աֆրոամերիկացիների տեղը վերաիմաստավորելու քաղաքականությունը, սկսվել էր մինչև Քաղաքացիական պատերազմի ավարտը: 1863 թվականի աշնանը նախագահ Աբրահամ Լինքոլնը սկսեց ծրագրել Միացյալ Նահանգների վերամիավորումը: Կարծելով, որ Միության հաղթանակը մոտ է, և որ ինքը կարող է շրջել պատերազմի ալիքը՝ հենվելով Համադաշնային Նահանգ-

ներում յունիոնիստների աջակցության վրա, Լինքոլնը հրապարակեց հռչակագիր, որը թույլ էր տալիս հարավցիներին հավատարմության երդում (oath of allegiance) տալ Միությանը: Եթե Միությունը լքած նահանգի ընտրող բնակչության ընդամենը 10 տոկոսը նման երդում տար, հավատարիմ յունիոնիստները կարող էին իրենց կառավարությունները հաստատել: Նշյալ, այսպես կոչված, լինքոլնյան կառավարությունները առաջացան Համադաշնային այն նահանգներում, որտեղ կար նշանակալի աջակցություն Միությանը. այդպիսիք էին Լուիզիանան, Թենեսին և Արկանզասը: Մյուս կողմից, նախագահ Լինքոլնի Ազատագրության հռչակագիրը Միացյալ Նահանգներին պարտավորեցնում էր վերացնել ստրկությունը: Թեպետ և հռչակագիրը ազատագրում էր ստրկացած մարդկանց միայն Համադաշնային Նահանգներում՝ ապստամբության վայրերում:

1865 թվականի հունվարի 31-ին ստրկության վերացումը ամրապնդելու համար Կոնգրեսն ընդունեց ԱՄՆ Սահմանադրության Տասներեքերորդ ուղղումը (Thirteenth Amendment): Փոփոխությունը օրինականորեն վերացրեց ստրկությունը: Հետևեց նահանգների վավերացումը, և մինչև տարեվերջ նահանգների թվի անհրաժեշտ երեք քառորդը հաստատեց ուղղումը, և չորս միլիոն մարդ ընդմիշտ ազատվեց 250-ամյա ստրկության լծից:

Լինքոլնի քաղաքականությունը պահպանողական էր, մեղմ և կարճատև: Վերակառուցման քաղաքականությունը փոփոխության ենթարկվեց, երբ 1865 թվականի ապրիլի 14-ին Վաշինգտոնի Ֆորդ թատրոնում դերասան Ջոն Ուիլքս Բուլթը գնդակահարեց նախագահ Լինքոլնին: Նախագահի պարտականությունները ստանձնեց փոխնախագահ Էնդրյու Ջոնսոնը, ով հայտնի էր որպես նահանգների իրավունքների պաշտպան և խիստ ռասիստ Թենեսիից, հարավային նահանգներին առաջարկեց արագ վերականգնում Միության կազմ: Նրա վերակառուցման ծրագիրը պահանջում էր հարավային նահանգների ժամանակավոր կառավարություններից չեղյալ համարել անջատման մասին իրենց վճիռները, հրաժարվել Համադաշնության պարտքերից և վավերացնել Տասներեքերորդ ուղղումը: Մնացած բոլոր հարցերում նահանգների համաժողովները ազատ էին իրենց որոշումների մեջ և զերծ դաշնային միջամտությունից: Ջոնսոնը ներում շնորհեց ապստամբության մեջ ներգրավված բոլոր հարավցիներին, բացառությամբ հարուստ պլանտատորների, ովքեր ունեին ավելի քան 20,000 դոլար ունեցվածք: Հարավային արիստոկրատիայի ներկայացուցիչները պետք է դիմեին Ջոնսոնին անհատական ներում ստանալու համար: Միևնույն ժամանակ, Ջոնսոնը հույս ուներ, որ ղեկա-

վար պաշտոններում հարավցիների նոր դասակարգը կփոխարիներ ծայրահեղ հարուստներին:

Հարավային նահանգների շատ կառավարություններ ընդունեցին օրենքներ, որոնք հայտնի են որպես Սև օրենսագրքեր (Black Codes)՝ սևամորթների վարքագիծը կանոնակարգելու և ընկերային ու տնտեսական վերահսկողություն պարտադրելու նպատակով: Սև օրենսագրքերը փաստացի քրեականացրին սևամորթների ազատ ժամանցը, սահմանափակեցին նրանց շարժունակությունը և շատերին վերստին կապեցին հողին շահագործող ֆերմերային աշխատանքային պայմանագրերի միջոցով: Այսպիսով, նախապատերազմյան տնտեսական կարգը վերականգնելու փորձերը մեծ մասամբ հաջող էին: Այս օրենքները և սևամորթ հարավցիների նկատմամբ կատաղի բռնությունները ստիպեցին հանրապետականներին ավելի խորքային վերակառուցման կոչով հանդես գալ: Այնպես որ, երբ Ջոնսոնը հայտարարեց, որ հարավային նահանգները վերականգնվել են Միության կազմում, Կոնգրեսի հանրապետականները հրաժարվեցին նոր վերակառուցված նահանգների պատվիրակներին տեղեր տրամադրելուց:

Ավելին, Կոնգրեսի հանրապետականներն արձագանքեցին մի շարք օրենսդրական նախաձեռնություններով՝ ուղղված Հարավում ազատագրված մարդկանց պաշտպանությանը և քաղաքական հարաբերությունների վերակառուցմանը: Շատ հանրապետականներ ցանկանում էին ձայնի իրավունք տալ ազատագրվածներին՝ հզոր քվեարկության նոր դաշինք ստեղծելու համար: Կոնգրեսի հանրապետականները Սև օրենսագրքերին արձագանքեցին 1866 թվականի Քաղաքացիական իրավունքների օրենքով (Civil Rights Act), որը առաջին դաշնային փորձն էր՝ Ամերիկայում ծնված բոլոր բնակիչներին (բացառությամբ բնիկ ժողովուրդների) սահմանադրորեն հաստատելու որպես ԱՄՆ քաղաքացիներ: Օրենքը նաև արգելում էր քաղաքացիների «հիմնարար իրավունքների» ցանկացած սահմանափակում:

Տասնչորսերորդ ուղղումը մշակվեց քաղաքացիական իրավունքների մասին օրենքի հետ միաժամանակ՝ դրա սահմանադրականությունը ապահովելու նպատակով: 1866 թվականի հունիսի 13-ին Ներկայացուցիչների պալատը հաստատեց Սահմանադրության Տասնչորսերորդ ուղղումը (Fourteenth Amendment): Այն շնորհեց քաղաքացիություն և երաշխավորեց, որ նահանգային օրենքները չէին կարող ժխտել պատշաճ ընթացակարգը կամ խտրականություն դրսևորել մարդկանց որոշակի խմբերի նկատմամբ: Տասնչորսերորդ լրացումն ազդարարեց դաշնային կառավա-

րության պատրաստակամությունը՝ կիրառելու Իրավունքների օրինագիծը (Bill of Rights) նահանգների իշխանության նկատմամբ:

Նախագահ Ջոնսոնը, չընդունելով, որ աֆրոամերիկացիներն արժանի էին հավասար իրավունքների, դեմ արտահայտվեց Տասնչորսերորդ ուղղման ընդունմանը և վետո դրեց Քաղաքացիական իրավունքների օրենքի վրա: Սակայն 1866 թվականի միջանկյալ ընտրություններում ստանալով երկու երրորդի մեծամասնությունը՝ հանրապետականները հաղթահարեցին վետոն: 1867 թվականին նրանք ընդունեցին առաջին Վերակառուցման օրենքը (Reconstruction Act)՝ լուծարելով նահանգների կառավարությունները և Հարավը բաժանելով հինգ ռազմական շրջանների: Այս նոր պայմանների համաձայն՝ նախքան Միության կազմում իրենց կարգավիճակի լիիրավ վերականգնումը նախկին Համադաշնային նահանգները պետք է վավերացնեին ԱՄՆ Սահմանադրության Տասնչորսերորդ ուղղումը, ընդունեին աֆրոամերիկացիների իրավունքները հաստատող նոր նահանգային սահմանադրություններ և վերացնեին բռնաճնշող «Սև օրենսգրքերը»: Ի պատասխան նախագահ Ջոնսոնի խոչընդոտող գործողությունների՝ Ներկայացուցիչների պալատն ընդունեց նախագահի դեմ իմփիչմենթի հոդվածներ: Թեև Ջոնսոնը Սենատում կարողացավ խուսափել իմփիչմենթից, Կոնգրեսը ստանձնեց Վերակառուցման նոր փուլը ղեկավարելու իրավասությունը: Վեց շաբաթ անց՝ 1868 թ. հուլիսի 9-ին, նահանգները վավերացրեցին ԱՄՆ Սահմանադրության Տասնչորսերորդ ուղղումը, որը երաշխավորում էր ծննդյան իրավունքով քաղաքացիությունը և օրենքների հավասար պաշտպանությունը:

1868 թվականի նախագահական ընտրություններում Միության նախկին գեներալ Ուլիսես Ս. Գրանտը առաջադրվեց մի հարթակով, որը հռչակում էր «եղիցի խաղաղություն»: Գրանտը խոստանում էր պաշտպանել վերակառուցման ձեռքբերումները: Մյուս կողմից, դեմոկրատ թեկնածու Հորացիո Սեյմուրը խոստացել էր չեղարկել Վերակառուցումը: Հարավի աֆրոամերիկացի ընտրողները օգնեցին Գրանտին հաղթելու նախկին Համադաշնության նահանգների մեծ մասում:

Վերակառուցումը նշանավորեց աֆրոամերիկացիների զանգվածային քաղաքացիական մասնակցության առաջին փուլը: 1860 թվականին Հյուսիսի միայն հինգ նահանգներ էին աֆրոամերիկացիներին թույլ տվել քվեարկել սպիտակամորթների հետ հավասար պայմաններով: Այնուամենայնիվ, 1867 թվականից հետո, երբ Կոնգրեսը հրամայեց հարավային նահանգներին վերացնել ռասայական խտրականությունը քվեարկության ժամանակ, աֆրոամերիկացիները փոխեցին ընտրություններում քաղա-

քական հավասարակշռությունը ողջ Հարավում: Կարճ ժամանակում Հարավը ամբողջովին սպիտակամորթ, ստրկության կողմնակից, դեմոկրատական հենակետից վերածվեց հանրապետականների գլխավորած նահանգների խմբի, որտեղ աֆրոամերիկացիներն առաջին անգամ ամերիկյան պատմության մեջ իշխանության դիրքերում էին:

Կոնգրեսի ընդունած Վերակառուցման օրենսդրական ակտերի դրույթների շնորհիվ սևամորթ տղամարդիկ մեծ թվով մասնակցում էին ընտրություններին և նաև ընդգրկվում որպես 1868 թվականի նահանգային սահմանադիր ժողովների պատվիրակներ: Սևամորթ պատվիրակները ակտիվորեն մասնակցում էին նահանգային սահմանադրությունների վերանայմանը: Այս սահմանադիր ժողովների ամենակարևոր ձեռքբերումներից մեկը հանրակրթական դպրոցների համակարգի ստեղծումն էր: Եթե մինչև Քաղաքացիական պատերազմի ժամանակաշրջանը հանրակրթական դպրոցներ գործնականում գոյություն չունեին, ապա վերակառուցման ավարտին յուրաքանչյուր հարավային նահանգ ստեղծեց հանրակրթական դպրոցների համակարգ: Հանրապետական պաշտոնյաները հիմնեցին այնպիսի պետական հաստատություններ, ինչպիսիք էին հիվանդանոցները, մանկատները, հոգեբուժարանները և բանտերը սպիտակամորթ ու սևամորթ բնակիչների համար, թեև հաճախ առանձնացված՝ ռասայական հիմունքներով: Հարավի հանրապետականները ակտիվորեն ձգտում էին արդյունաբերական զարգացման, հյուսիսային ներդրումների և ներքին բարելավումների:

Վերակառուցման ընթացքում աֆրոամերիկացիները ծառայում էին կառավարության բոլոր մակարդակներում: Դաշնային մակարդակում Միսիսիպիից որպես ԱՄՆ սենատորներ ընտրվեցին Հիրամ Ռևելսը և Բլանշ Կ. Բրյուսը: Տասնչորս աֆրոամերիկացիներ ընտրվել էին Ներկայացուցիչների պալատի անդամ: Առնվազն 270 այլ աֆրոամերիկացիներ ծառայում էին հայեցողական պաշտոններում՝ որպես փոստային բաժանմունքների ղեկավարներ, մաքսավորներ և դեսպաններ: Նահանգային մակարդակում ավելի քան 1000 աֆրոամերիկացի տղամարդիկ պաշտոններ էին զբաղեցնում Հարավում: Փինքնի Բենթոն Ստյուարտ Փինչբեքը առաջին և մինչև 1989 թվականը միակ աֆրոամերիկացին էր, որ դարձավ ԱՄՆ նահանգապետ՝ երեսուներորս օր (1872 թ. դեկտեմբերի 9 - 1873 թ. հունվարի 13) զբաղեցնելով Լուիզիանայի նահանգապետի պաշտոնը այն բանից հետո, երբ նախորդ նահանգապետի լիազորությունները դադարեցվեցին իմփիչմենթի գործընթացի հետևանքով: Հարավում գրեթե 800 աֆրոամերիկացի տղամարդիկ ծառայում էին որպես նահանգային օրենսդիր-

ներ: Ընդ որում, աֆրոամերիկացիները որոշ ժամանակահատված մեծամասնություն էին կազմում Հարավային Կարոլինայի Ներկայացուցիչների պալատում:

Աֆրոամերիկացի պաշտոնատար անձինք տարբեր ծագում ունեին: Նրանցից շատերը ծնվել էին ազատ կամ իրենց ազատությունը ձեռք էին բերել քաղաքացիական պատերազմից առաջ: Այս ազատ աֆրոամերիկացիներից շատերը, հատկապես Հարավային Կարոլինայում, Վիրջինիայում և Լուիզիանայում, հարուստ էին և լավ կրթված, և այս երկու հանգամանքներով նրանք տարբերվում էին սպիտակ բնակչության մեծ մասից և քաղաքացիական պատերազմից առաջ, և դրանից հետո: Նրանցից ոմանք, ինչպես օրինակ՝ Անտուան Դյուբուկլեն Լուիզիանայից և Ուիլյամ Բրիդլավը Վիրջինիայից, մինչև Քաղաքացիական պատերազմը ստրկատերեր էին: Սյուսներն էլ, ինչպես Ջեյմս Դ. Փորթերը Ջորջիայից, օգնել էին ստրկացած մարդկանց փախչելու կամ սովորեցրել էին նրանց կարդալ: Աֆրոամերիկացիների մեծ մասը, սակայն, ազատություն ձեռք բերեց պատերազմի ժամանակ: Նրանց թվում կային հմուտ արհեստավորներ, հոգևորականներ և ուսուցիչներ: Եվ նոր պայմաններում քաղաքական պաշտոններ ստանձնելը իրենց համայնքներում ունեցած առաջատար նախկին դերերի բնական շարունակությունն էր:



Վերակառուցում, Ջոն Ջ. Լոուրենս, 1867 թ.

Հյուսիսի և Հարավի հաշտեցման այս պատկերավոր փոխաբերության մեջ Ջոն Լոուրենսը փորձել է նախանշել, թե ինչ կարող է առաջանալ վերամիավորումից: Թվում էր, թե վերակառուցումը կձևավորեր առավել կատարյալ միություն, որը բարձր կպահեր Ամերիկյան հեղափոխության իդեալները:

Աֆրոամերիկացիների ազատության նշանակությունը

Հողը ազատագրված աֆրոամերիկացիների բաղձալի երազանքն էր: Ազատված մարդկանց բյուրոյի (Freedmen's Bureau) հիմնական նպատակներից մեկը լքված կամ դաշնային կառավարության կողմից բռնագրավված հողերի վերաբաշխումն էր նախկինում ստրկացված մարդկանց: Սակայն անգամ այս հողահատկացումները կարճ տևեցին: 1866 թ. նախկին համադաշնականների (Confederates) կողմից լքված հողը կրկին վերադարձվեց նրանց:

Աֆրոամերիկացիների հողային բարեփոխման հույսերն անսպասելիորեն փլուզվեցին, երբ Ազատված մարդկանց բյուրոյի գործակալները հանդիպումներ ունեցան ազատագրված նախկին ստրուկների հետ ողջ Հարավում՝ հայտնելով նրանց, որ հողի խոստումը չի կատարվելու, և որ փոխարենը նրանք պետք է ծրագրեն աշխատանքի անցնել իրենց նախկին ստրկատերերի մոտ որպես վարձու բանվորներ: Վերակառուցման քաղաքականության այս շրջադարձը ցնցող էր: Ազատված մարդկանց բյուրոյի գործակալները երբեմն ստիպում էին նախկինում ստրկացած մարդկանց պայմանագրեր կնքել իրենց նախկին ստրկատերերի հետ: Այնուամենայնիվ, բյուրոն նաև ստեղծեց դատարաններ, որտեղ աֆրոամերիկացիները կարող էին փոխհատուցում պահանջել, եթե նրանց գործատուները չարաշահում էին իրավունքները, կամ շահագործում էին իրենց, կամ չէին վճարում աշխատավարձերը: Հողերի վերաբաշխման վերջին հույսը մարեց, երբ Կոնգրեսում տապալվեց Թադեուս Սթիվենսի և Չարլզ Սամների ներկայացրած հողային բարեփոխումների օրենքի նախագիծը: Հանրապետական կուսակցության հակաստրկատիրական արմատականությունն ուներ իր սահմանները, և տնտեսական կայունությանը նպաստելու հանրապետականների ձգտումը գերիշխեց նրանց ռասայական արդարության սկզբունքների նկատմամբ:

Ազատագրված աֆրոամերիկացիները մեծ ուշադրություն էին դարձնում իրենց երեխաների և իրենց կրթության վրա: Շատերի համար Աստվածաշունչ կարդալու կարողությունը աշխատանքից հոգնած տղամարդկանց և կանանց համախմբում էր մի վայրում երեկոյան կամ կիրակնօրյա ընթերցանության և դասերի: Բազմաթիվ եկեղեցիներ ծառայում էին որպես դպրոցներ և արդյունքում դարձան քաղաքացիական պայքարի առանցքային օջախներ: Ազատ և ազատագրված սևամորթ հարավցիները եկեղեցական միավորումներ դարձած հակաստրկատիրական կազմակերպությունների միջոցով զարգացրին հակառասիստական

քաղաքականություն և կազմակերպչական հմտություններ: Ազատագրումից հետո առավել ընդգծված փոխակերպումներից մեկը սևամորթների անկախ եկեղեցիների և եկեղեցական միավորումների տարածումն էր:

Այս անկախ եկեղեցիներից շատերը արագորեն կազմակերպվեցին տարածաշրջանային, նահանգային և նույնիսկ ազգային ասոցիացիաների, հաճախ ազատ սևամորթ հյուսիսցիների և միջինարևմտյան բնակիչների խմբերի կողմից, ովքեր մեկնել էին Հարավ՝ օգնելու ազատագրվածներին: Բապտիստները դարձան ամենաարագ աճող հետևման սիպացիոն ուղղությունը՝ հենվելով իրենց հակաստրկատիրական ասոցիացիայի արմատների վրա և շարունակելով պայքարը սևամորթների քաղաքական մասնակցության համար: Երկրպագության ծեսերի և կրթական պահանջների շուրջ հյուսիսային և հարավային աֆրոամերիկացիների միջև լարվածությունը բաժանում էր այս ընկերակցությունները: Սևամորթների հարավային, գյուղական եկեղեցիները նախընտրում էին ոգեշնչված քարոզչության վրա հիմնված պաշտամունքային ծառայությունները, մինչդեռ հյուսիսային քաղաքային սևամորթ բնակիչները նախընտրում էին ավելի կանոնակարգված եկեղեցական ծեսերը և կրթված հոգևորականության ծառայությունը: Սևամորթների եկեղեցիներն ապահովում էին կենտրոնացված ղեկավարություն և կազմակերպական կառույց ազատագրված աֆրոամերիկացիների համայնքներում: Շատ քաղաքական առաջնորդներ և պաշտոնատար անձինք նաև հոգևորականներ կամ եկեղեցական ծառայողներ էին: Եկեղեցիները հաճախ բնակավայրի ամենամեծ շենքերն էին և ծառայում էին որպես համայնքային կենտրոններ:

Վերակառուցումը և կանայք

Վերակառուցումը ներառում էր ավելին, քան ստրկացված մարդկանց ազատագրման գաղափարը: Կանայք ևս ձգտում էին վերախմաստավորել իրենց դերերը ամերիկյան բազմազան հասարակության մեջ և իրենց տեղական համայնքներում: 1863 թվականին Էլիզաբեթ Քեդի Սթենթոնը հիմնադրեց Օրինապաշտ կանանց ազգային լիգան (Women's Loyal National League), որը խնդրագիր հղեց Կոնգրեսին ստրկությունը վերացնելու սահմանադրական փոփոխության համար: 1866 թվականի մայիսի 10-ին, պատերազմից ընդամենը մեկ տարի անց, Նյու Յորքում գումարվեց Կանանց իրավունքների 11-րդ ազգային համաժողովը: Ներկա էին նաև հայտնի աբոլիցիոնիստներ, որոնց հետ Սթենթոնը և կանանց իրավունքների պաշտպանության այլ առաջնորդներ միավորել էին ուժերը դեռևս պա-

տերազմից առաջ: Դիմելով ընկերային կարգի բարեփոխման այս ջատագովներին՝ Սթենթոնը կոչ արեց համընդհանուր ընտրական իրավունքի հաստատման պայքարի՝ պահանջելով «հավասար իրավունքներ բոլորի համար»: Այսպիսով, 1866 թվականին Կանանց իրավունքների ազգային համաժողովը (National Women's Rights Convention) պաշտոնապես միաձուլվեց Ամերիկյան հակաստրկատիրական միության (American Anti-Slavery Society) հետ՝ ձևավորելով Հավասար իրավունքների ամերիկյան ասոցիացիա (American Equal Rights Association):

Ամերիկյան հավասար իրավունքների ասոցիացիան պառակտվեց այն հարցում, թե արդյո՞ք սևամորթ տղամարդկանց ընտրական իրավունքը պետք է գերակա լիներ համընդհանուր ընտրական իրավունքի նկատմամբ: Ֆրեդերիկ Դուգլասը պնդում էր, որ քվեաթերթիկը բառացիորեն «կյանքի և մահվան հարց» էր հարավային սևամորթ տղամարդկանց, բայց ոչ սպիտակամորթ կանանց համար: Որոշ աֆրոամերիկացի կանայք նախընտրում էին կենտրոնանալ ռասայական, տնտեսական և գենդերային անհավասարության հետևանքով առաջացած դժվարությունների վրա:

Այս բաժանումները ի հայտ եկան 1867 թվականի սկզբին՝ Տասնչորսերորդ և Տասնհինգերորդ ուղղումների վերաբերյալ հակասական տեսակետների պատճառով: Կանանց իրավունքների առաջնորդները բողոքում էին Տասնչորսերորդ ուղղման դեմ: Թեև ուղղումը սահմանեց ԱՄՆ քաղաքացիություն Միացյալ Նահանգներում ծնված կամ հպատակագրված (born or naturalized) բոլոր անձանց համար, այն նաև առաջին անգամ ներմուծեց *արական* բառը Սահմանադրության մեջ: Այն բանից հետո, երբ Տասնհինգերորդ ուղղումն (Fifteenth Amendment) անտեսեց սեռը որպես ընտրական իրավունքի անօրինական խոչընդոտ, Հավասար իրավունքների ամերիկյան ասոցիացիա պաշտոնապես լուծարվեց: Սթենթոնը և Սյուզան Էնթոնին ստեղծեցին Կանանց ընտրական իրավունքի ազգային ասոցիացիա (National Woman Suffrage Association), մինչդեռ մյուսները, ովքեր պաշտպանում էին Տասնհինգերորդ ուղղումը, անկախ դրա սահմանափակումներից, հիմնեցին Ամերիկացի կանանց ընտրական իրավունքի ասոցիացիան (American Woman Suffrage Association):

Կանանց ընտրական իրավունքի ջատագովները հիմնականում սահմանափակված էին Հյուսիսում, բայց հարավային կանայք նույնպես ընկերային վերափոխումներ էին ապրում: Մինչ հարավային սպիտակամորթ կանայք որոշում էին, թե ինչպես վերադառնալ իրենց նախկին կարգավիճակին, աֆրոամերիկացի կանայք ընդունեցին նոր ազատություններն ու կանացիության վերափմաստավորումը: Նախկինում հարուստ կանայք

հույս ունեին պահպանելու իրենց ընկերային կարգավիճակը՝ վերակառուցելով նախապատերազմյան հասարակական աստիճանակարգությունը: Հիշատակի ասոցիացիաների և քաղաքացիական այլ խմբերի միջոցով հարավային կանայք առաջնորդում էին զոհվածներին հուղարկավորելու և հիշատակելու ջանքերը՝ դառնալով «Կորուսյալ գործի» (Lost Cause) պատումի նախագծողներն ու պահպանները: «Կորուսյալ գործի» պատումի ջատագովները փորձում էին վերաիմաստավորել և վերաշարադրել նախապատերազմյան Հարավի պատմությունը՝ չզնահատելով ստրկության դաժանությունը: Նրանք նաև ստեղծեցին Համադաշնության առասպելը, ըստ որի՝ Քաղաքացիական պատերազմը մղվում էր ոչ թե ստրկության պահպանման համար, այլ հանուն նահանգների իրավունքների:

Վերակառուցումը և ռասայական բռնությունը

Վերակառուցման շրջանում բռնության աճը փլուզեց երկուսսայական ժողովրդավարության տեսլականը: Դեռևս ոչ վաղ անցյալի ստրկատերերը և սպիտակ հարավցիները հազիվ էին պատկերացնում ազատ սևամորթների աշխատանքը: Ստրկության շրջանում բռնությունը կիրառվում էր ստրկական աշխատանքը պարտադրելու և ռասայական տարբերությունները սահմանելու համար: Հետազատագրության շրջանում այն օգտագործվում էր աֆրոամերիկացիների առաջխաղացումը կանխելու և հին կարգին վերադառնալու համար:

Նախապատերազմյան Հարավում հասարակական կյանքի մեծ մասը հիմնված էր ստրկության հաստատության վրա: Հասարակարգը հենվում էր ենթարկեցված ստորադաս խավի վրա, իսկ աշխատանքային համակարգը պահանջում էր անազատ աշխատուժ: Սպիտակների գերակայության և սևամորթների թերարժեքության մասին պատկերացումներն այդ ամենի հիմքում էին ընկած: Համադաշնության պարտությունը և ԱՄՆ Կոնգրեսի կողմից Տասներեքերորդ ուղղման ընդունումը ոչնչացրին ամերիկյան ստրկության հաստատությունը և հարավային հասարակությանը խառնաշփոթի մեջ գցեցին: Հարավային հասարակարգի հիմքը սասանվել էր, սակայն հարավցի սպիտակամորթներն օգտագործեցին Սև օրենսգրքերը և ռասայական ահաբեկչությունը՝ նախկինում ստրկացված մարդկանց նկատմամբ վերահսկողությունը վերահաստատելու համար:

Վերակառուցման շրջանում ռասայական բռնությունը երեք հիմնական ձևերով արտահայտվեց՝ սևամորթների քաղաքական իշխանության դեմ բռնության զանգվածային ալիքներ, միջանձնային բռնություն

և կազմակերպված խմբերի կողմից ահաբեկչություն: Վերակառուցման ընթացքում զանգվածային անկարգության մի քանի ալիքներ բարձրացան հարավային քաղաքներում: Պատերազմից հետո Հարավի քաղաքները արագորեն աճում էին, քանզի գյուղական վայրերից գաղթականները, հատկապես ազատված աֆրոամերիկացիները, տեղափոխվում էին քաղաքային կենտրոններ: Քաղաքները դարձան հանրապետականների վերահսկողության կենտրոններ: Սակայն սպիտակամորթ պահպանողականները դժգոհ էին սևամորթ բնակիչների հոսքից և երկռասայական քաղաքականության հաստատումից: Ուստի սպիտակամորթ պահպանողականները բռնության գործողություններ էին նախաձեռնում՝ ի պատասխան հանրապետականների հանրահավաքների, համագումարների կամ ընտրությունների, որոնցում սևամորթ տղամարդիկ պետք է քվեարկեին: Այս հակամարտությունների զոհերի թիվը մնում է անհաշվելի. զոհերը ճնշող մեծամասնությամբ սևամորթներ էին: Անգամ միջանձնային ամենօրյա բռնության դեպքերը անհամաչափորեն ուղղված էին աֆրոամերիկացիների դեմ:

Աֆրոամերիկացիները ստացել էին քաղաքացիության իրավունք, սակայն սպիտակամորթ հարավցիները գրեթե երբեք չէին ենթարկվում քրեական պատասխանատվության սևամորթ զոհերի նկատմամբ բռնության համար: Կազմակերպված հանցավոր խմբերի անդամները, որոնք հայտնի էին որպես գիշերային արշավորդներ՝ նայթռայդերներ (Nightriders), գործում էին մթության քողի տակ և կրում էին դիմակներ՝ սևամորթներին ահաբեկելով, բռնություններ կիրառելով՝ նրանց քաղաքական ներգրավվածությունը սահմանափակելու համար: Նայթռայդերները հետապնդում և սպանում էին սևամորթ թեկնածուներին ու պաշտոնատար անձանց, ահաբեկում ընտրողներին՝ հեռացնելով ընտրատեղամասերից: Նրանք նաև նպատակ ունեին ահաբեկչության միջոցով սահմանափակել սևամորթների տնտեսական շարժունակությունը՝ սպառնալով նրանց, ովքեր փորձում էին հող գնել կամ այլ կերպ չափից դուրս անկախանալ իրենց նախկին տերերից: Սպիտակամորթների կազմակերպված ահաբեկչական բազմաթիվ խմբավորումները լայնորեն տարածված էին և գործում էին ողջ Հարավում: «Կու կլուքս կլանը» (ԿԿԿ) (Ku Klux Klan (KKK))՝ այս խմբավորումներից ամենատիրահոչակը, ասպարեզ եկավ 1860-ականների վերջին:

«Կու կլուքս կլանը» հիմնադրվեց 1866 թվականին Թենեսի նահանգի Պոլկասկի քաղաքում և մինչև 1868 թվականը տարածվեց նախկին Համադաշնության գրեթե բոլոր նահանգներում: Բոլոր նման խմբավորումե-

որը սարսափի ցանցի մի մասն էին, որը վերակառուցման ժամանակաշրջանում տարածվել էր ամբողջ Հարավում: Սպանվում կամ ահաբեկվում էին նաև բազմաթիվ հանրապետական քաղաքական գործիչներ իրենց պաշտոնավարման ընթացքում կամ նախընտրական քարոզարշավի ժամանակ: Հարձակման, ծեծի, բռնաբարության կամ սպանության էին ենթարկվում հազարավոր անհատ քաղաքացիներ՝ տղամարդիկ և կանայք, սպիտակամորթ և սևամորթ:

1870-1871 թվականներին դաշնային կառավարությունն արձագանքեց հարավային խմբավորումերի ռազմականացված մարտավարություններին՝ ընդունելով Հարկադրանքի օրենքները (Enforcement Acts): Այդ օրենքները քրեականացնում էին աֆրոամերիկացիներին քաղաքացիական իրավունքներից զրկելը: Այս օրենսդրական ակտերը «Կու կլուքս կլանի» գործողությունները համարում էին ապստամբության գործողություններ Միացյալ Նահանգների դեմ և թույլ էին տալիս օգտագործել ԱՄՆ բանակը՝ ազատագրված մարդկանց պաշտպանելու համար: Որոշ ժամանակ դաշնային կառավարությունը, նրա դատարանները և նրա զորքերը ձգտում էին վերջ դնել «Կու կլուքս կլանին» և հարակից խմբավորումներին: Բայց ահաբեկչական գործողությունները շարունակվում էին: 1876 թվականին, երբ հարավային դեմոկրատները վերահաստատեցին իրենց «տնային իշխանությունը» և «փրկեցին» հարավը հանրապետականներից, դաշնային գործողությունները «Կու կլուքս կլանի» դեմ թուլացան: Աֆրոամերիկացիները շարունակեցին մնալ սպիտակամորթների գերակայության աշխարհում, որը սահմանափակում էր նրանց տնտեսական, սոցիալական և քաղաքական իրավունքները:

Տնտեսական զարգացումը պատերազմի և վերակառուցման տարիներին

Քաղաքացիական պատերազմն ավերեց, իսկ հետո փոխակերպեց ամերիկյան տնտեսությունը: 1859-1860 թվականներին Հարավի խոշոր հողատերերը բարգավաճում էին բամբակի ռեկորդային բերքի շնորհիվ: Հարավի բարգավաճումը հենվում էր ավելի քան 4 միլիոն ստրկացված աֆրոամերիկացիների աշխատուժի վրա՝ բամբակ, ինչպես նաև այլ հիմնական մշակաբույսեր աճեցնելու համար: Այս հարստությունը ստվերում էր ենթակառուցվածքների, արդյունաբերական արտադրության և ֆինանսական շուկաների ձեռքբերումները, որոնք առաջացան Մեյսոն-Դիքսոն գծից (Mason-Dixon Line) հյուսիս: Միայն պատերազմի արհավիրքն էր

լույս սփռելու տնտեսության կառուցվածքի վերափոխման համար անհրաժեշտ ոլորտների վրա: Ի տարբերություն ստրկատիրական Հարավի՝ հյուսիսցիները գովաբանում էին իրենց տարածաշրջանն իբրև ազատ աշխատանքի երկիր, որը բնակեցված էր ֆերմերներով, վաճառականներով և վարձու աշխատավորներով: Այն նաև կայուն շուկայական տնտեսության տարածք էր:

Քաղաքացիական պատերազմը, ինչպես բոլոր պատերազմները, ընդհատեց առևտրային կյանքի ռիթմերը՝ ոչնչացնելով ահռելի թվով կյանքեր և գույք: Պատերազմի արհավիրքը սարսափելի էր հատկապես Հարավում: Միության կողմից Ատլանտյան ծովափների շրջափակումը խզում էր Համադաշնության առևտրային կապերը և արտահանումը դեպի Եվրոպա: Պատերազմը ֆինանսավորելու, զորքերին վճարելու և տնտեսությունը կենդանի պահելու համար Համադաշնության Կոնգրեսը որոշեց ավելացնել թղթադրամների թողարկումը, որն արագորեն հանգեցրեց թղթադրամի արժեզրկման և արագ գնաճի: Շատ դեպքերում, Համադաշնության պաշտոնյաները հրաժարվում էին կանխիկ գումարով վճարվող հարկերից՝ փոխարենը վերցնելով անհրաժեշտ քանակի սնունդ և նյութական միջոցներ:

Պատերազմը նաև ԱՄՆ կառավարությանը մղեց աննախադեպ քայլերի: Կոնգրեսը բարձրացրեց մաքսատուրքերը և 1862 թվականին ընդունեց ազգային եկամտահարկի մասին առաջին օրենքը: 1861 թվականի վերջին Կոնգրեսը հաստատեց առաջին ազգային *ֆիաթ* արժույթը՝ ոսկով չապահովագրված արժույթը, որը կոչվում էր կանաչ թղթադրամ (greenbacks): Սկզբում՝ 1862-1863 թվականներին, արժույթի ընդլայնումը և պետական ծախսերի արագ աճը խթանեցին տնտեսական աճը և գործարարությունը: Սակայն պատերազմի ճգճումը հանգեցրեց ֆինանսատնտեսական խնդիրների և գնաճի նաև Հյուսիսում: Աշխատավորները պահանջում էին աշխատավարձերի բարձրացում՝ վարձավճարները վճարելու և առաջին անհրաժեշտության ապրանքներ գնելու համար, մինչդեռ գործարար համայնքը բողոքում էր աճող հարկային բեռի դեմ:

Պատերազմը Համադաշնության նահանգները թողել էր ավերակների մեջ, իսկ նրանց կառավարություններին՝ պարտքերի: Սպիտակ պլանտատորների կապիտալի մեծ մասը կապված էր ստրկական աշխատուժի հետ, և ստրկության վերացումը նշանակում էր բազմաթիվ խոշոր հողատերերի սնանկացում: Բամբակը շարունակում էր մնալ գյուղատնտեսության ամենակարևոր բերքը: Ստրկական աշխատուժի բացակայության պայմաններում խոշոր հողատերերն իրենց ցանքատարածությունները բա-

Ժանեցին ավելի փոքր հողատարածքների, որոնք մշակվում էին առանձին ընտանիքների կողմից՝ բերքի մի մասի դիմաց. մի համակարգ, որը կոչվում էր բաժնեմշակում (sharecropping): Ընդհանուր առմամբ, պատերազմը և վերակառուցումը Հարավի համար նշանավորեցին խորը աղքատության շրջանի սկիզբը, որը տևելու էր առնվազն մինչև 1930-ական թվականները՝ նախագահ Ֆրանկլին Ռուզվելտի «Նոր համաձայնության» (New Deal) ժամանակաշրջանը:

Ստրկացված մարդկանց ազատագրումը քաղաքացիական պատերազմի կարևորագույն տնտեսական, ընկերային և քաղաքական արդյունքն էր: Ազատությունը Հարավի աֆրոամերիկացիներին առաջին անգամ հնարավորություն տվեց վերակառուցելու իրենց ընտանիքները, պայմանագրեր կնքելու, սեփականություն ունենալու և ազատ տեղաշարժվելու: Հարավում հանրապետականները փորձեցին տարածաշրջանը վերածել ազատ աշխատուժի տնտեսության, սակայն սպիտակ հարավցիները կիրառեցին օրինական հարկադրանքի և արտաօրինական բռնության համադրություն՝ անազատ աշխատանքի համակարգերը պահպանելու համար: Այսպես կոչված Թափառականության օրենքները (Vagrancy laws) թույլ էին տալիս իրավապահ մարմիններին արդարացնել անմեղ աֆրոամերիկացիների ձերբակալությունը, իսկ դատապարտյալների վարձակալության համակարգը (convict-lease system) նշանակում էր, որ կամայական ձերբակալությունները հաճախ հանգեցնում էին տասնամյակների հարկադիր, չփոխհատուցվող աշխատանքի: Ստրկության այս նոր ձևը, որը շարունակվեց մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմը, տնտեսական անարդարության ամենածայրահեղ օրինակն էր: Սեփական հողատարածքներ գնելու միջոցներ չունենալով՝ սևամորթ ֆերմերները հաճախ դիմում էին բաժնեմշակման համակարգին: Բաժնեմշակումը հանգեցնում էր պարտքերի շրջանի, որը նրանց ընտանիքներին կապում էր հողին:

Հաղթանակը արագ տնտեսական առաջընթաց չբերեց նաև Հյուսիսին, որը վերականգնեց իր արդյունաբերական արտադրանքի նախապատերազմյան մակարդակը միայն 1870-ական թվականներին: Այդու, պատերազմը եկամտաբեր էր հյուսիսային հարուստ ֆերմերների համար, ովքեր կիրառում էին մեխանիկական նոր տեխնոլոգիաները: Պատերազմի ժամանակ աշխատուժի պակասը նպաստեց մեխանիկական գյուղտեխնիկայի կիրառմանը, աշխատուժի պահանջարկի նվազեցմանը և գյուղացիական տնտեսությունների բերքատվության բարձրացմանը:

Պատերազմական օրենքները նաև փոխեցին դաշնային կառավարության և ամերիկյան տնտեսության միջև հարաբերությունները: Մաք-

սային նոր օրենքները Հյուսիսի արդյունաբերությունը պաշտպանեցին եվրոպական մրցակցությունից: Մորրիլի հողահատկացումների օրենքն օգնեց ստեղծելու այնպիսի քոլեջներ և համալսարաններ, ինչպիսիք են Կալիֆորնիայի համալսարանը, Իլինոյսի համալսարանը և Վիսկոնսինի համալսարանը: Ազգային բանկային համակարգի և կանաչ թղթադրամների ստեղծմամբ Կոնգրեսը հարյուրավոր նահանգային բանկային թղթադրամները փոխարինեց դաշնային արժույթի համակարգով, որն արագացրեց առևտուրն ու փոխանակումը: Այնուամենայնիվ, Հանրապետական կուսակցության քաղաքականությունը գերազանցապես բխում էր խոշոր գործարարության շահերից: Հոմստեդ ակտը, որը կոչված էր Արևմուտքում փոքր ֆերմերների համար հնարավորություններ ստեղծելուն, հաճախ խոչընդոտվում էր երկաթուղային կորպորացիաների կողմից կամ սպեկուլյանտների չարաշահումների պատճառով: Պատերազմի ընթացքում գործարկված Անդրմայրցամաքային երկաթուղին (Transcontinental Railroad) տարիներ շարունակ էական տնտեսական շահույթ չէր ապահովում, սակայն դրա նշանակությունը ավելին էր, քան լոկ տնտեսական շահը:

Վերակառուցման ավարտը

Վերակառուցումն ավարտվեց, երբ հյուսիսիցիները հրաժարվեցին արմատական բարեփոխումներից և նախկինում ստրկացած անձանց գործից, իսկ դեմոկրատները վերանվաճեցին հարավային քաղաքականությունը: 1868-1877 թվականներին և հատկապես 1873 թվականի ճգնաժամից հետո տնտեսական խնդիրները փոխարինեցին Վերակառուցմանը իբրև ազգային օրակարգի առաջնային խնդիր: Հարավում հանրապետական իշխանության ամենամեծ սպառնալիքը սպիտակ դեմոկրատների բռնությունն ու ահաբեկումն էր: Վերակառուցման արագ փլուզումը կանխվում էր միայն դաշնային զորքերի ներկայությամբ, որոնք տեղակայված էին Հարավի առանցքային քաղաքներում: Սակայն ԱՄՆ բանակի անձնակազմի պահանջվող թվաքանակը բավարար չէր կարգուկանոնը վերականգնելու և սևամորթ հարավցիներին Տասնչորսերորդ լրացմամբ խոստացված իրավունքները երաշխավորելու համար:

Հանրապետականներն ու դեմոկրատներն արձագանքեցին տնտեսական անորոշությանը՝ նահանջելով Վերակառուցումից: Վերակազմյալ արմատական հանրապետականները (Ստալվարտ հանրապետականներ - Stalwart Republicans) քաղաքացիական իրավունքների

իդեալիզմից անցան տնտեսական և կուսակցական քաղաքականության գործնականության: Նրանք առանձնահատուկ ազդեցություն ունեին 1868-1872 թվականներին՝ Ուլիսես Ս. Գրանտի նախագահության առաջին ժամկետի ընթացքում: 1870-ական թվականների սկզբին Ստալվարտ հանրապետականները ստանձնեցին Հանրապետական կուսակցության քաղաքականության վերահսկողությունը:

Միևնույն ժամանակ, «Նոր մեկնարկի դեմոկրատները» (New Departure Democrats), որոնք կենտրոնացած էին գործարարության, տնտեսության, քաղաքական կոռուպցիայի դեմ պայքարի և առևտրի վրա, ամրապնդեցին իրենց քաղաքական դիրքերը՝ հեռանալով ստրկության կողմնակից դեմոկրատներից: Հարավում նրանք կոչվում էին «փրկիչներ» (Redeemers): Նրանք ստացան սպիտակամորթ հարավցիների աջակցությունը՝ խոստանալով տեղական կառավարում սպիտակամորթ դեմոկրատների, այլ ոչ թե սևամորթ կամ սպիտակամորթ հանրապետականների կողմից: 1871 թվականին «փրկիչները» նվաճեցին քաղաքական վերահսկողությունը և ավարտեցին Վերակառուցումը երեք կարևոր նահանգներում՝ Թենեսիում, Վիրջինիայում և Ջորջիայում:

1873 թվականի սեպտեմբերին *Ջեյ Բուկ ընդ Քոմփանի* (Jay Cooke & Company) բանկը հայտարարեց իր սնանկության մասին, ինչը հանգեցրեց բանկային խուճապի, որն էլ իր հերթին վերաճեց վեցամյա տնտեսական ճգնաժամի: 1873 թվականի ճգնաժամը ծանր հարված հասցրեց առաջին հերթին աշխատավոր դասակարգին և ոչնչացրեց Վերակառուցման վերաբերյալ հյուսիսային իդեալիզմի մնացորդները: Հարավում, որտեղ բազմաթիվ ֆերմերային տնտեսություններ կապիտալացվել էին ամբողջությամբ վարկերի միջոցով, վարկերի աղբյուրները անհետացան, շատ հողատերեր չկարողացան կատարել իրենց ֆինանսական պարտավորությունները, և ֆերմերները մտան առանց այն էլ գերհագեցած աշխատաշուկա: Աշխատավարձերը կտրուկ անկում ապրեցին, իսկ աշխատավորներն ընկղմվեցին պարտքերի և խորը աղքատության շրջանի մեջ: Տնտեսական խառնաշփոթը դեմոկրատներին հնարավորություն ընձեռեց 1874 թվականի ընտրությունների արդյունքում վերահսկողության տակ առնելու Ներկայացուցիչների պալատը՝ թուլացնելով օրենսդիր մարմնի հնարավորությունները Վերակառուցման քաղաքականության նկատմամբ:

1876 թվականի նախագահական ընտրությունների նախօրեին ամերիկյան ժողովուրդը դեռևս տնտեսական դեպրեսիայի տիրույթում էր: Սկանդալները խաթարել էին վստահությունը նախագահ Գրանտի վարչակազմի նկատմամբ: 1875 թվականին Միսսիսիպիի դեմոկրատները

մշակեցին Միսիսիպիի պլանը՝ բռնության ալիք, որը նախատեսված էր սևամորթ ակտիվիստներին վախեցնելու և սևամորթ ընտրողներին ճնշելու համար: Նահանգի հանրապետական նահանգապետը խնդրեց դաշնային միջամտություն, բայց խնդրանքն անտեսվեց:

Հանրապետականները նախագահի թեկնածու առաջադրեցին Ռատերֆորդ Բ. Հեյսին, իսկ դեմոկրատները՝ Սեմուել Ջ. Թիլդենին, ով առաջադրվել էր հանուն ազնիվ քաղաքականության և Հարավում ներքին կառավարման (home rule) հաստատման: Ֆլորիդան, Լուիզիանան և Հարավային Կարոլինան որոշիչ ազդեցություն ունեցան նախագահական ընտրությունների վրա: Չնայած այդ նահանգներում Վերակառուցման թվացյալ հաջողություններին՝ սպիտակ պահպանողականներն անպատիժ կերպով կազմակերպում էին բռնության և ընտրակեղծարարության գործողություններ: Ընտրությունների վիճարկվող արդյունքներով դաշնային հատուկ ընտրական հանձնաժողովը քվեարկեց կուսակցական հիմքով՝ հօգուտ Հեյսի. 8 «կողմ» ձայն տվեցին հանրապետականները, դեմոկրատների «դեմ» ձայները 7-ն էին:

Այս ընտրությունը հայտնի դարձավ որպես 1877 թվականի փոխզիջում. դեմոկրատները նախագահությունը զիջեցին Ռատերֆորդ Հեյսին՝ պայմանով, որ մնացած բոլոր դաշնային զորքերը կհեռացվեն Հարավից, իսկ Հարավը կստանա հատուկ տնտեսական արտոնություններ: 1877 թվականի մարտին Հեյսը ստանձնեց նախագահի պաշտոնը: Ապրիլին դաշնային զորքերը դուրս բերվեցին Հարավից: Փոխզիջումը թույլ տվեց հարավային դեմոկրատներին այլևս չվախենալ դաշնային զորքերից և չկաշկանդվել հյուսիսային քաղաքական գործիչներից սևամորթ ընտրողների դեմ իրենց բացահայտ բռնության, ահաբեկության և հաշվեհարդարի գործողություններից՝ այդ կերպ վերադառնալով իշխանության և իրականացնելով Հարավի քաղաքական ռեստավրացիան:

1877 թվականից հետո հանրապետականներն այլևս չունեին քաղաքական կապիտալ և քաղաքական կամք՝ միջամտելու Հարավում բռնությունների և ընտրակեղծիքների համատարած գործողություններին: Աֆրոամերիկացիների հոժ բնակչությամբ որոշ վայրերում, ինչպիսին էր Հարավային Կարոլինան, ազատագրված մարդիկ դեռևս մի քանի տարի շարունակեցին զբաղեցնել որոշ տեղական պետական գրասենյակներ: Այնուամենայնիվ, մինչև 1868 թվականը հեղափոխական նպատակների մեծ մասն արդեն իսկ խափանվել էր, իսկ 1870-ական թվականների սկզբին տնտեսական ճգնաժամը և քաղաքական ցնցումները օրակարգից դուրս էին թողել բարեփոխումների նույնիսկ ամենահամեստ խոս-

տումները: Այսպիսով, Վերակառուցման խոստումների մեծ մասը մնաց չիրականացված:

Ամփոփենք: Վերակառուցման քաղաքականությունը Միացյալ Նահանգներում հասավ Աբրահամ Լինքոլնի գերագույն իղձերի իրականացմանը. Միությունը վերականգնվեց: Քաղաքացիական պատերազմն ու դրա արդյունքները մեկընդմիջտ վերջ դրեցին օրինական ստրկությանը Միացյալ Նահանգներում, բայց աֆրոամերիկացիները մնացին երկրորդ կարգի քաղաքացիներ, իսկ կանայք դեռևս պայքարում էին Միացյալ Նահանգների հասարակական կյանքում լիարժեք մասնակցության համար: Վերակառուցման ավարտին Հյուսիսը և Հարավը վերամիավորվեցին առաջին հերթին տնտեսական աճի և տարածքային ընդլայնման հրամայականների շուրջ, այլ ոչ թե քաղաքացիների լիարժեք իրավունքներն ապահովելու նպատակով: Վերակառուցման ժամանակաշրջանում Քաղաքացիական պատերազմի մոխիրներից նորացված ազգ-պետությունը հառնեց նոր հնարավորություններին ընդառաջ՝ հանդուրժելով հին խնդիրները:

ԳԼՈՒԽ 12

«Ոսկեգոծ ժամանակաշրջանը» և Երկրորդ արդյունաբերական հեղափոխությունը

Երկաթուղիները ստեղծեցին կապիտալի առաջին մեծ կենտրոնացումները, իսկ առաջին զանգվածային արտադրական միավորումները՝ արդյունաբերական կորպորացիաները, ստեղծեցին առաջինը հսկայական հարստությունները, որոնցով պետք է բնութագրվեր «Ոսկեգոծ ժամանակաշրջանը» (Gilded Age): Այս ամենը սանձազերծեց աշխատուժի պահանջները՝ միավորելով հազարավոր աշխատավորների, ֆերմերների և ներգաղթյալների ու միմյանց կապելով բազմաթիվ քաղաքներ և այլ բնակավայրեր: Քաղաքացիական պատերազմի բռնկումից հետո քսան տարվա ընթացքում ազգային երկաթուղիների ցանցը եռապատկվեց և հետո կրկին եռապատկվեց հաջորդ չորս տասնամյակների ընթացքում: Երկաթուղիները նպաստեցին միասնական ժամային գոտիների ստեղծմանը ամբողջ երկրում, արդյունաբերողներին հնարավորություն տվեցին մուտք գործելու դեպի հեռավոր շուկաներ և բացեցին ամերիկյան Արևմուտքը: Երկաթուղային ընկերությունները երկրի ամենամեծ ձեռնարկություններն էին: Նրանց հսկայական ազգային գործառնությունները պահանջում էին նորարարական կորպորատիվ նոր կազմակերպությունների ստեղծում, կառավարման առաջադեմ մեթոդներ և հսկայական կապիտալ: Նրանց հսկայական ծախսերը խթանեցին արդյունաբերության բազմաթիվ ոլորտներ և ներգրավեցին անթիվ աշխատավորների: Երկաթուղային ցանցը ձևավորեց ազգային շուկան, ազգային տնտեսությունը և ներագրեց ազգային նոր մշակույթի վրա:

Քաղաքացիական պատերազմին հաջորդեց ամերիկյան արդյունաբերական հեղափոխության նոր շրջափուլը: Տեխնոլոգիական նորարարությունները և պետական ներդրումները կրճատեցին արտադրության և բաշխման ծախսերը: Ազգային վարկային գործակալությունները մեղմում էին ներդրողների, արտադրողների և առևտրականների միջև կապիտալի արագ շարժով պայմանավորված անորոշությունները: Կապի, տրանսպորտի և հաղորդակցության ծախսերի կտրուկ նվազումը հանգեցրեց ազգային նոր զանգվածային լրատվամիջոցների առաջացմանը, որոնց գովազդային գործակալությունները ամբողջ երկրում ներկայացնում և գովազդում էին տարբեր ապրանքներ:

Միացյալ Նահանգներում աճող աշխատավորական հուզումներն

ուղեկցում էին արդյունաբերականացմանը: Ամենամեծ գործադուլները առաջինը հարվածեցին երկաթուղային ընկերություններին, քանզի արդյունաբերության որևէ այլ ճյուղ դեռևս այդքան արդյունավետորեն չէր համախմբել կապիտալը, պետական աջակցությունը և բյուրոկրատական կառավարումը: Մեծ թվով բանվորներ սկսեցին ընկալել իրենց անզորությունը արդյունաբերական նոր համակարգում: Հմտություններն ավելի ու ավելի քիչ նշանակություն ունեին արդյունաբերական, զանգվածային արտադրողականությամբ տնտեսության մեջ, և նրանց՝ որպես անհատների ուժը ավելի փոքր ու աննշան էր թվում, երբ ընկերությունները խոշորանում էին չափերով և հզորությամբ, իսկ դրան զուգահեռ աճում էին գործարար-կառավարիչների հարստությունն ու ազդեցությունը: Երկար աշխատաժամերը, վտանգավոր աշխատանքային պայմանները և չնչին ու անկանխատեսելի աշխատավարձով ընտանիքներ պահելու դժվարությունները ստիպեցին աշխատավորներին կազմակերպվել ու պայքարել կապիտալի իշխանության դեմ: Հարստության և տեխնոլոգիական նորարարությունների փայլուն աշխարհի հղացքը, որը քողարկում էր զանգվածային հասարակական անհավասարությունները և խորը արմատացած կոռուպցիան, հիմքեր ստեղծեցին պատմական այս փուլը բնորոշելու «Ոսկեզօծ ժամանակաշրջան» անվանումով:

Արդյունաբերականացումը և տեխնոլոգիական նորարարությունը

Երկաթուղիների հսկայական կապիտալ կարիքները պահանջում էին միավորման կիրառում, մինչդեռ դաշնային, նահանգային և տեղական կառավարությունները առաջարկում էին անմրցակից արտոնություններ ազգային երկաթուղային ցանցեր ստեղծելու համար: Միլիոնավոր ակր հողատարածքներ և միլիոնավոր դոլարների պետական պարտատոմսեր ազատորեն տրվում էին անդրմայրցամաքային մեծ երկաթուղիների և մայրուղիների կառուցման համար, որոնք արագորեն վերացրին ամերիկյան քաղաքները միմյանցից բաժանող աշխարհագրական հսկայական պատնեշները:

Երկաթուղու շինարարությունը խթանեց տնտեսական զարգացումը, իսկ արտադրության նոր միջոցները ծնեցին աշխատուժի նոր համակարգեր: Վարձու աշխատավորներից շատերը ավանդաբար գործարանային աշխատանքը համարում էին ժամանակավոր քայլ սեփական փոքր բիզնես կամ ֆերմաներ ձեռք բերելու համար: Սակայն քաղաքացիական պատերազմից հետո նոր տեխնոլոգիաներն ու մեքենայացման ավելի մեծ ծա-

վալները նշանակում էին, որ ավելի ու ավելի քիչ վարձու աշխատողներ կարող էին օրինական ճանապարհով հասնել տնտեսական անկախության: Ուստի ստեղծվեցին ավելի ուժեղ և կազմակերպված արհմիություններ՝ պայքարելու աճող, արդեն ձևավորված աշխատավոր դասակարգի իրավունքների համար: Միևնույն ժամանակ, տնտեսական ձեռնարկությունների աճող ծավալները հետզհետե ավելի էին զատում սեփականատերերին իրենց աշխատակիցներից և առօրյա բիզնես գործառնություններից: Իրենց հսկայական նոր գործառնություններն իրականացնելու համար սեփականատերերն աշխատանքի էին ընդունում արհեստավարժ մենեջերների: Կրթված և արհեստավարժ բյուրոկրատներն ու կառավարիչները ընդլայնեցին ձևավորվող միջին խավի շարքերը:

Արդյունաբերականացումը նաև վերափոխեց աշխատավայրից դուրս ամերիկյան հասարակական կյանքի մեծ մասը: Արագորեն աճող արդյունաբերական քաղաքները միավորեցին քաղաքային սպառողներին և գյուղական արտադրողներին մեկ միասնական ազգային շուկայի մեջ: Մենդամթերքի արտադրությունն ու սպառումն ամբողջովին փոխկապակցված էին: Չիկագոյի սպանդանոցները կարծես դարձել էին կապի հանգույց այս շրթայում: 1866-1886 թվականներին Տեխասի ռանչոներից տարեկան մեկ միլիոն գլուխ անասուն էր քշվում դեպի Կանզասի երկաթուղային պահեստներ՝ երկաթուղով Չիկագո առաքելու համար: Չիկագոյի սպանդանոցների «սպամոնտաժման գծերն» (“disassembly lines”) անցնելով՝ կենդանիները վերածվում էին մսի սալիկների, որոնք փաթեթավորվում, պահեստավորվում էին սառնարանային երկաթուղային վագոնների մեջ՝ ամբողջ մայրցամաքում մսագործական խանութներ ուղարկելու համար: 1885 թվականին Չիկագոյում մի քանի խոշոր արդյունաբերական միս փաթեթավորողներ տարեկան արտադրում էին մոտ 500 միլիոն ֆունտ տավարի միս: Նոր ծավալի արդյունաբերականացված մսի արտադրությունը փոխեց սննդի արտադրության ողջ լանդշաֆտը: Գոմեշների հոտերը, խոտհարքները և հին անտառները իրենց տեղը զիջեցին անասուններին, եգիպտացորենին և ցորենին:

Չիկագոն մարմնավորեց ամերիկյան արդյունաբերականացման հաղթարշավը: Չիկագոյի մսի փաթեթավորման արդյունաբերությունը բնորոշում էր ամերիկյան հասարակական կյանքում տեղի ունեցող ահռելի փոփոխությունները: XIX դարի վերջին տասնամյակները խոշոր գործարարության համար նոր ժամանակաշրջան էին. ձևավորվում էին խոշոր կորպորացիաներ և արդյունաբերական միավորումներ, որոնք ղեկավարվում էին պատրաստված բյուրոկրատների և բարձր վարձատրվող արհեստա-

վարժ կառավարիչների կողմից, որոնք զբաղվում էին ազգային և միջազգային գործարարությամբ: Չիկագոյի մսի վերամշակման արդյունաբերությունը, որը հինգ ընկերություններից բաղկացած կարտելային միավորում էր, արտադրում էր ամերիկացի սպառողների մսի պահանջարկի չորս հինգերորդը: Ինչպես Չիկագոյի առաջատար արդյունաբերության այլ ճյուղերը, այդ թվում՝ գյուղատնտեսական մեքենաների և պողպատի արտադրությունը, մսի փաթեթավորման արդյունաբերությունը ևս սերտորեն կապված էր ուրբանիզացիայի և ներգաղթի հետ: Եթե 1850 թվականին Չիկագոն ուներ մոտ 30,000 բնակիչ, ապա XX դարի սկզբին քաղաքի բնակչության թիվը հասավ 1,7 միլիոնի:

Չիկագոյի բնակչության աճն արտացոլում էր համազգային միտումները: 1870 թվականին երկրի բնակչության միայն մեկ քառորդն ապրում էր 2500-ից ավելի բնակչություն ունեցող քաղաքներում կամ քաղաքատիպ բանկավայրերում: 1920 թվականին արդեն բնակչության մեծամասնությունն էր բնակվում քաղաքներում: Շատերը, ովքեր հաստատվել էին Չիկագոյում և խոշոր այլ քաղաքներում, եկել էին ոչ միայն Ամերիկայի գյուղական շրջաններից, այլև ներգաղթել էին արտասահմանից: Ընդգծելով ընդհանուր ներգաղթի օրինաչափությունները՝ Չիկագոյի նորեկները սկզբում հիմնականում Գերմանիայից, Բրիտանական կղզիներից և Սկանդինավիայից էին: Սակայն 1890 թվականին լեհերը, իտալացիները, չեխերը, հունգարացիները, լիտվացիները և այլք Հարավային և Արևելյան Եվրոպայից կազմում էին ներգաղթյալների մեծամասնությունը: Չիկագոն, ինչպես և ամերիկյան արդյունաբերական շատ այլ քաղաքներ, նույնպես ներգաղթյալ քաղաք էր: 1900 թվականին Չիկագոյի բնակչության գրեթե 80 տոկոսը կամ օտարերկրյա ծնունդներ էին, կամ ներգաղթյալների զավակներ:

1878 թ. սեպտեմբերին Թոմաս Էդիսոնը հայտարարեց հետազոտության և զարգացման նոր և հավակնոտ ուղղության՝ էլեկտրական էներգիայի և լուսավորության մասին: Դինամոների և էլեկտրական շարժիչների հիմքում ընկած գիտական սկզբունքները՝ մեխանիկական էներգիան էլեկտրական էներգիայի փոխակերպելը և հակառակը, վաղուց հայտնի էին, բայց Էդիսոնը խնդրի նկատմամբ կիրառեց ժամանակաշրջանի բյուրոկրատական և առևտրային էթոսը: Նա զարգացրեց հետազոտության և զարգացման առևտրային մտածողությամբ կառավարման մոդելը: Էդիսոնն իր մեջ միավորում էր արդյունաբերական դարաշրջանին բնորոշ երկու ինքնություն՝ գործարար կառավարիչ և գյուտարար: Նա իր «Մենլո պարկի» (Menlo Park) հետազոտական լաբորատորիան անվանեց «գյու-

տերի գործարան» (“invention factory”) և խոստացավ «մի փոքր գյուտ տա- սը օրը մեկ և մի մեծ բան յուրաքանչյուր վեց ամիսը մեկ»: Նա իր լիովին հագեցած «Մենլո պարկ» գիտահետազոտական լաբորատորիայում հա- վաքեց հմուտ մեխանիկների ու գիտնականների, որոնց առջև պահանջ էր դրել լուծելու էլեկտրական էներգիայի համակարգի կառուցման և դրա առևտրայնացման խնդիրը:

1879 թվականի աշնան վերջին Էդիսոնը լրագրողներին և ներդրողնե- րին ցուցադրեց էներգիայի արտադրության և էլեկտրական լույսի իր հա- մակարգը: Այնուհետև նա մեծացրեց արտադրությունը և սկսեց գեներա- տորներ վաճառել ձեռնարկություններին: 1883 թվականի կեսերին Էդիսո- նը վերահսկում էր 330 էլեկտրակայանների կառուցումը, որոնք սնուցում էին ավելի քան վաթսույն հազար լամպեր գործարաններում, գրասենյակ- ներում, տպարաններում, հյուրանոցներում և թատրոններում ամբողջ աշ- խարհում: Նա համոզեց քաղաքային իշխանություններին կառուցել կենտ- րոնական էլեկտրակայաններ և անցկացնել էլեկտրահաղորդման գծեր: 1882 թվականի սեպտեմբերին բացվեց Նյու Յորքի Փիրլ սթրիթ (Pearl Street) կենտրոնական կայանը, որը սնուցում էր Մանհեթենի կենտրոնը: Էլեկտրաէներգիան հեղափոխեց աշխարհը. այն ոչ միայն լուսավորեց գի- շերը, այլ ուժ հաղորդեց Երկրորդ արդյունաբերական հեղափոխությանը: Գործարանները կարող էին աշխատել ցանկացած վայրում, ցանկացած ժամի: Էլեկտրական երկաթուղային վագոնները թույլ տվեցին իրակա- նացնել քաղաքների հորիզոնական ընդլայնումը, իսկ էլեկտրական վերե- լակները՝ վերհառնումը:

Երկրորդ արդյունաբերական հեղափոխության բերած տնտեսական առաջընթացը, տեխնոլոգիական նորարարությունները, հասարակա- կան, մշակութային, ժողովրդագրական փոփոխությունները հիմնովին վերափոխեցին Միացյալ Նահանգները: Արդյունաբերությունը բարձ- րացրեց արտադրողականությունը, երկաթուղային գծերը ամուր կարե- ցին նահանգները միմյանց, ձևավորվեց մշտական աճող աշխատավոր դասակարգ, որը հիմնված էր վարձու աշխատանքի համակարգի վրա: Նոր գրասենյակային աշխատատեղերը ստեղծեցին «սպիտակ օձիքա- վորների» (“white collar”) հսկայական միջին խավ, իսկ կապիտալիստ սեփականատերերը կուտակեցին աննախադեպ հարստություններ: Այս հեղափոխական փոխակերպումները չսահմանափակվեցին միայն տնտե- սությամբ. փոփոխությունը գրավեց ամերիկացիների առօրյա կյանքը և հիմնովին վերափոխեց ամերիկյան մշակույթը:

Ներգաղթը և ուրբանիզացիան

Արդյունաբերությունը աստիճանաբար ավելի շատ ամերիկացիների ձգեց դեպի քաղաքներ: Արտադրությունը կարիք ուներ աշխատուժի և ենթակառուցվածքների: Քաղաքացիական պատերազմից հետո կես դարում Ամերիկայի քաղաքային բնակչությունն աճեց յոթ անգամ: XX դարի սկզբին Միացյալ Նահանգներն արդեն ուներ ավելի մեծ քաղաքներ, քան աշխարհի ցանկացած այլ երկիր: 1920 թվականին ԱՄՆ-ի մարդահամարը ցույց տվեց, որ առաջին անգամ ամերիկացիների մեծ մասն ապրում է քաղաքային բնակավայրերում: Այդպիսի աճը գրանցվել էր հիմնականում ի հաշիվ միլիոնավոր ներգաղթյալների անընդհատ հոսքի: 1870-1920 թթ. ավելի քան 25 միլիոն ներգաղթյալներ ժամանեցին Միացյալ Նահանգներ:

XX դարի սկզբին ներգաղթյալների նոր խմբերը, ինչպիսիք էին իտալացիները, լեհերը և արևելյան Եվրոպայի հրեաները, ավելի մեծաթիվ էին, քան ժամանող իռլանդացիներն ու գերմանացիները: Հրող և ձգող գործոնները, թե ինչու էին ներգաղթյալները լքել իրենց երկրները, և պատճառները, թե ինչու էին նրանք գալիս Միացյալ Նահանգներ, տարբեր էին: 1880-ականներին Շվեդիայի երիտասարդ ընտանիքները, ովքեր չէին կարող գյուղատնտեսական հողեր գնել, կարդալով Ամերիկայի Միջին Արևմուտքում էժան հողատարածքների գովազդները, ներգաղթում էին Միացյալ Նահանգներ՝ նոր կյանք սկսելու համար: Ներգաղթյալ իտալացի երիտասարդներից շատերը պարզապես հույս ունեին տևական ժամանակ աշխատելով պողպատի գործարաններում՝ բավականաչափ գումար կուտակել և տուն վերադառնալ ու ընտանիքի համար հող գնել: Եվրոպայում հալածանքների ենթարկվող հրեաները Միացյալ Նահանգները դիտում էին որպես փրկության երկիր: Հայերը հաստատվում էին Միացյալ Նահանգներում՝ խուսափելով Օսմանյան կայսրությունում Համիդյան ջարդերից, այնուհետև Առաջին աշխարհամարտի ընթացքում Հայոց ցեղասպանությունից: Ճապոնացի միգրանտներին գրավում էին Արևմտյան ափի բերրի գյուղատնտեսական հողերը: Բայց եթե շատ գործոններ մարդկանց հեռացնում էին իրենց հայրենի երկրներից, ապա ներգաղթյալներին գրավող ամենակարևոր գործոնը տնտեսությունն էր: Ներգաղթյալները հաստատվում էին ԱՄՆ-ում լավ կյանքի հույսով:

1880-1920 թթ. ներգաղթյալներին ԱՄՆ-ում գրավող ամենակարևոր գործոնը արդյունաբերական կապիտալիզմն էր: Ներգաղթյալ բանվորներն աշխատում էին արդյունաբերական խոշոր համալիրներում, որոնք

արտադրում էին այնպիսի ապրանքներ, ինչպիսիք էին պողպատը, հագուստը և սննդամթերքը: Ներգաղթյալների հոսքը, ինչպես նաև ամերիկացիների մեծ տեղաշարժը գյուղից դեպի քաղաք, խթանեց այնպիսի քաղաքների արագ աճը, ինչպիսիք են Նյու Յորքը, Փիթսբուրգը, Քլիվլենդը, Միլուոքին և Սենթ Լուիսը: 1890 թվականին ներգաղթյալները և նրանց երեխաները հյուսիսային մեծ քաղաքների բնակչության մոտավորապես 60 տոկոսն էին (երբեմն՝ 80 կամ 90 տոկոսը): Բազմաթիվ ներգաղթյալներ, հատկապես Իտալիայից և Բալկաններից, մտադրված էին բավարար գումարով տուն վերադառնալ՝ հող գնելու համար, սակայն շատերը, ի վերջո, մնում էին ընդմիջտ:

Արդյո՞ք նորեկները ծուլվում էին ամերիկյան հավան կաթսայում (American melting pot)՝ դառնալով նույնը, ինչ արդեն Միացյալ Նահանգների ամերիկացիներն էին, թե՛ նրանք պահպանում էին և երբեմն նույնիսկ ամրապնդում իրենց ավանդական էթնիկական ինքնությունը: Իրականում կատարվում էր և՛ մեկը, և՛ մյուսը: Որոշ երկրներից և հաճախ նույնիսկ որոշ համայնքներից ներգաղթյալները հաճախ հավաքվում էին էթնիկ թաղամասերում: Նրանք ստեղծում էին կենսունակ կազմակերպություններ և հասարակություններ, ինչպիսիք էին իտալացի բանվորների ակումբները, Արևելյան Եվրոպայի հրեական փոխօգնության ընկերությունները և լեհական կաթոլիկ եկեղեցիները: Ներգաղթյալների համայնքները հրատարակում էին թերթեր և տարածքներ էին գնում՝ իրենց արվեստը, լեզուներն ու ավանդույթները կենդանի պահելու համար: Եվ այս տեսանկյունից նրանք էլ ավելի նպաստեցին ներգաղթին՝ օգնելով և խրախուսելով իրենց հայրենակիցներին հետևելու իրենց օրինակին և այդ կերպ առաջացնելով շղթայական միգրացիա (chain migration):

Շատ քաղաքներում քաղաքականությունը հարմարեցված էր ներգաղթյալ բնակչությանը: Քաղաքային քաղաքական կազմակերպությունները կամ մեքենաները հաճախ գործում էին որպես փոխօգնության ընկերություններ: Նյու Յորքի Դեմոկրատական կուսակցության քաղաքական մեքենան, որը հայտնի էր որպես «Թամմանի հոլ» (Tammany Hall), հարուցել էր քննադատների ամենամեծ զայրույթը, բայց այն նաև արձագանքում էր ներգաղթյալների կարիքներին: Հատկապես Ուիլյամ «Բոսս» Թվիդի ղեկավարման շրջանում «Թամմանի հոլի» կոռուպցիան խոշոր ծավալների էր հասել, բայց կազմակերպության խթանած հանրային աշխատանքների նախագծերը նաև ապահովեցին քաղաքի հիմնական ենթակառուցվածքները և հանրային ծառայությունները արագ աճող բնակչության համար. ջրագծեր, կոյուղի, գազատարներ, դպրոցներ, հիվանդանոցներ, քաղա-

քացիական շենքեր և թանգարաններ, ոստիկանություն և հրշեջ բաժիններ, ճանապարհներ, զբոսայգիներ (Նյու Յորքի Կենտրոնական այգին) և կամուրջներ (Բրուքլինի կամուրջը):

Մինչ քաղաքները ծաղկում էին, գյուղական վայրերը թուլանում էին: Ընկերաբան Քենյոն Բաթերֆիլդը «Ֆերմայի խնդիրը» տեսնում էր որպես «ժողովրդավարական քաղաքակրթության ամբողջ հարցի» մաս: Նա և ուրիշ շատ գործիչներ կարծում էին, որ քաղաքների վերելքն ու գյուղերի անկումը սպառնում են ավանդական ամերիկյան արժեքներին: Շատերը տենչում էին գտնել ոսկե միջինը քաղաքների և երկրի միջև: Ամերիկյան քաղաքների ծայրամասերում գտնվող արվարձանային նոր համայնքներն ինքնահաստատվեցին՝ ի հեճուկս քաղաքային մարդաշատության: Ամերիկացիները մտածում էին գյուղական վայրերի, արվարձանային բնակության և քաղաքային տարածքների միջև բարդ հարաբերությունների մասին: Լոս Անջելեսը դարձավ գյուղական վայրերի արվարձանային զարգացման մոդել: Լոս Անջելեսում սոցիալական բարեփոխիչ Դանա Բարլեթը նշում էր, որ քաղաքը, որը տարածվում է տասնյակ փոքր քաղաքների վրա, «ավելի լավ քաղաք» է, քանզի իր բնակելի ինքնությամբ «տների քաղաք» (“city of homes”) է: Շատ ծայրամասեր, որոնք հույս ունեին խուսափելու ինչպես քաղաքների տարածումից, այնպես էլ գյուղական վայրերի քայքայումից, ընդօրինակեցին արվարձանային զարգացման հարացույցը:

Նոր հարավը և ռասայական հիմնախնդիրը

1886 թվականին «Ատլանտայի Սահմանադրություն» (*Atlanta Constitution*) ամսագրի խմբագիր Հենրի Գրեյդին Նյու Յորքում ունեցած իր ելույթում հայտարարեց. «Կար ստրկության և անջատման հարավ: Այդ հարավը մեռած է»: Գրեյդին նվաճեց հարավցի շատ սպիտակամորթ գործարարների և քաղաքական առաջնորդների զգացմունքները, ովքեր պատկերացնում էին Նոր հարավ, որը կարող է երես թեքել անցյալից՝ ընդունելով արդյունաբերականացումը և դիվերսիֆիկացված գյուղատնտեսությունը: Նա ձգտում էր խթանել տարածաշրջանի տնտեսական հնարավորությունները և ընդհանուր ապագա բարգավաճումը հյուսիսային կապիտալի և հարավային աշխատուժի դաշինքի միջոցով: Գրեյդին և Նոր հարավի այլ ջատագովներ հույս ունեին տարածաշրջանի տնտեսությունը ձևավորել Հյուսիսի կերպով: Նրանք ուզում էին արդյունաբերություն և ուզում էին ենթակառուցվածքներ: Բայց անցյալից փախչել չէր ստացվում:

Տնտեսական և սոցիալական առումով «Նոր հարավը» դեռ շատ նման էր հինին: Ազատագրությունը խախտել էր հարավային հասարակական կարգը: Երբ վերակառուցման վարչակարգերը փորձեցին ազատագրված մարդկանց քաղաքացիության լիարժեք իրավունքներ շնորհել, անհանգստացած սպիտակամորթները հակադարձեցին: Վախից, զայրույթից և վրդովմունքից դրդված՝ նրանք հարձակվեցին ոչ միայն կազմակերպված ահաբեկչական կազմակերպություններով, ինչպիսին էր «Կու կլուքս կլանը», այլև քաղաքական կոռուպցիայով, տնտեսական շահագործմամբ և բռնությամբ: Շուտով սպիտակ հարավցիները ետ վերցրեցին նահանգների և տեղական իշխանությունների վերահսկողությունը և օգտագործեցին իրենց վերականգնված իշխանությունը՝ գրկելու աֆրոամերիկացիներին իրավունքներից և ընդունեցին «Ջիմ Բրոու» օրենքները (“Jim Crow” laws), որոնք ռասայական հիմքով տարանջատում էին դպրոցները, տրանսպորտը, զբաղվածությունը և պետական ու մասնավոր տարբեր հաստատությունները: Սպիտակների գերակայության վերահաստատումով Հարավը Վերակառուցումից «փրկելը» հակասում էր «Նոր» հարավի հռչակումներին: Հարավում Վերակառուցումից հետո մոլեգնում էր բարբարոսական լինչի ալիքը՝ ինքնադատաստաններն ու սպանությունները: Թե՛ իրական հանցագործությունների, թե՛ շինծու հանցագործությունների համար կամ ընդհանրապես առանց պատճառի, սպիտակ ամբոխները 1880-1950-ական թվականներին սպանել են մոտավորապես հինգ հազար աֆրոամերիկացիների:

XIX դարի վերջին և XX դարի սկզբին մի շարք հայտնի հարավցիներ բացահայտորեն աջակցում էին լինչին՝ պնդելով, որ սևամորթ բռնաբարոզներին պատժելը և մյուսներին զսպելը անհրաժեշտ չարիք էր: Սևամորթ ակտիվիստները և նրանց սպիտակամորթ աջակիցները պայքարում էին լինչի դատաստանները օրենքից դուրս հայտարարելու համար: Երբ պոպուլիստական շարժումը նոր հնարավորություններ ստեղծեց սևամորթների քաղաքական գործունեության համար, սպիտակ դեմոկրատները արձագանքեցին ահաբեկչությամբ: Հյուսիսային Կարոլինայում պոպուլիստներն ու հանրապետականները «միաձուլվեցին» և 1896 թվականին ընտրական ապշեցուցիչ հաղթանակներ տարան: Ցնցված սպիտակ դեմոկրատները ստեղծեցին «Կարմիր վերնաշապիկավորների» (“Red Shirt”) խմբեր՝ կիսառազմական կազմակերպություններ, որոնք ուղղված էին սևամորթների քաղաքական մասնակցությունը վերացնելուն և բռնության ու ահաբեկման միջոցով դեմոկրատների իշխանությունը վերականգնելուն: 1898 թվականի նահանգային ընտրություններում սևամորթ

ընտրողների և պաշտոնատար անձանց նկատմամբ բռնության և ահաբեկման «սպիտակ գերակայության արշավ» (“white supremacy campaign”) սկսելով՝ Կարմիր վերնաշապիկավորները փաստորեն հետ վերցրին նահանգի իշխանությունը:

Աշխատանքային ու բնակարանային խտրականությունը և հանրային ու մասնավոր կյանքի օրինական տարանջատումը նույնպես արտացոլեցին նոր Զիմ Քրոու Հարավի (Jim Crow South) վերելքը: Այսպես կոչված՝ Զիմ Քրոուի օրենքները օրինականացնում էին այն, ինչ սովորույթը վաղուց էր թելադրում: Հարավային նահանգներն ու քաղաքապետարանները պարտադրում էին ռասայական տարանջատում հասարակական վայրերում և մասնավոր կյանքում: Առաջին նման օրենքներն ի հայտ եկան Թենեսիում 1880-ականներին: Շուտով տարանջատվեցին դպրոցները, խանութները, թատրոնները, ռեստորանները, բաղնիքներն ու հասարակական կյանքի գրեթե բոլոր մասերը: Ամուսնության մասին օրենքներն արգելում էին միջ-ռասայական ամուսնությունները, իսկ լինչի դատաստաններն արդարացվում էին իբրև ռասայական պառակտումը վերահսկելու համապատասխան արտաօրինական միջոց:

Քաղաքական կյանքում Վերակառուցումից ի վեր սևամորթների քվեարկության փաստացի սահմանափակումները ճնշել էին աֆրոամերիկացի ընտրողներին: Սպիտակամորթները լցոնում էին քվեատուփերը և ահաբեկում սևամորթ ընտրողներին ֆիզիկական և տնտեսական սպառնալիքներով: Իսկ 1890-1908 թթ. հարավային նահանգները փաստացի կամ օրինական կերպով իրականացնում էին ընտրական իրավունքի զրկումներ: Նրանք ընդունեցին օրենքներ, որոնք ընտրողներից պահանջում էին անցնել գրագիտության թեստեր (որոնք կարող էին կամայականորեն դատվել) և վճարել ընտրական հարկեր (որը հարվածում էր աղքատ սպիտակամորթ և աղքատ սևամորթ ամերիկացիներին)՝ փաստացի մերժելով սևամորթ տղամարդկանց այն իրավունքը, որը երաշխավորված էր Տասնհինգերորդ ուղղմամբ (Fifteenth Amendment):

Նշանավոր սպիտակ հարավցիները սկսեցին վերապատմել ոչ վաղ անցյալի պատմությունը: Այսպես կոչված «Կորույալ գործը» (“Lost Cause”) փառաբանում էր Համադաշնությունը և վիպականացնում Հին հարավը: Սպիտակ հարավցիները նայում էին առաջ՝ միաժամանակ ետ նայելով առասպելական, երևակայական անցյալին, որտեղ բնակվում էին գոհ ու հավատարիմ ստրուկներ, բարերար և առատաձեռն տերեր, ասպետական և պատվավոր տղամարդիկ և մաքուր ու հավատարիմ հարավային գեղուհիներ: Հարավի անջատումը, ասում էին նրանք, քիչ կապ

ուներ ստրկության հաստատության հետ, և զինվորները կռվում էին միայն իրենց տան և պատվի համար, այլ ոչ թե մարդկանց նկատմամբ սեփականության շարունակականության համար: Այսպիսով, Նոր Հարավը ֆիզիկապես կառուցվելու էր նոր տեխնոլոգիաներով, նոր ներդրումներով և նոր արդյունաբերություններով, բայց կառչած էր մնալու քաղաքական և հասարակական հին սովորույթներից:

«Կորուսյալ գործի» ջատագույնները, այդ թվում՝ կանանց խմբերը, ինչպիսիք էին Համադաշնության միացյալ դուստրերը (United Daughters of the Confederacy), միացել էին Համադաշնության վետերաններին՝ պահպանելու համադաշնամետ անցյալը: Նրանք կառուցում էին Համադաշնության հուշարձաններ և նշում էին Համադաշնության վետերանների հիշատակի օրը: Ամբողջ Հարավում քաղաքները կանգնեցրին գեներալ Ռոբերտ Է. Լիի և Համադաշնության այլ գործիչների արձանները: XX դարի սկզբին «Կորուսյալ գործի» իդեալականացված անցյալը արմատացած էր ոչ միայն Հարավում, այլև ողջ երկրում: 1915 թվականին հռչակավոր կինոռեժիսոր Դեյվիդ Գրիֆիթը Թոմաս Դիքսոնի վեպը հարմարեցրեց հանրաճանաչ «Ազգի ծնունդ» (Birth of a Nation) ֆիլմին, որը մեծապես նպաստեց «Կու կլուքս կլանի» երիտասարդացմանը: Նախապատերազմական Հարավի իդեալականացված տարբերակը և Վերակառուցման աղավաղված կերպարանքը գերակշռում էին ժողովրդական երևակայության մեջ:

«Նոր հարավի» ջատագույնները պայքարում էին Հարավը ժամանակակից աշխարհ ներքաշելու համար, և երկաթուղիները դարձան նրանց գործունեության կիզակետը: Տարածաշրջանը հետ էր մնացել հյուսիսից XIX դարի կեսերին երկաթուղային շինարարական գործընթացում, և հետպատերազմյան երկաթուղային ընդլայնումը հեշտացրեց կապերը բնակչության գյուղական հատվածների ու տարածաշրջանի աճող քաղաքային շրջանների միջև: Զարկ տրվեց նաև կոշտ մակերևույթով նոր ճանապարհների կառուցմանը և բարելավմանը, որն էլ ավելի մեծացրեց ապրանքների, կապիտալի, ծառայությունների և մարդկանց հոսքը հյուսիսից դեպի տարածաշրջան: XX դարի սկզբից ի վեր ավտոմեքենաների աճող ժողովրդականությունը մեծացրեց քաղաքների և հարավի հսկայական գյուղատնտեսական շրջանների միջև հուսալի ճանապարհների կառուցման անհրաժեշտությունը:

Տրանսպորտային նոր ցանցերի հետ «Նոր հարավի» ջատագույնները շարունակեցին խթանել արդյունաբերական աճը: Տարածաշրջանը ականատես եղավ արդյունաբերական տարբեր ճյուղերի՝ հիմնականում տեքստիլ, ծխախոտի, կահույքի և պողպատի արդյունաբերության աճին:

Մինչ գյուղատնտեսությունը, մասնավորապես բամբակի արտադրությունը, մնում էր տարածաշրջանի տնտեսության հենարանը, այս ներդրումները և նոր արդյունաբերությունները նոր հարստություններ կուտակեցին իրենց սեփականատերերի համար և նոր աշխատատեղեր ապահովեցին շարունակ ավելացող հողագուրկ ֆերմերների համար: Թեև այս ձեռնարկություններն առաջարկում էին ցածր վարձատրվող աշխատատեղեր, բայց նաև ապրուստի հնարավորություն էին գյուղական աղքատների համար, ովքեր այլևս չէին կարող գոյատևել հողագործությամբ: Տղամարդիկ, կանայք և երեխաներ տեղափոխվեցին վարձու աշխատանքի: XX դարի սկզբին Հարավի գործարանների աշխատողների գրեթե մեկ չորրորդը 6-16 տարեկան երեխաներ էին: Շատ դեպքերում, ինչպես Նոր Հարավի շատ ոլորտներում, գործարանների նոր աշխատատեղերը ռասայականորեն առանձնացված էին: Ավելի լավ վարձատրվող աշխատատեղերը վերապահված էին սպիտակներին, մինչդեռ ամենավտանգավոր, աշխատատար, ամենակեղտոտ և ամենացածր վարձատրվող հաստիքները տրվում էին աֆրոամերիկացիներին: Աֆրոամերիկացի կանայք հիմնականում աշխատանք էին գտնում սպիտակամորթ ընտանիքների տնային տնտեսություններում որպես վարձու ծառաներ: Հարավցիների մեծ մասը դեռևս աշխատում էր գյուղատնտեսության ոլորտում և ապրում էր աղքատության մեջ:

Այսպիսով, Վերակառուցման և Առաջին համաշխարհային պատերազմի միջակայքում ձևավորված, այսպես կոչված, «Նոր հարավը», այնուամենայնիվ, ռասայական խտրականության և հասարակական կացութաձևի շատ տեսություններում նման էր Հնին, սակայն արդյունաբերական արտադրանքի և երկաթուղային շինարարության չափույթում այն զարգանում էր, թեև այս առաջընթացը հույժ սահմանափակ էր Հյուսիսի համեմատությամբ: Արդյունաբերական զարգացումը և ենթակառուցվածքների ընդլայնումը, հարավը վերստեղծելու փոխարեն, հեշտությամբ գոյակցում էր սպիտակամորթների գերակայության հետ: Գնացքները եկան, գործարաններ կառուցվեցին, կապիտալ ներդրվեց, սակայն տարածաշրջանը մնաց աղքատության և ռասայական ապարտեիդի մեջ:

Կրոն, գենդեր և մշակույթ

1905 թվականին «Ստանդարտ օյլի» (Standard Oil) մագնատ Զոն Դ. Ռոքֆելերը 100,000 դոլար (ավելի քան 2,5 միլիոն դոլար այսօրվա փոխարժեքով) նվիրաբերեց Արտաքին առաքելությունների ամերիկյան

հանձնակատարների խորհրդին (American Board of Commissioners for Foreign Missions): Ռոքֆելերը Ամերիկայի ամենահարուստ մարդն էր, բայց նաև ամենատեղի և անվստահելի անձանցից մեկը: Հոգևորականները՝ բարեփոխիչ Վաշինգտոն Գլեդդենի գլխավորությամբ, խիստ բողոքեցին նվիրատվության դեմ՝ կասկածի տակ դնելով փողի ծագման մաքրությունը: Թեև խորհրդի նախագահ Սեմուել Քեյփենը չպաշտպանեց Ռոքֆելերին և, չնայած լայնածավալ քննադատությանը՝ խորհուրդն ընդունեց Ռոքֆելերի նվիրատվությունը: «Կեղտոտ փողի բանավեճը» արտացոլեց կրոնի և կապիտալիզմի միջև հարաբերությունների վերաբերյալ խնդիրները:

Պողպատի մագնատ Էնդրյու Քարնեգին 1889 թվականի իր հողվածում տարածեց «հարստության ավետարանի» (“gospel of wealth”) գաղափարը՝ պնդելով, որ «հարստության ժամանակավոր անհավասար բաշխման իսկական հակաթույնը» հարուստների՝ նվիրաբերելու և բարեգործությամբ զբաղվելու բարոյական պարտավորությունն է: Մինչդեռ ֆերմերները և աշխատավորական առաջնորդները պնդում էին, որ Աստված օրհնել էր թույլերին, և որ նոր «Ոսկեգոծ ժամանակաշրջանի» հարստություններն ու կորպորատիվ կառավարումն իրենց էությանմբ անբարոյական են: Ժամանակի ընթացքում ամերիկյան եկեղեցիներն ավելի ու ավելի էին հարմարվում արդյունաբերական նոր կարգերին:

XIX դարի վերջի և XX դարի սկզբի տնտեսական և հասարակական փոփոխությունները մարտահրավեր նետեցին ավանդական գենդերային նորմերին: Միևնույն ժամանակ, քաղաքային տարածքները և փոփոխվող մշակութային ու ընկերային արժեքները նոր հնարավորություններ էին ընձեռում ավանդական հասարակական նորմերին ընդդիմանալու համար: Բազմաթիվ կանայք պայքարում էին հանուն հավասար իրավունքների՝ սկսելով աշխատանքային իրավունքների արշավներ և, առաջին հերթին, ընտրական իրավունքի շարժումը: Ուրբանիզացիան և ներգաղթը բորբոքեցին այս անհանգստությունները, իսկ սերունդների տարբերությունները սրեցին ընկերային և ընտանեկան լարվածությունը: Երիտասարդները մարտահրավեր նետեցին իրենց ծնողների սերունդների նորմերին: Կանանց նորաձևությունը սկսեց թուլացնել նրանց ֆիզիկական սահմանափակումները: Այդուհանդերձ, ալկոհոլի դեմ կանանց արշավը խթանեց ժուժկալությունը ժամանակաշրջանի առաջնային բարոյական բարեփոխումների մեջ: Միջին դասի կանայք, սովորաբար բողոքականները, իրենց արշավը ալկոհոլի դեմ հիմնավորում էին իրենց կանացի առաքինության, քրիստոնեական զգացմունքների և ընտանիքի ու տան պաշտպանի դերով:

Կանանց շարժումներին զուգահեռ՝ նոր իմաստ էին ստանում տղամարդկանց կազմակերպությունները, որոնցից էր նորաստեղծ Երիտասարդ տղամարդկանց քրիստոնեական ասոցիացիան (Young Men's Christian Association (YMCA)), որը հիմնում էր գիմնազիաներ, որտեղ երիտասարդները կրթվում և մարզվում էին: Երիտասարդ տղամարդկանց քրիստոնեական ասոցիացիայի առաջնորդներից մեկը հորինեց *բոդի-բիլդինգ* (bodybuilding) եզրույթը և մարզաձևը, իսկ մյուսները հորինեցին բասկետբոլ և վոլեյբոլ մարզաձևերը:

Երկրորդ արդյունաբերական հեղափոխության բերած զանգվածային արտադրության ձևերին զուգընթաց՝ ձևավորվում էին զանգվածային մշակույթի նոր ձևեր: Եթե կենդանի ժամանցը դեռ գրավում էր հանդիսատեսին, շատերն իրենց ուշադրությունը սևեռեցին բոլորովին նոր տեխնոլոգիաների զարգացմանը: Մինչև դարասկիզբը Էդիսոնի ներդրած երկու տեխնոլոգիաներ՝ հնչյունագիրն (ֆոնոգրաֆ) ու շարժանկարը, պատրաստ էին հեղափոխել ժամանցը և նպաստել XX դարի զանգվածային զվարճանքի մշակույթի ստեղծմանը: Ֆոնոգրաֆը առաջին հուսալի սարքն էր, որը կարող էր ձայնագրել և վերարտադրել ձայնը: Ավելին, ֆոնոգրաֆը կարող էր ստեղծել ձայնագրությունների բազմաթիվ պատճեններ՝ մեծ չափով ընդլայնելով հանրաճանաչ երաժշտության շուկան: Դարասկզբին ամերիկացիները զանգվածաբար ֆոնոգրաֆներ էին գնում տնային օգտագործման համար: Ժամանցը դարձավ ֆոնոգրաֆի հիմնական շուկան:

Ոգեշնչված ֆոնոգրաֆի հաջողությունից՝ Էդիսոնը 1888 թվականին որոշեց մշակել «գործիք, որն աչքի համար անում է այն, ինչն անում է ֆոնոգրաֆն ականջի համար»: 1888 թվականին նա արտոնագրեց շարժանկարը: 1889 թվականին նա նորարարություն բերեց ֆիլմերի պտտման մեջ: 1891 թվականին նա ներկայացրեց շարժանկարի տեսախցիկը (կինետոգրաֆ) և դիտող սարքը (կինետոսկոպ): Մինչև 1894 թվականը Էդիսոնի ընկերությունն արդեն արտադրել էր 75 կարճամետրաժ ֆիլմեր: Իսկ 1896 թվականին Էդիսոնի վիտասկոպն (Vitascope) արդեն կարող էր ֆիլմեր պրոյեկտել մեծ էկրանին՝ հանդիսատեսին հավաքելով բազմամարդ կինոթատրոններում: Պրոֆեսիոնալ բռնցքամարտի և բեյսբոլի կողքին կինոարդյունաբերությունը ստեղծում էր կինոաստղերի և հայտնիության ժամանակակից մշակույթը, որը բնութագրելու էր XX դարի զանգվածային ժամանցը:

Կապիտալի արշավը և անհավասարության աճը

XIX դարավերջին արտադրական միավորումների առաջնորդները և հարուստ արդյունաբերողները ընդունեցին գիտական կառավարման կամ *թեյլորիզմի* (Taylorism) նոր սկզբունքները՝ ըստ նրա հայտնի ջատագով Ֆրեդերիկ Թեյլորի գաղափարների: Պողպատե մասերի ճշգրտությունը, էլեկտրաէներգիայի օգտագործումը, հաստոցաշինական նորարարությունները և երկաթուղային հսկա ցանցի զանգվածային ներքին շուկաները արդյունավետության նոր ուղիներ էին առաջարկում: Ըստ Թեյլորի՝ մեքենայացված դարաշրջանի պահանջներին համապատասխանելու համար ընկերություններին անհրաժեշտ էր արտադրության գիտական կազմակերպում: Նա հորդորում էր բոլոր արտադրողներին բարձրացնել արդյունավետությունը՝ ենթաբաժանելով առաջադրանքները: Նման փոխարկումը ոչ միայն կդարձներ աշխատողներին նույնքան փոխարինելի, որքան այն մասերը, որոնք նրանք օգտագործում էին, այլև կտրուկ կարագացներ արտադրության գործընթացը: Եթե արտադրությունը կառավարվեր վերապատրաստված մասնագետների կողմից, կոնկրետ առաջադրանքները կարող էին կատարվել ավելի արագ և արդյունավետ:

Թեյլորիզմը մեծացրեց արտադրության մասշտաբներն ու շրջանակները և ընդլայնեց զանգվածային արտադրությունը: Հիմնվելով քաղաքացիական պատերազմի ժամանակաշրջանի զենքի արտադրության մեջ փոխարինելի մասերի օգտագործման վրա՝ ամերիկյան ընկերությունները զարգացրին զանգվածային արտադրության տեխնիկանները և տեխնոլոգիաները: «Ջինգեր» (Singer) կարի մեքենաները, Չիկագոյի փաթեթավորողների «ապամոնտաժման» գիծը, ՄակԲորմիկ (McCormick) հացահատիկ հնձող մեքենաները, Դյուք (Duke) ծխախոտ փաթեթավորիչները՝ բոլորն էլ հասան աննախադեպ արդյունավետության և արտադրության չլսված ծավալների: Հենրի Ֆորդը նշանավորեց հավաքման փոխակրիչ գծի՝ կոնվեյերային արտադրության, կիրառությունը, որը թույլ տվեց կտրուկ ավելացնել ավտոմեքենաների արտադրության ծավալները, ինչն իր հերթին կտրուկ նվազեցրեց դրանց արժեքը՝ դարձնելով ավելի մատչելի:

Սայրուս ՄակԲորմիկը տասնամյակներ շարունակ վերահսկում էր հնձի մեխանիզացիայի արտադրությունը: Հնձի մեքենայացումը թույլ էր տալիս հսկայական չափերով ավելացնել ցորենի մշակումը և արտահանումը: Այնուհետև, 1880 թվականին, ՄակԲորմիկը վարձեց արտադրության մի կազմակերպչի, ով մինչ այդ ղեկավարել էր «Կոլտ» (Colt) հրագեների արտադրության համակարգը վերափոխելու գործընթացը: ՄակԲորմի-

կի Չիկագոյի գործարանը սկսեց կիրառել նոր կաղապարներ, պողպատե չափիչներ և մոդելային մեքենաներ, որոնք կարող էին կատարել նոր, փոխարինելի մասերի ճշգրիտ կրկնօրինակումներ: 1880 թվականին ընկերությունն արտադրեց 21 հազար միավոր մեքենա: 1885 թվականին այն արտադրում էր երկու անգամ ավելի շատ, իսկ 1889 թվականին՝ տարեկան ավելի քան 100 հազար միավոր մեքենա:

Արդյունաբերականացումը և զանգվածային արտադրությունը Միացյալ Նահանգներին մղեցին աշխարհի առաջատար դիրքեր: Դեռևս 1860-ականներին ամերիկյան տնտեսությունը հետ էր մնում Մեծ Բրիտանիայից, Գերմանիայից և Ֆրանսիայից, սակայն արդեն 1900 թվականին Միացյալ Նահանգներն աշխարհի առաջատար արդյունաբերական երկիրն էր: Իսկ դրանից ընդամենը տասներեք տարի անց՝ 1913 թվականին, Միացյալ Նահանգներն արտադրում էր համաշխարհային արդյունաբերական արտադրանքի մեկ երրորդը, ավելի շատ, քան Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան և Գերմանիան միասին վերցրած:

Մակթորմիկի նման ընկերությունները կառուցեցին հսկայածավալ տնտեսություններ. մեքենաների և շուկայավարման մեջ իրենց նախնական հսկայական կապիտալ ներդրումները հաշվառելուց հետո յուրաքանչյուր լրացուցիչ նոր արտադրանքի համար ընկերությունը համեմատաբար քիչ էր կորցնում արտադրության ծախսերում: Որքան մեծ էր արտադրությունը, այնքան մեծ էր շահույթը: Հետևաբար, նոր արդյունաբերական ընկերությունները ձգտում էին վաճառահանման շուկաների՝ իրենց մեծածավալ արտադրական միավորները աշխատեցնելու համար: Մեծածախ և մանրածախ առևտրով զբաղվողներն ու գովազդատուները պահպանում էին զանգվածային արտադրության համար անհրաժեշտ զանգվածային շուկաները, իսկ կորպորատիվ բյուրոկրատական ապարատները թույլ էին տալիս միաժամանակ արդյունավետ կառավարել նոր հսկա ընկերությունները: Մենեջերների նոր դասը ապահովեց զանգվածային արտադրության և զանգվածային բաշխման համակարգերի արդյունավետ շահագործումն ու կառավարումը: Այնուամենայնիվ, այս նոր ընկերությունների աճի և պահպանման համար առավել կարևոր էին իրավական կառույցները, որոնք օգտագործվում էին ներդրողներին պաշտպանելու և զանգվածային կապիտալի իշխանությունը պահպանելու համար:

Զանգվածային արտադրության ծախսերը չափազանց մեծ էին բոլորի համար, բացառությամբ ամենահարուստ անհատների, և նույնիսկ այդ դեպքում ռիսկերը չափազանց մեծ էին ձեռնարկումների պատասխանատվությունը անհատապես կրելու համար: Քաղաքացիական պատերազմից

հետո, սակայն, կորպորացիաները (միավորումներ) դարձան օրինական մեխանիզմ գրեթե բոլոր ձեռնարկությունների համար՝ հսկայածավալ կապիտալ կուտակելու և միաժամանակ բաժնետերերի պատասխանատվությունը հավաքական պատասխանատվության մոտեցմամբ նվազեցնելու համար: Լվալով իրենց ձեռքերը իրավական և ֆինանսական պարտավորություններից, միաժամանակ պահպանելով զանգվածային շահույթ ստանալու իրավունքը՝ ներդրողները հեղեղում էին արտադրական միավորումները արդյունաբերականացման համար անհրաժեշտ կապիտալով:

Բայց շահույթի մարժաները կարող էին խորտակվել դաժան մրցակցության պատճառով, որը ցածր էր պահում գները, քանզի խոշոր կորպորացիաների համար գների իջեցումը վերածվեց շահույթի: Ընկերություններն աճում և խորտակվում էին, իսկ ներդրողները վսասներ կրում, քանզի արտադրական ընկերությունները պայքարում էին իրենց ոլորտներում գերակայությունը պահպանելու համար: Թեև մեծ մասշտաբի տնտեսավարողների համար լրացուցիչ արտադրությունն ապահովում էր հսկայական շահույթ, սակայն թանկարժեք գործարանների շահագործման հաստատագրված բարձր ծախսերը թելադրում էին, որ նույնիսկ ցածր գնով ապրանքների վաճառքից կորուստները գերադասելի էին վաճառքի լճացումից: Եվ քանի որ շուկայի իրենց մասնաբաժնի պահպանումն անկայուն էր, շահույթն էլ էր անկայուն: Ամերիկյան արդյունաբերական ընկերությունները փորձում էին ամեն միջոց մրցակցությունից խուսափելու համար. նրանք ձևավորում էին ոչ ֆորմալ միավորումներ և տրեստներ, կնքում գների ամրագրման համաձայնագրեր, բաժանում շուկաները և, երբ արգելափակվում էին պետական հակամենաշնորհային օրենքներով և սակագները կարգավորող ակտերով, միաձուլվում էին համախմբումների՝ ընդհանուր արտադրական համալիրների մեջ: Կործանարար մրցակցությունից տառապելու փոխարեն ընկերությունները միավորվում և շրջանցում էին վտանգները միասին:

1895-1904 թվականներին և հատկապես 1898-1902 թվականներին իր գագաթնակետին հասնելով՝ միաձուլումների ալիքը ցնցեց ամերիկյան տնտեսությունը: Մրցակցությունը հալվեց այսպես կոչված «միաձուլման մեծ շարժման» (“the great merger movement”) ընթացքում: Ինը տարվա ընթացքում 4000 ընկերություններ՝ ամերիկյան տնտեսության գրեթե 20 տոկոսը, միաձուլվեցին տարբեր մրցակից ընկերությունների մեջ: Խոշոր արդյունաբերության գրեթե բոլոր ոլորտներում նոր համախմբված ընկերությունները, ինչպիսիք էին «Ջեներալ էլեկտրիկը» (General Electric)

և «Դյուֆոնը» (DuPont), լիովին գերիշխում էին իրենց ոլորտի շուկաներում: 41 առանձին համախմբումներից յուրաքանչյուրը վերահսկում էր շուկայի ավելի քան 70 տոկոսը իրենց համապատասխան ճյուղերում: 1901 թ. ֆինանսիստ Ջ. Պ. Մորգանը վերահսկում էր Միացյալ Նահանգների պողպատի միավորումը (United States Steel Corporation), որը ձևավորվեց պողպատի ութ առաջատար ընկերություններից: Արդյունաբերականացումը հիմնված էր պողպատի վրա, և այս մեկ ընկերությունը՝ միլիարդ դոլար արժողությամբ աշխարհում առաջին ընկերությունը, վերահսկում էր շուկան: Սկսվեց մենաշնորհների ժամանակաշրջանը:

Արդյունաբերական կապիտալիզմը գրանցեց արդյունավետության և արտադրողականության խոշորագույն առաջընթաց: Հսկայական նոր ընկերությունները աննախադեպ ծավալով համախմբեցին կապիտալը և ապահովեցին ահռելի շահույթներ՝ ստեղծելով չլսված հարստություններ: Բայց դա նաև ստեղծեց միլիոնավոր ցածր վարձատրվող, որակավորում չպահանջող, երկար աշխատաժամերով և աշխատանքային վտանգավոր պայմաններով աշխատատեղեր: Հարստության և տեխնոլոգիական նորարարությունների փայլուն աշխարհի հղացքը, որը քողարկում էր զանգվածային սոցիալական անհավասարությունները և խորը արմատացած կոռուպցիան, տվյալ պատմական ժամանակահատվածին տվեց «Ոսկեզոծ ժամանակաշրջան» անվանումը:

«Ոսկեզոծ ժամանակաշրջանը» ծայրահեղ աղքատության կողքին վեր խոյացրեց ֆինանսական և արդյունաբերական հսկաների, այսպես կոչված՝ «ավազակ բարոնները», ինչպիսիք էին երկաթուղային մագնատ Կոռնելիուս Վանդերբիլտը, նավթային մագնատ Ջոն Դ. Ռոքֆելերը և այլք: Մինչև 1900 թվականը ամենահարուստների 10 տոկոսը վերահսկում էր երկրի հարստության շուրջ 90 տոկոսը:

1859 թվականին բրիտանացի բնագետ Չարլզ Դարվինը հրատարակեց «Տեսակների ծագումը» (On the Origin of Species) աշխատությունը, որտեղ նա առաջ քաշեց բնական ընտրության միջոցով էվոլյուցիայի տեսությունը: Դարվինի մեծագույն հանրահռչակողներից մեկը՝ բրիտանացի ընկերաբան և կենսաբան Հերբերտ Սփենսերը, կիրարկեց Դարվինի տեսությունները հասարակության վրա և հանրաճանաչ դարձրեց «ամենահարմարվածների գոյատևում» (survival of the fittest) արտահայտությունը: Սփենսերի խոսքերով՝ ամենահարմարվածները ցույց կտային իրենց գերազանցությունը տնտեսական հաջողության միջոցով, մինչդեռ բարեկեցության պետությունը կամ սոցիալական պետությունը և մասնավոր բարեգործությունը կհանգեցնեին հասարակական այլասերման, ինչը կխրա-

խուսեր թույլերի գոյատևումը: Սոցիալ-դարվինիզմը (Social Darwinism) բացահայտեց բնական կարգը, որը տարածվում էր տիեզերական օրենքներից մինչև արդյունաբերական հասարակության գործունեությունը: Տեսության համաձայն՝ բոլոր տեսակները և բոլոր հասարակությունները՝ ներառյալ ժամանակակից մարդիկ, ղեկավարվում էին գոյատևման համար անողոք մրցակցային պայքարով: Արդյունքների անհավասարությունը պետք էր ոչ միայն հանդուրժել, այլև խրախուսել և հանրահռչակել, որը խորհրդանշում էր տեսակների և հասարակությունների առաջընթացը: «Ոսկեզօծ ժամանակաշրջանի» արդյունաբերական ընտրախավերը Սփենսերի նշանավոր հետևորդներից էին: Յեյլի համալսարանի պրոֆեսոր, ընկերաբան Ուիլյամ Գրեհեմ Սամները ևս նման կերպ արձագանքեց այս գաղափարներին:

Սակայն ոչ բոլորն էին ընդունում հասարակության անհավասարությունները: ԱՄՆ-ի տնտեսության տպավորիչ աճը և դրանից բխող կենսապայմանների և եկամուտների անհավասարությունը շփոթեցրեց շատ ամերիկացիների: Բայց երբ արդյունաբերական կապիտալիզմը տիրեց երկրին, այն հասավ նաև քաղաքական պաշտպանության: Թեև երկու հիմնական քաղաքական կուսակցություններն էլ նպաստեցին խոշոր գործարարության վերելքին և օգտագործեցին պետական իշխանությունը՝ պաշտպանելու կապիտալի շահերն ընդդեմ աշխատավորության, այդուհանդերձ խոշոր գործարարությունը հիմնականում ապավինում էր Հանրապետական կուսակցությանը: Այս կուսակցությունը կազմավորվել էր որպես հակաստրկատիրական խմբակցություն, որը նվիրված է «ազատ աշխատավորությանը» (“free labor”), սակայն գործնականում այն դարձավ գործարարության կուսակցություն, որը գերիշխում էր ամերիկյան քաղաքականության մեջ ողջ «Ոսկեզօծ ժամանակաշրջանում» և XX դարի առաջին տասնամյակներին: Հանրապետականների գերակայությունը թույլ էր տալիս պահպանել բարձր մաքսատուրքերը՝ ներմուծման հարկերը, որոնք նախատեսված էին պաշտպանելու ամերիկյան ձեռնարկություններին արտաքին մրցակցությունից: Հարավի հողատեր-պլանտատորները մինչև պատերազմը դեմ էին այս քաղաքականությանը, բայց այժմ ոչինչ անել չէին կարող դրա դեմ:

Աշխատավորական շարժումը

Սոցիալ-դարվինիզմի գաղափարները թույլ աջակցություն ստացան ամերիկյան արդյունաբերական բանվորների զանգվածների մեջ: Ամերի-

կացի աշխատավորները երկար ժամերով և քիչ վարձատրությամբ տա-
ռապում էին կապիտալիստների ձեռնարկություններում: Մեքենայնացու-
մը և զանգվածային արտադրությունը հմուտ աշխատավորներին պար-
տադրում էր հմտություն չպահանջող և ցածր վարձատրվող աշխատանք:
Արդյունաբերական ձեռնարկության բանվորները աշխատում էին շաբա-
թական 60 ժամ, այդուհանդերձ, նրանցից շատերի տարեկան եկամուտը
ցածր էր աղքատության շեմից: Այս պայմաններում աշխատող աղքատ-
ների կանայք և երեխաներն էլ էին ստիպված աշխատանքի շուկա մտնել:
Բացի այդ, մարդաշատ քաղաքները չէին կարողանում տեղավորել աճող
քաղաքային բնակչությանը, և անշարժ գույքի շուկան արձագանքում էր
բնակարանային վարձավճարների կտրուկ բարձրացմամբ, ինչն աղքատ
աշխատավորական ընտանիքներին տանում էր լեփ-լեցուն տնակային
ավաններ:

1877 թվականի երկաթուղային մեծ գործադուլը ԱՄՆ-ում ազդարարեց
աշխատանքային հակամարտությունների նոր ժամանակաշրջան: Այդ
տարի, ընկղմվելով տնտեսական լճացման մեջ, որը հաջորդեց 1873 թվա-
կանին երկաթուղու ֆինանսական փուչիկի պայթյունին, երկաթգծային
ընկերությունները կրճատեցին աշխատավորների աշխատավարձերը.
աշխատավորները դժգոհում էին, որ երկաթգծային ընկերություննե-
րը հսկայական պետական սուբսիդիաներ էին ստանում և վճարում էին
իրենց բաժնետերերի խոշոր շահույթները: Աշխատավորները գործադուլ-
ներ սկսեցին Բալթիմորից մինչև Սենթ Լուիս՝ փակելով երկաթուղային
երթևեկությունը ամբողջ երկրում և կասեցնելով տնտեսական ակտիվու-
թյունը: Խուճապի մատնված բիզնես առաջնորդներն ու նրանց բարեկամ
քաղաքական գործիչներն ու պաշտոնյաները արագ արձագանքեցին: Երբ
տեղի ոստիկանական ուժերը չկարողացան կամ չցանկացան ճնշել գոր-
ծադուլները, նահանգապետերը կոչ արեցին նահանգային զինված ուժե-
րին կտրել դիմադրությունը և վերականգնել երկաթուղային ծառայու-
թյունը: Գործադուլավորները ոչնչացրին երկաթուղային գույքը՝ թույլ չտա-
լով նահանգային զինված ուժերին վերաբացել ռելսերը: Գործադուլները
ցնցեցին քաղաքներն ու ավանները ողջ Փենսիլվանիայում: Փիթսբուրգի
իրավապահները հրաժարվեցին ճնշել բողոքի ցույցերը, ուստի նահան-
գապետը կոչ արեց գործի դնել նահանգային զինուժը, որը սվիններով
և հրացաններով սպանեց քսան գործադուլավորի: Քառսը շարունակվեց
մեկ ամիս: Գործադուլավորները հրդեհեցին քաղաքը՝ ավերելով տաս-
նյակ շենքեր, հարյուրից ավելի շարժիչներ և հազարից ավելի վագոններ:

Դատարանները, ոստիկանությունը և նահանգային աշխարհագր-

րայինները ճնշեցին գործադուլները, բայց միայն դաշնային զորքերի շնորհիվ կարողացան հաղթել: Զինվորները տեղափոխվում էին քաղաքից քաղաք՝ ճնշելով բողոքի ցույցերը և վերաբացելով երկաթուղային գծերը: Գործադուլը ջախջախվեց սկսվելուց վեց շաբաթ անց: Մոտ 100 ամերիկացի զոհվեց այս «Մեծ ցնցում»-ի (“The Great Upheaval”) ընթացքում: Աշխատավորները ոչնչացրին մոտ 40 միլիոն դոլար արժողությամբ գույք: Գործադուլը ցնցեց ողջ երկիրը: Այն աշխատավորներին համոզեց արհմիությունների հաստատության անհրաժեշտության մասին, համոզեց գործարարությանը ավելի մեծ քաղաքական ազդեցության և պետական օգնության անհրաժեշտության մասին և նախանշեց կեսդարյա աշխատանքային հակամարտության սկիզբը Միացյալ Նահանգներում:

XIX դարի վերջին քառորդում խոշոր գործարարության աճը, աննախադեպ հարստությունները և հսկայական արդյունաբերական աշխատուժի կուտակումը նպաստեցին ամերիկյան աշխատավորական հզոր շարժման վերելքին: Աշխատանքի ասպետների (Knights of Labor) արհմիությունը ողջունում էր բոլոր աշխատավորներին՝ ներառյալ կանանց (ասպետներն արգելում էին միայն փաստաբաններին, բանկիրներին և ակոհոլային խմիչքներ վաճառողներին): Աշխատանքի ասպետները պատկերացնում էին համագործակցային (կոոպերատիվ) ձեռնարկությունների վրա կենտրոնացած հասարակություն՝ հօգուտ աշխատավորության, ոչ թե կապիտալի: Արհմիությունը կազմակերպում էր գործադուլներ և անհնազանդության գործողություններ՝ հանուն իր անդամների և աշխատավորության շահերի պաշտպանության: 1886 թ. գարնանը Տեխասի Մարշալ քաղաքում երկաթուղայինների գործադուլը և բռնաճնշված ընդվզումը կարճ ժամանակով խարխլեց Աշխատանքի ասպետների դիրքերը, սակայն կազմակերպությունը վերախմբավորվեց և իր ջանքերն ուղղեց 8-ժամյա աշխատանքային օրվա պահանջի ազգային արշավին: Ամերիկացի բանվորներին միավորող այս ընդգրկուն արշավի գագաթնակետը 1886 թ. մայիսի 1-ի ազգային գործադուլն էր: Չիկագոյում ոստիկանական ուժերը սպանեցին մի քանի բանվորների՝ ցրելով ցուցարարներին: Աշխատավորության առաջնորդներն ու արմատականները կոչ արեցին հաջորդ օրը բողոքի ցույց կազմակերպել Չիկագոյի Հայմարքեթ հրապարակում, որը նույնպես ոստիկանությունը փորձեց ցրել: Սակայն ռումբ պայթեց՝ սպանելով 7 ոստիկանի: Ոստիկանները կրակեցին ցուցարարների վրա՝ սպանելով 4-ին: Չիկագոյի ոստիկանների մահը վրդովմունք առաջացրեց ողջ երկրում, և Հայմարքեթի խռովության (Haymarket Riot) ուռճացումն օգնեց իշխանություններին ամերիկյան հասարակության աչքում յունիոնիզ-

մը և արհմիություններին կապելու արմատականության հետ: Չիկագոյում 8 անարխիստներ ձերբակալվեցին և, չնայած ռումբի պայթյունին նրանց առնչության ապացույցների բացակայությանը՝ մեղադրվեցին և մեղավոր ճանաչվեցին դավադրության մեջ: Նրանցից 4-ը կախաղան բարձրացվեցին, իսկ մեկը մահապատժի ենթարկվելուց առաջ ինքնասպան էր եղել:

Աշխատանքի ամերիկյան ֆեդերացիան (The American Federation of Labor (AFL)) հանդես եկավ որպես Աշխատանքի ասպետների տեսլականի պահպանողական այլընտրանք: Իբրև արհեստագործական արհմիությունների դաշինք՝ Աշխատանքի ամերիկյան ֆեդերացիան պաշտպանում էր «մաքուր և պարզ արհմիութենականությունը», մի ծրագիր, որը նպատակաուղղված էր գործնական շահերին՝ ավելի բարձր աշխատավարձ, ավելի քիչ աշխատաժամ և ավելի անվտանգ պայմաններ, որին պետք էր հասնել պահպանողական մոտեցմամբ՝ խուսափելով գործադուլներից: Բայց գործադուլները շարունակվում էին:

1892 թվականին Երկաթի և պողպատի աշխատավորների միավորված ասոցիացիան (Amalgamated Association of Iron and Steel Workers) գործադուլ սկսեց Փենսիլվանիայի Հոմսթեդ քաղաքում գտնվող Քարնեգիի պողպատե գործարաններից մեկում: Աշխատավարձի կրկնակի կրճատումից հետո աշխատողները գրավեցին և փակեցին գործարանը: Փենսիլվանիայի նահանգապետն ուղարկեց նահանգային զինուժ, որը ջարդեց գործադուլը և բացեց գործարանը: Այնուամենայնիվ, չնայած կրկնվող ձախողմանը, գործադուլները շարունակվեցին: 1894 թվականին Ջորջ Փուլմանի «Փուլման» (Pullman) մեքենաշինական գործարանների աշխատողները գործադուլ սկսեցին՝ ի պատասխան աշխատավարձի մեկ քառորդով կրճատման: Ամերիկյան երկաթուղային միությունը (American Railway Union (ARU)) Յուջին Դեբսի գլխավորությամբ արձագանքեց համակրանքի գործադուլով՝ հայտարարելով, որ երկաթուղայինները կհրաժարվեն երկրի ցանկացած մասում ցանկացած երկաթուղային գծով «Փուլման» վագոն-մեքենա վարել: Հազարավոր աշխատավորներ գործադուլի ելան, իսկ երկրի երկաթուղային երթևեկությունը դադարեցվեց: Հուլիսին նախագահ Գրովեր Բլիվլենդը հազարավոր ամերիկացի զինվորների ուղարկեց՝ գործադուլը ճնշելու, և դաշնային դատարանը կանխարգելիչ որոշում կայացրեց Դեբսի և արհմիության ղեկավարության դեմ: Ի վերջո, Դեբսը ձերբակալվեց և բանտարկվեց: Գործադուլը մարեց: Ամերիկացի ֆերմերները ևս քննադատում էին «Ոսկեգոծ ժամանակաշրջանի» անհավասարությունները և քաղաքական կոռուպցիան, ինչը հնարավոր էր դարձնում տնտեսական գողությունը:

Պոպուլիստական շարժումը

1890 թվականին պոպուլիստների առաջնորդ Մերի Էլիզաբեթ Լիզը, դիմելով ունեզրկված ֆերմերներին, հայտարարեց. «Ուղ Սթրիթը տիրում է երկրին»: Ընդլայնվող շուկաները և տեխնոլոգիական բարելավումները ոչ միայն բարձրացնում էին արտադրության արդյունավետությունը, այլ նաև նվազեցնում էին ապրանքների գները: Գյուղատնտեսության առևտրայնացումը ֆերմերներին կախվածության մեջ դրեց բանկիրներից, երկաթուղիներից և տնտեսական տարբեր միջնորդներից: Տասնամյակների ընթացքում ավելի ու ավելի շատ ֆերմերներ ընկան պարտքերի տակ, կորցրին իրենց հողերը և ստիպված եղան մտնել արդյունաբերական աշխատաշուկա կամ, հատկապես Հարավում, դարձան հողազուրկ վարձու աշխատողներ ֆերմերային տնտեսություններում:

Արդյունաբերական հսկաների աճը վերափոխեց ամերիկյան գյուղատնտեսական շրջանները: Երկաթուղային գծերը, հեռագրական գծերը և վարկերը հասան գյուղատնտեսական համայնքներ՝ կապելով գյուղաբնակ ամերիկացիներին, որոնք դեռևս կազմում էին երկրի բնակչության մեծամասնությունը, քաղաքների, մասնավորապես Չիկագոյում և Նյու Յորքում գտնվող ավելի խոշոր ամերիկյան ֆինանսական կենտրոնների և, ի վերջո, Լոնդոնի և համաշխարհային ֆինանսական այլ շուկաների հետ: Միևնույն ժամանակ, բարելավված գյուղատնտեսական տեխնիկան, հեշտ վարկառությունը և սպառողական նորագույն ապրանքները հեղեղեցին գյուղատնտեսական շրջանները: Բայց նոր կապերն ու նոր հարմարությունները գին ունեին: Ֆերմերները միշտ կախված էին եղանակի և տեղական շուկաների քմահաճույքներից: Սակայն հիմա նրանց ֆինանսական անվտանգությունը կախված էր նաև ազգային տնտեսական համակարգից, որը ենթակա էր գների արագ տատանումների, սպեկուլյացիաների և սահմանափակ կարգավորման: Հիասթափված ամերիկացի ֆերմերները փորձեցին վերափոխել երկրի քաղաքական և տնտեսական համակարգերի հիմնարար կառույցները: Ֆերմերները կազմակերպեցին և գործարկեցին իրենց արշավը սկզբում Ֆերմերների դաշինքի (Farmers' Alliance), իսկ ավելի ուշ՝ Ժողովրդական (կամ պոպուլիստական) կուսակցության (People's (or Populist) Party) քաղաքականության միջոցով:

1877 թվականին Տեխասի գյուղատնտեսները հանդիպեցին Լամպասսում (Տեխաս) և կազմակերպեցին առաջին Ֆերմերների դաշինքը՝ պաշտպանելու ֆերմերների շահերը երկաթուղու, մեծածախ վաճառականների և բանկիրների հետ հարաբերություններում: Հետագա տարիներին

կազմակերպիչները քաղաքից քաղաք տարածվեցին նախկին Համադաշնության, Միջին Արևմուտքի և Մեծ Հարթավայրերի տարածաշրջաններում՝ անցկացնելով ավետարանական ոճի ճամբարային հանդիպումներ, տարածելով բրոշյուրներ և հիմնելով թերթեր: Դաշինքի տարածմանը համընթաց՝ տարածվեց նաև նրա տեսլականը ազգի ապագայի մասին՝ իբրև «համագործակցային հանրապետություն» (“cooperative commonwealth”), որը պիտի պաշտպաներ շատերի շահերը քչերի գիշատիչ ագահությունից: Իր գազաթնակետին Ֆերմերների դաշինքն ուներ շուրջ 1,5 միլիոն անդամ, 40,000 տեղական կազմակերպություններ: Դաշինքի ամենանորարար ծրագրերից էին մի շարք ֆերմերային կոոպերատիվները, որոնք ֆերմերներին հնարավորություն տվեցին բանակցելու իրենց բերքի ավելի բարձր գների և գնած ապրանքների ավելի ցածր գների շուրջ: 1886-1892 թվականներին այս կոոպերատիվները տարածվեցին Հարավում՝ միավորելով ավելի քան 1 միլիոն անդամների:

1890 թվականին Հարավում Ֆերմերների դաշինքի կողմից աջակցվող դեմոկրատ թեկնածուները հաջողություն արձանագրեցին ընտրություններում՝ ընտրելով 4 նահանգապետի և ստանալով 48 մանդատ Կոնգրեսում: Սակայն երբ գների անկումը և պարտքերի աճը վտանգի տակ դրեցին ընտանեկան ֆերմաների գոյատևումը, շատերին թվում էր, թե երկու քաղաքական կուսակցություններն ի վիճակի չէին ներկայացնել աղքատ ֆերմերների կարիքները: Եվ այսպես, դաշինքի անդամները կազմակերպեցին քաղաքական կուսակցություն՝ Ժողովրդական կուսակցությունը, որի անդամները հայտնի դարձան իբրև պոպուլիստներ: Պոպուլիստները ձեռք բերեցին համախոհներ ողջ երկրում՝ ապավինելով նրանց, ովքեր համոզված էին, որ «Ոսկեզօծ ժամանակաշրջանի» Ամերիկայի քաղաքական տնտեսության մեջ կան խորքային թերություններ, որոնց երկու հիմնական քաղաքական կուսակցությունները հրաժարվում էին անդրադառնալ: Նախկինում արժութային բարեփոխումների համար մղվող պայքարի վետերանները, դժգոհ արդյունաբերական բանվորները, Էդվարդ Բելամիի հանրաճանաչ «Նայելով ետ» (Looking Backward) ուտոպիական վեպի բարեսիրական սոցիալիզմի (benevolent socialism) գաղափարի ջատագովները և Հենրի Ջորջի «միանվագ հարկի» (“single-tax”)՝ ֆերմերների շահերից բխող նախագիծ-առաջարկի կողմնակիցները միացան Ֆերմերների դաշինքի անդամներին՝ ձևավորելով նոր կուսակցությունը: 1892 թվականի հուլիսի 4-ին Նեբրասկա նահանգի Օմահա քաղաքում կուսակցության առաջին ազգային համագումարի ժամանակ պոպուլիստները նախագահի թեկնածու առաջադրեցին Քաղաքացիական

պատերազմի նախկին գեներալ Ջեյմս Բ. Ուիվերին:

Համագումարում Ժողովրդական կուսակցությունը հաստատեց Պոպուլիստական ծրագիրը (Populist platform), որը բյուրեղացրեց դաշինքի համագործակցային նախագիծը՝ վերածելով համահունչ քաղաքական տեսլականի: Ծրագրի նախաբանը նախազգուշացնում էր, որ «միլիոնավորների աշխատանքի պտուղները հանդգնաբար գողացվել են՝ մի քանիսի համար հսկայական հարստություններ դիզելու նպատակով»: Ծրագիրն առաջարկում էր դաշնային իշխանության աննախադեպ ընդլայնում: Այն պաշտպանում էր երկրի երկաթուղային և հեռագրական համակարգերի ազգայնացումը՝ ապահովելու հիմնական ծառայությունների օգտագործումը ի շահ ժողովրդի, ինչպես նաև փոստային խնայբանկերի կիրառումը՝ արժույթը ֆերմերների համար հասանելի դարձնելու և ավանդատուներին պաշտպանելու ու վարկեր տրամադրելու համար: Այն կոչ էր անում ստեղծելու դաշնային պահեստների ցանց և ենթազանձապետարաններ (subtreasuries), որոնք պետական վարկեր կտրամադրեին ֆերմերներին, ովքեր պահում էին բերքը պահեստներում՝ սպասելով ավելի բարձր շուկայական գների: Պարտապաններին փրկելու համար այն առաջարկում էր խթանել գնաճային դրամավարկային քաղաքականությունը՝ արծաթը դրամայնացնելու միջոցով: Ըստ ծրագրի՝ պետք էր հաստատել սենատորների ուղիղ ընտրության կարգ գաղտնի ժողովրդական քվեարկության միջոցով, որը կապահովեր դաշնային կառավարության ծառայությունը ժողովրդի շահերին, այլ ոչ թե արմատացած կուսակցական շահերին, իսկ պրոգրեսիվ-աստիճանական եկամտահարկի սահմանումը կպաշտպաներ ամերիկացիներին արիստոկրատիայի հաստատումից:

1892 թվականի նախագահական ընտրություններում Ուիվերը ստացավ ավելի քան 1 միլիոն ժողովրդական և 22 ընտրիչների ձայներ, ինչն իսկապես ապշեցուցիչ ցուցանիշ էր նորաստեղծ կուսակցության համար: Եվ երբ 1893 թվականի Խուճապը (Panic of 1893) սկիզբ դրեց վատթարագույն տնտեսական ճգնաժամին, պոպուլիստական շարժումն էլ ավելի բարձր դիրքեր գրավեց: Պոպուլիստները հանդես էին գալիս խիստ քննադատությամբ և արդարացի վրդովմունքով՝ մեղադրելով գործարար ընտրախավերին և կոռումպացված կուսակցական քաղաքական գործիչներին ազահության և Ամերիկայի ընդլայնվող անհավասարությունը սրող ճգնաժամի պատճառ դառնալու մեջ: Պոպուլիստական պամֆլետները, ինչպիսիք էին Վ. Հ. Հարվիի «Մետաղադրամների ֆինանսական դպրոցը» (Coin's Financial School) և Հենրի Դ. Լլոյդի «Հարստությունն ընդդեմ հանրապետության» (Wealth Against Commonwealth), պատասխաններ էին

առաջարկում ժամանակաշրջանի բազմաթիվ խնդիրներին: Տնտեսական ճգնաժամի խորացումը զուգորդվում էր պոպուլիստների լայն կազմակերպվածությամբ:

1894 թ. ընտրություններում պոպուլիստներն ընտրեցին 6 սենատորների և 7 կոնգրեսականների: Երրորդ կուսակցությանն էր կարծես թե վիճակված նվաճելու ամերիկյան քաղաքականությունը: Սակայն շարժումը բախվեց էական խոչընդոտների, հատկապես Հարավում: Հարավային դեմոկրատները պոպուլիստական մարտահրավերին արձագանքեցին ընտրակեղծիքներով և ռասայական հռետորաբանությամբ. երկուսն էլ խիստ սահմանափակեցին պոպուլիստական ձեռքբերումները: 1890-ականների կեսերին, նույնիսկ այն ժամանակ, երբ պոպուլիզմը համազգային տարածում ստացավ, շարժումը սայթաքում էր: Կուսակցության հաճախ տարաբաժանված ղեկավարությունը դժվարանում էր առաջնորդել այն: Շարժումը մնում էր բարեփոխիչների բազմազան և թույլ կազմակերպված դաշինք՝ ուղղված միասնական քաղաքական գործողություններին: Օմահայի ծրագիրը արմատական փաստաթուղթ էր, և նահանգային կուսակցական որոշ առաջնորդներ ընտրողաբար ընդունեցին դրա բարեփոխումները: Այնուամենայնիվ, հաստատութենականացված երկու մեծ կուսակցությունները չափազանց ուժեղ էին, և հատկապես դեմոկրատները պատրաստ էին կլանելու պոպուլիստական գաղափարներից շատերը և բացելու ամերիկյան քաղաքականության նոր ժամանակաշրջանը:

Սոցիալիստները

Ամերիկացի սոցիալիստները շարունակեցին պոպուլիստների արմատական ավանդույթը՝ միավորելով ֆերմերներին և աշխատավորներին ամերիկյան տնտեսական կյանքը վերակարգավորելու երկարատև քաղաքական պայքարի շուրջ: Սոցիալիստները փաստարկում էին, որ հարստությունն ու իշխանությունը համախմբված են փոքրաթիվ անհատների ձեռքում, մենաշնորհներն ու տրեստները վերահսկում են տնտեսության չափազանց մեծ մասը, և որ սեփականատերերն ու ներդրողները հարստանում են, մինչդեռ աշխատավորները, ովքեր արտադրում էին այդ հարստությունը, չնայած արտադրողականության և ազգային հարստության մեծ աճին, դեռևս տառապում են ցածր վարձատրության, երկար աշխատաժամերի և անապահով աշխատանքային պայմաններում: Համաձայն *սոցիալիստական համագործակցային հանրապետության* (socialist cooperative commonwealth) տեսլականի՝ արտադրության միջոցները

պետք է վերածվեին հավաքական սեփականության՝ ապահովելով, որ բոլոր տղամարդիկ և կանայք ստանային արդար վարձատրություն իրենց աշխատանքի դիմաց:

Սոցիալիստական կուսակցության անդամակցությունը բաց էր բոլորի համար՝ անկախ ռասայից, սեռից, դասակարգից, էթնիկական պատկանելությունից և կրոնից: Նշանավոր ամերիկացիներից շատերը, ինչպիսիք էին Հելեն Քելլերը, Ափթոն Սինքլերը և Ջեք Լոնդոնը, դարձան սոցիալիստներ: Սոցիալիզմի կարմիր դրոշի ներքո նրանց միացան ամերիկացի աշխատավորների զանգվածները ողջ երկրից՝ գործարանների բանվորներ, հանքափորներ, երկաթուղայիններ, շինարարներ, վարձակալ և մանր ֆերմերներ: Շատերը միավորվեցին բանվորական առաջնորդ Ուիլյամ Դ. «Բիգ Բիլ» Հեյվուդի և այլ արմատականների հետ՝ 1905 թվականին ստեղծելով Աշխարհի արդյունաբերական աշխատավորներ կամ «Ուոբբլիներ» (Industrial Workers of the World (IWW) - “Wobblies”) արմատական միությունը:

1901 թվականին հիմնադրված Ամերիկայի սոցիալիստական կուսակցությունը (Socialist Party of America (SPA)) շարունակում էր ամերիկյան երրորդ կուսակցության քաղաքական ավանդույթը: Սոցիալիստ քաղաքապետեր ընտրվեցին 33 քաղաքներում և ավաններում՝ Բերքլիից (Կալիֆորնիա) մինչև Սքենեքտադի (Նյու Յորք): Երկու սոցիալիստներ՝ Վիկտոր Բերգերը Վիսկոնսինից և Մեյեր Լոնդոնը Նյու Յորքից, ընտրվեցին Կոնգրեսի անդամներ: Ընդհանուր առմամբ, ավելի քան հազար սոցիալիստ թեկնածուներ ընտրվեցին ամերիկյան տարբեր քաղաքական պաշտոններում: 1912 թվականի նախագահական ընտրություններում Յուջին Վ. Դեբսը Սոցիալիստական կուսակցության կողմից առաջադրվեց նախագահի թեկնածու՝ ստանալով շուրջ 1 միլիոն ձայն՝ ժողովրդական քվեի 6 տոկոսը:

Այնուամենայնիվ, հետագա տարիներին առաջադեմ բարեփոխիչների կողմից սոցիալիստական բազմաթիվ գաղափարների յուրացումը, ներքին գաղափարաբանական ու մարտավարական տարաձայնությունները, սոցիալիզմի և ամերիկյան արժեքների անհամատեղելիության վերաբերյալ ամերիկացիների մեծամասնության ընկալումները, և, մյուս կողմից, սոցիալիստների նկատմամբ իշխանությունների բռնաճնշումներն ու գրաքննությունը, հատկապես Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում և դրանից հետո, ի վերջո խորտակեցին կուսակցությունը:

Ուիլյամ Ջենինգս Բրայանը և ոսկու քաղաքականությունը

Ուիլյամ Ջենինգս Բրայանը (1860-1925 թթ.) իր քաղաքական գործունեության մեջ մեծ համբավ ձեռք բերեց ոսկու ստանդարտի քննադատության, ազատ արծաթի խթանման, ինչպես նաև շարքային ամերիկացիների շահերի պաշտպանության իր դիրքորոշումներով: Թեև Բրայանին չհաջողվեց հաղթել նախագահական ընտրություններում, նա ընդամիշտ փոխեց ամերիկյան քաղաքական պատմության ընթացքը: Իլինոյսից տեղափոխվելով Նեբրասկա՝ երիտասարդ Բրայանը նահանգային Դեմոկրատական կուսակցության առաջնորդների շրջանում արտասովոր հռետորի համբավ էր ձեռք բերել: Ավելի ուշ Բրայանը ճանաչվեց որպես ամերիկյան պատմության մեծագույն հռետորներից մեկը: 1880-ականների վերջերին Միջին Արևմուտքում (Midwest) տնտեսական ճգնաժամի ընթացքում, երբ շատերը համախմբվեցին պոպուլիստական շարժման շուրջը, Բրայանն աշխատում էր Դեմոկրատական կուսակցության ներսում՝ օգտագործելով իր ճարտասանական տաղանդը: Շուտով նա հաղթեց Ներկայացուցիչների պալատի ընտրություններում, որտեղ որպես կոնգրեսական պաշտոնավարեց երկու ժամկետ: Թեև նա չհաջողեց անցնել Սենատ, բայց ուշադրությունը կենտրոնացրեց ավելի բարձր՝ Միացյալ Նահանգների նախագահի պաշտոնի վրա: Նա հավատում էր, որ կարող է փոխել երկիրը՝ պաշտպանելով ֆերմերներին և քաղաքային աշխատավորներին խոշոր գործարարության կոռուպցիայից:

1895-1896 թվականներին Բրայանը մեկնարկեց համերկրյա ելույթների շրջագայությունը, որի ընթացքում նա սատարում էր արծաթե մետաղադրամների ազատ հատման գաղափարին: Նա կարծում էր, որ բիմետալիզմը (bimetallism), արժեզրկելով ամերիկյան արժույթը, կարող է մեղմել ֆերմերների պարտքային բեռը: Նրան հակառակ՝ հանրապետականները պաշտպանում էին ոսկու ստանդարտը և փողի կայուն առաջարկը: Ամերիկյան դրամավարկային ստանդարտները դարձան քարոզարշավի առաջնային խնդիր: 1896 թվականի հուլիսին գումարվեց Դեմոկրատական կուսակցության ազգային համագումարը՝ գալիք ընտրություններում նախագահի իրենց թեկնածուին ընտրելու համար: Կուսակցության ծրագիրը պնդում էր, որ ոսկու ստանդարտը «ոչ միայն ոչ ամերիկյան է, այլև հակաամերիկյան է»: Համագումարին Բրայանը ելույթ ունեցավ վերջինը: Նա ապշեցրեց իր ունկնդիրներին՝ առաջադրվելով նախագահի թեկնածու: Հանրապետականներն առաջադրեցին Ուիլյամ ՄակՔինլին, ով տնտեսական պահպանողական էր և պաշտպանում էր գործարար շա-

հերն ու ոսկու ստանդարտը: Ընտրությունները հսկայական ուշադրություն գրավեցին և մեծ հույզեր առաջացրին: Այնուամենայնիվ, Բրայանը չկարողացավ հաղթել ՄակՔինլիին: Գործարարության կողմնակից հանրապետականների քարոզարշավի ծախսերը հինգ անգամ գերազանցեցին Բրայանի քարոզարշավի ծախսերը:

1900 թվականի սկզբին Կոնգրեսն ընդունեց Ոսկու ստանդարտի օրենքը (Gold Standard Act), որը երկիրը դրեց ոսկու ստանդարտի վրա՝ փաստացիորեն վերջ տալով երկրի դրամավարկային քաղաքականության վերաբերյալ բանավեճին: 1900 թվականին Բրայանը կրկին մասնակցեց նախագահական ընտրապայքային, բայց կրկին պարտություն կրեց, ինչպես և նորից 1908 թվականին: Բրայանը ամերիկյան քաղաքական պատմության ամենաազդեցիկ պարտվողներից էր:

1896 թվականին Բրայանի կողմից հյուսիսարևելյան ֆինանսական շահերի բուռն դատապարտումը և «արծաթե ազատ և անսահմանափակ մետաղադրամների հատման» բուռն կոչերը գրավել էին նաև պոպուլիստներից շատերին: Պոպուլիստական էներգիան արմատական, բայց թույլ ժողովրդական կուսակցությունից տեղափոխվեց ավելի չափավոր, սակայն հզոր Դեմոկրատական կուսակցություն: Պոպուլիստական շարժման ընտրական փոքր ձեռքբերումները կարճատև էին և չկարողացան հաղթահարել արմատացած երկկուսակցական համակարգը, և պոպուլիստների երազած *համագործակցային հանրապետությունը* (cooperative commonwealth) երբեք չձևավորվեց: Այնուամենայնիվ, Պոպուլիստական կուսակցությունը, երկարատև ազդեցություն ունենալով, դարձավ ամերիկյան քաղաքական պատմության ամենանշանակալի երրորդ կուսակցություն-շարժումը: Պոպուլիստական տեսլականը գաղափարաբանական հիմքեր ստեղծեց գալիք առաջադիմական շարժման համար:

Ամփոփենք: Կապիտալի արշավը կերպափոխեց ամերիկյան կենսակերպի օրինաչափությունները: Արդյունաբերական կապիտալիզմը բերեց և՛ հարստություն, և՛ աղքատություն. այն ստեղծեց խոշոր սեփականատերերի ու ներդրողների խավ և ստեղծեց աշխատավորական դասակարգ: Գործարարությունն ընդլայնվեց իր ընդգրկումներով և ծավալով: Աշխատանքի կազմակերպման բնույթը փոխվեց: Միջին խավն ընդլայնվեց, իսկ հարստությունը կենտրոնացավ: Ներգաղթյալները կուտակվեցին քաղաքներում, որոնք աճում էին դեպի վեր և դեպի դուրս: Զիմ Քրոուի օրենքներով վերակազմյալ Հարավն ազատվեց Վերակառուցման մնացորդներից. Նոր Հարավն ընկերային կյանքի տեսույթներում նման էր նախկինին:

Արդյունաբերողները շահույթ էին հետապնդում, իսկ ավետարանականներն ապավինում էին մարդկային բարոյականությանը: Սպառողները կորսվել էին նոր ապրանքների և նոր տեխնոլոգիաների մեջ: Այսպիսով, XX դարի սկզբին Միացյալ Նահանգներն արմատապես փոխակերպվել էր: Եվ այս փոխակերպումները շարունակեցին ակիբվել դեպի Արևմուտք և արտասահման, իսկ ներքուստ առաջացրին արմատական բողոք և առաջադեմ բարեփոխումների պահանջ:

ԳԼՈՒԽ 13

Ամերիկյան կայսրությունը և իմպերիալիզմի դարաշրջանը

Կայսրություն բառի և հղացքի իմաստային ակունքները գալիս են անտիկ ժամանակներից՝ հաճախ կապված լինելով Հին Հռոմի կայսրության կատարելատիպի հետ, սակայն կայսրությունները կարող են տարբեր ձևեր ունենալ, իսկ կայսերական գործընթացները կարող են ընթանալ բազում համատեքստերում: XIX դարի վերջը համաշխարհային պատմության «իմպերիալիզմի» (կայսերականություն (imperialism), լատիներեն Imperium՝ հրամայել) դարաշրջանն էր, որը նշանավորվեց Արևմտյան քաղաքակրթության առաջատար տերությունների գաղութային կայսրությունների ստեղծմամբ, այլ երկրների ու ժողովուրդների վրա գերիշխանության հաստատմամբ և դրան հասնելու գաղափարաբանությամբ ու նպատակային քաղաքականությամբ:

Մեծ տերությունները կլանում էին երկրագնդի բոլոր ազատ տարածքները տնտեսական, քաղաքական և մշակութային գերիշխանության, ծավալապաշտական և ապագա պաշտպանական նկատառումներով՝ ամենը արդարացնելով քաղաքակրթական առաքելությամբ: Միացյալ Նահանգները Բրիտանական կայսրությունից անկախություն ձեռք բերելուց հարյուր տարի անց պետք է ստեղծեր իր կայսրության ուրույն կերպը:

Ամերիկյան քաղաքացիական պատերազմից հետո տասնամյակների ընթացքում Միացյալ Նահանգները ընդլայնեց իր քաղաքականությունը արշավախմբերից, առևտրից, մշակութային փոխանակումից և ամերիկյան սահմանից անդին, որպեսզի կիրառի մի բան, որը զարմանալիորեն նման էր կայսրության: Այսպիսով, ամերիկյան կայսերականության հարցը ոչ միայն ամերիկյան ուղղակի ներխուժման մեկնաբանությունն է այնպիսի վայրերում, ինչպիսիք էին Կուբան, Ֆիլիպինները, Հավայան կղզիները, Գուամը և Պուերտո Ռիկոն, այլև ներկայացնում է ամերիկյան ներգրավվածության ավելի խորը պատմությունն ավելի լայն աշխարհի հետ և հարաբերությունների հետագա ուղիներն ու հարացույցները, որոնք ձևավորվեցին ամերիկյան տնտեսական, քաղաքական և մշակութային գերիշխանության ու ազդակների ներքո՝ ներազդելով այլ երկրների ու ազգերի գործողությունների, ընտրանքների և հնարավորությունների վրա:

Հնդկացիական պատերազմները և բաշխման ժամանակաշրջանը. դաշնային քաղաքականությունը և դիմադրությունը բնիկ Արևմուտքում

Բնիկ ամերիկացիներն ապրել են Հյուսիսային Ամերիկայում ավելի քան տասը հազարամյակ: XIX դարի վերջին, ըստ որոշ տվյալների, շուրջ 250,000 բնիկ ամերիկացիներ էին դեռ բնակվում Ամերիկայի Արևմուտքում: Սակայն ամերիկացի վերաբնակիչների, զինվորականների և կապիտալի անկասելի հաղթարշավի արդյունքում ամբողջ Արևմուտքը նվաճվեց: Պարբերաբար խախտելով իր իսկ կնքած պայմանագրերը՝ Միացյալ Նահանգները բնիկ ամերիկացիների խմբերին հեռացրեց անընդհատ փոքրացող արգելավայրերից և ներառեց Արևմուտքը նախ որպես տարածքներ, ապա որպես նահանգներ՝ լիակատար վերահսկողություն հաստատելով երկու օվկիանոսների միջև ընկած հսկա ցամաքի նկատմամբ:

Արևմտյան ամերիկյան բանահյուսության մեջ այդքան առասպելականացված «Հնդկացիական պատերազմները» (“Indian wars”) թվացյալ պատահական, տեղայնացված և հաճախ կարճ բախումների շարք էին ԱՄՆ զինված ուժերի և բնիկ ամերիկացիների տարբեր խմբերի միջև: Ավելի երկարատև և ազդեցիկ էին տնտեսական ու մշակութային հակամարտությունները: Թոմաս Ջեֆերսոնի վաղեմի երազանքը, որ բնիկ ազգերը կարող էին մեկուսացված ապրել Արևմուտքում, ամերիկյան ծավալման պայմաններում այլևս կենսունակ իրականություն չէր: Քաղաքական, տնտեսական և նույնիսկ հումանիտար մտահոգությունները ավելի խթանեցին հնդկացիներին արգելոցներում մեկուսացնելու ամերիկյան ջանքերը: Քաղաքացիական պատերազմից հետո ԱՄՆ կառավարությունը կրկնապատկեց իր այս ջանքերը: Բնիկ ամերիկացիները պայքարում էին ազատագրկման սպառնալիքի և ավանդական կենսակերպի վերացման դեմ՝ պաշտպանվելով ամերիկյան բանակի և վերաբնակիչների ոտնձգություններից:

Արևմուտքում ամենավաղ բախումներից էր 1862 թվականին բռնկված հակամարտությունը Դակոտա ազգի (Dakota Nation) և Մինեսոտայի ու Դակոտայի սպիտակ վերաբնակիչների միջև: Վերաբնակիչների կողմից հողի յուրացումը կրճատում էր բնիկ ժողովուրդների կենսատարածքը և սահմանափակում նրանց որսի հնարավորությունները՝ շատերին մատնելով սովի: Դակոտա ազգի ներկայացուցիչները զինված պայքար սկսեցին: Ի վերջո, ամերիկացիները սեպտեմբերի 23-ին կոտրեցին հնդկացիների դիմադրությունը Վուդ լճի ճակատամարտում՝ վերջ տալով այսպես կոչ-

ված Դակոտայի պատերազմին: Մարտերի ընթացքում Դակոտա ցեղի ավելի քան 2000 ներկայացուցիչներ գերի ընկան: Նրանցից շատերը դատապարտվեցին ազատագրկման կամ կախաղանի:

Մինեսոտայի վերաբնակիչները և նահանգային պաշտոնյաները պնդում էին, որ Դակոտա ազգը պետք է զիջեր իր արգելոցային հողերի մեծ մասը և տեղափոխվեր ավելի արևմուտք: Ավելին, որոշվեց որսալ անհնազանդներին և նրանց տեղավորել արգելոցներում: 1863 թ. սեպտեմբերի 3-ին, մեկ տարի տևած հետապնդումից հետո, ամերիկյան զորքերը շրջապատեցին Դակոտայի մեծ ճամբարը: Սպանեցին մոտ երեք հարյուր տղամարդկանց, կանանց և երեխաների, շատերին էլ գերեվարեցին: Հաջորդ երկու օրերին ամերիկյան զորքերը այրում էին ձմեռային պաշարները և սննդամթերքի պահուստները, որպեսզի սովի մատնեն Դակոտայի դիմադրությունը, որը շարունակում էր պնդել Դակոտայի ինքնիշխանությունը և ԱՄՆ-ի հետ կնքված պայմանագրային իրավունքները:

Բնիկ ամերիկացիների համար իրավիճակը նույնական էր նաև Կոլորադոյում: 1851 թ. Ֆորտ Լարամիի առաջին պայմանագիրն (Treaty of Fort Laramie) ամերիկացիների համար ապահովում էր անխափան ճանապարհի դեպի Կալիֆորնիա և Օրեգոն: Բայց 1858 թվականին ոսկու տենդը մոտ 100,000 ոսկի որոնողների բերեց այս տարածքներ, որոնք պահանջեցին նոր պայմանագրեր կնքել տեղական հնդկացիական խմբերի հետ՝ նորաստեղծ Կոլորադոյի տարածքում հողի իրավունքներն ապահովելու համար: Տարածքի հնդկացիական ցեղախմբերը բաժանվեցին հնարավոր նոր պայմանագրի հարցերի պատճառով, որը նրանց կսահմանափակեր արգելոցում: Վերաբնակիչները զգուշանում էին նաև Չեյեն, Արապահոս և Կոմանչի հզոր ցեղախմբերի արշավանքներից: 1864 թվականի ամռանը Կոլորադոյի աշխարհագրայինների հրամանատար Ջոն Մ. Չիլինգթոնը հորդորեց պատերազմ սկսել՝ խոստանալով արագ ռազմական հաղթանակ: Թեև չեյենները հայտարարեցին իրենց խաղաղ մտադրությունների մասին, այդուհանդերձ ամերիկացի աշխարհագրայինները իսկական կոտորած սարքեցին: 1868 թվականին Կոնգրեսը նախաձեռնեց Հնդկացիական խաղաղության հանձնաժողովի (Indian Peace Commission) ստեղծումը, որը ուսումնասիրության արդյունքում դատապարտեց Ամերիկայի հնդկացիների հանդեպ նախկին քաղաքականությունը և խթանեց բարեփոխիչներին ցուցաբերվող աջակցությունը:

1869 թվականի գարնանը նախագահ Ուլիսես Ս. Գրանտի երդմանակալությունից հետո Կոնգրեսը դաշնակցեց նշանավոր բարերարների հետ՝ ստեղծելով Հնդկացիական հանձնակատարների խորհուրդ (Board

of Indian Commissioners) մշտական խորհրդատվական մարմինը՝ հնդկացիական հարցերը վերահսկելու և բռնության հետագա բռնկումը կանխելու նպատակով: Արգելոցների համակարգի մեծ մասը հանձնվեց բողոքական եկեղեցիների խնամակալությանը, որոնց հանձնարարվեց գործակալներ և միսիոներներ գտնել՝ ռեզերվացիոն կյանքը կառավարելու համար: Կոնգրեսը հույս ուներ, որ կրոնական մտածողությամբ մարդիկ կարող էին ավելի արդյունավետ գործել՝ ստեղծելով արդարացի ճուլման քաղաքականություններ և համոզելով հնդկացիներին ընդունել դրանք: Միսիոներները փորձում էին փոխարինել հնդկացիների ցեղային ընկերային միավորները փոքր, նահապետական տնային տնտեսություններով:

Այնուամենայնիվ, համոզումի քաղաքականությանը զուգահեռ՝ շարունակվում էին հարկադրանքի և բռնության քաղաքականությունները, ինչին շարունակում էին դիմադրել բնիկ ամերիկացիների խմբերը: Տեխասում և Հարավային հարթավայրերում Կոմանչի, Կիովա ցեղերը և նրանց դաշնակիցները հսկայական ազդեցություն ունեին, որը տարածվում էր Ժայռոտ լեռներից (Rocky Mountains) մինչև Մեքսիկայի հյուսիսային տարածքները և մինչև Տեխասի ծոցի ափերը: Սակայն Քաղաքացիական պատերազմից հետո ԱՄՆ զինված ուժերը կրկին կենտրոնացրին իրենց ուշադրությունը Հարավային հարթավայրերում՝ քայլ առ քայլ լիակատար վերահսկողություն հաստատելով տարածաշրջանի վրա: Ի վերջո, շարունակվող առճակատման արդյունքում ԱՄՆ զինվորականները հայտարարեցին, որ բոլոր հնդկացիները, ովքեր մինչև 1874 թվականի աշնանը տեղավորված չէին արգելոցում, կհամարվեին «թշնամի»: Կոմանչի ցեղի շատ խմբեր հրաժարվեցին վերաբնակվելուց, և ամերիկյան զորքերը նրանց հնագանդեցնելու գործողությունների դիմեցին, ինչն ավարտվեց Տեխասի ձորերում մնացած խմբերի պարտությամբ:

Հյուսիսային հարթավայրերում Սիու ժողովուրդը դեռ պայքարում էր: 1862 թ. ռազմական պարտություններից հետո շատ խմբեր ստորագրել էին պայմանագրեր Միացյալ Նահանգների հետ և տեղափոխվել Կարմիր ամպ (Red Cloud) և Բծավոր պոչ (Spotted Tail) գործակալություններ, բայց շատերը շարունակում էին դիմակայել ամերիկյան ոտնձգությանը: Կարմիր ամպի պատերազմը հազվագյուտ հաղթանակ էր Հյուսիսային հարթավայրերի բնիկ ժողովրդի համար, որը հանգեցրեց 1868 թ. պայմանագրին և Մեծ Սիու արգելավայրի (Great Sioux Reservation) ստեղծմանը: Այնուհետև 1874 թվականին ամերիկյան արշավախումբը Հարավային Դակոտայի Սև բլուրներ (Բլեք Հիլզ (Black Hills)) վայրում հայտնաբերեց ոսկի: Սպիտակ ամերիկացիները հեղեղեցին տարածքը: Գիտակցելով,

որ ԱՄՆ քաղաքացիները խախտում էին պայմանագրի դրույթները, բայց չցանկանալով արգելել ոսկու որոնումները՝ դաշնային իշխանությունները ճնշում գործադրեցին արևմտյան Սիու ժողովրդի վրա՝ նոր պայմանագիր ստորագրելու համար, որը կփոխանցեր Սև բլուրների վերահսկողությունը Միացյալ Նահանգներին: Միաժամանակ գեներալ Ֆիլիպ Շերիդանը լուռ տեղափոխում էր ամերիկյան զորքերը դեպի տարածաշրջան: ԱՄՆ զորքերի և Սիու մարտիկների միջև սկզբնական բախումները հանգեցրին Սիուների մի քանի հաղթանակների, որոնք, զուգորդված նրանց առաջնորդ Նստած Ցուլի (Sitting Bull) ավելի մեծ հաղթանակի մասին պատրանքների հետ, իրենց շուրջը համախմբեցին նաև Սիու այլ խմբերի, ովքեր արդեն իսկ ստորագրել էին պայմանագրեր, սակայն միացան դիմադրության պայքարին:

1876 թվականի հունիսի վերջին փոխգնդապետ Ջորջ Արմսթրոնգ Քասթերի գլխավորած հեծելազորային առաջապահ զորախումբն ուղարկվեց դեպի Բլեք Հիլզ, որը գլխավին ջախջախվեց. Քասթերը և իր 268 զինվորները զոհվեցին: Այս դեպքը ցնցեց ամերիկյան հասարակությունը: ԱՄՆ-ն նոր ուղղված արշավախմբեր ուղարկեց՝ ջախջախելու բնիկների դիմադրությունը: Անհավասար և հյուծիչ պայքարը շարունակվեց մինչև 1881 թվականի հուլիս, երբ Նստած Ցուլը և նրա հետևորդները վերջապես վայր դրեցին գեները և հաստատվեցին արգելոցում: Ի վերջո, 1890 թվականի դեկտեմբերին առաջնորդ Նստած Ցուլը և մի քանի այլ առաջնորդներ սպանվեցին ձերբակալության փորձի ժամանակ:

Արևմուտքում ամերիկյան ծավալապաշտության հետևանքով տուժեցին ոչ միայն Հարթավայրերի ժողովուրդները: 1850-1860-ական թվականներին Ժայռոտ լեռների շրջանից դուրս մղվեցին Յուտ (Ute) և Պայուտ (Paiute) ցեղախմբերը՝ Յուտայի տարածքում աճող մորմոնների բնակչության պատճառով: Ատերեսվելով իրենց փոքրացող տարածքների խնդրին՝ այս երկու ցեղախմբերի անդամները հաճախ միանում էին ԱՄՆ-ի բանակի արշավանքներին դեպի հարավ-արևմուտք՝ այլ հզոր բնիկ ցեղախմբերի դեմ: Այդպիսի հզոր բնիկ ցեղախմբերից էին Հոփին (Hopi), Ջունին (Zuni), Ջիկարիլա Ապաչը (Jicarilla Apache) և հատկապես Նավախոն (Navajo), որոնք նստակյաց էին և զբաղվում էին հողագործությամբ ու անասնապահությամբ Մեքսիկական պատերազմից հետո ԱՄՆ-ին անցած տարածքներում:

1850-ական թվականներին ԱՄՆ զորքերի, ամերիկացի վերաբնակիչների և բնիկ ազգերի միջև հակամարտությունները սրվեցին: 1862 թվականին գեներալ Ջեյմս Քարլթոնը սկսեց փնտրել արգելոց, ուր կա-

րող էր հեռացնել նավախոններին և վերջ տալ հարավ-արևմուտքում ԱՄՆ ընդլայնման դեմ նրանց դիմադրությանը: Քարլթոնն ընտրեց չոր, գրեթե ծառազուրկ տեղանք Բոսք Ռեդոնդոյի հովտում (Bosque Redondo Valley)՝ Նավախոյի հայրենիքից 300 մղոն հեռավորության վրա: 1863 թվականի ապրիլին Քարլթոնը հրամայեց ժողովել Նավախոյի ամբողջ բնակչությանը և ուղեկցել նրանց մինչև Բոսք Ռեդոնդոն: Դիմադրողները գնդակահարվելու էին: Այսպիսով, սկսվեց Նավախոյի պատմության մի շրջան, որը կոչվում էր Երկար երթ (Long Walk), և որն ընդգրկեց մի շարք հարկադիր երթեր դեպի Բոսք Ռեդոնդո արգելոցը 1863 թ. օգոստոսից մինչև 1866 թ. դեկտեմբերը: Արգելոցի պայմանները սարսափելի էին: ԱՄՆ բանակի տրամադրած պարենը ոչ միայն բավարար չէր, այլև հաճախ փչացած էր. հիվանդություններից և անտանելի պայմաններից հազարավոր նավախոններ մահացան: 1868 թվականին արդեն պարզ էր դարձել, որ արգելոցում կյանքն անհնար է: Գեներալ Ուիլյամ Թեքումսե Շերմանը այցելեց արգելավայր և խորհուրդ տվեց նավախոններին վերադարձնել Արևմուտքում գտնվող իրենց հայրենիք: 1868 թվականի հունիսի 1-ին Նավախո ազգը ԱՄՆ-ի հետ ստորագրեց Բոսք Ռեդոնդոյի պայմանագիրը (Treaty of Bosque Redondo), որն աննախադեպ պայմանագիր էր ԱՄՆ-հնդկացիական հարաբերությունների պատմության մեջ, որով նավախոնները կարողացան վերադառնալ իրենց հայրենիք:

Կալիֆորնիայում և Խաղաղ օվկիանոսի հյուսիսարևմտյան շրջանների բնիկ ժողովուրդները նույնպես ենթարկվեցին բռնության, կոտորածների, տարածքների կորստի և բռնի տեղահանության դեպի արգելավայրեր: 1850-ական թվականներին Կալիֆորնիայի բազմաթիվ բնիկ ազգերի հետ կնքված պայմանագրերը երբեք չվավերացվեցին Սենատի կողմից: Ավելի քան հարյուր տարբեր բնիկ ցեղախմբեր էին ապրում Կալիֆորնիայում մինչև իսպանական և ամերիկյան նվաճումները, սակայն Կալիֆորնիայի բնիկ բնակչությունը, որը ոսկու տենդի նախօրեին մոտ 150,000 էր, 1880 թվականին նվազել էր մինչև 20,000-ի: Ի վերջո, մի քանի արգելոցային տարածքներ ստեղծվեցին ԱՄՆ կառավարության կողմից՝ հավաքելու այն, ինչ մնացել էր բնիկ բնակչությունից, բայց մեծ մասը ցրվեց ամբողջ Կալիֆորնիայում: Սա մասամբ արդյունք էր 1850-ականների նահանգային օրենքների, որոնք թույլ էին տալիս սպիտակամորթ կալիֆորնիացիներին վերցնել բնիկ երեխաներին ու մեծահասակներին որպես «աշակերտ» (“apprentice”) բանվորներ՝ պարզապես ցանկալի բանվորներին բերելով դատավորի առջև և խոստանալով կերակրել, հագցնել և, ի վերջո, ազատ արձակել նրանց որոշակի ժամանակահատված «ծառայությունից» հետո,

որը տատանվում էր 10-20 տարվա միջակայքում: Այսպիսով, Կալիֆորնիայի հազարավոր բնիկները ճնշվեցին փաստացի ստրկական աշխատանքի միջոցով:

Երկաթուղիների դեպի Արևմուտք շարժին զուգընթաց՝ ավելացավ ամերիկացի վերաբնակիչների հոսքը: Բնիկ ցեղախմբերի իրավիճակն էլ ավելի վատթարացավ: Միացյալ Նահանգների և բնիկ ցեղախմբերի միջև բանակցված պայմանագրերը սովորաբար խոստանում էին, որ եթե ցեղերը համաձայնեին տեղափոխվել հատուկ արգելոցային տարածքներ, նրանք կպահպանեին այդ հողերը: Սակայն Արևմուտքում ամերիկացի վերաբնակիչների աճը կրկին փոխեց իրավիճակը. սպիտակամորթ վերաբնակիչները սկսեցին պնդել, որ բնիկ ժողովուրդներն ունեն ավելին, քան իրենց արդար բաժինը, որ բնիկներին վերապահված արգելոցները չափազանց մեծ են, և որ բնիկները «անարդյունավետ» են օգտագործում հողը՝ նախընտրելով քոչվորական որսը ինտենսիվ հողագործության և անասնապահության փոխարեն:

1887 թվականի փետրվարի 8-ին Կոնգրեսն ընդունեց Դուուսի ընդհանուր հատկացման օրենքը (Dawes General Allotment Act), որը ամերիկյան ոճի գյուղատնտեսությունը խրախուսելու համար բաժանեց բնիկ ամերիկացիների արգելոցները առանձին ընտանեկան տնային տնտեսությունների՝ հող հատկացնելով առանձին բնիկ ամերիկացիների, այլ ոչ թե ցեղերին: Յուրաքանչյուր բնիկ ընտանիքի պետք է հատկացվեր 160 ակր հողաբաժին, ինչը համահավասար էր Հոմստեդ ակտի դրույթներին: Տասնութ տարեկանից բարձր միայնակ անհատները կստանային 80 ակր հատկացում, իսկ որբ երեխաները՝ 40 ակր: Այն հողատարածքները, որոնք ազատ կմնային սահմանված չափի հողահատկացումներից հետո, կվերադառնային դաշնային վերահսկողության տիրույթ և կվաճառվեին ամերիկացի վերաբնակիչներին: Ամերիկացիները Դուուսի օրենքը հռչակեցին իբրև հումանիտար բարեփոխում, սակայն այն իրականում փոխեց բնիկների կենսակերպը և բնիկ ազգերին զրկեց իրենց հողերի վրա ինքնիշխանության իրավունքից: Ցեղային կառավարությունները և իրավական սկզբունքները կարող էին փոխարինվել կամ լուծարվել և փոխարինվել ԱՄՆ օրենքներով: Դուուսի օրենքի պայմաններում բնիկ ազգերը պայքարում էին ցեղային ինքնիշխանության որոշ մասի պահպանման համար:



“SITTING BULL”

(Ta-Ton-ka-I-yo-ton-ka,)

The Sioux chief in command at the Custer Massacre.

ZIMMERMAN BROS., Publishers.

Photographed by O. S. GOFF.

Copyright applied for.

Բնիկ ամերիկացի առաջնորդ Նստած Ցուլը (1831-1890 թթ.)

Արևմուտքի յուրացումը. տնտեսությունը և երկաթուղիները

Արևմուտքի յուրացումը հիմնականում սկսվել էր XIX դարի կեսերին: Ամերիկացի առաջին միգրանտներից շատերը գալիս էին ոսկու և արծաթի տենդի ժամանակ՝ արագ շահույթ գտնելու նպատակով: Այսպես, ամերիկացի վերաբնակիչները հաստատվում էին թանկարժեք մետաղների արդյունահանման համար նախ՝ 1848-1849 թվականներին Կալիֆորնիայում, Կոլորադոյում, Նևադայում, այնուհետև՝ 1860 թվականին Այդահոյում, 1863 թվականին՝ Մոնտանայում և 1874 թվականին՝ Բլեք Հիլզում: Նրանց զգալի մասը միայնակ տղամարդիկ էին, առանց ընտանիքների, որոնք կախված էին մոտակա քաղաքների և ավանների սպասարկման ոլորտներից: Այնտեղ կանայք աշխատում էին խանութներում, սրահներում, պանսիոնատներում և հասարակաց տներում:

Շատերն էլ հաստատվեցին Մեծ հարթավայրերում բիզնեսների որսի համար, որոնց կոշտ կաշին Արևելքի հագուստի արդյունաբերության գործարանների համար արժեքավոր հումք էր: Երեսնամյակի ընթացքում ամերիկյան բիզնեսների թիվը ավելի քան 10 միլիոնից 1880-ականների սկզբին նվազեց մինչև ընդամենը մի քանի հարյուրի: Երկաթուղիների ընդլայնումը թույլ տվեց բիզնեսների արդեն անհնար որսը փոխարինել անասնապահությամբ. հսկայական խոտածածկ տարածքները խոշոր եղջերավոր անասունների մեծ նախիրների համար հիանալի արոտավայրեր էին: XIX դարի կեսերին մեծ էր մորմոնների հոսքը դեպի Արևմուտք, սկզբում դեպի Իլինոյս, ապա՝ Միսսուրի և Նեբրասկա, ու վերջապես՝ Յուտայի տարածք: Արևմուտքում մորմոնների բնակավայրերը ծառայում էին որպես մատակարարման կարևոր կետեր այլ վերաբնակիչների համար, որոնք մեկնում էին Կալիֆորնիա և Օրեգոն:

Այնուամենայնիվ, հատկապես Քաղաքացիական պատերազմից հետո, վերաբնակիչներին դեպի Արևմուտք ամենաշատը ձգում էր հողը: Ընտանեկան ֆերմաները տարածաշրջանի գյուղատնտեսական զարգացման հիմքն էին: 1862 թվականին Կոնգրեսն ընդունեց Հոմստեդ ակտը՝ հողաբաժինների մասին օրենքը, որը թույլ էր տալիս արական սեռի քաղաքացիներին (կամ նրանց, ովքեր հայտարարել էին քաղաքացի դառնալու իրենց մտադրության մասին) ստանալ հողակտոր Արևմուտքում դաշնային սեփականություն հանդիսացող հողերից: Վերաբնակիչները կարող էին գնալ դեպի Արևմուտք, ընտրել 160 ակր (65 հա) հողատարածք, հայց ներկայացնել և սկսել հողը «բարելավել»՝ հերկելով դաշտերը, տներ և գոմեր կառուցելով կամ ջրհորներ փորելով, և հողի վրա հինգ

տարի ապրելուց հետո, կարող էին դիմել հողամասի պաշտոնական սեփականության վկայական ստանալու համար: Հարյուրհազարավոր ամերիկացիներ օգտագործեցին Հոմստեդ ակտը հող ձեռք բերելու համար: Ծառագուրկ հարթավայրերը, որոնք համարվում էին ոչ պիտանի բնակության համար, դարձան գյուղատնտեսական զարգացման նոր միջավայր:

Հոմստեդ ակտից մեծապես օգտվեցին նաև ներգաղթյալները: Մասնավորապես, 1860-ականներին Սկանդինավիայից ներգաղթյալները հիմնեցին ֆերմերային համայնքներ Մինեսոտայում, Դակոտայում և Միջինարևմտյան այլ տարածքներում (Midwestern territories): Իր դերը կատարեց նաև գրավիչ գովազդը, որը կիսաչոր հարթավայրերը ներկայացնում էր որպես ջրառատ, պտղաբեր և ծաղկուն մարգագետիններ: Արդյունքում արևմտյան տարածքների բնակչությունը բազմապատկվեց, և հարթավայրերը վերափոխվեցին: Եթե 1860 թվականին Կանզասն ուներ մոտ 10,000 ֆերմերային տնտեսություններ, ապա 1880 թվականին՝ 239,000: Բնակչության աճը հսկայական էր հատկապես Տեխասում: Եթե 1850 թվականին Տեխասում հաշվում էր մոտ 200,000 մարդ, ապա 1880 թվականին՝ 1,6 միլիոն, իսկ 1900 թվականին՝ 3 միլիոն՝ այն դարձնելով բնակչության թվով ԱՄՆ-ի 6-րդ նահանգը:

Բացի գյուղատնտեսությունից և բնական ռեսուրսների արդյունահանումից, ինչպիսիք էին փայտանյութը և թանկարժեք մետաղները, արևմտյան նոր տնտեսությունը խթանեցին երկու հիմնական ճյուղեր՝ երկրագործությունը և երկաթուղին: Երկուսն էլ զարգացան փոխկապակցված՝ արագացնելով վերաբնակիչների ներխուժումն ու բնիկ ժողովուրդների տեղահանումը և ձևավորելով հետքադաքացիական պատերազմյան շրջանի «Վայրի Արևմուտքի» (“Wild West”) ամերիկյան հավաքական հիշողությունը:

Տնտեսական որևէ ձեռնարկություն չէր կարող մրցակցել երկաթուղու հետ իր ծավալներով կամ բացարձակ ազդեցությամբ. ոչ մի այլ ձեռնարկություն չէր ներգրավել նման հսկայաճավալ կապիտալ և պետական սուբսիդիաներ: Հաղթահարելով ժամանակն ու տարածությունը և կապակցելով մայրցամաքի ընդարձակությունը՝ երկաթուղիները վերափոխեցին Միացյալ Նահանգները և կերտեցին ամերիկյան Արևմուտքը: Երկաթուղային ձեռնարկություններից խոշորագույնը անդրմայրցամաքային երկաթուղու (transcontinental railroad) շինարարությունն էր: Անդրմայրցամաքային երկաթուղին անցնում էր արևմտյան հարթավայրերով և լեռներով՝ կապելով արևմտյան ափը արևելյան Միացյալ Նահանգների երկաթուղային ցանցերի հետ:

Արևմուտքից կառուցվելով «Սենթրալ Փասիֆիք» (Central Pacific) և արևելքից «Յունիոն Փասիֆիք» (Union Pacific) երկաթուղային ընկերությունների կողմից՝ 1869 թվականին անդրմայրցամաքային երկաթուղու երկու ճանապարհները հանգուցվեցին Յուտա նահանգում: Երկաթուղային ընկերությունները հսկայական դաշնային սուբսիդիաներ և դրամաշնորհներ էին ստանում: Միայն 1850-1871 թթ. երկաթուղային ընկերությունները ստացել էին ավելի քան 175 միլիոն ակր հողատարածք հանրային ֆոնդից, որն ավելի մեծ էր, քան Տեխաս նահանգի տարածքը: Ներդրողները հսկայական շահույթներ էին ստանում: Երկաթուղիների կառուցումը նաև նաև աշխատուժի հսկայական պահանջարկ էր ստեղծում: Մինչև 1880 թվականը մոտավորապես 400,000 մարդ, կամ երկրի ամբողջ աշխատուժի գրեթե 2,5 տոկոսը զբաղված էր երկաթուղային արդյունաբերության մեջ: Աշխատանքի մեծ մասը վտանգավոր և ցածր վարձատրվող էր, և ընկերությունները մեծապես ապավինում էին ներգաղթյալների աշխատուժին: Երկաթուղային ձեռնարկություններում աշխատում էին մեծամասամբ իռլանդացի և չինացի բանվորներ: 1880 թվականի դրությամբ ավելի քան 200,000 չինացի միգրանտներ էին ապրում Միացյալ Նահանգներում:

Երկաթուղային ցանցը տարածվեց ողջ Միացյալ Նահանգներում: Եթե 1850 թվականին ԱՄՆ-ի երկաթուղային ցանցի երկարությունը 9000 մղոն էր, ապա արդեն 1900 թվականին 190,000 մղոն՝ ներառելով մի քանի անդրմայրցամաքային գծեր: Բեռնափոխադրումների և ուղևորատար գծերի այս հսկայական ցանցերը կառավարելու համար ընկերությունները միավորեցին ռելսերը հանգուցային քաղաքներում: XIX դարի վերջին միջին արևմտյան և արևմտյան բոլոր քաղաքներից, որոնք ծաղկել էին արևմտյան ռեսուրսների և արևելյան կապիտալի կամրջումից, Չիկագոն ամենավառ օրինակն էր. 1833 թվականին այն ուներ 200 բնակիչ, իսկ 1890 թվականին՝ ավելի քան 1 միլիոն: 1893 թվականին Համաշխարհային Կոլումբոսյան ցուցահանդեսն (World's Columbian Exposition) ազդարարեց քաղաքի և ընդհանուր ամերիկյան տեխնոլոգիական առաջընթացը՝ «Ոսկեգոծ ժամանակաշրջանին» բնորոշ ցուցադրությամբ: Նորդասական ոճով կառուցված Չիկագոն դարձավ ամերիկյան Արևմուտքի և Արևելքի ամենակարևոր հանգույցը՝ կապելով ապրանքներն ու մարդկանց նոր մայրցամաքային ցանցում:

Հիմնական երկաթուղային կայարաններ կային նաև Կանզասում, Միսսուրիում և Նեբրասկայում: Այդուհանդերձ, երկաթուղային կայարաններին հասնելը Մեծ հարթավայրերի հսկայաձավալ տարածքներում

մեկ այլ մարտահրավեր էր անասնապահների համար, որոնք պետք է, օրինակ, Տեխասից իրենց անասունները հասցնեին կայարաններ՝ Չիկագոյի սպանդանոցներ փոխադրելու համար: Խոշոր եղջերավոր անասուններին քշելը բարդ խնդիր էր, որն իրականացնում էին կովբոյները (cowboy)՝ հեծյալ հովիվները: Ըստ տարբեր գնահատականների՝ XIX դարի վերջին կովբոյների թիվը տասներկու հազարից մինչև քառասուն հազար էր: Նրանց զգալի մասը աֆրոամերիկացիներ և մեքսիկացի ամերիկացիներ էին: Ամերիկյան կովբոյները որդեգրել էին մեքսիկական գործելաոճ, հանդերձանք և եզրույթներ՝ ռոդեո (rodeo), բրոնկո (bronco) և լասո (lasso): Շատ կովբոյներ հույս ունեին, որ մի օր իրենք կդառնան ռանչոյի տերեր, բայց աշխատանքը վտանգավոր էր, իսկ աշխատավարձը՝ ցածր: Ի վերջո, երբ 1880-ական թվականներին, երկաթուղային գծերը մղվեցին դեպի Տեխաս, անասնահոտերի մեծ տեղաշարժերը դադարեցին: Հարթավայրերը ազգային շուկաների հետ կապելով և արագացնելով մարդկանց ու ապրանքների տեղափոխումը՝ երկաթուղիները կերտեցին ժամանակակից ամերիկյան Արևմուտքը:

Արևմուտքն իբրև պատմություն. Թրների տեսությունը

1893 թվականին Ամերիկյան պատմագիտական ասոցիացիան (American Historical Association) համագումար հրավիրեց Չիկագոյում այդ տարվա Համաշխարհային Կոլումբոսյան ցուցահանդեսի ընթացքում: Վիսկոնսինից երիտասարդ պատմաբան Ֆրեդերիկ Ջեքսոն Թրները ներկայացրեց իր «Սահմանի նշանակությունը ամերիկյան պատմության մեջ» (“The Significance of the Frontier in American History”) հոդվածը, որում զարգացնում էր «սահմանային թեզիսը» (“frontier thesis”). այն պետք է դառնար ամերիկյան պատմության ամենաազդեցիկ տեսություններից մեկը:

Թրները, անդրադարձ կատարելով Արևմուտքում տեղի ունեցած պատմական փոփոխություններին, պատերազմի, տեղահանությունների, բռնության, կողոպուտի և արդյունաբերության փոթորկի փոխարեն նկատեց «քաղաքակրթության» ալիքներ, որոնք ողողում էին մայրցամաքը: Ըստ նրա՝ «վայրենության և քաղաքակրթության միջև» սահմանագիծը Մասաչուսեթսի և Վիրջինիայի անգլիական ամենավաղ բնակավայրերից դեպի արևմուտք էր շարժվել Ապալաչների միջով մինչև Միսիսիպի և, վերջապես՝ հարթավայրերով մինչև Կալիֆորնիա և Օրեգոն: Ամերիկացիները, Թրների խոսքերով, հարկադրված էին սահմանից անդին

կառուցել և մշակել կոպտատաշ քաղաքակրթություն: Ամերիկյան սահմանն այլևս ողողվում էր Խաղաղ օվկիանոսի ջրերով: Այլևս չկար հյուսիս-հարավ ձգվող մի տեսանելի գիծ, որը, ըստ Թրների, կբաժաներ քաղաքակրթությունը վայրենությունից: Թրներն անհանգստացած էր Միացյալ Նահանգների ապագայով. ինչ կդառնար ազգը առանց սահմանային անվտանգության փեղկի:

Սակայն Արևմուտքի պատմությունը կերտել էին բազմաթիվ մարդիկ և ժողովուրդներ: Ուստի Թրների թեզը լի էր թերություններով և շարադրված էր սպիտակամորթ բողոքական, անգլո-սաքսոնական ազգայնականության և «քաղաքակրթության» պատումի համատեքստում: Այդուհանդերձ, Թրների տեսությունը մեծ ազդեցություն ուներ պատմաբանների շրջանում XX դարի գերակշիռ հատվածում և, որ առավել կարևոր է, նպաստեց ամերիկացիների երևակայության մեջ Արևմուտքի հարատև վիպականացմանը և երկար ու բարդ պատմության պարզեցմանը՝ առաջադիմության շարժմանն ընդառաջ:



«Ամերիկյան առաջընթաց» (American Progress, 1872թ.). Ջոն Գաստի այս նկարը ամերիկյան Արևմուտքի արդիականացման այլաբանական ներկայացումն է: Կոլումբիան՝ Միացյալ Նահանգների կանացի անձնավորումը, քաղաքակրթությունը տանում է դեպի Արևմուտք՝ առաջնորդելով ամերիկացի վերաբնակիչներին. յուրացնում է, լույս է բերում Արևելքից Արևմուտք, կրթություն (ձեռքում գիրք), արդի տեխնոլոգիաներ, երկաթուղի, կապում է հեռագրային մեքենալարեր, և բնիկ ամերիկացիներին ու բիզոններին մղում է անհայտություն (ներկայացված են փնտեսական գործունեության փարբեր փուլերը և փոխադրման ձևերը), ամերիկացիներին տանում է դեպի Արևմուտք և դեպի ապագա՝ կրելով հանրապետականության (Կոլումբիան հագած է հռոմեական տոգա) և առաջընթացի (տեխնոլոգիական նորարարություններ, հեռագիր) արժեքները: Այս նկարը ցույց է տալիս «Ճակատագրի կանխորոշման» հավատամքը և ամերիկյան քաղաքակրթական սահմանի ընդարձակումը Արևելքից Արևմուտք՝ Արլանդյան օվկիանոսից մինչև Խաղաղ օվկիանոս՝ դասական հանրապետականությունը և լուսավորյալ արևելքը բերում է դեպի խավար Արևմուտք:

Ամերիկյան արտաքին միջամտությունների հարացույցները

Ամերիկյան միջամտությունները Մեքսիկայում, Չինաստանում և Մերձավոր Արևելքում արտացոլեցին Միացյալ Նահանգների նոր ցանկությունը՝ պաշտպանելու ամերիկյան տնտեսական շահերը արտասահմանում: ԱՄՆ-ն երկար ժամանակ ներգրավված էր խաղաղօվկիանոսյան առևտրային հարաբերություններում: Այնուամենայնիվ, միայն այն գաղափարը, որ ասիական շուկաները կենսական նշանակություն ունեն ամերիկյան առևտրի համար, պետք է ներազդեր ամերիկյան քաղաքականության փոխակերպման վրա: Եվ երբ այդ շուկաները վտանգի տակ էին, Վաշինգտոնում գտնում էին, որ ԱՄՆ-ն պետք է պաշտպանի իր ներդրումները և առևտրային շահերը՝ իրականացնելով ներխուժումներ ըստ անհրաժեշտության:

1899 թվականին պետքարտուղար Ջոն Հեյը ձևակերպեց «Բաց դռների քաղաքականությունը» (Open Door Policy): Ըստ այդմ՝ արևմտյան բոլոր տերություններին կոչ էր արվում հավասար մուտք և հնարավորություններ ապահովել չինական շուկաներում: Հեյը վախենում էր, որ կայսերական մյուս տերությունները՝ Ճապոնիան, Մեծ Բրիտանիան, Գերմանիան, Ֆրանսիան, Իտալիան և Ռուսաստանը, ծրագրում են Չինաստանը բաժանել իրենց ազդեցության գոտիների: Ամերիկյան տնտեսական շահերից էր բխում Չինաստանի պահպանումը որպես ազատ առևտրի գոտի: Հաջորդ տարի՝ 1900 թվականին, առևտրի փակումը կանխելու նպատակով ամերիկյան զորքերը միացան մյուս տերությունների բազմազգ ուժերին, որոնք ռազմական ներխուժում իրականացրին Չինաստանում՝ ճնշելով Բոքսյորների ապստամբությունը. այս շարժումը հակադրվում էր Չինաստանում գործող օտարերկրյա կեղեքիչ գործարարությանը և միսիոներներին:

Միացյալ Նահանգները ոչ միայն պատրաստ էր միջամտել օտարերկրների գործերին իր արտաքին շուկաները պահպանելու համար, այլև պատրաստ էր տարածքներ գրավել այդ նպատակով: Միացյալ Նահանգները ձեռք բերեց իր առաջին խաղաղօվկիանոսյան տարածքները 1856 թվականի Գուանո կղզիների օրենքով (Guano Islands Act): Գուանոն՝ հավաքված թռչնի արտաթորանքը, արդյունաբերական գյուղատնտեսության համար անհրաժեշտ պարարտանյութ էր: Օրենքը լիազորում և խրախուսում էր ամերիկացիներին ձեռնարկել ներխուժումներ օվկիանոսում և Միացյալ Նահանգների համար նվաճել գուանոյի պաշարներ ունեցող կղզիներ: Այս կղզային ձեռքբերումները Միացյալ Նահանգների առաջին չընդգրկված տարածքներն էին (unincorporated territories):

Իհարկե, առևտրականները ամերիկացի միակ ճանապարհորդները չէին Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում: Քրիստոնյա միսիոներները շուտով հետևեցին հետախուզական արշավախմբերին և վաճառականներին: Այսպես, առաջին ամերիկացի միսիոներները 1820 թվականին ժամանեցին Հավայան կղզիներ և 1830 թվականին՝ Չինաստան: Միսիոներները, սակայն, հաճախ աշխատում էին գործարար շրջանակների և շահերի հետ: Այս կերպ, Հավայան կղզիներում ամերիկացի միսիոներները ձեռք բերեցին մեծ հողատարածքներ և ձեռնարկեցին շաքարի շահութաբեր պլանտացիաների մշակումը: Այս գործընթացների արդյունքում արդեն XIX դարի ավելի ուշ շրջանում Հավայան կղզիները ղեկավարվում էին շաքարային ընկերությունների վրա հիմնված ամերիկյան օլիգարխիայի կողմից, որոնք միասին հայտնի էին որպես «Մեծ հինգյակ» (“Big Five”): Թեև ամերիկյան (հաուլ՝ haole) սպիտակամորթ այս ընտրախավը չափազանց հզոր էր, բայց դեռևս գործում էր ամերիկյան պետական իշխանության պաշտոնական արտահայտումից դուրս:

Միացյալ Նահանգները, երկար ժամանակ լինելով Լատինական Ամերիկայի տնտեսական, սոցիալական և մշակութային համալիր փոխազդեցությունների ցանցի մասնակից, XIX դարի վերջին սկսեց նոր, ագրեսիվ և իր հարավային հարևանների ներքին գործերին միջամտելու քաղաքականություն վարել:

XIX դարի վերջին և XX դարի սկզբին ամերիկացի կապիտալիստները ահռելի գումարներ էին ներդրել Մեքսիկայում՝ երկրի արդիականացման ջատագով, սակայն կոռումպացված նախագահ Պորֆիրիո Դիասի կայուն և երկարատև կառավարման ընթացքում: 1910 թվականին մեքսիկացի ժողովուրդն ապստամբեց Դիասի դեմ՝ վերջ տալով ոչ միայն նրա ավտորիտար կառավարմանը, այլև Միացյալ Նահանգների գործարար շահերի հանդեպ Մեքսիկայի բարեկամությանը: Քաղաքացիական կռիվների հետևանքով առաջացած սարսափելի ավերածությունների պայմաններում ներդրումային շահեր ունեցող ամերիկացիները դիմեցին ԱՄՆ կառավարությանը օգնության խնդրանքով: ԱՄՆ կառավարությունը փորձեց վերահսկել իրադարձություններն ու քաղաքականությունը մի երկրում, որտեղ դա վերահսկել հնարավոր չէր: Ավելի ու ավելի շատ ամերիկացի գործարարներ էին ռազմական միջամտության կոչ անում:

Երբ 1913 թվականին մեքսիկացի գեներալ Վիկտորիանո Հուերտան մահապատժի ենթարկեց ժողովրդավարական ճանապարհով ընտրված Մեքսիկայի հեղափոխական նախագահ Ֆրանցիսկո Մադերոյին՝ զավթելով իշխանությունը, ԱՄՆ նորընտիր նախագահ Վուդրո Վիլսոնը ճնշում

գործադրեց Մեքսիկայի նոր իշխանության վրա: Վիլսոնը հրաժարվեց ճանաչել Մեքսիկայի նոր կառավարությունը և պահանջեց, որ Հուերտան մի կողմ քաշվի և թույլ տա, որ ազատ ընտրություններ անցկացվեն: Հուերտան հրաժարվեց:

Երբ 1914 թ. ապրիլին մեքսիկական ուժերը Տամպիկո նավահանգստային քաղաքում սխալմամբ ձերբակալեցին ամերիկացի նավաստիներին, նախագահ Վիլսոնն օգտագործեց Հուերտայի վրա լրացուցիչ ճնշում գործադրելու հնարավորությունը: Հուերտան հրաժարվեց փոխհատուցել վնասները, և Վիլսոնը հրամայեց ԱՄՆ բանակին վերահսկողության տակ առնել Վերակրուս նավահանգստային քաղաքը՝ գերմանական զենքի առաքումը Հուերտայի ուժերին կանխելու պատրվակով: 1914 թ. հուլիսին Հուերտայի կառավարությունն ընկավ, իսկ ամերիկյան զորքերը շարունակեցին զբաղեցնել մեքսիկական տարածքները մինչև նոյեմբեր, երբ իշխանությունը ստանձնեց Վենուստիանո Կարանզան՝ Հուերտայի մրցակիցը: Ամերիկյան աջակցությունը Կարանզային զայրացրեց նրա ավելի արմատական մրցակից Պանչո Վիլլային, որի կողմնակիցները հարձակվեցին երկրում ամերիկյան շահերի վրա: 1916 թ. մարտին Պանչո Վիլլայի ուժերն արշավեցին Նյու Մեքսիկո նահանգի Կոլումբուս քաղաքի վրա և սպանեցին ավելի քան մեկ տասնյակ ամերիկացի զինվորների և քաղաքացիական անձանց: Նախագահ Վիլսոնը հրամայեց մի քանի հազարանոց պատժիչ արշավախմբային զորամիավորմանը՝ գեներալ Ջոն Ջ. «Բլեքջեք» Փերշինգի գլխավորությամբ, ներխուժել Մեքսիկայի հյուսիս և գերեվարել Պանչո Վիլլային: Սակայն Վիլլային հաջողվեց խուսանավել Փերշինգի զորքերից մոտ մեկ տարի: Միայն 1917 թվականին, երբ ԱՄՆ-ն պատրաստվում էր ներգրավվել Եվրոպայում ընթացող Առաջին համաշխարհային պատերազմին, գեներալ Փերշինգի ամերիկյան զորքերը դուրս բերվեցին Մեքսիկայից:

Միացյալ Նահանգների գործողությունները Մեքսիկական հեղափոխության ժամանակ արտացոլում էին ամերիկյան երկարամյա քաղաքականությունը, որն արդարացնում էր ռազմաքաղաքական միջամտության գործողությունները Լատինական Ամերիկայի երկրներում՝ հիմք ընդունելով ԱՄՆ քաղաքացիների, ընդհանուր տարածքային սահմանների և, թերևս ամենակարևորը, տնտեսական ներդրումների վրա դրանց հնարավոր վնասակար ազդեցությունը: ԱՄՆ-ի այս քաղաքականությունն ընդգծում էր աշխարհագրության և հատկապես մերձավոր հարևանության դերը կայսերական շահերի հետապնդման գործում:

Այսպիսով, ամերիկյան փոխազդեցությունները աշխարհագրորեն

ավելի հեռավոր վայրերում, օրինակ, Մերձավոր Արևելքում, բոլորովին այլ տեսք ունեին: Առաջին համաշխարհային պատերազմից առաջ Մերձավոր Արևելքում ամերիկյան ներգրավվածությունը մեծամասամբ ոչ թե առևտրային քաղաքականության, այլ կրթության, գիտության և մարդասիրական օգնության բնույթ ունեւ: Ամերիկացի միսիոներները օգնում էին հիմնել հիվանդանոցներ և դպրոցներ, և նրանց գործունեությամբ հիմք դրվեց տարածաշրջանում արևմտյան ոճի համալսարանների ստեղծմանը, ինչպիսիք էին Ռոբերտ քոլեջը Ստամբուլում (1863 թ.), Բեյրութի ամերիկյան համալսարանը (1866 թ.) և Կահիրեի ամերիկյան համալսարանը (1919 թ.):

«Ազատության կայսրությունն» իմպերիալիզմի դարաշրջանում

Ազատության կայսրության (Empire of Liberty) հղացքն առաջինը մշակել էր Թոմաս Ջեֆերսոնը՝ սահմանելու ամբողջ աշխարհում ազատությունը տարածելու Միացյալ Նահանգների առաքելությունը և պատասխանատվությունը: Համաձայն Ջեֆերսոնի տեսլականի՝ ԱՄՆ-ի առաքելությունը աշխարհի համար օրինակ ծառայելն ու Հյուսիսային Ամերիկայում ընդլայնվելն էր: XIX դարի վերջին տարածում գտավ «Ամերիկյան կայսրություն» եզրույթը, որն արտահայտում է Միացյալ Նահանգների քաղաքական, տնտեսական, ռազմական և մշակութային գերիշխանության տարածական շրջանը:

Թեև Միացյալ Նահանգներն ուներ միջազգային տնտեսական, ռազմական և մշակութային ներգրավվածության երկար պատմություն՝ սկսած դեռևս XVIII դարից, իսպանա-ամերիկյան և ֆիլիպինա-ամերիկյան պատերազմները (1898-1902 թթ.) շրջադարձային հանգրվան դարձան Ամերիկյան կայսրության հաստատման, արտերկրում ամերիկյան միջամտությունների և ռազմական ներխուժման քաղաքականության մեջ: Իսպանիայի դեմ պատերազմ մղելով, այնուհետև ներգրավվելով հակամարտության մեջ Ֆիլիպիններում՝ Միացյալ Նահանգներն ընդլայնեց իր համաշխարհային ազդեցության ու հասանելիության շրջանակը: Իսպանա-ամերիկյան պատերազմին հաջորդող երկու տասնամյակներին ԱՄՆ-ն ավելի խորությամբ ներգրավվեց միջազգային քաղաքականության մեջ, մասնավորապես Լատինական Ամերիկայում: Այս նոր հակամարտությունները և դրան հաջորդած տարածքային խնդիրները ստիպեցին ամերիկացիներին դիմակայել իմպերիալիզմի գաղափարաբանական տարրերին: Իսպանա-ամերիկյան և ֆիլիպինա-ամերիկյան պատերազմները բացահայտեցին

այն հիմնախնդիրները, որոնք մինչ այդ շարունակում էին թաքնված մնալ ամերիկյան ծավալապաշտության քննարկումների հետևում:

1898 թվականին ԱՄՆ-ն սկսեց լրջորեն ուշադրությունը սևեռել իր հարավային հարևան Կուբայի ուղղությամբ: XIX դարի կեսերից կուբացիները շարունակաբար անհաջող փորձեր էին ձեռնարկում Իսպանիայից անկախանալու համար: 1895 թվականին սկսված Կուբայի ապստամբությունը ճակատագրական նշանակություն ունեցավ Իսպանիայի գաղութային կայսրության համար: Մինչև 1898 թ. ձմեռ իսպանացի զեներալ Վալերիանո Վեյլեր-ի-Նիկոլաուն ապստամբությունը ճնշելու նպատակով վարում էր վերակենտրոնացման քաղաքականություն՝ ստիպելով տարբեր քաղաքներում ապրող կուբացիներին զանգվածաբար տեղափոխվել ռազմական ճամբարներ: Ամերիկյան հայտնի թերթերի հրատարակիչները հանրայնացրին իսպանացիների աղմկահարույց վայրագությունները: Միացյալ Նահանգների կուբացիները և նրանց դաշնակիցները բարձրաձայնեցին Կուբայի ազատության կանչը (*Cuba Libre!*): Եվ մինչ ԱՄՆ կառավարությունը հայտարարում էր Իսպանիայի հետ զինված հակամարտությունից խուսափելու ցանկության մասին, նախագահ Ուիլյամ Մակ-Բինլին անհանգստանում էր Կուբայում ամերիկացիների կյանքի և ունեցվածքի ապահովությամբ: 1898 թվականի հունվարին նա հրամայեց «Մեյն» ռազմանավը ուղարկել Հավանայի նավահանգիստ:

Ռազմանավը անխոչընդոտ խարիսխ գցեց Հավանայի նավահանգստում մոտ երկու շաբաթ: Սակայն 1898 թվականի փետրվարի 15-ի երեկոյան տեղի ունեցավ հզոր պայթյուն, որից ռազմանավը խորտակվեց: Չոհվեց նավի անձնակազմի 354 անդամների երեք քառորդը: Ռազմածովային հետաքննչության խորհուրդն անմիջապես հետաքննություն սկսեց՝ պարզելու պայթյունի պատճառը, բայց ԱՄՆ-ում արմատականներն արդեն որոշել էին, որ մեղավորը իսպանացիներն են: Օգտագործելով հանրության բուռն վրդովմունքը՝ «դեղին» ամսագրերն ու թերթերը սենսացիոն պատմություններ էին տարածում և մեծացնում իրենց հայտնիությունը՝ չանսալով ճշմարտությանը. ինչպես, օրինակ, Ուիլյամ Ռանդոլֆ Հերսթի «*Նյու Յորք ամսագիրը*» (*New York Journal*) Իսպանիայի դեմ պատերազմի կոչ էր անում:

1898 թվականի ապրիլի 25-ին, երբ հրատապ բանակցությունները ձախողվեցին, և կողմերը չկարողացան հասնել փոխհամաձայնեցված կարգավորման, Կոնգրեսը պաշտոնապես պատերազմ հայտարարեց Իսպանիային: Միացյալ Նահանգները կարճ ժամանակում ռազմական հաղթանակներ տարավ: Խաղաղ օվկիանոսում՝ իսպանական գաղութային

տիրույթ հանդիսացող Ֆիլիպինների մայրաքաղաք Մանիլայի մոտակայքում, մայիսի 1-ին կոմոդոր Ջորջ Դյուին գրոհեց իսպանական նավատորմի ուժերի վրա: Ամերիկյան ուժերը ոչնչացրեցին իսպանական նավատորմը և անցան Մանիլայի նավահանգստի շրջափակման գործողությանը: Երկու ամիս անց ամերիկյան զորքերը գրավեցին Կուբայի Սան Խուան բարձունքները, որը դառնալու էր պատերազմի ամենահայտնի ճակատամարտը՝ մեծ համբավ բերելով հատկապես Թեոդոր Ռուզվելտին և նրա «Կատաղի հեծյալներ» (Rough Riders) կամավորական ջոկատին: Ռուզվելտը ռազմածովային նավատորմի քարտուղարի տեղակալն էր, սակայն հրաժարական էր տվել իր պաշտոնից՝ պատերազմական գործողություններին մասնակցելու համար: Կուբայում գործողությունները նրան համազգային համբավ բերեցին:

1898 թ. հուլիսի 17-ին իսպանացիները պարտություն կրեցին ամերիկյան զորքերից՝ կորցնելով Սանտյագո դե Կուբան և փաստացի տանուլ տալով պատերազմը: Օգոստոսի 12-ին երկու երկրները պայմանավորվեցին հրադադարի հաստատման մասին, իսկ դեկտեմբերի 10-ին կողմերը պաշտոնապես ստորագրեցին Փարիզի խաղաղության պայմանագիրը: Պայմանագրի պայմանները, ի թիվս այլ դրույթների, նախատեսում էին, որ Միացյալ Նահանգներին կանցնեն Իսպանիայի Գուամ, Պուերտո Ռիկո և Ֆիլիպիններ անդրծովյան գաղութային տիրույթները: Այսպիսով, XVI դարից Իսպանիային պատկանող Կուբան, Պուերտո Ռիկոն և Ֆիլիպինները նվաճվեցին ԱՄՆ-ի կողմից:

Պետքարտուղար Ջոն Հեյը հակամարտությունն անվանում էր «փոքրիկ հոյակապ պատերազմ» (“splendid little war”), և այն ժամանակ, իհարկե, այդպես էր երևում: Շուրջ չորս հարյուր ամերիկացիներ զոհվեցին այս պատերազմում, որը տևեց մոտ տասնհինգ շաբաթ: Ժամանակակիցները ամերիկյան հաղթանակները համարում էին Աստծո նախախնամություն: Ինդիանա նահանգից սենատոր Ալբերտ Ջ. Բևերիջը կարծում էր, որ Ամերիկյան քաղաքակրթական «առաքելություն» և այն իրագործելու «պարտականություն» ունի ամբողջ աշխարհում:

Այդուհանդերձ, այն հարցը, թե արդյո՞ք Միացյալ Նահանգները պետք է դառնար կայսրություն, իսպանա-ամերիկյան պատերազմի և 1898 թվականի հուլիսին Հավայան կղզիների բռնակցման հետևանքով սուր քննարկման առարկա դարձավ ամբողջ երկրում: Շատ ամերիկացիներ ձգտում էին տնտեսական և քաղաքական արտոնությունների ու առավելությունների, որոնք ձեռք կբերվեին տարածքների ավելացմամբ: Նրանք, ովքեր դեմ էին ընդլայնմանը, անհանգստանում էին, որ կայսերական հա-

վակնությունները չէին համապատասխանում ամերիկյան ազգ-պետության հիմնադիր իդեալներին: Այս բոլոր քննարկումները հանգուցալուծվեցին Ֆիլիպիններում ամերիկյան գործողություններով:

Պատերազմը Ֆիլիպիններում իսպանա-ամերիկյան պատերազմի հետևանքն էր, բայց երբ պատերազմի ծովսը մաքրվեց, Միացյալ Նահանգները խաղաղովկիանոյան տարածաշրջանում ստացավ առանցքային հենակետ և անդրծովյան տիրույթ: Մանիլայի ծովածոցի ճակատամարտում իսպանական նավատորմի նկատմամբ կոմոդոր Դյուիի հաղթանակից հետո հանրային տրամասույթն առ այն, թե ինչպես կարելի էր շարունակել ընդլայնումը, գրավեց նախագահ Մակ-Քինլիի, ամերիկյան երկու կուսակցությունների քաղաքական առաջնորդների և առաջատար մամուլի ուշադրությունը: Արդյո՞ք ամերիկացիներն իրենց աջակցությունը կառաջարկեին ֆիլիպինցիներին, թե՞ պարզապես կփոխարինեին իսպանացիներին՝ որպես գաղութային իշխանություն: Ֆիլիպիններում լարվածությունը սրվեց: 1899 թվականի հունվարի վերջին Էմիլիո Ագուինալոն դարձավ Ֆիլիպինների Առաջին Հանրապետության (կամ Մալոլոսի Հանրապետություն) նախագահ, իսկ փետրվարի սկզբին սկսվեցին մարտական գործողություններ ամերիկյան և ֆիլիպինյան ուժերի միջև: 1899 թվականի ապրիլին Կոնգրեսը վավերացրեց 1898 թվականի Փարիզի պայմանագիրը, որն ավարտեց իսպանա-ամերիկյան պատերազմը: Փարիզի խաղաղության պայմանագրով Իսպանիան 20 միլիոն դոլարի դիմաց ԱՄՆ-ին էր զիջում Ֆիլիպինյան կղզիները:

Ինչպես կուբացիները, ֆիլիպինցիները երկար պատերազմ էին մղել իսպանացի գաղութարարների դեմ իրենց անկախության համար: Միացյալ Նահանգները կարող էր նրանց տալ այն անկախությունը, որի համար նրանք երկար ժամանակ պայքարում էին, սակայն փոխարենը նախագահ Ուիլյամ Մակ-Քինլիի հրամանով ԱՄՆ-ն գրավեց կղզիները: 1899-1902 թվականներին արյունալի հակամարտությունների շարք բռնկվեց ֆիլիպինցի ապստամբների դեմ: Այս հակամարտությունն ավելի թանկ արժեցավ և ավելի շատ կյանքեր խլեց, քան Իսպանիայի դեմ պատերազմը: Ֆիլիպինցիների ապստամբությունը կամ ֆիլիպինա-ամերիկյան պատերազմը դաժան հակամարտություն էր, որը ընթանում էր ամերիկացիների համար դժվարին և անձանոթ տեղանքում: Ժամանակակիցներն այս պարտիզանական պատերազմը համեմատում էին XIX դարի վերջի այսպես կոչված հնդկացիական պատերազմների ամերիկյան փորձի հետ: Պատերազմի դաժանությունը մեկնաբանվում էր ամերիկյան զորքերի անորոշ առաքելությամբ:

Ֆիլիպինյան կղզիների նկատմամբ վերահսկողությունը ապահովելու նպատակով ԱՄՆ կառավարությունը երկու ֆիլիպինյան հանձնաժողովներ ուղարկեց՝ կղզիներում իրավիճակը գնահատելու և քաղաքացիական գաղութային կառավարման համար առաջարկություններ ներկայացնելու: Քաղաքացիական վարչակազմը, որի առաջին գեներալ-նահանգապետն էր Ուիլյամ Հ. Թաֆթը (1901–1903), ստեղծվեց ԱՄՆ ռազմական ուժերի աջակցությամբ: Թեև 1902 թվականին նախագահ Թեոդոր Ռուզվելտը պատերազմը հայտարարեց ավարտված, դիմադրությունը և երբեմն էլ մարտական գործողությունները շարունակվեցին մինչև XX դարի երկրորդ տասնամյակը:

Մինչ Կուբայից զորքերը դուրս բերելը և կղզուն անկախություն շնորհելը 1901 թվականին Միացյալ Նահանգները սենատոր Օրվիլ Պլատտի նախաձեռնությամբ Կուբայի Սահմանադրությունը լրացրեց որոշ հոդվածներով՝ ամերիկյան շահերը ապահովագրելու նպատակով: 1902 թ. մայիսի 20-ին Կուբան հռչակվեց անկախ հանրապետություն, սակայն, փաստորեն, «Պլատտի ուղղման» (Platt Amendment) և «ղուլարի դիվանագիտության» շնորհիվ մնաց ամերիկյան գերիշխանության ներքո: Պլատտի ուղղումը հիմք ծառայեց ԱՄՆ-ի և Կուբայի միջև 1903 թ. մայիսի 22-ի պայմանագրին, որով Միացյալ Նահանգները ստանում էր Գուանտանամո ռազմածովային հենակետը անժամկետ վարձակալությամբ, որը պահպանում է մինչ օրս: «Պլատտի ուղղումը», որը փաստորեն Կուբան դարձնում էր ամերիկյան պրոտեկտորատ, վերացվեց միայն 1934 թվականին:

Ամերիկյան իմպերիալիզմի մասին բանավեճերը գերակշռում էին ամերիկյան հասարակական-քաղաքական կյանքում և մամուլում: Բանավեճերը բխում էին ամերիկյան ինքնության և ավելի լայն աշխարհում Միացյալ Նահանգների պատշաճ դերի մասին հիմնարար գաղափարներից: Շատերը ֆիլիպինյան հակամարտությունը որակում էին իբրև բողոքական-քրիստոնեական և քաղաքակրթական առաքելություն: Մյուսներն էլ Ֆիլիպիններում ամերիկյան իմպերիալիզմն ուղղակի համարում էին դեպի արևմուտք ամերիկյան ծավալապաշտության և ընդլայնման անվերջ շարունակություն: Ասել է թե՛ դա ուղղակի ճակատագրի կանխորոշում էր: Ոմանք իմպերիալիզմն ընկալեցին իբրև ազգը վերստին աշխուժացնելու միջոց՝ հաստատելով ամերիկյան գերիշխանությունն ու ազդեցությունն ամբողջ աշխարհում: Մյուսներն էլ համարձակորեն ընդունում էին ասիական շուկաներ մուտք գործելու Ֆիլիպինյան կղզիների ընձեռած հնարավորությունները:

Այդուհանդերձ, քննադատները ևս զորեղ էին: Ամերիկյան հակաիմ-

պերիալիստական լիգան (American Anti-Imperialist League) դատապարտում էր օտար երկրների հպատակեցումը, գաղութացումը և հանդես էր գալիս բոլոր ժողովուրդների ինքնիշխանության իրավունքների պաշտպանությամբ: Ոմանք էլ ընդունում էին հակաիմպերիալիստական դիրքորոշումները զանգվածային ներգաղթի և, հետևաբար, ամերիկյան ռասայական ինքնության լրդզման հետ կապված մտահոգությունների պատճառով՝ վախենալով, որ ամերիկյան մաքրությունը վտանգված է տարօրինակ և օտար ժողովուրդների հետ շփումից:

Թեոդոր Ռուզվելտը և ամերիկյան իմպերիալիզմը

Նախագահ Թեոդոր Ռուզվելտի ղեկավարությամբ Միացյալ Նահանգները XX դար մուտք գործեց համաշխարհային հզոր տերության իր հավակնոտ ծրագրերով, որը պետք է իրագործվեր ռազմական հզորության, տարածքային և տնտեսական ազդեցության ընդլայնմամբ: Թեև իսպանա-ամերիկյան պատերազմը սկսվել էր նախագահ Ուիլյամ Մակ-Թինլիի ղեկավարությամբ, սակայն դարասկզբին Ռուզվելտը՝ Սան Խուան Հիլիի հերոսը, նավատորմի քարտուղարի տեղակալը, այնուհետև ԱՄՆ փոխնախագահը և նախագահը, ըստ էության ամերիկյան իմպերիալիզմի ամենահայտնի և ազդեցիկ ջատագովն էր: Ամերիկյան ռազմական նավատորմի զարգացման և Լատինական Ամերիկայի՝ իբրև ԱՄՆ արտաքին քաղաքականության առանցքային ռազմավարական ուղղության վերաբերյալ Ռուզվելտի շեշտադրումներն ունեցան երկարաժամկետ հետևանքներ:

Նախագահ Մակ-Թինլին Ռուզվելտին նշանակել էր նավատորմի քարտուղարի տեղակալ: Այս պաշտոնում Ռուզվելտը կապեր էր հաստատել այնպիսի խոշոր ռազմական գործիչների հետ, ինչպիսիք էին ռազմական տեսաբաններ Ալֆրեդ Թայեր Մահանն ու կոմոդոր Ջորջ Դյուին և այնպիսի քաղաքական գործիչների, ինչպիսիք էին Հենրի Բեբոտ Լոջը և Ուիլյամ Հովարդ Թաֆթը: Իր պաշտոնավարման ընթացքում Ռուզվելտը վերահսկում էր նոր ռազմանավերի կառուցումը, նոր տեխնոլոգիաների ներմուծումը և նոր նավաշինական գործարանների հիմնադրումը՝ նպատակ ունենալով Ամերիկայի հզորությունը արտապատկերել օվկիանոսների վրա:

Ռուզվելտը ցանկանում էր ընդլայնել ամերիկյան ազդեցության գոտիները: Նա Հավայան կղզիների միացման վճռական ջատագովներից էր՝ պատճառաբանելով աշխարհառազմավարական սկզբունքներով: Նախ,

այն արդեն իսկ գտնվում էր ամերիկյան ազդեցության գոտում, և, բացի այդ, կղզիախմբի բռնակցումը պատվար կստեղծեր ճապոնական ծավալապաշտության դեմ ու կսահմանափակեր ամերիկյան Արևմտյան ափի հնարավոր սպառնալիքները: Փիրլ Հարբորում կար գերազանց նավահանգիստ ռազմանավերի համար, որը կարող էր գործել որպես ամերիկյան ռազմածովային ուժերի առանցքային ռազմակայան և վառելիքի կայան Ասիայի առանցքային շուկաներ տանող առևտրային ճանապարհին:

Իսպանա-ամերիկյան պատերազմում մեծ համբավ ձեռք բերելուց հետո Ռուզվելտն առաջադրվեց փոխնախագահի պաշտոնում նախագահ Մակ-Քինլիի վարչակազմում և ստանձնեց ԱՄՆ նախագահի պաշտոնը 1901 թվականին՝ անարխիստ Լեոն Չոլգոշի կողմից Մակ-Քինլիի սպանությունից հետո: Ռուզվելտը եռանդով լծվեց բանակը ամրապնդելու, ռազմածովային ուժերն ընդլայնելու և ամերիկյան շահերն արտասահմանում առաջ մղելու գործին: Ըստ այդմ՝ 1904-1907 թթ. կառուցվեցին 11 նոր խոշոր ռազմանավեր: Ալֆրեդ Թայեր Մահանի ռազմածովային տեսությունները, որոնք նկարագրված են նրա «Ծովային տերության ազդեցությունը պատմության վրա» (The Influence of Sea Power upon History) գրքում, ներազդեցին Ռուզվելտի գաղափարների վրա: Հայսմ՝ Ռուզվելտն առաջ մղեց նոր մարտանավերի և «կապույտ ջրային» նավատորմի (“blue water” navy) ստեղծման գաղափարը, որը կարող էր ներգրավվել և հաղթել հնարավոր հակառակորդ տերության նավատորմերին խորը ծովային մարտերում՝ հեռու ամերիկյան ափերից: 1907-1909 թթ. «Մեծ Սպիտակ» նավատորմի արշավախմբային առաքելությունը՝ կազմված 16 նորակառույց սպիտակ ռազմանավերից, նավարկեց աշխարհով մեկ՝ ի ցույց դնելով Ամերիկայի նոր ուժը:

Ռուզվելտը պնդում էր, որ իր «մեծ մահակի քաղաքականությունը» (Big Stick Policy) և համոզիչ ռազմական ուժը կարող էր ապահովել ԱՄՆ գերիշխանությունը Արևմտյան կիսագնդի ռազմավարական կարևոր տարածաշրջանների նկատմամբ: Թեև Միացյալ Նահանգներն իր նպատակներին հասնելու համար օգտագործում էր ռազմական միջամտության գործիքակազմը ամենատարբեր հանգամանքներում, այդուհանդերձ նա դեռևս չունեի կարողություն կամ հակվածություն՝ ռազմական ճանապարհով պարտադրելու իր կամքը ողջ Հարավային և Կենտրոնական Ամերիկային: Հետևաբար, Միացյալ Նահանգներն ավելի հաճախ օգտագործում էր կայսերականության այնպիսի մեթոդներ, ինչպիսին էր այսպես կոչված դոլարային դիվանագիտությունը (dollar diplomacy)՝ Արևմտյան կիսագնդում գերիշխանություն հաստատելու համար:

Միացյալ Նահանգներն ակտիվորեն միջամտում էր Լատինական Ամերիկայի երկրների ներքին գործերին: Թեև 1902 թ. Կուբան պաշտոնապես անկախություն էր ստացել, իր պաշտոնավարման ողջ ընթացքում նախագահ Ռուզվելտը ԱՄՆ-ի վերահսկողությունն էր իրականացնում նաև Կուբայի վրա: Նախագահ Ռուզվելտի (1901-1909 թթ.) արտաքին քաղաքականության կարևոր ուղղություններից էր Կենտրոնական Ամերիկայում Ատլանտյան ու Խաղաղ օվկիանոսները միացնող ռազմավարական և տնտեսական կարևորագույն նշանակություն ունեցող ջրանցքի կառուցման հարցը, և կառուցման համար տարածք ձեռք բերելու գործողությունը: 1902 թ. ԱՄՆ-ն ֆրանսիական շինարարական ընկերությունից գնեց Պանամայի ջրանցքի կառուցման կոնցեսիոն իրավունքը: 1903 թ. հունվարի 22-ի ամերիկա-կոլումբիական համաձայնագրով Միացյալ Նահանգներին իրավունք վերապահվեց 100 տարով վարձակալել 6 մղոն լայնությամբ գոտի Պանամայի պարանոցում: Այդ իրավունքի համար ԱՄՆ-ն պարտավորվեց միանվագ վճարել 10 միլիոն դոլար, ինչպես նաև ամեն տարի որպես վարձավճար՝ 250,000 դոլար: ԱՄՆ Սենատը հաստատեց այս համաձայնագիրը 1903 թ. մարտի 17-ին, իսկ մի քանի ամիս անց Կոլումբիայի Սենատը հրաժարվեց վավերացնել այն: Կոլումբիան ավելի շահավետ պայմաններ էր ուզում:

Կոլումբիայի Սենատի որոշումը զայրացրեց նախագահ Ռուզվելտին, ով հայտարարեց, որ չի կարող թույլ տալ, որ «բանդիտների ինչ-որ խումբ թալանի քեռի Սենին»: Շուտով Պանամայում, որի բնակչությունը էթնիկ կազմով տարբերվում էր կոլումբիացիներից, ամերիկյան աջակցությամբ հեղափոխական ապստամբություն սկսվեց անկախ պանամական պետություն ստեղծելու համար: 1903 թ. Ռուզվելտը ռազմածովային ուժեր տեղակայեց՝ ապահովելու Պանամայի անկախությունը և անջատումը Կոլումբիայից, որպեսզի ձեռք բերի Պանամայի պարանոցում միջօվկիանոսային ջրանցքի կառուցման համար անհրաժեշտ շրջանը՝ ԱՄՆ ջրանցքի գոտին (U.S. Canal Zone): 1903 թ. նոյեմբերի 3-ին «պատահականորեն» կոլումբիական խոշոր նավահանգստում հայտնված ամերիկյան «Նեշվիլ» ռազմանավը խանգարեց կոլումբիական բանակի առաջխաղացմանը դեպի ապստամբական շրջաններ: Հաջորդ օրը՝ նոյեմբերի 4-ին, հռչակվեց Պանամայի Հանրապետության անկախությունը: Պետքարտուղար Ջոն Հեյը անմիջապես ճանաչեց Պանամայի անկախ հանրապետությունը: 1903 թ. նոյեմբերի 18-ին՝ Պանամայի ամերիկյան ճանաչումից մոտ 2 շաբաթ անց, Պանամայի և ԱՄՆ-ի միջև կնքվեց «Հեյ-Բունաու-Վարիլլայի» պայմանագիրը, որով Միացյալ Նահանգները վարձակալության ստացավ

տարածք՝ Խաղաղ և Ատլանտյան օվկիանոսները միացնող ջրանցք կառուցելու, կառավարելու և պաշտպանելու իրավունքներով, ինչպես իրենց ինքնիշխան տարածքում: Պանամայի ջրանցքի շինարարությունը սկսվեց 1904 թ. կեսերին և ավարտվեց 1914 թ. օգոստոսի 15-ին: Հետագայում՝ 1922 թ., ԱՄՆ-ն 25 միլիոն դոլար վճարեց Կոլումբիային իբրև փոխհատուցում:

Միացյալ Նահանգների համար մեկ այլ կարևոր խնդիր էր Արևմտյան կիսագնդում եվրոպական տերությունների հնարավոր միջամտությունը կանխելը: 1902 թ. արդեն ոչ միայն Մեծ Բրիտանիան, այլ նաև եվրոպական այլ տերություններ, մասնավորապես Գերմանիան և Իտալիան, հնարավոր համարեցին միջամտությունը Վենեսուելայի ներքաղաքական ճգնաժամին՝ հարկադրելու նախագահ Կաստրոյին վճարել երկրի արտաքին պարտքերը: Սա նաև հնարավորություն էր նշված տերությունների համար իրենց ազդեցությունը տարածելու Արևմտյան կիսագնդում, իսկ դա արդեն Մոնրոյի դոկտրինի խախտում էր, ինչը Միացյալ Նահանգները չէր կարող անտեսել: 1903 թ. Միացյալ Նահանգներն արգելակեց Գերմանիային և մյուս տերություններին ներխուժել Վենեսուելա: Նախագահ Ռուզվելտը անհրաժեշտ համարեց հասկացնել, որ Արևմտյան կիսագնդը գտնվում է միայն Միացյալ Նահանգների իրավասության ոլորտում:

1904 թ. դեկտեմբերի 6-ին Կոնգրեսին հղած՝ Միության դրության մասին իր ուղերձում նախագահ Ռուզվելտը հռչակեց Մոնրոյի դոկտրինի իր հետևությունները (Roosevelt Corollary to the Monroe Doctrine) և հանդես եկավ Մոնրոյի դոկտրինի սեփական մեկնաբանությամբ, որը հայտնի է «Ռուզվելտի ուղղում» (Roosevelt Corollary) անվանումով: Ըստ այդմ՝ հայտարարվում էր, որ Միացյալ Նահանգներն իրավունք ունի ռազմական միջամտության և կանխարգելիչ գործողությունների Լատինական Ամերիկայի ցանկացած երկրում՝ վարչական և հարկաբյուջետային թերությունները շտկելու նպատակով:

«Քրոնիկ անօրինական գործողությունները կամ անզորության դրսևորումները, որոնք հանգեցնում են քաղաքակիրթ հասարակության կապերի ընդհանուր թուլացման՝ լինի Ամերիկայում կամ որևէ այլ վայրում, վերջին հաշվով պահանջում են որևէ քաղաքակիրթ ազգի միջամտությունը: Արևմտյան կիսագնդում Միացյալ Նահանգների հավաստագրությունը Մոնրոյի դոկտրինին կարող է հարկադրել Միացյալ Նահանգներին, գուցե և հակառակ նրա կամքի, օրինականության այդպիսի խախտումների կամ ան-

գորության դրսևորման աղաղակող դեպքերում, կատարել միջազգային ոստիկանական տերության պարտականություններ»:

Ռուզվելտի քաղաքականությունն արդարացնում էր Կարիբյան ավազանի և Լատինական Ամերիկայի «անգործունակ» երկրներում ԱՄՆ ծովային հետևակի և ռազմածովային ուժերի բազմաթիվ ոստիկանական գործողությունները: Այսպիսի արտաքին քաղաքականությամբ էր պայմանավորված Կուբայում Գուանտանամոյի ռազմածովային հենակետի հիմնումը: Այս մոտեցումը հայտնի էր իբրև հրետանավակային դիվանագիտություն (gunboat diplomacy), որի շրջանակներում ռազմածովային ուժերը հրետակոծում էին և ծովային հետևակայիններ իջեցնում որևէ երկրի մայրաքաղաքում՝ պաշտպանելու ամերիկացիներին ու նրանց գույքը, ժամանակավորապես զավթելու կառավարությունը և թելադրելու ամերիկյան գործարար շահերից բխող բարեկամական քաղաքականություն, ինչպիսին էր, օրինակ, արտաքին վարկերի և պարտքերի մարումը: Այս եղանակով 1905 թվականին Ռուզվելտը ԱՄՆ ծովային հետևակն ուղարկեց Դոմինիկյան Հանրապետություն՝ գրավելու և ֆինանսական վերահսկողություն հաստատելու Դոմինիկյան կառավարության վրա:

Իմպերիալիստները փառաբանում էին Միացյալ Նահանգների և Բրիտանական կայսրության սպիտակ անգլո-սաքսոնական հասարակություններին՝ իբրև ազգաշինության առաջադեմ ճարտարապետների և քաղաքակրթության առաջամարտիկների, որոնք «օգնում» էին բարձրացնելու «կարգապահության և ինքնատիրապետման անվեհեր հատկություններից զուրկ» Լատինական Ամերիկայի պարտապան ազգերին: Ռուզվելտը քարոզում էր, որ Միացյալ Նահանգների «պարտականությունն» է իրականացնել միջազգային ոստիկանական իշխանություն Կարիբյան ավազանում և անգլո-սաքսոնական քաղաքակրթության բարիքները տարածել ստորադաս ժողովուրդներով բնակեցված ստորադաս պետություններում:

Դոլարային դիվանագիտությունն առաջարկում էր կայսրության կառուցման ավելի քիչ ծախսատար մեթոդ և ռազմակալման դժվարություններից խուսափելու հնարավորություն: Պաշտոնական Վաշինգտոնն աշխատում էր բանկիրների հետ՝ Լատինական Ամերիկայի երկրներին վարկեր տրամադրելու և փոխարենը նրանց ազգային հարկաբյուջետային քաղաքականության վրա որոշակի մակարդակի վերահսկողություն հաստատելու համար: Ռուզվելտը դոլարային դիվանագիտության կիրառումը հասցրեց հսկայական մասշտաբների, իսկ հաջորդ նախագահներ Թաֆթի և Վիլսոնի վարչակազմերը շարունակեցին այս գործիքակազմի օգ-

տագործումը տարբեր ձևերով: Բոլոր վարչակազմերն էլ բախվեցին Լատինական Ամերիկայի երկրների անկայունությանը: Եվրոպական և ամերիկյան բանկիրների փոխառությունների աճը թույլ տվեց Լատինական Ամերիկայի երկրներին մուտք գործել արդիական կյանք, բայց պարտքերը ապակայունացրին տարածաշրջանի մեծ մասը: Բանկիրները, սկսած Լոնդոնի և Նյու Յորքի ֆինանսական շրջանակներից, Լատինական Ամերիկյան դիտարկում էին որպես շահութաբեր ներդրումների հնարավորության գոտի: Վարկատուներն օգտվեցին տարածաշրջանի նորաստեղծ կառավարությունների կանխիկ ֆինանսական միջոցների կարիքից և կիրառեցին պատժիչ տոկոսադրույքներ հսկայական վարկերի համար, որոնք այնուհետև մաս-մաս վաճառվեցին պարտատոմսերի երկրորդային շուկայում:

Ամերիկյան տնտեսական շահերն այժմ սերտորեն համընկնում էին տարածաշրջանի երկրների տնտեսական շահերին, սակայն այս կապերը խաթարվում էին տարածաշրջանի նորաստեղծ կառավարությունների շարունակական անկայունության պատճառով, որը հաճախ ուղեկցվում էր վատ կառավարմամբ, քաղաքացիական պատերազմներով և ռազմական հեղաշրջումներով: Քաղաքական ռեժիմների հեղաշրջումային փոփոխությունները խանգարում էին վարկերի մարմանը, քանզի նոր կառավարությունները հաճախ հրաժարվում էին պետական պարտքից կամ ստիպում էին իշխանական կապերից հանկարծակի զրկված վարկատուներին վերստին բանակցել պայմանների շուրջ: Օտարերկրյա վարկատուները չէին կարող ստիպել պարտապան կառավարություններին մարել վարկերը, քանի դեռ նրանք չէին հաջողել լոբբինգի միջոցով համոզել սեփական կառավարություններին՝ ներգրավվելու և ուժի գործադրմամբ պարտքերը հավաքելու:

Ռուզվելտի վարչակազմը չէր ցանկանում հերքել պարտքի մարման եվրոպացիների իրավացի պահանջները, բայց նաև չէր ցանկանում խրախուսել Արևմտյան կիսագնդում եվրոպական տերությունների նվաճողական քաղաքականությունը որպես այդ պարտքերի հավաքագրման գործողություն: Ռուզվելտի վարչակազմում ԱՄՆ արտաքին քաղաքականություն մշակողները և ռազմական ստրատեգները հաստատական էին, որ եվրոպական տերությունների ռազմական միջամտության գործողությունները լրջորեն վտանգում էին տարածաշրջանում ամերիկյան շահերը: Ռուզվելտը պատճառաբանում էր, որ ԱՄՆ-ն պետք է ստեղծի և պահպանի հարկաբյուջետային և քաղաքական կայունություն Լատինական Ամերիկայի ռազմավարական կարևորություն ունեցող պետություններում,

հատկապես այն երկրներում, որոնք կարևոր նշանակություն ունեին կառուցվելիք Պանամայի ջրանցքի ուղիների վրա: Արդյունքում, ԱՄՆ քաղաքականություն մշակողները այնպիսի երկրներում, ինչպիսիք էին Կուբան և Դոմինիկյան Հանրապետությունը, ռազմական միջամտությունը համարեցին անհրաժեշտություն՝ տարածաշրջանում անվտանգությունն ապահովելու համար:

Մոնրոյի դոկտրինը Ռուզվելտի վարչակազմին տրամադրեց դիվանագիտական և միջազգային իրավաքաղաքական ավանդույթ, որի միջոցով ԱՄՆ-ն կարող էր հաստատել Արևմտյան կիսագնդի երկրներում *լեգիտիմ* միջամտության իր «իրավունքն» ու պարտավորությունը: Նախագահ Ռուզվելտը պնդում էր, որ Միացյալ Նահանգները ցանկանում է նպաստել Լատինական Ամերիկայի պետությունների կայունությանը և բարգավաճմանը, որպեսզի նրանք ի վիճակի լինեին կատարել իրենց քաղաքական և ֆինանսական պարտավորությունները: Ռուզվելտը հայտարարեց, որ «անօրինականությունը կամ անզորությունը, որը հանգեցնում է քաղաքակիրթ հասարակության կապերի համընդհանուր թուլացմանը, կարող է վերջապես պահանջել որևէ քաղաքակիրթ ազգի միջամտություն», և Արևմտյան կիսագնդում Միացյալ Նահանգները չի կարող անտեսել այդ պարտականությունը: Այդուհետ Ռուզվելտը ելնում էր այն նախադրյալից, որ լատինամերիկյան երկրների այս կամ այն գործողության անօրինականությունը կամ վտանգավորությունը որոշելու բացառիկ իրավունքը վերապահվում էր միայն Միացյալ Նահանգներին: Եթե նախագահ Մոնրոն հոչակել էր, թե եվրոպացիներն ինչը իրավունք չունեին անելու Արևմտյան կիսագնդում, ապա Ռուզվելտը շրջեց Մոնրոի դոկտրինը՝ տարածաշրջանում ԱՄՆ ուղղակի միջամտությունն օրինականացնելու նպատակով:

Չնայած իր ազդեցիկ և ռազմատենչ հայտարարություններին՝ Ռուզվելտը հանդես չէր գալիս ռազմական ուժի կիրառմամբ ամերիկյան տարածքի ընդլայնման օգտին: Ըստ էության, նա պնդում էր, որ Լատինական Ամերիկայի պետությունների հետ հարաբերություններում ԱՄՆ-ն չէր ձգտում տարածքային ընդլայնման, իսկ պատերազմն ու ռազմական միջամտությունն ընդամենը խնդրահարույց կառավարությունների հետ հակամարտությունների լուծման վերջին միջոցն էին: Ռուզվելտի կարծիքով՝ նման գործողություններն անհրաժեշտ էին «կարգի և քաղաքակրթության» պահպանման համար: Անշուշտ, Ռուզվելտը հավատում էր, որ ռազմական ուժը պետք է օգտագործվեր ազգային շահերը և ազդեցության ոլորտները պաշտպանելու համար, սակայն միայն խիստ անհրաժեշտության դեպքում: Նա նաև կարծում էր, որ ամերիկյան ազդեցության ոլորտը

ներառում էր ոչ միայն Հավայան կղզիները և Կարիբյան ավազանը, այլև Խաղաղ օվկիանոսի մեծ մասը: Երբ Ճապոնիայի հաղթանակները Ռուսական կայսրության նկատմամբ սպառնում էին տարածաշրջանային ուժերի հավասարակշռությանը, Ռուզվելտը միջնորդական առաքելությամբ հովանավորում էր ռուս-ճապոնական խաղաղ բանակցությունները, ինչի համար 1906 թվականին նա ստացավ Խաղաղության Նոբելյան մրցանակ:

Այսպիսով, XX դարի սկզբին «Ռուզվելտի հետևությունը Մոնրոյի դոկտրինից» ուղենշեց ԱՄՆ արտաքին քաղաքականության նոր հարացույցը:

Հասարակությունը, ներգաղթը և իմպերիալիզմը

Ամերիկյան իմպերիալիզմի շուրջ բանավեճերը ընդգրկում էին ոչ միայն քաղաքականության, տնտեսության և ազգային ինքնաշահության հարցերը: Կայսերականության գործընթացը ներառում էր նաև մարդասիրության, բարոյականության, կրոնի և «քաղաքակրթության» մասին գաղափարներ, որոնցում զգալի մասնակցություն ունեին ամերիկացի կանայք: Ամերիկյան իմպերիալիզմը, որը նույն չափով կենտրոնացած էր տնտեսական և մշակութային ազդեցության վրա, որչափ որ ռազմական կամ քաղաքական իշխանության վրա, լայն հնարավորություններ էր ընձեռում սպիտակամորթ, միջին խավի, քրիստոնյա կանանց: Բացի ամերիկյան գործարարության ներկայացուցիչներ աշխատելուց, կանայք կարող էին ծառայել որպես միսիոներներ, ուսուցիչներ, բժշկության և առողջապահության ոլորտի մասնագետներ: Ավելին, իբրև արվեստագետներ և գրողներ՝ նրանք ոգեշնչում և նպաստում էին իմպերիալիզմի մասին գաղափարների տարածմանը:

Իմպերիալիզմի հիմքում ընկած քաղաքակրթության հոետորաբանությունն ինքնին խիստ գենդերային հասկացություն էր: Համաձայն ժամանակաշրջանի ռասայական տեսության՝ մարդիկ քաղաքակրթության աստիճանակարգային փուլերի միջով անցնում էին կանոնավոր, գծային ձևով: Ըստ այդմ՝ միայն եվրոպացիներն ու ամերիկացիներն էին հասել քաղաքակրթության ամենաբարձր մակարդակին, որը մակերեսայնորեն նշանավորվում էր սպիտակամորթությամբ, սակայն ներառում էր նաև արդյունաբերական տնտեսություն և գենդերային բաժանում, որտեղ տղամարդիկ և կանայք ունեին տարբեր, բայց փոխլրացնող դերեր: Հասարակական և տեխնոլոգիական առաջընթացը շատ կանանց ազատել էր ֆիզիկական աշխատանքի բեռից՝ բարձրացնելով բարոյական և հոգևոր

հեղինակության դիրքի: Այսպիսով, սպիտակամորթ կանայք կարևոր դերեր և հնարավորություններ ունեին ամերիկյան կայսերականության գործընթացներում թե՛ որպես ամերիկյան քաղաքակրթության բարիքները խորհրդանշողներ, թե՛ իբրև ամերիկյան արժեքների փոխանցողներ:

Քաղաքակրթությունը, թեև հաճախ քողարկված էր բարոյականության և քրիստոնեության լեզվով, ավելի շատ տնտեսական հասկացություն էր: Քաղաքակրթության փուլերը հիմնականում նշանավորվում էին իրենց տնտեսական բնույթով (որսորդական-հավաքչական, գյուղատնտեսական, արդյունաբերական հասարակություն), և արդյունաբերական ճանապարհով արտադրված ապրանքների սպառումը դիտվում էր որպես «վայրենությունից» դեպի քաղաքակրթություն առաջընթացի առանցքային միջոց: XIX դարի ընթացքում Արևմտյան քաղաքակրթության հասարակություններում կանայք սերտորեն ասոցացվում էին սպառման հետ, հատկապես այն ապրանքների, որոնք օգտագործվում էին կենցաղային և տնային տնտեսության ոլորտներում:

XX դարի սկզբին ամերիկացիների համար արդյունաբերականացումը, կայսերականությունը և ներգաղթը փոխկապակցված էին: Կայսերականության հիմքում ընկած էր ամերիկյան ապրանքների համար վաճառահանման շուկաների ընդլայնման ցանկությունը, իսկ արդյունաբերական ապրանքները հետզհետե ավելի շատ էին արտադրվում ներգաղթյալների աշխատուժով: Ներգաղթյալ արտադրողներից և սպառողներից՝ «ուրիշներից» աճող կախվածության զգացումը, ինչպես նաև կասկածները, թե արդյոք նրանք կձուլվեն սպիտակամորթ, բողոքական ամերիկյան հասարակության հիմնական հոսքին, մեծ անհանգստություն առաջացրեց ծնունդով ամերիկացիների շրջանում: 1870-1920 թթ. ավելի քան 25 միլիոն ներգաղթյալներ ժամանեցին Միացյալ Նահանգներ: Այս ներգաղթը մեծ մասամբ շարունակությունն էր այն գործընթացի, որը սկսվել էր մինչև Քաղաքացիական պատերազմը: XX դարի սկզբին նոր էթնիկ խմբերը, ինչպիսիք էին իտալացիները, լեհերը և Արևելյան Եվրոպայի հրեաները, կազմում էին ժամանողների առավել մեծ տոկոսը, մինչդեռ իռլանդացիների և գերմանացիների թիվը սկսեց նվազել:

Թեև ԱՄՆ աճող տնտեսությունը իր գործարանների և արտադրամասերի համար մեծ թվով ներգաղթյալ աշխատավորների կարիք ուներ, բայց բազմաթիվ ամերիկացիներ բացասաբար էին արձագանքում այդքան շատ ներգաղթյալների ներհոսքին: Նատիվիստները տարբեր պատճառներով դեմ էին զանգվածային ներգաղթին: Ոմանք կարծում էին, որ նոր ներգաղթյալները չէին համապատասխանում ամերիկյան ժողովրդա-

վարության և հասարակության պահանջներին, և որ իռլանդացի կամ իտալացի ներգաղթյալները բռնություն կամ կաշառակերություն էին կիրառում քաղաքային իշխանություններին կոռումպացնելու համար: Մյուսներն էլ, այդ թվում ավելի վաղ ներգաղթյալները, անհանգստանում էին, որ ավելի շատ ներգաղթյալների ժամանումը կհանգեցնի աշխատատեղերի պակասի և ցածր աշխատավարձերի: 1870-ականներին Արևմտյան ափի բնակավայրերում նման մտավախությունները միավորվեցին և հանգեցրին հակաչինական բողոքների: Մյուսներն անհանգստանում էին, որ ներգաղթյալներն իրենց հետ բերում են արմատական գաղափարներ՝ սոցիալիզմ և կոմունիզմ: Այս մտավախությունները բազմապատկվեցին 1886 թվականին՝ Չիկագոյի Հեյմարքեթ հրապարակում տեղի ունեցած աշխատավորական արյունալի ընդվզումից (Chicago Haymarket affair) հետո, երբ ներգաղթյալները մեղադրվում էին ռումբի պայթյունի և ոստիկանների սպանության մեջ:

XIX դարի վերջին ներգաղթի սահմանափակման գաղափարը տարածված էր ողջ Միացյալ Նահանգներում, երբ շատերն անհանգստացած էին, որ օտարերկրացիների ներհոսքը կխաթարեր ամերիկյան հասարակության ռասայական, տնտեսական և բարոյական ամբողջականությունը: 1870-1920-ական թվականներին դաշնային կառավարությունն ընդունեց մի շարք օրենքներ, որոնք սահմանափակում կամ դադարեցնում էին որոշակի խմբերի ներգաղթը: Միացյալ Նահանգները շարունակում էր հավատարիմ մնալ ներգաղթյալների տեսակը կարգավորելու հավատամքին և հանձնառությանը՝ կարգավորելով, թե որ խմբերը կարող էին միանալ ամերիկյան հասարակությանը: Քննադատները մեղադրում էին, որ այս կանոնակարգերը օրինականացնում էին ռասիզմը, դասակարգային կողմնակալությունը և էթնիկական նախապաշարմունքները՝ որպես պաշտոնական պետական քաղաքականություն:

Ներգաղթի դաշնային վերահսկողության առաջին քայլը կատարվեց Կալիֆորնիայից եկող ազդակների ներքո: 1875 թվականին Կալիֆորնիայում բռնկված հակաչինական արշավը Կոնգրեսին մղեց ընդունելու Փեյջի օրենքը (Page Act), որն արգելում էր հանցագործության համար դատապարտված անձանց մուտքը, ասիացի բանվորների բռնի ներմուծումը և «մարմնավաճառության նպատակով» կանանց ներմուծումը: Այս օրենսդրական կարգավորումը նախատեսված էր հիմնականում չինացի ներգաղթյալների բացառման համար: Այնուհետև, 1882 թվականի մայիսին, Չինացիների բացառման օրենքով (Chinese Exclusion Act) Կոնգրեսն արգելեց բոլոր չինացի բանվորների ներգաղթը: Օրենքը չինացիներին

դարձրեց առաջին ներգաղթյալ խումբը, որը ռասայական հիմքով ենթարկվեց ընդունելության սահմանափակումների: Այսպիսով, չինացիները դարձան առաջին անօրինական ներգաղթյալները:

Երկրի մյուս կողմում Ատլանտյան ափի նահանգները նույնպես նպաստեցին ներգաղթի դաշնային քաղաքականության ձևավորմանը: Գաղութատիրության ժամանակաշրջանից ի վեր Արևելյան ափի նահանգները կարգավորում էին ներգաղթը ուղևորների մասին իրենց նահանգային օրենքներով, որոնք արգելում էին անապահով օտարերկրացիների մուտքը, եթե նավատերերը որոշակի կանխավճար չէին վճարել այդ ուղևորներին պահելու համար: Աղքատների ներգաղթի նահանգային մակարդակով վերահսկողությունը 1880-ական թվականների սկզբին վերածվեց դաշնային քաղաքականության: 1882 թվականի օգոստոսին Կոնգրեսն ընդունեց Ներգաղթի օրենքը (Immigration Act)՝ մերժելով այն անձանց ընդունելությունը, ովքեր ի վիճակի չէին ապահովել իրենց այդ թվում՝ աղքատները, հոգեկան հիվանդություններ ունեցողները կամ դատապարտված հանցագործները, որոնք կարող էին սպառնալ ազգային կամ հասարակական անվտանգությանը:

1882 թվականից հետո բացառվող անձանց շրջանակները շարունակաբար ընդլայնվում էին: 1885 թվականին, ընդառաջելով ներգաղթյալ էժան աշխատուժի դեմ ամերիկացի աշխատավորների բողոքներին, Կոնգրեսը բացառվող անձանց շրջանակում ավելացրեց նաև օտարերկրյա աշխատողներին, որոնք արտագաղթում էին իրենց երկրներից ամերիկացի գործատուների հետ աշխատանքային պայմանագրերով: Վեց տարի անց դաշնային կառավարությունը բացառվող անձանց շրջանակում ընդգրկեց նաև այն մարդկանց, որոնք մեծ հավանականությամբ կդառնային բեռ պետության համար, ունեին խնամակալության կարիք, վարակիչ հիվանդություններ կամ բազմակնություն: Ավելին, Կոնգրեսը բացառվող անձանց բոլոր խմբերը դարձրեց արտաքսման ենթակա: 1903 թվականի օրենսդրական կարգավորմամբ՝ նրանք, ովքեր գաղափարաբանական սպառնալիք էին ամերիկյան հանրապետական ժողովրդավարության համար, այդ թվում՝ անարխիստները և սոցիալիստները, նույնպես դարձան ներգաղթի նոր սահմանափակումների ենթակա:

Ներգաղթի քննադատներից շատերը անհանգստությամբ էին արձագանքում ամերիկյան ժողովրդագրության փոփոխությանը: Ներգաղթյալների հոսքի ակունքը Հյուսիսային և Արևմտյան Եվրոպայից տեղափոխվեց Հարավային և Արևելյան Եվրոպա, ինչպես նաև ասիական տարածաշրջաններ: Այս «նոր ներգաղթյալներն» ավելի աղքատ էին, խոսում էին

այլ լեզուներով, և հիմնականում կաթոլիկներ կամ հրեաներ էին: Սպիտակ բողոքական ամերիկացիները սովորաբար նրանց համարում էին ստորադաս: Հարավային և Արևելյան Եվրոպայի ժողովուրդների՝ իտալացիների, հրեաների, սլավոնների և հույների աճող ներգաղթը ուղղակիորեն հանգեցրեց ավելի խիստ սահմանափակող միջոցներ կիրառելու կոչերին: 1907 թվականին ճապոնացի բանվորների ներգաղթը գործնականում կասեցվեց, երբ ամերիկյան և ճապոնական կառավարությունները ձեռք բերեցին այսպես կոչված Ջենթլմենական համաձայնություն (Gentlemen's Agreement), ըստ որի՝ Ճապոնիան դադարեցնում էր անձնագրեր տրամադրել բանվոր դասակարգի էմիգրանտներին: 1911 թվականին ԱՄՆ ներգաղթի հանձնաժողովը (U.S. Immigration Commission) իր 42 հատորանոց զեկույցում ընդգծում էր այս նոր ներգաղթյալներին ամերիկյան հասարակության մեջ ներառելու անհնարինությունը: Զեկույցում ընդգծվում էր նրանց ենթադրյալ բնածին թերարժեքությունը՝ պնդելով, որ նրանք էին Ամերիկայում աճող հասարակական խնդիրների պատճառները, ինչպիսիք էին աղքատությունը, հանցագործությունը, մարմնավաճառությունը և քաղաքական արմատականությունը:

Կաթոլիկության դեմ ներգաղթյալների հարձակման օրինակները փայլուն կերպով ներկայացնում են այն մարտահրավերները, որոնց բախվում էին ներգաղթյալների խմբերը Միացյալ Նահանգներում: 1900 թվականին, որպես Ամերիկայի ամենամեծ կրոնական համայնք, կաթոլիկները բախվեցին երկու փոխկապակցված մարտահրավերների, մեկը արտաքին, կապված բողոքական հակակաթոլիկության հետ, իսկ մյուսը ներքին՝ կապված ուժացման խնդրի հետ: Արտաքին առումով, Կաթոլիկ եկեղեցին և նրա անդամները մնացին «դրսի» կրոն մի պետության մեջ, որը շարունակում էր իրեն մշակութային և կրոնական առումով բողոքական համարել: Հակակաթոլիկ գրականության տարափն ու սկանդալային պատմությունները վատաբանում էին կաթոլիկներին: Բողոքականներից շատերը կասկածում էին, թե արդյոք կաթոլիկները երբևէ կարող են դառնալ հավատարիմ ամերիկացիներ, քանզի նրանք, իբր, առաջին հերթին նվիրված են Հռոմի պապին: Ներքին առումով, Ամերիկայի կաթոլիկները բախվեցին այն հարցին, որին պետք է պատասխաներ յուրաքանչյուր ներգաղթյալ խումբ՝ որքանով նրանք պետք է նմանվեին բնածին ամերիկացիներին: Այս հարցը հատկապես սուր էր, քանզի կաթոլիկ համայնքներն ընդգրկում էին տարբեր լեզուներ և սովորույթներ ունեցող բազմաթիվ էթնիկ խմբերի:

Կաթոլիկ հոգևորականներն այս իրավիճակի վերաբերյալ ունեին

տարբեր մոտեցումներ և տեսակետներ: Որոշ եպիսկոպոսներ հանդես էին գալիս անգլախոս հիմնական հոսքին արագ ձուլվելու օգտին: Այդ այսպես կոչված «ամերիկանիստները» հանդես էին գալիս «էթնիկ ծխական համայնքների» դադարեցման օգտին՝ համոզված լինելով, որ լեհերի, իտալացիների, գերմանացիների և կաթոլիկ այլ էթնիկ խմբերի համար առանձին եկեղեցական հավաքներ թույլ տալու ոչ պաշտոնական մոտեցումը մեկուսացնում էր և միայն հետաձգում էր ներգաղթյալների միաձուլումը ամերիկյան հասարակությանը: Նրանք ակնկալում էին, որ Կաթոլիկ եկեղեցին կարող էր բարգավաճել մի երկրում, որը պաշտպանում է կրոնական ազատությունը, եթե միայն ձուլվեին ամերիկյան հասարակությանը: Մինչդեռ ավելի պահպանողական հոգևորականները դեմ էին ձուլմանը: Թեև նրանք ընդունում էին, որ Միացյալ Նահանգները չունի պաշտոնական կրոն, նրանք կարծում էին, որ բողոքական պատկերացումները եկեղեցու և պետության տարանջատման ու անհատի անառակ ազատության մասին վտանգավոր էին կաթոլիկ հավատքի համար: Նրանք նաև էթնիկ ծխական համայնքներն ընկալում էին որպես ներգաղթյալների համայնքները պաշտպանող արդյունավետ ռազմավարություն և անհանգստանում էին, որ բողոքականները կօգտագործեն պետական դպրոցները կաթոլիկ հավատքի դեմ:

Ի վերջո, 1899 թվականին Կաթոլիկ եկեղեցու առաջնորդ Հռոմի պապ Լեո XIII-ը հատուկ նամակ-շրջաբերական ուղարկեց Միացյալ Նահանգների մի արքեպիսկոպոսի՝ հիշեցնելով ամերիկանիստներին, որ Կաթոլիկ եկեղեցին համաշխարհային միասնական մարմին է, և որ ամերիկյան ազատությունները կաթոլիկներին եկեղեցական ուսմունքները փոխելու ազատություն չեն տալիս: Ամերիկանիստները հերքեցին նման մտադրությունը, սակայն պահպանողական հոգևորականները պնդում էին, որ Հռոմի պապն անցել է իրենց կողմը: Կաթոլիկության և ամերիկյան կենսակերպի միջև լարվածությունը այնուամենայնիվ շարունակվելու էր XX դարում:


Ամերիկայի հանդիպումը կաթոլիկության հետ և կաթոլիկության հանդիպումը Ամերիկայի հետ վկայում էին բնածին և ներգաղթյալ ամերիկացիների միջև լարված հարաբերությունների և այն ավելի լայն գաղափարաբանությունների մասին, որոնք ամերիկացիներն օգտագործում էին ավելի լայն՝ կայսրության և ներգաղթյալների աշխարհում իրենց ինքնությունը վերահաստատելու համար:

Ամփոփենք: XIX դարի վերջին տասնամյակում սկսեց դրսևորվել

ամերիկյան իմպերիալիզմը: Ազատության կայսրություն հղացքը նոր մեկնաբանություն և բովանդակություն էր ստանում: Վերամեկնաբանվում էր Մոնրոյի դոկտրինը: Ամերիկյան գործարար շրջանները սկսում էին դուրս գալ իրենց ներքին շուկայից՝ արտասահմանում որոնելով հումքի նոր ռեսուրսներ և վաճառահանման նոր շուկաներ: Նրանց հատկապես հզոր և լավ կազմակերպված խմբերը, որոնք մեծ շահեր էին հետապնդում, սկսեցին ճնշում գործադրել Կոնգրեսի և նախագահի վարչակազմի վրա՝ ավելի ակտիվացնելով արտաքին քաղաքականությունը: Մասնավորապես, մենաշնորհային միավորումները կամ տրեստները, որոնց ձեռքում էր գտնվում մամուլը, ձևավորում էին որոշակի հասարակական կարծիք, և ամերիկյան հասարակության համոզմունքը Միացյալ Նահանգների քաղաքակրթող առաքելության վերաբերյալ ավելի հաստատուն էր դառնում:

Թեև XX դարասկզբի ամերիկյան իմպերիալիզմը համեմատաբար կարճ ժամանակաշրջան ընդգրկեց, նոր կայսերական օրինաչափությունները պետք է կրկնեին հին սովորույթները ընթացիկ դարում: Այս պատմական փուլում ԱՄՆ-ն որդեգրեց աշխարհում իր քաղաքական, ռազմական, մշակութային, տնտեսական և կրոնական ազդեցությունն ընդլայնելու, ինչպես նաև տարբեր ազգերի և ժողովուրդների նկատմամբ տարբեր աստիճանի վերահսկողություն իրականացնելու առաքելությունը: Ներգաղթի և կայսերականության շուրջ բանավեճերը ուշադրություն հրավիրեցին միջազգային և ներքին քաղաքականության փոխազդեցության և այն ուղիների վրա, որոնցով կայսերական գործողությունները, գործելակերպը և գաղափարներն ազդում էին և ազդվում էին ներքին հարցերից:

Իդեալիզմը, որը բնորոշ էր ամերիկյան մտակեցվածքին, անցնում էր իմպերիալիզմին և արդարացնում այն: Պատմաբան և աշխարհաքաղաքականության տեսաբան, ծովակալ Ալֆրեդ Թայեր Մահանը հիմնավորում է ծավալապաշտության անհրաժեշտությունն ու ռազմածովային նավատորմի և ռազմածովային հենակետերի ռազմավարական առաջնակարգ նշանակությունը՝ *մարինիզմի* տեսությունը: Նախագահ Ռուզվելտի հայացքները արտաքին քաղաքականության և կապույտ ջրային նավատորմի վերաբերյալ մեծապես համընկնում էին Մահանի հայացքներին: Ավանդական ամերիկյան հակազաղութային մտակեցվածքը ևս գտնվում էր այս քաղաքական հոսանքի հունում: Թեև Միացյալ Նահանգների կայսերական քաղաքականությունը գերիշխանություն ապահովելու համար ևս հիմնված էր ռազմական և տնտեսական գերազանցության վրա, այդուամենայնիվ Ամերիկյան չձևավորեց իմպերիալիզմի դարաշրջանին բնորոշ ավանդական խոշոր գաղութային կայսրություն:



Ten thousand miles from tip to tip.—Philadelphia Press.

«Տասը հազար մղոն ծայրից ծայր». 1898 թվականի քաղաքական պատահար, որը ներկայացնում է իսպանա-ամերիկյան պատերազմից հետո ամերիկյան գերիշխանության ընդլայնումը Պուերտո Ռիկոյից մինչև Ֆիլիպիններ. այն հակադրվում է վաղ շրջանի քարտեզին, որը ցույց է տալիս ԱՄՆ շատ ավելի փոքր տարածքը 1798 թվականին՝ ուղիղ 100 տարի առաջ:

ԳԼՈՒԽ 14

Առաջադիմական ժամանակաշրջանը

«Ոսկեզօծ ժամանակաշրջանի» բազմաթիվ խնդիրներ թվում էին անվերահսկելի, իսկ երկրի հասարակական կարգն ու կայունությունը՝ վտանգված: Ֆերմերներն ու աշխատավորները տասնամյակներ շարունակ քաղաքական պատերազմ էին մղում կապիտալիստների և քաղաքական պահպանողականների դեմ, բայց հետո XIX դարի վերջին միջին խավի ամերիկացիների նոր սերունդը դանդաղորեն մուտք գործեց հասարակական կյանք և հանդես եկավ նոր բարեփոխումների օգտին՝ ընտելացնելու «Ոսկեզօծ ժամանակաշրջանի» սողացող և վայրի աշխարհը:

Ամերիկյան հասարակության նոր միտումների նկատմամբ համատարած դժգոհությունը խթանեց Առաջադիմական ժամանակաշրջանը (Progressive Era), որն իր անվանումը ստացավ տարբեր ոլորտների բարեփոխումներին միտված առաջադիմական շարժումներից: Ամերիկացիների պատկերացումները շատ տարբեր էին այն հարցում, թե ինչ մոտեցումներ պետք է կիրառվեն երկրի զարգացման համար և ում շահերն են պահանջում ամենամեծ պաշտպանությունը: Բարեփոխիչները ձգտում էին մաքրել քաղաքականությունը, սևամորթ ամերիկացիները շարունակում էին իրենց երկարատև պայքարը քաղաքացիական իրավունքների համար, կանայք պահանջում էին ընտրական իրավունք՝ միաժամանակ պահանջելով ավելի հավասար դերակատարում հասարակության մեջ, իսկ աշխատավորները պահանջում էին ավելի բարձր աշխատավարձեր, աշխատաժամի կրճատում, ավելի ապահով աշխատատեղեր և արհմիությունների ճանաչում, որոնք կերաշխավորեին այդ իրավունքները: Անկախ նրանց նպատակներից՝ բարեփոխումները դարձան ժամանակաշրջանի կարգախոսը և նրանց ջանքերի հանրագումարը. ինչպիսին էլ լինեին նախնական մտադրությունները, կամ վերջնական արդյունքը, ժամանակաշրջանն առաջադիմական էր:

Համախմբում հանուն բարեփոխումների

1911 թվականին Մանհեթենի *Թրայանգլ* կարի ֆաբրիկայում հրդեհ բռնկվեց: Գործարանի դռները շղթայված էին, որպեսզի աշխատակիցները չկարողանան ընդմիջման դուրս գալ: Հրդեհի հետևանքով 146 աշխատող զոհվեց, 71-ը՝ տարբեր աստիճանի վնասվածքներ ստացավ: Նման աղետները հանգեցին ամերիկացիներին բարեփոխումների անհրաժեշտ

տության մասին, սակայն անհրաժեշտ էր համոզել քաղաքական գործիչներին տնտեսության մեջ պետական միջամտության նոր պարտավորություն ստանձնելու համար: Քաղաքական գործիչները, լրագրողները, գրողները, կրոնական առաջնորդները և աշխատավոր ակտիվիստները իրենց ձայնը բարձրացրին հանուն երկիրը բարեփոխումների ուղի մղելու անհրաժեշտության:

Բարեփոխիչները գրքերի և ամսագրերի զանգվածային տպագրության միջոցով հանրայնացրին ընչազուրկ խավերի վիճակը, խնդիրները և արդյունաբերական նոր կարգերին բնորոշ բազմաթիվ կոռուպցիոն գործընթացները: Լրագրողները, բացահայտելով գործարար շրջանակների վայրի գործելակերպը, կոռուպցիան և աղքատության հիմնախնդիրները, առաջացնում էին բարեփոխումների անհրաժեշտության հանրային պահանջ: Այս լրագրողները արժանացան Թեոդոր Ռուզվելտի հայտնի պիտակավորվմանը՝ «աղբահավաքներ» (“muckrakers”): Ամսագրերն ու թերթերը, օրինակ՝ «ՄրբՔլուրը» (*McClure*), մանրամասն բացահայտումներ էին ներկայացնում քաղաքական կոռուպցիայի և տնտեսական չարաշահումների մասին՝ հաստատելով ամերիկացիների կասկածները գողացված հարստության և քաղաքական կաշառակերություն վերաբերյալ:

Այս կերպ լրագրողները ձևավորեցին «Ոսկեզօծ ժամանակաշրջանի» անարդարության ժողովրդական ընկալումները: 1890 թ. Նյու Յորքում ֆոտոլրագրող Ջեյքոբ Ռիսը հրապարակեց «Ինչպես է ապրում մյուս կեսը» (*How the Other Half Lives*) աշխատանքը՝ քաղաքի աղքատ թաղամասերում կյանքի և աշխատանքի պայմանների մասին խիստ մեղադրական եզրակացությունը: Ռիսը ոչ միայն վառ կերպով նկարագրեց իր տեսած թշվառությունը, այլև այն փաստագրեց լուսանկարչությամբ՝ ընթերցողներին ներկայացնելով քաղաքային աղքատության իրական տեսարանը: Ռիսի աշխատանքը հանգեցրեց Նյու Յորքում և այլ քաղաքներում բնակարանային բարեփոխումներին և օգնեց արմատավորելու այն գաղափարը, որ հասարակությունը առնվազն որոշակի պատասխանատվություն է կրում աղքատությունը մեղմելու համար: 1906 թ. Ափթոն Սինքլերը հրատարակեց «Ջունգլիները» (*The Jungle*) վեպը: Թեև Սինքլերը մտադիր էր վեպում բացահայտել Չիկագոյի սպանդանոցների ու մսի փաթեթավորման արդյունաբերության մեջ աշխատուժի դաժան շահագործումը և այդպիսով աջակցել սոցիալիստական շարժմանը, աշխատանքը մեծապես նպաստեց սննդի արդյունաբերության աղմկահարույց գործընթացի բացահայտմանը: Քաղաքային սպառողներին սպասարկող սպանդանոցներում և սննդի պահեստներում տիրում էին հակասանիտարական վիճակ և

վտանգավոր պայմաններ: 1906 թ. Սինքլերի բացահայտումը հանգեցրեց Մսի տեսչության օրենքի (Meat Inspection Act) և Մաքուր սննդի և դեղորայքի օրենքի (Pure Food and Drug Act) ընդունմանը:

Ամերիկյան հասարակության հիմնախնդիրները բարձրաձայնում էին նաև մտավորականները: XIX դարի ամենահայտնի վեպերից մեկը՝ Էդվարդ Բելամիի «Ետ նայելով» (Looking Backward) պատմվածքն էր (1888 թ.), որը ներկայացնում էր ընկերային ներդաշնակության և տնտեսական բարգավաճման ուտոպիայի կառուցման տեսլականը: Բարեփոխված հասարակության մասին Բելամիի տեսլականը հիացրեց ընթերցողներին, ոգեշնչեց ստեղծելու հարյուրավոր ակումբներ և երիտասարդ ընթերցողներին մղեց դեպի բարեփոխումների ճանապարհ: Այն ստիպեց անթիվ ամերիկացիների կասկածի տակ առնել XIX դարի ամերիկյան կյանքի իրողությունները:

Ամերիկացիներին գործելու կոչ էին անում ոչ միայն գրողներն ու լրագրողները գրքերի ու ամսագրերի միջոցով, այլև քահանաներն ու աստվածաբանները: 1896 թ. Կանգաս նահանգի Տոպեկա քաղաքի միաբանության հոգևոր ծառայող Չարլզ Շելդոնը հրատարակեց «Նրա քայլերով. Ինչ կաներ Հիսուսը» (In His Steps: What Would Jesus Do?) աշխատությունը: Շելդոնի վեպը լայնորեն սպառվեց ոչ միայն իր պատմվածքի շնորհիվ, այլև այն պատճառով, որ գրքի սյուժեն կապված էր ամերիկյան կրոնը փոխակերպող նոր՝ սոցիալական ավետարանի (social gospel) շարժման հետ:

XIX դարի վերջին բողոքական քրիստոնեության շրջանակներում ի հայտ եկավ սոցիալական ավետարանի շարժումը: Այն ընդգծում էր հասարակության և ոչ թե պարզապես առանձին հոգիների փրկությունը հոգալու անհրաժեշտությունը: Ընտանիքի կամ համակեղեցական ընկերների մասին հոգալու փոխարեն սոցիալական ավետարանի գաղափարի պաշտպանները խրախուսում էին քրիստոնյաներին ներգրավվել հասարակական խնդիրների լուծմանը, մարտահրավեր նետել ընկերային, քաղաքական և տնտեսական կառույցներին, օգնել կարիքավորներին: Սոցիալական ավետարանականները ամերիկացիներին կոչ էին անում դիմակայել հասարակության մեղքերին: Արձագանքելով Ամերիկայում արդյունաբերական հեղափոխության զարգացումներին և քաղաքային տարածքներում մարդկանց աճող կենտրոնացմանը՝ իր հարակից ընկերային և տնտեսական խնդիրներով հանդերձ, սոցիալական ավետարանականներից ոմանք ավելի հեռուն գնացին՝ քարոզելով քրիստոնեական սոցիալիզմի գաղափարը:

Սոցիալական ավետարանի ամենանշանավոր ջատագովներից էր Ուոլթեր Ռաուշենբուշը, ով Ռոչեսթերի աստվածաբանական ճեմարանի շրջանավարտ էր: 1886 թվականին Ռաուշենբուշը դարձավ Նյու Յորքի *Դժոխքի խոհանոց* (Hell's Kitchen) կոչվող թաղամասի գերմանական բապտիստական եկեղեցու հոգևոր հովիվը, որտեղ նա բախվեց մոլեգնող հանցագործության և սաստիկ աղքատության խնդիրներին: Ռաուշենբուշը միացավ այլ բարեփոխիչների՝ ընտրելու քաղաքապետի նոր թեկնածուին: Նա կարծում էր, որ անհրաժեշտ է աստվածաբանական նոր շրջանակ, որը կարտացոլի հասարակության հիմնախնդիրները: Նա կիրառեց Հիսուսի «Աստծո թագավորություն» արտահայտությունը՝ պնդելով, որ այն ներառում է կյանքի բոլոր ոլորտները և հասարակության յուրաքանչյուր մաս դարձնում է ճշմարիտ քրիստոնյայի իրավասության ոլորտ: Ըստ այդմ՝ յուրաքանչյուր քրիստոնյա, լինի գործարար, քաղաքական գործիչ թե տնայնագործ, պետք է ինքն իրեն հարցնի, թե ինչ կարող է անել Աստծո թագավորությունը Երկրի վրա հաստատելու համար: Ռաուշենբուշի և սոցիալական ավետարանի այլ ջատագովների գրվածքները և գաղափարները մեծ ազդեցություն ունեցան XX դարի ամերիկյան հասարակական կյանքի վրա՝ անմիջականորեն խթանելով առաջադիմական բարեփոխումները:

Կանանց շարժումները

Բարեփոխումները նոր հնարավորություններ բացեցին կանանց ակտիվության համար ամերիկյան հասարակական կյանքում և նոր խթան հաղորդեցին կանանց ընտրական իրավունքի երկարատև պայքարին: Այս համատեքստում կարևոր դեր ունեին կանանց ակումբները և հասարակական կազմակերպությունները, որոնք նվիրված էին տարբեր նպատակների: Ոմանք կենտրոնացած էին մտավոր զարգացման վրա, իսկ մյուսները կարևորում էին բարեգործական գործունեությունը: Այս կազմակերպություններն աստիճանաբար ավելի էին սևեռվում համայնքային և մեծ քաղաքականության ոլորտներում կանանց դերի բարձրացման վրա:

1890-ական թվականներին ստեղծվեցին կանանց ազգային ակումբային ֆեդերացիաներ: Ընտրական իրավունքի և կանանց իրավունքների քարոզարշավներում հատկապես աչքի էին ընկնում 1890 թ. Նյու Յորքում ստեղծված Կանանց ակումբների ընդհանուր դաշնությունը (General Federation of Women's Clubs) և 1896 թ. Վաշինգտոնում հիմնադրված Գունավոր կանանց ազգային ասոցիացիան (National Association of Colored

Women), որոնցից երկուսում էլ գերակշռում էին վերին-միջին խավի կրթված հյուսիսային կանայք: Սակայն կանանց կազմակերպություններից քչերն էին ներառում տարբեր ռասաների, ինչը XIX դարի աֆրոամերիկացի և սպիտակամորթ կանանց միջև եղած տհաճ հարաբերությունների ժառանգությունն էր: Նախապաշարմունքների ազդեցությամբ շատ սպիտակամորթ կին գործիչներ արգելում էին աֆրոամերիկացի կանանց ընդգրկումը:

Բազմաթիվ կանայք աշխատում էին եկեղեցիների և բարոյական բարեփոխումների կազմակերպությունների շրջանակներում: 1874 թ. հիմնադրվեց Կանանց քրիստոնեական ժուժկալության միությունը (The Woman's Christian Temperance Union), որը նվիրված էր հարբեցողության չարիքի դեմ պայքարին: Սակայն հետագայում՝ 1879-1898 թթ., Ֆրենսիս Ուիլարդն աշխուժացրեց կազմակերպությունը՝ այն վերածելով ազգային քաղաքական կազմակերպության և հետամուտ լինելով բոլոր ողջամիտ բարեփոխումներին, որոնք կբարելավեին հասարակական բարեկեցությունը և կանանց իրավունքները:

Ամերիկացի առաջադեմ բարեփոխիչներից շատերը ակոհովիզվելով համարում էին հասարակական չարիք և հիվանդություն՝ այն կապելով ընտանեկան բռնության, աղքատության, հանցագործության և հիվանդությունների հետ: 1912 թ. լույս տեսած Հակասալոնային լիգայի տարեգրքում (Anti-Saloon League Yearbook) ներկայացված էին գծապատկերներ, որոնք ամուսնալուծությունների թվի աճը պայմանավորում էին ակոհովի օգտագործման ծավալների աճով: Կանանց քրիստոնեական ժուժկալության միությունը ակոհովն անվանում էր «տուն քանդող»: Ավելին, շատերը ակոհովի չարաշահումը կապում էին քաղաքային ներգաղթյալների հետ՝ պիտակավորելով ներգաղթյալներին, կաթոլիկներին և բանվոր դասակարգերին խմիչքի դեմ իրենց պայքարում: Բարեփոխիչները կարծում էին, որ «թունդ խմիչքի» արգելքը կբերի հասարակական առաջընթաց, կնվազեցնի բանտերի և հոգեբուժարանների անհրաժեշտությունը, կազատի կանանց և երեխաներին ընտանեկան բռնությունից և կստեղծի ավելի արդար, առաջադեմ հասարակություն:

Կին բարեփոխիչներից ամենանշանավորը թերևս Ջեյն Ադամսն էր, ով իր իդեալիստական և նորարարական մոտեցումներով միջոցներ էր փնտրում աշխարհին ավելի լավը դարձնելու համար: Ադամսը կարծում էր, որ նույնիսկ կրթված և ունևոր կանայք չունեն գործնական ռազմավարություններ՝ առօրյա բարեփոխումներ իրականացնելու: Ուստի նա բազմամյա «մեծ շրջագայություն» ձեռնարկեց դեպի Եվրոպա: 1887 թ.

Լոնդոնի *Թոյնթի Հոլ* այցելելուց հետո Ադամսը վերադարձավ Միացյալ Նահանգներ և 1889 թ. էլեն Գեյթս Սթարի հետ Չիկագոյում հիմնեց *Հալ Հաուսը* (Hull House): *Հալ Հաուսի* աշխատակիցները օգնում էին ներգաղթյալներին և հարևանության բնակիչներին՝ կազմակերպելով դասընթացներ ծնողների համար, մանկապարտեզներ և ակումբներ երեխաների համար, ընկերային և մշակութային միջոցառումներ համայնքի համար: Ֆլորենս Բեյլին, ով 1891-1899 թթ. գործում էր Հալ Հաուսում, համոզեց Ադամսին անցնելու հասարակական բարեփոխումների տիրույթ: Կազմակերպությունը քաղաքային աղքատության և արդյունաբերականացման հետևանքով առաջացած պայմաններն անվանում էր «հասարակական հանցագործություն»: Ադամսը սկսեց ճնշում գործադրել քաղաքական գործիչների վրա: Բեյլին և Ադամսը միասին խնդրագիր հղեցին օրենսդիրներին՝ ընդունելու այսպես կոչված «հակաքրտնաչար օրենսդրություն» (antisweatshop legislation), որը պետք է սահմանափակեր կանանց և երեխաների աշխատանքային ժամերը՝ դարձնելով օրական մինչև 8 ժամ: Այնուամենայնիվ, Ադամսը նաև նախագգուշացնում էր աշխատավորական շարժմանը գերծ մնալ «դասակարգային պատերազմի մշտական գայթակղությունից»: Ադամսը, ինչպես շատ բարեփոխիչներ, կողմ էր հարուստների ու աղքատների, ղեկավարների ու աշխատավորների համագործակցությանը:

1912 թվականին Ադամսը դարձավ առաջին կինը, ով հանդես եկավ ԱՄՆ նախագահի թեկնածուի առաջադրման ելույթով խոշոր կուսակցության համագումարի ժամանակ, երբ նա պաշտպանեց Թեոդոր Ռուզվելտի թեկնածության առաջադրումը Առաջադիմական կուսակցության կողմից: Հասարակական բարեփոխումների և կանանց իրավունքների համար նրա արշավները վերաճեցին նաև հակաիմպերիալիստական պայքարի: Իսպանա-ամերիկյան պատերազմի ժամանակ, Հակաիմպերիալիստական լիգայում իր աշխատանքից սկսած՝ Ադամսը միլիտարիզմը դիտում էր որպես բարեփոխումներից հասարակական ուշադրության և ռեսուրսների շեղում: 1907 թ. Ադամսը հեղինակեց «Խաղաղության նոր իդեալներ» (Newer Ideals of Peace) գիրքը, որը շատերի համար պետք է դառնար *պսացիֆիզմի*՝ խաղաղարարության իմաստասիրական հիմքը: Նա Առաջին համաշխարհային պատերազմին ԱՄՆ մասնակցության նշանավոր հակառակորդներից էր: 1931 թ. Ադամսն արժանացավ Խաղաղության Նոբելյան մրցանակի:

Կանանց շարժումների առանցքային ուղղություններից էր ընտրական իրավունքի համար պայքարը: Այս առումով նշանակալի ձեռքբերումներ

եղան Արևմուտքում: Մինչև 1911 թվականը արևմտյան վեց նահանգներ իրենց սահմանադրություններում համապատասխան փոփոխություններ կատարեցին ընտրական իրավունքի վերաբերյալ: Կանանց ընտրական իրավունքը, որպես կանոն, կապված էր բարեփոխումների ավելի լայն շրջանակի հետ: Ընտրական իրավունքի կողմնակիցներից շատերը պնդում էին, որ կանանց ձայներն անհրաժեշտ էին քաղաքականությունը մաքրելու և հասարակական չարիքների դեմ պայքարելու համար: Աշխատավոր դասակարգի և միջին ու բարձր դասի կանանց դաշինքը 1903 թ. կազմակերպեց Կանանց արհմիության լիգան (Women's Trade Union League), որը Ամերիկացի կանանց ընտրական իրավունքի ազգային ասոցիացիա (National American Woman Suffrage Association) հետ պայքար սկսեց կանանց ընտրական իրավունքի հաստատման համար: Կանանց արհմիության լիգայի անդամները քվեարկության իրավունքը դիտարկում էին որպես իրենց տնտեսական շահերն առաջ մղելու և աշխատավոր դասակարգի կանանց հասարակական կշիռը բարձրացնելու միջոց: Ընտրական իրավունքի կին պաշտպաններից շատերը, նույնիսկ ոչ հարավցի, պնդում էին, որ սպիտակամորթ կանանց ձայներն անհրաժեշտ են սպիտակների գերակայությունը պահպանելու համար: Բազմաթիվ սպիտակ ամերիկուհիներ պնդում էին, որ վերին և միջին դասի սպիտակամորթ կանանց ընտրական իրավունքների պաշտպանությունը կօգնի հակակշռելու սևամորթ ընտրողներին:

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին Ամերիկացի կանանց ընտրական իրավունքի ազգային ասոցիացիա մշակեց երկակի ռազմավարություն, որը կենտրոնացած էր ընտրական իրավունքի նահանգային օրենքներ ընդունելու և ԱՄՆ Սահմանադրության մեջ համապատասխան փոփոխությունը վավերացնելու վրա: Միննույն ժամանակ, ասպարեզում հայտնվեց նոր, առավել արմատական ու ռազմատենչ ընտրական իրավունքի կազմակերպություն՝ Էլիս Փոլի գլխավորած Կանանց ազգային կուսակցությունը (National Woman's Party), որը դուրս եկավ փողոց՝ կազմակերպելով բազմահազարանոց երթեր ու բողոքի ցույցեր և պահանջելով ձայնի իրավունք: 1917 թվականի հունվարից սկսած՝ Կանանց ազգային կուսակցության անդամները սկսեցին բողոքի նստացույցեր անցկացնել Սպիտակ տան դիմաց, որը հանգեցրեց ավելի քան 150 կանանց ձերբակալության և բանտարկության: 1918 թվականի հունվարին նախագահ Վուդրո Վիլսոնը իր աջակցությունը հայտնեց կանանց ընտրական իրավունքի սահմանադրական փոփոխությանը: Այսպիսով, 1920 թվականին ընդունվեց ԱՄՆ Սահմանադրության Տասնիններորդ

ուղղումը (Nineteenth Amendment), որը հաստատում էր կանանց ընտրական իրավունքը:

Մենաշնորհային միավորումների խնդիրը

Առաջադիմական ժամանակաշրջանը սահմանող բարեփոխիչները կարծում էին, որ հարստության անհավասարությունը քայքայում է ժողովրդավարությունը, և բարեփոխիչները պետք է ժողովրդի համար ետ նվաճեին հարուստ մենաշնորհային միավորումների՝ թրասթների (տրեստ (“trusts”)) կողմից յուրացված իշխանությունը: XIX դարի վերջին և XX դարի սկզբին տրեստը մենաշնորհային միավորում էր կամ կարտել, որը մարմնավորում էր «Ոսկեգոծ» և «Առաջադիմական» ժամանակաշրջանների խոշոր կորպորացիաների գործունեությունը, որոնք համաձայնագրեր էին կնքել՝ օրինական կամ այլ եղանակով, կամ համախմբումներ էին ստեղծել՝ մեկ կենտրոնից որոշակի արտադրանքի կամ արդյունաբերության նկատմամբ բացառիկ վերահսկողություն իրականացնելու և շուկայում գերիշխելու համար:

1870-1880-ականների արագ արդյունաբերականացումը, տեխնոլոգիական առաջընթացը և քաղաքների աճը մեծ փոփոխություններ բերեցին գործարարության կառուցվածքի մեջ: Երկրորդ արդյունաբերական հեղափոխությունը հնարավոր դարձավ մատչելի բնական ռեսուրսների, զանգվածային ներգաղթի ու աշխատուժի առաջարկի աճի շնորհիվ, կապիտալի կուտակման աճի, նոր տնտեսավարող միավորումների, արտադրության նոր ռազմավարությունների և աճող պահանջարկի ազգային շուկայի միջոցով: Սովորաբար հայտարարվում էր, որ այդ ամենը դաշնային կառավարության «ձեռքերը հեռու» պահելու կամ չմիջամտելու (*laissez faire*) սկզբունքի տնտեսական քաղաքականության բնական արդյունքն է: Փաստարկվում էր, որ չկարգավորված գործարար միջավայրը թույլ է տալիս մեծացնել խոշոր տրեստները: Մասնավորապես, այդպես եղավ Էնդրյու Քարնեգիի *Քարնեգի պողպատ* (Carnegie Steel) ընկերության պարագայում, որը հետագայում համախմբվեց Ջ. Փ. Մորգանի և այլ արտադրողների հետ՝ ձևավորելով *ԱՄՆ պողպատ կորպորացիան* (U.S. Steel Corporation), ինչպես նաև Ջոն Դ. Ռոքֆելերի *Սրահայարայ օյլ* ընկերության (Standard Oil Company) պարագայում: Յուրաքանչյուրը ցուցադրեց ուղղահայաց և հորիզոնական միասնացման ռազմավարությունները, որոնք ընդհանուր էին նոր տրեստների՝ մենաշնորհային միավորումների համար: Քարնեգին առաջին անգամ օգտագործեց ուղղահայաց ինտեգրումը՝ վերահսկելով տնտեսավարման բոլոր փուլերը (հումք,

փոխադրում, արտադրություն և բաշխում), իսկ Ռոքֆելերը հավատարիմ մնաց հորիզոնական ինտեգրմանը՝ գնելով մրցակից նավթավերամշակման գործարանները: Քննադատները պնդում էին, որ շուկայում գերիշխող դիրք ունենալուց հետո տրեստները կարող էին արհեստականորեն ուռճացնել գները, ճնշել մրցակիցներին և կաշառել քաղաքական գործիչներին:

1897-1904 թվականներին ավելի քան 4000 ընկերություններ միավորվեցին 257 կորպորատիվ ընկերությունների մեջ: 1904 թվականի դրությամբ ընդհանուր առմամբ 318 տրեստներ տնօրինում էին ԱՄՆ-ի արտադրական ակտիվների 40%-ը՝ 7 միլիարդ դոլար ընդհանուր կապիտալով, որը 7 անգամ գերազանցում էր ԱՄՆ պետական պարտքը: Սա մենաշնորհային միավորումների ժամանակաշրջանն էր: Միաձուլումները և այնպիսի մեծահարուստների ագրեսիվ գործարար քաղաքականությունը, ինչպիսիք էին Քարնեգին և Ռոքֆելերը, նրանց բարձրացրեցին տնտեսական բուրգի գագաթը՝ անվանարկելով իբրև ավազակ բարոններ (robber barons): Տնտեսական մրցակցության, աշխատավորների շահագործման և քաղաքականության կոռումպացվածությունը ծնեց կոշտ ընդդիմություն, որն առաջ մղեց նոր կանոնակարգերի մշակումը և սահմանումը՝ մենաշնորհների իշխանությունը զսպելու համար: Մեծ կորպորացիաները դարձան բարեփոխիչների հիմնական թիրախը:

Խոշոր գործարարությունը սննդի արդյունաբերության, երկաթուղու, հեռագրային գծերի, նավթի, պողպատի արդյունաբերության կամ այլ ոլորտներում նոր խնդիրներ առաջացրեց ամերիկյան իրավական համակարգի համար: Նախքան Քաղաքացիական պատերազմը ձեռնարկությունների մեծ մասը գործում էր որևէ մեկ նահանգում: Նրանք կարող էին ապրանքներ առաքել այլ նահանգներ կամ արտահանել այլ երկրներ, բայց սովորաբար գրասենյակներ և գործարաններ ունեին միայն մեկ նահանգում: Առանձին նահանգներն էին կարգավորում իրենց արդյունաբերությունը և առևտուրը: Սակայն այժմ լայնածավալ երկաթուղային գծերը հատում էին բազմաթիվ նահանգային սահմաններ և միավորում ողջ երկիրը, և զանգվածային արտադրական նոր կորպորացիաները սկսել էին արդյունավետ գործել ամբողջ երկրում, ինչը հարցեր էր առաջացնում առ այն, թե ում է պատկանում նման գործարարությունը կարգավորելու իրավասությունը: 1870-ականներին շատ նահանգներ ընդունեցին օրենքներ՝ զսպելու հսկայական նոր կորպորացիաների աճող իշխանությունը:

Միջին Արևմուտքում ֆերմերները ձևավորեցին կազմակերպությունների ցանց, որոնք մասամբ քաղաքական ճնշման խումբ էին, մասամբ՝

ընկերային և փոխօգնության միություններ: Նրանք միասին առաջ մղեցին այսպես կոչված *Գրեյնջեր* (Granger) օրենքները, որոնք կարգավորում էին երկաթուղիները և այլ բնույթի նոր ընկերությունները: Երկաթուղիները և մյուսները ընդդիմացան այս կանոնակարգերին, քանզի դրանք սահմանափակում էին շահույթը և տնտեսավարման դժվարություններ էին առաջացնում տարբեր նահանգների կարգավորիչ զանազան օրենքների չափանիշների անհամապատասխանության պատճառով: 1877 թվականին ԱՄՆ Գերագույն դատարանը հաստատեց այս օրենքները մի շարք վճիռներով՝ եզրակացնելով, որ այնպիսի դեպքերում, ինչպիսիք էին *Մյունն ընդդեմ Իլինոյսի* (Munn v. Illinois) և *Սթոունն ընդդեմ Վիսկոնսինի* (Stone v. Wisconsin), երկաթուղիները և նման չափի այլ ընկերությունները անպայմանորեն ազդում են հանրային շահերի վրա և, հետևաբար, կարող են կարգավորվել առանձին նահանգների կողմից:

Հետագա որոշումները, սակայն, հաստատեցին, որ միայն դաշնային կառավարությունը կարող է սահմանադրորեն կարգավորել միջնահանգային առևտուրը և երկրի մասշտաբով գործող գործարարությունը: Եվ քանի որ ավելի ու ավելի շատ իշխանություն, կապիտալ և վաճառահանման շուկայի մասնաբաժիններ էին կուտակվում խոշոր կորպորացիաների ներքո, տնտեսության կարգավորման պարտականությունն անցնում էր դաշնային կառավարությանը: 1887 թ. Կոնգրեսն ընդունեց Միջնահանգային առևտրի օրենքը (Interstate Commerce Act), որով ստեղծվեց Միջնահանգային առևտրի հանձնաժողովը (Interstate Commerce Commission)՝ խտրական և գիշատիչ գնագոյացման գործողությունները դադարեցնելու համար: 1890 թ. Շերմանի հակամենաշնորհային օրենքը (Sherman Anti-Trust Act) նպատակ ուներ սահմանափակել խոշոր տնտեսավարողների հակամրցակցային քաղաքականությունները, որոնք հաստատութենականացված էին կարտելներում և մենաշնորհային կորպորացիաներում: Այնտեղ մենաշնորհային միավորումները կամ կազմակերպությունները, որոնք դավադրաբար կաշկանդում էին առևտուրը կամ մենաշնորհում էին առևտրի որևէ մասը, հայտարարվում էին անօրինական: Շերմանի հակամենաշնորհային օրենքը ոչ բոլոր մենաշնորհներն էր հայտարարում անօրինական. միայն նրանք, որոնք «անհիմն կերպով» խեղդում էին ազատ առևտուրը: Դատարանները, սակայն, օգտվում էին օրենքի անորոշ լեզվից, և օրենքի գործադրումը հակառակ արդյունքներ տվեց՝ այն շահարկվեց և օգտագործվեց արհմիությունների աճող իշխանությունը սահմանափակելու համար: Միայն 1914 թ. Բլեյթոնի հակամենաշնորհային օրենքի (Clayton Anti-Trust Act) ընդունմամբ Կոնգրեսը փակեց այդ

օրենսդրական բացերը:

Հակամենաշնորհային արշավը և «թրասթների տապալման» (“trust busting”) քաղաքականությունը նոր թափ և նշանակություն ստացան բարեփոխումների ջատագով հանրապետական Թեոդոր Ռուզվելտի նախագահության օրոք: Ռուզվելտն իր պաշտոնավարումը սկսեց 1901 թվականին Ուիլյամ Մակ-Քինլիի մահից հետո՝ դառնալով ԱՄՆ-ի ամենաժողովրդական նախագահներից մեկը: Ռուզվելտն իր նախագահությունը պատկերացնում էր որպես միջնորդ հակառակորդ ուժերի՝ արհմիությունների և խոշոր գործարարության միջև: Թեև ինքն էլ մեծահարուստ էր, սակայն առաջ մղեց հակամենաշնորհային օրենսդրությունը և կանոնակարգերը՝ պնդելով, որ չի կարելի ապավինել դատարաններին տրեստները կազմաքանդելու համար: Ռուզվելտը նաև օգտագործում էր սեփական բարոյական դատողությունը՝ որոշելու, թե որ մենաշնորհները պետք է քանդել: Նա կարծում էր, որ կան լավ և վատ տրեստներ, անհրաժեշտ մենաշնորհներ և կոռումպացված վսաստուներ: Թեպետ տրեստներ կործանողի նրա համբավը խիստ չափազանցված էր, նա առաջին խոշոր պետական և քաղաքական գործիչն էր, ով հանձն առավ հակամենաշնորհային քաղաքականությունը:

Ռուզվելտը հայտարարում էր. «Մեծ կորպորացիաները, որոնց մենք բավականին թույլ բնորոշմամբ անվանում ենք թրասթներ, պետության արարածներն են, ուստի պետությունը ոչ միայն իրավունք ունի վերահսկելու դրանք, այլև պարտավոր է վերահսկել դրանք ամենուր, որտեղ նման վերահսկողության անհրաժեշտություն կա»: Նրա առաջին թիրախը Արժեթղթերի հյուսիսային ընկերությունն (Northern Securities Company) էր՝ «հոլդինգ», որը մի քանի հարուստ բանկիրներ, այդ թվում՝ մեծահարուստ Ջ. Փ. Մորգանը, օգտագործում էին՝ պահելու և կառավարելու ԱՄՆ հյուսիս-արևմուտքի բոլոր խոշոր երկաթուղային ընկերությունների վերահսկիչ բաժնետոմսերը: Հոլդինգ-տրեստներն ի հայտ էին եկել իբրև Շերմանի հակամենաշնորհային օրենքը շրջանցելու միջոց. վերահսկելով բաժնետոմսերի մեծ մասը, այլ ոչ թե ընկերությունների ղեկավարումը՝ Մորգանը և նրա համախոհները փորձում էին պնդել, որ դա մենաշնորհ չէ: Ռուզվելտի վարչակազմը դատի տվեց և հաղթեց դատարանում, և 1904 թվականին Արժեթղթերի հյուսիսային ընկերությանը հրամայվեց լուծարվել առանձին մրցակցային ընկերությունների մեջ: Երկու տարի անց՝ 1906 թվականին, Ռուզվելտը ստորագրեց Հեփբուրնի օրենքը (Hepburn Act), որը թույլ տվեց Միջնահանգային առևտրի հանձնաժողովին լավագույն փորձի կիրառմամբ կարգավորել և սահմանել ողջամիտ դրույքաչափեր

երկաթուղու համար:

Ռուզվելտն ավելի շատ շահագրգռված էր խոշոր կորպորացիաների և մենաշնորհային միավորումների կարգավորմամբ, քան դրանց բաժանմամբ կամ կազմաքանդմամբ: Բացի այդ, խոշոր գործարարության հարցերում դատարանները դանդաղ էին գործում ու անկանխատեսելի էին: Այնուամենայնիվ, 1908 թվականից հետո Ռուզվելտի իրավահաջորդը՝ նախագահ Ուիլյամ Հովարդ Թաֆթը, հաստատական էր տրեստների տապալումը դատարանների միջոցով իրականացնելու հարցում և իր պաշտոնավարման չորս տարում ավելի քան կրկնապատկեց Ռուզվելտի կառավարման յոթ տարիներին կազմաքանդված մենաշնորհների թիվը: Թաֆթը փորձում էր կազմաքանդել նաև Մորգանի *ԱՄՆ պողպատը*՝ աշխարհում առաջին միլիարդ դոլար արժողությամբ կորպորացիան, որը ձևավորվել էր ամերիկյան պողպատի գրեթե բոլոր խոշոր արտադրողների համախմբումից:

1912 թվականի նախագահական ընտրություններում գերակշռում էին տրեստների տապալման և մենաշնորհային միավորումների հարցերի կարգավորման վերաբերյալ նախընտրական ծրագրերը: Երբ Հանրապետական կուսակցությունը մերժեց Ռուզվելտի վերադարձը քաղաքականություն և վերահաստատեց գործող նախագահ Թաֆթի թեկնածությունը, Ռուզվելտը հեռացավ կուսակցությունից և ստեղծեց իր նախընտրական դաշինքը՝ Առաջադիմական կուսակցությունը (Progressive Party), որը հայտնի էր նաև «Բուլ Մուս» կուսակցություն («Bull Moose» Party) անվամբ: Եթե Թաֆթը համապարփակ տեսակետ ուներ մենաշնորհների անօրինականության վերաբերյալ, ապա Ռուզվելտն առաջարկեց «Նոր ազգայնականություն» (New Nationalism) ծրագիրը, որն ընդգծում էր արդեն գոյություն ունեցող կորպորացիաների կարգավորման, գործունեության կանոնակարգման կամ տնտեսության վրա դաշնային իշխանության ընդլայնման կարևորությունը: Այն ենթադրում էր դասական ազատականությունից հրաժարում. պետությանը պետք է հատկացվեր հիմնական կարգավորիչ դեր հասարակական կյանքում, նաև տնտեսական հարաբերություններում: Հակառակ դրա՝ Վուդրո Վիլսոնը՝ Դեմոկրատական կուսակցության նախագահի թեկնածուն, իր «Նոր ազատություն» (New Freedom) ծրագրում ընդգծում էր ոչ թե տրեստների տապալման կամ դրանց դաշնային կարգավորման անհրաժեշտությունը, այլ մանր ու միջին գործարարության խթանումը, որպեսզի առանձին ընկերություններ կարողանային մեծացնել իրենց մրցակցային հնարավորությունները:

Այնուամենայնիվ, ընտրություններում հաղթելուց հետո նախագահ

Վիլսոնն ավելի մոտեցավ Ռուզվելտի դիրքորոշմանը՝ ստորագրելով 1914 թ. Քլեյթոնի հակամենաշնորհային օրենքը: Այն էապես ընդլայնեց Շերմանի օրենքը՝ կարգավորելով ընկերությունների միաձուլումները, գների խտրականությունը և պաշտպանելով աշխատավորների հասանելիությունը գործատուների հետ հավաքական բանակցություններին և հարակից մարտավարություններին՝ պիկետների, բոյկոտների և բողոքի ցույցերի տեսքով: Հետագայում Կոնգրեսը ստեղծեց Առևտրի դաշնային հանձնաժողովը (Federal Trade Commission)՝ ապահովելու Քլեյթոնի օրենքի կիրարկումը: Թեև երեք նախագահները՝ Ռուզվելտը, Թաֆթը և Վիլսոնը, առաջ էին մղում հակամենաշնորհային օրենքների մշակումն ու կիրարկումը, նրանց գործադրած ջանքերն անհավասար էին: Տրեստների տապալումը նախ և առաջ աշխատավորների, ֆերմերների և առաջադեմ մտավորականության կողմից քաղաքական գործիչների վրա գործադրվող քաղաքական ճնշման արդյունք էր, որոնք հասարակության ուշադրությունը սևեռեցին ամերիկացիների կենսական խնդիրների և տրեստների ու կորպորատիվ կապիտալի ամենօրյա ազդեցության վրա:

Առաջադիմական բնապահպանությունը

Արդյունաբերական հեղափոխության և արդյունաբերական կապիտալիզմի հետևանքով շրջակա միջավայրի ոչնչացման չափերը ևս արդյունաբերական ծավալների էին և աննախադեպ մարդկության պատմության մեջ: Բիզնեսների մասնագիտացված որսորդական արշավախմբերը գրեթե վերացրել էին մի ամբողջ կենդանատեսակ, արդյունաբերական անտառահատման ընկերությունները մերկացրել էին ամբողջական անտառներ, իսկ քիմիական արդյունաբերության գործարաններն աղտոտում էին ամբողջական ջրավազաններ և էկոհամակարգեր: Ամերիկյան տնտեսական զարգացման և արդյունաբերականացման դեպի արևմուտք շարժընթացին զուգահեռ՝ բարեփոխիչները սկսեցին հանձն առնել շրջակա միջավայրի պաշտպանության քայլեր:

Այս համատեքստում իբրև երկու մրցակցող ռազմավարություններ էին հանդես գալիս պաշտպանումը (preservation) և պահպանումը (conservation), որոնց ջատագովները առաջադիմական ժամանակաշրջանում պայքարում էին շրջակա միջավայրի բարեփոխիչների շրջանում գերակայության համար: Այս երկու մոտեցումների միջև լարվածությունը բյուրեղացավ Կալիֆորնիայի Հեթչ Հեթչի հովտում (Hetch Hetchy Valley) ամբարտակի կառուցման առաջարկի շուրջ բանավեճում, որը նախատես-

ված էր Սան Ֆրանցիսկոն ջրով ապահովելու համար: Ըստ ճարտարապետների՝ վայրը, որտեղ Թուոլում գետը հոսում էր Հեթչ Հեթչիի միջով, ջրամբարի կառուցման համար կատարյալ էր: Նախագիծը առաջարկվել էր 1880-ականներին, բայց XX դարի սկզբին նոր թափ էր ստացել: Սակայն հովիտը գտնվում էր Յոսեմիտ (Yosemite) ազգային պարկի տարածքում, որին ազգային պարկի կարգավիճակ էր շնորհվել 1890 թվականին, թեև անհրաժեշտ հողատարածքն առանձնացվել էր դեռևս 1864 թվականին նախագահ Լինքոլնի կողմից: Հեթչ Հեթչիի շուրջ բանավեճը բացահայտեց երկու տարբեր դիրքորոշումներ հովտի բնապահպանական արժեքի և հանրային հողերի նշանակության վերաբերյալ:

Բնագետ, գրող և «Սիերա» ակումբի հիմնադիր Ջոն Մյուիրը կոչ էր անում պաշտպանելու հովիտը իր անաղարտ վիճակում: Ամերիկյան անտառանտեսության հիմնադիրներից և անտառների դաշնային կառավարման ներկայացուցիչ Գիֆորդ Փինչոտն ընդգծում էր, որ հողի և նրա բնական պաշարների պահպանման նպատակը պետք է լինի այն առավել շատ մարդկանց ծառայեցնելը: Ի տարբերություն նրա՝ Մյուիրը ավելի լայն պատկերացում ուներ մարդկանց կարիքների մասին՝ գրելով, որ «բոլորն էլ կարիք ունեն գեղեցկության, ինչպես և հացի»: Այս բանավեճի փաստարկները բացահայտում էին բնապահպանական մտքի հիմնական տարբերությունները. Մյուիրը, ներկայացնելով բնության պաշտպանների ճամբարը, հանդես էր գալիս անաղարտ բնության պաշտպանության օգտին՝ ելնելով դրանց գեղագիտական և հոգևոր արժեքից: Մյուս կողմից՝ Փինչոտը առաջնորդում էր պահպանման ուղղությունը, որը, ըստ էության, բնապահպանական ուտիլիտարիզմ՝ օգտապաշտություն էր և ընդգծում էր առկա ռեսուրսների արդյունավետ օգտագործման կարևորությունը՝ պլանավորման, վերահսկման և «թափոնների կանխարգելման» միջոցով: Հեթչ Հեթչիի պարագայում հաղթեց երկրորդ մոտեցումը: 1913 թվականին Կոնգրեսը հաստատեց նախագիծը: Ջրամբարը կառուցվեց ի շահ Սան Ֆրանցիսկոյի բնակիչների: Այսպիսով, պահպանման քաղաքականությունն այդժամ ավելի շահութաբեր էր, քան պաշտպանության ռազմավարությունը:

Վայրի բնության պաշտպանության նպատակով շատ նահանգներ ընդունեցին օրենքներ, որոնք կանոնակարգում էին որսը: Փենսիլվանիայում տեղական, այսպես կոչված, խաղի օրենքները (game laws) ներառում էին ոչ քաղաքացիների հրագենի թույլտվության պահանջը, կիրակի օրերին որսի արգելքը, ինչպես նաև երգող թռչունների վրա կրակելու արգելքը: Քննադատները նշում էին, որ այս օրենքները անհամաչափորեն էին ազ-

դում իտալացի ներգաղթյալների վրա, քանզի իտալացիները հաճախ որսում էին երգեցիկ թռչուններ իրենց ապրուստի համար. աշխատում էին հանքերում ցածր աշխատավարձով ամեն օր, բացի կիրակի օրերից, և չափազանց աղքատ էին թույլտվություններ ձեռք բերելու կամ տուգանքները վճարելու համար: Բնապահպանական այլ օրենքներ էլ սահմանում էին այնպիսի վճարներ կամ կարգավորող պահանջներ բնական պաշարների օգտագործման համար, որոնցից կարող էին օգտվել միայն խոշոր ձեռնարկություններն ու ամենահարուստ անհատները:

Սակայն Առաջադիմական Ժամանակաշրջանի բնապահպանության քաղաքականությունն ավելին էր, քան ամերիկյան հանրային հողերի կառավարումը: Ի վերջո, բարեփոխիչները, որոնք զբաղվում էին քաղաքային աղքատների խնդիրներով, նաև բնապահպանական աշխատանք էին կատարում: Օրինակ՝ Ջեյն Ադամսը և Ֆլորենս Բեյլին կենտրոնացած էին առողջապահության և սանիտարական պայմանների բարելավման հարցերի վրա, իսկ աշխատանքային պայմաններով մտահոգ գործիչները, հատկապես դոկտոր Էլիս Համիլթոնը, զբաղվում էին ինչպես աշխատավայրի վտանգների, այնպես էլ աշխատանքային և մարմնական վնասվածքների հարցերով: Առաջադեմ գործիչների՝ համայնքային մակարդակով հանրային ծառայություններ մատուցելու հանձնառությունը ենթադրում էր համայնքային կառույցների ավելի շատ համակարգում և վերահսկողություն հանրային առողջության, թափոնների կառավարման և նույնիսկ խաղահրապարակների ու քաղաքային զբոսայգիների հարցերում: «Երկրի կյանք» (Country Life) շարժումը, որը գլխավորում էր Լիբերթի Հայդ Բեյլին, ձգտում էր աջակցել գյուղական ընտանիքներին և խրախուսելու երիտասարդներին մնալ իրենց համայնքներում ու աշխատեցնել ընտանեկան ֆերմաները: XX դարասկզբի կրթական բարեփոխումները ներառում էին բնապահպանության նկատմամբ հավատարմությունը տարրական կրթության մակարդակում: Բեյլի և Աննա Բոթսֆորդ Քոմսթոքների գլխավորությամբ բնության ուսումնասիրության շարժումը ուսանողներին տանում էր բնության գիրկը՝ զգալու բնական գործընթացները և օգնելու նրանց զարգացնել դիտողական հմտություններ ու գնահատել բնական աշխարհը:

XX դարասկզբին Հյուսիսամերիկյան չվող աղաձնու (North American passenger pigeon) անհետացումը բացահայտում էր քաղաքային և գյուղական համայնքների փոխկապակցվածությունը: Չվող աղաձնիներին ակտիվորեն որսում էին, պատրաստում Նյու Յորքի լավագույն ռեստորաններում և ամենահամեստ ֆերմերային խոհանոցներում: Ոմանք որսում

էին նրանց վարձատրության դիմաց, մյուսները՝ մարզական ակումբների մրցումների ժամանակ: Ի պատասխան դրա՝ աճող բնապահպանական շարժումների ճնշման ներքո ստեղծվում էին վայրի բնության ապաստարաններ, ընդունվում էին հիմնական օրենքներ ու կանոնակարգեր, այդ թվում՝ 1900 թվականի Լեյսի օրենքը (Lacey Act), որն արգելում էր ապօրինաբար սպանված տեսակների փոխադրումը:

Ջին Քրոու Հարավը և աֆրոամերիկացիները

Ամերիկայի ողբերգական ռասայական պատմությունը չհաղթահարվեց Առաջադիմական ժամանակաշրջանում: Ընդհակառակը, շատ առումներով բարեփոխումը աֆրոամերիկացիներին ավելի հեռացրեց ամերիկյան հասարակական կյանքից: Հարավում ընտրական քաղաքականությունը մնաց ընտրակեղծիքների և ընտրողների ահաբեկման մակարդակում: Դեմոկրատական կուսակցության թեկնածուները հարավային սպիտակամորթներին լարում էին՝ նախազգուշացնելով «նեգրերի տիրապետության» և սևամորթ տղամարդկանց կողմից սպիտակամորթ կանանց նկատմամբ բռնության սարսափներով: Տարածաշրջանի ռասայական բռնության մշակույթը և լինչի դատաստանի զանգվածային հանրային տեսարաններն աճում էին: Եվ քանի որ աֆրոամերիկացի ընտրողները սպառնում էին Հարավում Դեմոկրատական կուսակցության գերակայությանը, հարավային դեմոկրատներն առաջ մղեցին աֆրոամերիկացիների իրավագրկման և սեգրեգացիայի գործընթացը, ինչը սպիտակամորթ հարավցիներից շատերն ընկալում էին իբրև առաջադեմ ընտրական և հասարակական բարեփոխումների շարք:

Սպիտակ հարավցիները «մաքրում» էին ընտրությունները՝ սահմանափակելով սևամորթների ընտրական իրավունքը և «կանխում» ռասայական բախումները՝ օրենսդրելով ռասաների հասարակական տարանջատումը: Հարավում նման միջոցների ամենազորեղ ջատագովները առաջադեմ դեմոկրատներն ու նախկին պոպուլիստներն էին: Եվ հյուսիսի, և՛ հարավի քաղաքական առաջնորդներից շատերն ընդունում և հռչակում էին սպիտակների գերակայության գաղափարն իբրև «սպիտակ մարդու բեռ» (“white man’s burden”)՝ աշխարհի ռասայական առումով «ստորադաս» ժողովուրդներին բարձրացնելու պատրվակով. Հյուսիսը նայում էր դեպի Հարավ՝ այն դիտարկելով իբրև ոչ սպիտակ բնակչությանը կառավարելու օրինակ: Հարցն այն էր, թե ինչպես էր կարելի իրականացնել աֆրոամերիկացիների իրավագրկումը:

Տասնհինգերորդ ուղղումը հստակորեն արգելում էր նահանգներին մերժել ցանկացած քաղաքացու ընտրելու իրավունքը ռասայական հիմքով: 1890 թվականին Միսսիսիպիում Դեմոկրատական կուսակցությունը նախաձեռնեց նահանգային նոր սահմանադրության ընդունումը, որը նախատեսված էր մաքրելու քվեարկությունները իրավազրկման միջոցով: Նախ՝ նահանգը սահմանեց ընտրական հարկ, որը ընտրողներից պահանջում էր վճարել քվեարկության արտոնության համար: Երկրորդ՝ այն ընտրական իրավունքից զրկեց նահանգում տարածված մանր հանցագործությունների համար դատապարտված աֆրոամերիկացիներին: Այնուհետև՝ նահանգը ընտրողներից պահանջեց հանձնել գրագիտության թեստ: Տեղական պաշտոնյաները, որոնք իրենք էլ տեղական դեմոկրատական կուսակցական մեքենայի մաս էին, պատասխանատու էին դատելու, թե արդյոք ընտրողները կարողանում էին կարդալ և հասկանալ Սահմանադրության մի հատվածը: Անգրագետ սպիտակամորթներին բացառումից պաշտպանելու համար ընդունվեց այսպես կոչված «ըմբռնման դրույթը», որը թույլ էր տալիս ընտրողներին որակավորվել, եթե նրանք կարողանային բավարար չափով բացատրել իրենց համար կարդացված Սահմանադրության հատվածի իմաստը: Գործնականում այս կանոնները համակարգված կերպով այն աստիճանի էին չարաշահվում, որ տեղական պաշտոնյաները փաստացի կիրառում էին ընտրական իրավունքը որպես ըստ ցանկության թույլատրելու և մերժելու գործառույթ:

1895-1908 թվականներին Հարավի մյուս նահանգներն էլ ընդունեցին նոր սահմանադրություններ՝ ներառյալ իրավազրկման այս գործիքները: Վեց հարավային նահանգներ նաև ավելացրին «պապենական դրույթ» (grandfather clause), որը ընտրական իրավունք էր տալիս յուրաքանչյուրին, ում պապն իրավունք ուներ քվեարկելու 1867 թվականին: Սա երաշխավորում էր, որ այն սպիտակամորթները, ովքեր այլ կերպ կբացառվեին այնպիսի մեխանիզմների միջոցով, ինչպիսիք էին ընտրական հարկերը կամ գրագիտության թեստերը, իրավունք կունենային քվեարկելու: 1915 թ. ԱՄՆ Գերագույն դատարանը չեղարկեց պապենական դրույթները: Ի վերջո, յուրաքանչյուր հարավային նահանգ ընդունեց բոլոր սպիտակների նախնական ընտրությունների (all-white primary) մասնակցության իրավունքը և այդ կերպ բացառեց բոլոր սևամորթ ամերիկացիներին դեմոկրատների նախնական ընտրություններից (Democratic primary), որն ամենակարևոր քաղաքական մրցակցությունն էր Հարավի մեծ մասում:

Այս ընտրական տեխնիկայի գործիքները հասան իրենց նպատակին: 1900 թ. Ալաբամայում ընտրական տարիքի 121,159 գրագետ սևամորթ

տղամարդիկ կային, որոնցից քվեարկելու համար կարողացան գրանցվել ընդամենը 3742-ը: Լուիզիանայում 1896 թվականի վիճելի ընտրությունների ժամանակ 130,000 սևամորթ ընտրողներ կային, իսկ 1900 թ. քվեարկությանը մասնակցեցին ընդամենը 5320-ը: Թեև սևամորթներն էին այս օրենքների թիրախը, բայց որոշ սպիտակամորթներ նույնպես զրկվեցին իրենց իրավազրույթունից. Լուիզիանայում նույն ժամանակահատվածում շուրջ 80,000 սպիտակամորթ ընտրողներ զրկվեցին քվեարկության իրավունքից: Հարավային սպիտակամորթների մեծ մասը սա համարում էր գին, որն արժեր վճարել՝ կանխելու ենթադրյալ վատթարագույնը:

Մինևույն ժամանակ, երբ Հարավի դեմոկրատ առաջնորդներն օգտագործում էին տարածաշրջանի սևամորթ ընտրողներին իրավազրկելու գործիքները, այս նույն օրենսդիր մարմինները կառուցում էին ռասայական տարանջատման տխրահռչակ համակարգը: Սեգրեգացիան հիմնականում ռասայական ենթակայության կիրառման քաղաքային համակարգ էր: Գյուղական վայրերում սպիտակամորթ և սևամորթ հարավցիները բանակցում էին ռասայական տարբերության իմաստի վերաբերյալ՝ ազգակցական և հովանավորչության անձնական հարաբերությունների համատեքստում: Աֆրոամերիկացին, ով խախտել էր տեղական համայնքի ռասայական նորմերը, կարող էր ենթարկվել արագ անձնական պատժամիջոցի, որը հաճախ ներառում էր բռնություն: Մշակաբույսերի արգելանքը և դատապարտյալների վարձակալության համակարգերը Հարավի գյուղական վայրերում ռասայական վերահսկողության ամենակարևոր իրավական գործիքներն էին: Այնտեղ սպիտակների գերակայության պահպանումը չէր պահանջում սեգրեգացիա: Քաղաքում սպիտակների գերակայության պահպանումը, սակայն, բոլորովին այլ խնդիր էր: Տարածաշրջանի երկաթուղային ցանցերի ու քաղաքների ընդլայնմանը զուգահեռ՝ մեծանում էր հարավային սևամորթների ազատությունը: Հարավային քաղաքները դառնում էին միջին խավի սևամորթների կյանքի կենտրոն, որը դիտարկվում էր բացահայտ սպառնալիք ռասայական հիերարխիայի համար: Սպիտակ հարավցիները ստեղծեցին սեգրեգացիայի համակարգը՝ որպես սպիտակների գերակայությունը պահպանելու միջոց ռեստորաններում, թատրոններում, հանրային զուգարաններում, դպրոցներում, ցայտաղբյուրների և շատրվանների շրջանում, գնացքների վազոններում և հիվանդանոցներում:

1896 թ. Նոր Օռլեանի բնակիչ Հոմեր Պլեսին ԱՄՆ Գերագույն դատարանում վիճարկեց Լուիզիանայի տրամվայների տարանջատման սահմանադրականությունը: Դատարանը որոշում կայացրեց ընդդեմ Պլեսիի և

սահմանեց «առանձին, բայց հավասարի» (separate but equal) իրավական սկզբունքը: Ռասայական առումով առանձնացված օբյեկտները օրինական էին, պայմանով, որ դրանց պետք է համարժեք այլընտրանք տրվեր: Գործնականում դա գրեթե երբեք չէր կիրառվում: Դատարանի անդամների մեծ մասը պաշտպանեց այս դիրքորոշումն այն տրամաբանությամբ, որն արտացոլում էր օրվա ռասայական պատկերացումները: Դատարանը պատճառաբանում էր. «Եթե մի ռասան զիջում է մյուսին հասարակական զարգացման մակարդակով, ապա Միացյալ Նահանգների Սահմանադրությունը չի կարող նրանց դնել նույն հարթության վրա»: Դատավոր Ջոն Հարլանը՝ միայնակ այլախոհը, հակադարձեց. «Մեր Սահմանադրությունը չի տարբերակում գույները և չի ճանաչում ու չի հանդուրժում քաղաքացիների դասակարգումը»:

Այնուամենայնիվ, Առաջադիմական ժամանակաշրջանի շատ աֆրոամերիկացիներ շարունակում էին պայքարը: Բուքեր Թալիաֆերրո Վաշինգտոնը Ալաբամայում հիմնեց Թասքեգի հաստատությունը (Tuskegee Institute), որը կրթելու էր բազմաթիվ սևամորթ ամերիկացիների: Վաշինգտոնը կարծում էր, որ կրթությունը և հմտությունները կօգնեին աֆրոամերիկացիներին հասնելու տնտեսական անկախության՝ միաժամանակ զարգացնելով ինքնարժեքության և ձեռքբերումների հպարտության զգացումը: XX դարի սկզբին Վաշինգտոնը դարձավ աֆրոամերիկացիների առաջատար խոսնակներից: Մեկ այլ նշանավոր աֆրոամերիկացի էր Ուիլյամ Էդուարդ Բերգհարթ Դյու Բուան՝ Մասաչուսեթսի Գրեյթ Բարինգթոն քաղաքից: Դյու Բուան ավարտել էր Հարվարդի համալսարանը, այնուհետև ուսանել էր Գերմանիայում և նորից վերադարձել Հարվարդի համալսարան: 1895 թվականին Դյու Բուան դարձավ առաջին աֆրոամերիկացին, ով ստացավ դոկտորի (PhD) գիտական աստիճան՝ դառնալով Ամերիկայի առաջատար մտավորականներից մեկը ընկերային և ռասայական արդարության հարցերում: Գիտամանկավարժական աշխատանքից զատ՝ նա քաղաքացիական իրավունքների պաշտպանության առաջնորդ էր՝ սկզբում Նիագարայի շարժման (Niagara Movement), իսկ հետո այլ հարթակներում: Դյու Բուան առաջ էր մղում քաղաքացիական իրավունքների օրենսդրությունը, նախաձեռնում իրավական մարտահրավերներ խտրականության դեմ, կազմակերպում բողոքի ցույցեր անարդարության դեմ և հստակ հետազոտության և սուր արձակի միջոցով բացահայտում էր Առաջադիմական ժամանակաշրջանի Ամերիկայի ռասայական հիմնախնդիրները:

Ամփոփենք: Արդյունաբերական կապիտալիզմը հզոր ուժեր և գործընթացներ սանձազերծեց ամերիկյան հասարակական կյանքում: Հարստության, տեխնոլոգիական նորարարությունների և կենսամակարդակի բարձրացման հետ բազմաթիվ ընկերային խնդիրներ շատերի համար շարունակում էին մնալ չլուծված կամ առկախված: Ուստի շատ ամերիկացիներ դիմեցին առաջադիմական բարեփոխումների քաղաքականությանը՝ իրենց աշխարհը նորից շտկելու համար: Առաջադիմական ժամանակաշրջանը շատ ամերիկացիների համար ազդարարեց շրջադարձային հանգրվան, որում անհրաժեշտ պայմաններ կային ժամանակաշրջանի խնդիրներին ազգային քաղաքական լուծումներով դիմակայելու համար: Առաջադեմ բարեփոխիչները ձգտում էին հասնել քառսում կարգի կատարելագործմանը, բերելու արդյունավետություն անարդյունավետության մեջ և արդարադատություն հաստատելու անարդարության միջավայրում: Պատճառները տարբեր էին, քաղաքական գործընթացները՝ հարափոփոխ, իսկ բարեփոխումների հզոր էներգիայի շոշափելի ազդեցությունը՝ դժվարաչափ, բայց ևս պետք է Առաջադիմական ժամանակաշրջանն ազդարարեց երկարատև հասարակական լարվածության պոռթկում և նոր հարացույցներ ու օրինաչափություններ ներմուծեց ամերիկյան ընկերային, տնտեսական, մշակութային և քաղաքական հարաբերությունների մեջ: Այսպիսով, XX դարասկզբի Առաջադիմական ժամանակաշրջանը ԱՄՆ պատմության կարևորագույն փուլերից է և խորհրդանշում է ամերիկյան հասարակության ընկերային առաջընթացը, ինչպես նաև սոցիալական բարեփոխումների միջոցով դասական կապիտալիզմի բարեփոխման ուղին:

ԳԼՈՒԽ 15

ԱՄՆ-ն և Առաջին համաշխարհային պատերազմը

1914-1918 թթ. Առաջին համաշխարհային պատերազմը, որը ժամանակակիցներն անվանում էին «Մեծ պատերազմ» (“The Great War”), Եվրոպայում տապալեց չորս կայսրություններ, ստեղծեց նոր ազգ-պետություններ և առաջացրեց նոր աշխարհաքաղաքական լարվածության օջախներ, որոնք պիտի պայթեին հետագա տարիներին՝ ընդամենը երկու տասնամյակ անց հանգեցնելով Երկրորդ համաշխարհային պատերազմին: Ռազմի դաշտում զարգացած արդյունաբերական դարաշրջանի նոր սարսափելի սպառազինությունը հանգեցրեց ահռելի նյութական ավերածությունների և մարդկային կորուստների:

Միացյալ Նահանգներն այս համաշխարհային հակամարտության մեջ մուտք գործեց 1917 թվականին և դուրս եկավ իբրև նոր առաջնակարգ համաշխարհային տերություն: Այսպես, Առաջին աշխարհամարտն աշխարհին ազդարարեց Միացյալ Նահանգների ահռելի ներուժը որպես համաշխարհային ռազմաքաղաքական, արդյունաբերական և ֆինանսատնտեսական առաջնակարգ տերություն: Ներհասարակական առումով ևս երկիրը առաջադիմեց, սակայն հետո ամերիկյան առաջադիմությունը որոշակի հետընթաց ապրեց՝ սանձազերծելով բռնաճնշումների արատավոր ալիքներ: Պատերազմը խթանեց ամերիկյան ազգային հպարտությունը և միաժամանակ սնուցեց այն հասարակական հիասթափությունները, որոնք խաթարեցին Առաջադիմական ժամանակաշրջանի հույսերը աշխարհի վերափոխման համար: Ի վերջո, «Մեծ պատերազմը» նաև հիմք դրեց համաշխարհային տնտեսական Մեծ ճգնաժամի, Երկրորդ համաշխարհային պատերազմի և ամբողջ աշխարհում ազգային, կրոնական և մշակութային հակամարտությունների պատմության նոր՝ առավել ահեղ շրջափուլի:

Պատերազմի նախերգանքը

XIX դարի վերջին Գերմանական կայսրության հզորացմանը և ազդեցության աճին զուգահեռ՝ մի քանի տասնամյակների ընթացքում եվրոպական տերությունների հմուտ դիվանագետները փորձում էին ուժերի ավանդական հավասարակշռության այս խափանումը փոխհատուցել նոր դաշինքների համակարգով և եվրոպական խաղաղության նոր հարացույցի հաստատմամբ: Գերմանիայում, սակայն, նոր հավակնոտ միապետը

ստվերեց երկար տարիների նրբանկատ դիվանագիտությունը: Կայզեր Վիլիելմ II-ը ձեռնարկեց գերմանական նավատորմի կառուցումը և գաղութային տիրույթների ձեռքբերման գործընթացը ողջ աշխարհում: 1892 թվականին գերմանական այս կեցվածքն անհանգստացրեց Ռուսաստանի ու Ֆրանսիայի առաջնորդներին և նրանց մղեց ստեղծելու պաշտպանական դաշինք՝ դիմակայելու Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի և Իտալիայի միջև գոյություն ունեցող Եռյակ դաշինքի սպառնալիքին: Ի վերջո, դիվանագիտական ճգնաժամերը և գերմանական ռազմածովային կարողության աճող սպառնալիքը հանգեցրին Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի միջև ռազմաքաղաքական դաշինքի, որը հայտնի է որպես Եռյակ համաձայնություն՝ Անտանտ (Triple Entente):

Ավստրո-Հունգարական կայսրության ծավալապաշտությունը Եվրոպայում անհանգստացնում էր ռուսաց կայսր Նիկոլայ II-ին, ով Ռուսական կայսրությունը համարում էր Բալկաններում սլավոնական ժողովուրդների պատմական հովանավոր՝ նկրտումներ ունենալով Օսմանյան կայսրության կողմից կառավարվող այդ տարածքների նկատմամբ: Մինչև 1914 թվականը Ավստրո-Հունգարական երկմիասնական կայսրությունը վերահսկում էր Բոսնիա և Հերցեգովինան ու ձգտում էր վերահսկողության սլավոնական Սերբիայի նկատմամբ, որը գտնվում էր Ռուսաստանի հովանավորության և պաշտպանության ներքո: 1914 թվականի հունիսի 28-ին սերբ ազգայնական Գավրիլո Պրինցիպի կողմից Սարաևոյում Ավստրո-Հունգարական կայսրության գահաժառանգ արքիդուքս Ֆրանց Ֆերդինանդի սպանությունը բորբոքեց համաշխարհային պատերազմը:

Ատլանտյան օվկիանոսից անդին գտնվող Միացյալ Նահանգները չէր մասնակցում միջազգային դիվանագիտական և ռազմաքաղաքական դաշինքներին, բայց լայնպես պաշտպանում և աջակցում էր անդրատլանտյան տնտեսության ընդլայնմանը: Ամերիկյան գործարարներն ու սպառողները մեծ շահույթներ էին ստանում անդրատլանտյան առևտրից եվրոպական խաղաղության մի ամբողջ դարաշրջանի ընթացքում: Չեզոքության արտաքին քաղաքականությունը արտացոլում էր Ամերիկայի ներքին կենտրոնացումը իր հզոր արդյունաբերական տնտեսության կառուցման և կառավարման վրա, որը, փաստորեն, զգալի չափով կառուցվում էր եվրոպական կապիտալով: Դաշնային կառավարությունն առաջմ ուներ սահմանափակ դիվանագիտական գործիքներ, որոնցով կարող էր ներգրավվել համաշխարհային ազդեցության համար միջազգային պայքարում: ԱՄՆ դեռևս փոքր բանակը բացառում էր ուժային պարտադրանքի կիրառումը որևէ հզոր տերության դեմ և ամերիկացի դիվանագետներ-

րին թողնում էր համոզումի գործիքակազմ՝ հիմնված բանականության, արդարադատության կամ տնտեսական հարկադրանքի միջոցների վրա: Սակայն 1880-ական թվականներին, երբ սկսվեց շեշտադրվել Ամերիկյան կայսրության հղացքը, Կոնգրեսն իրավագործաց արդիական նավատորմի կառուցումը: ԱՄՆ բանակը, այնուամենայնիվ, շարունակեց մնալ փոքր և թերֆինանսավորված՝ համեմատած զարգացող արդյունաբերական երկրների բանակների հետ: Մինչև 1890 թ. ամերիկյան բանակն աշխարհում 14-րդն էր բուլղարականից հետո, իսկ նավատորմն ավելի փոքր էր, քան իտալականը, թեև ԱՄՆ-ն իր արդյունաբերական հզորությամբ 13 անգամ գերազանցում էր Իտալիային:

XX դարակազմին ԱՄՆ բանակը և նավատորմը բախվեցին կազմակերպչական մեծ անորոշության խնդրին: Նոր տեխնոլոգիաները՝ ինքնաթիռները, շարժիչային տրանսպորտային միջոցները, սուզանավերը, ժամանակակից հրետանին ընդգծեցին բանակի և նավատորմի անձնակազմի՝ դրանք ձեռք բերելու և արդյունավետ օգտագործելու կարողությունը: ԱՄՆ բանակը կարող էր վերահսկել բնիկ ամերիկացիներին Արևմուտքում, ինչպես նաև կայազորների միջոցով վերահսկել վերջին անդրծովային տարածքային ձեռքբերումները, սակայն լիարժեք հակամարտության դեպքում այն չէր կարող դիմակայել որևէ զարգացած տերության բանակի:

1908 թվականի Դեյվիսի օրենքով (Davis Act) և 1916 թվականի Ազգային պաշտպանության օրենքով (National Defense Act) դաշնային իշխանությունը մեկնարկեց Ազգային գվարդիայի և ռազմական ռեզերվների ժամանակակից տարբերակների կազմակերպումը: Նահանգային իշխանության կողմից կառավարվող ռազմական ստորաբաժանումների համակարգը, որը հասանելի էր տեղական արտակարգ իրավիճակների համար, սկսեց ստանալ պայմանական դաշնային ֆինանսավորում ու մարտական վերապատրաստման աջակցություն՝ նաև հարկ եղած դեպքում միջազգային պատերազմներում օգտագործվելու համար: Ազգային գվարդիայի նախագիծը ներառում էր նահանգային սահմաններով առանձնացված ռազմական ստորաբաժանումներ: Ծրագիրը համալսարանների և քոլեջների ուսանողներին տրամադրում էր ամառային դասընթացներ՝ վերապատրաստվելու որպես պահեստազորի սպաներ: Ծրագրի շնորհիվ դաշնային և նահանգային կառավարություններն այժմ ունեին պատրաստված զինվորների ու նավաստիների երկարաժամկետ ռազմավարական պահեստազոր:

Մեքսիկայում հատուկ ռազմական գործողությունները և սահմանային

անախորժությունները դարձան կարևոր դաշտային փորձառություն ամերիկյան ռազմական ուժերի արդիականացման համար: Ինչպես արդեն ներկայացրել ենք 13-րդ գլխում, հեղափոխությունը և քառսը սպառնում էին ամերիկյան գործարար շահերին Մեքսիկայում: 1914 թվականի ապրիլին նախագահ Վուդրո Վիլսոնը հրամայեց ծովային հետևակին Մեքսիկայի ստորին արևելյան ափով ուղեկցել ռազմածովային նավատորմիդին դեպի Վերակրուս: ԱՄՆ ծովային հետևակին հաջողվեց արագ հաղթանակ տանել Վերակրուսի ճակատամարտում և վերահսկողության տակ առնել քաղաքը մինչև 1914 թ. նոյեմբեր՝ կանխելով գերմանական զենքի առաքումը մեքսիկացի առաջնորդ Վիկտորիանո Հուերտային:

Այս ռազմական գործողությունը Վերակրուսում ընդգծեց ԱՄՆ շարունակական ապավինումը ծովային ուժերին և վեր հանեց բանակի արդիականացման դժվարությունները Կարիբյան ավազանում և այլուր եվրոպական կայսերական ազդեցության ժամանակաշրջանում: Եվրոպայում ծավալվող պատերազմի սպառնալիքը նպաստեց 1916 թվականի Ռազմածովային օրենքի (Naval Act) ընդունմանը: Նախագահ Վիլսոնը հայտարարում էր, որ ԱՄՆ նպատակն է կառուցել աշխարհի անհամեմատելիորեն մեծագույն ռազմածովային նավատորմը:

Վիլսոնի վարչակազմը դադարեցրեց ԱՄՆ աջակցությունը Մեքսիկայում Դիասի կառավարությանը, բայց զգուշորեն հետևում էր, թե ինչպես էր մեքսիկական հեղափոխությունը վերածվում սպանությունների և խաբեության: Երբ 1916 թվականին Մեքսիկայի հյուսիսում հայտնի հեղափոխական Պանչո Վիլան հարձակվեց Նյու Մեքսիկոյի Կոլումբոս քաղաքի վրա, նախագահ Վիլսոնը հանձնարարեց բանակի զեներալ Ջոն «Բլեք Ջեք» Փերշինգին գերեվարել Վիլային և ցրել ապստամբներին: Վիլայի հետապնդման գործողության ընթացքում կիրառվում էին շարժիչային տրանսպորտային միջոցներ և մեխանիզացված ստորաբաժանումներ, հետախուզական ինքնաթիռներ և անլար հեռագիրը: Շարժիչային տրանսպորտային միջոցները, մասնավորապես, թույլ էին տալիս գեներալ Փերշինգի ստորաբաժանումներին արագ ստանալ անհրաժեշտ մատակարարումները՝ առանց հենվելու Մեքսիկայի կառավարության կողմից վերահսկվող երկաթգծերի վրա: Իբրև ուժի ցուցադրություն՝ հյուսիսային Մեքսիկայում Վիլսոնն օգտագործեց Ազգային պաշտպանության նոր օրենքի ընձեռած լիազորությունները՝ մոբիլիզացնելով ավելի քան 100,000-անոց զորախումբ կազմող ամերիկյան Ազգային գվարդիայի ստորաբաժանումները ամբողջ երկրում:

ԱՄՆ-ի և Մեքսիկայի միջև հակամարտությունը կարող էր վերածվել

լայնածավալ պատերազմի, եթե Եվրոպայում միջազգային ճգնաժամը չգրավեր ամերիկյան հանրության ուշադրությունը: 1914 թվականին Եվրոպայում պատերազմի բռնկումից հետո նախագահ Վիլսոնը հայտարարեց ԱՄՆ չեզոքության մասին: Նախագահի այս քաղաքականությունը հավանության արժանացավ ամերիկացիների մեծամասնության կողմից: Այնուամենայնիվ, պարզ չէր, թե ինչ էր նշանակում «չեզոքություն» տնտեսական սերտ կապերի աշխարհում:

Բրիտանացիների և ֆրանսիացիների հետ տնտեսական կապերը շատ ավելի ամուր էին, և այդ երկրները ավելի շատ վարկեր և մատակարարումներ էին ստանում Միացյալ Նահանգներից, քան գերմանացիները: 1914 թվականի հոկտեմբերին նախագահ Վիլսոնը հաստատեց պատերազմող երկրներին առևտրային վարկերի տրամադրումը, ինչն ԱՄՆ-ի համար դժվարացնում էր հոշակված անաչառության պահպանումը, քանզի պատերազմը Եվրոպայում հետզհետե ահագնանում էր: Անտանտի երկրների հետ առևտրային և ֆինանսական հարաբերությունները, ի վերջո, ԱՄՆ-ին ավելի ներքաշեցին հակամարտության մեջ:

Չնայած Գերմանիայի, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի կողմից փոխադարձաբար հայտարարված շրջափակումներին՝ Միացյալ Նահանգներից ռազմամթերքի և պատերազմական այլ մատակարարումների ծավալը բուռն աճ էր ապրում: ԱՄՆ գործարար շրջանները և արդյունաբերությունը մեծ եկամուտներ էին ստանում այս մատակարարումներից: Եթե բրիտանական ծովային շրջափակման գործողությունները հաճախ արտահայտվում էին նավերը կանգնեցնելով կամ բեռները առգրավելով՝ հանգեցնելով նյութական և ֆինանսական կորուստների, ապա գերմանական սուզանավերի անսահմանափակ և անակնկալ տորպեդային հարձակումները հանգեցնում էին մարդկային զոհերի: 1915 թ. մայիսին գերմանացիները խորտակեցին «Լուզիտանիա» (RMS Lusitania) նավը, որի հետևանքով ավելի քան հարյուր ամերիկացիներ զոհվեցին: Հարձակումը, զուգորդված ամերիկյան և բրիտանական բեռնատար նավերի վրա գերմանական այլ հարձակումներով, բարձրացրեց ամերիկյան հասարակության զայրույթը և բորբոքեց պատերազմի ցանկությունը:

Ամերիկյան դիվանագիտական ավանդույթը խուսափում էր պաշտոնական դաշինքներից, և բանակը անհամապատասխան էր թվում երկարատև և լիարժեք անդրծովյան պատերազմ վարելու համար: Այնուամենայնիվ, Միացյալ Նահանգները գերազանցում էր եվրոպական մեծ տերություններին համաշխարհային տերության մեկ չափազանց կարևոր չափանիշով. 1914 թվականի դրությամբ ԱՄՆ-ն արդեն զբաղեցնում էր

անհամեմատելի առաջատար դիրք համաշխարհային արդյունաբերական տնտեսության մեջ՝ ունենալով աշխարհի խոշորագույն արդյունաբերությունը և տնտեսությունը: Միացյալ Նահանգներն արտադրում էր աշխարհում արտադրված ապրանքների մեկ երրորդից մի փոքր ավելին, ինչը մոտավորապես հավասար էր Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի և Գերմանիայի արդյունաբերական արտադրանքի ծավալին միասին վերցրած:

Պատերազմը Եվրոպայում

Արքիդուքս Ֆրանց Ֆերդինանդի և մեծ դքսուհի Սոֆիայի սպանությունից հետո, ստանալով իր դաշնակից Գերմանիայի աջակցությունը, Ավստրիան տասը պահանջներից բաղկացած վերջնագիր ներկայացրեց Սերբիային: 1914 թվականի հուլիսի 28-ին Ավստրիան պատերազմ հայտարարեց Սերբիային՝ չստանալով բոլոր պահանջները բավարարող արձագանք: Ռուսաստանը հայտարարեց Սերբիային իր անվերապահ աջակցության մասին և սկսեց մոբիլիզացնել իր զինված ուժերը: Ռուսաց կայսր Նիկոլայ II-ին ուղղված Գերմանիայի նախազգուշացումները չկարողացան կասեցնել պատերազմի նախապատրաստումը: 1914 թ. օգոստոսի 1-ին Գերմանիան պատերազմ հայտարարեց Ռուսաստանին՝ պաշտպանելով Ավստրիային:

Չնայած աշխարհաքաղաքական ճգնաժամի կիզակետը կենտրոնական Եվրոպայում էր, առաջին հարվածը հասցվեց հյուսիսարևմտյան Եվրոպայի չեզոք Բելգիային: Գերմանիան ծրագրում էր օգտվել ռուսական դանդաղ մոբիլիզացիայից՝ գերմանական բանակը կենտրոնացնելով Ֆրանսիայի դեմ: Գերմանացի զինվորական առաջնորդները վերամշակեցին ավելի վաղ մշակված մարտավարությունը և գործի դրեցին Շլիֆենի պլանը (Schlieffen Plan), որով գերմանական բանակներն արագորեն երկաթուղով շարժվեցին դեպի Բելգիա և Ֆրանսիա: Շլիֆենի պլանը նախագծում էր երկու ճակատով պատերազմի սցենարը. ենթադրվում էր, որ ռուսները դանդաղ կմոբիլիզացվեն, տեխնոլոգիապես հետամնաց են և դանդաղ կտեղաշարժվեն, մինչդեռ ֆրանսիացիներն ունեին արդի տեխնոլոգիաներ և հաղորդակցության ենթակառուցվածքներ, և առաջնային վտանգ էին ներկայացնում: Ուստի գերմանական բանակը պատերազմի պարագայում ուժերը պետք է կենտրոնացներ և հարվածեր Ֆրանսիային, այնուհետև, արագ հաղթանակ ապահովելով, կարող էր ուժերը անհապաղ տեղափոխել արևելք և այստեղ հաղթել արդեն ռուսներին՝ մինչ նրանք կհասցնեին մոբիլիզացվել: Ֆրանսիայի դեմ արագ հաղթանակի

համար, ըստ նախագծի, ներխուժումը պետք է կատարվեր չեզոք Բելգիայի տարածքով: Բելգիական չեզոքության այս խախտումը նաև նպաստեց, որ Մեծ Բրիտանիան արագ պատերազմի մեջ մտնի Գերմանիայի դեմ: 1914 թվականի օգոստոսի 4-ին Մեծ Բրիտանիան պատերազմ հայտարարեց Գերմանիային՝ Բելգիայի չեզոքությունը չհարգելու պատճառաբանությամբ:

1915 թվականին եվրոպական պատերազմը վերածվեց արյունալի խրամատային փակուղու, և այս կայուն ծանր ռազմաճակատային իրավիճակը շարունակվեց նաև հաջորդ տարում: Հարձակողական գործողությունները, որոնք հիմնականում իրականացվում էին բրիտանական և ֆրանսիական բանակների կողմից, ոչինչ չտվեցին, բացի հսկայական թվով զոհերից: Օսմանյան կայսրության դեմ ծայրամասային արշավանքները Գալիպոլիում, ողջ Մերձավոր Արևելքում և Աֆրիկայի տարբեր մասերում կամ անհաջող էին, կամ քիչ ազդեցություն ունեցան եվրոպական ճակատում հաղթանակի համար: Պատերազմի երրորդ տարին, սակայն, գերմանական ռազմական հեռանկարների համար լի էր հեղաշրջումային իրադարձություններով. 1917 թվականի մարտին Ռուսաստանում տապալվեց Նիկոլայ II-ի իշխանությունը: Միևնույն ժամանակ, գերմանացիները շարունակում էին անսահմանափակ սուզանավային պատերազմը՝ դաշնակիցներին Միացյալ Նահանգներից եկող համալրման պաշարներից զրկելու համար: Հասկանալով, որ սուզանավային պատերազմը կարող է առաջացնել ամերիկյան ռազմական միջամտություն՝ գերմանացիները հույս ունեին, որ եվրոպական պատերազմը կավարտվի ավելի շուտ, մինչ բավարար քանակի ամերիկյան զորքեր կժամանեին եվրոպական թատերաբեմ, որպեսզի փոխեն ռուսերի հավասարակշռությունը:

Գերմանացի դիվանագետ Արթուր Զիմերմանը ծրագրել էր բարդացնել ամերիկյան հնարավոր միջամտությունը: ԱՄՆ-ի դեմ պատերազմ հրահրելու նպատակով՝ նա աջակցություն էր առաջարկել Մեքսիկայի կառավարությանը Տեխաս, Նյու Մեքսիկո և Արիզոնա նահանգները Մեքսիկային վերադարձնելու խոստումով: Մեքսիկայի ազգային առաջնորդները մերժեցին առաջարկը, սակայն Զիմերմանի հեռագրի (Zimmermann Telegram) բացահայտումը նպաստեց, որ Միացյալ Նահանգները պատերազմ հայտարարի Գերմանիային:

Ամերիկյան Եվրոպական պատերազմում

Արդեն 1916 թվականի աշնանը և 1917 թվականի գարնանը նախագահ Վիլսոնը համոզված էր, որ Գերմանիայի մոտալուտ հաղթանակը կտրուկ և վտանգավոր կերպով կփոխի ուժերի հավասարակշռությունը Եվրոպայում: Միաժամանակ սուզանավային պատերազմը և Զիմերմանի հեռագիրը բորբոքեցին ամերիկյան հասարակական կարծիքը: 1917 թվականի ապրիլի 4-ին Կոնգրեսը պատերազմ հայտարարեց Գերմանիային: ԱՄՆ-ն պատերազմ էր մուտք գործում Ատլանտյան օվկիանոսից այն կողմ՝ դեռևս փոքրաթիվ և անպատրաստ բանակով:

Զինված ուժերի շարքերը համալրելու համար Միացյալ Նահանգները պատմականորեն ապավինում էր բացառապես ավանդական կամավորությանը: Հայրենասիրական պարտականության և արկածախնդրության մասին պատկերացումները գրավում էին բազմաթիվ երիտասարդների, որոնք ոչ միայն կամավոր ծառայության էին անցնում պատերազմի ժամանակ, այլև պատերազմից առաջ վճարել էին իրենց մարտական պատրաստության համար բանակային ճամբարներում: Ամերիկյան աշխատավորական կազմակերպությունները նույնպես նախընտրում էին կամավոր ծառայությունը, այլ ոչ թե զորակոչը: Աշխատավորների առաջնորդ Սեմուել Գոմփերսն այդ հարցը քննարկող Կոնգրեսի հանձնաժողովներին ուղղված նամակներում պնդում էր կամավորականության սկզբունքը:

Չնայած ժողովրդական դիմադրության մտավախություններին՝ Կոնգրեսը արագորեն ստեղծեց «ողջամտորեն արդարացի» տեղական կառավարման համակարգ՝ մարդկանց բանակ զորակոչելու համար: 1917 թվականի մայիսի 18-ին Կոնգրեսը հաստատեց Ընտրովի ծառայության օրենքը (Selective Service Act), և նախագահ Վիլսոնը ստորագրեց այն մեկ շաբաթ անց: Զորակոչային օրենքը սկզբում պահանջում էր զորակոչել 21-30 տարեկան տղամարդկանց պարտադիր զինվորական ծառայության: Հիմնական ֆիզիկական պատրաստվածությունը ծառայության համար առաջնային պահանջն էր: Բանակային բժշկական վարչությունը (Army Medical Department) ուսումնասիրում էր ծառայության համար ընտրված ամերիկացի երիտասարդների ընդհանուր վիճակը: Հետազոտվածների ավելի քան 34 տոկոսը մերժվեց ծառայության համար կամ ավելի ուշ դուրս գրվեց ֆիզիկական, նյարդաբանական, հոգեբուժական կամ հոգեբանական թերությունների պատճառով: Նյարդաբանական, հոգեբուժական և մտավոր վիճակը գնահատելու համար բանակն օգտագործում էր ճանաչողական հմտությունների թեստեր: Ամերիկյան հոգեբանական

ասոցիացիայի (American Psychological Association) նախագահ և նորակոչիկների հոգեբանական քննության կոմիտեի նախագահ Ռոբերտ Մ. Յերկեսն էր մշակում և վերլուծում կիրառվող թեստերը:

Բանակում ծառայության փորձառությունը ընդլայնում էր բազմաթիվ զինծառայողների անհատական ընկերային հորիզոնները, քանզի ծնունդով և ներգաղթյալ ամերիկացի զինվորները ծառայում էին կողք կողքի: Ներգաղթյալներն ընդունվում էին Միության բանակի շարքեր դեռևս Քաղաքացիական պատերազմի ժամանակ, սակայն 1917-1918 թվականներին բանակը ներգաղթյալներին ընդունում էր որոշակի վարանումով՝ ներգաղթյալների հանդեպ լայնածավալ հասարակական նախապաշարմունքների պատճառով:

Գործում էր նաև ռասայական հիմքով առանձնացման քաղաքականությունը: Սպիտակամորթ ամերիկացիների շրջանում գերակշռող ռասայական վերաբերմունքը պարտադրում էր սպիտակ և սևամորթ զինվորների նշանակումը տարբեր ստորաբաժանումներում: Սևամորթ առաջնորդները զինվորական ծառայությունը դիտարկում էին իբրև հնարավորություն՝ սպիտակամորթ հասարակությանը ցույց տալու սևամորթ տղամարդկանց պատրաստակամությունն ու կարողությունը՝ ստանձնելու քաղաքացիական բոլոր պարտականությունները՝ ներառյալ պատերազմի ժամանակ զոհաբերությունը: Ըստ այդ պատկերացումների, եթե սևամորթ զինվորները զորակոչվեին, կովեին և զոհվեին սպիտակ զինվորների հետ հավասար պայմաններում, ապա սպիտակամորթ ամերիկացիները կտեսնեին, որ աֆրոամերիկացիներն արժանի են լիարժեք քաղաքացիության: Սակայն Պատերազմի քարտուղարությունը սևական զորքերին հետ պահեց մարտական գործողություններից և սևամորթներին տեղափոխեց առանձնացված ծառայության ստորաբաժանումներ, որտեղ նրանք աշխատում էին որպես բանվորներ:

Կրոնական և առաջադիմական մի շարք կազմակերպություններ ամերիկացի երիտասարդների հատուկ ինքնությունն ապահովելու համար՝ իբրև նոր աշխարհի տղամարդիկ, որոնք մեկնել էին փրկելու հին աշխարհը, ստեղծեցին մի ընդարձակ ծրագիր, որը նախատեսված էր տղամարդկանց սրտով, մտքով և մարմնով մաքուր պահելու համար: Երիտասարդ տղամարդկանց քրիստոնեական ասոցիացիայի (YMCA) և այլ ժուժկալ կազմակերպությունների աջակցությամբ Պատերազմի քարտուղարությունը կազմեց դպրոցների, տեսարժան վայրերի շրջագայությունների և հանգստի վայրերի առողջարանային ու կրթական ծրագրեր:

Կանայք ևս մասնակցեցին պատերազմի նախապատրաստությանը՝

միանալով մի շարք ռազմական և քաղաքացիական կազմակերպությունների: Բանակի ղեկավարությունը թույլատրեց որոշ հաստիքներում կանանց ծառայությունը, ինչը կանանց հնարավորություն տվեց հազնելու զինվորական համազգեստ: Պատերազմի ժամանակ կանայք կամավորական աշխատանքներ էին տանում նաև քաղաքացիական կազմակերպություններում: Պատերազմի և նավատորմի քարտուղարությունները նաև լիազորել էին զինվորագրել կանանց որոշ վարչական հաստիքակազմերում և պաշտոններ վարելու: Բանակային կանայք ծառայում էին որպես հեռախոսավարուհիներ (Ողջույնի աղջիկներ (Hello Girls)) ազդանշանային կորպուսում, նավատորմի կանայք զբաղեցնում էին գործավարական հաստիքներ, իսկ 1918 թվականի հուլիսին կանանց առաջին խմբերը միացան ծովային հետևակի կորպուսին: Մոտ 25,000 բուժքույրեր էին ծառայում բանակի և նավատորմի բուժքույրական կորպուսներում, և մոտ հարյուր կին բժիշկներ էին ծառայում ԱՄՆ զինված ուժերում պայմանագրային հիմունքներով: Միլիոնավոր կանայք մասնակցում էին կամավորական աշխատանքներին քաղաքացիական կազմակերպություններում, ինչպիսիք էին Ամերիկյան Կարմիր խաչը, Երիտասարդ տղամարդկանց և կանանց քրիստոնեական ասոցիացիաները (YMCA/YWCA) և Փրկության բանակը: Թեև այս ջանքերի մեծ մասը կենտրոնացած էր թիկունքային աշխատանքներում, կին կամավորների մի փոքր տոկոսը ծառայում էր Ֆրանսիայում ամերիկյան արշավախմբային բանակի կազմում:

Ջիմ Քրոուի ռասայական տարանջատման օրենքները ինչպես ռազմական, այնպես էլ քաղաքացիական հատվածում խոչընդոտում էին սևամորթ կանանց ներգրավվածությունը, որոնք ցանկանում էին իրենց ներդրումը բերել ամերիկյան պատերազմական ջանքերին: Զինվորականներն արգելում էին սևամորթ կանանց ծառայել զորակոչային կամ նշանակովի բժշկական անձնակազմերում: Սևամորթ կանանց համար զինվորական համազգեստ կրելու միակ հնարավորությունը դաշնակից երկրների բանակներում էր: Մի քանի սևամորթ կին բժիշկներ և բուժքույրեր միացան ֆրանսիական օտարերկրյա լեգեոնին՝ խուսափելու ամերիկյան բանակի ռասիզմից: Քաղաքացիական կազմակերպությունների սպիտակամորթ ղեկավարները հրաժարվում էին սևամորթ կանանց ընդունել որպես հավասար մասնակիցների: Փոխարենը սևամորթ կանայք դիմում էին իրենց համայնքներին աջակցության և օժանդակության համար՝ աջակցելով ԱՄՆ բանակում ծառայող մոտ 200,000 սևամորթ զինվորներին և նավաստիներին:

Թիկունքային ճակատը

Պատերազմի առաջին տարիներին ամերիկացիները հիմնականում կտրված էին Եվրոպայում տեղի ունեցող իրադարձություններից: Քաղաքական լանդշաֆտում գերակշռում էր Առաջադիմական ժամանակաշրջանի բարեփոխումների քաղաքականությունը, և ամերիկացիներն ամենաշատը մտահոգված էին իրենց ներքաղաքական և ներհասարակական գործընթացներով: Սակայն պատերազմի իրողությունը ևս չէր կարող անտեսվել հանրության կողմից: Եվրոպական մարտադաշտերում զոհերի ահռելի քանակը և տեղի ունեցող ավերածությունները բացահայտեցին արդի պատերազմի աննախադեպ դաժանությունը: Արևմտյան քաղաքակրթության արդյունաբերական մասշտաբների այս ավերմանը զուգահեռ՝ ԱՄՆ-ում ավելի ու ավելի էր տիրում այն զգացումը, որ արևմտյան աշխարհի ճակատագիրը կախված է դաշնակիցների հաղթանակից կամ պարտությունից:

Նախագահ Վիլսոնը, հավատարիմ մնալով իր առաջադիմական գաղափարներին, արտահայտում էր ժողովրդավարության իր գլոբալ տեսլականը նույնիսկ ամերիկյան չեզոքության տարիներին: Երբ պատերազմը ճարակեց Եվրոպան, ակնհայտ էր, որ Միացյալ Նահանգների տնտեսական հզորությունը ներազդելու է հակամարտության ելքի վրա՝ անկախ ամերիկյան ռազմական միջամտությունից: Մինչև 1916 թվականը դաշնակիցների հետ ամերիկյան առևտուրը եռապատկվեց, մինչդեռ Գերմանիայի և նրա դաշնակից տերությունների հետ ամերիկյան առևտուրը խիստ կրճատվեց:

ԱՄՆ մուտքը պատերազմ, ինչպես նաև ռազմական, նյութատեխնիկական ու տնտեսական ռեսուրսների և ժողովրդական աջակցության մոբիլիզացումն ուղեկցվում էր հսկայական գովազդային ու քարոզչական արշավներով: Նախագահ Վիլսոնը ստեղծեց Հանրային տեղեկատվության կոմիտե (Committee on Public Information), որը հայտնի էր որպես Քրիլի կոմիտե (Creel Committee)՝ իր ղեկավար Ջորջ Քրիլի անունով: Կոմիտեի նպատակը հայրենասիրություն ներշնչելու և գրավիչ ռազմական արկածների քարոզարշավն էր: Քրիլը դիմեց հոլիվուդյան ընկերությունների և զանգվածային լրատվության միջոցների օգնությանը՝ զարգացնելու պատերազմի մասին կառավարությանը անհրաժեշտ պատկերացումը: Ամերիկյան քարոզչությունը ամերիկյան ժողովրդավարությունը հակադրում էր իմպերիալիզմին՝ ամերիկացիներին ներկայացնելով որպես խաչակրաց ազգ, որը կոչված էր փրկելու Արևմտյան քաղաքակրթությունը

միջնադարականությունից և միլիտարիզմից: Ըստ պաշտոնական մեկնաբանության՝ Ամերիկյան աշխարհը դարձնում էր «անվտանգ ժողովրդավարության համար»:

Երբ պատերազմական կրքերը բորբոքվեցին, աճող հայրենասիրական տրամադրությունների և դիրքորոշման դեմ ուղղված բոլոր քայլերն ու մարտահրավերները համարվում էին դավաճանական կամ անհավատարմության դրսևորումներ: 1917 թվականին նախագահ Վիլսոնը ստորագրեց Լրտեսության օրենքը (Espionage Act), իսկ 1918 թվականին՝ Խռովության օրենքը (Sedition Act)՝ զրկելով այլախոհներին և ցուցարարներին պատերազմին հրապարակայնորեն ընդդիմանալու իրավունքից: Քննադատներն ու ցուցարարները բանտարկվում էին: Ներգաղթյալները, արհմիությունները, քաղաքական ընդդիմախոսներն ու քաղաքական արմատականները դարձան կառավարական հետաքննության թիրախ և անգամ ավելի թշնամական վերաբերմունքի, հասարակական պարսավանքի և բռնության առարկա:

Մինևույն ժամանակ, կառավարությունը պնդում էր, որ անհատական ֆինանսական ներդրումները շոշափելիորեն նպաստում էին Արևմտյան ռազմաճակատի ամերիկյան զորքերի կարիքների բարելավմանը: Անհատ ամերիկացիներն իրենց ֆինանսական աջակցությունն էին բերում երկրի պատերազմական ջանքերին՝ գնելով պատերազմական պարտատոմսեր կամ աջակցելով Ազատության վարկերի վարմանը (Liberty Loan Drive): Բազմաթիվ ամերիկացիներ, սակայն, շատ ավելին զոհաբերեցին, քան փողը:

Պատերազմի ավարտը

Եվրոպական տերությունները պայքարում էին հարմարվելու արդյունաբերական դարաշրջանի պատերազմի արհավիրքին: Մինչև 1917 թվականի գարունը դաշնակիցներն ունեին քիչ արդյունավետ պաշտպանական միջոցներ սուզանավերի հարձակումների դեմ: Մինչ ԱՄՆ-ն կմտներ պատերազմի մեջ գերմանական սուզանավերն արդեն հասցրել էին խորտակել ավելի քան 1000 նավ: Ամերիկյան ռազմածովային ուղեկցորդ նավերի արագ ավելացումը, բրիտանական նավատորմի հետ շարասյան համակարգի կիրառումը հաջողությամբ հակադարձեցին գերմանական սուզանավերի մարտավարական ազդեցությանը: Ծովային փոխադրումների ու ռազմական նավատորմի կորուստները արագորեն նվազեցին ճիշտ այն ժամանակ, երբ ամերիկյան մեծաքանակ բանակը ժամանեց

Եվրոպա: Թեև ռազմական տեխնիկայի մեծ մասը դեռևս անդրատլանտյան փոխադրման կարիք ուներ և բեռների ու մարդկանց տեղափոխման շարունակական անհրաժեշտություն կար, ԱՄՆ բանակի ֆիզիկական ներկայությունը վճռորոշ հարված էր Գերմանիայի պատերազմական ծրագրերին:

1917 թվականի հուլիսին գերմանացիների դեմ վերջին աղետալի հարձակումից հետո ռուսական բանակը կազմալուծվեց: 1917 թվականի նոյեմբերին Ռուսաստանի ժամանակավոր կառավարությունը փլուզվեց և իշխանության եկավ Վլադիմիր Լենինի բոլշևիկյան կուսակցությունը: Ռուսաստանը շուտով հանձնվեց գերմանական պահանջներին և դուրս եկավ պատերազմից՝ Գերմանիային վերջապես հնարավորություն տալով ուժերը կենտրոնացնելու արևմտյան ռազմաճակատում, որը գերմանական հրամանատարության ծրագիրն էր սկսած 1914 թվականից: Գերմանացի զինվորականները արևելյան թատերաբեմից արագորեն տեղափոխեցին հարյուրհազարավոր զինվորների՝ նախապատրաստվելով հաջորդ տարի Ֆրանսիայում նախատեսված հարձակողական գործողություններին:

1918 թ. մարտին Գերմանիան ձեռնարկեց *Կայզերշլախտ* (Kaiserschlacht) գործողությունը՝ հինգ խոշոր հարձակումներից բաղկացած գարնանային հարձակման ծրագիրը: 1918 թ. հուլիսի կեսերին հարձակողական բոլոր գործողություններն էլ ձախողվեցին, և գերմանական զորքերին չհաջողվեց ճեղքել Արևմտյան ռազմաճակատը: 1918 թվականի օգոստոսի 8-ին ամերիկյան 2 միլիոնանոց էքսպեդիցիոն բանակը միացավ բրիտանական և ֆրանսիական բանակներին՝ մասնակցելով մի շարք հաջող հակագրոհների, որոնք ետ մղեցին քայքայվող գերմանական բնագծերը Ֆրանսիայի ողջ տարածքում: Գերմանացի գեներալ Էրիխ ֆոն Լյուդենդորֆը դաշնակիցների այդ հակահարձակման գործողության մեկնարկն անվանեց «գերմանական բանակի սև օրը»: Գերմանական հարձակողական *Կայզերշլախտի* գործողությունը խորապես հյուծեց Գերմանիայի ռազմական հնարավորությունները: Պարտությունն անխուսափելի էր դառնում: Կայզեր Վիլհելմ II-ը հրաժարվեց գահից՝ գերմանացի զինվորականների պահանջով, և նոր՝ ժողովրդավարական կառավարությունը 1918 թվականի նոյեմբերի 11-ին համաձայնեց զինադադարի պայմաններին: Գերմանական զորքերը հեռացան Ֆրանսիայից ու Բելգիայից և վերադարձան քառսի եզրին կանգնած Գերմանիա:

Պատերազմի ավարտին ավելի քան 4,7 միլիոն ամերիկացիներ էին ծառայում ԱՄՆ զինված ուժերի բոլոր ճյուղերում. 4 միլիոնը՝ բանակում, 600,000-ը՝ նավատորմում և մոտ 80,000-ը՝ ծովային հետևակի կոր-

պուսում: Միացյալ Նահանգները կորցրեց ավելի քան 100,000 մարդ՝ 53,000-ը զոհվեց մարտերում, մյուսները՝ հիվանդություններից: Ամերիկյան կորուստները, սակայն, անհամեմատելի էին եվրոպական ահռելի կորուստների հետ: Չորս տարվա դաժան պատերազմի արդյունքում Ֆրանսիան կորցրեց գրեթե 1,5 միլիոն զինվորական, իսկ Գերմանիան՝ ավելի շատ: Երկու երկրներն էլ պատերազմի պատճառով կորցրեցին իրենց բնակչության մոտ 4 տոկոսը: Աշխարհամարտի մարդկային կորուստները ահռելի էին: Պատերազմի համար մոբիլիզացվել էր ավելի քան 60 միլիոն մարդ, զոհվեց ավելի քան 18 միլիոնը: Աշխարհամարտի ընթացքում Օսմանյան կայսրությունը կազմակերպեց և իրագործեց 1,5 միլիոն հայերի ցեղասպանությունը: Ռուսաստանում առաջին աշխարհամարտին հաջորդեց քաղաքացիական պատերազմն իր միլիոնավոր զոհերով: Պատերազմն ավարտվեց, սակայն նոր մահերը դեռ առջևում էին:

Պատերազմը և գրիպի համավարակը

Երբ պատերազմը մոլեգնում էր Արևմտյան ռազմաճակատում, նոր մահացու վտանգ հայտնվեց՝ գրիպի համավարակը: 1918 թվականի գարնանը գրիպի վիրուսի նոր շտամ հայտնվեց Կանզաս նահանգի Հասքել շրջանի ֆերմերային տարածքում և տարածվեց մոտակայքում գտնվող ԱՄՆ բանակային ամենամեծ ուսումնական ճամբարներից մեկում՝ Քեմփ Ֆանսթոնում: Վիրուսը տարերայնորեն տարածվեց ողջ Միացյալ Նահանգներում, իսկ այնուհետև՝ հաջորդական ալիքներով ողջ աշխարհում: 1918 թվականի մարտից մայիս ընկած ժամանակահատվածում ամերիկյան խոշորագույն ռազմական ուսումնական ճամբարներից տասնչորսը հայտնեցին գրիպի համաճարակի բռնկումների մասին: Վարակված զինվորների միջոցով ամերիկյան զորքերի Եվրոպա տեղափոխման ընթացքում վիրուսը հասավ Ֆրանսիա: 1918 թ. սեպտեմբերին գրիպի համաճարակն արդեն տարածվել էր Միացյալ Նահանգների բոլոր ուսումնական ճամբարներում: Եվ հետո այն մուտացիայի ենթարկվեց:

Վիրուսի երկրորդ ալիքը՝ մուտացված շտամը, նույնիսկ ավելի մահացու էր, քան առաջինը: Գրիպի համաճարակի զոհերի անհամաչափ մեծամասնությունը 18-35 երեսունհինգ տարեկաններն էին: Եվրոպայում գրիպի համաճարակը հարվածեց Արևմտյան ռազմաճակատի երկու կողմերին էլ: Այսպես կոչված «Իսպանական գրիպը» (Spanish Influenza) կամ «Իսպանուհին» (“Spanish Lady”) իր այս սխալ անվանումը ստացավ հիվանդության մասին տարածվող պատմությունների պատճառով, որոնք առաջին

անգամ հայտնվեցին պատերազմում չեզոք Իսպանիայի չգրաքննվող թերթերում: Գրիպի համաշխարհային համավարակը հանգեցրեց մոտ 50 միլիոն մարդկային զոհերի ամբողջ աշխարհում: ԱՄՆ բանակի գլխավոր վիրաբույժի զեկույցները ցույց են տալիս, որ շուրջ 227,000 ամերիկացի զինվորներ հոսպիտալացվել էին մարտում ստացած վերքերից, մինչդեռ գրեթե կես միլիոնը՝ գրիպից: Համաճարակի ամենասարսափելի ալիքը հարվածեց 1918 թվականի աշնանը Մյուզ-Արգոն հարձակման (Meuse-Argonne Offensive) ժամանակ՝ հյուծելով ամերիկյան ու գերմանական բանակների մարտական հնարավորությունները:

Այսպիսով, պատերազմի ժամանակ գրիպի համավարակից ավելի շատ զինվորներ մահացան, քան մարտական գործողություններից: Համաճարակը շարունակեց տարածվել նաև զինադադարից հետո, մինչև վերջապես մարեց 1920-ական թվականների սկզբին: Բուժման ոչ մի տարբերակ այդպես էլ չգտնվեց:

Տասնչորս կետերը և Ազգերի լիգան

Մինչ գրիպի համավարակը տարածվում էր աշխարհում, Եվրոպան և Ամերիկան տոնում էին համաշխարհային պատերազմի ավարտը: 1918 թվականի դեկտեմբերի 4-ին նախագահ Վիլսոնը դարձավ ԱՄՆ առաջին նախագահը, ով իր պաշտոնավարման ընթացքում մեկնեց արտասահման: Նա մտադիր էր ձևավորել խաղաղության նոր համակարգը: Պատերազմը տապալեց եվրոպական չորս մեծ կայսերական տերություններին: Գերմանական, Ռուսական, Ավստրո-Հունգարական և Օսմանյան կայսրությունները փլուզվեցին, և Եվրոպայի քաղաքական քարտեզը վերագծվեց՝ տեղավորելով նորանկախ ազգ-պետություններին: Գերմանիայի զինաթափումից հետո Վիլսոնը և դաշնակից երկրների առաջնորդները ժամանեցին Ֆրանսիա և հավաքվեցին Վերսալում՝ մասնակցելու Փարիզի խաղաղության վեհաժողովին, որպեսզի թելադրեին պատերազմի ավարտը կարգավորող պայմանները և նախագծեին եվրոպական խաղաղության նոր համակարգը: Ամիսներ տևած քննարկումներից և բանակցություններից հետո Վերսալի խաղաղության պայմանագիրը պաշտոնապես ավարտեց պատերազմը:

Դեռևս 1918 թվականի հունվարի 8-ին Կոնգրեսի լիագումար նիստում նախագահ Վիլսոնը ներկայացրել էր պատերազմի նպատակների և խաղաղության պայմանների մասին իր հավակնոտ նախագիծը, որը հայտնի է որպես Տասնչորս կետեր (Fourteen Points): Ծրագիրը ոչ միայն վերաբե-

րում էր տարածքային խնդիրներին, այլև առաջարկում էր սկզբունքներ, որոնց հիման վրա կարելի կլիներ կառուցել երկարաժամկետ խաղաղություն: Սակայն 1918 թվականի հունվարին Գերմանիան դեռևս ակնկալում էր բարենպաստ բեկում մարտի դաշտում և լրջորեն չէր մտածում ընդունելու Տասնչորս կետերի պայմանները: Դաշնակիցներն էլ ավելի արհամարհական վերաբերմունք ունեին Տասնչորս կետերի ծրագրի հանդեպ: Ֆրանսիայի վարչապետ Ժորժ Կլեմանսոն նշում էր, թե «Բարի Աստված ընդամենը տասը պատվիրան ուներ», իսկ Վիլսոնն առաջարկում էր տասնչորսը:

Նախագահ Վիլսոնը ձգտում էր իրագործել հետպատերազմյան աշխարհակարգի իր տեսլականը: Վիլսոնը հայտարարում էր, որ Միացյալ Նահանգները մտել էր պատերազմի մեջ «աշխարհը ժողովրդավարության համար անվտանգ դարձնելու»: Վիլսոնյան նախագծի առանցքում միջազգային նոր կազմակերպությունն էր՝ Ազգերի լիգան (League of Nations), որը պետք է պահպաներ համաշխարհային խաղաղությունը՝ կանխելով ամբողջ Եվրոպան պատռած համասնման ապագա արհավիրքները և «տրամադրելով քաղաքական անկախության և տարածքային ամբողջականության փոխադարձ երաշխիքներ ինչպես մեծ, այնպես էլ փոքր պետություններին»: Հավաքական անվտանգության այս խոստումը, ըստ որի՝ Ազգերի լիգայի մեկ ինքնիշխան անդամի վրա հարձակումը կդիտվեր իբրև հարձակում բոլորի վրա, Տասնչորս կետերի հիմնական բաղադրիչներից էր:

Սակայն խաղաղության այսպիսի նոր համակարգի համար պայքարը անհանգստացնում էր շատերին: Մինչ հասարակայնությունը Եվրոպայում նախագահ Վիլսոնին ողջունում էր իբրև «խաղաղության Աստված», նրա գործընկեր պետական այրերը ոգևորված չէին հետպատերազմյան Եվրոպայի վերաբերյալ նրա ծրագրերից: Ամերիկայի ամենամոտ դաշնակիցները առանձնապես շահագրգիռ չէին Ազգերի լիգայի ստեղծման ծրագրի իրականացմամբ: Դաշնակից երկրների առաջնորդները ձգտում էին երաշխավորել իրենց պետությունների ապագա անվտանգությունը: Ի տարբերություն Միացյալ Նահանգների՝ դաշնակիցներն անմիջականորեն ենթարկվել էին պատերազմի սարսափներին: Ուստի նրանք հրաժարվեցին հետագա զոհաբերություններից: Բանակցությունները պարզ դարձրին, որ Մեծ Բրիտանիայի վարչապետ Դեյվիդ Լլոյդ Ջորջն ավելի շատ շահագրգռված էր Բրիտանիայի կայսերական տիրույթները պահպանելու և ընդլայնելու մեջ: Ֆրանսիայի վարչապետ Ժորժ Կլեմանսոն ձգտում էր խաղաղության, որը կճանաչեր դաշնակիցների հաղթանակը

և Կենտրոնական տերությունների մեղավորությունը՝ պատժելով Գերմանիային, սահմանելով ֆինանսական տույժեր և այլ փոխհատուցումներ ու այդ կերպ սահմանափակելով ապագայում պատերազմ վարելու նրա ունակությունը:

Հետևաբար, Ազգերի լիգայի համար պայքարը հիմնականում Վիլսոնի ուսերին էր: 1919 թվականի հունիսին ստորագրվեց պայմանագրի վերջնական տարբերակը, և նախագահ Վիլսոնը կարողացավ վերադառնալ ԱՄՆ: Վերսալի պայմանագիրը փոխզիջում էր, որը ներառում էր Գերմանիայից փոխհատուցումների պահանջները, Ազգերի լիգայի դրույթները և հավաքական անվտանգության խոստումը: Նախագահ Վիլսոնի համար դա անկատար խաղաղություն էր, բայց անկատար խաղաղությունն ավելի լավ էր, քան ընդհանրապես ոչինչ:

Ազգերի լիգայի համար իրական պայքարը ամերիկյան ներքին ճակատում էր: Մասաչուսեթսի հանրապետական սենատոր Հենրի Քեքոտ Լոջը Ազգերի լիգայի ամենահայտնի հակառակորդն էր: Որպես Սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ և Հանրապետական կուսակցության ազդեցիկ առաջնորդ՝ նա կարող էր արգելափակել պայմանագրի վավերացումը: Լոջը խիստ քննադատում էր Վերսալի պայմանագրի՝ Ազգերի լիգային վերաբերող դրույթները՝ Միացյալ Նահանգների ինքնիշխանությունը կրճատելու վտանգների հնարավորության համար: Չլինելով մեկուսականության ջատագով՝ Լոջը փոխարենը պահանջում էր, որ ԱՄՆ-ն զբաղվի իր խնդիրներով յուրովի՝ զերծ մնալով Ազգերի լիգայի կողմից առաջարկվող հավաքական անվտանգությունից և վերազգային վերահսկողությունից: Սենատում Լոջի ազդեցությունն անհաղթահարելի էր:

Այնուամենայնիվ, նախագահ Վիլսոնն իր գործը ներկայացրեց ամերիկացի ժողովրդին՝ հուսալով, որ պարզ ընտրողները կարող էին համոզվել, որ ապագա համաշխարհային խաղաղության միակ երաշխիքը Ազգերի լիգան էր: Նախագահ Վիլսոնը ողջ երկրով մեկ իր հյուժիչ ճանապարհորդության ընթացքում կաթված ստացավ՝ դառնալով անգործունակ: Նրա ընդդիմախոսները հաղթանակեցին: Նախագահ Վիլսոնի երազանքը Ազգերի լիգայի մասին մահացավ Սենատի հատակին: Լոջի ընդդիմությունը հաջողությամբ արգելափակեց Ամերիկայի մուտքը Ազգերի լիգա, մի կազմակերպություն, որը ստեղծվել և պաշտպանվում էր ԱՄՆ նախագահի կողմից: Ազգերի լիգան հիմնադրվեց և գործում էր հիսունութ ինքնիշխան անդամ պետություններով, սակայն Միացյալ Նահանգները երբեք չմիացավ:



ԱՄՆ 28-րդ նախագահ Թոմաս Վուդրո Վիլսոն (1913-1921 թթ.)

Վուդրո Վիլսոնի դոկտրինը և նոր աշխարհակարգը

Առաջին աշխարհամարտի արդյունքում աշխարհակարգը կերպափոխվեց: Այս փոխակերպությունը ուղղորդվեց ԱՄՆ-ի կողմից: Սկսվեց միջազգային իրավունքի սահմանադրականացումը: XIX և XX դարերի սահմանագծին ԱՄՆ արտաքին քաղաքական հայեցակարգը որակական լուրջ փոփոխություններ կրեց. կախված ժամանակի պահանջներից և ամերիկյան հնարավորությունների մակարդակից՝ վերամեկնաբանվեց և զարգացվեց «Մոնրոյի դոկտրինը»: Ըստ այդմ՝ եթե նախկինում նորաստեղծ պետության կայացման համար կարևոր էր Ամերիկյան մայրցամաքով սահմանափակվելու իրողությունը, ապա այժմ այն հույժ խոցելի կողմերից էր: Ամերիկյան անվտանգությունն այլևս անբաժան էր համարվում մնացյալ մարդկության անվտանգությունից: Դա մասնավորապես արտահայտվեց նախագահ Թոմաս Վուդրո Վիլսոնի (1913-1921 թթ.) հայեցակարգում՝ «ազգերի ինքնորոշման» իրավունքի շեշտադրմամբ, «հավաքական անվտանգության» հղացքով և «ժողովրդավարության արտահանման» քաղաքականությամբ: Ի հավելումն այս ամենի՝ Վիլսոնը Սպիտակ տուն բերեց արտաքին քաղաքական նոր հայեցակարգ, որը նախորդ հայեցակարգերի համադրում-ամփոփումն էր՝ միջազգային հարաբերությունների կարգավորման իր նորարարական գաղափարները կառուցելով աշխարհում ԱՄՆ-ի դերի սեփական մեկնաբանության վրա, որի էությունը Մոնրոյի դոկտրինի համաշխարհայնացումն (գլոբալիզացիան) էր: Համաձայն դրա՝ ԱՄՆ շահերից էր բխում ոչ միայն Արևմտյան կիսագնդում, այլև ողջ աշխարհում կարգուկանոնի պահպանումը: Այսպիսով, Մոնրոյի դոկտրինը առաջնորդության և գերիշխանության տարածաշրջանային սկզբունքից վերաճվում էր համաշխարհային տեսլականի: Ըստ Վիլսոնի դոկտրինի՝ ԱՄՆ-ն պետք է ստեղծեր ոչ թե նոր կայսրություն, այլ «գլոբալ ժողովրդավարություն»: Ժողովրդավարության «փարոսի» դերից ԱՄՆ-ի ակտիվ գործողությունների անցնելու հայեցակարգը հետագայում բնորոշվեց «վիլսոնականություն» (“Wilsonianism”) եզրույթով:

Իր պաշտոնավարման առաջին ժամկետում Վիլսոնը «ժողովրդավարության պաշտպանությունը» իրականացնում էր Լատինական Ամերիկայի թույլ հանրապետությունների շրջանում: Սկզբնապես Վիլսոնը և պետքարտուղար Ուիլիամ Ջենինգս Բրայանը (1913-1915 թթ.) կարծում էին, որ ԱՄՆ պարտականությունն է ժողովուրդների ազատությունն ու ժողովրդավարությունն ավելի շատ պաշտպանել, քան տարածել: Ալաբամա նահանգի Մոբիլ քաղաքում Հարավային առևտրային կոնգրեսում

Վիլսոնի ուղերձը (1913 թ., հոկտեմբեր 27) կանխատեսում էր հարաբերությունների ջերմացում և սերտացում ԱՄՆ-ի և իր հարավային հարևանների միջև: Պանամայի ջրանցքի վերաբերյալ, որը դեռ կառուցման փուլում էր, նշվում էր. «Ես հավատում եմ, որ նոր բացվելիք ճանապարհով, մինչ մենք ֆիզիկապես մայրցամաքը կտրում ենք տարբեր մասերի, հոգեպես միավորում ենք դրանք»: Ընդգծվում էր պարտավորությունը տարածաշրջանում սահմանադրական կարգի պահպանման համար և ավելացվում, որ 'Միացյալ Նահանգներն էլ երբեք չի ձգտի ոչ մի հավելյալ ոտնաչափ հողի նվաճման': Նման հայտարարությունները, սակայն, չէին խանգարում ռազմական միջամտություններ իրականացնելուն:

Այլևս պարզ էր, որ եվրոպական մայրցամաքում ստեղծված իրադրությունը լուրջ վտանգ էր պարունակում ուժերի հավասարակշռության պահպանման համար: Վիլսոնը մեկնարկում էր 1916 թվականին իր կողմից հռչակված «հաշտություն առանց հաղթանակի» դրոյթից: Աստիճանաբար ԱՄՆ-ի մասնակցությունը աշխարհամարտին դառնում էր անխուսափելի:

ԱՄՆ համաշխարհային դերակատարության նոր տեսլականը դրսևորվեց 1917 թ. ապրիլի 2-ին, երբ նախագահ Վիլսոնը դիմեց ԱՄՆ Կոնգրեսին՝ առաջարկելով պատերազմ հայտարարել Գերմանիային: Ուղերձում ասվում էր.

«Չեզոքությունն արդեն անհնարին է և անցանկալի, երբ խոսքն ամբողջ աշխարհի խաղաղության և նրա ժողովուրդների ազատության մասին է... Աշխարհը պետք է անվտանգ դառնա ժողովրդավարության համար, այն պետք է կայանա քաղաքական ազատության հիմքի վրա... Արդարությունն ավելի թանկ է, քան խաղաղությունը, և մենք կպայքարենք նրա համար, ինչը միշտ մոտ է եղել մեր սրտերին՝ ժողովրդավարության համար, մարդու իրավունքների համար, փոքր ազգերի իրավունքների և ազատության համար...»:

Այսու՝ հայտարարվում էր, որ ժողովրդավարական Միացյալ Նահանգները բարոյական մանդատ ունի համաշխարհային առաջնորդության: Մյուս կողմից, Միացյալ Նահանգները, ղեկավարվելով սեփական ազգային շահերով, ներգրավվեց եվրոպական պատերազմին նաև ուժերի հավասարակշռությունը պահպանելու նպատակով: Վիլսոնը պնդում էր, որ ԱՄՆ-ն իրավունք չունի պահելու իր արժեքները միայն իր համար: 1917 թ. ապրիլի 6-ին Կոնգրեսը ձայների ճնշող մեծամասնությամբ հավանություն տվեց Վիլսոնի «պատերազմ հանուն խաղաղության» առաջարկին:

ԱՄՆ-ի մուտքը Առաջին աշխարհամարտ տեխնիկապես հնարավոր դարձրեց համընդհանուր հաղթանակը: Այս քայլով Վիլսոնը փորձում էր ոչ միայն շտկել, այլև վերածնել հին մինչպատերազմական աշխարհակարգը, որի համապատկերում անդրովկիանոսային տերությանը տրված էր լոկ երկրորդական դերակատարում: Ըստ այդմ, Վիլսոնի նոր աշխարհակարգում ուժերի հավասարակշռության սկզբունքն իր տեղը պետք է զիջեր նոր՝ ուժերի միավորման սկզբունքին:

1918 թ. հունվարի 8-ին Կոնգրեսի լիագումար նիստին ուղղված իր ուղերձում նախագահ Վիլսոնը հանդես եկավ «Պատերազմի նպատակները և հաշտության պայմանները» տասնչորս կետերից բաղկացած խաղաղության ծրագրով: Համապատասխանաբար «տասնչորս կետերն» էին՝ 1. թափանցիկ դիվանագիտությունը, 2. ծովագնացության ազատությունը, 3. տնտեսական արգելքների վերացումը, 4. սպառազինությունների խիստ կրճատումը, 5. գաղութային վեճերի արդար լուծումը, 6. ռուսական տարածքներից զորքերի դուրսբերումը, 7. Բելգիայի ինքնիշխանության վերականգնումը, 8. Էլզաս-Լոթարինգիայի վերադարձը Ֆրանսիային, 9. Իտալիայի սահմանների վերանայումը, 10. Ավստրո-Հունգարիայի ժողովուրդների ինքնավարությունը, 11. Բալկաններից օտարերկրյա զորքերի դուրսբերումը, 12. Օսմանյան կայսրության թուրքական շրջանների ինքնիշխանության երաշխավորումն ու նրանց տիրապետության տակ գտնվող ազգերին ինքնավարություն շնորհելը, նաև Նեղուցների միջագայնացումը, 13. անկախ Լեհաստանի ստեղծումը՝ ելքով դեպի ծով, և գլխավորը՝ 14. Ազգերի լիզայի ստեղծումը. առաջ էին քաշվում ազգերի համագործակցության և պետությունների իրավահավասարության գաղափարները:

Այստեղ առանցքային էր 14-րդ կետը՝ Ազգերի լիզայի ստեղծումը. «Ազգերի ընդհանուր ընկերակցություն պետք է ստեղծվի հատուկ ուխտի ներքո՝ մեծ և փոքր պետություններին համահավասար քաղաքական անկախության և տարածքային ամբողջականության փոխադարձ երաշխիքներ ընձեռելու նպատակով»: Հետևաբար՝ նոր աշխարհակարգի կառուցման համապատկերում ժողովրդավարության անվտանգությունն ապահովելու համար Վիլսոնն առաջադրում էր «հավաքական անվտանգության» հղացքը, որի իրականացմանը պետք է միտված լիներ Ազգերի լիզայի գործունեությունը: Այս կերպ Վիլսոնը ծանրակշիռ ներդրում կատարեց միջազգային հարաբերություններում «իդեալիզմի» տեսության և քաղաքականության մեջ: Սույն փաստաթղթի 12-րդ կետը շեշտում էր Օսմանյան կայսրության ոչ թուրք ժողովուրդների ազատորեն ապրելու և սեփական

ճակատագիրը տնօրինելու իրավունքը:

Վուդրո Վիլսոնը գտնում էր, որ կայսրությունները պետք է փլուզվեն և պաշտպանում էր ազգերի ինքնորոշման իրավունքը: Սակայն նրա և եվրոպացի առաջնորդների այս տեսլականը սահմանափակված էր միայն եվրոպական ազգերով, որոնք մաս էին կազմում Ավստրո-հունգարական, Ռուսական և Օսմանյան կայսրությունների: Քանզի, ըստ նրանց, եվրոպական ազգերը գտնվում էին զարգացման համապատասխան մակարդակի վրա, հետևաբար կարող էին պատասխանատվություն վերցնել սեփական ճակատագրի նկատմամբ: Մյուս ժողովուրդների համար նախատեսվում էր Ազգերի լիգայի կանոնադրության 22-րդ հոդվածով սահմանված մանդատային համակարգի կիրառումը: Բրիտանացի ականավոր պատմագետ Առնոլդ Թոյնբին թուրքական կառավարության կողմից իրագործվող Հայոց ցեղասպանության կապակցությամբ իր 1915 թ. «Հայկական կոտորածները. ազգի սպանությունը» աշխատության մեջ պնդում էր, որ հայերը նույնքան եվրոպացիներ են իրենց քաղաքակրթությամբ, որքան Արևմտյան Եվրոպայի բնակիչները, և տերությունները պետք է միջամտեն հոգուտ հայերի: Ըստ Թոյնբիի՝ Օսմանյան կայսրության հպատակության տակ մնացած ազգերից հայերը միակն էին, որ ի զորու էին ինքնուրույն կառուցելու «քաղաքակիրթ, արդի պետություն»:

Ինչ վերաբերում է ձևավորվող նոր աշխարհակարգում հայկական հարցին, ապա 1919 թ. հունվարի 30-ին նախագահ Վիլսոնի նախաձեռնությամբ Փարիզի վեհաժողովը որոշում էր ընդունել Արևմտյան Հայաստանի մանդատատեր (հոգատար) նշանակելու մասին: 1920 թ. ապրիլի 26-ին դաշնակից և ընթերակա ուժերի Գերագույն խորհուրդը, բաղկացած Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և Ճապոնիայի ներկայացուցիչներից, դիմեց ԱՄՆ նախագահ Վիլսոնին՝ իրավարար վճռով որոշելու Հայաստանի և Թուրքիայի սահմանը: Այս դիմումը 89-րդ հոդվածի տեսքով ներառվեց 1920 թվականի օգոստոսի 10-ի Սևրի պայմանագրում և արդեն Հայաստանի Հանրապետության ու Օսմանյան Թուրքիայի, ինչպես նաև պայմանագիրը ստորագրած պետությունների անունից հղվեց ԱՄՆ նախագահին: 1920 թ. նոյեմբերի 22-ին նախագահ Վիլսոնը ստորագրեց «Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանի, Հայաստանի դեպի ծով ելքի և հայկական սահմանին հարակից թուրքական տարածքի ապահովման և կառավարման վերաբերյալ» իրավարար վճիռը (Arbitral Award): Ըստ այդմ՝ Հայաստանի Հանրապետության իրավունքները ճանաչվում էին նախկին Օսմանյան կայսրության Վանի, Բիթլիսի, Էրզրումի և Տրապիզոնի վիլայեթների վրա: Դեկտեմբերի 6-ին վճիռը պաշտոնապես փոխանց-

վեց Փարիզ՝ դաշնակից ուժերի Գերագույն խորհրդին, սակայն մնաց չիրագործված:

Աշխարհամարտի արդյունքում փլուզվեցին Գերմանական, Ռուսական, Ավստրո-Հունգարական և Օսմանյան կայսրությունները: Հատկանշական է՝ այս փուլում ազգերի ինքնորոշման իրավունքը հիմնականում ճանաչվում էր եվրոպական ազգերի առնչությամբ: Արդյունքում Արևելյան Եվրոպայում առաջացան մի շարք նոր ինքնիշխան պետություններ՝ Ֆինլանդիան, Էստոնիան, Լատվիան, Լիտվան, Լեհաստանը, Չեխոսլովակիան, Ուկրաինան, Վրաստանը, Հայաստանը և այլն: Վիլսոնը հայտարարում էր, որ միջազգային հարաբերությունների համակարգը պետք է կառուցվի ազգերի ինքնորոշման սկզբունքի հիման վրա, և որի անվտանգությունը պետք է կախված լինի ոչ թե ուժերի հավասարակշռությունից, այլ ուժերի միավորումից և հավաքական գործողություններից: Հատկանշական է, որ ներգրավվելով Առաջին աշխարհամարտին (1917 թ., ապրիլի 6)՝ ԱՄՆ-ն չմիացավ Անտանտի երկրներին, այլ իրեն հռչակեց նրա սուկ «ասոցացված տերություն» (Associated Power): Շնորհիվ դրա՝ ամերիկյան կառավարությունը մի կողմից ընդգծում էր ազգերի *հավաքական անվտանգության* հղացքը, մյուս կողմից իրավաբանորեն ազատ էր մնում միջդաշնակցային փոխադարձ պարտականություններից: Այս կերպ Միացյալ Նահանգները նաև ցույց էր տալիս, որ մուտք է գործում պատերազմ ոչ թե որպես որևէ դաշինքի անդամ, այլ հանուն հավաքական անվտանգության:

Ըստ Իմմանուիլ Ուոլերսթայնի՝ 1917 թվականը արդի աշխարհահամակարգի պատմության մեջ գաղափարաբանական առումով շրջադարձային էր: Այդ շրջադարձը նշանավորեցին մի կողմից Վիլսոնի դոկտրինի հռչակումը և մյուս կողմից՝ բոլշևիկյան հեղափոխությունը: Դրվում էին ապագա Սառը պատերազմի գաղափարաբանական առճակատման հիմքերը: Վիլսոնի դոկտրինը հիմնված էր լիբերալ (ազատական) գաղափարաբանության վրա և համընդհանրական բնույթ ուներ: Այստեղ կենտրոնականը ինքնորոշման գաղափարն էր, որը անձի ազատության իրավունքից վերածվեց ազգերի ինքնորոշման իրավունքի: Բոլշևիկները Վլադիմիր Լենինի գլխավորությամբ ևս հայտարարում էին ազգերի ինքնորոշումը պաշտպանելու մասին: Սակայն, ի տարբերություն Վիլսոնի, ով պաշտպանում էր այդ իրավունքի իրականացման սահմանադրական ուղին, Լենինը հանդես էր գալիս համաշխարհային հեղափոխության դիրքերից: Ազգերը կամ ժողովուրդները, ըստ մարքսիզմի տեսության, երկարաժամկետ դերակատարներ չէին. ենթադրվում էր, որ նրանք, ինչպես և պետությունները, ի վերջո վերանալու էին: Սակայն կարճաժամկետ հե-

ռանկարում ազգերը և ժողովուրդները իրողություններ էին, որոնք մարքսիստական ուժերը ոչ միայն չէին կարող մերժել, այլև որոնց օգտագործումը մարտավարական առումով ձեռնտու էր:

Փարիզի խաղաղության վեհաժողովում հետպատերազմյան աշխարհակարգի կառուցման խնդրում հիմնական դերը կատարում էր «Մեծ քառյակը»՝ ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնը, Մեծ Բրիտանիայի վարչապետ Դեյվիդ Լլոյդ Ջորջը, Ֆրանսիայի վարչապետ Ժորժ Կլեմանսոն և Իտալիայի վարչապետ Վիտտորիո Օրլանդոն: Խորհրդաժողովը մշակեց Ազգերի լիգայի ստեղծման համաձայնագիրը և հաշտության պայմանագրեր նախապատրաստեց Գերմանիայի (Վերսալ, 1919 թ.), Ավստրիայի (Սեն-ժերմեն, 1919 թ.), Հունգարիայի (Տիրանոն, 1920 թ.), Բուլղարիայի (Նյոյ, 1919 թ.) ու Թուրքիայի (Սևր, 1920 թ.) հետ:

1919 թ. հունիսի 28-ին կնքվեց Վերսալի պայմանագիրը, որով պաշտոնապես ավարտվեց Առաջին աշխարհամարտը (1914-1918 թթ.): Վերսալի պայմանագրի բաղկացուցիչ մասն էր Ազգերի լիգայի ստեղծման մասին համաձայնագիրը: Հատկանշական է, որ Ազգերի լիգայի կանոնադրության 11-րդ հոդվածը սահմանում էր, որ յուրաքանչյուր պատերազմի կամ պատերազմի սպառնալիքի դեպքում Ազգերի լիգան պետք է համապատասխան գործողություններ նախաձեռնի «ի պաշտպանություն ազգերի խաղաղության»:

Այսպիսով, Փարիզյան կարգավորումներն արտահայտում էին փոխհատուցման, հավաքական անվտանգության և ազգերի ինքնորոշման սկզբունքները, սակայն հաշվի չէին առնում «Եվրոպական հավասարակշռությունը»: Փարիզի խաղաղության վեհաժողովում ներկայացված չէին ո՛չ պարտված պետությունները և ո՛չ էլ Խորհրդային Ռուսաստանը: Արդյունքում այնպես ստացվեց, որ աշխարհը, որ կարծես թե պատրաստվում էր վերջ տալ բոլոր պատերազմներին, հաշվի չէր առնում Եվրոպայի երկու մեծ տերություններին՝ Գերմանիային և Ռուսաստանին, որոնց բաժին էր ընկնում Եվրոպայի բնակչության կեսից ավելին և ամենամեծ ռազմական ներուժը: Եվ արդեն միայն այս հանգամանքը նսեմացնում էր Փարիզյան կարգավորումներով հաստատվելիք խաղաղության հնարավորությունը: Եվ այսպես, 1919-1922 թթ. ձևավորված Վերսալ-Վաշինգտոնյան աշխարհակարգը, որը պարառում էր ողջ մոլորակը և, ըստ էության, առաջին համաշխարհային աշխարհակարգն էր, գոյատևեց ընդամենը շուրջ երկու տասնամյակ:



**«Մեծ քառյակը»՝ Մեծ Բրիտանիայի վարչապետ Դեյվիդ Լլոյդ Ջորջ,
Իտալիայի վարչապետ Վիտտորիո Օրլանդո, Ֆրանսիայի վարչապետ Ժորժ
Կլեմանսո և ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոն (ձախից աջ),
Փարիզ, 1919 թ. մայիս:**

Առաջին աշխարհամարտի հետևանքները

Աշխարհամարտը կերպափոխեց աշխարհը, Եվրոպան, տերությունները և տարածաշրջանները: Մերձավոր Արևելքը ևս կտրուկ փոխվեց: Օսմանյան կայսրության կազմալուծման արդյունքում կազմավորվեցին մի շարք պետություններ, որոնցից շատերը ստեղծվել և սահմանագծվել էին եվրոպական տերությունների կողմից՝ այնքան էլ հաշվի չառնելով էթնիկական և կրոնական իրողությունները: 1917 թվականի Ռուսական հեղափոխությունը, միևնույն ժամանակ, բորբոքեց ամերիկյան վախերը կոմունիզմի ուրվականի նկատմամբ: Երբ 1918 թվականի մարտին բոլշևիկները կնքեցին խաղաղության անջատ պայմանագիր Գերմանիայի հետ, դաշնակիցները նախաձեռնեցին ռազմական ներխուժում հյուսիսային Ռուսաստանում և Սիբիրում՝ կանխելու գերմանական ազդեցությունը, օգնելու սպիտակ գվարդիականներին և պայքարելու բոլշևիկյան հեղափոխության դեմ: Վիլսոնը համաձայնեց, և ամերիկյան զորքերը տեղակայված մնացին Ռուսաստանում մինչև 1920 թվականը: Թեև ազգերի ինքնորոշման իրավունքի մասին բոլշևիկյան հռետորաբանությունը հետևում էր Վիլսոնի Տասնչորս կետերի իդեալներից շատերին, դրա իրագործման ճանապարհին Վլադիմիր Լենինը աջակցություն էր հայտնում հեղափոխություններին ընդդեմ կայսերական կառավարման և գաղութատիրության ամբողջ աշխարհում, և այդ առումով ժողովուրդների ինքնակառավարման ամերիկյան հանձնառությունը բավականաչափ զորեղ չէր կոմունիզմի հզոր գաղափարաբանության հռչակած սկզբունքների դեմ:

Հետպատերազմյան շրջանում Միացյալ Նահանգները բախվեց ներքին դաժան իրողությունների: 1919 թվականի Կարմիր ամռանը (Red Summer) ռասայական լարվածությունը հասել էր գագաթնակետին, երբ բռնության ալիքը տարածվեց առնվազն քսանհինգ քաղաքներում, այդ թվում՝ Չիկագոյում և Վաշինգտոնում: Խռովությունները ծագեցին հատկապես պատերազմական ժամանակի ռասայական լարվածությունից: Արդյունաբերական պատերազմի արտադրությունը և զինված ուժերում մարդկանց զանգվածային ծառայությունն առաջացրել էր աշխատուժի հսկայական պակասուրդ, և հազարավոր սևամորթ հարավցիներ գաղթել էին Հյուսիս և Միջին արևմուտք՝ փախչելով հարավային աղքատության ճիրաններից: Սակայն, այսպես կոչված, Մեծ գաղթը (Great Migration) ծնեց լուրջ ռասայական հակամարտություն, քանզի սպիտակ հյուսիսցիները և պատերազմից վերադարձած վետերանները պայքար սկսեցին իրենց աշխատատեղերը վերադարձնելու և իրենց թաղամասերը նոր սևամորթ միգրանտներից ազատելու համար:

Ամփոփենք: Առաջին համաշխարհային պատերազմը ոչնչացրեց միլիոնավոր մարդկանց և խորապես փոխեց համաշխարհային պատմության ընթացքը: Ըստ էության, Վիլսոնի գաղափարները պետք է վերածվեին վերազգային հաստատության, որին ամերիկյան ժողովուրդը, հասարակական և քաղաքական միտքը դեռևս պատրաստ չէր, ինչպես և պատրաստ չէր համաշխարհային ոստիկանի պարտավորություններ ստանձնելուն: Իզոլիացիոնիստական միտումները դեռևս ուժեղ էին: Միացյալ Նահանգները երբեք չմիացավ այդ միջազգային կազմակերպությանը, որի ստեղծման համար այնքան ջանք էր գործադրել իրենց նախագահը՝ պատկերացնելով այն իբրև նոր աշխարհակարգի հիմքը:

Վիլսոնի տասնչորս կետերից բաղկացած ծրագիրը, թեև ամբողջությամբ չիրականացավ, բայցևայնպես միջազգային հարաբերություններում հեղափոխական նշանակություն ունեցավ: Այստեղ նոր աշխարհակարգի կառուցման ամերիկյան բարոյական չափորոշիչներ էին հռչակվում *ժողովրդավարությունը*, *հավաքական անվտանգությունը* և *ազգերի ինքնորոշումը*: ԱՄՆ արտաքին քաղաքականության այսպիսի կերպափոխությունը հետևանք էր մի կողմից՝ երկրի ներքին հզորության աճի, մյուս կողմից՝ միջազգային քաղաքական համակարգի և գործող աշխարհակարգի աստիճանական քայքայման, որոնց հետևանքով աշխարհի ծայրամաս հանդիսացող ամերիկյան պետությունը դուրս եկավ միջազգային համակարգի կենտրոն:

Հետպատերազմյան անկայունությունները հանգեցնելու էին համաշխարհային տնտեսական Մեծ ճգնաժամին և Երկրորդ համաշխարհային պատերազմին: Պատերազմը ծնունդ տվեց բոլշևիկյան հեղափոխությանը, որի արդյունքում ստեղծվեց Խորհրդային Միությունը: Ըստ այդմ՝ դրվեցին աշխարհի գաղափարաբանական տարանջատման հիմքերը, ինչն ավելի ուշ հանգեցրեց Սառը պատերազմին: Միացյալ Նահանգներում սրվեց միջէթնիկ լարվածությունը և սառեցվեցին առաջադիմական բարեփոխումները: Պատերազմի հետևանքով Մերձավոր Արևելքում և Եվրոպայում ստեղծվեցին նոր պետություններ: ԱՄՆ-ն պատերազմից դուրս եկավ իբրև համաշխարհային մեծ տերություն. Ամերիկայի դերն աշխարհում այլևս նույնը չէր:

ԳԼՈՒԽ 16

Նոր ժամանակաշրջանը և Մեծ ճգնաժամը

1921 թ. մարտին Ուորեն Գ. Հարդինգը դարձավ Միացյալ Նահանգների քսանիններորդ նախագահը: Նա համոզիչ հաղթանակ էր տարել նախագահական ընտրություններում՝ խոստանալով «վերադառնալ նորմալ վիճակին» (“normalcy”): Ավելի քան 115,000 ամերիկացի զինվորներ էին զոհվել Եվրոպայում համաշխարհային պատերազմի ընթացքում: Այնուհետև 1918-1920 թվականներին գրեթե 700,000 ամերիկացիներ մահացել էին գրիպի համաճարակից, որը հարվածեց Ամերիկայի բնակչության գրեթե 20 տոկոսին: Միևնույն ժամանակ, պատերազմից անմիջապես հետո բարձրացան աշխատավորական գործադուլների ալիքներ:

Պատերազմական ժամանակի վերահսկողության թուլացումից հետո տնտեսությունն անկում ապրեց, իսկ գործազրկությունը հասավ 20 տոկոսի: Իհարկե, այս պայմաններում 1920-ականներն ամեն ինչ էին, բայց ոչ «նորմալություն»: Տասնամյակն այնքան վերածնեց ամերիկյան կյանքը, որ այն սկսեց կոչվել բազմաթիվ անուններով՝ Նոր ժամանակաշրջան, Ջազի կամ բարգավաճման տասնամյակ և, առավել հաճախ, «Հախուռն քսանականներ» (Roaring Twenties): Ավտոմեքենաների, կենցաղային տեխնիկայի, ֆիլմերի և ռադիոյի զանգվածային արտադրությունն ու սպառումը խթանեցին նոր տնտեսության և նոր կենսամակարդակի ձևավորումը: Զանգվածային ժամանցի և զվարճանքի նոր արդյունաբերությունը խոսող ֆիլմերն էին և ջազը, որոնք թուլացնում էին հասարակության ավանդական սահմանափակումները:

Սակայն շատ ամերիկացիներ երես թեքեցին քաղաքական և տնտեսական բարեփոխումներից ու առաջադիմական վերափոխումներից, դատապարտեցին Ամերիկայի փոփոխվող ժողովրդագրությունը, խեղդեցին ներգաղթը և վերածնեցին «Կու կլուքս կլանը» միլիոնավոր նոր անդամներով: Մյուս կողմից՝ բազմաթիվ ամերիկացիներ, հատկապես կանայք և աֆրոամերիկացիները, ավելի քան երբևէ պայքարում էին հավասար իրավունքների համար: Միևնույն ժամանակ, ներգաղթյալ համայնքները կառչում էին իրենց մշակույթներից և իրենց հայրենի հավատքներից: 1920-ականները հակամարտությունների և լարվածության տասնամյակ էին: Սակայն ինչ էլ որ լիներ, այն «նորմալություն» չէր:

Սոցիալ-տնտեսական դժվարին ժամանակները նախկինում ևս հարվածել էին Միացյալ Նահանգներին, բայց տնտեսական ճգնաժամը երբեք այդքան երկարատև և այդքան ծանր չէր եղել, որքան 1929 թվականին

սկսված խորը տնտեսական անկումը: Մոտ մեկ տասնամյակ բարգավաճումից հետո տնտեսությունը կանգ առավ: Մարդիկ հանկարծ դադարեցին վարկ վերցնել և գնումներ կատարել: Այն արդյունաբերությունները, որոնց ապրանքների և ծառայությունների գնումները հիմնված էին փոխառությունների վրա, սկսեցին վաճառել ավելի քիչ ապրանքներ: Առևտրով զբաղվող տնտեսավարողներն իջեցրին գները, և երբ դա շահույթ ստանալու համար բավարար գնորդներ չգրավեց, նրանք աշխատանքից ազատեցին աշխատողներին՝ աշխատուժի ծախսերը նվազեցնելու համար: Եվ քանզի այդքան շատ մարդիկ գործազուրկ էին և առանց եկամուտների, խանութներն էլ ավելի քիչ էին վաճառում, իսկ գներն իջեցնում էին, և հետո ավելի շատ մարդիկ էին աշխատանքից ազատվում ու համալրում գործազուրկների բանակը՝ ստեղծելով անկման արատավոր շրջան:

Տնտեսական անկման սկզբից 4 տարի անց Մեծ ճգնաժամը (Great Depression) հասավ իր ամենացածր կետին: Ճգնաժամի հիմնական պատճառը արտադրության և սպառման միջև գոյացած ճեղքվածքն էր՝ պահանջարկի նվազումը: Գործազուրկ էր գրեթե յուրաքանչյուր չորրորդ ամերիկացին: Սովի ճիրաններում հայտնված երկրի դաշտերում սննդամթերքը փտում էր, քանզի բերքից ստացած եկամուտներն այնքան էին նվազել, որ ֆինանսապես չէին արդարացնում ֆերմերների բերքահավաքը:

Կարիքավորները հանեցին իրենց ունեցած բանկային և մյուս բոլոր խնայողությունները, օգնության համար դիմեցին իրենց ընտանիքներին, բարեգործական կազմակերպություններին կամ հանրային հաստատություններին: Շուտով ամբողջը սպառվեց: Գործազուրկ աշխատավորները և դրամական միջոցներից զրկված ֆերմերները չէին կարողանում վճարել իրենց պարտքերը և հիփոթեքային վարկերը: Բանկերը, զրկվելով եկամուտներից, սնանկանում էին՝ իրենց հետ տանելով խնայողական հաշիվները: Խուճապահար հաճախորդները դիմում էին իրենց բանկերին՝ պահանջելով իրենց ավանդները: Այս պայմաններում շատ բանկեր, որոնք կարողունակ էին դիմակայելու ճգնաժամին, խուճապի զոհ դարձան և նույնպես փակվեցին: ԱՄՆ տնտեսությունը գրեթե կանգ էր առել: Նախագահի և Կոնգրեսի կողմից ընդունված բոլոր միջոցները՝ ավելի բարձր մաքսատուրքերի սահմանումը, ներգաղթի սահմանափակումը, ֆինանսական համակարգի կայունության ձեռնարկումները ի վերջո ձախողվեցին կամ բավարար չէին:

1932 թվականի նախագահական ընտրություններում գործող հանրապետական նախագահ Հերբերտ Հուվերը խոստացավ, որ ամուր կկանգ-

նի նրանց դեմ, ովքեր, ըստ նրա, կկործանեն ԱՄՆ Սահմանադրությունը տնտեսությունը վերականգնելու համար: Այս ենթադրաբար վտանգավոր փորձարարների թվում գլխավորը Դեմոկրատական կուսակցությունից նախագահի թեկնածու, Նյու Յորքի նահանգապետ Ֆրանկլին Դելանո Ռուզվելտն էր, ով իր քարոզարշավը սկսեց՝ խոստանալով ամերիկյան ժողովրդին «Նոր համաձայնություն» (New Deal)¹⁴: Ռուզվելտը նախագահական ընտրություններում համոզիչ հաղթանակ տարավ՝ սկիզբ դնելով Միացյալ Նահանգների արագ և կայուն վերափոխմանը: Թեև «Նոր համաձայնությունն» այնքան հեռուն չգնաց, որքան ցանկանում էին նրա կողմնակիցները կամ վախենում էին նրա հակառակորդները, այն արեց ավելին, քան խաղաղ ժամանակների ցանկացած այլ ծրագիր՝ փոխելու ամերիկացիների վերաբերմունքն իրենց երկրի նկատմամբ:

Հանրապետական տասնամյակը. «Հախուռն քսանականները»

Կայունության և բարգավաճման իր խոստումները կատարելու համար նախագահ Հարդինգը ստորագրեց պաշտպանիչ բարձր մաքսատուրքերը վերականգնող օրենսդրական նախագիծը և վերացրեց արդյունաբերության վրա պատերազմական ժամանակի վերահսկողությունը: Միևնույն ժամանակ, պատերազմական ժամանակի մնացորդները՝ քարոզչությունը և օտարականության հանդեպ կասկածները, դրդեցին Կոնգրեսին լուծելու ներգաղթի խնդիրը: 1921 թ. Կոնգրեսն ընդունեց Արտակարգ ներգաղթի օրենքը (Emergency Immigration Act)՝ որպես ներգաղթը սահմանափակող միջոց, իսկ երեք տարի անց՝ Ազգային ծագման օրենքը (National Origins Act), որը հաստատեց ներգաղթի քվոտաները ըստ ծագման երկրների: Յուրաքանչյուր երկրից Միացյալ Նահանգներ ընդունվող ներգաղթյալների թիվը սահմանափակվում էր 1890 թվականին այդ երկրից եկած և Միացյալ Նահանգներում բնակվող բնակչության 2 տոկոսով: Օրենսդրությունն ուղղված էր Հարավային և Արևելյան Եվրոպայից, Լատինական Ամերիկայից և Ասիայից «նոր» ներգաղթյալների ալիքների դեմ: Ըստ էության, այն չափազանց դժվարացնում էր Հյուսիսային Եվրոպայից գատ՝ բոլոր ներգաղթյալների օրինական մուտքը Միացյալ Նահանգներ: Այն բացահայտորեն բացառում էր բոլոր ասիացիներին, թեև տնտեսական նկատառումներով ժամանակավորապես անտեսվում էին մեքսիկացի ներգաղթյալների նկատմամբ սահմանափակումները:

¹⁴ Խորհրդահայ պատմագիտության մեջ ընկունված էր «Նոր կուրս» եզրույթը՝ փոխառված ռուսերենից:

Հետպատերազմյան վատթար տնտեսական դրությունը ստիպեց վերնախավերին զգուշանալ 1917 թ. ռուսական հեղափոխության ուրվականից և զսպել ոչ միայն ամերիկյան սոցիալիստական և անարխիստական տարբեր կազմակերպություններին, այլև գրեթե ամբողջ արհմիութենական գործունեությունը: 1920-ականներին աշխատավորական շարժումը անդամակցության կտրուկ անկում ապրեց: Աշխատավորները կորցրին ոչ միայն սակարկելու իրավունքը, այլև դատարանների, քաղաքական գործիչների և ամերիկյան հասարակության մեծ մասի աջակցությունը:

Հարդինգի նախագահությունը ԱՄՆ պատմության մեջ կմնա որպես ամենակոռումպացվածներից մեկը: Հենրի Բ. Ուոլեսը՝ «Ուոլեսի ֆերմեր» (Wallace's Farmer) թերթի խմբագիրն ու գիտական հողագործության հայտնի ջատագովը, նշանակվեց գյուղատնտեսության քարտուղար: Միլիոնատեր Հերբերտ Հուվերը՝ պատերազմական ժամանակաշրջանի Սննդի վարչության հանրահայտ ղեկավարը, նշանակվեց առևտրի քարտուղար: Գործարարության շահերը բավարարելու համար պահպանողական գործարար Էնդրյու Մելոնը նշանակվեց գանձապետարանի քարտուղար: Այնուամենայնիվ, հիմնականում ընկերների և մտերիմ աջակիցների նշանակումը բարձր պաշտոններում, այսպես կոչված «Օհայոյի ավագակախմբի» ձևավորումը (“the Ohio gang”) հանգեցրեց բարդությունների: Հարդինգի վարչակազմը հսկայական անհաջողություն կրեց հայտնի «Թեյնիկի գմբեթ» (Teapot Dome) սկանդալի արդյունքում, երբ մի քանի պաշտոնյաներ կաշառքի դիմաց Վայոմինգում դաշնային հողատարածքները վարձակալության հանձնեցին նավթային ընկերություններին: Ներքին գործերի քարտուղար Ալբերտ Ֆոլը և նավատորմի քարտուղար Էդվին Դենբին հրաժարական տվեցին, իսկ Ֆոլը դատապարտվեց ազատազրկման:

1923 թ. օգոստոսին Հարդինգը հանկարծամահ եղավ սրտի կաթվածից, և փոխնախագահ Քելվին Բուլիջը ստանձնեց նախագահի պաշտոնը: Նախագահ Բուլիջը ձգտում էր հեռացնել սկանդալի բիծը վարչակազմի վրայից, սակայն շարունակեց Հարդինգի տնտեսական մոտեցումը՝ հրաժարվելով գործողություններ ձեռնարկել գործարարության դեմ՝ ի պաշտպանություն աշխատավորների կամ սպառողների: Ընդհակառակը, Բուլիջը պաշտպանում էր գործարարության և հարուստ ամերիկացիների շահերը՝ նվազեցնելով հարկերը և պահպանելով բարձր մաքսային դրույքաչափերը: Կոնգրեսն արդեն սկսել էր նվազեցնել հարուստ խավերի հարկերը պատերազմական ժամանակի 66 տոկոսից մինչև 20 տոկոս:

1920-ականները նաև կանանց շարժումների ժամանակաշրջան էր: 1920 թ. ընդունվել էր ԱՄՆ սահմանադրության Տասնիններորդ ուղղու-

մը (Nineteenth Amendment), որը երաշխավորում էր կանանց ընտրական իրավունքը: Կին ընտրողները հետապնդում էին բազմաթիվ շահեր: Մտահոգված լինելով աղքատության, թշվառության և ընտանեկան բռնության հարցերով՝ կանայք արդեն լուրջ ջանքեր էին գործադրել ոգելից խմիչքներն արգելող օրենսդրության համար, որն ուժի մեջ մտավ 1920 թ. հունվարին՝ ԱՄՆ սահմանադրության Տասնութերորդ ուղղման համաձայն: Այդ պահից սկսած՝ ակոհողն այլևս չէր կարող արտադրվել կամ վաճառվել (ակոհողի արգելքը չեղարկվեց 1933 թվականին 21-րդ ուղղման վավերացմամբ): Բարեփոխիչները հորդորում էին կառավարությանը քայլեր ձեռնարկել՝ ստեղծելու բարվոք պայմաններ և նվազեցնելու նորաձինների ու երեխաների շրջանում մահացության բարձր մակարդակը, տրամադրելու դաշնային օգնություն կրթության համար, ապահովելու խաղաղություն և զինաթափում: Էլիս Փոլը և Կանանց ազգային կուսակցության (National Woman's Party) անդամները կոչ էին անում սահմանադրորեն վերացնել «սեռի հիմքով» բոլոր իրավական տարբերությունները առաջարկվող Հավասար իրավունքների ուղղման (Equal Rights Amendment (ERA)) միջոցով. նախագիծը ներկայացվեց, բայց պարտություն կրեց Կոնգրեսում:

Ներգաղթյալների, կաթոլիկների և մոդեռնիստների նկատմամբ կասկածները նպաստեցին մի շարք հետադիմական կազմակերպությունների աճին: Այդ կազմակերպություններից էր վերածնված «Կու կլուքս կլանը» (ԿԿԿ)՝ սպիտակամորթ գերիշխանական կազմակերպությունը, որն իր հակասկամորթ դիրքավորումից անդին այժմ պնդում էր, որ պաշտպանում է ամերիկյան արժեքներն ու կենսակերպը սկամորթներից, ֆեմինիստներից և այլ արմատականներից, ներգաղթյալներից, կաթոլիկներից, հրեաներից, աթեիստներից, վաճառականներից և մի շարք այլ երևակայական բարոյական թշնամիներից: Կլանի վերածնունդը ոգեշնչվեց 1915 թվականի «Ազգի ծնունդը» (*The Birth of a Nation*) հանրաճանաչ ֆիլմից, որն արժևորում էր Վերակառուցման ժամանակաշրջանի «Կու կլուքս կլանը»՝ որպես կանանց առաքինության և սպիտակ ռասայի մաքրության պաշտպան:

Օգտվելով ժողովրդականության այս աճից՝ գնդապետ Ուիլյամ Ջոզեֆ Սիմոնսը 1915 թվականի վերջին Ջորջիայում կազմակերպեց այն, ինչը հաճախ անվանում են երկրորդ «Կու կլուքս կլան»: Այս նոր ԿԿԿ-ն ձևավորվեց եղբայրական այլ կազմակերպությունների մոդելով, մշակված ծեսերով և աստիճանակարգությամբ: 1920 թ. Սիմոնսը սկսեց պրոֆեսիոնալ հավաքագրման գործընթաց, որի արդյունքում մասնաճյուղեր բացվեցին ողջ երկրում, և անդամների թիվը հասավ մոտ հինգ միլիոնի: Նշանակա-

լի էին Ֆիլադելֆիայի, Դետրոյթի, Չիկագոյի և Պորտլենդի մասնաճյուղերը, մինչդեռ ԿԿԿ-ի կողմից հավանություն ստացած քաղաքապետի թեկնածուները հաղթեցին Ինդիանապոլիսում, Դենվերում և Ատլանտայում: ԿԿԿ-ն հաճախ անդամներ էր հավաքագրում եղբայրական կազմակերպությունների միջոցով, ինչպիսիք էին մասոնները (Freemasons) և տարբեր բողոքական եկեղեցիները: Շատ նահանգներում և բնակավայրերում ԿԿԿ-ն այնպիսի մակարդակի վրա էր տիրում քաղաքականությանը, որ հնարավոր չէր ընտրվել առանց նրա աջակցության: Քաղաքական գործունեությանը զուգահեռ՝ շարունակվում էին նաև ԿԿԿ-ի կազմակերպած բռնություններն աֆրոամերիկացիների նկատմամբ:

1920-ական թվականներին ամերիկյան քաղաքական կյանքում գերիշխում էր Հանրապետական կուսակցությունը, որը վերահսկում էր ոչ միայն Սպիտակ տունը, այլև Կոնգրեսի երկու պալատները: Նախագահ Քուվիջը որոշեց 1928 թ. չհավակնել երկրորդ ժամկետին: Իր լռակյացությամբ հայտնի նախագահը՝ «Լուռ Քելը» (“Silent Cal”), հրապարակեց իր որոշումը՝ կարճ գրությամբ թղթի կտորը հանձնելով լրագրողին: 1928 թ. նախագահական մրցավազքում պայքարում էին Նյու Յորքի դեմոկրատ նահանգապետ Ալ Սմիթը և հանրապետական թեկնածու Հերբերտ Հուվերը: Ալ Սմիթի կաթոլիկ դավանանքն ու ներգաղթյալի ծագումը հարուցում էին նատիվիստների կասկածները, իսկ նրա կապերը Թամմանի Հոլի հետ և ալկոհոլի արգելքին ընդդիմադիր քաղաքականությունը վանում էին բարեփոխիչներին: Մյուս կողմից՝ Հերբերտ Հուվերի ամերիկյան, միջինարևմտյան, բողոքական ծագումը և Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ վարչարարական փորձառությունը գրավեցին ամերիկացի ընտրողներին: Հուվերը կենտրոնացավ տնտեսական աճի և բարգավաճման վրա:

Հարդինգի և Քուվիջի վարչակազմերում Հուվերն առևտրի քարտուղարն էր և 1920-ականների ընթացքում գրանցված կայուն տնտեսական աճը ներկայացնում էր նաև որպես իր ջանքերի արդյունք: 1928 թ. նախագահական ընտրարշավի մեկնարկին Հուվերը հայտարարեց. «Մենք Ամերիկայում այսօր ավելի մոտ ենք աղքատության նկատմամբ վերջնական հաղթանակին, քան երբևէ որևէ երկրի պատմության մեջ»: Նա հայտարարում էր, որ եթե իրեն հնարավորություն տրվի առաջ շարժվելու վերջին 8 տարիների քաղաքականությամբ, ապա շուտով աղքատությունն արմատախիլ կարվի երկրում: Սակայն հաջորդ տարի Հուվերի պնդումները զավեշտալի էին թվալու Մեծ ճգնաժամի պայմաններում: Իսկ մինչ այդ ընտրությունների մեծ մասը կենտրոնացած էր Ալ Սմիթի կաթոլիկ դավա-

նանքի և ակոհոլի արգելքի դեմ նրա ընդդիմադիր գործունեության վրա: Հուվերը ջախջախիչ հաղթանակ տարավ ընտրություններում:

Սպառողական մշակույթը

XIX դարի վերջին և XX դարի սկզբին արդյունաբերական արտադրության ընդլայնման հասարակական և տնտեսական հսկայական փոխակերպումներից էր սպառողական նոր մշակույթի ձևավորումը: Էներգիայի նոր աղբյուրների և արտադրական տեխնոլոգիաների հայտնագործման և զարգացման արդյունքում արդյունաբերական արտադրանքը հեղեղեց շուկան մի շարք սպառողական ապրանքներով, ինչպիսիք էին պատրաստի սնունդը, հագուստը և կենցաղային տեխնիկան: XIX դարի վերջին արտադրությունն այնքան կտրուկ էր աճել, որ շատ ժամանակակիցներ մտավախություն ունեին, որ առաջարկը գերազանցել էր պահանջարկին, և որ երկիրը շուտով կկանգներ գերարտադրության կործանարար ֆինանսական հետևանքների առջև: Ամերիկացի գործարարները փորձեցին խուսափել այս աղետից՝ մշակելով առևտրային և մարքեթինգային նոր ռազմավարություններ, որոնք փոխակերպեցին բաշխումը և խթանեցին սպառողական ցանկության նոր մշակույթը:

Այս նոր սպառողական հեղափոխության մեջ կենտրոնական դեր ունեցան հանրախանութները: 1880-ականներին ի հայտ եկան առաջին ժամանակակից մանրածախ հանրախանութները: Այս ձեռնարկությունները մեկ տանիքի տակ էին կենտրոնացրել ապրանքների լայն տեսականի՝ թույլ տալով հաճախորդներին ձեռք բերել հագուստ, սնունդ, կենցաղային տեխնիկա և սպառողական այլ ապրանքներ: Հաճախորդներ գրավելու համար հանրախանութներն առաջարկում էին սպառողական ապրանքների ողջ բազմազանությունը մեկ տանիքի տակ: Նրանք նաև սկսեցին կիրառել նորամուծություններ՝ ընդլայնելով իրենց ծառայությունների շրջանակը. ռեստորաններ, թեյարաններ, գրասենյակներ, դայակի խնամք, ներկայացումներ, գովազդներ և նորաձևության ցուցադրություններ:

XX դարասկզբին գնման ուրախությունը վարակեց աճող թվով ամերիկացիների, իսկ փոստով պատվերների կատալոգների, զանգվածային տպաքանակով ամսագրերի և բրենդինգի ու զանգվածային գովազդի աճը էլ ավելի խթանեց սպառողների ցանկությունը: Ավտոմոբիլային արդյունաբերությունը ևս խթանեց սպառման նոր մշակույթը և վարկերի օգտագործումը: 1927 թ. ամերիկյան ավտոմեքենաների ավելի քան 60 տո-

կուր վաճառվում էր ապառիկ: 1925 թ. Ֆորդի գործարանները ամեն 10 վայրկյանը մեկ Մոդել Թի (Model-T) տեսակի «Ֆորդ» ավտոմեքենաներ էին թողարկում: Գրանցված ավտոմեքենաների թիվը 1920 թ. 9 միլիոնից տասնամյակի ավարտին հասավ մոտ 27 միլիոնի. ամերիկացիներն ավելի շատ մեքենաներ ունեին, քան Մեծ Բրիտանիան, Գերմանիան, Ֆրանսիան և Իտալիան միասին վերցրած: 1920-ականների վերջին աշխարհի ավտոմեքենաների 80 տոկոսը երթևեկում էր ամերիկյան ճանապարհներով:

Որքան որ հեղափոխական էր ածուխի, շոգեշարժիչի և երկաթի նշանակությունը նախորդ դարում, նույնքան էլ ներքին այրման շարժիչը, բենզինը և էլեկտրաէներգիան XX դարասկզբին: Շատ ամերիկացիների համար նոր տեխնոլոգիաները ամենավառ կերպով մարմնավորված էին ավտոմեքենաներում, ֆիլմերում և ռադիոյում: Երրորդ արդյունաբերական հեղափոխությունը իր հետ բերեց ոչ միայն նոր սպառողական մշակույթը, այլև զանգվածային ժողովրդական մշակույթը 1920-ականներին: Արդյունաբերական հասարակության սահմանափակումներին մարտահրավեր փորձեց նետել խուսափումի կամ փախուստի մշակույթը:

Եվ քանի որ ավտոմեքենաները դառնում էին ավելի ժողովրդական, հասանելի և հուսալի, ավելի շատ մարդիկ ավելի հաճախ էին ճանապարհորդում և ավելի մեծ հեռավորություններ էին փորձում հաղթահարել: Երիտասարդ տղամարդիկ և կանայք փախչում էին սիրատիրության հսկողությունից կամ հեռավոր վայրերում հանգիստն ու ժամանցը կազմակերպելու համար: Վարորդների աճող թվերին սպասարկելու և գրավելու համար ամերիկացիները ճանապարհների եզրերին սկսեցին կանգնեցնել բենզալցակայաններ, ճաշարաններ, մոթելներ և գովազդային վահանակներ: Ավտոմեքենաները դարձան զվարճանքի և ժամանցի առարկա. ավելի քան 100,000 մարդ էր հավաքվում դիտելու *Ինդիանապոլիս 500-ի* (Indianapolis 500) մրցարշավը:

ԱՄՆ-ն գերիշխում էր նաև համաշխարհային կինոարդյունաբերության մեջ: Մինչև 1930 թվականը, երբ կինոարտադրությունը դարձավ ավելի թանկ, մի քանի կինոընկերություններ վերահսկողության տակ առան կինոարդյունաբերությունը: Հիմնականում Կենտրոնական և Արևելյան Եվրոպայից հրեական ծագումով ներգաղթյալները «հորինեցին Հոլիվուդը», քանզի դարասկզբի միջին և բարձր խավի ամերիկացիների մեծ մասը կինոն դիտում էին որպես ցածր խավի ժամանց: Այս ներգաղթյալները և ներգաղթյալների զավակները, գիտակցելով իրենց հասարակական կարգավիճակը, նպատակաուղղված կերպով նկարահանեցին ֆիլմեր, որոնք ներկայացնում էին հնարավորությունների, ժողովրդավարության

և ազատության ամերիկյան արժեքները: Միջին և բարձր խավերին գրավելուն զուգահեռ՝ կինոարտադրողները պահպանում էին աշխատավոր դասակարգի կինոդիտողներին՝ միախառնելով ավանդական և ժամանակակից արժեքները: 1927 թ. «Ջազի երգիչը» (The Jazz Singer) համաժամացված (սինխրոնիզացված) բառերով և նկարներով առաջին ֆիլմն էր: Կինոյի հաճախելիությունը 1912 թ. շաբաթական 16 միլիոնից 1920-ականների սկզբին հասավ 40 միլիոնի: Երաժշտության մեջ մեծ ժողովրդականություն էր վայելում ջազը, որը ծագել էր XIX դարի վերջին և XX դարի սկզբին Նոր Օրլեանի, Լուիզիանայի աֆրոամերիկյան համայնքներում:

Մեկ այլ զանգվածային ժամանցի ու տեղեկատվության ոլորտ էր ռադիոն: 1930 թ. ամերիկյան տների մոտ կեսը ապահովված էին ռադիոյով: Ռադիոկայաններն ուղղակիորեն տների հյուրասենյակներ էին բերում տեղեկատվական, ժամանցային և գովազդային հաղորդումներ: Թեև ռադիոկայանները հաճախ գտնվում էին Ազգային հեռարձակող ընկերության (National Broadcasting Company (NBC)) կամ Կոլումբիայի հեռարձակող համակարգի (Columbia Broadcasting System (CBS)) վերահսկողության ներքո, ռադիոհաղորդումները ավելի քիչ էին սահմանափակված ավանդական սահմաններով հնարավորինս լայն լսարան գրավելու համար՝ տարածելով ժողովրդական մշակույթը ազգային մակարդակով: Նոր ժամանակները բերեցին նոր հերոսներ: 1927 թ. մայիսի 21-ին Չարլզ Լինդբերգն ավարտեց Նյու Յորքից Փարիզ առաջին անդրատլանտյան ուղիղ չվերթը: Ունենալով ընդամենը մի քանի սենդվիչներ, մի քանի շիշ ջուր, թղթե քարտեզներ և լապտեր՝ Լինդբերգը 33 ժամում ինքնաթիռով հաջողությամբ հատեց Ատլանտյան օվկիանոսը:

Մեծ ճգնաժամի ակունքները

1929 թվականի հոկտեմբերի 29-ին՝ Սև երեքշաբթի օրը, արժեթղթերի շուկան սկսեց իր երկարատև կտրուկ անկումը: Բաժնետոմսերի արժեքները գոլորշիացան, և արժեթղթերի շուկան փլուզվեց. «Յու Էս Սթիլ» (U.S. Steel) ընկերության բաժնետոմսերը 262 դոլարից ընկան 22 դոլար, «Ջենեռալ Մոթորս» (General Motors) ընկերության արժեթղթերը մեկ բաժնետոմսի դիմաց 73 դոլարից նվազեցին մինչև 8 դոլար: Ջ. Դ. Ռոքֆելերի ահռելի կարողության չորս հինգերորդը փոշիացավ: Այս կտրուկ անկումը ապշեցրեց բոլորին և բացահայտեց 1920-ականների ամերիկյան տնտեսության ավելի խորքային հիմնախնդիրները: Այս տասնամյակի ընթացքում արժեթղթերի շուկայի ժողովրդականությունն աճում էր, բայց ամե-

րիկացիների միայն 2,5 տոկոսն ուներ բրոքերային հաշիվներ: Անկումը բացահայտեց մի շարք գործոններ, որոնք, զուգակցված ֆինանսական խուճապի հետ, ամերիկյան տնտեսությունը խորտակեցին բոլոր տնտեսական ճգնաժամերից ամենամեծի մեջ: Աճող անհավասարությունը, պահանջարկի անկումը, գյուղատնտեսական փլուզումը, գերաճած ներդրումների և սպեկուլյատիվ փուչիկների պայթյունը միասին երկիրը ընկղմեցին Մեծ դեպրեսիայի մեջ:

XX դարակազմին, չնայած առաջադիմականների դիմադրությանը, հարուստների և աղքատների միջև հսկայական անջրպետը շարունակում էր արագորեն խորանալ: Ընդհանուր առմամբ, ամերիկացիներն ավելի լավ տնտեսական վիճակում էին 1929 թ., քան 1920-ին: Մեկ շնչին բաժին ընկնող եկամուտը բոլոր ամերիկացիների համար աճել էր 10 տոկոսով, իսկ երկրի ամենահարուստ քաղաքացիների համար՝ 75 տոկոսով: 1920-ական թվականներին պահպանողական քաղաքականության վերադարձով ամրապնդվեց դաշնային հարկաբյուջետային քաղաքականությունը, որը խորացրեց բաժանումը. ցածր կորպորատիվ և անձնական հարկերը, հեշտ վարկը և իջեցված տոկոսադրույքները գերազանցապես ձեռնտու էին հարուստ ներդրողներին, ովքեր, կանխիկ ավելցուկ ունենալով, իրենց փողերը ծախսում էին շքեղ ապրանքների վրա և սպեկուլյատիվ ներդրումներ էին կատարում արագ աճող արժեթղթերի շուկայում:

1920-ական թվականներին ԱՄՆ տնտեսական քաղաքականությունն ուղղված էր գործարարության աջակցությանը և նախատեսված էր խթանելու ապրանքների արտադրության և սպառման վրա հիմնված ամերիկյան տնտեսությունը: Այնուամենայնիվ, 1920-ականների վերջին շուկայի մեծ մասը հագեցած էր: Այլևս շատերը, առավելապես ապահով խավերը կարիք չունեին նոր ավտոմեքենաների, նոր ռադիոյի և սպառողական այլ ապրանքների, որոնց արտադրությունն ու սպառումն էր խթանում ԱՄՆ համախառն ներքին արդյունքի (<ՆԱ) աճը 1920-ականներին: Երբ ապրանքները սկսեցին չվաճառվել, պաշարները կուտակվեցին, արտադրողները կրճատեցին արտադրությունը, և ընկերությունները սկսեցին աշխատանքից ազատել աշխատողներին՝ զրկելով կանխիկ գումարից հավանական սպառողներին, թուլացնելով սպառողական ապրանքների պահանջարկը և ակամա կրկնակի արագացնելով տնտեսական անկման շրջանը: Ամերիկյան գործարանների ավտոմատացմամբ և արդյունավետության բարձրացմամբ իրավիճակը միայն բարդացավ: Չնայած 1920-ականների տպավորիչ ընդհանուր աճին՝ գործազրկությունն այս տասնամյակին տատանվում էր շուրջ 7 տոկոսի սահմաններում՝ ճնշելով գնողունակությունը

հնարավոր նոր սպառողների շրջանում:

Ամերիկացի ֆերմերների համար դժվարին ժամանակները սկսվել էին արժեթղթերի շուկաների անկումից շատ առաջ: 1920-1921 թթ.՝ մի քանի տարի մեծ շահույթներ ապահովելուց հետո, Հարավում և Արևմուտքում գյուղատնտեսական ապրանքների գները շարունակեցին իրենց երկարատև անկումը՝ կտրուկ նվազելով արտադրության աճին զուգահեռ, իսկ բամբակի, սննդամթերքի և այլ գյուղատնտեսական ապրանքների ներքին և միջազգային պահանջարկը լճացավ: Ֆերմերներն ի վիճակի չէին մարել իրենց վարկերը: Ի պատասխան՝ բանկերը գյուղատնտեսական տարածքներում խստացրին վարկերը:

1929-1930 թթ., չնայած արդյունաբերության և գյուղատնտեսության լրջագույն խնդիրներին, ամերիկացիների մեծ մասը դեռևս հավատում էր, որ տնտեսական ակտիվությունը շուտով կվերակազմվի: 1930 թ. նախագահ Հերբերտ Հուվերը վստահեցնում էր, որ «ճգնաժամն ավարտված է»: Սակայն նախագահը ոչ միայն պարզապես մեղավոր էր կեղծ լավատեսության մեջ, այլև շատ սխալներ էր թույլ տվել: 1928 թվականի իր նախընտրական քարոզարշավի ընթացքում Հուվերը խոստանում էր բարձրացնել մաքսատուրքերը՝ որպես ներքին արտադրությունն ու սպառումը խրախուսելու և ամերիկացի ֆերմերներին արտաքին մրցակցությունից պաշտպանելու միջոց: 1930 թվականին շարունակվող գյուղատնտեսական ճգնաժամի արդյունքում Հուվերը ստորագրեց Սմութ-Հոուլի մաքսային օրենքը (Smoot-Hawley Tariff Act)՝ սահմանելով ամերիկյան պատմության մեջ ամենաբարձր մաքսատուրքերը հենց այն ժամանակ, երբ համաշխարհային շուկաները սկսել էին փլուզվել: Մյուս երկրներն արձագանքեցին նույն կերպ. ամբողջ աշխարհում մաքսատուրքերը բարձրացան: Արդյունքում միջազգային առևտուրը սառեց: 1929-1932 թթ. միջազգային առևտուրը 36 միլիարդ դոլարից իջավ մինչև 12 միլիարդ դոլարի, իսկ ամերիկյան արտահանումը կրճատվեց 78 տոկոսով: Գերարտադրության և ներքին սպառման նվազման հետ մեկտեղ՝ բարձրացված պաշտպանական մաքսային սակագները սրեցին համաշխարհային տնտեսության փլուզման ընթացքը:

Բայց բացի տնտեսության կառուցվածքային թերություններից, սպեկուլյատիվ փուչիկներից և կործանարար պրոտեկցիոնիզմից, Մեծ ճգնաժամի խորացմանը հատկապես նպաստեց խուճապը: Մարդկանց խուճապահար արձագանքը շուկայի անկմանը խորացրեց տնտեսության մյուս ճյուղերի ձախողումը: Պետության տնտեսական քաղաքականությունն ավելի շատ հակադարձ արդյունք էր տալիս: Դաշնային պահուստային

համակարգը չափազանց մեծ ջանքեր ուղղեց սպեկուլյացիաներին արձագանքելուն՝ բարձրացնելով տոկոսադրույքները և խստացնելով վարկավորումը: Ամբողջ երկրում բանկերը մերժում էին վարկային հայտերը և պարտքեր էին վերցնում: Ավանդատուները, վախենալով, որ այս հետադիմական քաղաքականությունը նշանակում էր ֆինանսական դժվարությունների հետագա խորացում, շտապեցին հանել իրենց գումարները, նախքան բանկերը կփակեին իրենց դռները: 1920-ականներին նման բանկային սողանքները ևս հազվադեպ չէին, սակայն 1930 թվականին, երբ տնտեսության անկումն ուղեկցվում էր արագացող խուճապով, 1352 բանկեր փլուզվեցին: 1932 թվականին փլուզվեցին մոտ 2300 բանկեր՝ իրենց հետ տանելով մարդկանց անձնական ավանդները, խնայողությունները և վարկերը:

Մեծ ճգնաժամը բազմաթիվ խնդիրների միախառնումն էր, որոնց մեծ մասը սկսվել էր տնտեսական աննախադեպ աճի ժամանակաշրջանում: Հանրապետական «գործարար նախագահների» հարկաբյուջետային քաղաքականությունն ընդլայնեց հարուստների և աղքատների միջև անջրպետը՝ առաջ բերելով դիմակայություն միջազգային առևտրին: Նման քաղաքականությունները լայն տարածում գտան՝ դիտվելով որպես տասնամյակի տնտեսական աճի աղբյուր: Ունենալով եկամուտների հոսք և ձգտելով պահպանել իրենց կենսամակարդակը՝ ամերիկացիներից քչերն ունեին հեռատեսություն կամ միջոցներ՝ մերժելու հեշտ վարկի, մոլեգնած սպառողականության և վայրի շահարկումների ժամանակաշրջանը:

Հերբերտ Հուվերի քաղաքականությունը և Մեծ ճգնաժամը

Ճգնաժամի տարածվելուն զուգահեռ՝ ծանրանում էին հանրային նախագահ Հերբերտ Հուվերի և Հանրապետական կուսակցության պահպանողական քաղաքականությանն ուղղված մեղադրանքները: 1928 թվականին ընտրվելով նախագահ՝ Հուվերը կարծում էր, որ իր նախագահությունը չի տարբերվի իր նախորդի՝ Քելվին Քուլիջի նախագահությունից, ում պաշտոնավարման ժամանակաշրջանը նշանավորվեց կառավարության հարաբերական անգործությամբ, թվացյալ անսահման բարգավաճմամբ և բարձր վարկանիշով: Հուվերը պաշտոնը ստանձնեց ժողովրդական աջակցության ալիքով, սակայն 1929 թ. հոկտեմբերին տնտեսական փլուզումը փոխեց ամեն ինչ: Շատ ամերիկացիների նման, Հուվերը և նրա խորհրդականները հուսով էին, որ ֆինանսական և տնտեսական կտրուկ անկումը ժամանակավոր է, սակայն ճգնաժամը շարունակեց մեծանալ:

Գործազրկությունը շարունակաբար աճում էր: Նոր ավտոմեքենաների գրանցումները մի քանի ամսվա ընթացքում նվազեցին գրեթե մեկ քառորդով: 1930 թ. երկարաժամկետ օգտագործման ապրանքների գնման սպառողական ծախսերը նվազեցին մեկ հինգերորդով:

Երբ մարդիկ օգնության խնդրանքով դիմում էին նախագահին, Հուլիերը կարողանում էր պատասխանել միայն կամավորության հորդորով: Նախագահը խնդրում էր գործարարներին պահպանել ներդրումներն ու զբաղվածությունը և խրախուսում էր նահանգային և տեղական բարեգործական կազմակերպություններին օգնել կարիքավորներին: Հուլիերը ստեղծեց Նախագահի գործազրկության օգնության կազմակերպությունը (President's Organization for Unemployment Relief (POUR))՝ օգնելու կազմակերպել մասնավոր գործակալությունների ջանքերը: Մինչ կազմակերպությունը կոչ էր անում բարեգործական նվիրատվություններ կատարել, բարեգործական օգնության կազմակերպությունները ծանրաբեռնված էին բազմաթիվ գործազուրկների, թերսնված և անօթևան ամերիկացիների աճող կարիքներով: Թեև Հուլիերն իր հանրապետական նախորդների նման երբեմն դասակարգվում է որպես «գործարարության նախագահ», նա նաև հաստատեց առաջադիմական գործարարության կամավոր գործողությունների համակարգ՝ այսպես կոչված ընկերականությունը (associationalism), որը ենթադրում էր, որ ամերիկացիները կպահպանեին կամավոր համագործակցային կազմակերպությունների ցանցը՝ կարիքավորներին ծառայություններ և տնտեսական օգնություն տրամադրելու համար: Գործարարները, ըստ այս մոտեցման, պատրաստակամորեն կսահմանափակեին վնասակար գործողությունները հանուն ավելի լայն տնտեսական բարօրության: Հուլիերի պատկերացմամբ՝ պետական ուղղակի օգնությունը կխոչընդոտեր առողջ աշխատանքային վարքականոնի հաստատումը, մինչդեռ մասնավոր ձեռնարկումները կխրախուսեին ինքնատիրապետումը և նախաձեռնողականությունը՝ խթանելով տնտեսական աճը: Բայց Մեծ ճգնաժամը բացահայտեց տնտեսական վերականգնում ապահովելու նման ռազմավարությունների անկարողությունը: Այնուամենայնիվ, Հուլիերը չէր ընդունում իր գաղափարաբանության սահմանափակությունը՝ 1931 թվականին Կոնգրեսին ասելով. «Մենք չենք կարող օրենք ընդունելով դուրս գալ համաշխարհային տնտեսական ճգնաժամից»:

Հուլիերը դիմադրում էր պետության ուղղակի գործողություններին: Ճգնաժամի խորանալուն պես նույնիսկ բանկիրներն ու գործարարները, ինչպես նաև նախագահի խորհրդականներն ու վարչակազմը խնդրում էին նրան օգտագործել կառավարության իշխանությունը ճգնաժամի դեմ

պայքարելու համար: Սակայն նա հավատարիմ էր իր պահպանողական գաղափարաբանության սկզբունքներին՝ շարունակելով սահմանափակել կառավարության միջամտությունը: 1932 թվականին, երբ տնտեսությունը վաղուց լճացած էր և վերընտրական քարոզարշավ էր սպասվում, Հուվերը, հուսալով խթանել ամերիկյան արդյունաբերությունը, ստեղծեց Վերակառուցման ֆինանսական կորպորացիան (Reconstruction Finance Corporation (RFC))՝ բանկերին, շինարարական և վարկային ընկերություններին, երկաթուղիներին և մասնավոր այլ ձեռնարկությունների շտապ վարկեր տրամադրելու համար: Ուղիղ պետական աջակցության քաղաքականության կիրառման այս արմատական քայլը հաղթահարում էր կառավարության ավանդական չմիջամտելու (*laissez-faire*) սկզբունքը, բայց այն նաև շրջանցում էր կարիքավոր ամերիկացիներին՝ պաշտպանելով արդյունաբերական և ֆինանսական շրջանակների շահերը:

Միացյալ Նահանգներում Մեծ ճգնաժամի խորացման ընթացքում անհատ մարդիկ, ընտանիքները և համայնքները բախվում էին տնտեսական հաստատությունների սարսափելի և շփոթեցնող փլուզմանը: Շատերը նաև զերծ մնացին ճգնաժամի վատթարագույն հետևանքներից, իսկ ոմանք նույնիսկ օգուտ քաղեցին դրանից: Այնուամենայնիվ, 1932 թվականի վերջին ճգնաժամն այնքան էր տարածվել և խորացել, որ ամերիկացիների մեծ մասն ուղղակիորեն խոցվել էր դրա հետևանքներից: Աշխատավորների զգալի մասը հայտնվել էր ծայրահեղ աղքատության ճիրաններում: Համատարած գործազրկության և աշխատավարձերի նվազման պայմաններում շատերը նվազեցնում էին իրենց կանոնավոր սպառողական ծախսերը և ձգում գոտիները: Միջին խավի և բանվոր դասակարգի ամերիկացիները չէին կարողանում կատարել իրենց կոմունալ վճարումները կամ ապավինում էին ընթրիքը բաց թողնելուն: Հանրային օգնությունը և մասնավոր բարեգործական կազմակերպությունների ջանքերն ու պաշարներն արագ սպառվում էին այդքան մեծ ճգնաժամի պայմաններում: Կրճատվում էին շատ կարևոր հանրային ծառայություններ նաև տեղական ինքնակառավարման մարմիններում, որոնք պատասխանատու էին հանրային առողջության և անվտանգության համար: Ամենահուսահատ ամերիկացիները՝ մշտական գործազուրկները, որոնք չէին կարողանում վճարել բնակավարձերը, ճամբարում էին քաղաքների ծայրամասային հանրային հողերում՝ «Հուվերվիլներում» (“Hooverilles”)՝ ինքնաբուխ տնակային ավաններում, որոնք տարածված էին Ամերիկայի քաղաքներում և գոյատևում էին բարեգործական սննդով և շրջիկ մանրավաճառությամբ:

Գործազրկության և թերզբաղվածության զգացմունքային ու հոգեբա-

նական ցնցումները միայն ավելացրին տնտեսական ընկճախտի ցնցող նյութական այլանդակությունները: Սոցիալական աշխատողները և բարեգործական կազմակերպությունների պաշտոնյաները հաճախ գտնում էին, որ գործազուրկները տառապում էին ունայնության, զայրույթի, դառնության, շփոթության և հպարտության կորստի զգացումով: Մեծ ճգնաժամի տարիները հատկապես ծանր էին ոչ սպիտակամորթ ամերիկացիների համար: Սևամորթ աշխատողները, ընդհանուր առմամբ, վերջիններն էին աշխատանքի ընդունվում, երբ ձեռնարկություններն ընդլայնում էին արտադրությունը, և առաջիններն աշխատանքից ազատվում, երբ ձեռնարկություններն անկում էին ապրում: 1932 թվականին, երբ գործազրկության ազգային միջին մակարդակը տատանվում էր 25 տոկոսի շուրջը, սևամորթների գործազրկությունը հասնում էր մինչև 50 տոկոսի, մինչդեռ այն սևամորթ աշխատողները, ովքեր պահպանում էին իրենց աշխատանքը, բախվում էին իրենց առանց այն էլ ցածր աշխատավարձերի կտրուկ կրճատման խնդրին:

Մեծ հարթավայրերում բնապահպանական աղետը խորացրեց Ամերիկայի երկարատև գյուղատնտեսական ճգնաժամը և ընդլայնեց Մեծ դեպրեսիայի ողբերգությունը: Սկսած 1932 թվականից՝ սաստիկ երաշտները հարվածեցին Տեխասից մինչև Դակոտաներ ընկած լայն տարածաշրջանին՝ տևելով մինչև 1936 թվականը: Համեմատաբար խոնավ տասնամյակները պաշտպանում էին գյուղատնտեսական գործունեության հետևանքով ձևափոխված շրջակա միջավայրը բնապահպանական հնարավոր աղետից: Սակայն 1930-ական թվականների սկզբին տեղումնազուրկ եղանակային պայմաններում առանց ցանքածածկի և ծառերի մնացած բաց բերրի հողը վերածվեց փոշու, որը հզոր հողմային ալիքների և պտտվող քամիների ներգործությամբ վերածվում էր վիթխարի փոթորիկների՝ ծածկելով երկինքը և ահռելի տարածքներում անհնար դարձնելով կյանքն ու մարդկանց գործունեությունը. բարձրացած փոշե փոթորիկը խեղդում էր մարդկանց ու անասուններին: Ցեխոտ անձրևներ տեղացին նաև տարածաշրջանից շատ հեռու, նույնիսկ Վաշինգտոնում, Նոր Անգլիայում և Ատլանտյան օվկիանոսում: Փոշեգունդը (Dust Bowl), ինչպես հայտնի դարձավ տարածաշրջանը, բացահայտեց բնապահպանական միջոցառումների անհրաժեշտությունը: Մեծ ճգնաժամի արդյունքում արդեն իսկ տուժած տարածաշրջանի բնակիչները և ֆերմերային տնտեսությունները հիմնովին ջախջախվեցին: Տեխասի, Օկլահոմայի, Կանզասի և Արկանզասի բնակիչներից շատերի համար միակ հույսը դեպի արևմուտք՝ Կալիֆորնիա, մեկնելն էր:

Օկլահոմայի բնակիչները՝ օքիները (Okies), այս բնապահպանական աղետից տուժած գաղթականների մեջ ամենամեծ խումբն էին, որոնք շարժվում էին երկրի հեռավոր շրջաններ աշխատանքի հույսով: Մեքենաներով, գնացքներով, բեռնատար վագոններով կամ այլ կերպ մարդիկ ճանապարհորդում էին երկրով մեկ լավ կյանքի հույսով: 1932 թվականի դրությամբ, ըստ սոցիոլոգիական հաշվարկների, միլիոնավոր մարդիկ էին ճանապարհորդում: Այս տարիները աչքի ընկան նաև քաղաքներից դեպի գյուղական բնակավայրեր մարդկանց առաջին նշանակալի հակառակ հոսքով: Հազարավոր քաղաքային բնակիչներ փախչում էին քաղաքային գործազրկությունից և աշխատանքի փնտրտուքով տեղափոխվում գյուղական շրջաններ: Եվ քանի որ հանրային ու մասնավոր օգնության ջանքերը թուլանում էին, նահանգային և տեղական պաշտոնյաները սկսեցին խոչընդոտներ ստեղծել ներքին միգրացիայի համար՝ դժվարացնելով նորեկների համար օգնություն ստանալը կամ աշխատանք գտնելը: Որոշ նահանգների օրենսդիր մարմինները նույնիսկ քրեականացրին աղքատ միգրանտներին իրենց նահանգ բերելը և թույլ տվեցին տեղական պաշտոնյաներին արտաքսել միգրանտներին հարևան նահանգներ:

Բացի այդ, խիստ քայլեր ձեռնարկվեցին նաև օտարերկրյա ներգաղթյալների դեմ: 1930 թվականի սեպտեմբերի 8-ին Հուվերի վարչակազմը հրապարակեց մամուլի հաղորդագրություն «գործազրկության առկա պայմաններում» ներգաղթի օրենքների կառավարման վերաբերյալ: Հուվերը հանձնարարեց հյուպատոսական ծառայություններին ուշադիր ուսումնասիրել վիզաների դիմումները՝ առաջարկելով մերժել մուտքի արտոնագրերի տրամադրումը բոլոր նրանց, որոնք «հավանական է դառնան հանրային ծախսերի պատճառ»: Նկատի ունեին օտարերկրացի բանվորների և արհեստավորների մեծ մասին: Ճգնաժամն ինքնին խեղդել էր օտարերկրյա ներգաղթը, սակայն ճգնաժամային առաջին տարիներին նման սահմանափակող և բացառող գործողությունները սաստկացրին դրա հետևանքները: Բացառման միջոցները հատկապես ծանր հարված հասցրին մեքսիկացի ներգաղթյալներին: Արդեն 1929 թվականին ԱՄՆ պետքարտուղարությունը սկսել էր համակարգված ջանքեր գործադրել Մեքսիկայից ներգաղթը նվազեցնելու համար: Հարավ-արևմուտքի պաշտոնյաները լավ մշակված քայլեր ձեռնարկեցին արտաքսելու մեքսիկացի ներգաղթյալներին: 1930-1940 թթ. Արիզոնայում, Կալիֆորնիայում, Նյու Մեքսիկոյում և Տեխասում ապրող մեքսիկացի բնակչությունը 616,998-ից նվազեց մինչև 377,433-ի: Մեծ ճգնաժամի ընթացքում Միացյալ Նահանգները լքողներն ավելի շատ էին, քան մուտք գործողները:

Հուլի քաղաքականության ձախողման մեկ այլ առանցքային դրվագ էր այսպես կոչված Բոնուսային բանակի խնդիրը: 1932 թ. ամռանը ավելի քան 15,000 գործազուրկ վետերաններ և նրանց ընտանիքների անդամներ հավաքվեցին Վաշինգտոնում՝ խնդրելով օրինագիծ ընդունել Առաջին համաշխարհային պատերազմի վետերաններին խոստացված դրամական բոնուսների (պարգևավճարների) անհապաղ վճարման համար, որոնք ի սկզբանե նախատեսված էին վճարել 1945 թվականին: Երկրի առջև ծառայած տնտեսական դժվարությունների պայմաններում պարգևավճարը խորհրդանշում էր կառավարության օգնությունը ամենաարժանիներին: Վետերանները անօթևան և գործազուրկ ամերիկացիների ճամբարների ոգով «Հուլի» (վրանային քաղաք) հիմնեցին Կոլումբիայի շրջանում՝ Անակոստիա Ֆլաթսում՝ Պոտոմակ գետի ափին: Իրենց կոչելով Բոնուսային արշավախմբային զորք կամ Բոնուսային բանակ (Bonus Expeditionary Force or the Bonus Army)՝ նրանք պայքարում էին իրենց հասանելիք պարգևավճարները ստանալու համար: Նրանք դժգոհում էին, որ «մինչ բանկիրների համար միլիարդներ կային, աղքատների համար ոչինչ չկար»:

Հուլի, մտահոգված դաշնային բյուջեի վրա բոնուսների անհապաղ վճարման ազդեցությամբ, դեմ արտահայտվեց օրինագծին, որին, ի վերջո, դեմ քվեարկեց նաև Սենատը: Մինչ «Բոնուսային բանակի» մեծ մասը պարտված հեռացավ Վաշինգտոնից, շատերը մնացին շարունակելու իրենց պայքարը: Հուլի մնացած վետերաններին անվանեց «ապստամբներ» և հրամայեց հեռանալ: Երբ հազարավոր մարդիկ չենթարկվեցին, Հուլի հրամանով գեներալ Դուգլաս Մակ-Արթուրը տեղի ոստիկանության, բանակային հետևակի, հեծելազորի, տանկերի և գնդացիների ուղեկցությամբ ներխուժեց վրանային քաղաք և ջախջախեց բոնուսային բանակը: Զորքերը հետապնդում էին տղամարդկանց, կանանց ու երեխաներին, կիրառում արցունքաբեր գազ և այրում տնակային ավանը: Գնդակահարվեցին և սպանվեցին ցույցի 2 մասնակիցներ, իսկ մի երեխա մահացավ արցունքաբեր գազից: Մամուլը հաղորդում էր արշավանքի մասին, լրատվամիջոցները ցուցադրում էին կադրեր, և ամերիկացիները դատապարտում էին Հուլի դաժանությունը: Այս դեպքը և համատարած տնտեսական խնդիրների լուծմամբ զբաղվելու նախագահի դժկամությունը կանխորոշեցին նրա լիակատար պարտությունը գալիք նախագահական ընտրություններում:

Ֆրանկլին Դելանո Ռուզվելտը և Առաջին «Նոր համաձայնությունը»

Ադետալի ճգնաժամը տարեցտարի խորանում էր: 1932 թվականին գործազրկությունը հասավ գագաթնակետին՝ 25 տոկոսի: Ճգնաժամից հյուծված մասնավոր ձեռնարկությունները, բարեգործական կազմակերպություններն ու անհատ մարդիկ կառավարությանը նայում էին որպես սովի, հուսահատության և հավերժական աղքատության դեմ վերջին պատվարի: 1932 թ. ԱՄՆ նախագահական ընտրությունները վճռորոշ նշանակություն ունեին ճգնաժամի հաղթահարման գործիքակազմի ընտրության համար: Ընթանում էր Մեծ ճգնաժամի երրորդ տարին, և վրդովված ընտրողները տապալեցին Հուվերին՝ նախագահ ընտրելով Նյու Յորքի դեմոկրատ նահանգապետ Ֆրանկլին Դելանո Ռուզվելտին:

1921 թ. ամռանը Ռուզվելտի մոտ ախտորոշվել էր պոլիոմիելիտ, ինչի հետևանքով նա անդամալույծ էր դարձել: 1928 թ. Ռուզվելտը հաղթեց Նյու Յորքի նահանգապետի ընտրություններում: Նա կանխատեսում էր տնտեսական ճգնաժամի խորացումը և այն հաղթահարելու իր ծրագիրը բխեցնում էր ամերիկյան առաջադիմականության ավանդույթից: 1931 թ. Ռուզվելտը Նյու Յորքի նահանգային ժողովին բացատրում էր, որ ճգնաժամը պահանջում է կառավարության արձագանքը «ոչ թե որպես բարեգործության խնդիր, այլ իբրև սոցիալական պարտք»: Որպես Նյու Յորքի նահանգապետ՝ նա ստեղծեց ժամանակավոր շտապ օգնության վարչությունը (Temporary Emergency Relief Administration (TERA)), որը հանրային աշխատանքով և աշխատավարձով էր ապահովում զգալի թվով մարդկանց և սնունդ, կացարան ու հագուստ տրամադրում կարիքավորներին: Վարչությունը աշխատանք և օգնություն տրամադրեց նահանգի ընտանիքների 10 տոկոսին:

1932 թվականի հուլիսի 1-ին Դեմոկրատական կուսակցության կողմից նոր առաջադրված նախագահի թեկնածու Ռուզվելտը հանդես եկավ Ամերիկայի նախագահական ընտրությունների պատմության մեջ առաջադրման ընդունման ամենանշանավոր ելույթներից մեկով: Ռուզվելտը հայտարարում էր. «Ես խոստանում եմ ձեզ, ես խոստանում եմ ինքս ինձ նոր համաձայնություն ամերիկյան ժողովրդի համար»: Զանգվածային լրատվամիջոցների խմբագիրները հանրայնացրին «նոր համաձայնություն» (New Deal) արտահայտությունը և այն մտավ ամերիկյան քաղաքական բառապաշար՝ իբրև Մեծ ճգնաժամի հաղթահարմանն ուղղված Ռուզվելտի ծրագրի անվանում:

Ռուզվելտն առաջարկում էր աշխատատեղերի ստեղծման ծրագրեր,

հանրային աշխատանքների նախագծեր, ավելի բարձր աշխատավարձեր, ավելի կարճ աշխատաժամեր, ծերության կենսաթոշակներ, գործազրկության ապահովագրություն, ֆերմերային տնտեսությունների սուբսիդիաներ, բանկային կարգավորումներ և ցածր հարկային ու մաքսային սակագներ: Հուլիսին նախագրված օրենքում էր, որ նման ծրագիրը ներկայացնում է «ամբողջական հրաժարում ամենայն սկզբունքներից, որոնց վրա հիմնված է այս կառավարությունը և ամերիկյան համակարգը»: Նա գրված օրենքում էր, որ «Նոր համաձայնություն»-ից եվրոպական կոմունիզմի հոտ է գալիս, և որ նման ծրագիրը կկործաներ «կենսակերպի ամերիկյան համակարգի հիմքերը»: Այնուամենայնիվ, 1932 թ. նոյեմբերին կայացած նախագահական ընտրություններում Ռուզվելտը ջախջախեց Հուլիսին: Նա իր ընտրության և երդմնակալության միջև ընկած ամիսներն անցկացրեց ճանապարհորդելով, նախագծելով իր քայլերը և հավաքելով խորհրդատուների թիմ՝ գիտնականների և փորձագետների հայտնի *Ուղեղային միավորումը* (Brain Trust), որն օգնելու էր նրան մշակել հարձակման պլանը:

1933 թ. մարտի 4-ին Ռուզվելտն իր առաջին երդմնակալության ուղերձում հայտարարեց. «Այսպիսով, նախ և առաջ թույլ տվեք հաստատել իմ հաստատական համոզմունքը, որ միակ բանը, որից մենք պետք է վախենանք, ինքնին վախն է՝ անանուն, անհիմն, չարդարացված սարսափը, որը կաթվածահար է անում նահանջն առաջխաղացման վերածելու անհրաժեշտ ջանքերը»: Ռուզվելտի հուսադրող խոսքերը դատարկ կինչեին, եթե նա արագ քայլեր չձեռնարկեր տնտեսական ճգնաժամի դեմ: Իր պաշտոնավարման առաջին օրերին Ռուզվելտը և նրա խորհրդականները պատրաստեցին, ներկայացրին և Կոնգրեսում հաստատեցին բազմաթիվ օրենքներ, որոնք նախատեսված էին հաղթահարելու Մեծ ճգնաժամը: Նրա վարչակազմը դաշնային կառավարությանը լծեց ճգնաժամի դեմ պայքարի գործին: Ռուզվելտը անմիջապես ձգտեց կայունացնել փլուզվող բանկային համակարգը՝ հայտարարելով ազգային «բանկային արձակուրդ» (“bank holiday”) և փակելով ամերիկյան բանկերը: Կոնգրեսում արագորեն առաջ մղվեց Արտակարգ բանկային օրենքը (Emergency Banking Act):

1933 թ. մարտի 12-ին՝ ավելի խիստ դաշնային ուղեցույցների համաձայն ընտրված բանկերի վերաբացմանը նախորդող գիշերը, Ռուզվելտը դիմեց ռադիոուղերձով՝ սկսելով իր «Զրույցներ բուխարու մոտ» (Fireside Chats) շարքի առաջին ելույթը: Այս ռադիոուղերձները, որով նախագահը շարունակում էր հանդես գալ իր պաշտոնավարման չորս ժամկետների

ընթացքում, ոչ պաշտոնական, նույնիսկ անձնական բնույթի էին: Ռուզվելտն օգտագործում էր իր եթերաժամանակը՝ բացատրելու Նոր համաձայնության օրենսդրությունը, խրախուսելու վստահությունը կառավարության գործողությունների նկատմամբ և մոբիլիզացնելու ամերիկյան ժողովրդի աջակցությունը: Առաջին զրույցում Ռուզվելտը նկարագրեց նոր բանկային ապահովագրության երաշխիքները և խնդրեց հանրությանը իրենց վստահությունն ու խնայողությունները դնել բանկերում: Ամերիկացիներն արձագանքեցին, և դրամական ավանդների մուտքերը գերազանցեցին կանխիկի դուրսբերումները ամբողջ երկրում: Ծրագիրը հաջողված էր: Հունիսին Կոնգրեսն ընդունեց Գլաս-Սթեյգալի բանկային օրենքը (Glass-Steagall Banking Act), որը ստեղծեց ավանդների ապահովագրության դաշնային համակարգ Ավանդների ապահովագրման դաշնային կորպորացիայի (Federal Deposit Insurance Corporation (FDIC)) միջոցով և արգելեց առևտրային ու ներդրումային բանկերի միախառնումը:

Իր պաշտոնավարման առաջին հարյուր օրերի ժամանակահատվածում Ռուզվելտը և նրա կոնգրեսական դաշնակիցները կենտրոնացան հատկապես կարիքավոր ամերիկացիների օգնության քայլերի վրա: Կոնգրեսը քննարկեց, փոփոխություններ կատարեց և ընդունեց Ռուզվելտի առաջարկները: Եվ չնայած նրա բազմաթիվ գործողությունների սահմանադրականության վերաբերյալ որոշ հարցերին՝ ամերիկացիները և Կոնգրեսում նրանց ներկայացուցիչները խոստովանում էին, որ ճգնաժամը պահանջում էր արագ և անհապաղ գործողություններ: Ձեռնարկվեցին մի շարք ծրագրեր: Քաղաքացիական պահպանության կորպուսը (Civilian Conservation Corps (CCC)) երիտասարդ տղամարդկանց աշխատանքի էր ընդունում բնապահպանական և անտառվերականգնման ծրագրերում: Արտակարգ օգնության դաշնային վարչությունը (Federal Emergency Relief Administration (FERA)) ուղղակի դրամական օգնություն էր տրամադրում նահանգային օգնության գործակալություններին, որոնք պայքարում էին գործազուրկների կարիքները հոգալու համար: Թենեսիի հովտի կառավարչությունը (Tennessee Valley Authority (TVA)) կառուցեց մի շարք հիդրոէլեկտրակայաններ և ամբարտակներ Թենեսի գետի երկայնքով՝ իբրև տարածաշրջանը տնտեսապես զարգացնելու համապարփակ ծրագրի մաս: Հիմնվեցին նաև մի քանի այլ գործակալություններ, որոնք աջակցում էին տների և ֆերմաների սեփականատերերին՝ վերաֆինանսավորելու իրենց հիփոթեքային վարկերը:

Ամերիկյան տնտեսությունը կայունացնելու և համակարգելու Ռուզվելտի վերականգնողական ծրագրի հիմքը կազմում էին երկու հսկա-

յական նախագծեր՝ Գյուղատնտեսական կարգավորման վարչությունը (Agricultural Adjustment Administration (AAA)) և Ազգային վերականգնման վարչությունը (National Recovery Administration (NRA)): Գյուղատնտեսական կարգավորման վարչությունը, որը ստեղծվել էր 1933 թ. մայիսին, նպատակ ուներ բարձրացնել գյուղատնտեսական ապրանքների գները, հետևաբար՝ ֆերմերների եկամուտները: Ըստ այդմ՝ կառավարությունն առաջարկում էր դրամական խթաններ գյուղատնտեսական մթերքների արտադրությունը կամավոր կերպով սահմանափակելու և այդ կերպ առաջարկը նվազեցնելու նպատակով՝ դրանով իսկ բարձրացնելով պահանջարկը և գները: Ազգային արդյունաբերության վերականգնման օրենքը (National Industrial Recovery Act), որով 1933 թ. հունիսին ստեղծվեց Ազգային վերականգնման վարչությունը, կասեցրեց հակամենաշնորհային օրենքները՝ թույլ տալով ձեռնարկություններին ստեղծել «կոդեր»՝ գները համակարգելու, արտադրության մակարդակը կարգավորելու և դաժան մրցակցությունը շրջանցելով զբաղվածության պայմաններ ստեղծելու համար: Այս բացառությունների և առավելությունների դիմաց ձեռնարկությունները համաձայնեցին ապահովել ողջամիտ աշխատավարձեր և աշխատատեղեր, դադարեցնել երեխաների աշխատանքը և թույլ տալ աշխատողներին օգտվել արհմիություններ կազմելու իրավունքից: Մասնակից ձեռնարկություններն իրավունք ստացան օգտագործելու Ազգային վերականգնման վարչության *Կապույտ արծիվ* (Blue Eagle) ցուցապաստառը՝ ցույց տալով իրենց համագործակցությունը և ջանքերը Մեծ ճգնաժամի հաղթահարման պայքարում:

Առաջին հարյուր օրվա ծրագրերը կայունացրին ամերիկյան տնտեսությունը և սկիզբ դրեցին ամուր, թեև անկատար վերականգնմանը: ՀՆԱ-ն սկսեց բարձրանալ, սակայն, չնայած տնտեսության արտադրողականության աճին, գործազրկությունը շարունակում էր մնալ բարձր: Այնուամենայնիվ, շնորհիվ «Նոր համաձայնության» նախագծերի, 1933 թվականից գործազրկության մակարդակը սկսեց իջնել: Քաղաքացիական աշխատանքների վարչությունը (Civil Works Administration (CWA)), իսկ ավելի ուշ Աշխատանքների առաջընթացի վարչությունը (Works Progress Administration (WPA)) գործազուրկ տղամարդկանց և կանանց աշխատանքի էր հրավիրում տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մշակված և իրականացվող նախագծերում: Հանրային աշխատանքների վարչությունը (Public Works Administration (PWA)) դրամաշնորհներ էր տրամադրում տեղական կառավարություններին խոշոր ենթակառուցվածքային նախագծերի կառուցման համար, ինչպիսիք էին կամուրջներ

րը, թունելները, դպրոցները, գրադարանները և Ամերիկայի առաջին դաշնային հանրային բնակարանաշինության ծրագրերը: Այս նախագծերը միասին ապահովում էին ոչ միայն հսկայական նյութական բարիքներ հանրային ենթակառուցվածքների տեսքով, այլև միլիոնավոր աշխատատեղեր: «Նոր համաձայնությունը» վերաձևում էր երկրի մեծագույն մասը:

Այդուհանդերձ, ճգնաժամն ու դրա հաղթահարման ռազմավարություններն ունեին իրենց տարածաշրջանային առանձնահատկությունները: Մեծ ճգնաժամը հատկապես պատուհասել էր Հարավին՝ մշտական աղքատության տարածաշրջանին, և «Նոր համաձայնության» սկզբնական օրենսդրության ազդեցությունը այստեղ ևս ակնհայտ էր, բայց միանշանակ դրական չէր: 1929 թ. Ամերիկայի հարավ-արևելքում մեկ շնչի հաշվով միջին եկամուտը կազմում էր 365 դոլար, որն ամենացածրն էր երկրում: Հարավային ֆերմերների համար տարեկան միջինը կազմում էր 183 դոլար այն պարագայում, երբ արևմտյան ափի ֆերմերները 4 անգամ ավելի էին վաստակում: Ավելին, նրանք խրված էին բամբակի և եգիպտացորենի արտադրության մեջ. մշակաբույսեր, որոնք սպառում էին հողը և վերադարձնում անընդհատ նվազող շահույթ: Հարավային արդյունաբերությունը շարունակում էր մնալ փոքրածավալ և հիմնականում արդյունահանող, որում ներգրավված էին հիմնականում ցածր աշխատավարձով, ցածր որակավորում ունեցող բանվորներ: Երբ սկսվեց ճգնաժամը, հարավցիներից շատերն արդեն իսկ աղքատ էին, գործազուրկ և թերսնված:

«Նոր համաձայնության» հիմնական ծրագրերը նախագծվել էին՝ հաշվի առնելով Հարավի առանձնահատկությունները: Ռուզվելտը հույս ուներ, որ կտրուկ նվազեցնելով բամբակին հատկացված հողատարածքների քանակը՝ Գյուղատնտեսական կարգավորման վարչությունը կկանգնեցնի գների երկարատև անկումը: Ֆերմերները քաղեցին աճած բերքը և, ստանալով դրամական փոխհատուցում, բաց թողեցին մնացած ցանքատարածքները, և գյուղմթերքի շուկայական գինը իսկապես բարձրացավ: Սակայն հողատերերի և հողազուրկ գյուղատնտեսական աշխատավորների ու հողի վարձակալների շրջանում Գյուղատնտեսական կարգավորման վարչության ծրագրերի ընձեռած առավելությունները շրջանցեցին հարավցիներին, ովքեր դրանց կարիքն ամենաշատն էին զգում: Կառավարությունն իր տրամադրած գումարի բաշխումը թողել էր հողատերերին և տեղական կազմակերպություններին՝ հուսալով, որ նրանք արդարացիորեն կբաշխեն գումարը նրանց միջև, ովքեր առավել շատ էին տուժել արտադրության սահմանափակումներից: Ընդհակառակը, շատ սեփականատերեր իրենց հողերից պարզապես վոնդեցին վարձակալներ

րին և աշխատավոր մշակներին, ստացան այդ հողատարածքները չմշակելու համար դրամական փոխհատուցումը և շահույթը վերաներդրեցին մեխանիկական գյուղատնտեսական սարքավորումներում, որն էլ ավելի նվազեցրեց աշխատուժի պահանջարկը: Այսպես, գյուղատնտեսությունը կրկին շահութաբեր դարձնելու փոխարեն, Գյուղատնտեսական կարգավորման վարչությունը փաստորեն հողից դուրս մղեց հարավցի հողագուրկ գյուղատնտեսական աշխատավորներին:

Հարավում «Նոր համաձայնության» ամենահաջողված նախագիծը թերևս Թենեսիի հովտի կառավարչությունն էր՝ միտված հիդրոէլեկտրակայանների կառուցման, գյուղատնտեսական և արդյունաբերական բարեփոխումների, ամբարտակների կառուցման և ջրհեղեղների վերահսկման միջոցով տնտեսական, կրթական և առողջապահական զարգացման ապահովմանը և, այդպիսով, Թենեսի գետի ավազանի աղքատ տարածաշրջանի արմատական վերափոխմանը: Ռուզվելտի այս հավակնոտ նախագիծը փորձում էր «տարածաշրջանի անփույթ բնակիչներից այլ տեսակի քաղաքացիներ ձևավորել»: Թենեսիի հովտի կառավարչությունը կառուցեց մի շարք հիդրոէլեկտրակայաններ ու ամբարտակներ՝ ջրհեղեղները վերահսկելու և կառավարության կողմից սուբսիդավորված դրույքաչափերով չէլեկտրականացված տարածքներին էլեկտրաէներգիա բաշխելու համար: Հանդիպումներ էին կազմակերպվում բնակիչների հետ՝ նրանց առաջարկելով վերապատրաստման և ընդհանուր կրթության դասընթացներ նոր աշխատատեղերի ընձեռած հնարավորություններից օգտվելու համար: Թենեսիի հովտի կառավարչությունը ներկայացնում էր Հարավի բարձրացման Ռուզվելտի տեսլականը՝ այն ավելի մեծ ազգային տնտեսությանը ինտեգրելու նպատակով:

Չնայած իր պաշտոնավարման առաջին տարում ձեռնարկված աննախադեպ գործողություններին՝ Ռուզվելտի սկզբնական օգնության ծրագրերը հաճախ բավականին պահպանողական էին: Նա սովորաբար զգույշ էր գործում՝ փորձելով տեղավորվել նախագահական լիազորությունների և Կոնգրեսի համագործակցության սահմաններում: Ի տարբերություն որոշ եվրոպական պետությունների, որոնք շրջվել էին դեպի պետականորեն կառավարվող տնտեսություններ, և նույնիսկ դեպի ֆաշիզմ և սոցիալիզմ, Ռուզվելտի «Նոր համաձայնությունը» չէր ենթադրում արմատական շեղում ԱՄՆ հիմնարար տնտեսական և ընկերային կառույցներից: Բազմաթիվ ազդեցիկ գործիչներ քննադատում էին Ռուզվելտին ավելի հեռուն չգնալու համար:

Լուիզիանայից ականավոր դեմոկրատ սենատոր Հյուեյ Լոնգը թերևս

ամենակոշտ քննադատն էր: Երկրի տնտեսական համակարգում արմատավորված անարդարության մասին նրա պոպուլիստական հռետորաբանությունը գրավեց շատերին: Լոնգն իր «Կիսեք մեր հարստությունը» (Share Our Wealth) ծրագրում առաջարկում էր դաշնային կառավարությանը ծայրահեղ հարուստների ակտիվների բռնագրավման միջոցով երկրում հարստության վերաբաշխում իրականացնել՝ անապահով խավերին երաշխավորելով նվազագույն եկամուտներ: Ավելի քան 27,000 «Կիսեք հարստությունը» (Share the Wealth) ակումբներ առաջացան ողջ երկրում: Լոնգն այս շարժումը դիտարկում էր որպես ճանապարհ դեպի նախագահական պաշտոն, սակայն նրա արշավանքն ավարտվեց 1935 թ. վերջին, երբ նա սպանվեց Լուիզիանայի նահանգային կապիտոլիումում: Նախկին բժիշկ և Կալիֆորնիայի հանրային առողջապահության պաշտոնյա Ֆրենսիս Թաունսենդն առաջ էր քաշում ծերության կենսաթոշակների ծրագիրը, որը պետք է ապահովեր տնտեսական անվտանգություն տարեցների համար՝ հնարավորություն ընձեռելով տարեց աշխատողներին թոշակի անցնելու և ճանապարհ բացելու երիտասարդ աշխատուժի համար: Միջիգան նահանգի Դետրոյթ քաղաքի արվարձաններից մեկի քահանա Չարլզ Քաֆլինը, որը հանրահայտ էր իր ռադիոթերներով, Ռուզվելտի անհաշտ քննադատներից էր և հայտնի էր իր հակասեմական հայացքներով: Նա պահանջում էր հաստատել «սոցիալական արդարության» նոր համակարգ՝ հիմնված տնտեսության պետական կարգավորման վրա:

Հակառակ կողմից նախագահ Ռուզվելտը բախվում էր պահպանողական քաղաքական գործիչների և գործարար առաջնորդների մեծ հակադեցությանը: 1934 թ. վերջին գործարարության ներկայացուցիչ հանրապետականների բողոքներն աճեցին Ռուզվելտի կողմից արդյունաբերությունը կարգավորելու և դաշնային ծախսերը հանրային աշխատանքների և զբաղվածության ծրագրերի համար օգտագործելու դեմ: Հարավում դեմոկրատները, ովքեր ի սկզբանե աջակցում էին նախագահին, ավելի թշնամաբար էին տրամադրված այն ծրագրերի նկատմամբ, որոնք մարտահրավեր էին նետում տարածաշրջանի ավանդական քաղաքական, տնտեսական և ընկերային կարգերին: Այնուամենայնիվ, ամենազորեղ ընդդիմությունը ԱՄՆ Գերագույն դատարանն էր, որը կազմված էր հանրապետական նախագահների երկար տարիների ընթացքում նշանակված պահպանողական դատավորներից: 1935 թ. սկզբին Գերագույն դատարանը վերանայում էր Նոր համաձայնության ծրագրերը: 1935 թ. մայիսի 27-ին Գերագույն դատարանի որոշումները տապալեցին նախագահի ստորագրած բարեփոխումներից մեկը. թոշնամսի վերամշակման գործով

դատարանը միաձայն Ազգային վերականգնման վարչությունը հայտարարեց հակասահմանադրական: 1936 թ. սկզբին Գերագույն դատարանը տապալեց նաև Գյուղատնտեսական կարգավորման վարչությունը:



ԱՄՆ 32-րդ նախագահ Ֆրանկլին Դելանո Ռուզվելտ (1933-1945 թթ.)

Երկրորդ «Նոր համաձայնությունը» (1935-1936 թթ.)

«Նոր համաձայնության» քաղաքականությունը լայն ժողովրդակա-նություն էր վայելում: 1934 թվականի միջանկյալ ընտրություններում դե-մոկրատները մեծ թվով մանդատներ ստացան՝ ապահովելով գերակշիռ մեծամասնություն ինչպես Ներկայացուցիչների պալատում, այնպես էլ Սենատում: 1936 թվականին Ռուզվելտը վերընտրվեց նախագահի պաշ-տոնում՝ ձեռնարկելով ավելի համարձակ ծրագրեր և նախաձեռնելով օրենսդրության մի շարք, որը հայտնի է որպես Երկրորդ «Նոր համաձայ-նություն»: Այն ներառում էր գրեթե 5 միլիարդ դոլարի հատկացում:

1935 թվականին ստեղծվել էր Աշխատանքների առաջընթացի վարչ-ությունը (Works Progress Administration (WPA))՝ Քաղաքացիական աշխա-տանքների վարչության մշտական տարբերակը, որը միլիոնավոր ամե-րիկացիների համար աշխատատեղեր էր ապահովում հանրային աշխա-տանքների նախագծերում: Աշխատանքների առաջընթացի վարչության նախագծերում աշխատող ամերիկացիները կառուցեցին ավելի քան կես միլիոն մղոն երկարությամբ ճանապարհներ, հազարավոր կամուրջներ, դպրոցներ և փոստային բաժանմունքներ, և նույնիսկ նկարեցին որմնա-կարներ և գրանցեցին բանավոր պատմություններ: Ծրագիրը ոչ միայն կառուցեց Ամերիկայի ֆիզիկական ենթակառուցվածքի մեծ մասը, այլև ավելի մոտեցրեց աշխատատեղերի դաշնային երաշխիքի տրամադրումը, որը Ռուզվելտը խոստացել էր 1932 թվականին:

1935 թվականին որոշակի պաշտպանություն վերականգնելու նպա-տակով, որը տրամադրվում էր աշխատողներին արդեն չգործող Ազգային վերականգնման վարչության կողմից, Ռուզվելտը համագործակցեց Կոնգ-րեսի հետ՝ ընդունելու Աշխատանքային հարաբերությունների ազգային օրենքը (National Labor Relations Act), որը հայտնի է նաև որպես Վագների օրենք (Wagner Act)՝ իր գլխավոր պաշտպան, Նյու Յորքի սենատոր Ռո-բերտ Վագների անունով: Օրենքն առաջին անգամ աշխատավորներին առաջարկում էր դաշնային իրավական պաշտպանություն արհմիություն-ներ կազմակերպելու համար:

Ռուզվելտի «Նոր համաձայնությամբ» ընդլայնված աշխատանքային իրավունքների պաշտպանությունը հեղափոխական նշանակություն ունե-ցավ: Հյուսիսային արդյունաբերական քաղաքներում աշխատավորները արագ արձագանքեցին՝ միավորվելով և պահանջելով աջակցություն աշ-խատավորների իրավունքների պաշտպանության և վատթար պայման-ների վերացման համար: 1935 թվականին Միավորված հանքերի աշխա-

տավորների ղեկավար Ջոն Լյուիսն առաջնորդեց ազգային աշխատավորական նոր կազմակերպության՝ Արդյունաբերական կազմակերպությունների կոնգրեսի (Congress of Industrial Organizations (CIO)) ձևավորումը՝ խզելով հարաբերությունները ավելի պահպանողական, արհեստագործական ուղղվածություն ունեցող Աշխատանքի ամերիկյան ֆեդերացիայի (American Federation of Labor (AFL)) հետ:

1937 թ. Արդյունաբերական կազմակերպությունների կոնգրեսը մեծ հաղթանակ տարավ, երբ Միացյալ ավտոմոբիլային աշխատավորների (United Automobile Workers) կազմակերպության հետ փոխկապակցված իր անդամները գործադուլ սկսեցին Միչիգանի Ֆլինտ քաղաքում գտնվող «Ջեներալ Մոթորսի» գործարանում՝ իրենց արհմիության ճանաչման ու ավելի լավ վարձատրության և աշխատաժամերի կրճատման պահանջով: «Նստացույց» սկսելով՝ բանվորները մնացին շենքում այնքան ժամանակ, մինչև գործարանի ղեկավարությունը համաձայնեց բանակցել: «Ջեներալ Մոթորսը» ճանաչեց Միացյալ ավտոմոբիլային աշխատավորների արհմիությունը և համաձայնեց բարձրացնել աշխատավարձը: Ճանաչումը նպաստեց, որ արհմիությունը արագորեն տարածվի ավտոարդյունաբերության աշխատավորների շրջանում: Ամբողջ երկրում արհմիություններն ու աշխատավորներն օգտվում էին «Նոր համաձայնության» պաշտպանությունից՝ կազմակերպվելով և գործատուներից զիջումներ ստանալով: Աշխատանքային հարաբերությունների ազգային օրենքի ընդունումից երեք տարի անց Կոնգրեսն ընդունեց Արդար աշխատանքային ստանդարտների օրենքը (Fair Labor Standards Act)՝ սահմանելով նվազագույն աշխատավարձի չափը:

Երկրորդ «Նոր համաձայնությամբ» շրջանակներում նաև վերականգնվեց առավել բարձր աստիճանական (պրոգրեսիվ) դաշնային եկամտահարկը, վերաֆինանսավորվեցին կարիքավորների երկարաժամկետ բնակարանային հիփոթեքային վարկերը և իրականացվեցին գյուղական վերակառուցման ծրագրեր՝ գյուղացիական տնտեսությունների եկամուտները քաղաքայինին համապատասխանեցնելու համար: Ռուզվելտի Երկրորդ «Նոր համաձայնության» քաղաքականության կարևորագույն ձեռքբերումներից էր Սոցիալական ապահովության օրենքի (Social Security Act) ընդունումը, որը նախատեսում էր ծերության կենսաթոշակներ, գործազրկության ապահովագրություն և տնտեսական օգնություն՝ ինչպես տարեցներին, այնպես էլ խնամակալության տարիքի երեխաներին օժանդակելու համար: Սա իր ժամանակի ամերիկյան համատեքստում հեղափոխական հայեցակարգ էր: Մեղմելու համար քննադատությունը՝ նախա-

գահը պնդում էր, որ սոցիալական ապահովությունը ֆինանսավորվելու էր ոչ թե դաշնային կառավարության կողմից, այլ հենց իրենց՝ աշխատողների աշխատավարձերից: Ըստ այդմ՝ Սոցապահովության օրենքը դարձավ ժամանակակից ամերիկյան սոցիալական բարեկեցության պետության (welfare state) առանցքը: Այդուհանդերձ, օրենքը չէր ընդգրկում ամերիկյան բնակչության զգալի հատվածին. կենսաթոշակային ծրագիրը բացառում էր տնային աշխատողներին և գյուղացիական տնտեսությունների աշխատավորներին՝ անհամաչափորեն ազդելով աֆրոամերիկացիների վրա: Ռուզվելտը գիտակցում էր, որ սոցիալական ապահովության ծրագրերը ընդլայնման և կատարելագործման կարիք ունեն՝ հայտարարելով. «Այս օրենքը հիմնաքար է կառուցվող, բայց դեռևս անավարտ կառույցի մեջ»:

Մեծ ճգնաժամի ընթացքում առավել սուր էր արտահայտվում հատկապես հավասար իրավունքների խնդիրը: Սևամորթ ամերիկացիները ամենուր բախվում էին խտրականության, բայց հատկապես ծանր իրավական անհավասարության էին ենթարկվում Հարավում՝ Ջիմ Բրոուի ռասայական տարանջատման օրենքների տիրույթում: Չնայած Նոր համաձայնության որոշ ծրագրերում սևամորթ խորհրդատուներ նշանակելու ջանքերին՝ Ֆրանկլինը Ռուզվելտը հաստատակամություն չցուցաբերեց լուծելու սևամորթ համայնքների հիմնախնդիրները: Քանզի դա բացահայտորեն կգրգռեր հարավային դեմոկրատներին և վտանգի տակ կդներ նրա «Նոր համաձայնության» անկայուն դաշինքը՝ բաղկացած ազատականներից, քաղաքային բանվորներից, ագրարային աշխատավորներից և հարավային սպիտակամորթներից: Ռուզվելտը ոչ միայն մերժեց այնպիսի առաջարկները, ինչպիսիք էին ընտրական հարկի վերացումը և Լինչի դատաստանները դաշնային հանցագործություն հռչակելը, այլև հրաժարվեց իր օգնության և բարեփոխումների ավելի մեծ փաթեթներում աֆրոամերիկացիների կարիքների հատուկ թիրախավորումից:

Փաստորեն, «Նոր համաձայնության» ծրագրերից շատերը աֆրոամերիկացիների համար դժվար ժամանակներն էլ ավելի բարդացրին: Երբ Ազգային վերականգնման վարչության կանոնակարգերը սահմանում էին վարձատրության նոր սանդղակներ, նրանք սովորաբար հաշվի էին առնում տարածաշրջանային տարբերակումը և պատմական տվյալները: Հարավում, որտեղ աֆրոամերիկացիները երկար ժամանակ տուժում էին անհավասար վարձատրության պայմաններից, նոր կանոնակարգերը պարզապես հավերժացրին այդ անհավասարությունը: Օրենքները նաև բացառում էին ֆերմաների և տնային տնտեսությունների աշխատողներ-

րին, որոնցում զբաղված էր հարավային սևամորթ տղամարդկանց և կանանց մեծ մասը: Գյուղատնտեսական կարգավորման վարչության կանոնակարգերը նույնքան խնդրահարույց էին, քանզի հողերի սեփականատերերը տեղահանեցին սևամորթ վարձակալներին և բաժնետիրականներին, որոնցից շատերը ստիպված էին վերադառնալ իրենց ֆերմաներ որպես ցածր վարձատրվող օրավարձով բանվորներ կամ գաղթել քաղաքներ՝ աշխատանք փնտրելու հույսով: Թերևս այս առումով «Նոր համաձայնության» ամենահայտնի ձախողումն արտահայտվեց Սոցիալական ապահովության մասին օրենքի ընդունմամբ: Հարավային քաղաքական գործիչները զգուշանում էին դաշնային կառավարության հաստատած սոցիալական բարեկեցությունից աֆրոամերիկացիների օգտվելու հեռանկարից՝ վախենալով, որ տնտեսական անվտանգությունը թույլ կտար սևամորթ հարավցիներին խուսափել աղքատության շրջանից, որը նրանց կապում էր հողին՝ որպես էժան, շահագործվող ֆերմերային բանվորների: Ռուզվելտը համաձայնեց հեռացնել ֆերմաների և տնային տնտեսությունների աշխատողներին օրինագծի դրույթներից՝ բացառելով ռասայական խտրականության ներքո շահագործվող բազմաթիվ աֆրոամերիկացիներին ընդլայնվող տնտեսական անվտանգության ցանցի առավելություններից:

Ռուզվելտի պայքարը հարավային աղքատության հաղթահարման համար տարբեր ձևեր ուներ: Ազգային վերականգնման վարչությունը Հարավի արդյունաբերական ձեռնարկություններում խրախուսում էր ավելի բարձր աշխատավարձեր և ավելի լավ պայմաններ: Այն սկսեց արգելել ջրաղացներում երեխաների աշխատանքը և առաջին անգամ դաշնային արհմիութենական պաշտպանություն ապահովեց աշխատավորների համար ողջ երկրում: 1938 թ. այս ձեռքբերումներն ի վերջո ամրապնդվեցին Արդար աշխատանքային ստանդարտների օրենքով, որը սահմանեց ազգային նվազագույն աշխատավարձ՝ 0,25 դոլար/ժամ, որն աճեց մինչև 0,40 դոլար/ժամ: Նվազագույն աշխատավարձի սահմանումը անհամաչափորեն դրական ազդեց ցածր վարձատրվող հարավային աշխատավորների վրա՝ հարավային աշխատավարձերը հասցնելով հյուսիսային աշխատավորների աշխատավարձերի մակարդակին:

Ավելին, նախագահի աջակցությունը արհմիություններին առավել ազդեց հարավային արդյունաբերողների վրա, որոնք հատկապես հարավային տխրահոջակ տեքստիլ գործարաններում արհմիություններին թշնամի էին համարում: 1934 թվականին, երբ հարավային Պիեմոնտի տեքստիլ արդյունաբերության գործարանների աշխատողները գործադուլ

էին անում ցածր աշխատավարձերի և երկար աշխատաժամերի պատճառով, սեփականատերերը դիմեցին տեղական և նահանգային իշխանություններին՝ բանվորական շարժումը ճնշելու համար: Ի վերջո, 1935 թ. Աշխատանքային հարաբերությունների ազգային օրենքը՝ Վազների ակտը, երաշխավորեց աշխատավորների իրավունքները՝ արհմիություններ կազմելու և գործատուների հետ կոլեկտիվ բանակցություններ վարելու: Եվ այսպես, արհմիություններն ու աշխատավորները, ստանալով դաշնային կառավարության աջակցությունը, վճռականորեն առաջ էին մղում աշխատանքային բարեփոխումների հարցերը՝ ավելի բարձր աշխատավարձերի, ավելի կարճ աշխատաժամերի և ավելի լավ պայմանների տեսքով: Արհմիությունները Ռուզվելտին ընդունում էին իբրև աշխատավորների իրավունքների պաշտպան՝ «Աստժո գործակալ»:

Սկզբում Ռուզվելտը «Նոր համաձայնության» օրենսդրական հաջողությունը ապահովելու համար սիրաշահում էր հարավային պահպանողական դեմոկրատներին՝ երաշխավորելով, որ տարածաշրջանի ռասայական և տնտեսական անհավասարությունները մնան անձեռնմխելի: Սակայն իր պաշտոնավարման երկրորդ ժամկետի ավարտին նա արդեն ուներ բավականին թվով ընտրողների աջակցություն ողջ երկրում և ավելի վստահորեն սկսեց դիմակայել տարածաշրջանի ամենասակնառու անհավասարություններին: Սա արտահայտվեց 1938 թ. նրա կողմից հաստատված զեկույցում՝ վերնագրված «Զեկույց Հարավի տնտեսական պայմանների մասին», որը ձևակերպվել էր «Նոր համաձայնության» ջատագով մի խումբ առաջադեմ հարավցիների կողմից: Զեկույցը, որի ներածական մասը ներառում էր Ռուզվելտի ուղերձը և տարածաշրջանն անվանում էր «ազգի թիվ 1 տնտեսական խնդիր», դատապարտում էր հարավային տնտեսական համակարգը, հարավային հետադիմականներին և «Նոր համաձայնության» հակառակորդներին:

Մյուս կողմից՝ Ռուզվելտը ներառում էր կանանց իր վարչակազմի առանցքային պաշտոններում, այդ թվում՝ ԱՄՆ առաջին կին նախարար Ֆրենսիս Փերկինսին, ով նշանակվեց Աշխատանքի քարտուղարի բարձր պաշտոնում, և Ազգային երիտասարդական վարչության աֆրոամերիկացի խորհրդական Մերի Մաք-Լեոդ Բեթունին: Առաջին տիկին Էլեոնոր Ռուզվելտը նախագահի հիմնական խորհրդականն էր և դարձավ տնտեսական ու ռասայական արդարության հիմնական ձայնը: Եվ այսպես, չնայած մեծ առաջընթացին, «Նոր համաձայնությունը» չկարողացավ հաղթահարել այն հիմնական անհավասարությունները, որոնք շարունակում էին նշանավորել Միացյալ Նահանգների հասարակական կյանքը:

«Նոր համաձայնության» եզրափակումը (1937-1939 թթ.)

Մինչև 1936 թվականը նախագահ Ռուզվելտը և նրա «Նոր համաձայնությունը» հսկայական ժողովրդականություն ձեռք բերեցին: Նոյեմբերին կայացած նախագահական ընտրություններում Ռուզվելտը ջախջախեց իր հանրապետական մրցակցին՝ Կանզասի նահանգապետ Ալֆ Լենդոնին, ով պարտվեց բոլոր նահանգներում, բացի Մեյնից և Վերմոնտից: Մեծ ճգնաժամը դեռևս չէր ավարտվել, բայց կարծես թե նահանջում էր, և Ռուզվելտը, արդեն իր վերընտրությունը ապահոված, պատրաստ էր օգտվել թե՛ իր հանրաճանաչությունից, թե՛ բարելավվող տնտեսական միջավայրից՝ ճնշում գործադրելու ավելի կտրուկ փոփոխությունների համար: Սակայն պահպանողական խոչընդոտները շարունակում էին սահմանափակել նրա լայն ժողովրդական աջակցություն վայելող իշխանությունը:

ԱՄՆ Գերագույն դատարանը շարունակում էր տապալել Նոր համաձայնության ծրագրերից շատերը: 1937 թվականին, մտահոգվելով, որ Գերագույն դատարանը կարող էր տապալել Սոցիալական ապահովության օրենքը, Ռուզվելտը Կոնգրեսին կոչ արեց օրենսդրություն ընդունել, որը նրան թույլ կտար ընդլայնել Գերագույն դատարանի կազմը՝ 70 տարեկանից բարձր յուրաքանչյուր գործող անդամի համար նշանակելով նոր, ավելի երիտասարդ դատավոր: Ռուզվելտը պնդում էր, որ այդ միջոցը պետք է արագացներ դատական գործերի աճող կուտակումները կարգավորելու Դատարանի կարողությունը: Իրականում, այս ծրագիրը նախագծված էր, որպեսզի նախագահին թույլ տար նշանակել «Նոր համաձայնության» կողմնակից և բարեկամ մինչև 6 նոր դատավորներ՝ Գերագույն դատարանում հին ժամանակների պահպանողականների ազդեցությունը խեղդելու համար: Ռուզվելտի «սխեման» զայրացրեց ընդդիմությանը և չդարձավ օրենք, բայց «խրատված» դատարանը դրանից հետո հաստատեց սոցիալական ապահովության և «Նոր համաձայնության» օրենսդրության այլ դրույթները: Այնուամենայնիվ, Ռուզվելտը աստիճանաբար կարողանում էր ավելի ընդունելի դատավորներ նշանակել Գերագույն դատարանում, քանզի նրա կառավարման երկարատև տարիներին մի շարք պահպանողականներ մահացան կամ թոշակի անցան:

Ի վերջո, Ռուզվելտը և նրա խորհրդականները թանկ արժեցող սխալ գործեցին՝ բարդացնելով տնտեսական խնդիրները: 1937 թ. Ռուզվելտը կրճատեց պետական ծախսերը՝ կարծելով, թե Միացյալ Նահանգներն արդեն շրջել է տնտեսական անկման էջը: Արդյունքում ամերիկյան տնտեսությունն ընկավ գրեթե մինչև 1932-1933 թթ. խորքերը: Ռուզվելտը փո-

խեց ընթացքը՝ որդեգրելով անգլիացի նշանավոր տնտեսագետ Ջոն Մեյ-նարդ Քեյնսի հանրահայտ մոտեցումը, ըստ որի՝ հակացիկլային, պետականորեն փոխհատուցվող ծախսերը երկիրը դուրս կբերեն ռեցեսիայից, նույնիսկ բյուջեի աճող դեֆիցիտի հաշվին: Սակայն արդեն ուշ էր: 1937 թ. «Ռուզվելտի հետաճը» (Roosevelt Recession) դարձավ քննադատների թիրախը: Դատարանների «փաթեթավորման սխեմայի» քննադատության հետ զուգակցված՝ այս տնտեսական անկումը հնարավորություն տվեց հարավային դեմոկրատների և միջինարևմտյան հանրապետականների պահպանողական դաշինքին 1938 թվականի միջանկյալ ընտրություններում զգալի ձեռքբերումներ ունենալու: 1939 թվականին Ռուզվելտն արդեն պայքարում էր ստանալու Կոնգրեսի աջակցությունը ոչ միայն նոր բարեփոխումների անցկացման, այլև գոյություն ունեցող գործակալությունների պահպանման համար: Սակայն Եվրոպայում և Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում պատերազմի աճող սպառնալիքը շեղեց հանրության ուշադրությունն ու Ռուզվելտի առաջնահերթությունները: «Նոր համաձայնությունն» աստիճանաբար նահանջեց երկրորդ հարթություն՝ իր տեղը զիջելով պատերազմին:

Ամփոփենք: 1929 թվականին իր երդմնակալության ուղերձում նախագահ Հերբերտ Հուվերը հայտարարում էր, որ Հանրապետական կուսակցությունը բարգավաճում է բերել՝ անտեսելով աղքատության մեծ ցուցանիշները, անհավասարության անպաճույճ մակարդակները և տասնամյակի տնտեսական հիմնախնդիրները: Թեև սպառողական նոր մշակույթը նպաստում էր նոր ազատություններին, այն նաև խթանում էր նոր անապահովությունները: Վարկի և ապառիկի վրա կառուցված տնտեսությունը հսկայական ռիսկեր էր պարունակում: Եվրոպական պետությունների խարխուլված տնտեսությունների, բարձր մաքսատուրքերի, ամերիկյան հարստության անհավասարության, շինարարական փուչիկի, պահանջարկի անկման և հեղեղված սպառողական շուկայի վտանգները երևացին «Հախուռն քսանականների» ավարտին, երբ սկսվեց համաշխարհային տնտեսական Մեծ ճգնաժամը:

Մինչև 1930-ական թվականների վերջը Ռուզվելտն ու դեմոկրատական մեծամասնության կողմից վերահսկվող Կոնգրեսն առաջնորդում էին ամերիկյան կառավարման համակարգի վերափոխումը և կուսակցական քաղաքականության վերադասավորումը: Առաջին համաշխարհային պատերազմից առաջ Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարությունը, թեև հզոր, սակայն ժողովրդի «աչքից հեռու կառավարություն» էր: «Նոր

համաձայնության» արդյունքում ամերիկացիները սկսել էին դաշնային կառավարությանն ընկալել իբրև հնարավոր դաշնակից իրենց ամենօրյա պայքարում՝ աշխատատեղերի ու արժանապատիվ աշխատավարձերի ապահովման, գյուղատնտեսական արտադրանքի արդար սակագների հաստատման և արհմիություններ կազմակերպելու հարցերում: 1932 թ. և 1936 թ. ԱՄՆ նախագահական ընտրություններում ընտրողների մասնակցության տեսակարար կշիռն աճեց, և այս նոր համախմբված ընտրողների մեծամասնությունը Դեմոկրատական կուսակցության կայուն ընտրազանգվածն էր, որը շարունակեց հավատարիմ մնալ կուսակցությանը մինչև 1960-ական թվականները: Թեև Երկրորդ համաշխարհային պատերազմին ամերիկյան մասնակցության շնորհիվ առատությունը և տնտեսական աճը վերադարձան Միացյալ Նահանգներ, սակայն Մեծ ճգնաժամի մասին հիշողությունները շարունակում էին ներազդել ամերիկացիների հետագա սերունդների հայացքների վրա:

ԳԼՈՒԽ 17

ԱՄՆ-ն և Երկրորդ համաշխարհային պատերազմը

1930-1940-ական թվականները Ամերիկայի Միացյալ Նահանգների համար փորձությունների ժամանակներ էին: Համաշխարհային տնտեսական ճգնաժամը իր տեղը զիջեց համաշխարհային պատերազմին, որը դարձավ մարդկության պատմության մեջ ամենամահաբերը և կործանարարը: Երկրորդ համաշխարհային պատերազմի (1939-1945 թթ.) հետևանքով շուրջ 80 միլիոն մարդ զոհվեց: Պատերազմում մարդկային զոհերը և ավերումը արդյունաբերական մասշտաբների էին: Երկրորդ աշխարհամարտը նաև սանձազերծեց պատերազմներում երբևէ օգտագործված ամենասարսափելի՝ միջուկային զենքի ստեղծումը և կիրառումը: Եվ երբ աշխարհամարտն ավարտվեց, Միացյալ Նահանգները հայտնվեց աշխարհի ամենագորեղ գերտերության կարգավիճակում՝ զինված աշխարհի ամենամեծ տնտեսությամբ և ռազմական կարողություններով: Սակայն պատերազմը բարձրացրեց նաև նոր հիմնախնդիրներ և ծնեց հասարակական-գաղափարաբանական նոր ուժեր ինչպես երկրի ներսում, այնպես էլ արտերկրում, որոնց պետք է դիմակայեին ամերիկացիների գալիք սերունդները:

Խաղաղօվկիանոսյան պատերազմի ակունքները

1931 թ. սեպտեմբերի 18-ին Չինաստանի Մանչուրիա նահանգում փոքրիկ պայթյունը պատռեց երկաթուղային գծերը, որոնք վերահսկվում էին ճապոնական Հարավային Մանչուրիայի երկաթուղու կողմից: Սա ճապոնացիների կողմից մշակված խորամանկ սադրանք էր՝ Մանչուրիա ներխուժման հիմք ստեղծելու համար: Եվ ճապոնական կայսերական բանակը լայնածավալ ներխուժում սկսեց: 1932 թ. փետրվարի վերջին ամբողջ Մանչուրիան հայտնվեց ճապոնական վերահսկողության տակ: Ճապոնիան քաղաքականապես պառակտված էր իր լճացած տնտեսության պատճառով: Ղեկավարները տարակուսած էին, թե արդյոք Ճապոնիան պետք է ռազմական ծավալապաշտության միջոցով լուծեր տնտեսական արդիականացման, վաճառահանման շուկաների, արդյունաբերական հումքի ու բնական ռեսուրսների բացակայության հարցը, թե միջազգային համագործակցության միջոցով, այն է՝ Ճապոնիայի առաջնորդությամբ պանասիական (Pan-Asianism) հակաարևմտյան գաղափարաբանության

ներքո ասիական ժողովուրդների համախմբում և Ասիայից արևմտյան գաղութատիրական տերությունների դուրսմղում: Ի վերջո, մի շարք քաղաքական ճգնաժամերից և սպանություններից հետո, որոնք բորբոքեցին լարվածությունը, ճապոնական բանակի ռազմատենչ թևը հաղթեց ավելի չափավոր քաղաքացիական կառավարությանը: Ճապոնիան որդեգրեց միլիտարիզմի և ագրեսիվ ռազմական ընդլայնման քաղաքականությունը:

Չինաստանի առաջնորդներ Չան Կայշին և Չժան Սյուեյանը դիմեցին Ազգերի լիգային, որը պահանջեց Մանջուրիան վերադարձնել Չինաստանին: 1933 թվականի մարտին Ճապոնիան դուրս եկավ Ազգերի լիգայից: 1937 թվականի հուլիսի 7-ին ճապոնացիները լայնամասշտաբ ներխուժում սկսեցին Չինաստան և ջախջախեցին Չան Կայշիի գլխավորած Չինաստանի ազգային հեղափոխական բանակի ուժերը: Չան Կայշիի ազգայնական կառավարությունը նահանջեց երկրի խորքը և օգնության խնդրեց Վաշինգտոնից: Սակայն Միացյալ Նահանգները, թեև դատապարտում էր ճապոնական ագրեսիան, 1930-ականների ընթացքում ոչ մի քայլ չձեռնարկեց:

Ճապոնիայի ռազմաքաղաքական ղեկավարության աչքում Չինաստանի նվաճումը ոչ միայն կապահովեր ճապոնական արդյունաբերության կարիքները, այլև կապահովեր Ճապոնիայի գերակայությունը Արևելյան Ասիայում: Միայն Չինաստանում Ճապոնիան ուներ ավելի քան 4,1 միլիոնանոց տեխնոլոգիապես հագեցած բանակ և 900,000 չինացի համագործակիցներ: Ճապոնական բանակը զինված էր ժամանակակից հրացաններով, հրետանիով, զրահատեխնիկայով և ինքնաթիռներով: 1940 թվականի դրությամբ ճապոնական նավատորմը մեծությամբ երրորդը և տեխնոլոգիապես ամենազարգացածներից էր աշխարհում:

Ճապոնական ներխուժման ժամանակ ընթանում էր չինական քաղաքացիական պատերազմը. ազգայնականները պայքարում էին կոմունիստական ապստամբության դեմ: Մինչ չինացի ազգայնականները պայքարում էին գոյատևման համար, Չինաստանի կոմունիստական կուսակցությունն իր առաջնորդ Մաո Յզեդունի հրամանատարությամբ զբաղված էր ուժերի հավաքագրմամբ: Թեև Ճապոնիան նվաճել էր երկրի մեծ մասը, ազգայնականները վերախմբավորվեցին, իսկ կոմունիստները վերազինվեցին: Չինադադարը վերջ դրեց չինական քաղաքացիական պատերազմին, և վերակենտրոնացրեց ջանքերը զավթիչների դեմ: Չինացիները չկարողացան վռնդել ճապոնացիներին, բայց կարողացան կասեցնել նրանց առաջխաղացումը: Պատերազմը հայտնվել էր փակուղում:

Եվրոպական պատերազմի ակունքները

Եվրոպական մեծ տերությունները դեռևս պայքարում էին Առաջին համաշխարհային պատերազմի հետևանքների դեմ ամբողջ աշխարհում, երբ համաշխարհային տնտեսական Մեծ ճգնաժամը աշխարհասփ մեծ մասը քաոսի մեջ զցեց: Վայմարյան Հանրապետությունը փլուզվեց տնտեսության հետ միասին, և Գերմանիայում իշխանության եկան Ադոլֆ Հիտլերի նացիոնալ-սոցիալիստները՝ նացիստները: Գերմանական ռասայական գերիշխանության, ֆաշիստական կառավարման և ռազմական ծավալապաշտության գաղափարաբանությամբ առաջնորդվող Նացիոնալ-սոցիալիստական գերմանական բանվորական կուսակցությունն ընտրություններում հաջողություն արձանագրեց և 1933 թվականին նրա առաջնորդ Ադոլֆ Հիտլերը դարձավ Գերմանիայի կանցլեր: Նացիստները նվաճեցին պետական հաստատությունները և ոչնչացրին ժողովրդավարական ավանդույթները: Ձախական քաղաքական խմբերն ու կուսակցությունները ևս ոչնչացվեցին: Հիտլերը չեղյալ հայտարարեց Վերսալի պայմանագրի պատժիչ դրույթները և խիստ ռազմական սահմանափակումները: Նա վերակառուցեց գերմանական բանակը և նավատորմը: Նա վերագրավեց պատերազմի ժամանակ Գերմանիայի կորցրած տարածքները և վերառազմականացրեց Ֆրանսիայի հետ սահմանամերձ Հռենոսյան տարածաշրջանը՝ Ռեյնլանդը: Երբ 1936 թվականին բռնկվեց Իսպանիայի քաղաքացիական պատերազմը, Հիտլերը և ֆաշիստական Իտալիայի առաջնորդ Բենիտո Մուսոլինին, ով իշխանության էր հասել 1922 թվականին, միջամտեցին հոգուտ իսպանացի ֆաշիստների՝ տապալելով կոմունիստական Իսպանական հանրապետական կուսակցությունը: Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան անհանգիստ զգուշությամբ էին հետևում ծավալվող իրադարձություններին և սկսեցին վերակառուցել իրենց բանակները, սակայն դեռևս չէին ցանկանում Եվրոպայի ներքաշել հերթական արյունալի պատերազմի մեջ նորացված Գերմանիայի դեմ:

«Իմ պայքարը» (Mein Kampf) ինքնակենսագրական մանիֆեստում Հիտլերը պաշտպանում էր Եվրոպայի գերմանական ժողովուրդների միավորման գաղափարը մեկ պետության մեջ և առաջ էր քաշում գերմանական ազգի «կենսատարածքի» (Lebensraum) ընդլայնման անհրաժեշտությունը հատկապես Արևելյան Եվրոպայում՝ գերմանացիներին ապագա բարգավաճման համար անհրաժեշտ հողով և ռեսուրսներով ապահովելու համար:

1938 թվականին Գերմանիան միացրեց (Anschluss) Ավստրիան և

իր հայացքն ուղղեց Սուդետենլանդին՝ Չեխոսլովակիայի էթնիկապես գերմանական տարածքին: Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան տագնապած, բայց դեռևս պատերազմից խուսափելու հույսով, առանց Չեխոսլովակիայի մասնակցության, համաձայնեցին, որ Գերմանիան կարող է անեքսիայի ենթարկել տարածաշրջանը՝ գերմանական ապագա ծավալապաշտությունը դադարեցնելու խոստման դիմաց: Նրանք կարծում էին, որ Հիտլերին կարելի էր այդ կերպ խաղաղեցնել, սակայն տեղի ունեցավ հակառակը՝ Հիտլերի հավակնությունները շարունակեցին խթանել գերմանական ագրեսիվ ծավալապաշտությունը: 1939 թ. մարտին Հիտլերը բռնակցեց Չեխոսլովակիայի մնացած մասը և սկսեց պահանջներ ներկայացնել Լեհաստանին: Անգլիան և Ֆրանսիան սպառնացին պատերազմով: Եվ պատերազմը սկսվեց:

Հիտլերը Խորհրդային Միության հետ կնքեց գաղտնի համաձայնագիր՝ Մոլոտով-Ռիբենտրոպ պակտը (Molotov-Ribbentrop Pact), որը համապարգում էր Լեհաստանի բաժանումը երկու տերությունների միջև և ամրագրում էր փոխադարձ չհարձակման խոստումը: 1939 թ. սեպտեմբերի 1-ին գերմանական Վերմախտը՝ զինված ուժերը, ներխուժեց Լեհաստան: Սկսվեց Երկրորդ համաշխարհային պատերազմը: Երկու օր անց Բրիտանիան և Ֆրանսիան պատերազմ հայտարարեցին Գերմանիային և մոբիլիզացրին իրենց բանակները: Բրիտանիան և Ֆրանսիան հույս ունեին, որ լեհերը կկարողանան դիմանալ երեքից չորս ամիս, ինչը բավական ժամանակ էր դաշնակիցների ուժերի կենտրոնացման և միջամտության համար: Սակայն Լեհաստանը ընկավ երեք շաբաթում: Գերմանիան ցանկանում էր խուսափել երկարատև ու դանդաղ քայքայիչ պատերազմից, որը միլիոնավոր կյանքեր էր խլել Առաջին համաշխարհային պատերազմի փակուղում: Ուստի գերմանական նոր և գերժամանակակից բանակը կառուցվել էր արագության և մանևրելու բարձր չափանիշներով: Գերմանական ռազմական ուսմունքն ընդգծում էր տանկերի, ինքնաթիռների և մոտոհրաձգային հետևակի լայնամասշտաբ կիրառումը՝ ուժերը կենտրոնացնելու, ճակատային գծերը ջարդելու և թշնամու պաշտպանական բնագծերի թիկունքում ավերածություններ անելու համար: Այս հայեցակարգը կոչվում էր «Բլիցկրիգ» (Blitzkrieg) կամ կայծակնային պատերազմ:

1940 թվականի գարնանը նվաճվեցին Դանիան և Նորվեգիան: 1940 թ. մայիսին Հիտլերը սկսեց իր հարձակումը Արևմտյան Եվրոպայում: Արտացոլելով 1914 թ. պատերազմում կայգերական բանակի կիրառած Շլիֆենի պլանը (Schlieffen Plan)՝ Գերմանիան հարձակվեց Նիդերլանդների և Բելգիայի վրայով՝ շրջանցելով ֆրանս-գերմանական սահմանի երկայն-

քով կահավորված ֆրանսիական պաշտպանական «Մաժինյի գիծը»: 1940 թ. հունիսին Հիտլերն արդեն էյֆելյան աշտարակի առջև էր: Գերմանիան կիսեց Ֆրանսիան՝ ռազմակալելով և կառավարելով հյուսիսը, իսկ հարավը թողնելով Վիշիում հաստատված խամաճիկ կառավարությանը:

Ֆրանսիայից հետո Հիտլերը սկսեց «Ծովառայուն» գործողությունը՝ փորձելով ներխուժել Բրիտանական կղզիներ: Այս գործողությունը պահանջում էր օդային գերակայություն Լա Մանշի նեղուցի նկատմամբ: 1940 թ. հունիսից հոկտեմբեր գերմանական օդուժը (Luftwaffe) կռվում էր թագավորական օդուժի (Royal Air Force (RAF)) դեմ՝ երկնքում գերակայության համար: Չնայած թագավորական օդուժն ավելի քիչ ինքնաթիռներ ուներ, բրիտանացիները հաղթեցին այսպես կոչված Բրիտանիայի ճակատամարտում, սակայն Հիտլերը սկսեց Բլիցը (Blitz)՝ Բրիտանիայի քաղաքների և բնակավայրերի ոմբակոծությունը: Բլիցն ավարտվեց 1941 թվականի հունիսին, երբ Հիտլերը, վստահ լինելով, որ Բրիտանիան ժամանակավորապես դուրս է եկել պայքարից, սկսեց «Բարբարոսա» գործողությունը (Operation Barbarossa)՝ ներխուժումը Խորհրդային Միության:

Դա համաշխարհային պատմության մեջ ամենամեծ ցամաքային ներխուժումն էր: Ֆրանսիան և Լեհաստանը ընկել էին շաբաթների ընթացքում, և գերմանացի պաշտոնյաները հույս ունեին կոտրել Խորհրդային Միության դիմադրությունը մինչև ձմեռ: Եվ սկզբնական շրջանում բլիցկրիգը հաջող էր ընթանում: Գերմանական զորքերը արագորեն գրավեցին հսկայական տարածքներ և գերեվարեցին հարյուրհազարավոր խորհրդային զինվորների: Բայց Խորհրդային Միությունը չափազանց մեծ էր, և խորհրդային իշխանությունը պատրաստ էր միլիոնների զոհաբերել ֆաշիստների առաջխաղացումը կասեցնելու համար: Գերմանիան հսկայական առաջխաղացում ապահովեց, սակայն չափազանց երկարաձգված ձմռան ընթացքում ուժասպառ եղավ: Հյուսիսում գերմանական բանակը երկարատև պաշարման միջոցով սովամահության ենթարկեց Լենինգրադը, սակայն չկարողացավ նվաճել: Հարավում՝ Ստալինգրադում, երկու բանակները արյունաքամ ճակատամարտի բռնվեցին հիմնովին ավերված քաղաքում, իսկ կենտրոնում՝ Մոսկվայի արվարձաններում, գերմանական բանակի հարձակողական ուժը կոտրվեց և հետ մղվեց: Խորհրդային Միությունն էր, որ կոտրեց Հիտլերի բանակը: 25 միլիոն խորհրդային զինվորներ և խաղաղ բնակիչներ զոհվեցին Հայրենական մեծ պատերազմի ժամանակ, իսկ պատերազմի ընթացքում գերմանացիների բոլոր զոհերի մոտավորապես 80 տոկոսը բաժին հասավ հենց Արևելյան ճակատին: Գերմանական բանակը միայն Ստալինգրադի ճակատամարտում տվեց

850,000 զոհ: 1941 թվականի դեկտեմբերին Գերմանիան սկսեց իր երկարատև նահանջը:

Միացյալ Նահանգները և Եվրոպական պատերազմը

Մինչ ընթանում էր Հիտլերի հաղթարշավը Եվրոպայում, ճապոնացիները շարունակում էին իրենց ծավալապաշտական պատերազմը Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում: 1939 թվականին Միացյալ Նահանգները խզեց իր առևտրային պայմանագրերը Ճապոնիայի հետ և հաջորդ տարի դադարեցրեց ռազմական բնույթի մատակարարումները՝ արգելանք դնելով նավթի, պողպատի, կաուչուկի և այլ կարևոր ապրանքների վրա: Հույս կար, որ տնտեսական ճնշումը կարգելակի ճապոնական ռազմական մեքենան: Փոխարենը, ռեսուրսների քաղց ունեցող Ճապոնիայի զինուժը ներխուժումներ սկսեց Խաղաղ օվկիանոսի տարածաշրջանում՝ իր պատերազմական ջանքերն ու կարիքներն ապահովելու համար: Ճապոնացիներն իրենց նոր կայսրությունն անվանեցին Մեծ Արևելյան Ասիայի համատեղ բարգավաճման ոլորտ (Greater East Asia Co-Prosperity Sphere)՝ «Ասիան ասիացիների համար» (“Asia for the Asians”) կարգախոսով, և պատերազմ սկսեցին Եվրոպական տերությունների գաղութների և անկախ երկրների դեմ ողջ տարածաշրջանում: Ճապոնիայի և ԱՄՆ-ի միջև դիվանագիտական հարաբերությունները խզվեցին: Միացյալ Նահանգները պահանջեց, որ Ճապոնիան դուրս գա Չինաստանից: Ճապոնիան ամերիկյան նավթային էմբարգոն համարեց փաստացի պատերազմի հայտարարություն իր դեմ:

Ճապոնայի ռազմաքաղաքական ղեկավարությունը, հավատալով, որ ամերիկյան միջամտությունն անխուսափելի է դառնում, ծրագրեց համակարգված հարձակում Խաղաղ օվկիանոսում՝ չեզոքացնելու Միացյալ Նահանգների և տարածաշրջանում եվրոպական տերությունների ուժերը և այդպիսով ժամանակ շահելու իր նվաճումները տարածաշրջանում ավարտելու և դիրքերն ամրացնելու համար: 1941 թվականի դեկտեմբերի 7-ի առավոտյան ճապոնացիները անսպասելիորեն հարձակվեցին Հավայան կղզիների Փերլ Հարբորի ամերիկյան ռազմածովային հենակայանի վրա: Ճապոնայի ռազմաքաղաքական ղեկավարությունը հույս ուներ ոչնչացնել մեծ թվով ռազմանավեր և ավիակիրներ, ինչը կարող էր խեղել և տարիներով հետ գցել ամերիկյան ռազմածովային հզորությունները: Հարձակման հետևանքով զոհվեց 2400 ամերիկացի:

Ամերիկյան մեկուսականությունն ավարտվեց Փերլ Հարբորում: Ճա-

պոնիան նաև հարձակվեց Ֆիլիպինների և ամերիկյան խաղաղօվկիանոսյան այլ տիրույթների վրա, սակայն Հավայան կղզիների վրա հարձակումն էր, որ Միացյալ Նահանգներին մղեց այս համաշխարհային հակամարտության մեջ: Նախագահ Ֆրանկլին Ռուզվելտը 1941 թ. դեկտեմբերի 7-ին դիմեց Կոնգրեսին պատերազմ հայտարարելու կոչով, որն արձագանքեց մի քանի ժամվա ընթացքում: Փերլ Հարբորի հարձակումից հետո մեկ շաբաթվա ընթացքում Միացյալ Նահանգները պատերազմ հայտարարեց «Բեռլին-Հռոմ-Տոկիո առանցքի»՝ ռազմաքաղաքական խմբավորման բոլոր երկրներին (Ճապոնիա, Գերմանիա և Իտալիա):

Միացյալ Նահանգների պատերազմական գործողությունները սկսվեցին դանդաղ: Մեծ Բրիտանիան փաստացի միայնակ էր պատերազմում Արևմտյան Եվրոպայում, սակայն ամերիկյան մատակարարումներն ամրապնդում էին նրա դիրքերը և դիմադրության հաջողությունները: Հիտլերն իր սուզանավային (U-boat) «գայլերի ոհմակը» բաց թողեց Ատլանտյան օվկիանոս՝ հրամայելով խորտակել այն ամենը, ինչն օգնություն էր տեղափոխում Բրիտանիա, բայց Մեծ Բրիտանիայի և Միացյալ Նահանգների գերազանցող մարտավարությունն ու տեխնոլոգիաները հաղթեցին գերմանացիներին Ատլանտյան ճակատամարտում: Բրիտանական ծածկագրային մեքենաները կոտրում էին Գերմանիայի ռադիոկոդերը և ուլտրա (Ultra) կոչվող հետախուզության ռադիոալիքները: Ամերիկյան հսկայական ծովային շարասյուններն ուղեկցվում էին սոնար սարքավորումներով և խորքային ռումբերով զինված կործանիչ ռազմանավերով, ինչը մեծ առավելություն տվեց դաշնակիցներին, և մինչև 1942 թվականը Գերմանիայի ռազմածովային ուժերը (Kriegsmarine) կորցնում էին նավերն ավելի արագ, քան դրանք կարող էին կառուցվել:

1942 թվականին բրիտանացիների հաղթանակը Էլ Ալամեյնում ետ մղեց գերմանացիներին Հյուսիսային Աֆրիկայում: Նոյեմբերին ամերիկյան զորքերը մտան ֆրանսիական Մարոկկո՝ ճնշելով գերմանացիներին արևմուտքից, իսկ բրիտանացիները շարունակեցին հարձակումը արևելքից: 1943 թվականին դաշնակիցներն Աֆրիկայից դուրս մղեցին իտալական և գերմանական ուժերին: Հունվարին նախագահ Ռուզվելտը և վարչապետ Չերչիլը հանդիպեցին Կասաբլանկայում՝ քննարկելու եվրոպական պատերազմի հաջորդ քայլը: Չերչիլը համոզեց Ռուզվելտին ներխուժել Իտալիա: Այնուհետև Ռուզվելտը հայտարարեց մամուլին, որ դաշնակիցների համար ընդունելի է միայն Առանցքի երկրների անվերապահ կապիտուլյացիան:

Միևնույն ժամանակ, ԱՄՆ բանակի ռազմաօդային ուժերը հարյուրա-

վոր և, ի վերջո, հազարավոր ոմբակոծիչներ ուղարկեցին Անգլիա՝ նախապատրաստելով Գերմանիայի լայնածավալ ռազմավարական ոմբակոծությունը: Ըստ ծրագրի՝ Գերմանիան պետք է ենթարկվեր շուրջօրյա ոմբակոծության: Ամերիկյան կործանիչները ցերեկը հարվածում էին գերմանական գործարաններին, երկաթուղային կայարաններին, նավթահանքերին և արտադրական կենտրոններին, մինչդեռ բրիտանական օդուժը գիշերը գորգային ոմբակոծությունների էր ենթարկում գերմանական քաղաքները:

Ստալինգրադում Խորհրդային Միության հաղթանակից հետո Մեծ եռյակը (Ռուզվելտ, Չերչիլ և Ստալին) 1943 թվականի նոյեմբերին հավաքվեց Թեհրանում: Աֆրիկյան և Իտալիան համարելով որպես կողմնակի շրու՝ Ստալինը պահանջեց, որ Մեծ Բրիտանիան և Միացյալ Նահանգները ներխուժեն Ֆրանսիա՝ արևելյան ճակատում ԽՍՀՄ-ի վրա ճնշումը թուլացնելու համար: Չերչիլը տատանվում էր, բայց Ռուզվելտը համամիտ էր: Ներխուժումը ծրագրվեց իրականացնել 1944 թվականին: Դեռևս Իտալիայում ֆաշիստների «փափուկ որովայնը» շատ ավելի կոշտ էր, քան պատկերացնում էր Չերչիլը: Իտալիայի նեղ, լեռնային տեղանքն առավելություն տվեց պաշտպանվող առանցքի ուժերին: Այնուամենայնիվ, դաշնակիցներն առաջ շարժվեցին թերակղզում, Մուսոլինիի կառավարությունը տապալվեց ապստամբների կողմից, և Իտալիայի նոր կառավարությունն արագորեն հաշտություն կնքեց:

Այն օրը, երբ ամերիկյան բանակը մտավ Հռոմ, ամերիկյան, բրիտանական և կանադական ուժերը սկսեցին «Գերիշխան» գործողությունը (Operation Overlord)՝ երկար սպասված ներխուժումը Ֆրանսիա: Նորմանդիայում ափհանումը (կամ D-Day-ը) համաշխարհային պատմության մեջ ամենախոշոր ամֆիբիական հարձակումն էր: Ըստ դաշնակից ուժերի գերագույն հրամանատար, ԱՄՆ բանակի գեներալ Դուայթ Էյզենհաուերի՝ հարձակման հնարավոր ելքերն այնքան անորոշ էին, որ ներխուժման նախորդ գիշերը երկու ուղերձ էր գրել՝ մեկը հաջողության և մյուսը ճախողման դեպքերի համար: Դաշնակիցների ափհանումը Նորմանդիայում հաջող էր՝ չնայած հաղթարշավը Ֆրանսիայում շատ ավելի դանդաղ էր ընթանում, քան սպասվում էր: Փարիզն ազատագրվեց երկու ամիս անց: Միևնույն ժամանակ դաշնակիցների գորգային ոմբակոծությունները շարունակում էին հողին հավասարեցնել գերմանական քաղաքները և արդյունաբերական հզորությունները: Թերևս ավելի քան 400,000 գերմանացի խաղաղ բնակիչներ զոհվեցին դաշնակիցների լայնածավալ ոմբակոծություններից:

Նացիստները երկու ճակատներում էլ պարտվում էին: Հիտլերը փորձեց պատերազմն իր օգտին շրջել արևմուտքում, բայց չկարողացավ: Բուլջի ճակատամարտում չկարողացավ դաշնակիցներին ետ մղել Լա Մանշ, սակայն հետաձգեց նրանց առաջխաղացումը: Խորհրդային Միությունը շարունակում էր իր անողոք առաջխաղացումը դեպի արևմուտք: Գերմանական հակագրոհները արևելքում ևս չկարողացան կասեցնել խորհրդային զորքերի առաջխաղացումը. Գերմանիան սպառել էր մարտական նախաձեռնությունը վերագտնելու իր բոլոր հնարավորությունները: 1945 թվականի սկզբին եվրոպական պատերազմի ավարտն արդեն երևում էր: Մեծ եռյակը կրկին հանդիպեց, այս անգամ Խորհրդային Միության տարածքում՝ Յալթայում, որտեղ նրանք վերահաստատեցին Հիտլերի անվերապահ կապիտուլյացիայի վերաբերյալ իրենց պահանջը և սկսեցին նախագծել հետպատերազմյան աշխարհակարգը:

1945 թվականի հունվարին Խորհրդային Միության զորքերը հասան Գերմանիա, իսկ մարտին ամերիկացիներն անցան Հռենոս գետը: Ապրիլի վերջին ամերիկյան և խորհրդային զորքերը հանդիպեցին Էլբայում: Ստալինը խորհրդային զորքերի առաջ խնդիր էր դրել առաջինը հասնել մայրաքաղաք Բեռլին: Մայիսի 2-ին Բեռլինը գրավվեց խորհրդային զորքերի կողմից, որից օրեր առաջ Հիտլերն ինքնասպան էր եղել իր բունկերում: Մայիսի 8-ին Գերմանիան հանձնվեց: Եվրոպական պատերազմն ավարտվեց: Դաշնակիցների առաջնորդները կրկին հանդիպեցին, այս անգամ Գերմանիայում՝ Պոտսդամում, որտեղ որոշվեց, որ Գերմանիան բաժանվելու է օկուպացիոն գոտիների՝ համաձայն դաշնակիցների կողմից այդ պահին զբաղեցված հատվածների, և Բեռլինը նույնպես կբաժանվի: Ստալինը համաձայնեց միանալ Ճապոնիայի դեմ պատերազմին:



1945 թ. փետրվարին Մեծ եռյակի (Ու. Չերչիլ, Ֆ. Դ. Ռուզվելտ և Ի. Ստալին) հանդիպումը Յալթայում, ԽՍՀՄ

Միացյալ Նահանգները և Ճապոնական պատերազմը

Եվրոպայում հաղթանակից (V-E Day (Victory in Europe)) հետո անմիջապես Միացյալ Նահանգներն իր ամբողջ ուշադրությունը սևեռեց շարունակվող Խաղաղօվկիանոսյան պատերազմի վրա: Ինչպես Եվրոպայում, այնպես էլ Խաղաղ օվկիանոսում պատերազմական գործողությունները դանդաղ սկսվեցին: Փերլ Հարբորից հետո Ամերիկայի կողմից վերահսկվող Ֆիլիպինյան կղզիները նվաճեց Ճապոնիան: Զինամթերքի և պաշարների սպառվելուց հետո ամերիկացի և ֆիլիպինցի զինվորների կայազորը հանձնվեց ճապոնացիներին, որոնք գերիներին 80 մղոնանոց երթով հասցրին իրենց ռազմագերիների ճամբարը՝ առանց սննդի, ջրի և հանգստի: Բաթանի մահվան երթի ընթացքում զոհվեց 10,000 մարդ:

Շուտով ամերիկացիները մոբիլիզացրին իրենց զինված ուժերը, և ուժերի հարաբերակցությունը փոխվեց: 1942 թ. ամռանը Կորալ ծովի ճակատամարտում (Battle of the Coral Sea) ամերիկյան ռազմածովային ուժերի հաղթանակները և Միդվեյի ճակատամարտում (Battle of Midway) ավիակիրների մարտը խաթարեցին Ճապոնիայի Խաղաղօվկիանոսյան ռազմածովային գործողությունները: Խաղաղ օվկիանոսի վրա Ճապոնիայի տիրապետությունը տապալելու համար ԱՄՆ զինված ուժերը սկսեցին ավիանումները կղզիների վրա՝ գրոհելով կղզի առ կղզի և շրջանցելով ամենաուժեղ հենակետերը, բայց գրավելով նրանք, որոնք ունակ էին գործելու որպես օդանավակայաններ, որպեսզի ապահովեին օդային գերակայություն և շարունակեին Ճապոնիային դուրս մղել տարածաշրջանից: Դաժան մարտեր էին ընթանում: Գվադալկանալում ամերիկացի զինվորները ականատես եղան, թե ինչպես էին ճապոնացի զինվորները ինքնասպան հարձակողական գործողությունների դիմում, այլ ոչ թե հանձնվում: Շատ ճապոնացի զինվորներ հրաժարվում էին գերի հանձնվել կամ գերի վերցնել: Նման մարտավարությունը, զուգորդված ամերիկյան ռասայական նախապաշարմունքների հետ, Խաղաղօվկիանոսյան թատերաբեմը վերածեցին դաժան և բարբարոսական հակամարտության:

1945 թվականի փետրվարին ամերիկյան ռմբակոծիչները սկսեցին հարվածել Ճապոնիայի արդյունաբերական կենտրոններին, բայց նաև մեծ կորուստներ կրեցին: Ռմբակոծիչների անձնակազմին ցերեկային վտանգավոր արշավանքներից փրկելու և Ճապոնիայի փայտե քաղաքների դեմ առավելագույն ազդեցություն ունենալու համար՝ ամերիկյան ռմբակոծիչները սկսեցին հրկիզող ռումբեր նետել, որոնք ահռելի հրդեհներ և ավերածություններ էին առաջացնում ճապոնական քաղաքներում:

Ավելի քան 60 ճապոնական քաղաքներ հրկիզվեցին ռմբակոծությունների միջոցով: 1945 թ. մարտին ամերիկյան կրակային ռումբերը միայն Տոկիոյում սպանեցին 100,000 խաղաղ բնակիչների: 1945 թ. հունիսին, 80-օրյա ծանր մարտերից և տասնյակ հազարավոր զոհերից հետո, ամերիկացիները գրավեցին Օկինավա կղզին: Այլևս նրանց առջև բաց էր բուն Ճապոնիան: Օկինավան կենսունակ հենակետ էր, որտեղից կարելի էր լիարժեք ներխուժում սկսել Ճապոնիա և վերջ տալ պատերազմին:

Ճապոնիա ներխուժման գործողության վերաբերյալ ռազմավարական և մարտավարական հաշվարկները տարբեր էին, սակայն, հաշվի առնելով ճապոնացի զինվորների համառությունը, որոնք կռվում էին իրենց տնից հեռու կղզիներում, որոշ պաշտոնյաներ գնահատեցին, որ բուն Ճապոնիա ներխուժումը կարող էր արժենալ կես միլիոն ամերիկացի զինվորների կյանքեր և, հավանաբար, միլիոնավոր ճապոնացի խաղաղ բնակիչների կյանքեր: Պատմաբանները դեռ վիճում են բազմաթիվ դրդապատճառների շուրջ, որոնք, ի վերջո, մղեցին ԱՄՆ-ին ատոմային զենք օգտագործելու Ճապոնիայի դեմ: Բազմաթիվ ամերիկացի պաշտոնյաներ քննադատեցին որոշումը: Բայց հնարավոր զոհերի թվերի մասին վերլուծությունները հետագայում սկսեցին վկայակոչվել կառավարության և ռազմական պաշտոնյաների կողմից՝ հիմնավորելու և արդարացնելու ատոմային ռումբերի օգտագործումը:

Պատերազմի սկզբին, վախենալով, որ գերմանացիները կարող էին ատոմային ռումբ ստեղծել, ԱՄՆ կառավարությունը գործարկել էր Մանհեթենի նախագիծը (Manhattan Project), որը չափազանց թանկ և հավակնոտ ծրագիր էր՝ օգտագործելու ատոմային էներգիան և ստեղծելու այնպիսի զենք, որը կարող էր հողին հավասարեցնել ամբողջական քաղաքներ: 1945 թ. հուլիսին Նյու Մեքսիկոյում ամերիկացիները հաջողությամբ փորձարկեցին աշխարհում առաջին միջուկային ռումբը՝ *Թրինիթին* (Trinity՝ Երրորդություն): Ատոմային ռումբը նախագծվել էր Լոս Ալամոսի լաբորատորիայում՝ ֆիզիկոս Ջ. Ռոբերտ Օպենհայմերի ղեկավարությամբ: Եվս երկու ռումբեր կառուցվեցին՝ *Չաղ մարդը* (Fat Man) և *Փոքրիկ տղան* (Little Boy), և օգոստոսին պայթեցվեցին ճապոնական երկու քաղաքների վրա: 1945 թ. օգոստոսի 6-ին ատոմային ռումբ նետվեց Հիրոսիմայի վրա, որի արդյունքում ակնթարթորեն զոհվեցին ավելի քան 100 հազար խաղաղ բնակիչներ: Օգոստոսի 9-ին հետևեց Նագասակիի վրա միջուկային հարվածը, որի արդյունքում զոհվեցին ավելի քան 80 հազար խաղաղ բնակիչներ:

1945 թ. օգոստոսի 15-ին կայսր Հիրոհիտոն հայտարարեց Ճապո-

նիայի հանձնվելու մասին: Սեպտեմբերի 2-ին Միսսուրի (USS Missouri) ռազմանավի վրա Ճապոնիայի կառավարության պատվիրակները պաշտոնապես ստորագրեցին երկրի անվերապահ կապիտուլյացիայի ակտը: Երկրորդ համաշխարհային պատերազմը վերջապես ավարտվեց:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում Միացյալ Նահանգների զինված ուժերը մոբիլիզացրին գրեթե 18 միլիոն մարդու: Փերլ Հարբորի հարձակումից հետո միլիոնավոր կամավորներ շտապեցին միանալ ԱՄՆ բանակին: Ավելի քան 10 միլիոնը զորակոչվեց զինվորական ծառայության: Գնացքներով, նավերով և բեռնատարներով ռազմաճակատ փոխադրվելուց հետո զինվորներն ու ծովային հետևակայինները ամբողջական մարտական հանդերձանքով երթով շարժվում էին իրենց մարտական դիրքերը և զբաղեցնում բնագծերը: Նավաստիները ամիսներ շարունակ ծառայում էին ծովում՝ իրենց նավերի վրա: Ավելի մեծ նավերը, հատկապես ավիակիրները, իսկական լողացող քաղաքներ էին: Պատերազմում զոհվեցին ավելի քան 60,000 ամերիկացի նավաստիներ: Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ ռազմաօդային ուժերը դեռևս ԱՄՆ բանակի մասնաճյուղն էին և ոչ թե ԱՄՆ զինված ուժերի առանձին ճյուղ, և զինվորները ծառայում էին ցամաքային և օդային անձնակազմերում: Աշխարհամարտի ընթացքում իրականացվեց քաղաքների և արդյունաբերական կենտրոնների զանգվածային ռմբակոծությունների հաստատութենական համակարգում: Խոշոր ռմբակոծիչները (օրինակ՝ B-17 Flying Fortress) պահանջում էին օդաչուներ, նավիգատորներ, ռմբակոծիչներ, ռադիոսպերատորներ և գնդացրորդներ: Օդային գերակայության հասնելու համար անհրաժեշտ էր նաև արհեստավարժ ուղեկցող կործանիչների, ինչպես նաև հակաօդային պաշտպանության ուժերի համակարգված գործողություն: Տասնյակհազարավոր օդաչուներ զոհվեցին պատերազմում: Աշխարհամարտի ընթացքում մարտադաշտերում զոհվեցին ավելի քան 400,000 ամերիկացիներ:

Պատերազմական ժամանակի տնտեսությունը

Պատերազմում հաղթանակի կարևորագույն գրավականներից էր ԱՄՆ տնտեսությունը, քանզի պատերազմները հաղթում են ոչ միայն բանակները, այլև տնտեսությունները: Ամերիկյան գործարանները վերածվեցին պատերազմական ժամանակի արտադրության միավորների, որոնք խթանեցին ամերիկյան տնտեսական հզորությունը և զինեցին ոչ միայն ամերիկյան, այլև դաշնակից պետությունների բանակները: Երկրորդ աշ-

խարհամարտը փաստորեն Ամերիկյան դուրս բերեց տնտեսական Մեծ ճգնաժամի հորձանուտից և սկիզբ դրեց անզուգական տնտեսական բարգավաճման ժամանակաշրջանին:

Ռուզվելտի «Նոր համաձայնությունը» բարելավել կամ մեղմել էր Մեծ ճգնաժամի տարիների հասարակական-տնտեսական իրավիճակը, բայց 1930-ականներին տնտեսությունը դեռևս կաղում էր: Երբ Եվրոպան ընկղմվեց պատերազմի մեջ, չնայած մեկուսականության քաղաքականությանը, ամերիկացիներն ուրախ էին դաշնակիցներին զենք և անհրաժեշտ պաշարներ վաճառել: Փերլ Հարբորի վրա հարձակումը փոխեց ամեն ինչ: Միացյալ Նահանգների տնտեսությունը վերածվեց պատերազմի ծառայության: Այս հսկա երկիրը մոբիլիզացրեց իր հավասարը չունեցող տնտեսական կարողությունները՝ համաշխարհային լայնածավալ պատերազմ մղելու համար: Պետական կառույցները, ինչպիսիք էին Պատերազմական արտադրության խորհուրդը (War Production Board) և Պատերազմի մոբիլիզացիայի և վերափոխման գրասենյակը (Office of War Mobilization and Reconversion), կառավարում էին տնտեսական արտադրությունը պատերազմական ջանքերի և կարիքների համար: Արդյունքում տնտեսության արտադրողականությունը հսկայական աճ ապրեց: Տնտեսությունը, որը նախորդ տասնամյակում ի վիճակի չէր աշխատուժի մեկ քառորդին աշխատանքով ապահովել, հիմա պայքարում էր թափուր աշխատատեղերը լրացնելու համար:

Պատերազմի չորս տարիներին ԱՄՆ կառավարության ծախսերը կրկնապատկեցին ամբողջ դաշնային ծախսերը, ինչն աննախադեպ էր ամերիկյան ողջ պատմության մեջ: Բյուջեի դեֆիցիտն աճեց, բայց, ինչպես խորհուրդ էին տալիս Մեծ ճգնաժամի ժամանակաշրջանի տնտեսագետները, կառավարության զանգվածային միջամտությունը վերացրեց գործազրկությունը և խթանեց աճը: Պատերազմն ԱՄՆ տնտեսական ճգնաժամը փոխակերպեց աննախադեպ տնտեսական բարգավաճման: Ռազմական արտադրությունը աճեց քաղաքացիական սպառողական տնտեսության հաշվին: Կառավարության հսկայական ծախսերն ու պետպատվերներն աշխուժացրին տնտեսությունը: Կենցաղային տեխնիկա և ավտոմեքենաներ արտադրողներն իրենց գործարանները փոխակերպեցին պատերազմական ժամանակի արդյունաբերության միավորների՝ զենք և ռազմական տրանսպորտային միջոցներ արտադրելու համար: Սպառողների ընտրությունը սահմանափակվեց: Յուրաքանչյուր ամերիկացի ստանում էր ապրանքների չափորոշիչ քարտեր, և առանց դրանց հնարավոր չէր օրինական ճանապարհով գնել այնպիսի ապրանքներ,

ինչպիսիք էին բենզինը, սուրճը, միսը, պանիրը, կարագը, վերամշակված սնունդը, վառելիքայտը և շաքարավազը: Բնակարանաշինության ծրագրերը խիստ կրճատվեցին, ինչը քաղաքները դարձրեց գերբնակեցված:

Աշխարհամարտի ընթացքում տնտեսությունը վերելք ապրեց: Ռուզվելտի վարչակազմը քաղաքացիներին հորդորում էր խնայել իրենց վաստակը կամ գնել պատերազմի պարտատոմսեր՝ գնաճը կանխելու համար: Պարտատոմսերի վաճառքներ էին անցկացվում ողջ երկրով մեկ, և այդ միջոցառումները գլխավորվում էին հովիվության հայտնիների կողմից: Նման միջոցառումները մեծ հաջողություն ունեցան: Նրանք ոչ միայն ֆինանսավորեցին պատերազմական ծախսերի զգալի մասը, այլև օգնեցին մեղմելու գնաճը: Սրան նպաստեցին նաև հարկերի նոր դրույքաչափերը: Դաշնային կառավարությունը բարձրացրեց եկամտահարկերը և սահմանային հարկային դրույքաչափը մինչև 94 տոկոս:

Տնտեսության բարգավաճման և զանգվածային զինվորական ծառայության պայմաններում գործազրկությունը ԱՄՆ-ում գործնականում վերացավ: Ավելի ու ավելի շատ աֆրոամերիկացիներ շարունակեցին հեռանալ ագրարային հարավից դեպի արդյունաբերական հյուսիս: Եվ քանզի շատ տղամարդիկ անցնում էին զինվորական ծառայության, և ավելի շատ թափուր պաշտոններ ու աշխատատեղեր էին առաջանում, կանայք զանգվածաբար միացան աշխատուժին: Ամերիկացի շատ արտադրողներ էլ աշխատուժի իրենց պահանջարկը համալրելու համար սկսեցին աշխատանքի հրավիրել օտարերկրացիների: 1942-1964 թվականների ընթացքում Միացյալ Նահանգները պայմանագրային հիմունքներով ընդունեց հազարավոր մեքսիկացիների, որոնք Բրասերո ծրագրի (Bracero Program) շրջանակներում պետք է աշխատեին ամերիկյան գյուղատնտեսության և երկաթուղու ոլորտներում: Պետքարտուղարության, ինչպես նաև Աշխատանքի և Արդարադատության քարտուղարությունների կողմից համատեղ կառավարվող ամերիկա-մեքսիկական երկպետական համաձայնագիրը (binationnal agreement) հինգ միլիոն աշխատանքային պայմանագրեր ապահովեց քսանչորս նահանգներում:

Պատերազմական ժամանակի հասարակությունը

Նախագահ Ֆրանկլին Դ. Ռուզվելտը և նրա վարչակազմը խրախուսում էին բոլոր աշխատունակ կանանց աջակցելու պատերազմական ջանքերին: Ռուզվելտը պատերազմում ամերիկյան հաղթանակի համար

կարևորում էր կանանց դերը, և հասարակությունը ակնկալում էր, որ կանայք ստանձնենին տարբեր գործառույթներ՝ տղամարդկանց զինվորական ծառայության պայմաններում: Երկրորդ համաշխարհային պատերազմը աշխատանքային լայն հնարավորություններ ընձեռեց ամերիկացի կանանց: Արդյունաբերական աշխատուժը, որտեղ ավանդաբար գերակշռում էին տղամարդիկ, պատերազմի ընթացքում սկսեց լրացվել կանանցով: Կանայք աշխատում էին նաև զինամթերքի գործարաններում: Ռոզի դը Ռիվերի՝ գլխաշորով և բանվորական համազգեստով խորհրդանշական պատկերազարդ պաստառը՝ մակագրված «Մենք կարող ենք անել դա» (We Can Do It!) արտահայտությամբ, դարձավ պատերազմի ժամանակի կին աշխատավորների հավաքական կերպարը: Կանայք նաև աշխատում էին պետական կառավարման համակարգի տարբեր պաշտոններում: Ավելի քան մեկ միլիոն վարչական աշխատատեղեր տեղական, նահանգային և դաշնային մակարդակներում պատերազմի ընթացքում տղամարդկանցից փոխանցվեցին կանանց: Կանայք զբաղված էին նաև կամավորական բազմաթիվ աշխատանքներում և բարեգործական կազմակերպություններում: Ամերիկյան Կարմիր խաչը՝ երկրի ամենամեծ բարեգործական կազմակերպությունը, խրախուսում էր կանանց կամավոր աշխատանքը իրենց տեղական քաղաքային մասնաճյուղերում: Ամերիկյան Կարմիր խաչը նաև բոլոր կին կամավորներից պահանջում էր հավաստագրվել որպես բուժքույրերի օգնականներ՝ ապահովելով լրացուցիչ օգնություն կամ համալրում հիվանդանոցների անձնակազմերին:

Շատ կանայք էլ անցնում էին զինվորական ծառայության տարբեր օժանդակ ստորաբաժանումներում: Պատերազմի ընթացքում ավելի քան 350,000 կին էր ծառայում զինված ուժերի որոշ ճյուղերի միայն կանանց համար նախատեսված ստորաբաժանումներում, այդ թվում՝ Բանակի և նավատորմի բուժքույրական կորպուսի պահեստազորում (Army and Navy Nurse Corps Reserves), նավատորմի շտապ օգնության կամավոր ծառայությունում և ծովային հետևակի համապատասխան ստորաբաժանումներում և այլն: Միայն բուժքույրական կորպուսի պահեստազորն ուներ բանակի և նավատորմի 105,000 բուժքույր, որոնք հավաքագրվել էին Ամերիկյան Կարմիր խաչի կողմից: Ռազմական բուժքույրերն աշխատում էին զինվորական հիվանդանոցներում, շարժական բժշկական ստորաբաժանումներում և հիվանդանոցային «գթասրտության» նավերում:

Ջիմ Քրոուի ռասայական տարանջատման համակարգը ինչպես քաղաքացիական, այնպես էլ ռազմական հատվածում շարունակում էր խնդրահարույց լինել սևամորթ կանանց համար, որոնք ցանկանում էին

աջակցել պատերազմական ջանքերին: Տարանջատումը պահպանվում էր գործարանների ճաշասենյակներում: Շատ դեպքերում սևամորթ կանանց ստիպում էին աշխատել գիշերները՝ նրանց սպիտակամորթներից առանձնացնելու համար: Զինված ուժերում միայն Կանանց բանակի օժանդակ կորպուսը և բուժքույրական կորպուսի պահեստագործը ընդունեցին սևամորթ կանանց ակտիվ ծառայության համար, իսկ բանակը սահմանեց սահմանափակ քվոտա՝ ընդհանուր վերջնական թվի 10 տոկոսի չափով: Մինչդեռ Ամերիկյան Կարմիր խաչը հավաքագրեց ընդամենը չորս հարյուր սևամորթ բուժքույրերի բանակի և նավատորմի բուժքույրական կորպուսի պահեստագործի համար: Բանակի և նավատորմի սևամորթ բուժքույրերն աշխատում էին ռասայական հիմքով տարանջատված ռազմական հիվանդանոցներում:

1941 թվականի սկզբին, Փերլ Հարբորի վրա ճապոնական հարձակումից ամիսներ առաջ, Ա. Ֆիլիպ Ռանդոլֆը՝ Մարդատար գնացքների բեռնակիրների եղբայրության (Brotherhood of Sleeping Car Porters)՝ երկրի ամենամեծ սևական արհմիության նախագահը, սպառնալով նախագահ Ռուզվելտին՝ երթով շարժվեց Վաշինգտոն: Նա քննադատում էր, որ պաշտպանական ոլորտի շատ կապալառուներ դեռևս հրաժարվում են վարձել սևամորթ աշխատողների, իսկ զինված ուժերը շարունակում են մնալ ռասայական հիմքով տարանջատված: Ռանդոլֆը սա անվանում էր «ժողովրդավարության ճգնաժամ»: Ռանդոլֆի երթը դադարեցնելու դիմաց նախագահ Ռուզվելտն արձակեց «8802 գործադիր հրամանը» (Executive Order 8802)՝ Պաշտպանական արդյունաբերության ոլորտում արդար զբաղվածության կիրառական ակտը (Fair Employment Practice in Defense Industries Act), որն արգելում էր ռասայական և կրոնական խտրականությունը պաշտպանական արդյունաբերություններում: Ստեղծվեց Արդար զբաղվածության կիրառության կոմիտեն (Fair Employment Practices Committee (FEPC))՝ պաշտպանական արդյունաբերության աշխատանքի ընդունման գործընթացը վերահսկելու համար: Թեև զինված ուժերը ողջ պատերազմի ընթացքում մնացին տարանջատված, և կոմիտեն ուներ սահմանափակ ազդեցություն, հրամանը ցույց տվեց, որ դաշնային կառավարությունը կարող է դիմակայել ռասայական խտրականությանը: Պաշտպանական արդյունաբերության մեջ սևամորթ աշխատուժի տեսակարար կշիռը 1942 թվականի 3 տոկոսից 1945 թվականին հասավ 9 տոկոսի:

Ավելի քան 1 միլիոն աֆրոամերիկացիներ մասնակցեցին պատերազմին: Սևամորթ զինծառայողների մեծ մասը ծառայում էր առանձնացված,

ոչ մարտական ստորաբաժանումներում, որոնք գլխավորում էին սպիտակամորթ սպաները: Այնուամենայնիվ, ձեռքբերումներ ևս գրանցվեցին: 1940 թվականին աֆրոամերիկացի սպաների թիվը հինգ էր, որը մինչև 1945 թվականը ավելացավ՝ հասնելով ավելի քան 7000-ի: Գործում էին ամբողջովին սևամորթ օդաչուների ջոկատներ (Tuskegee Airmen), որոնք կատարեցին ավելի քան 1500 մարտական առաջադրանքներ՝ ուղեկցելով ծանր ուժակոծիչներին Գերմանիա և վաստակելով մի քանի հարյուր մարտական պարգևներ: Ի վերջո, 1948 թվականին ԱՄՆ կառավարությունը վերջապես որոշեց իրականացնել զինված ուժերի ամբողջական միասնացում:

Սակայն շատ աֆրոամերիկացիներ պատերազմը տեսնում էին որպես հնարավորություն ոչ միայն իրենց երկրին ծառայելու, այլև այն բարելավելու համար: *Փիթսբուրգի սուրհանդակը* (*The Pittsburgh Courier*)՝ առաջատար աֆրոամերիկյան թերթը, գլխավորում էր «Կրկնակի հաղթանակ» (Double V) արշավը: Այն կոչ էր անում աֆրոամերիկացիներին երկու պատերազմ մղել՝ պատերազմ նացիզմի ու ֆաշիզմի դեմ արտասահմանում և պատերազմ ներքին ռասայական անհավասարության դեմ: Հաղթանակի և «իսկական ժողովրդավարության» հասնելու համար թերթն իր ընթերցողներին խրախուսում է զինվորագրվել զինված ուժերին, կամավորագրվել ներքին ճակատում և պայքարել ռասայական տարանջատման ու խտրականության դեմ:

1942 թվականին ձևավորվեց Ռասայական հավասարության կոնգրեսը (Congress of Racial Equality (CORE)), որն առաջնորդվում էր ոչ բռնի ուղղակի գործողությունների մեթոդով՝ *դեսեգրեգացիայի* հասնելու համար: 1940-1950 թթ. մոտ 1,5 միլիոն հարավային սևամորթներ անուղղակիորեն ցույց տվեցին իրենց ընդդիմությունը ռասիզմին և բռնությանը՝ գաղթելով Ջիմ Բրոու սեգրեգացիոն օրենքների տիրույթ Հարավից դեպի Հյուսիս: 1943 թվականին ռասայական լարվածություն և անկարգություններ բռնկվեցին մի շարք քաղաքներում՝ Մոբիլ, Բյումոնստ և Հարլեմ: Ամենաարյունալի ռասայական խռովությունը տեղի ունեցավ Դետրոյթում և հանգեցրեց քսանհինգ սևամորթ և ինը սպիտակամորթ ամերիկացիների մահվան: Այդուհանդերձ, պատերազմը աֆրոամերիկացիների շրջանում առաջացրեց հավասարության ձգտման հրատապություն, որը նրանց կուղեկցի հետագա տարիներին:

Ամերիկայի մուտքը պատերազմ անորոշ վիճակի մեջ դրեց ԱՄՆ-ում բնակվող հակառակորդ երկրների օտարերկրյա քաղաքացիներին: Հետաքննությունների դաշնային բյուրոն (<ԴԲ (Federal Bureau of Investigation

(FBI) «Օտարական թշնամիների օրենքի» (Alien Enemy Act) կիրառմամբ թիրախավորում էր շատերին անհավատարմության կասկածանքով՝ կալանավորելով և կալանքի տակ պահելով օտարերկրյա քաղաքացիներին: Շատերը ուղարկվում էին կառավարական ճամբարներ, որոնք շրջափակված էին փշալարերով և զինված պահակներով: Ճապոնական ծագումով երեսուն հազար ամերիկացիներ կովեցին Միացյալ Նահանգների կողմից Երկրորդ համաշխարհային պատերազմում, բայց պատերազմի ժամանակ հակաճապոնական տրամադրությունների ազդեցությամբ, որոնք հիմնված էին պատմական նախապաշարմունքների վրա, ճապոնական ծագումով բազմաթիվ մարդիկ՝ ինչպես ներգաղթյալներ, այնպես էլ ամերիկյան քաղաքացիներ, կալանավորվեցին և հանձնվեցին Պատերազմական տեղափոխության վարչություն (War Relocation Authority) կոչվող քաղաքացիական գործակալության խնամակալությանը, որը վերահսկում էր նրանց տեղափոխումը ներգաղթյալների ճամբարներ: Նրանք կորցրին իրենց տունն ու աշխատանքը:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում Միացյալ Նահանգների ճամբարներում փակվեցին նաև Գերմանիայի ավելի քան 10,000 քաղաքացիներ և Իտալիայի ավելի փոքր թվով քաղաքացիներ: Այնուամենայնիվ, ամերիկյան քաղաքականությունը անհամաչափորեն ուղղված էր հենց ճապոնական ծագմամբ մարդկանց դեմ: Զանգվածային մեկուսացման և կալանավորման այս քաղաքականությունից տուժեցին ավելի քան 110,000 ճապոնացիներ և ճապոնական ծագում ունեցող անհատներ, որոնցից 70,000-ը ԱՄՆ քաղաքացիներ էին: 1988 թվականին նախագահ Ռեյգանը ստորագրեց օրենք, որով պաշտոնապես ներողություն էր խնդրում այդ ներկալման քաղաքականության համար՝ փոխհատուցում տրամադրելով ողջ մնացածներին:

Երբ դաշնակիցները ներխուժեցին Գերմանիա և Լեհաստան, նրանք բացահայտեցին Հիտլերի ցեղասպան վայրագությունների ողջ ծավալը: Դաշնակիցներն ազատագրեցին հսկայական համակենտրոնացման ճամբարների համակարգեր, որոնք ստեղծվել էին բանտարկության, հարկադիր աշխատանքի և ոչնչացման նպատակով, բոլոր նրանց համար, ովքեր ռասայական, գաղափարական նկատառումներով կամ կենսաբանորեն «ոչ պիտանի» էին համարվում նացիստական Գերմանիայի կողմից: Սակայն Հոլոքոստը՝ 11 միլիոն խաղաղ բնակիչների, այդ թվում՝ 6 միլիոն հրեաների համակարգված սպանությունը, ընթանում էր երկար տարիներ: Սկզբում ամերիկացի պաշտոնյաները հազվադեպ էին պաշտոնական մտահոգություններ հայտնում նացիստների հետապնդումների

վերաբերյալ: Հետագայում Ռուզվելտը հրապարակայնորեն դեմ արտահայտվեց հալածանքներին և նույնիսկ ետ կանչեց Գերմանիայում ԱՄՆ դեսպանին: 1938 թվականին նա աջակցեց Ֆրանսիայում կայանալիք Էվիանի համաժողովին, որի ընթացքում միջազգային առաջնորդները քննարկեցին հրեա փախստականների խնդիրը և ընդլայնեցին հրեական ներգաղթի քվոտաները: Սակայն, ի վերջո, Միացյալ Նահանգները մերժեց ապաստան խնդրած բազմաթիվ հրեա փախստականների ընդունումը:

Հակասեմականությունը դեռևս ուժեղ էր Միացյալ Նահանգներում: 1938 և 1939 թվականներին ԱՄՆ Կոնգրեսը քննարկեց Վագներ-Ռոջերսի օրինագիծը (Wagner-Rogers Bill), որը թույլատրում էր քսան հազար հրեա երեխաների մուտքը Միացյալ Նահանգներ: Առաջին տիկին Էլեոնոր Ռուզվելտը հավանություն տվեց այդ միջոցին, սակայն նախագահը հրապարակայնորեն լռեց: Ամերիկյան հանրության ճնշման տակ օրինագիծը տապալվեց: Պատերազմի վերջում ԱՄՆ գանձապետարանի քարտուղար Հենրի Մորգենթաուն, որն ինքը ծնվել էր Նյու Յորքի հրեական հարուստ ընտանիքում, առաջ մղեց ամերիկյան քաղաքականության հիմնական փոփոխությունները: 1944 թվականին նա ստեղծեց Պատերազմի փախստականների խորհուրդը (War Refugees Board (WRB)) և դարձավ հրեա փախստականների ակնառու պաշտպանը: Կազմակերպությունը փրկեց մոտ 200,000 հրեաների և 20,000 այլոց: Նույն թվականին Մորգենթաուն նաև համոզեց Ռուզվելտին ընդունել հրապարակային հայտարարություն՝ դատապարտելով նացիստների հետապնդումները:

Հետպատերազմյան աշխարհակարգի ճանապարհին

Միացյալ Նահանգները ձգտում էր ձևավորել հետպատերազմյան այնպիսի աշխարհակարգ, որը կերաշխավորեր համաշխարհային խաղաղությունը և երկրի ներքին բարգավաճումը: Թեև Խորհրդային Միության հետ դաշինքը փլուզվելու էր, Միացյալ Նահանգները այնուամենայնիվ միջոցներ էր փնտրում հետպատերազմյան կայունության և տնտեսական անվտանգության ապահովման համար: 1941 թվականին Ռուզվելտը կարծում էր, որ հետպատերազմյան միջազգային անվտանգությունը Ազգերի լիգայի փոխարեն կարող էր պահպանվել Միացյալ Նահանգների, Մեծ Բրիտանիայի, Խորհրդային Միության և Չինաստանի՝ «Չորս ոստիկանների» (Four Policemen) ոչ պաշտոնական համաձայնությամբ: Սակայն մյուսները, այդ թվում՝ ԱՄՆ պետքարտուղար Կորդել Հալլ և Մեծ Բրի-

տանհայի վարչապետ Ուինսթոն Չերչիլը, չհամաձայնվեցին և համոզեցին Ռուզվելտին առաջ մղել համաշխարհային նոր կազմակերպության ստեղծման գաղափարը: Պատերազմի ընթացքում Ռուզվելտն էլ ավելի հանգեց այդ գաղափարին, ամերիկյան հանրությունը՝ նույնպես: Ամերիկայի մուտքը պատերազմ ուժեղացրեց հանրային աջակցությունը, և 1945 թվականին, երբ պատերազմն ավարտվեց, ամերիկացիների 81 տոկոսը կողմ էր այդ գաղափարին:

Այնուամենայնիվ, Ռուզվելտը բոլոր այն գաղափարների ջատագովն էր, որոնք հետագայում ամրագրվեցին Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) կանոնադրության մեջ: 1941 թ. հունվարին նա հռչակեց «Չորս ազատությունները» (Four Freedoms)՝ խոսքի, պաշտամունքի, կարիքից և վախից ազատությունը, որից պետք է օգտվեին աշխարհի բոլոր քաղաքացիները: Նույն թվականին նա Չերչիլի հետ ստորագրեց Ատլանտյան խարտիան (Atlantic Charter), որն ամրապնդեց այդ գաղափարները, ավելացրեց ազգերի ինքնորոշման իրավունքը և խոստացավ հետպատերազմյան տնտեսական և քաղաքական համագործակցության համակարգ: Ռուզվելտն առաջին անգամ օգտագործեց «միավորված ազգեր» (United Nations) եզրույթը դաշնակից տերություններին նկարագրելու համար: Հետագայում այն դարձավ հետպատերազմյան նոր համաշխարհային միջազգային կազմակերպության անվանումը:

1943 թվականին Թեհրանում Ռուզվելտը և Չերչիլը համոզեցին Ստալինին խորհրդային պատվիրակություն ուղարկել միջազգային նոր կազմակերպության հարցը քննարկող համաժողովին: 1944 թ. օգոստոսին դաշնակիցները պայմանավորվեցին նոր կազմակերպության հիմնական կառույցի շուրջ: Այն պետք է ունենար *Անվտանգության խորհուրդ* (Security Council)՝ բաղկացած սկզբնական «Չորս ոստիկաններից» և Ֆրանսիայից: Փոխըմբռնում դրսևորվեց, որ «միայն Մեծ տերությունները համագործակցելով կարող էին իրական անվտանգություն ապահովել»: Նախագիծը հիբրիդային բնույթ ուներ՝ միավորելով Ռուզվելտի՝ ոստիկանական տերությունների մասին և ազգերի հավասար ներկայացվածությամբ համաշխարհային կազմակերպության գաղափարները: Ըստ այդմ՝ լինելու էր նաև *Գլխավոր ասամբլեա* (General Assembly)՝ կազմված անդամ բոլոր ազգերից, *Արդարադատության միջազգային դատարան* (International Court of Justice) և տնտեսական ու սոցիալական հարցերի խորհուրդ: 1945 թվականի հունիսի 26-ին 50 պետություններ ստորագրեցին ՄԱԿ-ի կանոնադրությունը:

Երկրորդ համաշխարհային պատերազմում հաղթանակ ակնկալելով՝

ԱՄՆ առաջնորդները պատրաստվում էին ոչ միայն հետպատերազմյան աշխարհակարգին, այլև վերադարձող ամերիկացի զինծառայողների ճակատագրին: Ամերիկացի քաղաքական գործիչները և շահագրգիռ խմբերը ձգտում էին խուսափել տնտեսական հերթական ճգնաժամից, ինչպես տեղի էր ունեցել Առաջին համաշխարհային պատերազմից հետո: Անհրաժեշտ էր աստիճանաբար տեղավորել վերադարձող վետերաններին քաղաքացիական տնտեսության և հասարակական համակարգի մեջ:

1944 թվականին ընդունվեց *Ջի. Այ. Բիլլ* (G.I. Bill)՝ Ջինծառայողների վերահարմարեցման օրենքը (Servicemen's Readjustment Act), որը բազմակողմանի և բազմամիլիարդ դոլարների արժողությամբ ծրագիր էր՝ նախատեսված պարգևատրելու պատվով զորացրված վետերաններին և շնորհելու բազմաթիվ առավելություններ: *Ջի. Այ. Բիլլ*, հաշվի առնելով զինված ուժերի ավելի քան 15 միլիոն ծառայողների քաղաքացիական կյանք վերադառնալու հեռանկարը, առաջարկում էր մի շարք միջոցներ՝ դանդաղեցնելու նրանց ներհոսքը քաղաքացիական աշխատաշուկա և պարգևատրելու նրանց ծառայությունը հանրային նպաստներով: Ուստի օրենսդրությունը մեկ տարվա չափով գործազրկության նպաստ էր առաջարկում այն վետերաններին, ովքեր չէին կարողանա աշխատանք գտնել: Ամերիկացի վետերանների մոտ կեսը՝ ութ միլիոնը, օրինագծի գործողության ողջ ընթացքում ստացավ 4 միլիարդ դոլարի գործազրկության նպաստ:

Ջի. Այ. Բիլլ նաև շատերին ապահովեց հետմիջնակարգ կրթությամբ: Վետերանների վարչությունը (Veterans Administration (VA)) վճարում էր կրթական ծախսերի առյուծի բաժինը՝ ներառյալ ուսման վարձերը, ուսումնական պարագաները և ապրուստի թոշակները: Օրենսդրությունը բարձրագույն կրթության ձգտման կտրուկ աճ առաջացրեց: Հավատարմագրված քոլեջներում, համալսարաններում և տեխնիկական ու մասնագիտական ուսումնարաններում գրանցումները աճեցին՝ 1940 թվականի 1,5 միլիոնից հասնելով 3,6 միլիոնի 1960 թվականին: Վետերանների վարչությունը կրթական օգնության համար ավելի քան 14 միլիարդ դոլար հատկացրեց ընդամենը մեկ տասնամյակի ընթացքում:

Ավելին, օրենսդրությունը խթանեց նաև բնակարանների սեփականությունը: 1945 թվականին ամերիկացիների միայն 40 տոկոսն ուներ սեփական տներ, իսկ պատերազմի ավարտից մեկ տասնամյակ անց այդ ցուցանիշը բարձրացավ մինչև 60 տոկոսի: Օրինագիծը վերացնում էր կանխավճարի պահանջները, և վետերանները կարող էին բնակարանային վարկեր ստանալ ընդամենը 1 դոլար կանխավճարով: Այս կերպ

Ջի. Այ. Բիլն առաջացրեց շինարարական բարգավաճում, որը խթանեց հետպատերազմյան տնտեսական աճը: Բացի այդ, Վետերանների վարչությունը նաև օգնեց մոտ երկու հարյուր հազար վետերանների ձեռք բերելու ֆերմաներ և զբաղվելու մանր գործարարությամբ:

Այնուամենայնիվ, ոչ բոլոր ամերիկացիները կարողացան հավասարապես օգտվել օրենսդրությունից և դրա ընձեռած առավելություններից: Հին նախապաշարմունքները և խտրականությունները դեռևս զորեղ էին: Այդուհանդերձ, *Ջի. Այ. Բիլի* ազդեցությունը նշանակալի էր և երկարատև: Այն օգնեց պահպանելու հետպատերազմյան տնտեսական մեծ վերելքը և, անկախ սահմանափակումներից, այնուամենայնիվ հաստատեց արդի ամերիկյան միջին խավի կենսակերպի բնութագրական չափանիշներն ու խորհրդանշանները:

Ամփոփենք: Ամերիկայի Միացյալ Նահանգները մուտք գործեց երկրորդ համաշխարհային պատերազմ Մեծ ճգնաժամի ճիրաններում հայտնված տկար տնտեսությամբ և դուրս եկավ տպավորիչ տնտեսական վերելքով: Պատերազմի արդյունքում բոլոր առումներով Միացյալ Նահանգներն ավելի ուժեղ էր, քան երբևէ, և աշխարհամարտում հաղթանակած բոլոր տերությունների շրջանում, թերևս, ամենաշահեկան դիրքերում էր: Բուն ամերիկյան տարածքը ամբողջովին զերծ էր մնացել պատերազմական արհավիրքներից, որոնք փլատակների էին վերածել Եվրոպայի մեծագույն մասը և շարքից դուրս էին հանել Ասիայի հիմնական հնարավոր մրցակից տերություններին: Եվ այնուամենայնիվ, Միացյալ Նահանգները հայտնվեց նոր հզոր մարտահրավերների առջև: Սառը պատերազմի գաղափարաբանական առճակատումը մրցակից գերտերության՝ Խորհրդային Միության հետ շարունակվելու էր հետագա տասնամյակների ընթացքում: Միջուկային զենքի տարածումը, տեղական հակամարտություններն ու սպառազինությունների մրցավազքը խաթարելու էին համաշխարհային ներդաշնակության մասին հետպատերազմյան աշխարհակարգի տեսլականներն ու նախագծերը: Պատերազմը սանձազերծել էր հզոր հասարակական գործընթացներ, որոնք պիտի վերակազմավորեին Միացյալ Նահանգները և աշխարհը:

ԳԼՈՒԽ 18

Սառը պատերազմը և գաղափարաբանական առճակատումը

Սառը պատերազմը համաշխարհային քաղաքական և գաղափարաբանական պայքար էր ու առճակատում կապիտալիստական և կոմունիստական երկրների ճամբարների միջև, որոնք առաջնորդվում էին հետպատերազմյան աշխարհի երկու գերտերությունների՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների և Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության (ԽՍՀՄ) կողմից: «Սառը», քանզի այն երբեք չվերաճեց «տաք», ուղղակի և անմիջական պատերազմի Միացյալ Նահանգների և Խորհրդային Միության միջև: Այնուամենայնիվ, այն ուղեկցվում էր անուղղակի կամ միջնորդավորված տեղական բնույթի հակամարտություններով, ինչպես նաև երկարատև ու բազմաշերտ մրցակցությամբ, որը պարուրում էր ամբողջ աշխարհը: 1940-ական թվականների կեսերից մինչև 1960-ական թվականների կեսերը այսպես կոչված առաջին Սառը պատերազմի լարվածությունը ամենաբարձրն էր, որին հետևեց միջազգային թուլացած կամ լիցքաթափված լարվածության և աճող հաղորդակցության և համագործակցության շրջանը, որը հայտնի է ֆրանսերեն *դետանտ* (*Détente* - լիցքաթափում) եզրույթով: Սրան հաջորդեց երկրորդ Սառը պատերազմը, որը տևեց մոտավորապես 1979 թվականից մինչև 1989 թվականը՝ Բեռլինի պատի փլուզումը, և 1991 թվականին Խորհրդային Միության փլուզումը: Սառը պատերազմը վերափոխեց աշխարհը և ամերիկյան հասարակությունը:

Սառը պատերազմի քաղաքական, տնտեսական և ռազմական չափումները

Սառը պատերազմը ծագեց դաշնակիցների Մեծ եռյակի՝ Միացյալ Նահանգների, Մեծ Բրիտանիայի և Խորհրդային Միության առաջնորդների միջև կայուն կարգավորման հասնելու ջանքերի ձախողումից հետո, երբ նրանք հանդիպեցին Յալթայում (Ղրիմ, ԽՍՀՄ) և Պոտսդամում (Գերմանիա)՝ ձևավորելու հետպատերազմյան աշխարհակարգը: Ստալինը խորհրդային զորքերի կողմից զբաղեցված Արևելյան Եվրոպան համարում էր խորհրդային ազդեցության գոտու մաս: Դեռևս Գերմանիայի մոտալուտ պարտության ժամանակահատվածում դաշնակիցները սահմանել էին նրա անվերապահ հանձնվելու պայմանները: Միևնույն ժամանակ, քննարկումներ էին սկսվել փոխհատուցումների, տրիբունալների և

օկուպացիոն ռեժիմի բնույթի շուրջ, ըստ որի՝ Գերմանիան բաժանվելու էր ամերիկյան, բրիտանական, ֆրանսիական և խորհրդային գոտիների: Կասկածանքի ու անվստահության մթնոլորտը գնալով աճում էր: Միջազգային քաղաքական իրադրությունը կտրուկ փոխվեց ԱՄՆ նախագահ Ֆրանկլին Ռուզվելտի հանկարծակի մահով 1945 թ. ապրիլին՝ ՄԱԿ-ի ստեղծման անդրանիկ նիստից օրեր առաջ: Թեև Ռուզվելտը թերահավատորեն էր վերաբերվում Ստալինին, նա միշտ հույս էր տածում, որ խորհրդային Միությունը կարող էր ներբերվել «Ազատ աշխարհ»: Նախագահ Հարի Ս. Թրումենը, ինչպես և Չերչիլը, նման պատրանքներ չունեին: Թրումենը ԱՄՆ-ն դիրքավորեց հակախորհրդային մոտեցման կոշտ գծի շրջանակներում:

Պոստդամի համաժողովում, որը գումարվեց Բեռլինի արվարձաններում 1945 թ. հուլիսի կեսերից մինչև օգոստոսի սկիզբը, դաշնակիցները քննարկեցին նաև խորհրդային Միության կողմից զբաղեցված Լեհաստանի ճակատագիրը: Հանդիպման ավարտին ամերիկյան պատվիրակությունը լուր ստացավ, որ Մանհեթենի նախագծի գիտնականները հաջողությամբ փորձարկել էին ատոմային ռումբը: Հուլիսի 24-ին Թրումենը Ստալինին հայտնեց «կործանարար զորության նոր զենքի» մասին:

Ատլանտյան խարտիան հաստատեց Միավորված ազգերի կազմակերպության ստեղծումը: Խորհրդային Միությունը ՄԱԿ-ի հիմնադիր անդամ-պետությունների թվում էր և Անվտանգության խորհրդի հինգ մշտական անդամներից մեկը՝ Միացյալ Նահանգների, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Չինաստանի հետ: Ատլանտյան խարտիան նաև գործի դրեց վերակազմակերպված համաշխարհային տնտեսության պլանավորումը: 1944 թ. հուլիսին ՄԱԿ-ի Ֆինանսական և արժույթային համաժողովը, որն ավելի հայտնի է որպես Բրետտոն Վուդսի համաժողով, ստեղծեց Արժույթի միջազգային հիմնադրամը (International Monetary Fund (IMF)) և Համաշխարհային բանկի նախատիպը՝ Վերակառուցման և զարգացման միջազգային բանկը (International Bank for Reconstruction and Development (IBRD)): 1947 թ. Բրետտոն Վուդսի համակարգն (Bretton Woods system) ամրապնդվեց և ավելացվեց Սակագների և առևտրի ընդհանուր համաձայնագիրը (General Agreement on Tariffs and Trade (GATT))՝ Առևտրի համաշխարհային կազմակերպության (World Trade Organization (WTO)) նախօրինակը: Խորհրդային Միությունը մերժեց այս ամենը:

Երկու կողմերն էլ հասկանում էին, որ խորհրդա-ամերիկյան հարաբերությունները պատերազմի ավարտին վերածվելու էին թշնամանքի, և այդպես էլ եղավ: 1946 թվականին խորհրդային Միությունը հրաժարվեց

զիջել օկուպացված Իրանի իր հատվածը, ինչպես նաև բացահայտվեց Մանհեթենի նախագծի վրա աշխատող խորհրդային հետախույզը: Միացյալ Նահանգները մերժեց խորհրդային կոչերը՝ վերացնելու իր միջուկային զինանոցը: 1947 թվականին «Արտաքին հարցեր» (Foreign Affairs) ամսագրում «Mr. X» կեղծանունով հրատարակված մի հոդվածում ամերիկացի դիվանագետ և պատմաբան Ջորջ Քենանը նախագգուշացնում էր, որ ԱՄՆ-ն պետք է շարունակի խորհրդային Միությանը համարել մրցակից և ոչ թե գործընկեր, քանզի Ստալինը չէր հավատում «սոցիալիստական և կապիտալիստական աշխարհների հարատև երջանիկ համակեցության հնարավորությանը»: Քենանը կոչ էր անում ԱՄՆ ղեկավարներին դիմակայելու խորհրդային վտանգին՝ վարելով «խիստ զսպման քաղաքականություն» (“a policy of firm containment”):

1947 թվականի մարտի 12-ին Թրումենը հայտարարեց Հունաստանին և Թուրքիային 400 միլիոն դոլարի օգնություն տրամադրելու մասին, որտեղ, ըստ Թրումենի, «կոմունիստների գլխավորած ահաբեկչական գործողությունները» վտանգի տակ էին դնում «ժողովրդավարական» կառավարումը: Թրումենը հայտարարում էր՝ քանի որ Բրիտանիան «նվազեցնում կամ վերացնում է իր պարտականությունները աշխարհի մի քանի մասերում՝ ներառյալ Հունաստանը», այդ պարտավորությունները ընկնում են Միացյալ Նահանգների վրա՝ «աջակցելու ազատ ժողովուրդներին», որոնք «դիմադրում են ... արտաքին ճնշումներին»: Այսպես կոչված՝ Թրումենի դոկտրինը դարձավ ամերիկյան զսպման քաղաքականության հիմնաքարը, որը կոչված էր կասեցնելու խորհրդային ծավալումն ամբողջ աշխարհում:

1946-1947 թթ. դաժան ծնունդը սովը պատեց Եվրոպայի մեծ մասը: Ձնաբուքն ու խստաշունչ ցուրտը դադարեցրեց ածխի արդյունահանումը: Գործարանները փակվեցին, իսկ գործազրկությունը կտրուկ աճեց: Այս պայմաններում Ֆրանսիայի և Իտալիայի կոմունիստական կուսակցություններն ընտրություններում հաջողություններ արձանագրեցին՝ ստանալով իրենց խորհրդարանների մանդատների գրեթե մեկ երրորդը: Ամերիկացի պաշտոնյաները անհանգստացած էին, որ Եվրոպայի աղքատ զանգվածները գնալով ավելի խոցելի էին դառնում խորհրդային քարոզչության նկատմամբ: Իրավիճակը ծանր մնաց մինչև զարուն, երբ 1947 թվականի հունիսի 5-ին պետքարտուղար գեներալ Ջորջ Մարշալը ելույթ ունեցավ Հարվարդի համալսարանում՝ առաջարկելով, որ «Միացյալ Նահանգները պետք է անի այն ամենը, ինչ ի զորու է՝ աջակցելու աշխարհի նորմալ տնտեսական առողջության վերականգնմանը, առանց որի չի կա-

րող լինել քաղաքական կայունություն և երաշխավորված խաղաղություն»։ Թեև Մարշալը քննադատներին հավաստիացնում էր, որ իր առաջարկն «ուղղված է ոչ թե որևէ երկրի, այլ սովի, աղքատության և քաոսի դեմ», Ստալինը դա հստակորեն ընկալեց իբրև Եվրոպայում կոմունիզմի դեմ իմպերիալիստական հարձակում։ Նա այդ նախագիծը դիտարկում էր որպես «տրոյական ձի», որը նախատեսում էր Գերմանիան և մյուս երկրները ներգրավել կապիտալիստական ցանցի մեջ։

Եվրոպական վերականգնման ծրագիրը, որը լայնորեն հայտնի է որպես Մարշալի պլան (Marshall Plan), հսկայական գումարներ ներարկեց Արևմտյան Եվրոպայում։ 1948-1952 թթ. Միացյալ Նահանգները 13 միլիարդ դոլար ներդրեց վերակառուցման ծրագրերում՝ միաժամանակ թուլացնելով առևտրային արգելքները։ Առաջին համաշխարհային պատերազմին հաջորդած նմանօրինակ հետպատերազմյան քաոսից խուսափելու համար նախագծված Մարշալի պլանն ուղղված էր վերակառուցելու Արևմտյան Եվրոպան, բացելու շուկաները և շահելու եվրոպական հանրության և կառավարությունների աջակցությունը կապիտալիստական ժողովրդավարության հարացույցի հանդեպ։ Խորհրդային Միությունը հակադարձեց իր սեփական հակընդդեմ նախագծով՝ Մոլոտովի պլանով, և Ստալինը ավելի խիստ վերահսկողություն սկսեց իրականացնել Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի խորհրդային «արբանյակ» երկրների նկատմամբ։

Միևնույն ժամանակ, Գերմանիայում իրավիճակը վատթարացել էր։ Բեռլինը բաժանվել էր կոմունիստական և կապիտալիստական գոտիների։ 1948 թ. հունիսին, երբ ամերիկյան, բրիտանական և ֆրանսիական պաշտոնյաները Գերմանիայում ներմուծեցին նոր արժույթ, Խորհրդային Միությունը նախաձեռնեց ցամաքային շրջափակում, որը դադարեցրեց երկաթուղային և ճանապարհային մուտքը դեպի խորհրդային օկուպացիոն գոտու մեջ կղզիացած Արևմտյան Բեռլին՝ ամբողջ քաղաքի նկատմամբ վերահսկողություն հաստատելու համար։ Միացյալ Նահանգները կազմակերպեց և համակարգեց օդային փոխադրման հսկայական ջանքեր՝ տասնմեկ ամիս շարունակ անհրաժեշտ պաշարներ հասցնելով պաշարված քաղաք։ Ի վերջո, 1949 թ. մայիսի 12-ին խորհրդային ուժերը չեղարկեցին շրջափակումը։ Գերմանիան պաշտոնապես բաժանվեց երկու հատվածների։ 1949 թ. մայիսի 23-ին երկրի արևմտյան կեսը պաշտոնապես վերանվանվեց Գերմանիայի Դաշնային Հանրապետություն, իսկ արևելյան՝ խորհրդային գոտին նույն տարվա աշնանը հռչակվեց Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետություն։ Բեռլինը, որը գտնվում էր

Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետություն սահմաններում, բաժանված էր երկու հատվածի, և 1961 թ. օգոստոսից մինչև 1989 թ. նոյեմբերը քաղաքը նաև ֆիզիկապես բաժանվեց պարսպով՝ հայտնի Բեռլինի պատով, ինչը դարձավ Սառը պատերազմի բաժանարար խորհրդանիշներից:

1949 թ. ամռանը Միացյալ Նահանգները գործարկեց Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպությունը (ՆԱՏՕ), (North Atlantic Treaty Organization (NATO)), որը հավաքական անվտանգության պայմանագիր էր և ռազմաքաղաքական դաշինք: Այն ընդգրկեց ԱՄՆ-ն, Կանադան, Անգլիան, Ֆրանսիան, Բելգիան, Լյուքսեմբուրգը, Նիդեռլանդները, Իտալիան, Պորտուգալիան, Նորվեգիան, Դանիան և Իսլանդիան: ՆԱՏՕ-ն հետագայում շարունակեց ընդլայնվել: 1955 թ. Խորհրդային Միությունը ձեռնարկեց սեփական ռազմաքաղաքական դաշինքը՝ Վարշավայի պայմանագրի կազմակերպությունը (Организация Варшавского договора) կամ Վարշավյան դաշինքը (Warsaw Pact), որը Խորհրդային Միության գլխավորությամբ ներառեց Ալբանիան (1968 թ. քրեց), Ռումինիան, Բուլղարիան, Հունգարիան, Չեխոսլովակիան, Լեհաստանը և Արևելյան Գերմանիան:

1949 թ. հոկտեմբերի 1-ին Սառը պատերազմի նոր գլուխ սկսվեց, երբ Չինաստանի կոմունիստական կուսակցությունը (ՉԿԿ) Մաո Յզեդունի գլխավորությամբ հռչակեց իր հաղթանակը Չան Կայշիի առաջնորդած Գոմինդանի (Kuomintang) ազգայնականների դեմ, որին աջակցում էր ԱՄՆ-ն: Գոմինդանը նահանջեց Թայվան կղզի, և ՉԿԿ-ն կարմիր դրոշի ներքո իր վերահսկողությունը հաստատեց մայրցամաքային տարածքի վրա՝ հռչակելով Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունը (ՉԺՀ): 1949 թ. օգոստոսի 29-ին Խորհրդային Միության կողմից ատոմային ռումբի հաջող փորձարկումից հետո Չինաստանի՝ աշխարհի ամենամեծ բնակչությամբ երկրի «կորուստը» խուճապ առաջացրեց ամերիկյան արտաքին քաղաքականություն մշակողների շրջանում, որոնց ուշադրությունը սկսեց Եվրոպայից թեքվել դեպի Ասիա:

1950 թ. ապրիլին ընդունվեց «Ազգային անվտանգության հուշագիր 68. Միացյալ Նահանգների նպատակներն ու ծրագրերը հանուն ազգային անվտանգության» փաստաթուղթը՝ Ազգային անվտանգության խորհրդի հայեցակարգը (հայտնի որպես ԱԱԽ-68 (National Security Council 68 (NSC-68)), որում ասվում էր, որ ԽՍՀՄ-ի և նրա «միջազգային կոմունիստական շարժման» առաջնորդները ձգտում էին միայն «պահպանել և ամրապնդել իրենց բացարձակ իշխանությունը»: Լինելով խորհրդային ծավալապաշ-

տությանը դիմակայող կենտրոնական «հենակետ»՝ Ամերիկյան դարձել էր «գլխավոր թշնամին», որը «պետք է տապալվի կամ ոչնչացվի այս կամ այն միջոցներով»: Ուստի, ԱԱԽ-68-ը կոչ էր անում արագ կենտրոնացնել ամերիկյան քաղաքական, տնտեսական և ռազմական կարողությունները՝ «հետ մղելու Կրեմլի՝ համաշխարհային տիրապետության ձգտումը»: Ռեսուրսների կենտրոնացման նման զանգվածային հանձնառությունը, որը նախատեսում էր ԱՄՆ տարեկան պաշտպանական բյուջեի ավելի քան եռապատիկ աճը, անհրաժեշտ էր, քանզի ԽՍՀՄ-ը, «ի տարբերություն գերիշխանության նախկին հավակնորդների», իր համընդհանրական գաղափարաբանությամբ ձգտում էր «պարտադրել իր բացարձակ իշխանությունը մնացյալ աշխարհի վրա»: Քենանը և Ուոլթեր Լիփմանը ապարդյուն պնդում էին, որ նման կերպ «զսպման ռազմականացումը» (“militarization of containment”) ողբերգական սխալ է:

1950 թ. հունիսի 25-ին, երբ ԱՄՆ պետական այրերը քննարկում էին ԱԱԽ-68-ի արժանիքները, Կորեայում սկսվեց պատերազմ կոմունիստական հյուսիսի և Ամերիկայի կողմից աջակցվող հակակոմունիստ կապիտալիստական հարավի միջև: 1945 թ. սեպտեմբերին Ճապոնիայի կապիտուլյացիայից հետո ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի կողմից Կորեայի համատեղ օկուպացիան ճանապարհ էր հարթել երկրի բաժանման համար: 1947 թ. նոյեմբերին ՄԱԿ-ը բանաձև ընդունեց, ըստ որի՝ Կորեայում պետք է ստեղծվեր միասնական կառավարություն, սակայն Խորհրդային Միությունը հրաժարվեց համագործակցությունից: Ընտրություններն անցկացվեցին միայն հարավում: Ընտրություններից երեք ամիս անց ստեղծվեց Կորեայի Հանրապետությունը (ԿՀ)՝ Հարավային Կորեան: Մեկ ամիս անց կոմունիստները ստեղծեցին Կորեայի Ժողովրդադեմոկրատական Հանրապետությունը (ԿԺԴՀ)՝ Հյուսիսային Կորեան: Երկու կողմերն էլ պնդում էին, որ հանդես են գալիս միասնական Կորեական թերակղզու օգտին: ՄԱԿ-ը ճանաչեց ԿՀ-ն, սակայն զինված հակամարտություն սկսվեց հյուսիսի և հարավի միջև:

1950 թ. գարնանը Ստալինը վարանելով հավանություն տվեց Հյուսիսային Կորեայի առաջնորդ Կիմ Իլ Սոնգի՝ Հարավը ուժով ազատագրելու ծրագրին: Հյուսիսկորեացիները հաջող անակնկալ հարձակում գործեցին, և Հարավային Կորեայի մայրաքաղաք Սեուլը հունիսի 28-ին ընկավ կոմունիստների ձեռքը: Նույն տարվա հուլիսին ՄԱԿ-ի ուժերը մոբիլիզացվեցին ամերիկացի զեներալ Դուգլաս Մակ-Արթուրի հրամանատարության ներքո: Զորքերը ափ իջան Սեուլից մոտ հիսուն կիլոմետր հեռավորության վրա գտնվող Ինչոն քաղաքում և գրավեցին քաղա-

քը սեպտեմբերի 28-ին: Նրանք շարժվեցին դեպի Հյուսիսային Կորեա: Հոկտեմբերի 1-ին հարավկորեական և ՄԱԿ-ի ուժերը հասեցին 38-րդ զուգահեռականը, իսկ հոկտեմբերի 26-ին հասան Յալու գետ՝ Կորեա-Չինաստան ավանդական սահմանը: Նրանց դիմավորեց 300,000-անոց չինական զորքը՝ կասեցնելով առաջխաղացումը և անցնելով հակահարձակման: Նոյեմբերի 30-ին հարավկորեական և ՄԱԿ-ի միացյալ ուժերը սկսեցին նահանջել՝ ետ անցնելով 38-րդ զուգահեռականը: 1951 թ. հունվարի 4-ին նրանք ստիպված էին լքել նաև Սեուլը: ՄԱԿ-ի ուժերը վերախմբավորվեցին, սակայն պատերազմը մտավ փակուղի: Գեներալ Մակ-Արթուրը, դառնալով անհամբեր և ցանկանալով վերացնել կոմունիստական սպառնալիքը, թույլտվություն պահանջեց Հյուսիսային Կորեայի և Չինաստանի դեմ միջուկային զենք օգտագործելու համար: Ստանալով մերժում՝ Մակ-Արթուրը հրապարակայնորեն դատապարտեց նախագահ Թրումենին: 1951 թ. ապրիլին Թրումենը, չցանկանալով սադրել Երրորդ համաշխարհային պատերազմ և հրաժարվելով հանդուրժել Մակ-Արթուրի հանրային անհնազանդությունը, պաշտոնանկ արեց գեներալին: 1951 թ. հունիսի 23-ին ՄԱԿ-ում Խորհրդային Միության դեսպանը առաջարկեց զինադադար, որը ԱՄՆ-ն անմիջապես ընդունեց: Խաղաղության բանակցությունները շարունակվեցին երկու տարի:

Այս ընթացքում 1952 թ. ԱՄՆ նախագահական ընտրություններում գեներալ Դուայթ Էյզենհաուերը հաղթեց Իլինոյսի նահանգապետ դեմոկրատ Ադլայ Սթիվենսոնին, իսկ 1953 թ. մարտին մահացավ ԽՍՀՄ առաջնորդ Իոսիֆ Ստալինը: 1953 թվականի հուլիսի 27-ին Հյուսիսային Կորեայի հետ կնքվեց զինադադարի պայմանագիր. Կորեան բաժանվեց: Պատերազմում զոհվեցին ավելի քան 30,000 ամերիկացիներ, ինչպես նաև միլիոնավոր կորեացի զինվորներ և խաղաղ բնակիչներ:

Սառը պատերազմը և տեխնոլոգիական առաջընթացը. սպառազինությունների և տիեզերական մրցավազքը

Համաշխարհային հավասարակշռությունը կտրուկ փոխվեց, երբ 1945 թ. օգոստոսին Միացյալ Նահանգներն ատոմային ռումբերով հողին հավասարեցրեց Հիբոսիման և Նագասակին: Ատոմային զենքի կիրառումը ոչ միայն ակնթարթորեն սպանեց 180,000 խաղաղ բնակիչների, այլև ընդմիշտ փոխեց պատերազմի բնույթը և համաշխարհային անվտանգային սպառնալիքները: ԽՍՀՄ-ն արագացրեց իր միջուկային հետազոտությունները, որոնք խթանվեցին նաև «ատոմային լրտեսների»

աշխատանքով. մասնավորապես Կլաուս Ֆուքսը Մանհեթենի ամերիկյան գաղտնի նախագծից ԽՍՀՄ-ին էր փոխանցել միջուկային գաղտնիքներ: Խորհրդային գիտնականները 1949 թ. օգոստոսի 29-ին հաջողությամբ փորձարկեցին ատոմային ռումբը, ինչն անակնկալի բերեց ԱՄՆ-ին: Խորհրդային այս անսպասելի արագ հաջողությունը ոչ միայն հանկարծակիի բերեց Միացյալ Նահանգներին, այլև տազնապով լցրեց արևմտյան աշխարհը և առաջացրեց միջուկային սպառազինությունների մրցավազք Միացյալ Նահանգների և ԽՍՀՄ-ի միջև:

1952 թ. նոյեմբերի 1-ին Միացյալ Նահանգները պայթեցրեց առաջին ջերմամիջուկային զենքը կամ ջրածնային ռումբը, որը տեսականորեն կարող էր հասցվել անսահման հզորությունների: Դա միայն արագացրեց սպառազինությունների մրցավազքը, և կողմերից յուրաքանչյուրը զարգացրեց ավելի առաջադեմ մարտագլխիկներ և դրանց առաքման համակարգեր: 1953 թ. ԽՍՀՄ-ը հաջողությամբ փորձարկեց իր ջրածնային ռումբը, և շուտով նախագահ Էյզենհաուերը հայտարարեց «զանգվածային հաշվեհարդարի» (“massive retaliation”) քաղաքականության մասին: Ըստ այդմ՝ ԱՄՆ-ն պատասխանելու էր միջուկային սպառնալիքներին կամ ագրեսիայի գործողություններին իր միջուկային ողջ հզորությամբ: Այսպիսով, երկու կողմերն էլ տեսականորեն կզսպվեին պատերազմ սկսելուց՝ փոխադարձորեն երաշխավորված ոչնչացման (mutually assured destruction - MAD) տրամաբանությամբ:

Միջուկային պատերազմի վախը ստեղծեց իսկական ատոմային մշակույթ: Ամերիկյան տազնապների արտահայտությունն էին դառնում ֆիլմերը, որոնք լցվում էին ռադիոակտիվ հրեշների, միջուկային վթարների և դատաստանի օրվա մասին սցենարներով և սյուժեներով: ԱՄՆ-ում և արտերկրում հակամիջուկային բողոքի ցույցերը նախազգուշացնում էին միջուկային փորձարկումների վտանգի մասին և ընդգծում էին այն մեծ հավանականությունը, որ ջերմամիջուկային պատերազմը կհանգեցնի գլոբալ բնապահպանական աղետի: Այնուամենայնիվ, միևնույն ժամանակ, խաղաղ միջուկային տեխնոլոգիաները՝ ատոմի միջուկի տրոհման և միաձուլման վրա հիմնված էներգիան, թվում էր, թե ազդարարում էին էներգետիկ ուտոպիայի մեկնարկը, որը կլիներ մաքուր, անվտանգ և «չափազանց էժան»: 1953 թվականին Էյզենհաուերը ՄԱԿ-ում հայտարարեց, որ Միացյալ Նահանգները կկիսի գիտելիքները և միջոցները այլ երկրների հետ խաղաղ ատոմային էներգիայի օգտագործումը հասանելի դարձնելու համար:

Երբ Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտին Գերմանիան

օկուպացվեց, Միացյալ Նահանգները և Խորհրդային Միությունը ձգտում էին ձեռք բերել նացիստների Ֆաու-2 (V-2) հրթիռային գերզենքի ծրագրի տարրերը: Ավերիչ Ֆաու-2 հրթիռը, որը սարսափեցրել էր Անգլիային, ի վիճակի էր իր հազար կիլոգրամանոց պայթուցիկ մարտագլխիկը հասցնել մինչև մոտ հազար կիլոմետր հեռավորության վրա: ԱՄՆ-ն և ԽՍՀՄ-ը ձգտում էին գերեվարել հրթիռային տեխնոլոգիաների վրա աշխատող գերմանացի գիտնականներին, ինչպես նաև ձեռք բերել գերմանական հրթիռային նախագծերը և արտադրական սարքավորումները, որպեսզի գործարկեին սեփական նախագծերը: Գերմանացի առաջատար հրթիռային գիտնական Վերնհեր ֆոն Բրաունը դարձավ ամերիկյան տիեզերական ծրագրի ղեկավարը: Խորհրդային Միության համանման ծրագիրը ղեկավարում էր նախկին բանտարկյալ Սերգեյ Կորոլյովը:

Պատերազմի ավարտից հետո ամերիկյան և խորհրդային հրթիռային ճարտարագետների թիմերն աշխատում էին հարմարեցնել գերմանական հրթիռային տեխնոլոգիան՝ միջմայրցամաքային բալիստիկ հրթիռ (Intercontinental Ballistic Missile (ICBM)) ստեղծելու համար: Առաջինը հաջողության հասավ ԽՍՀՄ-ը: 1957 թվականի հոկտեմբերի 4-ին Խորհրդային Միությունն առաջինն էր, որ այդ գերհզոր հրթիռն արձակեց տիեզերք՝ աշխարհի առաջին արհեստական արբանյակը՝ «Սպուտնիկ 1»-ը, երկրագնդի ուղեծիր ուղարկելու համար: Տեխնոլոգիական հաղթանակից զատ՝ սա նաև խորհրդային քարոզչական վճռորոշ հաղթանակ էր:

Ի պատասխան՝ ԱՄՆ կառավարությունը շտապեց կատարելագործել սեփական միջմայրցամաքային բալիստիկ հրթիռների տեխնոլոգիան և տիեզերք արձակել իր արբանյակներն ու տիեզերագնացներին: «Վանգարդ» (Vanguard) հրթիռի միջոցով արբանյակը ուղեծիր արձակելու ամերիկյան սկզբնական փորձերը ձախողվեցին: 1961 թվականի ապրիլի 12-ին ռուս տիեզերագնաց Յուրի Գագարինը դարձավ բաց տիեզերք հասած առաջին մարդը աշխարհում: Մայիսի 5-ին ամերիկացի տիեզերագնաց Ալան Շեփարդը «Ազատություն 7» (Freedom 7) պարկուճով իրականացրեց միայն ենթաուղեծրային թռիչք: Միացյալ Նահանգները ետ էր մնացել, և Ջոն Բենեդիկն օգտագործելու էր Ամերիկայի ձախողումները «տիեզերական մրցավազքում» Լուսնի վրա վայրէջքի ծրագրի ֆինանսավորումն ավելացնելու համար:

Սառը պատերազմի «կարմիր վախը» և լիբերալ հակակոմունիզմը

1950 թ. փետրվարի 9-ին Արևմտյան Վիրջինիայի Ուիլինգ քաղաքում սենատոր Ջոզեֆ Մաքքարթին իր ելույթով ցնցեց ամերիկյան քաղաքականությունը: Օդում թափահարելով ինչ-որ թղթեր՝ Մաքքարթին հայտարարեց. «Այստեղ իմ ձեռքում է 205 անուններից բաղկացած ցուցակ, որոնք հայտնի են դարձել պետքարտուղարին որպես կոմունիստական կուսակցության անդամներ, և որոնք, այնուամենայնիվ, դեռ աշխատում և ձևավորում են ԱՄՆ քաղաքականությունը»: Անունները հրապարակելու հանրային ճնշման ներքո, քանի որ Վիսկոնսինից հանրապետական սենատոր Մաքքարթին փաստացի ցուցակ չուներ, թիվը սեղմվեց՝ դառնալով հիսունյոթ, այնուհետև՝ ութսունմեկ: Ի վերջո, նա խոստացավ բացահայտել միայն մեկ կոմունիստի՝ «խորհրդային գլխավոր գործակալի» անունը: Փոփոխվող թվերը ծաղր էին առաջացնում, բայց դա նշանակություն չուներ. Մաքքարթի պնդումները նրան համբավ բերեցին և բորբոքեցին շարունակվող «կարմիր վախը»:

Մաքքարթիզմը զանգվածային և համատարած հակակոմունիստական հիստերիայի ախտանիշ էր, որը պատել էր սառըպատերազմյան Ամերիկան: 1947 թ. մարտին՝ Երկրորդ համաշխարհային պատերազմից միայն երկու տարի անց, նախագահ Թրումենը, բախվելով աճող հակակոմունիստական ոգևորությանը և հորիզոնում դժվարին ընտրություններին, ենթարկվեց ճնշմանը և արձակեց իր «հավատարմության հրամանը» (“loyalty order”) 9835 գործադիր հրամանը (Executive Order 9835), որը սահմանեց հավատարմության քննություններ դաշնային աշխատողների համար: Հետաքննությունների դաշնային բյուրոն ավելի մանրակրկիտ ուսումնասիրություններ էր անցկացնում արտաքին ծառայության աշխատակիցների շրջանում բոլոր հնարավոր «անվտանգության ռիսկերի» վերաբերյալ: Կոնգրեսում Ներկայացուցիչների պալատի Հակամերիկյան գործունեության հանձնաժողովը (Un-American Activities Committee (HUAC)) և Սենատի Հետաքննությունների մշտական ենթահանձնաժողովը (Senate Permanent Subcommittee on Investigations (SPSI)) լսումներ էին անցկացնում ամերիկյան հասարակության վրա կոմունիստական ազդեցության վերաբերյալ: 1949-1954 թվականներին Կոնգրեսի հանձնաժողովները դիվերսիոն գործողությունների վերաբերյալ հարյուրից ավելի հետաքննություն անցկացրին: Հակադիվերսիոն հանձնաժողովներ ի հայտ եկան ավելի քան մեկ տասնյակ նահանգային օրենսդիր մարմիններում, և քննությունների ընթացակարգերը տարածվեցին ամբողջ

երկրի հանրակրթական դպրոցներում և համալսարաններում: Այս կերպ 1950 թ. Կալիֆորնիայի համալսարանում երեսունմեկ դասախոս ազատվեց աշխատանքից՝ հավատարմության երդումը ստորագրելուց հրաժարվելու պատճառով: 1950 թ. սեպտեմբերին Կոնգրեսի կողմից ընդունված Ներքին անվտանգության օրենքը (Internal Security Act) կամ Մակ-Քարենի օրենքը (McCarran Act) բոլոր «կոմունիստական կազմակերպություններին» պետական գրանցում էր պարտավորեցնում, ինչը կառավարությանը ավելի մեծ լիազորություններ էր ընձեռում՝ հետաքննելու խոռվությունները կամ դրանց կոչերը և կանխելու կասկածյալ անձանց քաղաքացիության ձեռքբերումը կամ պահպանումը: Մինևույն ժամանակ, թերթերը լցված էին խորհրդային լրտեսության մասին վերնագրերով:

Պատերազմի ժամանակ Ջուլիուս Ռոզենբերգը կարճ ժամանակով աշխատել էր Նյու Ջերսիում գտնվող ԱՄՆ բանակի ազդանշանային կորպուսի լաբորատորիայում, որտեղ նրան հասանելի էր եղել գաղտնի տեղեկատվություն: Նա և իր կինը՝ էթելը, որոնք երկուսն էլ 1930-ական թվականներին եղել էին ԱՄՆ Կոմունիստական կուսակցության (Communist Party of the USA (CPUSA)) անդամներ, մեղադրվում էին ռումբի հետ կապված գաղտնի փաստաթղթեր խորհրդային պաշտոնյաներին փոխանցելու մեջ: 1950 թվականի օգոստոսին նրանց առաջադրվեց միջուկային գաղտնիքների փոխանցման մեղադրանք: 1951 թվականի մարտին տեղի ունեցած դատավարությունից հետո նրանք մեղավոր ճանաչվեցին և 1953 թվականի հունիսի 19-ին մահապատժի ենթարկվեցին:

Ալջեր Հիսսը ԱՄՆ պետքարտուղարության նշանավոր պաշտոնյաներից էր և 1945 թվականի ապրիլից մինչև հունիս զբաղեցրել էր Սան Ֆրանցիսկոյում ՄԱԿ-ի կանոնադրության համաժողովի գլխավոր քարտուղարի պաշտոնը՝ նախքան 1946 թվականին պետքարտուղարությունից հեռանալը: Երիտասարդ կոնգրեսական և Հակաամերիկյան գործունեության հանձնաժողովի անդամ Ռիչարդ Նիքսոնը Հիսսին մեղադրեց լրտեսության մեջ: 1948 թ. օգոստոսի 3-ին Ուիթթեր Զեմբերսը վկայեց հանձնաժողովի առջև, որ 1930-ականներին ինքը և Հիսսը միասին Վաշինգտոնում աշխատել են գաղտնի «կոմունիստական ընդհատակյա» կազմակերպության համար: Հիսսը պնդում էր իր անմեղությունը և երկու անգամ կանգնեց դատարանի առջև: 1949 թ. հուլիսին կանխակալ դատավարությունից հետո նա դատապարտվեց սուտ մատնության երկու հոդվածով, իսկ լրտեսության համար գործի վաղեմության ժամկետը լրացել էր:

Ալջեր Հիսսի և Ռոզենբերգների դատավարությունները հակակոմու-

նիստներին, ինչպիսին Ջոզեֆ Մաքքարթին էր, տվեցին այն հիմքերը, որոնք անհրաժեշտ էին, որպեսզի անդեին վիթխարի խորհրդային դավադրության մասին, որն իբր թե նպատակադիր էր ներթափանցելու և տապալելու ԱՄՆ կառավարությունը: Այս կերպ արդարացվում էին ոչ միայն կոմունիստների, այլև բոլոր ձախ-լիբերալների հետապնդումները, նույնիսկ նրանց, ովքեր վճռականորեն հակակոմունիստ էին: 1950 թ. փետրվարին Ուիլիսոն Մաքքարթիի ելույթից շատ չանցած, նրա աղմկահարույց մեղադրանքները աճող հակասությունների աղբյուր դարձան: Նախագահ Թրումենը, արդեն ստիպված լինելով պատասխանել, կազմակերպեց կուսակցական կոնգրեսական հետաքննություն, որը նախատեսված էր Մաքքարթիին վարկաբեկելու համար: 1950 թվականի մարտի սկզբից մինչև հուլիսը Թայդինգսի կոմիտեն (Tydings Committee) լսումներ անցկացրեց և հրապարակեց իր վերջնական զեկույցը, որում մեղադրում էր Մաքքարթիին ամերիկյան հանրության նկատմամբ «խարդախություն և կեղծիք» իրականացնելու համար: Ամերիկյան առաջադիմականները Մաքքարթիի խաչակրաց արշավանքը դիտարկում էին որպես քաղաքական վիուկների որս:

ԱՄՆ-ում, իհարկե, եղել էր և կար կոմունիստական ներկայություն: ԱՄՆ կոմկուսը (CPUSA) ձևավորվել էր 1917 թվականի ռուսական հեղափոխությունից հետո: ԱՄՆ կոմկուսն իր հասարակական գործունեությունը սկսել էր 1921 թվականին, սակայն կոմունիզմը մնաց ամերիկյան կյանքի լուսանցքում մինչև 1930-ական թվականները, երբ Մեծ ճգնաժամի պայմաններում ձախերն ու լիբերալները սկսեցին Խորհրդային Միությունը դիտարկել որպես հույսի խորհրդանիշ: Ժողովրդական ճակատի ժամանակաշրջանում (Popular Front era) կոմունիստներն ինտեգրվեցին հիմնական քաղաքական հաստատություններին՝ Դեմոկրատական կուսակցության առաջադիմականների հետ դաշինքների միջոցով: ԱՄՆ կոմկուսը մեծամասամբ ազդեցություն և ժողովրդականություն էր վայելում արհմիությունների աշխատակիցների շրջանում, որոնք կապված էին նորաստեղծ Արդյունաբերական կազմակերպությունների կոնգրեսի և գործող «ճակատային» խմբերի հետ, սակայն կոմունիզմն այդպես էլ երբեք չգրավեց շատ ամերիկացիների: Երբ լուրեր տարածվեցին Հիտլերի և Ստալինի 1939 թվականի Չհարձակման պայմանագրի մասին, շատերը, դավաճանված զգալով, լքեցին կուսակցությունը:

Ներկայացուցիչների պալատի Հակամերիկյան գործունեության հանձնաժողովը ստեղծվել էր դեռևս 1938 թվականին, այնուհետև վերակազմավորվել էր Երկրորդ աշխարհամարտից հետո՝ կոմունիզմի հե-

տաքննության հստակ առաջադրանքով: 1954 թ. օգոստոսին ընդունվեց Կոմունիստական վերահսկողության օրենքը (Communist Control Act), որը փաստացի քրեականացնում էր կոմունիստական կուսակցությանն անդամակցությունը: Սակայն մինչ այդ ԱՄՆ կոմկուսը վաղուց արդեն դադարել էր նշանակալից ազդեցություն ունենալ: Հակակոմունիստները մոլվեցին վերացնելու ԱՄՆ կոմկուսի ազդեցության մնացուկները առաջադիմական հաստատություններից՝ ներառյալ Գունավոր մարդկանց առաջընթացի ազգային ասոցիացիայից և Արդյունաբերական կազմակերպությունների կոնգրեսից: 1947 թվականի հունվարին հակակոմունիստ լիբերալները ստեղծեցին «Ամերիկացիները ժողովրդավարական գործողությունների համար» (Americans for Democratic Action (ADA)) կազմակերպությունը՝ համատեղելով հասարակական և տնտեսական բարեփոխումները հաստատական հակակոմունիզմի հետ: 1948 թվականի նախագահական ընտրություններում հակակոմունիստ լիբերալներն օգնեցին Թրումենին հաղթելու «Ժողովրդական ճակատի» աջակցությունը վայելող նախկին փոխնախագահ Հենրի Ուոլեսին:

Ամերիկյան ներքին Սառը պատերազմը երկկուսակցական էր, որը սնուցվում էր ծախ-լիբերալների և պահպանողականների համաձայնությամբ ձեռք բերված հակակոմունիստական դաշինքից, որը ներառում էր քաղաքական գործիչների և քաղաքականություն մշակողների, լրագրողների և գիտնականների, գործարարների, քաղաքացիական և կրոնական առաջնորդների, մանկավարժների և արտիստների: Հետաքննությունների դաշնային բյուրոն իր գործը տնօրեն Ջ. Էդգար Հուվերի գլխավորությամբ ակտիվ դերակատարում ուներ կոմունիզմի դեմ ներքաղաքական պայքարում: Հուվերի ՀԴԲ-ն օգնեց խուճապ և հակակոմունիստական կասկածանք առաջացնել՝ աջակցելով բացահայտ քարոզչական ֆիլմերի և հեռուստատեսային շոուների ստեղծմանը, այդ թվում՝ «Կարմիր սպառնալիքը» (The Red Menace 1949), «Իմ որդի Ջոնը» (My Son John 1951) և «Ես վարեցի երեք կյանք» (I Led Three Lives 1953–1956) հեռուստասերիալը: 1950-ականներին լրտեսության և դավաճանության տագնապալի պատկերները կոմունիզմի կողմից վտանգված «ազատ աշխարհում» ուժեղացրին վախի մշակույթը: 1947 թ. աշնանը Հակաամերիկյան գործունեության հանձնաժողովը պայքարի մեջ մտավ Հովիվության հրապարակային լրումներով: Կինոմագնատ Ուոլթ Դիսնեյը և դերասան Ռոնալդ Ռեյգանը, ի թիվս այլոց, ցուցմունքներ էին տալիս՝ օգնելով քննիչներին բացահայտելու կոմունիստական ազդեցությունները ժամանցի արդյունաբերության ոլորտում: Մի խումբ գրողներ, ռեժիսորներ և պրոդյուսերներ, ով-

քեր հրաժարվեցին պատասխանել հարցերին, մեղադրվեցին Կոնգրեսի նկատմամբ արհամարհանքի մեջ: Այս հոլիվուդյան տասնյակը (Hollywood Ten) նախադեպ ստեղծեց «սև ցուցակի» համար, որում ընդգրկված հարյուրավոր կինոարտիստների արգելված էր աշխատել ոլորտում հաջորդ տասնամյակի ընթացքում:

Հակակոմունիստական գաղափարաբանությունն արժևորում էր բացահայտ հայրենասիրությունը, կրոնական համոզմունքը և հավատը կապիտալիզմի նկատմամբ: Նրանք, ովքեր խուսափում էին նման «ամերիկյան արժեքներից», բաց էին հարձակման ենթարկվելու համար: Եթե կոմունիզմը Եվրոպայում և Ասիայում տարածվում էր համավարակի եղանակով, ապա ԱՄՆ-ում չափազանցված հակակոմունիզմն էր վարակել ամբողջ երկիրը: Դրամատուրգ Արթուր Միլլերի՝ 1953 թ. հանրահայտ «Խառնարանը» (The Crucible) պիեսը կարմիր վախը համեմատում էր Սալեմի վիուկների փորձությունների հետ: Համախմբվելով կոմունիզմի դեմ՝ ամերիկյան հասարակությունը պահանջում էր անվերապահ հայրենասիրություն, հավատարմություն, համապատասխանություն և համաձայնություն: «Շեղված» պահվածքը վտանգավոր էր:

Միևնույն ժամանակ, ամերիկյան կրոնը կենտրոնացած էր կոմունիստական աթեիզմի դեմ պայքարի վրա, այն, ինչը 1950 թ. Ուիլինգի իր ելույթում Մաքքարթին անվանում էր «համատարած պայքար կոմունիստական աթեիզմի և քրիստոնեության միջև»: Ըստ այդմ՝ Միացյալ Նահանգներում կրոնական առաջնորդները սովորաբար նշում էին «անաստված կոմունիզմի» և աստվածավախ ամերիկանիզմի հիմնարար անհամատեղելիությունը: Կրոնական պահպանողականները պաշտպանում էին աստվածավախ և ավանդական միջուկային ընտանիքի գաղափարը՝ որպես աթեիստական ամբողջատիրության տարածման պատվար: Ինչպես 1950 թվականին բապտիստ հոգևորական Բիլլի Գրեհեմն էր քարոզում, կոմունիզմը նպատակ ուներ «քանդել ամերիկյան տունը և առաջացնել բարոյական վատթարացում»՝ երկիրը բացելով կոմունիստական ներթափանցման համար:

Սառը պատերազմի մթնոլորտում, հատկապես վաղ տարիներին, երբ ազգային պատկանելության և քաղաքացիության գաղափարները այնքան սերտորեն կապված էին կրոնական հավատարմության հետ, ամերիկացիները հաճախում էին եկեղեցի և ավելի էին ընդգծում կրոնի կարևորությունը իրենց կյանքում, քան Ամերիկայի պատմության ցանկացած այլ ժամանակ: Կրոնականության հրապարակային դրսևորման միջոցով ամերիկացիները փորձում էին տարբերվել աթեիստ կոմունիստներից:

Քաղաքական գործիչները պետական հաստատությունները լրացնում էին կրոնական խորհրդանիշներով: 1954 թվականին ազգային հավատարմության երդումը (Pledge of Allegiance) ևս փոփոխվեց՝ ներառելով «մեկ ազգ Աստծո ներքո» բառերը: 1956 թվականին «Մենք ապավինում ենք Աստծուն» (In God We Trust) արտահայտությունն ընդունվեց որպես պաշտոնական ազգային կարգախոս, որը սկսեց պատկերվել նաև դրաքի վրա:

Սառը պատերազմի այս փուլում ամերիկյան ազգայնականության և կրոնի միջև կապի սերտացմանը զուգահեռ՝ շատ ամերիկացիներ սկսեցին հավատալ, որ գրեթե ցանկացած կրոնի հավատալն ավելի լավ է, քան աթեիստ լինելը: Անցյալում մնաց բողոքականների բացահայտ հակակաթոլիկ և հակասեմական լեզուն: Այժմ առաջնորդները խոսում էին հուդայա-քրիստոնեական ընդհանուր ժառանգության մասին: 1952 թվականի դեկտեմբերին՝ իր երդմնակալությունից մեկ ամիս առաջ, Դուայթ Էյզենհաուերը հայտարարեց, որ «կառավարման մեր ձևն անիմաստ է, քանի դեռ այն հիմնված չէ խորապես զգացված կրոնական հավատքի վրա, և ինձ չի հետաքրքրում, թե դա ինչ հավատք է»:

Այսպես, իռլանդացի կաթոլիկ Ջոզեֆ Մաքքարթին ընդհանուր պայքար էր տանում նշանավոր կրոնական հակակոմունիստների հետ, այդ թվում հարավային ավետարանական Բիլի Ջեյմս Հարգիսի, ով 1950-1960-ականներին հայտնի «Քրիստոնեական խաչակրաց արշավանք» (Christian Crusade) ռադիո- և հեռուստածրագրի հաղորդավարն էր: Սառը պատերազմի կրոնն Ամերիկայում վեր բարձրացավ նաև քաղաքական բաժանումից: 1952 թվականի նախագահական քարոզարշավի ժամանակ Էյզենհաուերը խոսեց ԱՄՆ արտաքին քաղաքականության մասին՝ այն ներկայացնելով որպես «լույսի պատերազմ խավարի դեմ, ազատությունն ընդդեմ ստրկության, աստվածապաշտությունն ընդդեմ աթեիզմի»: Նրա դեմոկրատ հակառակորդը՝ Իլինոյսի նախկին նահանգապետ Ադլայ Սթիվենսոնը, հայտարարեց, որ Ամերիկան պայքարում է «հակաքրիստոսի» դեմ: Բապտիստ Բիլլի Գրեհեմը դարձավ Էյզենհաուերի, ինչպես նաև հանրապետական և դեմոկրատ այլ նախագահների հոգևոր խորհրդականը: Կարևոր դեր ուներ նաև ազատական բողոքական Ռեյնհոլդ Նիբուրը, թերևս երկրի ամենանշանավոր աստվածաբանը, երբ 1948 թ. մարտին նա հայտնվեց «Լայֆ» (Life) ամսագրի շապիկին:

Թեև Թայդինգսի կոմիտեն հրապարակայնորեն հանդիմանեց Մաքքարթին, նա շարունակում էր իր հակակոմունիստական արշավը: 1951 թ. հունիսին Կոնգրեսում Մաքքարթին մեղադրեց պաշտպանության քարտու-

ղար (և նախկին պետքարտուղար) գեներալ Ջորջ Մարշալին: Նա պնդում էր, որ Մարշալը՝ պատերազմի հերոսը, օգնել է «թուլացնելու Միացյալ Նահանգներին համաշխարհային գործերում»՝ թույլ տալով ԱՄՆ-ին «դառնալ խորհրդային ինտրիգների և ռուսական ռազմական հզորության զոհ»: Ելույթը մեծ աղմուկ բարձրացրեց: 1952 թվականի քարոզարշավի ժամանակ Էյզենհաուերը, ով ամեն ինչում չափավոր էր և քաղաքականապես զգույշ, հրաժարվեց հրապարակայնորեն դատապարտել Մաքքարթիին: Քանզի Մաքքարթին քարոզարշավ էր իրականացնում Էյզենհաուերի օգտին: Էյզենհաուերն ընտրվեց նախագահ, իսկ հանրապետականները մեծամասնություն կազմեցին Կոնգրեսում: Մաքքարթին դարձավ Սենատի հետաքննությունների մշտական ենթահանձնաժողովի նախագահը: Նա իր իշխանությունն ուղղեց կառավարական արտասահմանյան ռադիոհեռարձակման ստորաբաժանման՝ «Ամերիկայի ձայնի» (Voice of America (VOA)) դեմ: 1953 թվականի փետրվար-մարտին Մաքքարթիի հետաքննությունը հանգեցրեց մի քանի պաշտոնանկությունների: Մաքքարթիի գործունեությունն ավելի ու ավելի անզուսպ էր դառնում: Շուտով նա սկսեց հետաքննել ԱՄՆ բանակը: Իր անդադար մեղադրանքներով նա ստիպեց բանակին կրկին հերքել Նյու Ջերսիի Ֆորտ Մոնմութում խորհրդային լրտեսական օղակի մասին տեսությունները: Այնուհետև Մաքքարթին հրապարակայնորեն նախատեց սպաներին, ովքեր կասկածվում էին ձախականների աջակցելու մեջ:

1953 թ. մարտի 9-ին *Սի-Բի-Էս*-ի (CBS) հաղորդավար և հարգված լրագրող Էդվարդ Ռ. Մարրուն իր հեռուստալսարանին հայտարարեց, որ Մաքքարթիի գործողությունները «տազնապ ու անհանգստություն են առաջացրել արտերկրի դաշնակիցների շրջանում» և բխում են ԱՄՆ-ի թշնամիների շահերից: 1954 թ. Բանակ-Մաքքարթիի (Army-McCarthy) 36-օրյա աղմկահարույց լսումների ընթացքում Մաքքարթիին հակադրվեց Բանակի գլխավոր խորհրդական Ջոզեֆ Ուելչը՝ պաշտպանեով իր ծառայակիցներին հրապարակային զրպարտություններից: Սա շրջադարձային պահ էր: Սեպտեմբերին Սենատի ենթահանձնաժողովը խորհուրդ տվեց հրապարակային պարսավանքի ենթարկել Մաքքարթիին: 1954 թ. դեկտեմբերի 2-ին նրա գործընկերները կողմ քվեարկեցին «դատապարտելու» նրա գործողությունները: Նվաստացած Մաքքարթին մխիթարանք փնտրեց ակրոհոլի մեջ և մահացավ 1957 թ. մայիսին 48 տարեկան հասկում:

1953 թվականին Ստալինի մահը, որին հաջորդեց Կորեական պատերազմի զինադադարը, նոր հույսեր արթնացրին Սառը պատերազմի լար-

վածության թուլացման համար: Լարվածության լիցքաթափումը (Détente) և 1960-ական թվականների ցնցումները դեռևս առջևում էին, սակայն մաքքարթիզմը շարունակվեց նաև Մաքքարթից հետո: «Կարմիր խայծը»՝ քաղաքական հակառակորդներին կոմունիզմի հետ կապելու և արատավորելու մարտավարությունը, շարունակվեց: Կոնգրեսական Ռիչարդ Նիքսոնն օգտագործեց իր դիրքը Հակաամերիկյան գործունեության հանձնաժողովում Ալջեր Հիսսի դեմ արշավում՝ Սպիտակ տանը Էյզենհաուերի կողքին իբրև փոխնախագահ հայտնվելու համար, իսկ ավելի ուշ՝ իբրև նախագահ: Իսկ դերասան Ռոնալդ Ռեյգանը բազմապատկեց իր հովիվության համբավը Կոնգրեսում իր վկայությամբ և ամերիկյան խոշոր կորպորացիաների համար (ինչպիսին էր, օրինակ, «Ջեներալ էլեկտրիկը») իր հակակոմունիստական աշխատանքով: Նա նույնպես օգտագործեց հակակոմունիզմը դեպի Սպիտակ տուն իր նախագահական ուղին հարթելու համար:

1958 թվականին արմատական հակակոմունիստները հիմնեցին Ջոն Բիրքի միությունը՝ թիրախավորելով ազատականներին և քաղաքացիական իրավունքների ակտիվիստներին, այդ թվում Մարտին Լյութեր Քինգ կրտսերին: Չնայած կազմակերպությանը միացան Սառը պատերազմի ազատականները՝ հակակոմունիզմի կշիռն օգտագործվեց նաև «Նոր համաձայնության» և նրա պաշտպանների դեմ հարձակման համար: Թիրախավորվեցին նույնիսկ այն լիբերալները, որոնք պայքարում էին կոմունիզմի դեմ, ինչպիսին էր պատմաբան Արթուր Շլեզինգերը: Հակակոմունիզմը փլուզել էր ամերիկյան ծախսական ավանդույթը: Սոցիալական արդարության համար շարժումները՝ քաղաքացիական իրավունքներից մինչև ֆեմինիզմ, բոլորը ճնշվեցին Սառը պատերազմի համակեցական համաձայնության և համապատասխանության ներքո:

Ապագադրությամբ և «Ամերիկյան դարի» համաշխարհային հասանելիությունը

1941 թվականին «Լայֆ» ամսագրի «Ամերիկյան դար» (“The American Century”) վերնագրով ազդեցիկ խմբագրականում հրատարակչական մագնատ Հենրի Լյուսը ուրվագծեց իր «Ամերիկայի տեսլականը՝ իբրև ծովերի ազատության գլխավոր երաշխավոր» և «համաշխարհային առևտրի եռանդուն առաջնորդ»: Գովերգելով ԱՄՆ-ի գլխավորած միջազգային համակարգը՝ պահպանողական Լյուսին միացան ազատականները, այդ թվում՝ պատմաբան Արթուր Շլեզինգերը, ով 1949 թվականի իր «Կեն-

սական կենտրոն» (The Vital Center) գրքում հայտարարում էր, որ «համաշխարհային ճակատագիրը» «վատահվել» է Միացյալ Նահանգներին: Պատերազմից դուրս գալով որպես աշխարհի առաջնակարգ ռազմական և տնտեսական գերտերություն՝ Միացյալ Նահանգներին վիճակված էր մրցակցել Խորհրդային Միության հետ Երրորդ աշխարհում ազդեցության համար, որտեղ ուժային վակուում էր ստեղծվել եվրոպական գաղութային կայսրությունների փլուզման հետևանքով: Այդուհանդերձ, Ֆրանսիան և Մեծ Բրիտանիան դեռ պայքարում էին Ասիայում, Մերձավոր Արևելքում և Հյուսիսային Աֆրիկայում գաղութները վերահսկելու համար: Մինչդեռ Միացյալ Նահանգները պատասխանատվություն ստանձնեց աշխարհում կարգուկանոնի պահպանման և «ամերիկյան խաղաղության» (Pax-Americana) հաստատման համար: Այնուամենայնիվ, հետպատերազմյան աշխարհի միայն մի մասն էր խաղաղ լինելու:

Հիմնվելով ԱԱԽ-68-ի և հաստատված ռազմականացված զսպման ամերիկյան ռազմավարության տրամաբանության վրա՝ ռազմական ներխուժումները Կորեայում և Վիետնամում դիտվում էին որպես ամերիկյան համապատասխան արձագանք Չինաստանում կոմունիզմի վերելքին: Եթե Ասիայում չդադարեցվեր խորհրդային գերիշխանությունը, Չինաստանի ազդեցությունը կտարածվեր ամբողջ մայրցամաքում, և երկրները մեկը մյուսի հետևից կհայտնվեին կոմունիզմի ներքո: Դոմինոյի տեսությունը (Domino Theory) դարձավ համահարթ հիմք աշխարհի ցանկացած տարածաշրջանում ԱՄՆ-ի միջամտությունների հիմնավորման համար: Ըստ այդմ՝ Կուբան դիտվում էր կոմունիստական հենակետ, որը վտանգում է Լատինական Ամերիկան, Կարիբյան ավազանը և, ի վերջո, Միացյալ Նահանգները: Ինչպես Հո Շի Մինը, Կուբայի առաջնորդ Ֆիդել Կաստրոն հեղափոխական ազգայնական էր, որի կոմունիստական գործունեությունը լրջորեն սկսվեց միայն այն բանից հետո, երբ նրա իշխանությունը հակահարված ստացավ Միացյալ Նահանգների կողմից: Ամերիկյան ներխուժումներ կամ միջամտություններ էին իրականացվում նաև այնպիսի երկրներում, որոնք չունեին պաշտոնական կոմունիստական դիրքորոշումներ:

Ավանդաբար, նախկինում Միացյալ Նահանգները յուրաքանչյուր խոշոր հակամարտությունից հետո ապամոնտաժում էր իր բանակը: Սակայն Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Սառը պատերազմը նպաստեց նոր, մշտական, հսկայական պաշտպանական հաստատության կազմակերպմանը: ԱՄՆ ազգային պաշտպանության ոլորտում դաշնային ներդրումներն ազդեցին ողջ երկրի վրա: Ինչպես 1956 թ. ընկերաբան

Ք. Ռայթ Միլսն էր անվանում, երկրի տարբեր շրջաններում տեղակայված էին «մշտական պատերազմական տնտեսության» (“permanent war economy”) տարբեր ոլորտներ: Օդատիեզերական արդյունաբերությունը կենտրոնացած էր այնպիսի տարածքներում, ինչպիսիք էին Հարավային Կալիֆոռնիան և Նյու Յորքի Լոնգ Այլենդը, Մասսաչուսեթսում գտնվող մի քանի համալսարաններ ստացել էին հիմնական պաշտպանական պատվերները, իսկ Միջին Արևմուտքը դարձել էր դեպի Խորհրդային Միություն ուղղված միջնայրցամաքային բալիստիկ հրթիռների հիմնական բազան: Պաշտպանական խոշորագույն ընկերություններից և ռազմական կառույցներից շատերը կենտրոնացած էին Հարավում: Ինչպես 1956 թվականին նշանավոր գրող Ուիլյամ Ֆոլքներն էր բնորոշում Հարավը. «Մեր տնտեսությունը դաշնային կառավարությունն է»:

Այնուամենայնիվ, արմատացած պատերազմական տնտեսության ամենահայտնի քննադատությունը եկավ անհավանական աղբյուրից: 1961 թվականի հունվարին ամերիկյան ժողովրդին ուղղված իր հրաժեշտի ուղերձում նախագահ Էյզենհաուերը զգուշացնում էր «հսկայածավալ սպառազինությունների մշտական արդյունաբերության» ազդեցության վերաբերյալ, որը կարող էր սպառնալ ամերիկյան «ազատություններին» և «ժողովրդավարական գործընթացներին»: Քանզի «հսկայական ռազմական հաստատության» համակցումն ահռելի «ռազմարդյունաբերական համալիրի» հետ առաջացնում էր «ամբողջակալ ազդեցություն» երկրի տնտեսական, քաղաքական, նույնիսկ հոգևոր և այլ ոլորտներում: Վտանգը, ըստ Էյզենհաուերի, այդ ամենի ծանր հետևանքները չհասկանալն էր: Էյզենհաուերի ձևակերպման մեջ «ռազմարդյունաբերական համալիրը» վերաբերում էր հատկապես զենք արտադրողների, Կոնգրեսի անդամների և պաշտպանության քարտուղարության ներքին կապերին: Այնուամենայնիվ, կորպորացիաների, քաղաքական գործիչների և զինվորականների միջև նոր դաշինքը կախված էր իրական հակամարտությունների գոյությունից, առանց որի վերջնական ֆինանսական շահ չէր կարող լինել: Քննադատների կարծիքով՝ երկրի ներսում ռազմարդյունաբերական գործընկերություններն այժմ կապված էին արտասահմանում ԱՄՆ շահերի հետ: Ամերիկյան արտաքին քաղաքականությունը պետք է ապահովեր արտաքին շուկաները և բարենպաստ պայմաններ ամերիկյան առևտրի համար ամբողջ աշխարհում: Եվ այսպես, Միացյալ Նահանգներն իբրև արևմտյան գերտերություն այժմ ավելի սերտորեն էր ներգրավված համաշխարհային գործերին, քան երբևէ:

Գաղափարաբանական հակամարտությունները, ազատագրական

շարժումներն ու անկախությունների շքերթը պատեցին հետպատերազմյան աշխարհը: Ավելի քան 80 երկրներ անկախություն ձեռք բերեցին՝ առաջին հերթին Եվրոպական գաղութային կայսրություններից: Համաշխարհային քաղաքականության տիրույթում արդեն կենտրոնական տեղ զբաղեցնող Միացյալ Նահանգները բարդ և հաճախ հակասական դերակատարում ունեցավ «ապագաղութացման» այս գործընթացներում: 1945 թվականից հետո Միացյալ Նահանգների ռազմական ընդլայնման լայնածավալ շրջանակը եզակի էր երկրի պատմության մեջ: Հետպատերազմյան աշխարհում ամերիկյան առաջնորդները եռանդով ձեռնամուխ եղան նոր մշտական ռազմական ներկայության պահպանմանը և կենսունակ միջազգային հաստատությունների ստեղծմանը:

Դեռևս 1941 թվականին նախագահ Ռուզվելտը Մեծ Բրիտանիայի վարչապետ Ուինսթոն Չերչիլին ուղղված իր խոսքում ասել էր, որ դժվար է պատկերացնել «պատերազմը ֆաշիստական ստրկության դեմ և, միևնույն ժամանակ, չաշխատել ամբողջ աշխարհում ժողովուրդներին ազատելու հետադիմական գաղութատիրական քաղաքականությունից»: Հետևաբար, հետպատերազմյան ամերիկյան արտաքին քաղաքականության առաջնորդները պայքարում էին ապագաղութացմանն աջակցությունը հավասարակշռելու այն իրականության հետ, որում ազգային անկախության շարժումները հաճախ սպառնալիք էին դառնում Ամերիկայի համաշխարհային շահերին:

Ամերիկյան ռազմավարությունն ուղղված էր նաև զսպելու խորհրդային ազդեցության և կոմունիզմի գաղափարաբանության համընդհանուր տարածումը: Արտաքին քաղաքականություն մշակողներն ու իրականացնողներն ավելի էին ընդդիմանում բոլոր այն ապստամբություններին կամ անկախության շարժումներին, որոնք կարող էին որևէ կերպ կապված լինել միջազգային կոմունիզմի հետ: Խորհրդային Միությունը նույնպես փորձում էր շրջել աշխարհը դեպի պատմության իր կողմը: Ստալինը և նրա հաջորդները առաջ էին քաշել օրակարգ, որը ներառում էր ոչ միայն Արևելյան և Կենտրոնական Եվրոպայում խորհրդային արբանյակ պետությունների ստեղծումը, այլ նաև ամենուր ձախակողմյան ազատագրական շարժումների աջակցությունը, հատկապես, երբ նրանք ունեին հակամերիկյան տրամադրություններ: Արդյունքում, Ամերիկայի Միացյալ Նահանգները և Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը Երրորդ աշխարհում ներգրավվեցին բազմաթիվ պրոքսի (միջնորդավորված) պատերազմների մեջ:

Ամերիկյան գերիշխանության ճարտարապետները կարծում էին, որ

հաջող ապագաղութացումը կարող է ցույց տալ դեմոկրատիայի և կապիտալիզմի գերազանցությունը մրցակից խորհրդային հարացույցների նկատմամբ: Նրանց նպատակը, ըստ էության, համաշխարհային գերիշխանության (hegemony) ոչ պաշտոնական համակարգի զարգացումն էր, որը հնարավորինս շատ հիմնված կլիներ համաձայնության և ոչ թե հարկադրանքի վրա: Սակայն եվրոպական տերությունները դեռևս պաշտպանում էին իրենց գաղութային կայսրությունները, և ամերիկացի պաշտոնյաները վախենում էին, որ հակագաղութային դիմադրությունը հեղափոխություններ կառաջացնի և ազգայնականներին կմղի դեպի խորհրդային ազդեցության ոլորտ: Եվ նման շարժումների պայմաններում ամերիկյան քաղաքականությունը հաճախ նախընտրում էր դաշինքները եվրոպական գաղութատիրական վարչակարգերի հետ՝ օտարելով Ասիայի և Աֆրիկայի ազգայնական առաջնորդներին:

Ամերիկյան գերիշխանության ճարտարապետները ձգտում էին ապագաղութացվող երկրների քաղաքացիներին գրավել Միացյալ Նահանգների կողմը: 1948 թվականին Կոնգրեսն ընդունեց Սմիթ-Մունդտի օրենքը (Smith-Mundt Act)՝ «խթանելու Միացյալ Նահանգների ավելի լավ ըմբռնումը այլ երկրներում»: Օրենսդրությունը մշակութային փոխանակումներ էր հաստատում տարբեր երկրների, այդ թվում նույնիսկ ԽՍՀՄ-ի հետ, որպեսզի ցուցադրեր ամերիկյան արժեքները ամերիկացի արվեստագետների և ժամանցի արդյունաբերության ոլորտի մարդկանց միջոցով: ԽՍՀՄ-ը նույնն արեց այսպես կոչված միջազգային խաղաղության առաջխաղացման ծրագրերի միջոցով, որը, շատերի կարծիքով, ավելի հաջող էր, քան ամերիկյան արշավը: Թեև ԱՄՆ պաշտոնյաները նույնպես հաջողություններ արձանագրեցին տարբեր բացահայտ և քողարկված ծրագրերի նախաձեռնման միջոցով, նրանք դեռևս ընկալում էին, որ իրենք ետ են մնում Խորհրդային Միությունից «սրտերի և մտքերի համար պատերազմում»: Բայց երբ Երրորդ աշխարհի մեծ մասում խռովություններ բորբոքվեցին, ամերիկացի պաշտոնյաները դժվարին ընտրության առջև կանգնեցին:

Մինչ ԱՄՆ-ում աֆրոամերիկացիները պայքարում էին արդարության համար, ամերիկյան հայտնի սևամորթ արմատականները, այդ թվում՝ Մալքոլմ Իքսը, Փոլ Ռոբեսոնը և տարեց Դյու Բոյս Դյուբուան, համերաշխություն հայտնեցին համաշխարհային հակագաղութային շարժմանը՝ պնդելով, որ Միացյալ Նահանգները ժառանգել է եվրոպական ռասիստական կայսերական ավանդույթը: Խորհրդային Միության կողմնակիցներն իրենց ջանքերը գործադրեցին պայքարող երկրներին համոզելու, որ մարքս-լենինյան ուսմունքն առաջարկում է գաղութային գերությունից

իրենց ազատագրման ճանապարհային քարտեզը: Ավելին, ԽՍՀՄ քարոզչությունը իբրև ամերիկյան կեղծավորության օրինակ էր մատնանշում ամերիկյան Հարավի անարդարությունները. ինչպես կարող էր Միացյալ Նահանգները հայտարարել, որ «ազատ աշխարհի» առաջնորդն է և պայքարում է համաշխարհային ազատության համար, երբ հրաժարվում էր երաշխավորել սեփական քաղաքացիների ազատությունները: Այսպիսով, Սառը պատերազմը կապակցեց աֆրոամերիկացիների քաղաքացիական իրավունքների պայքարը, Երրորդ աշխարհը և համաշխարհային Սառը պատերազմը:

Ամփոփենք: 1987 թվականի հունիսին ԱՄՆ նախագահ Ռոնալդ Ռեյգանը կանգնեց Բեռլինի պատի մոտ և ԽՍՀՄ առաջնորդ Միխայիլ Գորբաչովից պահանջեց. «Պարոն Գորբաչով, քանդե՛ք այս պատը»: Երկու տարի անց, 1989 թվականի նոյեմբերին ընթացող քաղաքացիական անհնազանդությունների համապատկերում, Արևելյան Գերմանիայի իշխանությունները հայտարարեցին, որ իրենց քաղաքացիները կարող են ազատ ճանապարհորդել դեպի Արևմտյան Բեռլին և վերադառնալ: Բետոնե վարագույրը՝ Բեռլինի պատը, քանդվեց, և Արևելյան Բեռլինը բացվեց աշխարհի առաջ: Ի վերջո, 1990 թ. հոկտեմբերի 3-ին գերմանացի ազգը վերամիավորվեց: 1991 թվականի հուլիսին Վարշավյան դաշինքը փլուզվեց, և այդ տարվա դեկտեմբերի 25-ին Խորհրդային Միությունը պաշտոնապես լուծարվեց: Սառը պատերազմը փոխակերպեց Ամերիկայի համաշխարհային դերը և ամերիկյան պատմությունը մղեց դեպի նոր աշխարհակարգ:

ԳԼՈՒԽ 19

Առատության հասարակությունը և քաղաքացիական իրավունքների ժամանակաշրջանը

XX դարի 50-60-ական թվականները ամերիկյան պատմության մեջ անզուգական տնտեսական բարգավաճման և քաղաքացիական իրավունքների շարժման ժամանակաշրջան էր: Ժամանակաշրջանը նաև լի էր հակասություններով և ողբերգություններով. առատության հասարակությունից մինչև ներքաղաքական վայրիվերումներ ու քաղաքացիական հուզումներ և քաղաքական սպանություններ, Կարիբյան միջուկային ճգնաժամից մինչև Վիետնամի պատերազմ:

1958 թվականին Հարվարդի համալսարանի տնտեսագետ և հանրահայտ մտավորական Ջոն Քենեթ Գելբրեյթը հրատարակեց «Առատության հասարակություն» (The Affluent Society) աշխատությունը, որը ներկայացնում էր Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Ամերիկայի նոր սպառողական տնտեսության և քաղաքական մշակույթի վերլուծությունը: Նշելով ամերիկյան տնտեսական աճի անզուգական հարստությունները՝ այն քննադատում էր տնտեսության հիմքում ընկած կառուցվածքները, որոնք միտված էին միայն արտադրության ավելացմանն ու ապրանքների սպառմանը: Գելբրեյթը պնդում էր, որ ԱՄՆ-ի տնտեսությունը, որը հիմնված էր շքեղության ապրանքների գրեթե հեղոնիստական սպառման վրա, անխուսափելիորեն կհանգեցնի տնտեսական անհավասարության, քանզի մասնավոր հատվածը հարստանում է ամերիկյան հանրության հաշվին: Գելբրեյթը նախազգուշացրեց, որ տնտեսությունը, որտեղ «ցանկություններն ավելի ու ավելի են ստեղծվում այն գործընթացով, որով նրանք բավարարվում են», անհիմն է, անկայուն և, ի վերջո, անբարոյական:

Այսպիսով, Առատության հասարակության հակասությունները սահմանեցին 1950-ականները: Հաջորդող բուռն 1960-ականները գաղափարաբանական, հասարակական, մշակութային և քաղաքական վայրիվերումներով լի պայքարի և հիասթափության տասնամյակ էին:

Արվարձանների վերելքը

«Արվարձանային ազգի» ձևավորման հիմքերը դրվել էին Ֆ. Դ. Ռուզվելտի «Նոր համաձայնության» ծրագրերով: 1932 թվականին՝ Մեծ ճգնաժամի գագաթնակետին, մոտ 250,000 տնային տնտեսություններ

կորցրին իրենց ունեցվածքը բռնագրավումների պատճառով: Ի պատասխան՝ Ռուզվելտի «Նոր համաձայնության» նախաձեռնությամբ ստեղծվեց Տների սեփականատերերի վարկային միավորումը (Home Owners' Loan Corporation (HOLC)), որը սկսեց գնել և վերաֆինանսավորել առկա հիփոթեքային վարկերը: Թեև այս նոր համակարգի ներքո տների սեփականատերերն ավելի շատ էին վճարում դրանց համար, բայց սեփականության իրավունքը բաց էր այն մարդկանց համար, ովքեր կարող էին ձեռք բերել տուն՝ ցածր ամսական վճարումներ կատարելով, քանզի հիփոթեքային վարկերի մարման ժամանակահատվածը երկարաձգվել էր մինչև 15 տարի: Բացի այդ, Դաշնային բնակարանային վարչությունը (Federal Housing Administration (FHA)) մեծացրել էր բնակարանների սեփականության հասանելիությունը՝ ապահովագրելով հիփոթեքը և պաշտպանելով վարկատուներին ֆինանսական կորուստներից դեֆոլտի պարագայում: Վարկատուները, սակայն, պետք է համաձայնեին առաջարկել ցածր տոկոսադրույքներ և երկար ժամկետներ՝ մինչև 20-30 տարի: Այս եղանակով ավելի շատ սպառողներ կարող էին առանձնատներ ձեռք բերել: 1964 թվականին վարկառուների ավելի քան մեկ երրորդն ուներ Դաշնային բնակարանային վարչության կողմից ապահովագրված հիփոթեքային վարկեր: Դաշնային կառավարության այսպիսի խթանիչ ծրագրերն ու սուբսիդիաները նպաստեցին բնակարանների ու առանձնատների սեփականատիրության աճին և արվարձանների վերելքին:

Դաշնային կառավարության ծախսերը Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում ԱՄՆ-ին դուրս բերեցին Մեծ ճգնաժամի հորձանուտից և նպաստեցին տնտեսական բարգավաճմանը, որը պահպանվելու էր նաև պատերազմից հետո շարունակական պետական ծախսերով: Պետական հոգաձուլությամբ պայմանավորված՝ վարկեր էին տրամադրվում վետերաններին, սուբսիդավորվում էին կորպորատիվ հետազոտությունները և զարգացման ծրագրերը, կառուցվում էր միջնահանգային մայրուղիների համակարգը: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո տասնամյակների ընթացքում գործարարությունը վերելք ապրեց՝ սկսվեց ամերիկյան կապիտալիզմի «Ոսկե ժամանակաշրջանը» (“Golden Age”): Վերելք ապրեցին նաև արհմիությունները, աշխատավարձերը բարձրացան և կայուն աճը խթանեց սպառողական նոր տնտեսությունը:

1944 թվականին ընդունված «Զինծառայողների վերահարմարեցման օրենքը»՝ *Ջի. Այ. Բիլլ* (G.I. Bill), առաջարկում էր ցածր տոկոսադրույքով բնակարանային վարկեր, կրթաթոշակներ, բիզնես վարկեր և գործազրկության նպաստներ: Առանձնատների սեփականատիրության արագ աճը և,

համապատասխանաբար, արվարձանային համայնքների աճը նպաստեցին հետպատերազմյան տնտեսական բարգավաճմանը: Ամերիկյան քաղաքների ծայրամասերում նախագծվեցին և ստեղծվեցին առանձնատների ընդարձակ թաղամասեր: Երկրի քաղաքամերձ բնակչության մասնաբաժինը 1940 թվականի 19,5 տոկոսից մինչև 1960 թվականը հասավ 30,7 տոկոսի: Առանձնատների սեփականատիրության մակարդակը 1940 թվականի 44 տոկոսից 1960 թվականին հասավ շուրջ 62 տոկոսի: 1950-1970 թթ. երկրի արվարձանային բնակչությունը գրեթե կրկնապատկվեց՝ հասնելով 74 միլիոնի:

Հետպատերազմյան շինարարական բարգավաճումը սնեց նաև բազմաթիվ այլ ճյուղեր: Աճող աշխատավարձերի և պատերազմի ժամանակ խնայողությունների շնորհիվ տների սեփականատերերը գնում էին սպառողական նոր ապրանքներ միանգամյա վճարումով կամ ապառիկ՝ խոշոր գնումներ կատարելու համար տարիներ խնայելու փոխարեն: 1950 թվականից թողարկվող վարկային քարտերը ավելի մեծացրեցին վարկերի հասանելիությունը: Սպառողները գնում էին անհամար ավտոմեքենաներ, լվացքի մեքենաներ, չորանոցներ, սառնարաններ, սառցարաններ և հեռուստացույցներ՝ խթանելով արդյունաբերությունը: Եթե 1950 թվականին առնվազն մեկ հեռուստացույց ուներ ամերիկացիների 12 տոկոսը, ապա 1960 թվականին՝ ավելի քան 87 տոկոսը: Արվարձանային այս նոր կենսակերպը նաև հանգեցրեց ավտոմեքենաների պահանջարկի աճին: Եթե 1948 թվականին ավտոմեքենաներ ունեցող ամերիկյան ընտանիքները կազմում էին ընդհանուրի 54 տոկոսը, ապա 1959 թվականին՝ 74 տոկոսը:

Արտաքուստ, հետպատերազմյան տնտեսական բարգավաճումը Ամերիկյան վերածեց առատության երկրի: Լավ վարձատրվող աշխատատեղերն առատ էին, գնորդների համար՝ վարկերը հասանելի, իսկ սպառողական ապրանքների գները՝ առավել մատչելի, քան երբևէ: Մեկ ընտանիքի համար նախատեսված առանձնատները երբևէ այդքան հասանելի չէին եղել: Սակայն համախառն թվերի տակ պահպանվում էին ռասայական անհավասարությունն ու խտրականությունը և տնտեսական անհավասարությունը՝ խաթարելով առատության հասարակության շատ ենթադրություններ:

Դաշնային կազմակերպությունների և մասնավոր բանկերի, վարկատուների և անշարժ գույքի գործակալների փոխհարաբերությունները արտացոլում էին համահարթ քաղաքականություն, որը ստեղծեց տարանջատված բնակարանային շուկա: Ըստ նրանց ընդհանուր պատկերացումների՝ խառը ռասայական և փոքրամասնություններով բնակեցված

թաղամասերը վարկային ռիսկեր էին պարունակում: Համագործակցելով տեղական վարկատուների և անշարժ գույքի գործակալների հետ՝ Տների սեփականատերերի վարկային միավորումը ստեղծեց բնակելի համալիրների անվտանգության քարտեզներ՝ բացահայտելու բարձր և ցածր ռիսկային վարկավորման շրջանները: Տեղական անշարժ գույքի շուկային ծանոթ մարդիկ միանման հարցաթերթեր էին լրացնում յուրաքանչյուր թաղամասում: Հենվելով այս տեղեկատվության վրա՝ միավորումը յուրաքանչյուր թաղամասին հատկացնում էր A-ից D տառերով սահմանված գնահատական և համապատասխան գունային ծածկագիր: Վարկերի համար ամենաքիչ ապահով և ամենաբարձր ռիսկային թաղամասերը ստանում էին D գնահատական և կարմիր գույն: «Կարմիրով գծանշված» նման թաղամասերում բանկերը սահմանափակեցին հիփոթեքային վարկերը: Կարմիրով նշված տարածքներում «վնասակար ռասայական տարրերի» և «ռասայական վտանգների» մասին արտահայտությունները կիրառվում էին ոլորտի պաշտոնական փաստաթղթերում և անվտանգության քարտեզներում:

Այնուամենայնիվ, դաշնային ծրագրերով միլիոնավոր ամերիկացիներ ստացան հիփոթեքային վարկեր: Սակայն Դաշնային բնակարանային վարչության կողմից ապահովված հիփոթեքային վարկերը հասանելի չէին բոլորին: Ռասայական փոքրամասնությունները չէին կարող վարկեր ստանալ սեփական թաղամասերում գույքի բարելավման համար, նրանց մերժում էին նաև հիփոթեքային վարկեր տրամադրել այլ տարածքներում գույք ձեռք բերելու համար՝ վախենալով, որ իրենց ներկայությունը կընդլայնի «կարմիրով գծանշված» գոտին նոր համայնքում՝ ազդելով անշարժ գույքի գների և գրավչության վրա: Լևիտթաուններում՝ Ամերիկայի նոր արվարձաններում, պաստառները միայն սպիտակամորթներին էին թույլ տալիս առանձնատներ գնել: Այսպիսով, Դաշնային բնակարանային վարչության քաղաքականությունը և մասնավոր ձեռնարկումները մեծացրին առանձնատների սեփականությունը և կայունությունը սպիտակամորթ ամերիկացիների համար՝ միաժամանակ ստեղծելով և պարտադրելով ռասայական տարանջատումը:

Հետպատերազմյան տնտեսության բացառող կառույցները առաջ բերեցին աֆրոամերիկացիների և բացառված այլ փոքրամասնությունների բողոքը: Արդար բնակարանը, հավասար զբաղվածությունը, սպառողական հասանելիությունը և կրթական հնարավորությունները առաջնահերթ էին դարձել քաղաքացիական իրավունքների պաշտպանության շարժումների համար: 1948 թվականին ԱՄՆ Գերագույն դատարանը պաշտպա-

նեց աֆրոամերիկացի հայցվորներին և *Շելլին ընդդեմ Քրեյմերի* գործով (Shelley v. Kraemer) հայտարարեց, որ ռասայականորեն սահմանափակող թաղամասերի բնակարանային պայմանագրերը, որոնք արգելում էին տների վաճառքը ռասայական փոքրամասնություններին, օրինականորեն անիրագործելի էին: Այնուամենայնիվ, խտրականությունն ու տարանջատումը շարունակվեցին, և ակտիվիստները շարունակեցին պահանջել արդար և ազատ բնակարանային շուկա:

1950-1960-ականներին ամերիկյան շատ ընտանիքներ հաստատվեցին արվարձաններում՝ վայելելու նոր սպառողական տնտեսությունը և գտնելու որոշակի նորմալություն և անվտանգություն ճգնաժամի ու պատերազմի անկայունությունից հետո: Հետպատերազմյան ամերիկյան հասարակության և արվարձանների բարգավաճումը ոչ միայն սրեց ռասայական և դասակարգային անհավասարությունները, այլ նաև բնապահպանական մեծ ճգնաժամ առաջացրեց: Զանգվածային արտադրության տեխնիկայի կիրառումը բնապահպանական խնդիրների պատճառ դարձավ: Շինարարության նորարարական ռազմավարությունները, պետական խթանները, սպառողների բարձր պահանջարկը և էներգիայի ցածր գները կառուցապատողներին հեռացրեցին ավելի կայուն, էներգախնայող շինարարական նախագծերից: Գյուղատնտեսության ոլորտում և կենցաղային միջավայրերում լայնորեն օգտագործվում էին թունաքիմիկատներ: Այնուամենայնիվ, ամերիկացիներից շատերը, ովքեր միացել էին 1950-1960-ականների վաղ բնապահպանական շարժումներին, հազվադեպ էին կասկածի տակ դնում արվարձանային կենսակերպի հիմքերը: Ամերիկացիներն ավելի ու ավելի էին ապավինում ավտոմեքենաներին և իդեալականացնում էին ամերիկյան երազանքը՝ առանձին ընտանիքների առանձնատների արվարձանային կենսակերպը, ինչը բթացնում էր հողի և էներգիայի գերօգտագործման օրինաչափությունները փոխելու ցանկացած լուրջ ճնշում:

Առատության հասարակության մշակույթը

Առատության հասարակության Ամերիկայի սպառողական տնտեսությունը վերափոխեց ամերիկյան մշակույթը և ինքնությունը՝ բերելով նոր փորձառություններ, նոր ուղիներ ու միմյանց ըմբռնելու և փոխազդելու նոր միջոցներ: Հեռուստատեսությունն այս վերափոխման առանցքային խթաններից էր: Հեռուստատեսությունը ամերիկյան հանրությանը ներկայացվեց 1939 թվականին՝ Նյու Յորքի համաշխարհային ցուցահանդես-

տում, սակայն տեղեկատվական այս նոր միջոցի առևտրայնացումը Միացյալ Նահանգներում ընթացավ պատերազմի տարիներին, իսկ կանոնավոր լայնածավալ հեռարձակումը հանրությանը հասանելի դարձավ 1947 թվականին: 1948-1955 թվականներին երկրի տնային տնտեսությունների մոտ երկու երրորդը հեռուստացույց գնեց: Արդեն 1950-ականների վերջերին հեռուստացույց ուներ ամերիկյան ընտանիքների շուրջ 90 տոկոսը:

Ռադիոալիքների միջոցով պատկերներ և ձայն փոխանցելու տեխնոլոգիական նորարարությունը ծնեց հեռուստատեսությունը: Ռադիոհեռարձակող խոշոր ընկերությունները՝ *Էն-Բի-Սի-ն* (NBC), *Սի-Բի-Էս-ը* (CBS) և *Էյ-Բի-Սի-ն*՝ Ամերիկյան հեռարձակող միավորումը (American Broadcasting Corporation (ABC)), օգտագործեցին իրենց տեխնիկական փորձը և կապիտալի պահուստները՝ եթերը նվաճելու համար: Վաղ հեռուստատեսային ծրագրերից շատերը հայտնի ռադիոէստրադային և կատակերգական հաղորդումների հարմարեցումներն էին: Ձայնագրման ծախսերի և դժվարությունների պատճառով հաղորդումների մեծ մասը հեռարձակվում էր ուղիղ եթերում: Եվ քանզի լսարանն ուներ սահմանափակ թվով ալիքներ, որոնցից կարող էին ընտրել, դիտումների և տեղեկատվության փորձառությունը լայնորեն ընդհանուր էր: Ալիքների և հաղորդումների սահմանափակ թիվը նշանակում էր, որ ցանցերն ընտրում էին այնպիսի հաղորդումներ, որոնք գրավում էին հեռուստադիտողների հնարավորինս լայն լսարան և, հետևաբար, ներգրավում գովազդատուներին՝ հեռուստատեսության եկամուտների ամենամեծ աղբյուրներին: Հնարավորինս շատ հեռուստադիտողներ ներգրավելու անհրաժեշտությունը նպաստեց ընտանեկան հաղորդումների թողարկմանը: Այնպիսի ծրագրերը, ինչպիսիք էին «Հայրիկն ավելի լավ գիտի» (Father Knows Best) և «Թող դա Բիվերին» (Leave It to Beaver), ներկայացնում էին թեթև թեմաներ, հումոր և երաշխավորված երջանիկ ավարտ, որը կարող էր վայելել ամբողջ ընտանիքը:

Հեռուստատեսության լայն գրավչությունը, սակայն, ավելին էր, քան փողը և ժամանցը: 1950-ականների շուրջերը, ինչպիսիք էին «Հայրիկն ավելի լավ գիտի» և «Ես սիրում եմ Լյուսիին» (I Love Lucy), իդեալականացնում էին միջուկային ընտանիքը, ավանդական գենդերային դերերը և սպիտակամորթ, միջին խավի կենցաղային հարաբերությունները: «Թող դա Բիվերին» հեռուստասերիալը, որը դարձավ 1950-ականների հեռուստատեսային ընտանիքի նախատիպային օրինակը, պատկերում էր կերակրող հոր և տնային տնտեսուհի մոր կերպարները, որոնք առաջնորդում էին իրենց երեխաներին կյանքի դասերի միջոցով: Նման ծրագրերը և ավելի լայն համատեքստում Սառը պատերազմի ամերիկյան

քարոզչությունը, ամրապնդեցին համաժողովրդական համաձայնությունը, որ նման ապրելակերպը ոչ միայն օգտակար էր, այլև ամենաարդյունավետ միջոցն էր՝ պաշտպանելու ամերիկյան բարգավաճումը կոմունիստական սպառնալիքներից և հասարակական-մշակութային «շեղումից»: Կանայք ծաղրում էին, թե կարիերայի պատճառով բավարար ժամանակ չէին հատկացնում երեխաներին և զգուշացնում էին, որ չափազանց շատ ժամանակ հատկացնելը կհանգեցնեք «մոմիզմի» (“Momism”)՝ ձևավորելով «փափկասուն» տղաների, ովքեր ի վիճակի չէին լինի իրենց նպաստը բերել հասարակությանը և չափազանց խոցելի կլինեին կոմունիստական սպառնալիքի առջև:

Հետպատերազմյան բարգավաճումը 1946-1964 թթ. նպաստեց ծնելիության նշանակալի և կայուն աճին: Տարիներ շարունակ տնտեսական ճգնաժամից հետո ամերիկյան ընտանիքներն այժմ բավականաչափ հարուստ էին մեծ ընտանիքներ պահելու համար և ունեին բավական մեծ առանձնատներ, որոնք կարող էին տեղավորել նրանց: Կանայք ամուսնանում էին ավելի երիտասարդ տարիքում, իսկ ամերիկյան մշակույթը փառաբանում էր մեծ, կղզիական ընտանիքի կատարելատիպը: Այս «վերարտադրողական համաձայնության» հիմքում ընկած էր պրոֆեսիոնալիզմի նոր պաշտամունքը, որը տարածված էր հետպատերազմյան ամերիկյան մշակույթում՝ խթանելով տնային տնտեսության արհեստավարժացումը: Այստեղ կարևոր դեր ունեին ընտանեկան հոգեբանները:

Ամերիկյան ժողովրդական մշակույթում ծաղկում ապրեց երիտասարդական նոր մշակույթը: Շատ երիտասարդներ, լավ գիտակցելով, որ դժգոհությունը եռում է Առատության հասարակության մակերևույթի տակ՝ ընդունեցին մշակութային ըմբոստությունը: 1955 թվականին նկարահանված «Ապստամբ առանց պատճառի» (Rebel Without a Cause) ֆիլմը ցույց տվեց հետպատերազմյան երիտասարդության անհանգստությունն ու էմոցիոնալ անորոշությունը, որը բավարարված չէր հարմարավետ կյանքով: Ի հայտ եկան ամերիկյան զանգվածային ժողովրդական մշակույթից դուրս անցնելու այլ տարբերակներ, այդ թվում՝ ռոքնռոլը: Ըմբոստ երիտասարդությունը լսում էր Էլվիս Փրեսլին, Լիթլ Ռիչարդին և Բադի Հոլլիին: Այլ ամերիկացիներ ավելի հեռուն գնացին՝ մերժելու իրենց համապատասխանությունը Առատության հասարակությանը: Բիթ սերնդի գրողները, բանաստեղծներն ու երաժիշտները, հիասթափված կապիտալիզմից, սպառողականությունից և ավանդական գենդերային դերերից, կյանքի այլ իմաստներ էին փնտրում, որոնք ընդունելի չէին ամերիկյան լայն հասարակության համար:

1960-ականները լի էին հսկայական մշակութային փոփոխություններով, երբ երիտասարդական հակամշակույթը դարձավ զանգվածային: Նոր հակամշակութային էթոսը քարոզում էր անհատականություն և ապստամբություն: Պահպանողական մշակութային նորմերը վիճարկվում էին: 1950-ականներին կանանց նորաձևության գերիշխող ոճը, օրինակ, շրջազգեստն էր: 1960-ականները սկիզբ դրեցին շատ ավելի քիչ սահմանափակող հագուստին: Կապրի շալվարը դարձավ հայտնի ամենօրյա հագուստ: Կիսաշրջազգեստները կարճացան: 1964 թ. Մերի Քուանտը հորինեց մինի կիսաշրջազգեստը: 1960-ականների վերջին տարածվեց հիպիների ենթամշակույթը: Հակամշակույթի ազդեցությամբ տարածվում էր նաև թմրադեղերի օգտագործումը: Ռոքնռոլը, ազատականացված սեքսուալությունը, թմրամիջոցների օգտագործումը, բազմազանության ընդունումը, ուտոպիական իդեալիզմը և մաքուր ջանասիրությունը նշանավորեցին նոր սերունդը:

Առատության հասարակության քաղաքականությունը և գաղափարաբանությունը

Հետպատերազմյան տնտեսական բարգավաճումը և արվարձանային նոր համայնքների ձևավորումը անխուսափելիորեն ներազդեցին ամերիկյան քաղաքականության վրա: Առատության հասարակության բարգավաճումը վերականգնեց հավատը կապիտալիզմի, մշակութային պահպանողականության և կրոնի նկատմամբ: Արդյունաբերողների ազգային ասոցիացիան Մեծ ճգնաժամի պայմաններում պայքարում էր ազատ շուկայի ու ձեռնարկատիրության համար՝ աջակցելով «Ամերիկյան կենսակերպ» (The American Way of Life) շարժմանը: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո կապիտալիզմի ջատագով ամենակարևոր խմբերից մեկը Լեոնարդ Ռիդի կողմից 1946 թվականին ձևավորված Տնտեսական կրթության հիմնադրամն էր: Ռիդը պնդում էր, որ «Ամերիկյան կենսակերպն» ըստ էության անհատապաշտական է, որը պաշտպանելու և առաջ մղելու լավագույն միջոցը ազատատենչ տնտեսագիտությունն է: Ազատատենչությունը (Libertarianism) իբրև իր հիմնական սկզբունք ընդունեց անհատի ազատության, սեփականության իրավունքների և նվազագույն պետական կարգավորումներով տնտեսության խթանումը:

Տնտեսական կրթության հիմնադրամի ձևավորումից անմիջապես հետո ավստրիացի տնտեսագետ և ազատական մտավորական Ֆրիդրիխ Հայեկը 1947 թվականին հիմնեց Մոնթ Պելերինի հասարակությունը (Mont

Pelerin Society), որը միավորեց ազատատենչ տնտեսագետներին Ատլանտյան օվկիանոսի երկու կողմերից՝ մարտահրավեր նետելու քեյնսյան տնտեսագիտությանը՝ գերիշխող պատկերացումներին առ այն, որ կառավարության հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունը տնտեսական միջամտության անհրաժեշտ գործիքներ են: Չիկագոյի համալսարանի տնտեսագետ Միլթոն Ֆրիդմենը դարձավ կազմակերպության նախագահը: Ֆրիդմենը, նրա Չիկագոյի տնտեսագիտության դպրոցը և Մոնթ Պելերինի հասարակությունը դարձան ազատ շուկայի աշխարհում ամենաազդեցիկ ջատագովները և նպաստեցին տնտեսական ազատատենչության գաղափարաբանության տարածմանը:

Ազատական քաղաքականությունը և ավետարանական կրոնը ձևավորում էին նոր պահպանողական, արվարձանային ընտրազանգվածի ակունքները: Արվարձանային համայնքների հեռավորությունը կառավարությունից և թույլ համայնքային աստիճանակարգությունը առաջացրել էին հասարակական բաց, որը լցվեց ավետարանական եկեղեցիների կողմից: Ավետարանական եկեղեցիների աստվածաբանությունն ու գաղափարաբանությունն ամրապնդում էին պահպանողական հայացքները՝ միաժամանակ մեծացնելով հավատը տնտեսական անհատապաշտության նկատմամբ:

Մեծ ճգնաժամից ի վեր ընտրական հաջողության լիակատար բացակայությունը Հանրապետական կուսակցության ներսում հանգեցրել էր պայքարի, որը ծավալվում էր ընտրական հեռանկարները վերակենդանացնելու տեսլականների շուրջ: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո կուսակցության առավել պահպանողական խմբակցությունը, որը ներկայացնում էր Օհայոյից սենատոր Ռոբերտ Թաֆթը (նախկին նախագահ Ուիլյամ Հովարդ Թաֆթի որդին), ձգտում էր առավել աջամետ քաղաքականության՝ կտրականապես հրաժարվելով Նոր համաձայնության ծրագրերից ու քաղաքականություններից: Մյուս կողմից՝ կուսակցության ավելի չափավոր թևը, որը ներկայացնում էին Նյու Յորքի նահանգապետ Թոմաս Դյուին և Նելսոն Ռոքֆելերը, ձգտում էին ընդունել և բարեփոխել «Նոր համաձայնության» ծրագրերն ու քաղաքականությունը:

Հանրապետական կուսակցության ներսում նաև տարածայնություններ կային աշխարհում Միացյալ Նահանգների դերի մասին՝ արտաքին օգնության ու միջազգային հավաքական անվտանգության հարցերի և կոմունիզմի դեմ պայքարելու միջոցների առնչությամբ: Սկզբում չափավորները կամ «ազատականները» ստանձնեցին կուսակցության վերահսկողությունը՝ առաջադրելով Թոմաս Դյուիի թեկնածությունը 1948 թվականի

նախագահական ընտրություններում: Թրումենը հաղթեց: Դյուիի պարտությունը քաջալերեց պահպանողականներին, որոնք 1952 թվականի նախագահական նախնական ընտրություններում համախմբվեցին Թաֆթի շուրջը:

Սակայն Հանրապետական կուսակցությունն առաջադրեց գեներալ Դուայթ Էյզենհաուերին, ով մինչև այդ Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպության (ՆԱՏՕ) գլխավոր հրամանատարն էր: Էյզենհաուերը հայտարարում էր, որ պարտավորված է զգում միանալ նախագահական մրցապայքարին, որպեսզի բարձրացնի պահպանողականությունն ու պահպանողական արժեքները և «երկու մեծ կուսակցություններից մեկին թույլ չտա այնպիսի ուղի որդեգրել, որը կարող է հանգեցնել ազգային ինքնասպանության»: Ի հավելումն իր մտավախության, որ Թաֆթը և պահպանողականները կխաթարեն հավաքական անվտանգության այնպիսի պայմանավորվածությունները, ինչպիսին էր ՆԱՏՕ-ն, նա նաև նախատեց իր կուսակիցներին՝ «Նոր համաձայնությանը» հակադիր դիրքորոշման համար: Էյզենհաուերը կարծում էր, որ կոմունիզմին հաղթելու լավագույն միջոցը նրա գրավչությունը թուլացնելն է՝ մեղմացնելով այն պայմանները, որոնց դեպքում այն առավել գրավիչ է: Դա նշանակում էր աջակցություն «Նոր համաձայնության» ծրագրերին: Էյզենհաուերը նշում էր. «Եթե որևէ քաղաքական կուսակցություն փորձի վերացնել սոցիալական ապահովությունը, գործազրկության ապահովագրությունը և աշխատանքային օրենքներն ու գյուղատնտեսական ծրագրերը, ապա մեր քաղաքական պատմության մեջ այդ կուսակցության մասին այլևս չեք լսի»: Թաֆթի կողմնակիցները պնդում էին, որ Էյզենհաուերը գողացել էր թեկնածությունը Թաֆթից համագումարի ժամանակ: Էյզենհաուերը, փորձելով հանգստացնել իր կուսակցության պահպանողականներին, որպես փոխնախագահի թեկնածու ընտրեց Կալիֆորնիայից կոնգրեսական և կատաղի հակակոմունիստ Ռիչարդ Նիքսոնին: Էյզենհաուերը լիակատար հաղթանակ տարավ 1952 թվականի նախագահական ընտրություններում՝ Թրումենի նախընտրած դեմոկրատ Ադլայ Սթիվենսոնի նկատմամբ: Էյզենհաուերի ժողովրդականությունը խթանեց հանրապետականների հաղթանակը ամբողջ երկրում՝ տալով նրանց մեծամասնություն Կոնգրեսի երկու պալատներում:

1952 թվականի նախագահական ընտրություններում հանրապետականների հաղթանակը նաև պայմանավորված էր Էյզենհաուերի լայն ժողովրդականությամբ: Սակայն Էյզենհաուերի օրենսդրական չափավոր առաջարկները սովորաբար տապալվում էին պահպանողական հանրա-

պետականների և ազատական դեմոկրատների դաշինքի կողմից: 1954 թվականին նախագահ Էյզենհաուերն առաջարկեց ազգային առողջապահական ծրագիր, որը դաշնային աջակցություն կցուցաբերեր ամբողջ երկրում առողջապահական ծածկույթն ավելացնելու համար՝ կառավարությանն անմիջականորեն չներգրավելով առողջապահության ոլորտի կարգավորման մեջ: Առաջարկը տապալվեց Ներկայացուցիչների պալատում պահպանողական հանրապետականների և ազատական դեմոկրատների քվեարկության դաշինքով: Կրթության և գյուղատնտեսության ոլորտում Էյզենհաուերի առաջարկները ևս հաճախ կրում էին նմանատիպ պարտություններ: Էյզենհաուերի նախագահության ավարտին նրա ներքին օրենսդրական ձեռքբերումները հիմնականում սահմանափակվում էին սոցիալական ապահովության ընդլայնմամբ, առողջապահության, կրթության և բարեկեցության հարցերով, Ազգային պաշտպանության կրթության օրենքի ընդունմամբ և կրթության ու գիտության ոլորտներին դաշնային աջակցության ամրապնդմամբ:

Էյզենհաուերի ազդեցությունն ավելի մեծ էր արտաքին քաղաքականության ոլորտում: Նա ձգտում էր հետ պահել Միացյալ Նահանգներին արտասահմանում ուղղակի ռազմական միջամտություններից՝ աջակցելով հակակոմունիստական և կապիտալիստականամետ գաղափարաբանությամբ դաշնակիցներին: Էյզենհաուերի վարչակազմը ֆինանսական միջոցներ էր տրամադրում ֆրանսիացիներին Վիետնամի պատերազմում, որոնք կռվում էին Հո Շի Մինի գլխավորած կոմունիստների դեմ, օգնում էր Չան Կայշի Թայվանին՝ առանց բացահայտորեն սադրելու Մաո Ցզեդունի Չինաստանին, և աջակցում էր Իրանի և Գվատեմալայի «բարեկամական» խմբերին: Նախագահ Էյզենհաուերի հակախորհրդային քաղաքականության առանցքը «զանգվածային հաշվեհարդարի» (“massive retaliation”) սպառնալիքն էր՝ միջուկային ուժի կիրառման սպառնալիքով կոմունիստական ծավալապաշտության զսպումը:

Քենեդիի նախագահությունը և Կարիբյան ճգնաժամը

1960-ականները սկսվեցին նախագահական ընտրություններով, որոնց ժամանակ պայքարում էին հանրապետական փոխնախագահ Ռիչարդ Նիքսոնը և դեմոկրատ սենատոր Ջոն Գ. Քենեդին: Թեկնածուները խոստանում էին առաջ տանել երկիրը և նորից աշխուժացնել անկում ապրող տնտեսությունը: Քենեդին խոստանում էր օգտագործել դաշնային ծրագրերը տնտեսությունն ամրապնդելու և աղքատության խնդիրը լուծելու համար, մինչդեռ Նիքսոնը կոչ էր անում ապավինել մասնավոր ձեռ-

նարկատիրությանը և կրճատել պետական ծախսերը: Քենեդին, ով փորձում էր դառնալ առաջին կաթոլիկ նախագահը, նաև պետք է հակազդեր իր հավատքի վերաբերյալ հարցերին և ընտրողներին համոզեր, որ ինքը բավականաչափ փորձառու է երկիր ղեկավարելու համար:

Նիքսոն-Քենեդի նախագահական քարոզարշավի ամենաուշագրավ իրադարձություններից մեկը 1960 թ. սեպտեմբերին նրանց հեռուստաբանավեճն էր, որն իր տեսակի մեջ առաջինն էր նախագահի հիմնական թեկնածուների միջև: Բանավեճը կենտրոնացած էր ներքին քաղաքականության վրա և երիտասարդ Քենեդիին հնարավորություն տվեց ներկայանալու որպես կազմավորված, բանիմաց պետական գործիչ: Եվ հակառակը՝ Նիքսոնից՝ իբրև փորձառու գործիչ, հանրությունն ավելի մեծ ակնկալիքներ ուներ, սակայն վերջինս ներկայացավ քրտնած տեսքով ու պաշտպանվողի դերում: Հետաքրքիր է, որ ռադիոունկնդիրները համարում էին, որ երկուսն էլ հավասարապես լավ են հանդես եկել, բայց հեռուստադիտողները շատ ավելի հմայված էին Քենեդիով, ինչը նրան առավելություն տվեց քարոզարշավում: Քենեդին հաղթեց Նիքսոնին մեկ տոկոսից պակաս համաժողովրդական ձայների տարբերությամբ (34,227,096 ձայն ընդդեմ 34,107,646-ի): Քենեդին համոզիչ առավելություն ունեցավ ընտրիչների կոլեգիայում՝ ստանալով 303 կողմ և 219 դեմ ձայներ: Սակայն Դեմոկրատական կուսակցությունը պարտվեց Կոնգրեսի երկու պալատների համար ընտրություններում: Արդյունքում, 1961 թվականին Քենեդին ստանձնեց նախագահի պաշտոնն առանց օրենսդիր մանդատի, որն անհրաժեշտ էր իր հավակնոտ ծրագրի՝ «Նոր սահմանի» (New Frontier) իրականացման համար:

Քենեդին բախվեց նաև արտաքին քաղաքականության մարտահրավերներին: 1959 թվականի հունվարի 8-ին Ֆիդել Կաստրոն և նրա հեղափոխական բանակը սկիզբ դրեցին Կուբայի պատմության նոր ժամանակաշրջանին: ԱՄՆ-ն սկզբում համակրանք էր հայտնում Կաստրոյի նոր կառավարությանը, որն անմիջապես դիվանագիտական ճանաչում ստացավ: Սակայն նախագահ Դուայթ Էյզենհաուերը և նրա վարչակազմի անդամները զգուշավոր էին: Կուբայի նոր կառավարությունը շուտով ձեռնամուխ եղավ ձախական տնտեսական քաղաքականություններին, որոնք կենտրոնացած էին ագրարային բարեփոխումների, հողերի վերաբաշխման և մասնավոր ձեռնարկությունների ազգայնացման վրա: Կուբայի հարուստ և միջին դասի քաղաքացիները խմբերով սկսեցին լքել կղզին: Շատերը բնակություն հաստատեցին Մայամիում (Ֆլորիդա) և ամերիկյան այլ քաղաքներում:

Կուբայի և ԱՄՆ-ի հարաբերություններն արագորեն վատթարացան: 1960 թ. հոկտեմբերի 19-ին Միացյալ Նահանգները սահմանեց գրեթե ամբողջական առևտրային բեռնարգելք՝ Կուբայի ռեժիմը տնտեսապես մեկուսացնելու նպատակով, իսկ 1961 թ. հունվարին երկու երկրները խզեցին պաշտոնական դիվանագիտական հարաբերությունները: ԱՄՆ Կենտրոնական հետախուզական գործակալությունը, գործելով այն թյուր համոզմունքով, որ Կաստրոյի կառավարությունը չունի ժողովրդական աջակցություն, և որ Կուբայի քաղաքացիները կապստամբեն, եթե հնարավորություն տրվի, սկսեց հավաքագրել վտարանդի կուբացիներին՝ կղզի ներխուժման համար: 1961 թ. ապրիլի 16-ին ներխուժման զորամիավորումը, որը հիմնականում բաղկացած էր կուբացի էմիգրանտներից, ավիանվեց Խոզերի ծոցում գտնվող Ժիրոն լողափում: Կուբացի զինվորներն ու քաղաքացիական անձինք արագորեն հաղթեցին ներխուժող վտարանդիներին, որոնցից շատերը գերի ընկան:

Խոզերի ծոցի ներխուժումը խափանելու գործում Կուբայի կառավարության հաջողությունը մեծապես լեգիտիմացրեց Կաստրոյի իշխանությունը և նսեմացրեց Քենեդու վարչակազմը: Քանզի Կուբայի և Միացյալ Նահանգների միջև քաղաքական հարաբերությունները իսպառ քայքայվեցին, Կաստրոյի կառավարությունն ավելի սերտացրեց կապերը Խորհրդային Միության հետ, ինչը հիմք դրեց Կուբայի հրթիռային ճգնաժամին (Cuban Missile Crisis), որը հայտնի է նաև իբրև Կարիբյան ճգնաժամ: 1962 թվականին, ի պատասխան Միացյալ Նահանգների կողմից Թուրքիայում միջուկային զինանոցի տեղակայման և պահպանման, Կուբայի կառավարության հրավերով Խորհրդային Միությունը միջուկային հրթիռներ տեղակայեց Կուբայում: 1962 թվականի հոկտեմբերի 14-ին ամերիկյան հետախուզական ինքնաթիռները հայտնաբերեցին հրթիռների արձակման կայանների կառուցումը, իսկ հոկտեմբերի 22-ին նախագահ Քենեդին դիմեց ամերիկյան ժողովրդին՝ զգուշացնելով այդ սպառնալիքի մասին: Հաջորդ մի քանի օրերին աշխարհը սարսափով հետևում էր, թե ինչ քայլեր են անում միջուկային պատերազմի շեմին հայտնված Միացյալ Նահանգները և Խորհրդային Միությունը: Ի վերջո, հոկտեմբերի 28-ին Խորհրդային Միությունը համաձայնեց հեռացնել իր հրթիռները Կուբայից՝ ամերիկյան հրթիռները Թուրքիայից հեռացնելու ԱՄՆ-ի պարտավորության դիմաց, ինչպես նաև ստացավ պաշտոնական խոստում, որ Միացյալ Նահանգները չի ներխուժի Կուբա: Այսպիսով, ճգնաժամը հանգուցալուծվեց խաղաղ ճանապարհով:

Քաղաքացիական իրավունքների շարժումը

Հետպատերազմյան ամերիկյան հասարակության մեջ շարունակում էր ռասայական բացառման դեմ պայքարը՝ ուղղված տարանջատված դպրոցներին: 1896 թվականին Գերագույն դատարանը սահմանադրական էր ճանաչել «առանձին, բայց հավասար» սկզբունքը: Այնուամենայնիվ, տարանջատված դպրոցները հազվադեպ էին «հավասար»: գործնականում սևամորթ ամերիկացիները, հատկապես հարավում, ստանում էին ավելի քիչ միջոցներ, հաճախում էին անբավարար պայմաններով հաստատություններ և սովորում էին ոչ համապատասխան նյութերով: Աֆրոամերիկացիների պայքարը կրթական անհավասարության դեմ ձգվեց կես դար, մինչև Գերագույն դատարանը վերանայեց «առանձին, բայց հավասար» իրավունքը: 1954 թվականի մայիսի 17-ին, երկու տարվա վեճերից հետո, գլխավոր դատավոր Էրլ Ուորենը հայտարարեց Գերագույն դատարանի որոշումը *Բրաունն ընդդեմ Կրթական խորհրդի* (Brown v. Board of Education) տարանջատված դպրոցների վերաբերյալ գործով: Դատարանը միաձայն որոշեց, որ ռասայական տարանջատումը խախտում է Սահմանադրության տասնչորսերորդ լրացման հավասար պաշտպանության դրույթը: Դատարանի որոշմամբ՝ «առանձին կրթական հաստատություններն իրենց էությանբ անհավասար են»: «Առանձին, բայց հավասար» սկզբունքը հակասահմանադրական ճանաչվեց:

Ջիմ Բրոու Հարավի սահմանադրական հիմքերը շարունակում էին խաթարվել: Սակայն *Բրաունն ընդդեմ Կրթական խորհրդի* գործով դատարանի որոշումները չտարածվեցին հանրային դպրոցներից զատ այլ վայրերում տարանջատման խնդրի վրա: Դպրոցների ապատարանջատումը գործնականում դանդաղ էր ընթանում և անարդյունավետ էր: Հարավի մեծ մասում, ինչպես նաև երկրի մնացած մասում, դպրոցների լայնածավալ միասնականացումը իրականացվեց միայն տարիներ անց: Միայն 1964 թվականի Քաղաքացիական իրավունքների օրենքով դաշնային կառավարությունը վերջապես որոշակիորեն կիրարկեց *Բրաունն ընդդեմ Կրթական խորհրդի* որոշումը՝ սպառնալով դադարեցնել ֆինանսավորումը անհնազանդ դպրոցական շրջաններին, բայց նույնիսկ այդ ժամանակ հարավային դպրոցական շրջաններում խնդիրներ կային: Երբ որոշումը վերջապես կիրառվեց Հարավում, ճակատագրի հեզնանքով տարածաշրջանի հանրակրթական դպրոցները շատ չափանիշներով դարձան երկրի ամենամիասնականացածները: Գերագույն դատարանի որոշումը ամերիկյան ռասայական տարանջատման պատմության մեջ

շրջադարձային հանգրվան էր:

Աֆրոամերիկացիները պայքարում էին ռասիստական համակարգի դեմ ամերիկյան կյանքի բոլոր ոլորտներում: Երկրորդ համաշխարհային պատերազմը և կրկնակի հաղթանակի (Double V) արշավը՝ արտերկրում ֆաշիզմի դեմ և երկրում ռասիզմի դեմ, ինչպես նաև հետպատերազմյան տնտեսական բարգավաճումը հանգեցրին շատ աֆրոամերիկացիների սպասումների աճին: Համառ ռասիզմի, ռասայական տարանջատման, խտրական հասարակական և իրավական կառույցների դեմ աֆրոամերիկացիների պայքարը նոր լիցք ստացավ: 1950-ականները նշանակալի տասնամյակ էին Միացյալ Նահանգներում քաղաքացիական իրավունքների շարժման համար:

1953 թվականին Սարա Քիսը հրապարակայնորեն վիճարկեց առանձնացված հասարակական տրանսպորտը՝ հանգեցնելով 1955 թվականի *Սարա Քիսն ընդդեմ Կարոլինա Քոուչ ընկերության* (Sarah Keys v. Carolina Coach Company) գործով կարևոր որոշմանը: Միջնահանգային առևտրի հանձնաժողովը որոշեց, որ «առանձին, բայց հավասար» սկզբունքը խախտում է ԱՄՆ Սահմանադրության միջնահանգային առևտրի դրույթը: Որոշումը թեև թույլ կիրառություն գտավ, այնուամենայնիվ խթանեց քաղաքացիական իրավունքների շարժումը: 1955 թ. դեկտեմբերի 1-ին Ռոզա Փարքսը հրաժարվեց զիջել իր տեղը Մոնտգոմերիի քաղաքային ավտոբուսում և ձերբակալվեց: Մոնտգոմերիի հասարակական տրանսպորտի համակարգն ուներ կանոններ, որոնք պահանջում էին աֆրոամերիկացի ուղևորներից նստել ավտոբուսի հետևում և իրենց տեղերը զիջել սպիտակամորթ ուղևորներին, եթե ավտոբուսների նստատեղերը չբավարարեին: Մոնտգոմերիի սևամորթ բնակչությունը համակարգված բոյկոտեց քաղաքային տրանսպորտը, որը տևեց մինչև 1956 թվականի դեկտեմբերի 20-ը, երբ Գերագույն դատարանը որոշում կայացրեց՝ կարգադրելով չեղարկել տարանջատումը:

Անհնազանդությունը նաև աշխուժացրեց քաղաքացիական իրավունքների շարժումը և հաստատեց Մարտին Լյութեր Քինգ կրտսերի առաջնորդությունը: Մոնտգոմերիի հաջողությունից հետո Քինգը համահիմնադրեց Հարավային քրիստոնեական առաջնորդության համաժողովը՝ համակարգելու քաղաքացիական իրավունքների խմբերն ամբողջ Հարավում և կազմակերպելու ու պահպանելու բոյկոտները, բողոքի ցույցերը և անհնազանդության այլ միջոցառումները հարավային Զիմ Քրոու օրենքների դեմ: Ծնշման արդյունքում Կոնգրեսն ընդունեց 1957 թ. Քաղաքացիական իրավունքների մասին օրենքը, որը Վերակառուցման ժա-

մանակաշրջանից ի վեր դաշնային առաջին օրենսդրական միջոցառումն էր: Օրենքը հանգեցրեց Արդարադատության քարտուղարության Քաղաքացիական իրավունքների հանձնաժողովի ստեղծմանը, որը զբաղվելու էր ռասայական խտրականության մասին պնդումների հետաքննությամբ: Չնայած տեղական և ազգային մակարդակներում գրանցված հաջողություններին՝ քաղաքացիական իրավունքների շարժումը բախվեց համառ ընդդիմության: Նրանք, ովքեր դեմ էին շարժմանը, հաճախ օգտագործում էին բռնության մարտավարություն՝ վախեցնելու աֆրոամերիկացիներին և տապալելու օրինական որոշումները:

Քաղաքացիական իրավունքների շարժումն իր ամենամեծ հաղթանակները տարավ 1960-ականների առաջին տարիներին: 1950-ականներին դպրոցների ապատարանջատման համար մղվող պայքարում քաղաքացիական իրավունքների ակտիվիստներից շատերը միջին տարիքի և միջին խավի ներկայացուցիչներ էին: 1960-ականներին նոր ուսանողական շարժում առաջացավ, որի անդամները ցանկանում էին ավելի արագ փոփոխություններ տարանջատված Հարավում: Աշխուժացան ցույցերը, երթերը, բոյկոտներն ու նստացույցերը: Քաղաքացիական իրավունքների շարժման տոնայնությունը փոխվեց 1960 թվականին Հյուսիսային Կարոլինայի հանրախանութներից մեկում, երբ չորս աֆրոամերիկացի ուսանողներ նստացույց արեցին միայն սպիտակամորթների համար նախատեսված ճաշարանի սեղանի մոտ: Նման նստացույցերը դարձան շարունակական՝ ի նշան անհնազանդության. աֆրոամերիկացի ցուցարարները հրաժարվում էին հեռանալ այնքան ժամանակ, քանի դեռ իրենց չէին մատուցել սնունդ կամ ձերբակալել: Այս մարտավարությունը բռնություն և դիմադրություն առաջացրեց, բայց նաև ստիպեց ապատարանջատել Վուլվորթի հանրախանութները: Սա նպաստեց նմանօրինակ այլ ցույցերի իրականացման ամբողջ հարավում: Բողոքի ցույցերը վկայում էին այն մասին, որ ուսանողների կողմից ղեկավարվող ուղղակի գործողությունները կարող են բերել հասարակական փոփոխություններ և հաստատել քաղաքացիական իրավունքների շարժման նոր ուղղությունը առաջիկա տարիներին:

1961 թվականին քաղաքացիական իրավունքների պաշտպանները փորձեցին ավելի համարձակ նստացույցեր իրականացնել, երբ նրանք մասնակցեցին Ազատության ուղևորությանը: Գերագույն դատարանի որոշումից հետո, որն արգելում է սեգրեգացիան հանրային ավտոբուսներում և գնացքներում, ուսանողները ուղևորություններ էին կազմակերպում միջնահանգային ավտոբուսներով: Արշավները նպատակ ունեին

ստուգել դատարանի որոշումը, որը հարավային շատ նահանգներ անտեսում էին: Ազատության ուղևորների միջոցառման խմբերը ավտոբուսներ էին նստում՝ ճանապարհորդելով խորը Հարավում: 1961 թ. մայիսին ազատության ուղևորները կատաղի դիմադրության հանդիպեցին Ալաբամայում: «Կու կլուքս կլանի» անդամներից կազմված զայրացած ամբոխները Բիրմինգհեմում հարձակվեցին ուղևորների վրա՝ այրելով ավտոբուսներից մեկը և ծեծի ենթարկելով փախուստի դիմած ակտիվիստներին: Ազատության ուղևորությունները շարունակվեցին ամառվա ընթացքում՝ գրավելով ազգային ուշադրությունը բռնի դիմադրության պայմաններում: Ի վերջո, 1961 թ. նոյեմբերին Միջնահանգային առևտրի հանձնաժողովը որոշեց ապատարանջատել նաև միջնահանգային ավտոբուսները և գնացքները:

1961 թ. աշնանը քաղաքացիական իրավունքների պաշտպանները հասան Ջորջիայի հարավ-արևմուտքում գտնվող փոքրիկ Օլբանի քաղաք, որը հայտնի էր իր արմատացած տարանջատմամբ և ռասայական բռնությամբ: Ձևավորվեց Օլբանի շարժումը՝ քաղաքացիական իրավունքների պաշտպանության կազմակերպիչների դաշինքը: Օլբանի շարժումն իր հարթակում ներառեց սոցիալական արդարության հանդեպ քրիստոնեական հավատարմության տարրեր, որոնց ակտիվիստները նշում էին, որ բոլոր մարդիկ «հավասար արժեք ունեն Աստծո ընտանիքում»: Կրոնի նշանակությունը քաղաքացիական իրավունքների պաշտպանության շարժման համար մեծ էր: Բապտիստ (բողոքական) հոգևորական Քինգի հանրաճանաչությունն ընդգծեց աֆրոամերիկացի կրոնական գործիչների դերը 1960-ականների քաղաքացիական իրավունքների շարժման մեջ: Բողոքի միջոցառումների մասնակիցները շարականներ և հոգևոր երգեր էին կատարում: Քարոզիչները ժողովրդին համախմբում էին արդարության և հույսի ուղերձներով: Եկեղեցիները հյուրընկալում էին ժողովներ, հավաքական աղոթքներ և համաժողովներ ոչ բռնի դիմադրության թեմաներով: Շարժման բարոյական մղումը ուժեղացրեց աֆրոամերիկացի իրավապաշտպաններին և առերեսեց սպիտակամորթ հասարակությանը՝ սահմանելով տարանջատումը որպես բարոյական չարիք:

Երբ քաղաքացիական իրավունքների շարժումը հավաքեց ավելի շատ հետևորդներ և ավելի մեծ ուշադրություն, սպիտակների դիմադրությունը խստացավ: 1962 թ. հոկտեմբերին Ջեյմս Մերեդիթը դարձավ առաջին աֆրոամերիկացի ուսանողը, ով ընդունվեց Միսիսիպիի համալսարան: Մերեդիթի գրանցումը անկարգությունների պատճառ դարձավ համալսարանի Օքսֆորդի մասնաճյուղում, ինչը ստիպեց նախագահ Ջոն Բե-

ներդին այնտեղ ուղարկել ԱՄՆ մարշալներ և ազգային գվարդիականներ՝ կարգուկանոն հաստատելու համար: Երեկոյան, այսպես կոչված, Օլե Միսսի ճակատամարտում սեգրեգացիոնիստները բախվեցին ազգային գվարդիայի հետ համալսարանի տարածքում, ինչի հետևանքով երկու հոգի զոհվեցին, և հարյուրավորները վիրավորվեցին:

1963 թ. ապրիլին և մայիսին Հարավային քրիստոնեական առաջնորդության համաժողովը կազմակերպեց Բիրմինգհեմի արշավը, որի նպատակն էր տապալել սեգրեգացիան Ալաբամայի այս ամենամեծ քաղաքում: Ակտիվիստները կիրառում էին բոյկոտներ, նստացույցեր և խաղաղ երթեր: Շարժման առաջնորդ Մարտին Լյութեր Քինգ կրտսերը բանտարկվեց, որից հետո նա իր հայտնի ձեռագիր նամակով հորդորեց շարունակել իր ոչ բռնի մոտեցումը և հասնել արդարության: Քինգի համբավն աճեց: Հանուն քաղաքացիական իրավունքների Բիրմինգհեմի արշավը միջազգային գովասանքի արժանացավ՝ ոստիկանության բռնությունների և պայթյունների դեմ ոչ բռնի մոտեցման համար: Սպիտակ դիմադրությունն ուժեղացավ:

1963 թվականին Ալաբամայի նահանգապետ Ջորջ Ուոլեսը երդմնակալության ուղերձում հայտարարեց իր դիրքորոշումը տարանջատման վերաբերյալ՝ «տարանջատում հիմա, տարանջատում վաղը, տարանջատում ընդմիշտ» տխրահոչակ արտահայտությամբ: Ուոլեսը դարձավ քաղաքացիական իրավունքների շարժմանը դեմ բազմաթիվ սպիտակամորթ հարավցիների խորհրդանիշը: Իբրև նահանգապետ՝ Ուոլեսը պաշտպանում էր սեգրեգացիան: Թեև նրա ջանքերը խորհրդանշական էին, բայց նրան հանրաճանաչ դարձրեցին որպես քաղաքական գործիչ, որը պատրաստ էր պայքարել այն բանի համար, ինչը հարավցիներից շատերը համարում էին իրենց ավանդական կենսակերպը: 1963 թվականի հունիսին՝ նահանգապետ դառնալուց ընդամենը հինգ ամիս անց, Ուոլեսը կանգնեց Ալաբամայի համալսարանի Ֆոսթեր լսարանի դռան դիմաց՝ բողոքելով համալսարանում ապատարանջատման դեմ: Նախագահ Քենեդին դիմեց ժողովրդին՝ քննադատելով Ուոլեսին և կոչ անելով մշակել քաղաքացիական իրավունքների համապարփակ օրինագիծ: Հաջորդ օրը Միսիսիպի նահանգի Ջեքսոն քաղաքի իր տանը սպանվեց քաղաքացիական իրավունքների շարժման առաջնորդներից Մեդգար Էվերսը:

1963 թվականի օգոստոսին քաղաքացիական իրավունքների շարժման առաջնորդները կազմակերպեցին երթ Վաշինգտոնում: Յուցարարները, ի թիվս այլ բաների, պահանջում էին քաղաքացիական իրավունքների օրենսդրություն, դպրոցների միասնացում, պետական և մասնավոր

գործատուների կողմից խտրականության վերացում և նվազագույն աշխատավարձի բարձրացում: Նախագահ Լինքոլնի հուշահամալիրի աստիճանների վրա 1963 թվականի օգոստոսի 28-ին Մարտին Լյութեր Քինգը հանդես եկավ իր նշանավոր «Ես երազանք ունեմ» (I have a dream) ելույթով, որը քաղաքացիական իրավունքների պաշտպանությանը նվիրված՝ միջազգային լայն հավանության արժանացած կոչ էր և ավելի բարձրացրեց շարժման հեղինակությունն ու աննախադեպ ճնշում գործեց քաղաքական գործիչների վրա՝ ընդունելու քաղաքացիական իրավունքների մասին բովանդակալից օրենսդրություն:

Նախագահ Քենեդին աջակցություն հայտնեց քաղաքացիական իրավունքների մասին օրինագծին, սակայն հարավային դիմադրությունը բուռն էր, և Քենեդին չէր ցանկանում դրա վրա քաղաքական մեծ կապիտալ ծախսել: Եվ այսպես, օրինագիծը խցանվեց Կոնգրեսում: 1963 թվականի նոյեմբերի 22-ին նախագահ Քենեդին սպանվեց Դալլասում: Փոխնախագահ Լինդոն Ջոնսոնը ստանձնեց նախագահի պաշտոնը: Նա չունեի Քենեդու քարիզմատիկ ժողովրդականությունը, բայց ոչ ոք երբևէ ավելի ուժեղ և հաջողությամբ չէր պայքարել քաղաքացիական իրավունքների օրենսդրության ընդունման համար, որքան նախագահ Ջոնսոնը: Տեխաս Հիլ Քանթրիում աղքատության մեջ մեծացած Ջոնսոնը համառ պայքարով էր բարձրացել քաղաքական սանդուղքով: Նա խորապես գիտակցում էր աղքատությունն ու անարդարությունը: Նա պաշտում էր Ֆրանկլին Ռուզվելտին, որի «Նոր համաձայնությունը» բարելավել էր աղքատ տեխասցիների կյանքը: Նախագահ Լինդոն Ջոնսոնը ընթացք տվեց Քենեդիի քաղաքացիական իրավունքների սառեցված օրինագծին, առավել ամրապնդեց այն և անցկացրեց Կոնգրեսում: 1964 թվականին նա ստորագրեց Քաղաքացիական իրավունքների օրենքը (Civil Rights Act), որը համարվում է ամերիկյան պատմության մեջ քաղաքացիական իրավունքների մասին օրենսդրության ամենակարևոր օրինագծերից մեկը: Այս համապարփակ օրենսդրությունն արգելում էր տարանջատումը հասարակական վայրերում և արգելում էր խտրականությունը ռասայական, էթնիկական, սեռային, ազգային կամ կրոնական ծագման հիման վրա:

Քաղաքացիական իրավունքների շարժումը շարունակեց հաղթարշավը: Թեև քաղաքացիական իրավունքների դեմ ահաբեկումները և բռնի դիմադրությունն ու արտաօրինական խտրականությունը ևս շարունակվում էին: 1965 թվականի մարտին Ալաբամայում ակտիվիստները փորձեցին երթով շարժվել Սելմայից Մոնտգոմերի՝ տեղացի աֆրոամերիկացիների ընտրական իրավունքի պաշտպանության համար: Սպիտակամորթ

իրավապահները մահակներով և արցունքաբեր գազով դաժանորեն հարձակվեցին խաղաղ ցուցարարների վրա: Այնուհետև երթի մասնակիցները հիսուն մղոնանոց արշավ իրականացրին դեպի նահանգի մայրաքաղաք: Նախագահ Ջոնսոնը ներկայացրեց նոր օրինագի՝ 1965 թվականի Քվեարկության իրավունքի օրենքը (Voting Rights Act), որը վերացրեց քվեարկության խտրականությունը դաշնային, նահանգային և տեղական ընտրություններում: Հաջորդ երկու տարիներին անընդմեջ այս երկու կարևոր օրինագծերը քայքայեցին տարանջատման և իրավազրկման վաղեմի հաստատությունները:

Չնայած օրենսդրական զգալի ձեռքբերումներին՝ փոփոխությունների դանդաղումից հիասթափությունն աճեց: Քաղաքներում լարվածությունն ու բռնությունը շարունակեցին աճել, և քաղաքացիական իրավունքների շարժման երանգը կրկին փոխվեց: Ակտիվիստները դարձան ավելի արմատական առաջընթացի իրենց կոչերում: Շատերն ընդունեցին աճող «Սևական ուժ» (Black Power) շարժման և «Իսլամի ազգ» (Nation of Islam) կազմակերպության հոգևոր հովիվ Մալքոլմ Իքսի ավելի ռազմատենչ ուղերձները, որոնք խրախուսում էին աֆրոամերիկացիներին հետամուտ լինել ազատությանը, հավասարությանը և արդարությանը «անհրաժեշտ բոլոր միջոցներով»: Ուսանողների ոչ բռնի գործողությունների համակարգող հանձնաժողովի ղեկավարներից Սթոքլի Բարմայքլը, ով նաև «Սևական ուժ» շարժման առաջնորդներից էր, 1966 թվականի հունիսին քաղաքացիական իրավունքների երթի ժամանակ հայտարարեց, որ «սևական ուժը նշանակում է, որ սևամորթները համախմբվում են քաղաքական ուժ ձևավորելու համար»: Մարտին Լյուիսեր Քինգը և քաղաքացիական իրավունքների շարժման հիմնական կազմակերպությունների ղեկավարները քննադատում էին բռնության քարոզը:

Աֆրոամերիկացիներից զատ՝ քաղաքացիական իրավունքների շարժումներ էին սկսել նաև ռասայական և էթնիկ մյուս փոքրամասնությունները: Բնիկ ամերիկացիները, չիկանոները՝ մեքսիկացի ամերիկացիները, կանայք և բնապահպանները մասնակցում էին իրենց իրավունքների համար շարժումներին: Ժամանակաշրջանը հիրավի քաղաքացիական իրավունքների հաստատման փուլ էր:



Մարտին Լյութեր Քինգն իր նշանավոր «Ես երազանք ունեմ» (I have a dream) ճառի ժամանակ, օգոստոսի 28, 1963 թ.:



Քաղաքացիական իրավունքների շարժման առաջնորդ Մարտին Լյութեր Քինգ կրտսերը կանգնած է նախագահ Լինդոն Ջոնսոնի թիկունքում, երբ նա ստորագրում է 1964 թվականի Քաղաքացիական իրավունքների օրենքը:

Լինդոն Ջոնսոնի «Մեծ հասարակությունը»

1964 թվականի մայիսին նախագահ Լինդոն Ջոնսոնը ներկայացրեց ներքին բարեփոխումների փաթեթի իր ամբողջական տեսլականը, որը հայտնի է որպես «Մեծ հասարակություն» (Great Society): Ելույթ ունենալով Միչիգանի համալսարանի այդ տարվա շրջանավարտների առջև՝ Ջոնսոնը ամերիկացի ժողովրդին կոչ արեց «վերջ տալ աղքատությանը և ռասայական անարդարությանը» և «հարստացնել ու բարձրացնել մեր ազգային կյանքը և զարգացնել մեր ամերիկյան քաղաքակրթության որակը»: Նախագահը խոստացավ, որ Մեծ հասարակությունը կբարձրացնի ռասայականորեն և տնտեսապես իրավունքից զրկված ամերիկացիներին, որոնք երկար ժամանակ զրկված էին եղել ժողովրդավարական և տնտեսական հավասար հնարավորությունների դաշնային երաշխիքներից՝ միաժամանակ բարձրացնելով բոլոր ամերիկացիների չափանիշներն ու կյանքի որակը:

Մեծ հասարակության օրենսդրությունը տպավորիչ էր իր ծավալով: 1964 թվականի Քաղաքացիական իրավունքների օրենքը և 1965 թվականի Քվեարկության իրավունքի օրենքը հաստատեցին դաշնային հանձնառությունը և աջակցությունը քաղաքացիական իրավունքների շարժման նպատակներին՝ արգելելով աշխատանքի խտրականությունը, վերացնելով հանրային կացարանների տարանջատումը, ապահովելով հարավային նահանգների ընտրական օրենքների նկատմամբ ուժեղ դաշնային վերահսկողություն և երաշխավորելով փոքրամասնությունների ընտրական իրավունքը: Քաղաքացիական իրավունքներից զատ՝ Մեծ հասարակությունը հանձն առավ կարգավորել կյանքի որակի հետ կապված մի շարք մտահոգություններ, որոնք լուծելի էին թվում առատության հասարակության մեջ: Այն ստեղծեց կարիքավորներին կտրոնով սննդամթերքի հատկացման առաջին դաշնային ծրագիրը: *Մեդիքեյթ*-ը (Medicare) և *Մեդիքեյդ*-ը (Medicaid)՝ բժշկական խնամքի և բժշկական օգնության դաշնային ծրագրերը կապահովեին տարեցների և աղքատների համար որակյալ բժշկական օգնության հասանելիությունը: 1965 թվականին Տարրական և միջնակարգ կրթության մասին օրենքով իրականացվեց առաջին կայուն և նշանակալի դաշնային ներդրումը հանրակրթության ոլորտում՝ ընդհանուր առմամբ ավելի քան 1 միլիարդ դոլար արժողությամբ: Զգալի միջոցներ հոսեցին նաև դեպի քոլեջներ և համալսարաններ: Մեծ հասարակության ծրագրերով և դաշնային ներդրումներով նաև ստեղծվեցին Արվեստների ազգային հիմնադրամը և Հումանիտար գիտությունների

ազգային հիմնադրամը, որոնք ֆինանսավորում են ամերիկյան մշակույթը մինչ օրս:

Ջոնսոնի ներքին օրակարգի շուրջ ազգային խոսույթը հիմնականում կենտրոնացած էր 1964 թվականի Տնտեսական հնարավորությունների օրենքի (Economic Opportunity Act) շրջանակներում Մեծ հասարակության «Պատերազմ աղքատության դեմ» ծրագրի վրա ծախսված 3 միլիարդ դոլարի շուրջ: Հակասական էր հատկապես Համայնքային գործողության ծրագիրը, որը համարվում էր աղքատության դեմ պայքարի հիմնաքարը: Ջոնսոնի՝ աղքատության դեմ պայքարի քաղաքականությունը մշակողները կարծում էին, որ իրավագրված և աղքատ ամերիկացիներին բարձրացնելու բանալին աղքատ և մարգինալացված քաղաքացիներին աղքատության ծրագրերի իրական կառավարման մեջ ներգրավելն է, ինչը նրանք անվանեցին «առավելագույն իրագործելի մասնակցություն»: Համայնքային գործողությունների ծրագրերը հնարավորություն կտային զրկված ամերիկացիներին նստելու սեղանի շուրջը՝ դաշնային կառավարության կողմից ֆինանսավորվող ծրագրերը նախագծելիս և իրականացնելիս:

Իրականում Ջոնսոնն ինքը պատկերացնում էր երկրորդ «Նոր համաձայնություն» տեղական ընտրախավերի կողմից ղեկավարվող հասարակական աշխատանքների ճամբարներ, որոնք առնական առաքինություններ կսերմանեին գործազուրկ երիտասարդների մեջ: Համայնքային գործողությունները գրեթե ամբողջությամբ շրջանցեցին տեղական ինքնակառավարման մարմիններին և ձգտեցին ստեղծել քաղաքացիական իրավունքների և համայնքային շահերի պաշտպանությամբ զբաղվող կազմակերպություններ, որոնցից շատերը առաջացել էին ավելի լայն քաղաքացիական իրավունքների շարժումից:

Չնայած Մեծ հասարակության ծրագրերի մեծ մասի լայնածավալ աջակցությանը՝ աղքատության դեմ պատերազմն ավելի ու ավելի էր դառնում ձախից և աջից ներքին քննադատությունների կիզակետ: Ձախում հիասթափված ամերիկացիները, գիտակցելով նախագահի դիմադրությունը աղքատ փոքրամասնությունների համայնքների հետագա հզորացմանը, քննադատում էին Վիետնամի ահազնացող պատերազմը, որի ծախսերը նվազեցնում էին աղքատության դեմ պայքարի ներքին ծախսերը: Եվ քանզի ռասայական անկարգություններն ու բռնությունները տարածվեցին քաղաքային կենտրոններում, աջերը քննադատում էին դաշնային ծախսերը «անարժան» քաղաքացիների համար:

Ջոնսոնը ապահովել էր քաղաքացիական իրավունքների մասին մի շարք բովանդակալից օրենքներ, բայց հետո ամեն ինչ սկսեց լճանալ:

ռասայական անկարգությունները ողջ երկրում շարունակվում էին: Նախագահ Ջոնսոնի ներքին ծրագրերի լայնածավալ օրակարգը փորձում էր շտկել ներքաղաքային արատները՝ առաջարկելով ավելի լավ հնարավորություններ կրթության, աշխատանքի, բժշկական օգնության, բնակարանի ձեռքբերման և սոցիալական բարեկեցության համար: Քաղաքացիական իրավունքների պաշտպանության օրենքները և աղքատության դեմ պատերազմը հրահրեցին պահպանողական դիմադրություն և խթան դարձան Հարավում և Արևմուտքում հանրապետականների վերելքի համար: Այնուամենայնիվ, հաջորդ նախագահները և կոնգրեսները անձեռնմխելի պիտի թողնեին Մեծ հասարակության ծրագրերի մեծ մասը:

Ամփոփենք: Երկրորդ համաշխարհային պատերազմին հաջորդած ժամանակաշրջանում ամերիկյան համակեցական «համաձայնությունը» մեծապես խոստումնալից էր: Չնայած միջուկային պատերազմի սպառնալիքին՝ միլիոնավոր մարդիկ վայելեցին աննախադեպ բարգավաճման պտուղները և ամերիկյան ինքնության հպարտությունը: Թվում է, թե բարեկեցությունը խոստանում էր առավել բարձր կենսամակարդակ: Սակայն, մյուս կողմից՝ Առատության հասարակության հակասությունները, այլախոհությունը, խտրականությունը և անհավասարությունները ուղենշում էին նոր հասարակական վայրիվերումներ: Եռում էր քաղաքացիական իրավունքների շարժումը: Այնուհետև հակամշակույթը դարձավ զանգվածային:

1969 թվականի հուլիսի 20-ին «Ապրիլ 11» տիեզերանավը Լուսնի վրա իջեցրեց մարդկանց՝ ամերիկացի տիեզերագնացներ Նիլ Արմսթրոնգին և Էդվին Օլդրինին: Միացյալ Նահանգները իրականացրեց Լուսնի վրա մարդու վայրէջքի ծրագիրը՝ նշանավորելով տիեզերական մրցավազքում հաղթանակը Խորհրդային Միության դեմ: Նիլ Արմսթրոնգը հայտարարում էր, որ Լուսնի վրա իր քայլերը նշանավորում էին «մեկ հսկա թռիչք մարդկության համար», և ամերիկացիները հիանում էին այդ ձեռքբերումով: Այս շրջադարձային նվաճումը իրականություն դարձրեց հանգուցյալ նախագահ Ջոն Ֆ. Բենեդու խոստումը, ով 1961 թվականին հայտարարել էր, որ Միացյալ Նահանգները մինչև տասնամյակի վերջը մարդ կիջեցնեն Լուսնի վրա: Համընդհանուր ցնծությանը զուգահեռ՝ Վիետնամի ահագնանող պատերազմը տարածում էր հիասթափություն, և անկարգություններն ու բողոքի ցույցերը ցնցեցին երկիրը: Անորոշությունը շարունակվում էր:

ԳԼՈՒԽ 20

Վիետնամից Ուոթերգեյթ և լճացում

Վիետնամում պատերազմն ահագնանում էր, և Ջոնսոնի վարչակազմն ուժեղացրեց ամերիկյան ներգրավվածությունը՝ տեղակայելով հարյուրհազարավոր զինվորների՝ կանխելու կոմունիստների կողմից հարավի գրավումը: Պատերազմը մտավ փակուղի: Միացյալ Նահանգներում և Եվրոպայում թափ հավաքեցին հակապատերազմական շարժումներն ու բողոքի ցույցերը: ԱՄՆ-ում ցուցարարներն այրում էին զորակոչային քարտերը, հրաժարվում եկամտահարկ վճարել, գրավում էին կառավարական շենքեր և կանգնեցնում ռազմական բեռներով գնացքները: 1967 թվականին հարյուրհազարավոր ամերիկացիներ էին մասնակցում հակապատերազմական ցույցերին: Հեռուստատեսությունը և տպագիր մամուլը լուսաբանում էր պատերազմի դաժանությունները: ԱՄՆ կառավարությունը լրատվամիջոցների նկատմամբ պաշտոնական գրաքննություն չէր պարտադրում, բայց Սպիտակ տունը և զինվորականները այնուամենայնիվ օգտագործում էին իրենց ճեպագրույցներն ու հարցազրույցները՝ պատերազմի խաբուսիկ պատկեր ներկայացնելու համար: Պաշտոնյաները պնդում էին, որ Ամերիկան հաղթում էր պատերազմում: Սակայն Վիետնամում ամերիկացի լրագրողները շատ արագ հասկացան վատթար իրականությունը և բացահայտեցին պաշտոնական տեղեկատվության սնանկությունը: Սա խորացրեց վստահության ճգնաժամը:

Վիետնամի պատերազմը և ամերիկյան ներքաղաքական լարվածությունը

Ամերիկայի ներգրավվածությունը Վիետնամի պատերազմին սկսվել էր դեռևս Երկրորդ աշխարհամարտից հետո ապագադրությամբ շրջանում: Խորհրդային Միությունն աջակցում էր բազմաթիվ ազգայնական շարժումների ամբողջ աշխարհում, և Միացյալ Նահանգները վախենում էր կոմունիստական ազդեցության ընդլայնումից՝ խոստանալով դիմակայել արևմտյան կապիտալիզմի դեմ ուղղված ցանկացած հեղափոխության: Ամերիկյան արտաքին քաղաքականությունը ղեկավարվում էր *Դոմինոյի տեսությամբ* (Domino Theory). այն է՝ եթե որևէ երկիր ընկներ կոմունիզմի ազդեցության տակ, ապա շուտով կհետևեին հարևան պետությունները և հակառակը: 1949 թվականին Չինաստանում կոմունիստների հաղթանակից հետո Միացյալ Նահանգները սկսեց ֆինանսապես

աջակցել ֆրանսիական բանակի ջանքերին՝ պահպանելու վերահսկողությունը Վիետնամում, Կամբոջայում և Լաոսում:

1946-1954 թվականներին Ֆրանսիան պատերազմում էր Հո Շի Մինի գլխավորած Վիետնամի ազգային-ազատագրական միասնական ճակատի դեմ՝ ճնշելու ապստամբությունը իր գաղութում: Միացյալ Նահանգները աջակցում էր Ֆրանսիային ֆինանսական միջոցներով, զենքով և խորհրդատուներով, բայց դա բավարար չէր: 1954 թվականին՝ Ժնևի խաղաղության համաժողովի նախօրեին, Վիետնամի ուժերը Դիեն Բիեն Ֆուում հաղթեցին ֆրանսիական բանակին: Համաժողովը Վիետնամը ժամանակավորապես բաժանեց երկու առանձին պետությունների, մինչև տեղի կունենային ՄԱԿ-ի կողմից դիտարկվող ընտրություններ: Բայց Միացյալ Նահանգները զգուշացավ կոմունիստների ընտրական հաղթանակից և արգելափակեց ընտրությունները: Ժամանակավոր բաժանումը դարձավ մշտական: Միացյալ Նահանգները ստեղծեց Վիետնամի Հանրապետությունը կամ Հարավային Վիետնամը, որի վարչապետն էր ԱՄՆ-ի աջակցությունը վայելող Նգո Դին Դիեմը: Վերջինս ժամանակին ապրել էր Միացյալ Նահանգներում և երդվյալ հակակոմունիստ էր: Սակայն Դիեմի կառավարությունը և Հարավային Վիետնամի բանակը չկարողացան զսպել կոմունիստական ապստամբությունը, որը ձգտում էր վերամիավորել Վիետնամը:

Միացյալ Նահանգները զենք և աջակցություն տրամադրեց, սակայն, չնայած թվային և տեխնոլոգիական ակնհայտ առավելությանը՝ Հարավային Վիետնամը սայթաքեց ապստամբ Վիետկոնգի (Vietcong) ստորաբաժանումների առաջ: Դիեմը կոռումպացված ղեկավար էր և չունեիր լուրջ աջակցություն երկրի ներսում, նա սպանվեց 1963 թվականին: Դրան հետևեց ռազմական դիկտատորների կառավարման խառնաշփոթը, և իրավիճակը Հարավային Վիետնամում շարունակում էր վատթարանալ: Այնուամենայնիվ, 1960-ականների սկզբին ամերիկյան հասարակությունը դեռևս հիմնականում անտեղյակ էր Վիետնամի մասին, նույնիսկ երբ նախագահ Ջոն Ֆ. Բենեդիկին մոտ 16,000 ռազմական խորհրդատուներ ուղարկեց՝ օգնելու Հարավային Վիետնամին ճնշել ներքին կոմունիստական ապստամբությունը:

1964 թ. օգոստոսի 2-ին ԱՄՆ «Մեդոքս» ռազմանավը զեկուցեց Տոնկինի ծոցում Հյուսիսային Վիետնամի նավերի կողմից կրակ բացելու մասին: Թեև միջադեպի մանրամասները հակասական էին, Ջոնսոնի վարչակազմն օգտագործեց միջադեպը Վիետնամում ամերիկյան ռազմական ներխուժում սկսելու համար: Կոնգրեսն ընդունեց Տոնկինյան ծոցի բա-

նաձևը՝ իրավունք տալով նախագահ Ջոնսոնին տեղակայելու ամերիկյան զինված ուժերը Հարավային Վիետնամի պաշտպանության համար: 1965 թվականի մարտին ամերիկյան ծովային հետևակը ավիանավեց Վիետնամում: Պատերազմը սկսվեց:

Գեներալ Ուիլյամ Վեսթմորլենդի գլխավորած ամերիկյան զորքերին հանձնարարվել էր պաշտպանել Հարավային Վիետնամը Վիետկոնգի ապստամբներից և Հյուսիսային Վիետնամի կանոնավոր բանակից: Սակայն Վիետնամի պատերազմում ամերիկյան ռազմական բոլոր ջանքերը՝ գորգային ռմբակոծությունները և մեծաթիվ զորքերի տեղակայումը, ապարդյուն էին: Սա այլ տեսակի պատերազմ էր: Առաջընթացը չափվում էր ոչ թե նվաճված քաղաքներով կամ տարածքներով, այլ զոհվածների մարմինների հաշվարկով և սպանությունների հարաբերակցությամբ: Մինչև 1968 թվականը կես միլիոնանոց ամերիկյան զորք էր տեղակայված Վիետնամում, այդ ընթացքում մոտ 20,000 զինծառայող էր զոհվել: Թեև գեներալ Վեսթմորլենդը և պաշտպանության նախարար Ռոբերտ ՄաքՆամարան պնդում էին, որ կոմունիստների պարտությունը հորիզոնում է, բայց պատերազմը դեռևս մոտ չէր հաղթական ավարտին: Բողոքի ցույցեր բռնկվեցին ամբողջ Միացյալ Նահանգներում, որոնք նաև պիտի ապահովեին ամերիկյան հակամշակույթի հանրապատկերը:

1968 թվականի հունվարին հյուսիսվիետնամական բանակը նախաձեռնեց «Տետ հարձակումը» (Tet Offensive): Կոմունիստական ուժերը լայնածավալ հարձակում սկսեցին ամերիկյան և հարավվիետնամական դիրքերի վրա ողջ Հարավային Վիետնամում, այդ թվում՝ Սայգոնում ամերիկյան դեսպանատան վրա: Թեև ամերիկյան ուժերը հետ մղեցին հարձակումը և մեծ կորուստներ պատճառեցին Վիետկոնգին, սակայն «Տետ հարձակումը» ցույց տվեց, որ չնայած վարչակազմի պաշտոնյաների բազմակի ժխտողական պնդումներին՝ թշնամին կարող էր հարվածել Հարավային Վիետնամի ցանկացած կետի: Սա ավելի խաթարեց հանրային վստահությունը իշխանությունների նկատմամբ. հակապատերազմական տրամադրություններն ու բողոքներն աճում էին:

Այս պայմաններում 1968 թվականի մարտի 31-ին նախագահ Լինդոն Ջոնսոնը ազգային հեռուստատեսությամբ հայտարարեց, որ չի պատրաստվում վերընտրվել: Դեմոկրատական կուսակցությունից նախագահի թեկնածության առաջադրման համար Յուջին Մաքքարթին և Ռոբերտ Ֆ. Բենեդիկ (հունիսին Քենեդին սպանվեց) պայքարում էին Ջոնսոնի փոխնախագահ Հյուբերթ Համֆրիի դեմ: Համֆրին հաղթեց առաջադրման մրցապայքարում: Հանրապետական կուսակցությունն առաջադրեց Ռի-

չարդ Նիքսոնին, ով առաջարկում էր «օրենք և կարգ» և պատերազմն ավարտելու անորոշ ծրագիր: Քաջ գիտակցելով պատերազմը դադարեցնելու ներքին ճնշումը՝ Նիքսոնը ձգտում էր մեղմել հակապատերազմական տրամադրությունները՝ խոստանալով ամերիկյան զորքերի աստիճանական դուրսբերման նախագիծ: Ըստ այդմ՝ պետք է վերապատրաստվեին և վարժեցվեին Հարավային Վիետնամի ուժերը՝ ստանձնելով ավելի մեծ պատասխանատվություն պատերազմում, իսկ ամերիկյան զորքերը աստիճանաբար դուրս կբերվեին: Նիքսոնը և նրա խորհրդականները նախագիծն անվանեցին պատերազմի «վիետնամականացում» (“Vietnamization”):

Միևնույն ժամանակ, Նիքսոնը դիմեց ամերիկացիների այսպես կոչված լուռ մեծամասնությանը և նրանց, ովքեր դեռ աջակցում էին պատերազմին (և դեմ էին հակապատերազմական շարժմանը)՝ առաջարկելով «պատվավոր» վերջ ԱՄՆ-ի ներգրավվածությանը Վիետնամի պատերազմին և «արժանապատիվ խաղաղություն»: Նիքսոնը փոքր առավելությամբ հաղթեց նախագահական ընտրություններում: Սակայն ամերիկյան զինուժի դուրսբերման հրապարակային հավաստիացումները քողարկում էին հակամարտության կտրուկ սրացումը: Ձգտելով խթանել խաղաղության բանակցությունները՝ Նիքսոնը հրամայեց հարվածել կոմունիստական ուժերի մատակարարման գծերին Լաոսում և Կամբոջայում՝ հուսալով համոզել Հյուսիսային Վիետնամին, որ նա ամեն ինչ կանի պատերազմը դադարեցնելու համար: Առանց հանրության իմացության և Կոնգրեսի հավանության իրականացված այս ոմբակոծությունները չկարողացան խթանել խաղաղության գործընթացը, և բանակցությունները դադարեցին մինչև Ամերիկայի կողմից հայտարարված 1969 թվականի նոյեմբերի վերջնաժամկետը:

Հարձակումների մասին լուրերից հետո հակապատերազմական ցույցերը վերսկսվեցին: 1970 թվականին ոստիկանության և ազգային գվարդիայի ուժերը բախվեցին ցուցարարների հետ. Միսիսիպիում՝ Ջեքսոնի պետական համալսարանում, և Օհայոյում՝ Քենթի պետական համալսարանում, բողոքի ցույցերի ժամանակ զոհվեցին վեց ուսանողներ: Անցավ ևս երեք տարի, ու ևս 20,000 ամերիկացի զինվորներ զոհվեցին: Կողմերը հասան համաձայնության, երբ Նիքսոնի սպառնալիքների ներքո Հյուսիսային Վիետնամի և Հարավային Վիետնամի կառավարությունները 1973 թվականի հունվարին ստորագրեցին Փարիզի խաղաղության համաձայնագիրը, որով պաշտոնապես ավարտվեց ԱՄՆ մասնակցությունը Վիետնամի պատերազմին: Խաղաղությունն անկայուն էր, և երբ պատերազմը

վերսկսվեց, Հյուսիսային Վիետնամի զորքերը արագորեն նվաճեցին հարավը:

Այսպիսով, մինչև 1975 թվականը, չնայած մոտ մեկ տասնամյակ ամերիկյան անմիջական ռազմական ներգրավվածությանը, Վիետնամը վերամիավորվեց կոմունիստական կառավարության ներքո: Վիետնամի պատերազմը խորապես ազդեց ամերիկյան ներքին քաղաքականության վրա: Ավելին, այն թունավորեց շատ ամերիկացիների ընկալումներն իրենց կառավարության և աշխարհում նրա դերի մասին: Եվ այնուամենայնիվ, թեև հակապատերազմական ցույցերը գրավեցին լրատվամիջոցների ուշադրությունը և դարձան 1960-ականների հակամշակույթի խորհրդանիշը, շատ ամերիկացիներ շարունակում էին իրենց պատերազմը համարել արդարացի: Զգուշանալով հակամշակույթի տարածումից և հասարակական ու քաղաքացիական կարգի արագ փոխակերպություններից՝ ամերիկացիների աճող զանգվածները ապավինեցին պահպանողականության գաղափարաբանությանը:

Հասարակական և մշակութային բողոքը. 1968 թվականի ճգնաժամը

1960-ականների վերջին քաղաքացիական իրավունքների շարժումը կտրուկ վերափոխումներ ապրեց: «Սևական ուժ» շարժման վերելքը մարտահրավեր նետեց քաղաքացիական իրավունքների շարժման ավելի վաղ առաջնորդների միասնացման երազանքներին: Մարտին Լյութեր Քինգ կրտսերի և Մալկոլմ Իքսի սպանությունները հիասթափություն առաջացրին, իսկ բազմաթիվ օտարացած գործիչներ ետ կանգնեցին ազատական բարեփոխումների տեսլականից: Քաղաքացիական իրավունքների կերպափոխումները արտացոլվեցին ամերիկյան մշակույթում: Ռասայական, դասակարգային և սեռային գծերը խզեցին ամերիկյան «զանգվածային» մշակույթը: 1950-60-ականների ամերիկյան հանրաճանաչ զանգվածային մշակույթը, որը հիմնականում սպիտակամորթ, տղամարդկանց գերակշռությամբ և պահպանողական երանգ ուներ, 1960-ականների վերջին և 1970-ականներին հիմնարար կերպափոխումներ ապրեց: Ամերիկացիները նահանջեցին դեպի ավելի փոքր, սեգմենտավորված ենթամշակույթներ: Հակապատերազմական շարժման համապատկերում տարածվեց հիպիների ենթամշակույթը:

Եթե 1960-ականների հանրաճանաչ ողբը գրավում էր նոր հակամշակույթը, ապա 1970-ականներին մշակութային այլ ձևեր վերածնվեցին,

որոնք գրավում էին սպիտակամորթ աշխատավոր դասակարգին, որը դիմակայում էր 1960-ականների սոցիալական և քաղաքական ցնցումներին: Այդպիսին էին քանթրի հիթերը, օրինակ՝ Մերլ Հագարդի «Օքիե Մասքոգի» (Okie from Muskogee) երգը: Դիսկոն առաջարկեց նոր, լավատեսական, ռասայականորեն միասնացած փոփ երաժշտություն: Իսկ ռեփը ներկայացնում էր սևամորթների գերարական մշակութային ձևը: Սեռական հեղափոխությունը շարունակվեց մինչև 1970-ական թվականները: Շատերի համար սեքսուալությունը տարանջատվեց ամուսնությունից և ծննդաբերությունից: Տասնամյակի վերջում սեքսուալությունը համարվում էր մասնավոր խնդիր, թեև խիստ կարգավորվում էր դաշնային, նահանգային և տեղական օրենսդրությամբ: 1969 թվականին Կալիֆորնիան ընդունեց առանց մեղքի ամուսնալուծության առաջին օրենքը: Ամուսնալուծության հետ կապված խարանդ գոլորշացավ, և սեռական ու անձնական ազատության աճող զգացումը և համապատասխան օրենսդրական փոփոխությունները նպաստեցին ամուսնալուծությունների տարածմանը: 1959-1979 թթ. ամերիկյան ամուսնալուծությունների թիվը կրկնապատկվեց: 1980-ականների սկզբին ամերիկյան բոլոր ամուսնությունների գրեթե կեսն ավարտվում էր ամուսնալուծությամբ:

1968 թ. ապրիլի 4-ին Մեմֆիսում սպանվեց ամերիկյան քաղաքացիական իրավունքների շարժման մեծագույն առաջնորդներից Մարտին Լյութեր Քինգ-կրտսերը: Ամերիկյան հարյուրից ավելի քաղաքներում անկարգություններ սկսվեցին: Երկու ամիս անց՝ հունիսի 6-ին, Կալիֆորնիայում քարոզարշավի ժամանակ սպանվեց Ռոբերտ Բենեդիկին, ով ազատական իդեալիստների վերջին հույսն էր: Չայրոյթն ու հիասթափությունը ողորդեցին երկիրը: Ստով պարուրված Վիետնամի պատերազմի դաժան փակուղին ևս գումարվեց ներհասարակական համաձայնության խաթարման պատճառներին: Ուսանողները սկսեցին դասադուլներ, փակեցին քոլեջներն ու համալսարանները, գրոհեցին պետական հաստատությունների վրա: Բողոքի ցույցերը ընդգրկեցին ողջ երկիրը:

1968 թվականի օգոստոսի վերջին Չիկագոյում Դեմոկրատական կուսակցության ազգային համագումարի ժամանակ, որտեղ դեմոկրատները հավաքվել էին առաջադրելու լայնորեն ընդունելի նախագահի թեկնածու, հավաքվեցին նաև ցուցարարները: Վերջիններս ծրագրել էին զանգվածային բողոքի ցույցեր անցկացնել Չիկագոյի հասարակական վայրերում: Բողոքի ցույցերը սկզբում խաղաղ էին, բայց իրավիճակն արագ սրվեց ոստիկանության խիստ սպառնալիքների ներքո, իսկ երիտասարդները սկսեցին ծաղրել ու նախատել պաշտոնյաներին: Հավաքված ուսանող-

ներից շատերը պատրաստ չէին դիմակայելու Չիկագոյի քաղաքապետ Ռիչարդ Դեյլիի ագրեսիվ և ծանր զինված ոստիկանական ուժերին ու ազգային գվարդիայի զորքերին: Ոստիկանները և գվարդիականները դաժան ծեծի ենթարկեցին ցուցարարներին: Շատ երիտասարդներ, համոզված լինելով, որ հասարակության մեծ համակրանքը կարելի էր շահել անզեն ցուցարարների նկատմամբ ոստիկանական դաժանության պատկերների ցուցադրման միջոցով, շարունակեցին բռնություն հրահրել:

Չիկագոյի ոստիկանական դաժանությունը ստվերեց Դեմոկրատական կուսակցության համագումարը: Բախումներն իրենց գազաթնակետին հասան «Հիլթոն» հյուրանոցի մոտ, որոնց կադրերը ցուցադրվեցին աշխարհի տարբեր հեռուստաալիքներով: Չիկագոյի անկարգություններն ամփոփեցին աճող այն զգացումը, որ այդժամ քառսն էր ղեկավարում ամերիկյան հասարակական կյանքը: Անկարգությունն ու քառսը ստվերեցին հույսն ու առաջընթացը: Իսկ պահպանողականների համար դա նրանց բոլոր վախերի ու վարանումների հաստատումն էր: Ամերիկացիները խաղաղություն և կայունություն էին ուզում: Նրանք «օրենք և կարգ» էին ուզում:

Ռիչարդ Նիքսոնի վերելքն ու անկումը

Հակապատերազմական բողոքների, գնաճի և ներքին անհնազանդությունների պայմաններում 1968 թ. մարտին նախագահ Ջոնսոնը հայտարարեց, որ չի պատրաստվում երկրորդ անգամ առաջադրվել, ինչն աննախադեպ քայլ էր ամերիկյան քաղաքականության մեջ: Այս ամենը պայմանավորեց 1968 թվականի նախագահական ընտրությունների և քարոզարշավի համատեքստը: Մրցապայքարն ընթանում էր դեմոկրատ թեկնածու փոխնախագահ Հյուբերթ Համֆրիի, հանրապետական Ռիչարդ Նիքսոնի և երրորդ կողմի թեկնածու՝ Ալաբամայի տխրահռչակ սեզրեզացիոնիստ նահանգապետ Ջորջ Ուոլեսի միջև: 1968 թ. գարնանը Դեմոկրատական կուսակցությունը խառնաշփոթի մեջ էր, երբ սենատորներ Յուջին Մաքքարթին և Ռոբերտ Քենեդին վիճարկեցին Ջոնսոնի թեկնածությունը, և նախագահը պատասխանեց իր չառաջադրվելու անակնկալ հայտարարությամբ: Նիքսոնի թեկնածության ամրապնդմանը նաև նպաստեցին հասարակական անկարգությունները, որոնք բռնկվեցին ամբողջ երկրում Մարտին Լյուիսեր Քինգի սպանությունից հետո, և հունիսին Ռոբերտ Քենեդու սպանությունից հետո:

Հանրապետական Նիքսոնի նախընտրական քարոզարշավը հիմնված

էր խաղաղություն ապահովելու ու բարգավաճումը վերականգնելու հրապարակային խոստումների վրա: Նա իր քաղաքական հենարան էր համարում «լուռ կենտրոնը»՝ քաղաքական սպեկտրի մեջտեղում գտնվող միլիոնավոր մարդկանց: «Լուռ մեծամասնության» համար Նիքսոնի արշավը նպատակաուղղված էր իր կողմը գրավելու արվարձանների ամերիկացիներին՝ կապելով ազատականներին բռնության, բողոքի և անկարգությունների հետ: Շատերն ընդունեցին Նիքսոնի ուղերձը: 1968 թվականի սեպտեմբերին անցկացված հարցումը ցույց տվեց, որ ամերիկացիների 80 տոկոսը կարծում էր, որ հասարակական կարգը «խաթարվել է»:

Մինևույն ժամանակ, Համֆրին պայքարում էր իրեն Ջոնսոնից հեռու ներկայացնելու և շահելու աշխատավոր դասակարգի աջակցությունը հյուսիսային քաղաքներում, որտեղ ընտրողներին գրավում էին օրենքի ու կարգի և քաղաքացիական իրավունքների մերժման Ուոլեսի կոչերը: Փոխնախագահ Համֆրին արհմիությունների աջակցությամբ ձայների վերջնական աճ արձանագրեց հյուսիսային քաղաքներում, բայց դա բավարար չէր Նիքսոնին հաղթելու համար: Նիքսոնը հավաքեց համաժողովրդական ձայների 43,3 տոկոսը՝ փոքր-ինչ գերազանցելով Համֆրիի 42,7 տոկոսը: Ուոլեսը ստացավ ժողովրդական քվեի 13,5 տոկոսը և հաղթեց Խորը հարավի հինգ նահանգներում, ինչը երրորդ կողմի թեկնածուի համար տպավորիչ ցուցանիշ էր: Նիքսոնի համար առավել որոշիչ էին ընտրիչների կոլեգիայի ձայները. Նիքսոնը հավաքեց 302 ձայն, մինչդեռ Համֆրին և Ուոլեսը ստացան համապատասխանաբար՝ 191 և 45 ձայն: Այնուամենայնիվ, դեմոկրատները պահպանեցին վերահսկողությունը և Ներկայացուցիչների պալատի, և՛ Սենատի նկատմամբ: Նիքսոնը պաշտոնավարելու էր ընդդիմադիր կուսակցության կողմից Կոնգրեսի երկու պալատների վերահսկողության պայմաններում:

Սպիտակ տուն տեղափոխվելուց հետո նախագահ Ռիչարդ Նիքսոնն իր ուժերը կենտրոնացրեց ամերիկյան արտաքին քաղաքականության վրա: 1969 թվականին նա հրապարակայնորեն հռչակեց Նիքսոնի դոկտրինը (Nixon Doctrine): Մի կողմից, Նիքսոնը հաստատում էր ամերիկյան ժողովրդավարական կապիտալիզմի գերակայությունը՝ խոստանալով, որ Միացյալ Նահանգները կշարունակի ֆինանսապես աջակցել իր դաշնակիցներին: Այնուամենայնիվ, նա դատապարտեց ամերիկյան զինված ուժերը Երրորդ աշխարհի հակամարտություններում ներգրավելու նախորդ վարչակազմերի հանձնառությունը և նախազգուշացրեց դաշնակից պետություններին պատասխանատվություն ստանձնել սեփական պաշտպանության համար: Ըստ այդմ՝ Նիքսոնի դոկտրինը շրջում էր Ամերիկյան

հակակոմունիստական զսպման ակտիվ քաղաքականությունից և ուղղորդում դեպի լարվածության թուլացման (détente) նոր ռազմավարություն:

Ազգային անվտանգության հարցերով խորհրդական և այնուհետև պետքարտուղար Հենրի Բիսինջերը, խրախուսելով լարվածության թուլացման ռազմավարությունը, ձգտում էր կայունացնել միջազգային համակարգը՝ Սառը պատերազմում ԱՄՆ հակառակորդների հետ հարաբերությունները հալեցնելով և սպառազինությունների մրցավազքի մակարդակը երկկողմանի սառեցնելով: Օգտվելով կոմունիստական Չինաստանի և Խորհրդային Միության միջև առկա լարվածությունից՝ Նիքսոնը ձգտեց ավելի սերտ հարաբերություններ հաստատելու երկուսի հետ՝ լարվածությունը թուլացնելու և յուրաքանչյուրի նկատմամբ Միացյալ Նահանգների դիրքերն ամրապնդելու համար: Ռազմավարությունը կարծես թե ստացվեց: 1972 թվականին Նիքսոնը դարձավ ԱՄՆ առաջին նախագահը, ով այցելեց կոմունիստական Չինաստան և երկրորդը Ֆրանկլին Ռուզվելտից հետո, ով այցելեց Խորհրդային Միություն: Երկու երկրների հետ էլ ուղղակի դիվանագիտությունը և մշակութային փոխանակման ծրագրերն աճեցին՝ արդյունավորվելով ամերիկա-չինական հարաբերությունների պաշտոնական կարգավորմամբ և ամերիկա-խորհրդային սպառազինությունների սահմանափակման երկու համաձայնագրերի ստորագրմամբ՝ 1972 թ. Հակաբալիստիկ հրթիռային պայմանագրով (Anti-Ballistic Missile Treaty (ABM)) և Ռազմավարական սպառազինությունների սահմանափակման պայմանագրով (Strategic Arms Limitations Treaty (SALT I)): 1973 թվականին, Սառը պատերազմի գրեթե երեսնամյա լարվածությունից հետո, խաղաղ գոյակցությունը հանկարծ հնարավոր էր թվում: Շուտով, սակայն, փխրուն անդորրը կրկին տեղի տվեց Սառը պատերազմի անկայունությանը:

1973 թվականի նոյեմբերին Նիքսոնը, հեռուստատեսությամբ դիմելով ամերիկյան ժողովրդին, հայտարարեց, որ էներգետիկ ոլորտը դարձել է «լուրջ ազգային խնդիր», և որ Միացյալ Նահանգներն ամենասուր էներգետիկ պակասորդ ունի Երկրորդ համաշխարհային պատերազմից ի վեր: Հոկտեմբերին Նավթ արտահանող երկրների կազմակերպության (ՕՊԵԿ) անդամ արաբական երկրներն արգելք էին դրել դեպի ԱՄՆ նավթի արտահանման վրա՝ ի պատասխան Մերձավոր Արևելքում ամերիկյան միջամտության: Էմբարգոն սկիզբ դրեց ԱՄՆ-ում էներգետիկ ճգնաժամին: 1973 թվականի վերջին նավթի համաշխարհային գինը քառապատկվեց: Վարորդները ժամերով հերթ էին կանգնում մեքենաները լիցքավորելու համար: Առանձին լցակայաններում բենզինը սպառվել էր: 1974 թվակա-

նին ՕՊԵԿ-ը չեղյալ հայտարարեց իր էմբարգոն, սակայն տնտեսական վնասը հասցված էր: Ճգնաժամը շարունակվեց մինչև 1970-ականների վերջը:

Ինչպես Վիետնամի պատերազմը, այնպես էլ նավթային ճգնաժամը ցույց տվեց, որ նույնիսկ փոքր երկրները կարող էին վնասել Միացյալ Նահանգներին: Վիետնամի պատերազմը և էներգետիկ ճգնաժամը խորացրին ամերիկացիների հիասթափությունը աշխարհում Միացյալ Նահանգների դերից, ինչպես նաև իրենց առաջնորդների արդյունավետությունից ու որակից: Ավելին, 1970-ականների և 1980-ականների սկզբի կառավարական սկանդալները խաթարեցին վստահությունը Ամերիկայի պետական հաստատությունների նկատմամբ:

1971 թվականին Նիքսոնի վարչակազմը «Նյու Յորք թայմսին» (The New York Times) և «Վաշինգտոն փոստին» (The Washington Post) դատի տալու անհաջող փորձ կատարեց՝ փորձելով կանխել Պենտագոնի փաստաթղթերի հրապարակումը, որը պարունակում էր Վիետնամում ԱՄՆ-ի ներգրավվածության վերաբերյալ գաղտնի և պախարակելի տեղեկատվություն: Նիքսոնը նաև բախվեց Վիետնամի պատերազմի դեմ Կոնգրեսի հակազդեցության աճող ալիքին, և Կոնգրեսը աննախադեպ վերահսկողություն հաստատեց պատերազմական ծախսերի վրա: 1973 թվականին Կոնգրեսն ընդունեց «Պատերազմի լիազորությունների բանաձևը» (War Powers Resolution), որը կտրուկ նվազեցրեց առանց Կոնգրեսի համաձայնության պատերազմ վարելու նախագահի կարողությունը:

Հանրային վստահությունը խաթարող ամենաաղմկահարույց իրադարձությունը Ուոթերգեյթյան սկանդալն (Watergate scandal) էր: 1972 թվականի հունիսի 17-ին հինգ մարդ ձերբակալվեց Դեմոկրատական ազգային կոմիտեի (Democratic National Committee (DNC)) գրասենյակներում՝ Վաշինգտոնի կենտրոնում գտնվող Ուոթերգեյթ հյուրանոցագրասենյակային համալիրում: Անվտանգության աշխատակցի հուշմամբ ոստիկանները գտան մարդկանց, ովքեր փորձում էին տեղադրել գաղտնալսող սարքավորումներ: Ձերբակալվածներից մեկը Կենտրոնական հետախուզական վարչության (ԿՀՎ) նախկին աշխատակից էր, որը տվյալ պահին աշխատում էր որպես անվտանգության աշխատակից Նիքսոնի վարչակազմի՝ նախագահին վերընտրելու կոմիտեում:

Թեև չկար որևէ ուղղակի ապացույց, որ Նիքսոնն է հրամայել ներխուժել Ուոթերգեյթ, կար իր աշխատակազմի ղեկավարի հետ նախագահի զրույցի ձայնագրությունը, որում նա պահանջում էր, որ գաղտնալսեն Դեմոկրատական ազգային կոմիտեի նախագահին՝ կոմիտեի ֆինանսա-

կան աջակիցների անունները ստանալու համար: Այնուհետև անունները կարող էին տրվել Արդարադատության քարտուղարությանը և Ներքին եկամուտների ծառայությանը՝ նրանց գործերի վերաբերյալ հետաքննություն անցկացնելու համար: Նիքսոնի մյուս ձայնագրությունը առնչվում էր այն բանին, թե ինչպես է իր աշխատակազմի ղեկավարին հրամայում ներխուժել Բրուքինգս հաստատության գրասենյակ և դուրս բերել Վիտնամի պատերազմին վերաբերող փաստաթղթերը: Չնայած Ուոթերգեյթի դեպքին նախագահի կապվածության ապացույցների բացակայությանը՝ Սպիտակ տունը լայնածավալ քողարկման գործընթաց սկսեց: Նախագահական վարչակազմի պաշտոնյաները հրամայեցին ԿՀՎ-ին կասեցնել ՀԴԲ-ի կողմից միջադեպի հետաքննությունը:

Այնուամենայնիվ, 1972 թ. նոյեմբերին Նիքսոնը համոզիչ հաղթանակ տարավ նախագահական ընտրություններում: Սակայն հիմնականում «Վաշինգտոն փոստի» լրագրողների ջանքերով Ուոթերգեյթյան սկանդալը շարունակում էր բորբոքել կրքերը: Սենատը հեռուստատեսային լուսմներ անցկացրեց: Վկայակոչելով գործադիրի իր արտոնությունը՝ նախագահ Նիքսոնը հրաժարվեց տրամադրել Սպիտակ տան գաղտնի ձայնագրման համակարգի ձայներիզները: 1974 թվականի հուլիսին Ներկայացուցիչների պալատի դատական հանձնաժողովը հաստատեց նախագահին իմփիչմենթի ենթարկելու օրինագիծը: Նիքսոնը հրաժարական տվեց նախքան Կոնգրեսը կքվեարկեր իմփիչմենթի հարցով: Նա դարձավ ԱՄՆ առաջին և մինչ այժմ միակ նախագահը, ով հրաժարական տվեց: Փոխնախագահ Ջերալդ Ֆորդը ստանձնեց նախագահի պաշտոնը, իսկ մեկ ամիս անց Նիքսոնին նախագահական լիակատար ներում շնորհեց: Նիքսոնն անհետացավ հասարակական-քաղաքական կյանքից՝ երբևէ չընդունելով իրեն առաջադրված մեղադրանքը:

Ապարդյունաբերականացումը և Արևագոտու վերելքը

1940-1950-ական թվականներն ամերիկացի աշխատավորների համար նյութական բարգավաճման ժամանակաշրջան էր: Այսպես կոչված Մեծ սեղմման (Great Compression) ժամանակաշրջանում բոլոր դասակարգերի ամերիկացիներն օգտվեցին հետպատերազմյան բարգավաճումից: Թեև տարանջատումը և խտրականությունը շարունակում էին սահմանել ռասայական և գենդերային անհավասարությունները, այնուամենայնիվ գործազրկությունը շարունակաբար նվազում էր, իսկ բարձր պրոգրեսիվ հարկային համակարգը և հզոր արհմիությունները նվազեցնում էին եկա-

մուտների ընդհանուր անհավասարությունը: 1947-1973 թվականներին աշխատավոր դասակարգի բարեկեցության կենսամակարդակը գրեթե կրկնապատկվեց: Սակայն ընդհանուր բարեկեցությունը քողարկում էր ավելի խորը տնտեսական խնդիրները:

Դետրոյթը դարձավ ամերիկյան արդյունաբերության անկման և քաղաքային ճգնաժամի խորհրդանիշը: Դետրոյթը ծաղկում էր ապրել Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ, երբ ավտոարտադրողները, այդ թվում՝ «Ֆորդը» և «Ջեներալ Մոթորսը», փոխակերպեցին իրենց հավաքման հոսքագծերը՝ պատերազմի համար մեքենաներ արտադրելու: Քաղաքն անվանում էին «ժողովրդավարության զինանոց»: Պատերազմից հետո, սակայն, ավտոմոբիլային ընկերությունները սկսեցին փակել քաղաքային գործարանները և տեղափոխվել ծայրամասային արվարձաններ: Մի քանի գործոններ խթանեցին այս գործընթացը: Որոշ քաղաքներ ապարդյունաբերականացվեցին մասամբ իրենց ջանքերով: Սան Ֆրանցիսկոյի, Սենթ Լուիսի և Ֆիլադելֆիայի համայնքային իշխանությունները վտարեցին թեթև արդյունաբերության գործարանները՝ բարձրահարկ բնակարանային համալիրների և գրասենյակային շենքերի կառուցման համար տեղ բացելու նպատակով: Ամերիկյան աշխատուժի նվազմանը նպաստեց նաև մեքենայացումը: Արտադրական ընկերությունները ձգտում էին նվազեցնել աշխատուժի ծախսերը՝ մեքենայացնելով արտադրությունը, կրճատելով աշխատակիցներին և տեղափոխվելով «գործարարության համար բարենպաստ» քաղաքականություն վարող տարածքներ, որոնց բնորոշ էին ցածր հարկային դրույքաչափերը, աշխատանքային իրավունքի դեմ ու հակաարհմիութենական օրենքները և ցածր աշխատավարձերը:

Այս կերպ Դետրոյթը սկսեց ապարդյունաբերականացվել և կորցնել աշխատատեղերը: 1950-1958 թվականներին «Քրայսլերը», որն ավելի շատ աշխատատեղեր էր ապահովում Դետրոյթում, քան «Ֆորդը» կամ «Ջեներալ Մոթորսը», կիսով չափ կրճատեց Դետրոյթի իր արտադրական աշխատուժը: 1953-1960 թվականներին Արևելյան Դետրոյթը կորցրեց 10 գործարաններ և ավելի քան 71,000 աշխատատեղ: Մեծ եռյակի ավտոարտադրողների կողմից ընդունված որոշումները կործանարար ազդեցություն ունեցան Դետրոյթի արդյունաբերական ողջ համակցության վրա: Երբ ավտոմոբիլային ընկերությունները մեքենայացնում էին կամ տեղափոխում իրենց գործարանները, օժանդակ մատակարարները, այդ թվում՝ հաստոցաշինական ընկերությունները, դուրս էին մղվում մատակարարման շղթայից և նույնպես ստիպված էին կրճատել իրենց աշխատուժը:

1947-1977 թվականներին քաղաքի արտադրական ձեռնարկությունների թիվը ավելի քան 3000-ից կրճատվեց գրեթե կիսով չափ: Նույն ժամանակահատվածում արտադրական աշխատատեղերը 338,400-ից նվազեցին մինչև 153,000-ի:

Ապարդյունաբերականացումը հարվածեց բոլոր աշխատավորներին, բայց արդյունաբերական վերակազմավորումն ամենածանր ազդեցությունն ունեցավ Դետրոյթի աֆրոամերիկացիների վրա: Թեև միջին խավի աֆրոամերիկացիներից շատերին հաջողվեց հեռանալ քաղաքի գետտոներից՝ 1960 թվականին Դետրոյթի ավտոմեքենաշինական գործարանների սևամորթ աշխատավորների 19,7 տոկոսը գործազուրկ էր՝ սպիտակամորթների ընդամենը 5,8 տոկոսի համեմատ: Բնակարանային և զբաղվածության բացահայտ խտրականությունը տասնամյակներ շարունակ աֆրոամերիկացիներին սահմանափակել էր առանձնացված թաղամասերում: Քչերը կարող էին իրենց թույլ տալ հետևել արդյունաբերությանը, քանզի այն քաղաքից հեռացավ դեպի արվարձաններ և երկրի այլ մասեր, հատկապես հարավ: Տարանջատումը և խտրականությունը նրանց խրված էր պահում այնտեղ, որտեղ ավելի ու ավելի քիչ աշխատատեղեր կային: Ժամանակի ընթացքում Դետրոյթը վերածվեց գործազրկության, հանցավորության և համայնքային միջոցների անբավարարության գոտու: Երբ 1967 թվականին Դետրոյթում բռնկվեցին զանգվածային անկարգություններ, քաղաքի 18-24 տարեկան սևամորթ բնակիչների 25-30 տոկոսը գործազուրկ էր:

Դետրոյթում և այլ քաղաքներում ապարդյունաբերականացմանը զուգընթաց՝ ծավալվել էր արհմիութենականացման դեմ հարձակման երկարատև գործընթաց, որը սկսվել էր Երկրորդ համաշխարհային պատերազմի հետո: Չունենալով այն քաղաքական աջակցությունը, որն արհմիությունները վայելում էին «Նոր համաձայնության» տարիներին՝ աշխատանքային կազմակերպությունները փոխեցին մարտավարությունը և ընդունեցին աշխատանքի կառավարման համաձայնագրերը, որոնցում ռազմավարական նպատակը համագործակցությունն էր, այլ ոչ թե պայքարի քարոզչությունը: Այս համաձայնությունը տարաբնույթ արդյունքներ ունեցավ աշխատավորների համար: Մի կողմից՝ ղեկավարությունը խրախուսում էր աշխատակիցների հավատարմությունը սեփականացված սոցիալական ապահովության համակարգերի միջոցով, որոնք աշխատողներին առաջարկում էին առողջապահական ապահովագրություն և կենսաթոշակներ: Բողոքների իրավարարությունը և հավաքական բանակցությունները աշխատողներին նաև տրամադրում էին պաշտոնական

ուղիներ՝ քննադատելու քաղաքականությունը և պահանջելու ավելի լավ աշխատանքային պայմաններ: Մյուս կողմից՝ բյուրոկրատիան և կոռուպցիան ավելի էին ծանրաբեռնում արհմիություններին և օտարում նրանց աշխատավորներից ու լայն հասարակությունից:

Արհմիությունների ղեկավարությունը առաջնային ազդեցություն ձեռք բերեց աշխատանքային և իշխանական «բազմակողմ» հարաբերությունների վրա: Այս ազդեցությամբ աշխատավորներն ըստ անհրաժեշտության ավելի չափավոր օրակարգ էին հետապնդում՝ համեմատած 1930-1940-ականների հետ: Պահպանողական քաղաքական գործիչներն օգտվեցին աշխատավորության և ժողովրդական հիասթափություններից՝ քննադատելով արհմիությունների ղեկավարությանը և իրենց դիրքավորելով որպես աշխատավորների իսկական դաշնակից: Արհմիությունների կենտրոնացման դեմ պահպանողականների քննադատությունը մեծապես խարխլեց աշխատավորական շարժումը: Աշխատուժի անկումը նաև համընկավ ամերիկյան ազատականության գաղափարաբանական փոփոխությունների հետ: Եթե Ռուզվելտի «Նոր համաձայնությունը» փորձել էր լուծել գործազրկության խնդիրը պետական աշխատատեղերով, ապա Ջոնսոնի «Մեծ հասարակությունը» և նրա նմանակողները ֆինանսավորում էին կառավարության կողմից հովանավորվող աշխատանքի ուսուցումը, նույնիսկ այն վայրերում, որտեղ աշխատատեղեր չկային: 1950-1960-ականներին արհմիությունների առաջնորդները սովորաբար աջակցում էին նման ծրագրերին և մոտեցումներին: Աշխատավորական շարժման թուլացմանը նպաստեց նաև ներքին ռասիզմը:

1970-ականների կեսերին Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո արձանագրված ընդհանուր բարգավաճումը սկսեց նահանջել: Աճող միջազգային տնտեսական մրցակցությունը, տեխնոլոգիական անարդյունավետությունը և արտադրողականության նվազումը նպաստում էին աշխատավորների և միջին խավերի աշխատավարձերի կրճատմանը: Երբ տնտեսական անկումը սկսվեց, աշխատավարձերը նվազեցին, իսկ աշխատավորների և ղեկավարության միջև աշխատավարձերի տարբերությունը մեծացավ: Հարկային օրենսգիրքը դարձավ նվազ պրոգրեսիվ, իսկ աշխատուժը կորցրեց իր դիրքը շուկայում: Ամերիկյան շատ ընկերություններ, շնորհիվ նոր առևտրային պայմանագրերի, տեղափոխվեցին արտասահման՝ շահագործելու օտարերկրյա էժան աշխատուժը: Մյուսներն էլ տեղափոխվեցին հարավային և արևմտյան հակաարհմութենական նահանգներ, որոնք ձգվում էին Վիրջինիայից մինչև Տեխաս և Հարավային Կալիֆոռնիա: Հյուսիսում և Միջին Արևմուտքում երբեմնի ծաղկուն գոր-

ծարանները փակվեցին: Այսպիսով, 1980-ականներին այս գործընթացի մեկնաբանները Ամերիկայի նախկին արդյունաբերական տարածաշրջանը սկսեցին անվանել ժանգի գոտի (Rust Belt)՝ հակադրելով այն ծաղկուն և զարգացող Արևի գոտուն (Sun Belt):

Արևի գոտին վերաբերում է հարավային և արևմտյան նահանգների հատվածին, որոնք Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո տնտեսական, արդյունաբերական և ժողովրդագրական աննախադեպ աճ ապրեցին: «Նոր համաձայնության» ժամանակաշրջանում նախագահ Ֆրանկլին Դ. Ռուզվելտը ամերիկյան Հարավը հռչակել էր «ազգի թիվ 1 տնտեսական խնդիրը» և տարածաշրջան էր ներարկել հսկայական դաշնային սուբսիդիաներ, ներդրումներ ու ռազմական ծախսեր: Սառը պատերազմի ընթացքում «Արևի գոտու» քաղաքական գործիչները լոբբինգի միջոցով իրենց նահանգների համար ապահովեցին ռազմական կառույցների հիմնում և դաշնային ծախսեր ու ներդրումային պայմանագրեր: Միևնույն ժամանակ, կազմակերպված աշխատուժի նկատմամբ հարավային նահանգների թշնամանքը հրապուրեց խոշոր տնտեսավարողներին և արդյունաբերական միավորումների առաջնորդներին: 1947 թ. Թաֆթ-Հարթլիի օրենքը (Taft-Hartley Act) նպաստել էր հարավային նահանգների հակաարհմիութենական քաղաքականությանը: Այնուհետև էժան աշխատուժը, ցածր աշխատավարձերը և թույլ կանոնակարգերը ձգեցին հյուսիսային արդյունաբերությունը ժանգի գոտուց դեպի հարավային Արևի գոտի: Հյուսիսի հմուտ աշխատավորները հետևեցին նոր աշխատատեղերին՝ տեղափոխվելով դեպի Հարավ և Արևմուտք, որտեղ կյանքն ավելի էժան էր և ժամանակակից օդորակման համակարգերի շնորհիվ տաք կլիման ավելի տանելի էր դարձել: Այս կերպ Հարավը գրավում էր գործարարությանը:

Հարավում միջին դասի սպիտակամորթները բարգավաճում էին, բայց հաճախ նրանք վերջերս տեղափոխվածներն էին, ոչ թե բնիկ հարավցիները: Աղքատ սպիտակամորթ և սևամորթ հարավցիները հիմնականում դուրս մնացին Արևի գոտու բարգավաճման շրջանակից: Պետական ներդրումները սակավ էին: Հարավային քաղաքական գործիչները դաշնային ֆինանսավորումը տարրական և միջնակարգ հանրային կրթությունից ուղղեցին դեպի բարձր տեխնոլոգիական արդյունաբերություն և համալսարանական մակարդակի հետազոտություններ: Արևի գոտին փոխատեղեց ժանգի գոտու իրողությունները. Հարավը և Արևմուտքն ունեին աճող թվով բարձր որակավորմամբ, բարձր վարձատրվող աշխատատեղեր, բայց չունեին համապատասխան սոցիալական և կրթական ենթա-

կառուցվածքներ, որոնք անհրաժեշտ էին վերապատրաստելու տեղական աղքատ և միջին դասի աշխատավորներին այդ աշխատատեղերի համար:

Այնուամենայնիվ, ավելի շատ աշխատատեղերը նշանակում էին ավելի մեծաթիվ բնակչություն: Մինչև 1972 թվականը Արևի գոտու հարավային և արևմտյան նահանգներն ավելի շատ ընտրական ծայներ ունեին, քան Հյուսիս-արևելքը և Միջին արևմուտքը: Այս ճեղքը շարունակում էր աճել: Թեև տարածաշրջանի տնտեսական և քաղաքական վերելքը կառավարության հսկայական միջամտության և դաշնային ծախսերի արդյունք էր, աջակողմյան նոր քաղաքական գործիչները, ովքեր կառուցեցին նոր քաղաքական ինքնություն՝ կենտրոնացած «փոքր կառավարության» վրա, իրենց ամենաջերմ աջակցությունը գտան Արևի գոտում: Գործարարության բարեկամ այս նոր գործիչները հաջողությամբ համադրեցին պահպանողական բողոքականությունը և ազատ շուկայի գաղափարաբանությունը՝ ստեղծելով նոր հզոր քաղաքական ուժ: Այսպիսով, բարգավաճ ու շարժուն, հին ու նոր արվարձանային բնակիչները ձգվում էին դեպի Հանրապետական կուսակցության նոր աջերի ազատ ձեռնարկատիրության անհատապաշտական տեսլականը:

Լճացում և գնաճ՝ սրագֆլացիա. թշվառության ինդեքսը

Թեև Նիքսոնը խուսափեց դատական հետապնդումից, Ուոթերգեյթյան սկանդալը նպաստեց 1974 թվականի միջանկյալ ընտրություններում դեմոկրատների հաջողությանը, որոնք ավելացրին տեղերը և ամրապնդեցին իրենց դիրքերը Կոնգրեսում: Նախագահ Ֆորդի կողմից Նիքսոնին ներում շնորհելը վնասեց նրա դիրքերը 1976 թվականի նախագահական ընտրություններում: Դեմոկրատական կուսակցությունն առաջադրեց Ջորջիայի նախկին նահանգապետ, միջուկային ֆիզիկոս և ֆերմեր Ջիմի Բարթերին, ով ներկայացնում էր երիտասարդ, ռասայականորեն ազատական «Նոր հարավ» դեմոկրատներին: Իբրև նախագահի թեկնածու՝ Բարթերը չէր նույնանում իր կուսակցության ո՛չ ազատական և ո՛չ էլ պահպանողական թևի հետ. նրա կոչը ավելի շատ անձնական և բարոյական էր, քան քաղաքական: Բարթերն իր քարոզարշավը չկառուցեց մեծ քաղաքական հարցերի շուրջ, փոխարենը թույլ տվեց, որ իր՝ աշխատասեր, ազնիվ հարավային բապտիստի և նավատորմի սպայի կենսագրությունը գրավի ընտրողներին ամբողջ երկրում, հատկապես իր հայրենի Հարավում, որտեղ աջակցությունը դեմոկրատներին սասանվել էր քաղաքացիական իրավունքների շարժման հետևանքով: Բարթերի կերպարը և

բարի համբավը ուղղակիորեն հակադրվում էին Նիքսոնին և նրա իրավահաջորդ Ֆորդին: Նոյեմբերին Քարթերը հաղթեց նախագահական ընտրություններում:

1977 թ. հունվարի 20-ին իր երդմնակալությունից հետո նախագահ Քարթերն առերեսվեց երկիրը պատած հասարակական-տնտեսական բազմաթիվ մարտահրավերներին: Էներգետիկ ճգնաժամի հետևանքները, գնաճը, աճի լճացումը, գործազրկությունը և աշխատավարձերի անկումը խորացրել էին հասարակական-տնտեսական լճացումը: Այս խնդիրներից որոշները գալիս էին Երկրորդ համաշխարհային պատերազմին հաջորդած շրջանից, երբ ԱՄՆ առաջնորդները ստեղծեցին առևտրային քաղաքականության բարդ համակարգ՝ օգնելու վերակառուցել Արևմտյան Եվրոպայի և Ասիայի փլուզված տնտեսությունները: Պատերազմից հետո ամերիկացի դիվանագետներն ու քաղաքական գործիչները օգտագործում էին առևտրային հարաբերությունները՝ ամբողջ աշխարհում ազդեցություն և դաշնակիցներ շահելու համար: Նրանք ԱՄՆ դաշնակիցների, մասնավորապես Արևմտյան Գերմանիայի և Ճապոնիայի տնտեսական առողջությունը դիտում էին իբրև առանցքային պատվար կոմունիզմի ընդլայնման դեմ: Միացյալ Նահանգները խրախուսում էր այս երկրներին զարգացնել արտահանմանն ուղղված կենսունակ տնտեսություններ և հանդուրժում էր ամերիկյան արտադրության ապրանքների ներմուծման նրանց սահմանափակումները:

Այս քաղաքականությունը Միացյալ Նահանգների համար թանկ արժեցավ: Երբ ամերիկյան տնտեսությունը լճացավ, Ճապոնիան և Արևմտյան Գերմանիան աճեցին և դարձան ավտոմեքենաների, պողպատի, հաստոցների և էլեկտրական ապրանքների համաշխարհային արտադրության հիմնական ուժերը: 1970 թվականին սկսեց ձևավորվել Միացյալ Նահանգների մեծ առևտրային պակասորդը: Ամերիկյան արտահանումների արժեքը նվազեց, իսկ ներմուծման արժեքը կտրուկ աճեց: Վիետնամի պատերազմի հսկայական ծախսերին և Մերձավոր Արևելքում նավթ արդյունահանող երկրների աճին զուգընթաց՝ աճող առևտրային պակասորդը խաթարեց Միացյալ Նահանգների գերիշխող դիրքը համաշխարհային տնտեսության մեջ: Ամերիկացի առաջնորդները չգիտեին, թե ինչպես պատասխանել այս մարտահրավերներին:

1970-1971 թվականներին Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի, Արևմտյան Գերմանիայի և Ճապոնիայի առաջնորդների հետ մի շարք բանակցություններից հետո Նիքսոնի վարչակազմը թույլ տվեց այս աճող արդյունաբերական երկրներին շարունակել արհամարհել ազատ առևտրի

սկզբունքները: Նրանք պահպանում էին առևտրային խոչընդոտները, որոնք պաշտպանում էին իրենց ներքին շուկաները արտաքին մրցակցությունից, մինչդեռ միևնույն ժամանակ աճող քանակությամբ ապրանքներ էին արտահանում Միացյալ Նահանգներ: Մինչև 1974 թվականը, ի պատասխան ԱՄՆ-ի բողոքների և իրենց ներքին տնտեսական խնդիրների, արդյունաբերական երկրներից շատերը վերանայեցին իրենց պաշտպանողական տնտեսական քաղաքականությունները, սակայն մշակեցին ավելի նուրբ մեթոդներ (օրինակ՝ արդյունաբերության հիմնական ոլորտների պետական սուբսիդավորումը) իրենց տնտեսությունները զարգացնելու և պաշտպանելու համար:

Արդյունքում նախագահ Քարթերը, ինչպես Ֆորդը նրանից առաջ, կանգնեց տնտեսական երկսայրի դժվարին կացության՝ գնաճի և տնտեսական լճացման միաժամանակյա գործընթացի առջև, մի համակցություն, որը հայտնի դարձավ որպես *ստագֆլյացիա* (*stagflation*): Ո՛չ Ֆորդը և ո՛չ էլ Քարթերը չունեին միջոցներ կամ հավակնություններ՝ պաշտպանելու ամերիկյան աշխատատեղերն ու ապրանքները արտաքին մրցակցությունից: Ամերիկյան ընկերությունները և ֆինանսական հաստատությունները ներդրումներ էին կատարում, ապրանքներ էին արտադրում և վաճառում արտերկրի նոր աճող տնտեսություններում, այդ թվում՝ Մեքսիկայում, Թայվանում, Ճապոնիայում, Բրազիլիայում և այլուր: Ուստի ամերիկացի քաղաքական գործիչները թույլ տվեցին նրանց վաճառել իրենց հաճախ ավելի էժան ապրանքները Միացյալ Նահանգներում: Եվ քանզի ամերիկացի պաշտոնյաները հաստատութենացնում էին այս նոր անկաշկանդ համաշխարհային առևտուրը, շատ ամերիկացի արտադրողներ պատկերացնում էին կայուն շահութաբերության միայն մեկ կենսունակ ճանապարհ՝ արտասահման տեղափոխվելը, օտարերկրյա դուստր ձեռնարկություններ հիմնելով կամ օտարերկրյա ընկերությունների հետ համագործակցելով: Ներդրումային կապիտալը, հատկապես արտադրության ոլորտում, լքում էր Միացյալ Նահանգները՝ փնտրելով արտասահմանյան ներդրումներ: Այսու՝ ամերիկյան արդյունաբերության արտադրողականության անկումն արագանում էր:

1976 թվականի նախագահական քարոզարշավի ժամանակ, քննադատելով Ջերալդ Ֆորդի և հանրապետականների կառավարումը, Քարթերը մեղադրում էր նրանց «թշվառության ինդեքսի» (“misery index”) բարձրացման համար՝ ներկայացնելով գործազրկության մակարդակի պարզ հավելումը գնաճի մակարդակին: Սակայն Քարթերին չհաջողվեց դանդաղեցնել ամերիկյան տնտեսության անկումը, և թե՛ գործազրկության, թե՛

գնաճի համառ ու շփոթեցնող աճը վնասեց նրա նախագահության հեղինակությանը: Քարթերը չկարողացավ առաջարկել և իրականացնել այնպիսի քաղաքականություն, որը կկասեցնեք ամերիկյան տնտեսության անկումը:

Ձախողվեց նաև մարդու իրավունքների վրա հիմնված ԱՄՆ արտաքին քաղաքականության Քարթերի իդեալիստական տեսլականը: Թեև նա մարդու իրավունքները չէր դարձրել իր նախընտրական քարոզարշավի կենտրոնական մաս, սակայն 1977 թ. մայիսին հայտարարեց, որ ցանկանում է հեռանալ այնպիսի արտաքին քաղաքականությունից, որում «կոմունիզմի հանդեպ անչափ վախը» ստիպում է ամերիկացի առաջնորդներին որդեգրել հակառակորդների «արատավոր և սխալ սկզբունքներն ու մարտավարությունը»: Փոխարենը Քարթերն առաջարկում էր քաղաքականություն, որը հիմնված կլինեք «արժեքների հաստատուն պարկեշտության» և ամերիկյան «պատմական տեսլականի լավատեսության վրա»: Քարթերի մարդու իրավունքների քաղաքականությունը հասավ իրական հաղթանակների. Միացյալ Նահանգները կամ նվազեցրեց կամ վերացրեց օգնությունը ամերիկյան աջակցությունը վայելող աջակողմյան բռնապետներին, ովքեր մեղավոր էին մարդու իրավունքների ոտնահարման ծայրահեղ դեպքերի համար, այդ թվում՝ Հարավային Կորեայում, Արգենտինայում և Ֆիլիպիններում: Եվ այնուամենայնիվ, մարդու իրավունքների վրա հիմնված արտաքին քաղաքականության մասին Քարթերի երազանքները փլուզվեցին: Միացյալ Նահանգները շարունակում էր ռազմական և ֆինանսական աջակցություն ցուցաբերել ամերիկյան շահերի համար կենսական նշանակություն ունեցող բռնապետական ռեժիմներին:

1977 թվականի սեպտեմբերին Քարթերը բանակցեց Պանամայի ջրանցքը Պանամային հանձնելու պայմանների շուրջ, ինչը վնասեց նրա քաղաքական կապիտալին ԱՄՆ-ում: Մեկ տարի անց՝ 1978 թվականի սեպտեմբերին, Քարթերի միջնորդությամբ խաղաղության պայմանագիր կնքվեց Իսրայելի վարչապետ Մենախեմ Բեգինի և Եգիպտոսի նախագահ Անվար Սադատի միջև: Քեմփ Դեյվիդի համաձայնագրով Եգիպտոսը դարձավ առաջին արաբական պետությունը, որը ճանաչեց Իսրայելը, իսկ Իսրայելը համաձայնեց Պաղեստինի ինքնակառավարմանը:

Քարթերի արտաքին քաղաքականության լրջագույն մարտահրավերներից էր 1979 թ. իսլամական հեղափոխությունը Իրանում: 1979 թ. նոյեմբերին ամերիկյան դաշնակից Շահ Ռեզա Փահլավին գահընկեց արվեց, հեղափոխականները ներխուժեցին Թեհրանում ամերիկյան դեսպանատուն և պատանդ վերցրին հիսուներկու ամերիկացիների: Ամերիկա-

ցիները ոչ միայն զգացին ևս մեկ նավթային ճգնաժամ, երբ փակվեցին Իրանի նավթային հանքերը, այլև 444 օր ամերիկյան լրատվական հաղորդումները նրանց հիշեցնում էին ամերիկացի պատանդների և Ամերիկայի անզորության մասին: Քարթերը չկարողացավ հասնել նրանց ազատ արձակմանը: Փրկարարական անհաջող առաքելությունն ավարտվեց ութ ամերիկացի զինճառայողների մահով: Քարթերի ժողովրդականությունը կտրուկ ընկավ:

Սառը պատերազմը մեղմելու և Խորհրդային Միության հետ միջուկային սպառազինությունների վերահսկման նոր համաձայնագիր հաստատելու Քարթերի ջանքերը փշրվեցին՝ հանդիպելով Սառը պատերազմի բազենների պահպանողական ընդդիմության քննադատությանը: Նրանց առաջնորդներից Ռոնալդ Ռեյգանը Քարթերին մեղադրում էր թուլության մեջ: 1979 թվականի դեկտեմբերին՝ Խորհրդային Միության կողմից Աֆղանստան ներխուժումից մեկ ամիս անց, Քարթերը հայտարարեց, որ Միացյալ Նահանգներն անհրաժեշտ բոլոր միջոցներով կպաշտպանի իր շահերը Միջին Արևելքում խորհրդային ներխուժումներից: Քարթերի դոկտրինը ոչ միայն ազդարարեց Քարթերի երկիմաստ նվիրվածությունը լարվածության թուլացմանը ու մարդու իրավունքներին, այլև ցույց տվեց նրա նախագահության հուսահատությունը: Ամերիկյան արտադրության փլուզումը, համառ գնաճը, ամերիկյան արտաքին քաղաքականության անսպասելի անզորությունը, ավելի բաժանված մշակույթը և փլուզման զգացումը համակել էր երկիրը: 1979 թվականի հուլիսի 15-ին իր հեռուստատեսային ուղերձում նախագահ Ջիմի Քարթերը հայտարարեց, որ ամերիկյան ժողովրդավարությունը կանգնած է հիմնարար սպառնալիքի առջև, և, որ «դա վստահության ճգնաժամն է»:

Ամփոփենք: Թեև Լինդոն Ջոնսոնի նախագահությունից հետո ամերիկյան քաղաքականությունը աջակողմյան թեքում ունեցավ, այնուամենայնիվ 1968 թվականին Նիքսոնի ընտրությունը դեռևս պահպանողական հակահեղափոխություն չէր ենթադրում: 1970-ականներին ամերիկյան քաղաքականությունն ու հասարակությունը մնացին ընդհանուր հոսքի մեջ, քանզի ամերիկացի քաղաքական գործիչները՝ Ա՛ աջերը, Ա՛ ձախերը, համեմատաբար չափավոր քաղաքական գծեր էին վարում: Սակայն քաղաքական մակերևույթի ներքո հասունանում էր հասարակական տագնապը և զայրույթը: Աշխարհի ամենազորեղ ռազմական ուժը տապալվել էր Վիետնամում: Ամերիկյան գերտերության դիրքերը խարխիվում էին Միջին Արևելքում: 1960-ականների մշակութային բախումները շարու-

նակվեցին և արագացան. հակամշակույթը դառնում էր զանգվածային, իսկ քաղաքներն ալեկոծվում էին հասարակական անկարգություններով: Փլուզվում էր տնտեսությունը՝ Ամերիկայի քաղաքները խոցելի դարձնելով աղքատության և հանցագործության համար: Աշխատավոր դասակարգը պառակտվում և քայքայվում էր, իսկ գործազրկությունն աճում՝ ապարդյունաբերականացման և տնտեսական գլոբալիզացիայի հետևանքով: Այսպիսով, մինչև 1980 թվականը մեծ թվով ամերիկացիներ, հատկապես սպիտակամորթ միջին և վերին խավի ամերիկացիները, պահանջում էին պարզ պատասխաններ ահագնացող աշխարհաքաղաքական, հասարակական և տնտեսական բարդ մարտահրավերներին: Ամերիկյան հզորության անկումը և վստահության ճգնաժամը կասեցնելու Քարթերի մեղմ քաղաքականության և փափուկ ուժի ձախողումը ճանապարհ բացեց նոր շարժման համար, որը նոր անհատականություններով և նոր պահպանողականությամբ էր խոստանում վերականգնել Միացյալ Նահանգների հզորությունը և դերն աշխարհում:

ԳԼՈՒԽ 21

Պահպանողականությունը նեոլիբերալ ժամանակաշրջանում. Աջերի հաղթարշավը

1980 թվականի հոկտեմբերին Դետրոյթի ավտոմեքենաշինության ոլորտի աշխատավորների հետ հանդիպմանը նախագահի հանրապետական թեկնածու Ռոնալդ Ռեյգանը նկարագրեց ժամանակաշրջանի իր ընկալումը, թե ինչպես էր նա ըմբռնում ամերիկյան երազանքը դեմոկրատ նախագահ Ջիմի Քարթերի օրոք: Նա պատկերավոր ձևակերպեց իր միտքը հետևյալ կերպ. միգուցե ամերիկյան ընտանիքների ավտոտնակներում դեռևս առկա է երկու մեքենա, բայց դրանք «երկուսն էլ ճապոնական են, և դրանց բենզինն էլ վերջացել է»: Կալիֆորնիայի քարիզմատիկ նախկին նահանգապետը մատնացույց էր անում, որ ամերիկացիները սնանկանում են: Սակայն նա փրկության հույս էր ներշնչում: Շեշտադրելով «ազգային անկման» (“national decline”) հիմնախնդիրը՝ Ռեյգանը, այնուամենայնիվ խոստանում էր Միացյալ Նահանգները կրկին դարձնել փառահեղ «քաղաք բլրի վրա» (“city upon a hill”): 1980 թ. նոյեմբերին կայացած նախագահական ընտրություններում Ռեյգանի տեսլականը հաղթանակեց:

Ռեյգանը կարողացավ սանձել հզոր քաղաքական շարժման ալիքը, որը պատմաբաններն անվանում են «Նոր աջեր» (New Right): Այս շարժումն ավելի հեռուն էր գնացել Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո տարածված պահպանողականության չափավոր տեսակի գաղափարաբանությունից: Առավել ազատական տնտեսական տեսլականով և առավել պահպանողական կրոնական սկզբունքների քաղաքական կիրարկմամբ «Նոր աջերը» 1980-ական թվականներին ձևավորել էին Հանրապետական կուսակցության ամենաազդեցիկ թևը: Եվ Հանրապետական կուսակցության ընտրական հաջողությունները կապված էին այս շարժման աճող ժողովրդականության հետ: Հիմնավորվելով 1960-1970-ական թվականներին «Նոր համաձայնության» քաղաքական կարգի աստիճանական կազմաքանդման վրա՝ պահպանողական շարժումն առավել ազդեցիկ էր դառնում ոչ միայն հմուտ քաղաքական գործիչների առաջնորդությամբ, ինչպիսին Ռեյգանն էր, այլև զանգվածային ժողովրդական աջակցությամբ: Միլիոնավոր շարքային քաղաքացիներ, հատկապես քրիստոնյա պահպանողականները, աջակցում էին Հանրապետական կուսակցությանը: Ռասայական ու տնտեսական քաղաքականության և արտաքին գործերի շուրջ տևական հակամարտությունները փշրեցին

ազատական համաձայնությունը, որը գերիշխում էր ամերիկյան քաղաքականության մեջ Ֆրանկլին Ռուզվելտի նախագահությունից ի վեր: «Նոր աջերը» աջակցություն ստացան Ռեյգանի դեմոկրատներից (Reagan Democrats)՝ կապույտ օձիքավոր (աշխատավոր դասակարգի) դեմոկրատ ընտրողներից, ովքեր կորցրել էին հավատը հին ազատական գաղափարների հանդեպ:

Պահպանողականների *նոր ազատական* (Neoliberalism) քաղաքականությունը բազում առումներով ներազդեց ամերիկացիների առօրյա կյանքի վրա: Ռեյգանի վարչակազմի ազատ շուկաների հայեցակարգը զերծ էր եկամուտների ակտիվ վերաբաշխման և սոցիալական բարեկեցության ծախսերի սկզբունքներից, որոնք աշխուժացել էին 1930-1960-ական թվականներին «Նոր համաձայնության» (New Deal) և «Մեծ հասարակության» (Great Society) ժամանակաշրջաններում: Քննադատները, ցուցանելով տնտեսական անհավասարության հանկարծակի ընդլայնումը, դժգոհում էին, որ Ռեյգանի քաղաքականությունը ծառայում է կորպորացիաների և հարուստ անհատների շահերին: Այնուամենայնիվ, պահպանողական «Նոր աջերը» կարողացան սանձել ժողովրդական անվստահությունը տնտեսական կանոնակարգման, հարկերի և վարչարարությունների նկատմամբ՝ հասնելով հիպերինֆլացիայի ավարտին և ՀՆԱ-ի զգալի աճին: «Նոր համաձայնության» և «Մեծ հասարակության» սոցիալական բարեկեցության շատ ծրագրեր (սոցապահովություն, բուժօգնություն և այլք) վերապրեցին 1980-ականները: Չնայած հարկաբյուջետային կարգապահության հանրապետականների խոստումներին՝ և՛ դաշնային կառավարությունը, և՛ ազգային պարտքը մեծացան: Երկարաժամկետ հեռանկարում պահպանողականները կարողացան հասնել ամերիկյան քաղաքականության և հասարակության կայուն վերափոխմանը:

Պահպանողականության վերելքը

Ռեյգանի հեղափոխությունը նշանավորեց ամերիկյան աջերի քաղաքական համակենտրոնացման երկար գործընթացի գագաթնակետը: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո առաջին երկու տասնամյակներին «Նոր համաձայնությունը» կարծես թե ամուր ներկառուցված էր ամերիկյան ընտրական և հանրային քաղաքականությունների մեջ: Նույնիսկ հանրապետական նախագահ Դուայթ Դ. Էյզենհաուերն իր պաշտոնավարման երկու ժամկետների ընթացքում հրաժարվեց հետ կանգնել սոցիալական պետության գաղափարից: 1955 թվականին ամերիկացի

մտավորական Ուիլյամ Ֆ. Բաքլին հանձն առավ պահպանողականության գաղափարաբանական առաջնորդությունը՝ նախաձեռնելով «Ազգային հանդես» (National Review) պարբերականի հրատարակումը: Սենատոր Ջոզեֆ Մաքքարթին և «Ջոն Բիրչ» հասարակական կազմակերպության (John Birch Society) հիմնադիր Ռոբերտ Վելչը առաջնորդում էին հակա-կոմունիստական քարոզչությունը: Ընդհանուր առմամբ, ծայրահեղ աջերի շրջանում բացակայում էր կազմակերպչական համախմբվածությունը: 1964 թվականի նախագահական ընտրություններում Լինդոն Ջոնսոնի հաղթանակը հանրապետական Բարրի Գոլդուոթերի՝ «Պրն պահպանողականի» (“Mr. Conservative”) նկատմամբ տպավորություններ ստեղծեց ամերիկյան պահպանողականության ավարտի մասին:

Այնուամենայնիվ, պահպանողականությունը ոչ միայն պահպանվեց, այլև բարգավաճեց: Ջոնսոնի «Մեծ հասարակության» ծրագրային փաթեթի ընդարձակ սոցիալական և տնտեսական օրակարգը հակակոմունիստներին հիշեցնում էր խորհրդային ոճի կենտրոնական պլանավորման մասին, իսկ պետական բյուջեի դեֆիցիտն անհանգստացնում էր հարկաբյուջետային պահպանողականներին: Ռասայական հարաբերությունները նույնպես նպաստեցին «Նոր աջերի» ստեղծմանը: Քաղաքացիական իրավունքների շարժումը Քաղաքացիական իրավունքների օրենքով և Քվեարկության իրավունքի մասին օրենքով մարտահրավեր նետեց Ջիմ Բրոու հարավի ռասայական աստիճանակարգությանը: Այս ամենը տեղի ունեցավ դեմոկրատների ղեկավարության ներքո՝ սպիտակամորթ հարավցիներին մղելով դեպի Հանրապետական կուսակցություն: 1960-ականների վերջին և 1970-ականների սկզբին «Սևամորթների իրավագործումը» (Black Power), հաստատական գործողությունները կամ դրական խտրականությունը (affirmative action) և ռասայական հավասարակշռության հասնելու համար դատարանի որոշմամբ երեխաների տեղաշարժը դպրոցների միջև «սպիտակ հակազդեցություն» առաջ բերեցին Հյուսիսում, հաճախ նաև նախկինում քաղաքական լիբերալիզմով հայտնի քաղաքներում: 1960-ականների վերջին հակապատերազմական ցույցերը, քաղաքացիական և ուսանողական անհնազանդությունները շատ սպիտակամորթ ամերիկացիների համար ազդարարեցին հասարակական քառու: Միաժամանակ, աշխատավարձերի աճի դանդաղեցումը, գնաճը և հարկային բեռի աճը սպառնում էին աշխատավոր և միջին դասի բազմաթիվ քաղաքացիների բարեկեցությանը, որոնք երկար ժամանակ կազմում էին «Նոր համաձայնության» շուրջ հասարակական դաշինքի առանցքը: Ազատականությունն այլևս չէր առաջարկում բարգավաճման

ճանապարհային քարտեզ սպիտակամորթ ամերիկացիների մեծ զանգվածին, ուստի նրանք փնտրում էին քաղաքական նոր լուծումներ:

1968 և 1972 թվականների նախագահական ընտրությունների քարոզարշավի ընթացքում Ալաբամայի նախկին նահանգապետ և պահպանողական դեմոկրատ Ջորջ Ուոլեսը վարպետորեն օգտագործեց աշխատավոր դասակարգի սպիտակամորթ ամերիկացիների ռասայական, մշակութային և տնտեսական դժգոհությունները: Ուոլեսը՝ իբրև հաստատական սեգրեգացիոնիստ, հաջողություններ արձանագրեց Խորը հարավում, որտեղ 1968 թվականի ընդհանուր ընտրություններում հաղթեց հինգ նահանգներում՝ որպես երրորդ կողմի թեկնածու: Ուոլեսի պոպուլիստական ուղերձը նաև արձագանք գտավ արդյունաբերական հյուսիսում կապույտ օձիքավոր ընտրողների (blue-collar voters)՝ աշխատավորների շրջանում, որոնք իրենց անտեսված էին զգում իրավունքների հեղափոխությունից: Քարոզարշավի ընթացքում Ուոլեսը քննադատում էր հիպիներին, հակապատերազմական ցուցարարներին և կառավարության բյուրոկրատներին: Նա քննադատում էր նպաստառուներին և ծաղրում «չափազանց կրթված, փղոսկրի աշտարակի» մտավորականներին: Ուոլեսը նաև առաջադիմական առաջարկներ ներկայացրեց դաշնային աշխատանքի վերապատրաստման ծրագրերի, նվազագույն աշխատավարձի բարձրացման և կոլեկտիվ բանակցությունների իրավական պաշտպանության համար: 1972 թվականին առաջադրվելով որպես դեմոկրատ՝ Ուոլեսը հաղթեց Միչիգանի նախնական ընտրություններում և երկրորդ տեղում հայտնվեց Վիսկոնսինի, Փենսիլվանիայի և Ինդիանայի արդյունաբերական կենտրոններում: 1972 թվականի մայիսին մահափորձի հետևանքով կաթվածահարված Ուոլեսն ավարտեց իր քարոզարշավը: Այնուամենայնիվ, նրա ավելի հին՝ «Նոր համաձայնության» ոճի առաջարկների և պահպանողական պոպուլիզմի միաձուլումը 1960-ականների վերջին և 1970-ականների սկզբին նպաստեց կուսակցական հավատարմությունների արագ վերադասավորմանը: Նմանապես Ռիչարդ Նիքսոնն օգտագործեց «Նոր աջերի» դժգոհությունը «օրենքի ու կարգի» և «լուռ մեծամասնության» մասին իր հոետորաբանությամբ: Բայց նախագահ Նիքսոնը և նրա հանրապետական իրավահաջորդ նախագահ Ջերալդ Ֆորդը շարունակեցին հարմարվել «Նոր համաձայնության» քաղաքական կարգին:

Քրիստոնյա պահպանողականները նույնպես դժգոհ էին ազատական քաղաքական կարգերից: 1960-ական թվականների սկզբին Գերագույն դատարանի որոշումները *Էնջլն ընդդեմ Վիտալի* (Engel v. Vitale) և *Աբինգթոնն ընդդեմ Շեմպի* (Abington v. Schempp) գործերով, որոնք արգելում

էին ուսուցչի ղեկավարությամբ աղոթքը և Աստվածաշնչի ընթերցանությունը հանրակրթական դպրոցներում, աջերից շատերին հանգեցրեց այն եզրակացության, որ ազատական դատական համակարգը սպառնում է քրիստոնեական արժեքներին: Հետագա տարիներին հակամշակույթի կողմից սեքսի և թմրանյութերի մեծարումը, ինչպես նաև անառակության և պոռնոգրաֆիայի վերաբերյալ հանդուրժողական օրենքները ուժեղացրին այն համոզմունքը, որ «թողություն տվող» (“permissive”) լիբերալիզմը խրախուսում է անբարոյականությունը անձնական կյանքում: Ավետարանական բողոքականները՝ քրիստոնյաները, որոնք դավանում էին անձնական կապը Հիսուս Քրիստոսի հետ, պաշտպանում էին Աստվածաշունչը որպես ճշմարտության անսխալական աղբյուր և պարտավորված էին զգում դարձի բերել կամ ավետարանել անհավատներին, կազմում էին, այսպես կոչված, կրոնական աջերի առանցքը:

1960-1970-ական թվականներին աճող հաստատակամությամբ քրիստոնյա պահպանողականները համախմբվեցին հանուն «ավանդական» ընտանիքի պաշտպանության: Կրոնական աջակողմյան այս պայքարում կանայք ապշեցուցիչ կերպով մեծամասնություն էին: 1968-1969 թվականներին մի խումբ նոր քաղաքականացված մայրեր Կալիֆորնիայի Անահեյմ քաղաքում պայքարում էին հանրային դպրոցներում սեռական դաստիարակության դեմ: Կաթոլիկ ակտիվիստ Ֆիլիս Շլաֆլին պայքարում էր Հավասար իրավունքների ուղղման դեմ: 1977 թվականին ավետարանական փոփ երգչուհի Անիտա Բրայանտը հաջող պայքար տարավ Մայամիի միասեռականների իրավունքների մասին օրենքը չեղարկելու համար: 1979 թվականին Բևերլի Լահեյը հիմնեց «Մտահոգ կանայք Ամերիկայի համար» (Concerned Women for America) կազմակերպությունը՝ միավորելով տեղական ակտիվիստների փոքր խմբերը, որոնք դեմ էին Հավասար իրավունքների ուղղմանը, աբորտներին, միասեռականությանը և առանց մեղքի ամուսնալուծությանը: Նրա ամուսինը՝ Թիմ Լահեյը, որն ավետարանական հովիվ էր Սան Դիեգոյում, հետագայում համահեղինակեց «Ետևում թողնված» (Left Behind)՝ լայն ժողովրդականություն վայելող քրիստոնեական գրքերի շարքը: Կին ակտիվիստները, ինչպիսիք էին Շլաֆլին և Լահեյը, արժևորում էին մայրությունը՝ որպես կանանց ամենավեհ կոչում: Հետևաբար, աբորտի հիմնախնդիրը այնպիսի հնչեղություն ստացավ, որ միավորեց կրոնական աջերի տարբեր հատվածներին՝ կաթոլիկներին և բողոքականներին, կանանց ու տղամարդկանց: Գերագույն դատարանի 1973 թվականի *Ռոուն ընդդեմ Ուեյդի* (Roe v. Wade) գործով վճիռը վրդովեցրեց մեծ թվով հավատացյալ կաթոլիկների և ավետարան-

նականների: Քրիստոնյա գրող Ֆրենսիս Շեֆերը մշակեց աբորտի դեմ ավետարանական հակառակությունը 1979 թվականին նկարահանված «Ինչ է պատահել մարդկային ցեղի հետ» (Whatever Happened to the Human Race?) վավերագրական ֆիլմի միջոցով՝ պնդելով, որ «չճնվածների ճակատագիրը մարդկային ցեղի ճակատագիրն է»: Շատ ավետարանականներ ստիպված էին պայքարել հղիության արհեստական ընդհատման ընթացակարգի դեմ քաղաքական գործողությունների միջոցով:

1979 թվականին Վիրջինիայից բապտիստ հոգևորական Ջերի Ֆալվելը հիմնեց «Բարոյական մեծամասնություն» (Moral Majority) բացահայտ քաղաքական կազմակերպությունը, որը հանդես էր գալիս «հանուն կյանքի, ընտանիքի, բարոյականության և ամերիկամետության» օրակարգի պաշտպանությամբ: Բարոյական մեծամասնությունը հմտորեն միավորեց սոցիալական և տնտեսական բողոքները՝ դառնալով զգալի ուժ Հանրապետական կուսակցության քաղաքականության մեջ:

Աշխարհիկ և գործարար հաստատությունները նույնպես միացան լիբերալիզմի դեմ արշավին, որը սնվում էր ստագֆլյացիայի և դաշնային կառավարության կողմից նոր կարգավորիչ գործակալությունների ստեղծման հարուցած դժգոհություններից, ինչպիսիք էին Շրջակա միջավայրի պաշտպանության գործակալություն (Environmental Protection Agency) ու Աշխատանքի անվտանգության և առողջության վարչությունը (Occupational Safety and Health Administration): Պահպանողական գործարար առաջնորդները ֆինանսավորում էին նոր «ուղեղային կենտրոններ» (“think tanks”), այդ թվում՝ *Ժառանգություն հիմնադրամը* (Heritage Foundation) և *Կատո հաստատությունը* (Cato Institute): Այս կազմակերպությունները ակտիվ հասարակայնությանը և քաղաքական գործիչներին տրամադրում էին պատրաստի քաղաքականության դեղատոմսեր: Այլ գործարար առաջնորդներ ավելի անմիջական մոտեցում ցուցաբերեցին՝ վարձելով Վաշինգտոնի լոբբիստներին և ստեղծելով քաղաքական գործողությունների կոմիտեներ (political action committees (PAC))՝ Կոնգրեսի և դաշնային գործակալությունների սրահներում իրենց օրակարգերն առաջ տանելու համար: 1976-1980 թվականներին կորպորատիվ քաղաքական գործողությունների կոմիտեների թիվն աճեց՝ 300-ից հասնելով ավելի քան 1200-ի:

Քաղաքացիական հասարակության ակտիվիստներն ու գործարար առաջնորդներն անհավանական աջակցություն ստացան նոր պահպանողականների շրջանակից՝ հիասթափված մտավորականներից, ովքեր մերժել էին ազատականությունն ու ծախականությունը և դարձել էին

հանրապետականներ: Իրվինգ Քրիստոլը՝ նախկին մարքսիստը, որը դարձել էր ազատ շուկայական կապիտալիզմի պաշտպան՝ որպես «Ուոլ Սթրիթ ջորնալի» (Wall Street Journal) սյունակագիր, «նորպահպանողականին» (Neoconservative) բնորոշում էր որպես «ազատական (Liberal), ով կողոպտվել է իրականության կողմից»: Նորպահպանողական ամսագրերը, ինչպիսիք էին «Մեկնությունը» (Commentary) և «Հանրային շահը» (Public Interest), պնդում էին, որ «Մեծ հասարակությունն» ապացուցել է իր հակաարդյունավետությունը՝ հավերժացնելով աղքատությունը և ռասայական տարանջատումը, ուստի այն բուժելու նպատակ էին դնում: 1970-ականների կեսերին նորպահպանողականներն իրենց կողոպտված էին զգում նաև արտաքին գործերում: Իբրև Սառը պատերազմի եռանդուն մարտիկներ՝ նրանք պնդում էին, որ Նիքսոնի միջազգային լարվածության թուլացման (détente) քաղաքականությունը Միացյալ Նահանգներին խոցելի է դարձնում Խորհրդային Միության առջև:

Ընդհանուր առմամբ, 1970-ական թվականների վերջին պահպանողական քաղաքական մի քանի հոսքեր համընկան և համախմբվեցին: Զարգացող «Նոր աջերի» բոլոր թևերը՝ դժգոհ հյուսիսիցի աշխատավորները, սպիտակամորթ հարավցիները, ավետարանականները և բարեպաշտ կաթոլիկները, գործարար առաջնորդները, հիասթափված մտավորականները և Սառը պատերազմի բազմները, ապավինեցին Հանրապետական կուսակցությանը՝ այն ընկալելով որպես ազատականության և «Նոր համաձայնության» քաղաքական կարգի դեմ իրենց քաղաքական հակահարվածի ամենաարդյունավետ միջոց:

Քարթերի նախագահության տարիների պահպանողականությունը

1976 թվականի նախագահական ընտրություններում հաղթեց դեմոկրատ Զիմի Քարթերը: Կոնգրեսում դեմոկրատների մեծամասնությունը նոր նախագահին հնարավորություն տվեց վստահորեն գործելու օրենսդրական ճակատում: Շատ դեմոկրատներ հույս ունեին, որ Քարթերի վարչակազմը կթարմացնի և կընդլայնի Նոր համաձայնության քաղաքական կարգը: Սակայն նախագահ Քարթերը հաղթել էր ընտրություններում Ուոթերգեյթյան սկանդալից հետո կառավարության նկատմամբ հիասթափության ալիքի վրա, որը, սակայն, չվերածվեց ազատական գաղափարների աջակցության:

Սկզբնական շրջանում Քարթերի վարչակազմն ընդունեց հանրային

քաղաքականության որոշ ծրագրեր, որոնք վայելում էին ազատականների աջակցությունը: Առաջ քաշվեց տնտեսական խթանման փաթեթ, որը ներառում էր 4 միլիարդ դոլարի տրամադրում հանրային աշխատանքների համար, ընդլայնում էր պարենային ապրանքների նպաստները 2,5 միլիոն նոր նպաստառուների համար, ավելացնում վաստակած եկամտահարկային վարկը (Earned Income Tax Credit) ցածր եկամուտ ունեցող տնային տնտեսությունների համար, ինչպես նաև ընդլայնում էր Նիքսոնի ժամանակաշրջանի Համապարփակ զբաղվածության և վերապատրաստման օրենքը (Comprehensive Employment and Training Act (CETA)): Բայց Սպիտակ տունն արագ ըմբռնեց, որ Ուոթերգեյթյան սկանդալի հետևանքով ընտրված Կոնգրեսի դեմոկրատներից շատերն ավելի չափավոր էին, քան իրենց նախորդները: Նրանք երբեմն համագործակցում էին Կոնգրեսի հանրապետականների հետ՝ ընդդիմանալու Քարթերին, մասնավորապես՝ ի պատասխան սպառողների պաշտպանության դաշնային գրասենյակ ստեղծելու վարչակազմի առաջարկի:

Անշուշտ, նաև այլ իրադարձություններ, որոնք դուրս էին Քարթերի վերահսկողությունից, նպաստեցին ազատականության վարկաբեկմանը և ազգային քաղաքականությունն ավելի աջ մղեցին: 1978 թվականին իր Միության դրության մասին ուղերձում (State of the Union address) նախագահ Քարթերը հայտարարեց, որ կառավարությունը չի կարող լուծել հասարակության խնդիրները, չի կարող վերացնել աղքատությունը, ապահովել առատ տնտեսություն, նվազեցնել գնաճը, փրկել քաղաքները, վերացնել անգրագիտությունը կամ լուծել էներգետիկ ճգնաժամը: Հայտարարությունը վեր էր հանում երկրի գաղափարաբանական փոխակերպումը: Ամերիկյան ազատականության վերածնունդն առաջնորդելու փոխարեն դեմոկրատ Քարթերը կառավարում էր «Նոր համաձայնության» շրջանակներից դուրս՝ որդեգրելով պահպանողական մոտեցումներ: Կազմակերպված աշխատավորությունն իրեն լքված էր զգում Քարթերի կողմից, ով պաշտպանեց միայն աշխատանքային օրենսդրության բարեփոխումների համեստ փաթեթի ընդունումը: 1977-1978 թվականներին լիբերալ դեմոկրատները համախմբվեցին Համֆրի-Հոքինսի ամբողջական զբաղվածության և վերապատրաստման օրենքի (Humphrey-Hawkins Full Employment and Training Act) շուրջը, որը խոստանում էր վերջ տալ գործազրկությանը կառավարության լայնածավալ պլանավորման միջոցով: Օրինագիծը նպատակ ուներ ոչ միայն աշխատանք երաշխավորել յուրաքանչյուր ամերիկացու, այլև վերամիավորել միջոցառայական, աշխատավոր դասակարգի դեմոկրատական դաշինքը, որը մասնատվել էր ապարդյունաբերակա-

նացման և դրական խտրականության քաղաքականության արդյունքում: Սակայն նախագծի հանդեպ Քարթերի անտարբեր վերաբերմունքը երկու կուսակցությունների պահպանողականներին հնարավորություն տվեց օրինագիծը զուտ խորհրդանշական ժեստի վերածելու: Ազատականները, ինչպես և աշխատավոր դասի առաջնորդները, սկսեցին նախագահին համարել անհուսալի դաշնակից:

Մյուս կողմից՝ Քարթերը քննադատության էր ենթարկվում նաև հանրապետականների և հատկապես կրոնական աջերի կողմից: 1978 թվականին նրա վարչակազմը արժանացավ ավետարանականների համառ քննադատությանը, երբ Ներքին եկամուտների ծառայությունը նոր կանոններ հաստատեց՝ չեղարկելով ռասայականորեն տարանջատված մասնավոր քրիստոնեական դպրոցների հարկերից ազատված կարգավիճակը: Կանոնները միայն ամրապնդեցին Նիքսոնի վարչակազմի կողմից հաստատված քաղաքականությունը: Այնուամենայնիվ, կրոնական աջերը մեղադրում էին Քարթերին քրիստոնեական հաստատությունները թիրախավորելու համար:

Խորանում էր նաև տնտեսական ճգնաժամը: 1980 թվականի մայիսին գործազրկությունը հասավ 7,8 տոկոսի: Գնաճը՝ ապրանքների և ծառայությունների արժեքի աճի տեմպերը, 1978 թվականի 6%-ից 1980 թվականի ձմռանը ցատկեց մինչև ապշեցուցիչ 20%-ի: Այս կերպ «Քրայսլեր միավորումը» (Chrysler Corporation) հայտնվեց սնանկության շեմին: Վարչակազմն այս մարտահրավերներին արձագանքեց սկզբունքորեն պահպանողական ձևերով: Նախ՝ Քարթերն առաջարկեց հարկերի կրճատում վերին միջին խավի համար, որը Կոնգրեսն ընդունեց 1978 թվականին: Այնուհետև՝ Սպիտակ տունն իրականացրեց պահպանողական շարժման վաղեմի նպատակը՝ ապակարգավորելով ավիաընկերությունների և բեռնափոխադրումների ոլորտները՝ համապատասխանաբար 1978 և 1980 թվականներին: Երրորդ՝ Քարթերն առաջարկեց հավասարակշռել դաշնային բյուջեն՝ ի հիասթափություն ազատականների, ովքեր նախընտրում էին օգտագործել դեֆիցիտային ծախսերը՝ ֆինանսավորելու նոր «Նոր համաձայնությունը»: Ի վերջո, գնաճը կասեցնելու համար Դաշնային պահուստային համակարգի նախագահ Փոլ Վոլքերը, որը նշանակվել էր Քարթերի կողմից, բարձրացրեց տոկոսադրույքները և խստացրեց փողի մատակարարումը՝ երկարաժամկետ հեռանկարում գնաճը նվազեցնելու նպատակով, որը, սակայն, կարճաժամկետ հեռանկարում ավելացրեց գործազրկությունը:

Տասնամյակի երկրորդ «էներգետիկ ճգնաժամը», որն ուղեկցվում էր

նավթի սակավության և գների հերթական աճով, առավել սրեց իրավիճակը երկրում: 1979 թվականի հուլիսի 15-ին նախագահ Քարթերը հանդես եկավ էներգետիկ քաղաքականության վերաբերյալ հեռուստատեսային ելույթով՝ երկրի տնտեսական դժվարությունները վերագրելով «վստահության ճգնաժամին» (“crisis of confidence”): Երկիրն ի սկզբանե դրականորեն արձագանքեց էներգիայի խնայողության կոչին, սակայն Քարթերի շեշտադրումը կարգապահության ու զոհաբերության վրա, ինչպես նաև տնտեսական դժվարությունների վերաբերյալ նրա հոգևոր ախտորոշումը շրջանցեցին լայնածավալ տնտեսական փոփոխությունների ավելի խորը հարցերը:

«Նոր աջերն» իշխանության մեջ. Ռեյգանի հեղափոխությունը

Ներքին այս մարտահրավերները, զուգակցված խորհրդային զորքերի Աֆղանստան ներխուժման և Իրանում ամերիկյան պատանդների ճգնաժամի հետ, խանգարեցին Քարթերին վերընտրվել 1980 թվականի նախագահական ընտրություններում: Շատ դեմոկրատներ հիասթափված էին նրա քաղաքականությունից: Մասաչուսեթսի սենատոր Թեդ Քենեդին մարտահրավեր նետեց Քարթերին Դեմոկրատական կուսակցության ներսում նախագահի թեկնածուի առաջադրման մրցապայքարում: Հանդես գալով որպես կուսակցության ազատական դրոշակակիր և իր սպանված ավագ եղբայրների ժառանգության կրող՝ Քենեդին աջակցություն ստացավ առանցքային արհմիություններից և ծախակողմյան դեմոկրատներից: Քարթերը, ի վերջո, հաղթեց Քենեդիին, բայց նախնական ընտրությունների արդյունքները բացահայտեցին նախագահի խոցելիությունը:

1980 թվականի նախագահական ընտրություններում Քարթերի մրցակիցը հանրապետական Ռոնալդ Ռեյգանն էր՝ հոլիվուդյան նախկին դերասան, ով երկու ժամկետ պաշտոնավարել էր որպես Կալիֆորնիայի նահանգապետ: Ռեյգանն առաջադրվել էր իբրև հաստատական պահպանողական հարկաբյուջետային քաղաքականության հարցերում և Սառը պատերազմի բազե՝ խոստանալով կրճատել պետական ծախսերը և դաշնային բյուրոկրատիան: Ռեյգանը նաև մեղադրում էր իր հակառակորդին Խորհրդային Միությանը դիմակայելու ճախողման մեջ և խոստացավ կտրուկ ավելացնել ռազմական ծախսերը: Քարթերն արձագանքեց՝ Ռեյգանին անվանելով պատերազմ հրահրող, սակայն խորհրդային ներխուժումն Աֆղանստան և Իրանում 52 ամերիկացի պատանդների կալանքը վարկաբեկեցին Քարթերի արտաքին քաղաքականությունը մեծ թվով

ամերիկացիների աչքերում:

Նախագահ Քարթերը խնդիրներ ուներ նաև ներքին հարցերում: Գործազրկության մակարդակը շարունակում էր մնալ բարձր՝ մոտ 8 տոկոսի սահմաններում: Միևնույն ժամանակ, Դաշնային պահուստային համակարգի հակազնաճային միջոցառումները տոկոսադրույքները հասցրին չլաված 18,5 տոկոսի: Քարոզարշավի ընթացքում Ռեյգանն օգտագործեց այս վատ տնտեսական միտումները՝ հայտարարելով. «Ռեյցեսիան այն է, երբ ձեր հարևանն է կորցնում աշխատանքը, իսկ դեպրեսիան այն է, երբ դու ես կորցնում աշխատանքդ»: Այնուհետև, դադար առնելով՝ Ռեյգանն ավելացրեց. «Եվ վերականգնումն այն է, երբ Զիմի Քարթերն է կորցնում իր աշխատանքը»:

Այս ամենին գումարվում էին սոցիալ-մշակութային խնդիրները: Թեև Քարթերը ինքնահռչակ «վերածնված» քրիստոնյա էր և եղել էր կիրակնօրյա դպրոցի ուսուցիչ՝ նա պայքարում էր կրոնական աջերի դեմ: Ռեյգանը վայելում էր կրոնական աջերի աջակցությունը, թեև միայն անվանական քրիստոնյա էր և հազվադեպ էր եկեղեցի հաճախում: Վերապատվելի Ջերի Ֆալվելը ուղղորդում էր Ռեյգանին աջակցող «Բարոյական մեծամասնություն» (Moral Majority) պահպանողական քրիստոնեական կազմակերպությանը: Ռեյգանը նաև խրախուսում էր կրոնական աջերին՝ դատապարտելով աբորտները և պաշտպանելով աղոթքը դպրոցներում:

Ռեյգանն իր կողմը գրավեց նաև սպիտակամորթ ընտրողներին՝ պաշտպանելով նահանգների իրավունքների դոկտրինը, որը 1950-1960-ական թվականներին ռասայական սեգրեգացիոնիստների համախմբման առանցքային կարգախոսն էր: Քննադատելով սոցիալական *բարեկեցության պետության* (welfare state) գաղափարը՝ Ռեյգանն օգտագործում էր քողարկված ռասայական կարծրատիպերը: Ըստ այդմ՝ Ռեյգանն օգտագործում էր սպիտակամորթ աշխատավոր դասակարգի ընտրողների սոցիալական, ռասայական և մշակութային դժգոհությունները: Գրեթե բոլոր հարցերում քարոզարշավն ընթանում էր Ռեյգանի օգտին: Ուստի նա վճռական հաղթանակ արձանագրեց նախագահական ընտրություններում՝ հավաքելով ժողովրդական ձայների 51 տոկոսը, իսկ Քարթերը՝ 41 տոկոսը: Ավելին, հանրապետականները 1955 թվականից ի վեր առաջին անգամ վերահսկողություն հաստատեցին նաև Սենատի վրա: «Նոր աջերը» հաստատվեցին Վաշինգտոնում:

Իր առաջին երդմնակալության խոսքում նախագահ Ռեյգանը հայտարարեց, որ «կառավարությունը խնդրի լուծումը չէ, կառավարությունը խնդիրն է»: Գործնականում նախագահը ուշադրությունը սևեռեց կա-

ռավարության վերակենտրոնացման վրա՝ այն նոր նպատակներին ծառայեցնելու համար: Այդ նպատակին համահունչ՝ Ռեյգանի վարչակազմն ընդունեց առաջարկի կողմի տնտեսական տեսությունները, ըստ որոնց՝ անձնական և կորպորատիվ հարկերի ցածր դրույքաչափերը կխրախուսեն ավելի մեծ մասնավոր ներդրումներ և արտադրության ծավալներ: Առաջարկի մոտեցման կողմնակիցները հավաստիացնում էին, որ անձնական և կորպորատիվ հարկերի դրույքաչափերի կրճատման արդյունքում ստացված հարստությունը կհասնի ավելի ցածր եկամուտ ունեցող խմբերին աշխատատեղերի ստեղծման և ավելի բարձր աշխատավարձերի միջոցով: Պահպանողական տնտեսագետ Արթուր Լաֆերը կանխատեսում էր, որ ցածր հարկային դրույքաչափերը այնքան մեծ տնտեսական ակտիվություն կառաջացնեն, որ դաշնային հարկային եկամուտներն իրականում կավելանան: Վարչակազմը գովազդում էր այսպես կոչված Լաֆերի կորը՝ որպես հարկերի կրճատման ծրագրի հիմնավորում, որը անկյունաքարային նշանակություն ուներ Ռեյգանի պաշտոնավարման առաջին տարում: Հանրապետական կոնգրեսական Ջեք Քեմփը, որը առաջարկի կողմի տեսության ջատագով էր և Ռեյգանի հարկային օրինագծի համահեղինակ, խոստանում էր, որ այն կսանձազերծի «ստեղծագործական հանճարը, որը միշտ աշխուժացրել է Ամերիկան»:

Դեմոկրատները և նույնիսկ որոշ հանրապետականներ թերահավատորեն էին վերաբերվում հարկերի կրճատման հիմնավորումներին: 1980 թվականի հանրապետականների նախնական ընտրությունների ժամանակ փոխնախագահ Ջորջ Բուշը նսեմացնում էր առաջարկի տեսությունը՝ այն անվանելով «վուդու տնտեսագիտություն» (“voodoo economics”): Սակայն Ռեյգանը հմտորեն և արդյունավետորեն կարողացավ աջակիցներ գտնել Կոնգրեսում:

1981 թ. մարտի 30-ի մահափորձից հետո հոսպիտալացված նախագահի հանրային աջակցությունը ավելի մեծացավ: Ի վերջո, 1981 թ. հուլիսին Կոնգրեսը դեմոկրատների զգալի աջակցությամբ հաստատեց 675 միլիարդ դոլարի հարկերի կրճատումը: Օրինագիծը նվազեցրեց ընդհանուր դաշնային հարկերը ավելի քան մեկ քառորդով և իջեցրեց վերին սահմանային դրույքաչափը 70 տոկոսից մինչև 50 տոկոս, իսկ ստորին դրույքաչափն իջավ 14 տոկոսից մինչև 11 տոկոս: Այն նաև նվազեցրեց կապիտալի շահույթի չափերը 28 տոկոսից մինչև 20 տոկոս: Հաջորդ ամիս Ռեյգանը գրանցեց ևս մեկ քաղաքական հաղթանակ: Ի պատասխան Օդային երթևեկության վերահսկիչների մասնագիտական կազմակերպության (Professional Air Traffic Controllers Organization (PATCO)) կող-

մից կազմակերպված գործադուլի՝ նախագահը հրամայեց արհմիության գործադուլ անող ավիակարգավարներին աշխատանքի վերադառնալ և աշխատանքից ազատել ավելի քան 11,000 հրաժարվողներին: Ռեյգանի գործողությունները հաշմանդամ դարձրին այս արհմիությունը:

Այսպես, 1980-ական թվականներին Միացյալ Նահանգների տնտեսական դաշտը, որն արդեն անբարենպաստ էր արհմիությունների կազմակերպման համար, վճռականորեն փոխվեց հոգուտ գործատուների: Մասնավոր հատվածի աշխատուժի արհմիութենականացված մասը 1980 թվականի 20%-ից նվազեց մինչև 12%-ի 1990 թվականին: Այս կերպ, Ռեյգանի հարկային օրենսդրությունը ոչ միայն մեծացրեց կորպորացիաների և բարձր եկամուտ ունեցող տնտեսավարողների հզորությունը, այլև հաստատեց, որ նոր պահպանողական ժամանակաշրջան է սկսվել ամերիկյան հասարակական կյանքում:

Թվում էր, թե 1981 թվականի աշնանը նոր վարչակազմը բարձր թռիչք էր գրանցում, սակայն զարգացումները մարտահրավեր նետեցին Սպիտակ տան վարդազույն տնտեսական կանխատեսումներին: Ռեյգանը սաստկացրեց լարվածությունը Խորհրդային Միության հետ, և Կոնգրեսը հավանություն տվեց նրա 1,2 տրիլիոն դոլարի նոր ռազմական ծախսերի խնդրանքին: Ավելի ցածր հարկերի և ավելի բարձր պաշտպանական բյուջեների համակցումը հանգեցրեց պետական պարտքի խիստ աճին: Ռեյգանի նախագահության առաջին ժամկետի վերջում այն կազմում էր ՀՆԱ-ի 53 տոկոսը՝ ի տարբերություն 1981 թվականի 33 տոկոսի: Պետական պարտքի աճը ցնցող էր, հատկապես այն վարչակազմի համար, որը խոստացել էր սահմանափակել պետական ծախսերը: Միևնույն ժամանակ, Դաշնային պահուստային համակարգի նախագահ Փոլ Վոլքերը շարունակում էր Քարթերի տարիներից սկիզբ առած ինֆլյացիայի դեմ պայքարի իր քաղաքականությունը՝ պահպանելով բարձր տոկոսադրույքները, որոնք 1981 թ. հունիսին գերազանցեցին 20 տոկոսը: Դաշնային պահուստային համակարգի գործողությունները մեծացրին փոխառությունների արժեքը և խեղդեցին տնտեսական գործունեությունը:

Արդյունքում, 1981-1982 թվականներին Միացյալ Նահանգները ծանր տնտեսական անկում ապրեց: Գործազրկությունը բարձրացավ՝ հասնելով 11 տոկոսի, որը ամենաբարձր ցուցանիշն էր Մեծ դեպրեսիայից ի վեր: Սոցիալական ապահովության ծախսերի կրճատումը մեծացրեց ռեցեսիայի ազդեցությունը սովորական մարդկանց վրա: Կոնգրեսը հետևեց Ռեյգանի քաղաքական ծրագրին՝ կրճատելով սննդի կտրոնների և խնամակալության կարիք ունեցող երեխաներով ընտանիքներին օգնության

Ֆինանսավորումը և կես միլիոն մարդու հեռացրեց հաշմանդամների լրացուցիչ սոցիալական ապահովության ծրագրից: Կրճատումները հատկապես ծանր հարված էին ցածր եկամուտ ունեցող գունավոր համայնքներին: Ռեյգանը նաև հանդիպեց երկկուսակցական հանդիմանության այն բանից հետո, երբ 1981 թ. առաջարկեց կրճատել վաղաժամկետ թոշակառուների սոցիալական ապահովության նպաստները: Սենատը միաձայն քվեարկեց՝ դատապարտելով ծրագիրը, իսկ դեմոկրատներն այն որակեցին որպես անսիրտ հարձակում տարեցների վրա: Հանդիպելով տնտեսական անկման մարտահրավերի և հասարակական կոշտ քննադատության՝ Սպիտակ տունը 1982 թ. համագործակցեց Ներկայացուցիչների պալատի դեմոկրատ խոսնակ Թիմի ՕՆիլի հետ՝ մշակելով մի օրինագիծ, որը վերականգնեց նախորդ տարվա հարկային կրճատումները 98 միլիարդ դոլարով: Չնայած վարչակազմի հետ հարկային փոխզիջմանը՝ դեմոկրատները բողոքում էին այսպես կոչված Ռեյգանի ռեցեսիայի (Reagan Recession) հետևանքների դեմ՝ պնդելով, որ նախագահի տնտեսական քաղաքականությունը ձեռնտու է միայն ամենահաջողակ ամերիկացիներին: Այս բողոքը, որը դեմոկրատներն անվանեցին «արդարության խնդիր», օգնեց նրանց բարելավվելու իրենց դիրքերը Կոնգրեսի աշնանային ընտրություններում:

Նախագահ Ռեյգանն արագորեն հարմարվեց 1982 թվականի քաղաքական անհաջողություններին: Սոցիալական ապահովության իր առաջարկների մերժումից հետո Ռեյգանը նշանակեց երկկուսակցական հանձնաժողով՝ քննարկելու ծրագրի փոփոխությունները: 1983 թ. սկզբին հանձնաժողովը առաջարկեց կենսաթոշակային տարիքի աստիճանական բարձրացում՝ 65-ից մինչև 67: Հանձնաժողովը նաև առաջարկեց բարձրացնել նահանգային և դաշնային աշխատավարձերի եկամտահարկերը՝ նոր եկամուտները փոխանցելով հավատարմագրային հիմնադրամին և վերափոխելով սոցիալական ապահովության համակարգը: Կոնգրեսն ընդունեց առաջարկությունները: Նախագահը նաև հաջողեց տնտեսական վերականգնման քաղաքականության մեջ: 1983 թվականին իրական եկամուտներն աճեցին 2,5 տոկոսով, իսկ հաջորդ տարի՝ 5,8 տոկոսով: 1984 թվականին գործազրկությունը նվազեց մինչև 7,5 տոկոս: Մինչդեռ բարձր տոկոսադրույքների «կոշտ դեղամիջոցը» օգնեց գնաճը նվազեցնելու մինչև 3,5 տոկոս: 1984 թվականին նախագահական ընտրությունների քարոզարշավի ժամանակ Ռեյգանը մատնանշեց բարելավվող տնտեսությունը՝ որպես ապացույց, որ «Ամերիկայում կրկին առավոտ է»: Նրա անձնական ժողովրդականությունը բարձրացավ: Պահպանողականների

մեծ մասն անտեսեց նախորդ երկու տարիների պետական պարտքի ավելացումը և հարկերի բարձրացումը՝ համախմբվելով նախագահի շուրջ:

Մյուս կողմից՝ 1984 թվականին Դեմոկրատական կուսակցությունը կանգնած էր գաղափարաբանական խաչմերուկի վրա: Կուսակցության նախագահի թեկնածուն Ուոլթեր Մոնդեյլն էր, ով որպես սենատոր 1960-1970-ականներին կազմակերպված աշխատավորության և քաղաքացիական իրավունքների շարժման ամուր դաշնակիցն էր: Այնուհետև՝ նախագահ Ջիմի Քարթերի պաշտոնավարման ընթացքում, ԱՄՆ փոխնախագահն էր: Շատ դեմոկրատներ, այնուամենայնիվ, պատրաստ չէին հրաժարվել իրենց «Նոր համաձայնության» ժառանգությունից, և այդ պատճառով 1984 թ. նախնական քարոզարշավում կուսակցության ներսում դրսևորվեց գաղափարական լարվածություն: Մոնդեյլն ի վերջո ապահովեց կուսակցության աջակցությունն իր «Նոր համաձայնության» ոճի ազատականության քաղաքական բանաձևին, բայց համընդհանուր ընտրություններում ջախջախիչ պարտություն կրեց: Ռեյգանը հաղթեց 50 նահանգներից 49-ում՝ հավաքելով ժողովրդական քվեների 58,8 տոկոսը:

Մոնդեյլի պարտությունը նախագահական ընտրություններում կարծես հաստատեց, որ չափավոր դեմոկրատների նոր տեսակը ավելի լավ էր հասկանում ամերիկացի ժողովրդի տրամադրությունը: Դեմոկրատական կուսակցության ապագան պատկանում էր «հետ-Նոր համաձայնության» ազատականներին: 1985 թվականի փետրվարին կուսակցության կենտրոնամետների խումբը ձևավորեց Դեմոկրատական առաջնորդության խորհուրդը (Democratic Leadership Council (DLC))՝ իբրև կուսակցությունը կազմակերպված աշխատուժից և քեյնսյան տնտեսությունից հեռացնելու միջոց: Միաժամանակ զարգացան կապերը գործարար համայնքի հետ: Այս կազմակերպությունն ընդգրկում էր կուսակցության ապագա առաջնորդներից շատերին՝ ներառյալ Արկանզասի նահանգապետ Բիլ Բլինթոնին: Դեմոկրատական առաջնորդության խորհրդի ձևավորումը ցույց տվեց, թե որքանով էին Նոր աջերը փոխակերպել ամերիկյան քաղաքականությունը: Նոր դեմոկրատները շատ նման էին հին հանրապետականներին:

Նախագահ Ռեյգանն իր պաշտոնավարման երկրորդ ժամկետը սկսեց շատ ավելի ուժեղ մանդատով, քան 1981 թվականին, սակայն «Մեծ Հին կուսակցության» (Grand Old Party (GOP))՝ Հանրապետական կուսակցության վերափոխումները Վաշինգտոնում կանգ առան: 1986 թվականին դեմոկրատները վերականգնեցին վերահսկողությունը Սենատի նկատմամբ, և դեմոկրատական ընդդիմությունը խանգարեց Ռեյգանին

վերացնել սոցիալական բարեկեցության ծրագրերը, թեև Կոնգրեսը չկարողացավ բարձրացնել բարեկեցության ծրագրերի նպաստների մակարդակը կամ նվազագույն աշխատավարձը: Դեմոկրատներն ու հանրապետականները երբեմն ձևակերպում էին օրենսդրական փոխզիջումներ, ինչպիսին էր 1986 թվականի Հարկային բարեփոխումների օրենքը (Tax Reform Act): Օրինագիծը նվազեցրեց կորպորատիվ հարկի բարձրագույն դրույքաչափը 46 տոկոսից մինչև 34 տոկոս և նվազեցրեց ամենաբարձր սահմանային եկամտահարկի դրույքաչափը 50 տոկոսից մինչև 28 տոկոս, մինևույն ժամանակ պարզեցրեց հարկային օրենսգիրքը և վերացրեց բազմաթիվ օրենսդրական բացերը: Կորպորատիվ և անհատական դրույքաչափերի կտրուկ կրճատումները, անշուշտ, ձեռնտու էին հարուստ անհատներին, սակայն օրենսդրությունը գործնականում ոչ մի փոփոխության չհանգեցրեց դաշնային եկամուտներում: 1986 թվականին Ռեյգանը ստորագրեց նաև Ներգաղթի վերափոխման և վերահսկման օրենքը (Immigration Reform and Control Act): Ամերիկացի քաղաքական գործիչները հույս ունեին լուծելու միլիոնավոր ապօրինի ներգաղթյալների խնդիրը, որոնք արդեն գտնվում էին Միացյալ Նահանգներում՝ միաժամանակ կասեցնելով ապագա չարտոնված ներգաղթը: Առաջին նպատակն իրականացավ. գրեթե երեք միլիոն առանց փաստաթղթերի աշխատողներ ստացան օրինական կարգավիճակ: Սակայն չարտոնված ներգաղթի խնդիրը գործնականում շարունակում էր ահագնանալ:

Ռեյգանի պահպանողական քաղաքականությունը հաջողեց դատավորների նշանակումների գործում: Նա իր պաշտոնավարման երկու ժամկետների ընթացքում նշանակեց շրջանային և դաշնային վերաքննիչ դատարանների 368 դատավորներ: Դիտորդներն ընդգծում էին այն հանգամանքը, որ նշանակվածների ճնշող մեծամասնությունը սպիտակամորթ տղամարդիկ էին (միայն 7 աֆրոամերիկացի, 15 լատինամերիկացի և 2 ասիացի ամերիկացի): Ռեյգանը նաև նշանակեց Գերագույն դատարանի երեք դատավորների: Այնուամենայնիվ, «Նոր աջերի» կողմից դատական իշխանության վերափոխումը սահմանափակ բնույթ ուներ:

Հասարակական-տնտեսական և մշակութային կյանքը

Աշխատավոր և միջին դասի ամերիկացիները, հատկապես ոչ սպիտակամորթներն ու աֆրոամերիկացիները, Ռեյգանի տարիներին պայքարում էին տնտեսական հավասարակշռությունը պահպանելու համար: Աճող պետական պարտքը տնտեսական նոր մարտահրավերներ ծնեց:

Դաշնային կառավարությունը պարտք էր վերցրել պարտքը ֆինանսավորելու համար՝ բարձրացնելով տոկոսադրույքները, որպեսզի մեծացնի պետական պարտատոմսերի գրավչությունը: Օտարերկրյա փողերը լցվեցին Միացյալ Նահանգներ՝ բարձրացնելով դոլարի արժեքը և ներգրավելով ապրանքների հոսք արտասահմանից: Ամերիկայի ներմուծման և արտահանման միջև անհավասարակշռությունը 1980 թվականի 36 միլիարդ դոլարից աճեց մինչև 170 միլիարդ դոլարի 1987 թվականին: Արտաքին մրցակցությունը հարվածեց առանց այն էլ խոցելի արտադրական հատվածին: Պետական պարտատոմսերի գրավչությունը ևս ետ մղեց ներդրումները ամերիկյան արդյունաբերությունից:

1980-ական թվականներին այս միտումը շարունակվեց. արդյունաբերական Հյուսիս-արևելքի և Միջին Արևմուտքի պողպատի արդյունաբերության ու ավտոմոբիլային շատ գործարաններ փակվեցին կամ տեղափոխվեցին արտասահման: Ճապոնական ավտոարտադրողների մրցակցությունը խթանեց «գնել ամերիկյանը» (“Buy American”) քարոզարշավը: Միևնույն ժամանակ, «Ֆերմերային ճգնաժամը» պատեց Միացյալ Նահանգների գյուղատնտեսական շրջանները: Ընդլայնված համաշխարհային արտադրությունը նշանակում էր նոր մրցակցություն ամերիկացի ֆերմերների համար, մինչդեռ տոկոսադրույքների աճը պատճառ դարձավ, որ ընտանեկան ֆերմաների առանց այն էլ զգալի պարտքը աճի:

Մյուս կողմից՝ «Նոր աջերի» քաղաքականության ներքո բարգավաճում էին հարուստ ամերիկացիները: Ռեյգանի նախագահության տարիներին ֆինանսական ոլորտը մեծ շահույթների նոր ուղիներ գտավ: Ուղի Սթրիթի բրոքերները հարստություն էին դիզում՝ վաճառելով բարձր ռիսկային և բարձր եկամտաբեր արժեթղթեր: Անխոհեմ սպեկուլյացիաները նպաստում էին արժեթղթերի շուկայի անշեղ վերընթացին մինչև 1987 թվականի հոկտեմբերի 19-ի անկումը: Ավելին, ֆինանսական ճգնաժամն ընդգրկեց խնայողությունների և վարկերի (S&L) ոլորտը. այստեղ զգալի պատասխանատվություն էր կրում Ռեյգանի ապակարգավորիչ քաղաքականությունը: 1982 թ. Ռեյգանը ստորագրեց մի օրինագիծ, որը մեծացնում էր խնայողությունների և վարկերի ավանդատուների համար հասանելի դաշնային ապահովագրության գումարը, ինչն ավելի մեծացրեց այդ ֆինանսական հաստատությունների ժողովրդականությունը սպառողների շրջանում: Օրինագիծը նաև թույլ տվեց բարձր ռիսկային վարկային և ներդրումային ծրագրերում ներգրավվել խնայողությունների և վարկային կազմակերպություններին: Նման գործարքներից շատերը ձախողվեցին, և սովորական ամերիկացիները կորցրին իրենց թանկարժեք խնայողու-

թյունները: 1982 թ. օրենքը կառավարության պատասխանատվության տակ թողեց խնայողությունները և վարկերը՝ 132 միլիարդ դոլար վերջնական արժեքով, փրկելու հարցը:

Պահպանողական շարժումը և Ռոնալդ Ռեյգանի նախագահության շրջանը աֆրոամերիկացիների համար լի էին մի շարք հակասություններով սոցիալական, տնտեսական և քաղաքական ոլորտներում: 1960-ականների վերջին սևամորթ ամերիկացիները զգալի առաջընթաց էին գրանցել քաղաքականության, մշակույթի և սոցիալ-տնտեսական հարթակներում: Այս միտումը շարունակվեց 1970-ականներին, իսկ 1980-ականներին սևամորթ քաղաքական գործիչները վերահսկողություն ձեռք բերեցին երկրի խոշոր քաղաքային իշխանությունների վրա: 1983 թվականին Ֆիլադելֆիայի և Չիկագոյի ընտրողները որպես իրենց քաղաքների առաջին սևամորթ քաղաքապետեր ընտրեցին՝ համապատասխանաբար Վիլսոն Գուդին և Հարոլդ Վաշինգտոնին: Համապետական մակարդակում քաղաքացիական իրավունքների առաջնորդ Ջեսսի Ջեքսոնը դարձավ առաջին աֆրոամերիկացին, ով 1984 և 1988 թվականներին Դեմոկրատական կուսակցության նախնական ընտրություններում նախագահի թեկնածության հիմնական հավակնորդներից էր:

Մշակույթի և ժամանցի ոլորտներում աստղային համբավ ձեռք բերեցին կատակերգու Էդի Մերֆին, փոփ երգիչ Մայքլ Ջեքսոնը, հաղորդավար Օփրա Ուինֆրին և այլք: Աֆրոամերիկացիների վերին խավի եկամուտը տասնամյակի մեծ մասում աճում էր ավելի արագ, քան սպիտակամորթների եկամուտը: Միջին դասի աֆրոամերիկացիները ևս 1980-ականներին հաջողություններ գրանցեցին, սակայն աղքատ և բանվոր դասակարգը բախվում էր շարունակական մարտահրավերների: Ռեյգանի պաշտոնավարման վերջին տարվա ընթացքում աֆրոամերիկացիների աղքատության մակարդակը կազմում էր 31,6 տոկոս՝ սպիտակամորթների 10,1 տոկոսի համեմատ: Սևամորթների գործազրկությունը սպիտակամորթների համեմատ տասնամյակի ընթացքում կրկնապատկվել էր: 1990 թվականին սևամորթ ընտանիքների միջին եկամուտը 21,423 դոլար էր, ինչը 42 տոկոսով ցածր էր սպիտակամորթ տնային տնտեսությունների միջին եկամուտից:

Ռեյգանի վարչակազմը չկարողացավ լուծել նման անհավասարությունները և շատ առումներով խորացրեց դրանք: «Նոր աջերի» արժեքները սպառնում էին Մեծ հասարակության և «իրավունքների հեղափոխության» (“rights revolution”) իրավական սկզբունքներին և դաշնային քաղաքականությանը: Բացի այդ, իրավապահ մարմինները շարունա-

կում էին ավելի ագրեսիվ ոստիկանական գործողություններ իրականացնել աֆրոամերիկացիների ու այլ փոքրամասնությունների նկատմամբ և ձերբակալվածների համար ավելի երկար բանտարկություն սահմանել: Այնուամենայնիվ, պահպանողական տասնամյակի ավարտին ամերիկացիներն ավելի ու ավելի շատ էին ընդունում ռասայական բազմազանությունը որպես դրական արժեք:

1980-ականների ժողովրդական մշակույթը առաջարկեց մեկ այլ միջավայր, որտեղ պահպանողականներն ու ազատականները գաղափարների պայքար էին մղում: Ռեյգանի նախագահության ռազմատենչությունն ու հայրենասիրությունը ներթափանցել էին այնպիսի ֆիլմեր, ինչպիսիք են «Թոփ Գան» (Top Gun) և «Ռեմբո» (Rambo) սերիալները: Ի հակադրություն դրանց՝ ռեժիսոր Օլիվեր Սթոունը ներկայացրեց «Դասակը» (Platoon) և «Հուլիսի 4-ին ծնվածները» (Born on the Fourth of July) ֆիլմերը, որոնք խստորեն դատապարտում էին պատերազմը: Հեռուստատեսային շրունները, ինչպիսիք էին «Դինաստիան» (Dynasty) և «Դալլասը» (Dallas), գովերգում էին հարստությունն ու հմայքը, մինչդեռ այնպիսի ֆիլմեր, որոնցից էր «Ուոլ Սթրիթը» (Wall Street) և այնպիսի վեպերը, որոնցից էր Բրետ Իսթոն Էլիսի «Զրոյից պակասը» (Less Than Zero), քննադատում էին անհավասարությունը:

Մշակութային կոիվսերն էլ ավելի թեժացան գենդերային և սեռական քաղաքականության ոլորտում: 1980-ականներին ամերիկուիսիներն ավելի առաջ մղվեցին դեպի տղամարդկանց գերիշխանության ոլորտներ: 1984 թ. Ջերալդին Ֆերարոն Նյու Յորքից դարձավ առաջին կինը, ով առաջադրվեց խոշոր կուսակցության նախագահական թեկնածության մրցապայքարում, երբ դեմոկրատ թեկնածու Ուոլթեր Մոնդեյլը նրան ընտրեց որպես իր փոխնախագահի թեկնածու: Այնուամենայնիվ, աջերի հաղթանակը կանանց իրավունքների վերաբերյալ հիմնարար հարցեր բարձրացրեց ամերիկյան քաղաքականության մեջ, հատկապես արբորտների առնչությամբ: 1976 թ. Հայդի օրենքն (Hyde Amendment) արգելում էր դաշնային միջոցներ օգտագործել արբորտների համար վճարելիս: Ռեյգանը, որն ավելի շատ հետաքրքրված էր տնտեսական հարցերով, քան հասարակական, միայն կրավորական աջակցություն էր ցուցաբերում արբորտների դեմ շարժմանը:

Ռեյգանի արտաքին քաղաքականությունը

1980-ական թվականներին պահպանողական շարժումն ամբողջությամբ կլանեց նաև ամերիկյան արտաքին քաղաքականությունը: Ռոնալդ Ռեյգանը պաշտոնավարում էր իբրև Սառը պատերազմի հաստատական մարտիկ: 1982 թվականին բրիտանական խորհրդարանում ունեցած ելույթում Ռեյգանը հայտարարեց, որ չի կասկածում, որ Խորհրդային Միությունը կհայտնվի «պատմության մոխրակույտի վրա»: 1983 թվականի իր ուղերձում դատապարտելով Խորհրդային Միությանը՝ Ռեյգանն այն կոչեց «չարիքի կայսրություն»: Նա կարծում էր, որ Միացյալ Նահանգների պարտականությունն է արագացնել Խորհրդային Միության անխուսափելի կործանումը: Ըստ Ռեյգանի դոկտրինի՝ Միացյալ Նահանգները օգնություն պետք է տրամադրեր հակակոմունիստական ուժերին ողջ աշխարհում: Ըստ այդմ՝ Ռեյգանը նախաձեռնեց պաշտպանության բյուջեի հսկայական ընդլայնումը: Պաշտպանության ոլորտում դաշնային ծախսերը 1981 թվականի 171 միլիարդ դոլարից 1985 թվականին հասան 229 միլիարդ դոլարի, ինչը ամենաբարձր մակարդակն էր Վիետնամի պատերազմից ի վեր: Նախագահը սա որակեց իբրև «խաղաղության քաղաքականություն ուժի միջոցով»: Այնուամենայնիվ, Ռեյգանը, չնայած իր այս ողջ ռազմատենչությանը, հասավ Սառը պատերազմի ավարտին բանակցությունների միջոցով. մարտավարություն, որը նա ժամանակին արհամարհում էր:

1975 թվականին, երբ ամերիկյան ուժերը խառնաշփոթ կերպով հեռացան Հարավային Վիետնամից, ամերիկացիների մեծ մասը տարակուսում էր, որ իրենց երկիրը գտնվում է անդառնալի անկման մեջ: 1978 թվականին Միացյալ Նահանգները Պանամայի ջրանցքի վերահսկողությունը վերադարձրել էր Պանամային՝ չնայած պահպանողականների բողոքին: 1979 թվականին Իրանում և Նիկարագուայում տապալվել էին ամերիկամետ վարչակարգերը: Խորհրդային Միությունը ներխուժել էր Աֆղանստան այդ նույն տարում, ինչը ստիպեց պահպանողականներին կենտրոնացնել ջանքերը խորհրդային ծավալման դեմ:

Ուստի Ռեյգանի վարչակազմը Լատինական Ամերիկյան դարձրեց ցուցափեղկ իր նոր հաստատական քաղաքականության համար: Եթե Զիմի Քարթերը ձգտում էր խթանել մարդու իրավունքները տարածաշրջանում, ապա Ռեյգանը և նրա խորհրդականները հրաժարվեցին այս մոտեցումից՝ դրա փոխարեն կենտրոնանալով կոմունիզմի դեմ պայքարի վրա: Հատկանշական է, որ կոմունիզմ եզրույթը նրանք կիրառում էին լատինամերիկյան ծախակողմյան բոլոր շարժումների վերաբերյալ: Եվ այսպես,

երբ 1983 թվականի հոկտեմբերին Կուբայի հետ կապեր ունեցող կոմունիստները տապալեցին Կարիբյան ծովի Գրենադայի կառավարությունը, Ռեյգանը կղզի ուղարկեց ԱՄՆ ծովային հետևակայիններին, որոնք տապալեցին ձախակողմյան կառավարությունը: Չնայած առաքելության համեմատաբար աննշան բնույթին՝ դրա հաջողությունը հաղթանակի զգացում բերեց ամերիկացիներին նախորդ երկու տասնամյակների ռազմական ձախողումներից հետո:

Գրենադան միակ դեպքն էր, երբ Ռեյգանը տեղակայեց ամերիկյան բանակը Լատինական Ամերիկայում, բայց Միացյալ Նահանգները նաև ներագդում էր տարածաշրջանի վրա՝ աջակցելով տեղի աջակողմյան՝ հակակոմունիստական շարժումներին: 1981-1990 թթ. Միացյալ Նահանգներն ավելի քան 4 միլիարդ դոլար հատկացրեց Էլ Սալվադորի կառավարությանը՝ պայքարելու Ֆարաբունդո Մարտիի անվան ազգային ազատագրական ճակատի (Farabundo Martí National Liberation Front (FMLN)) պարտիզանների դեմ: Սալվադորի անվտանգության ուժերը, որոնք հազեցած էին ամերիկյան զենքերով, բազմաթիվ վայրագություններ իրականացրին, այդ թվում՝ 1981 թվականի դեկտեմբերին Էլ Մոզոտե գյուղում մոտ 1000 խաղաղ բնակիչների սպանող: Սակայն այս ջանքերը մեծապես ապարդյուն էին:

Ռեյգանի վարչակազմն ավելի զգուշավոր մոտեցում ցուցաբերեց Մերձավոր Արևելքում, որտեղ նրա քաղաքականությունը որոշարկվում էր հակակոմունիզմի և Իրանի Իսլամական Հանրապետության հանդեպ թշնամանքի համադրմամբ: Երբ 1980 թվականին Իրաքը ներխուժեց Իրան, Միացյալ Նահանգները Իրաքի դիկտատոր Սադամ Հուսեյնին տրամադրեց ռազմական հետախուզության տվյալներ և վարկեր նույնիսկ այն բանից հետո, երբ պարզվեց, որ իրաքյան ուժերը քիմիական զենք են կիրառում: Ռեյգանի ամենամեծ անհաջողությունը Մերձավոր Արևելքում լիբանանյան դեպքն էր: 1982 թվականին՝ Իսրայելի Լիբանան ներխուժումից անմիջապես հետո, Ռեյգանն իբրև խաղաղապահ ուժ ծովային հետևակայիններին տեղակայեց Բեյրութում: 1983 թվականի հոկտեմբերի 23-ին մահապարտ-ահաբեկչի հարձակման արդյունքում զոհվեցին Բեյրութում տեղակայված 241 ծովային հետևակայիններ: Կոնգրեսի ճնշումը և ամերիկյան հանրության զայրույթը ստիպեցին Ռեյգանին 1984 թ. մարտին հետ կանչել ծովային հետևակայիններին Լիբանանից: Ռեյգանը պրագմատիկ մոտեցում էր ցուցաբերում արտաքին քաղաքականությանը՝ չցանկանալով ստանալ մեկ այլ Վիետնամ՝ ամերիկյան զորքեր մտցնելով Լիբանան:

Թեև Կենտրոնական Ամերիկայի և Մերձավոր Արևելքի նկատմամբ Ռեյգանի քաղաքականությունը ևս բողոքի ալիք բարձրացրեց, այնուամենայնիվ առավել հակասական էր միջուկային զենքի վերաբերյալ նրա քաղաքականությունը: Ի սկզբանե Ռեյգանը հետևեց նախագահներ Նիքսոնի, Ֆորդի և Քարթերի օրինակներին՝ շարունակելով Խորհրդային Միության հետ սպառազինությունների սահմանափակման վերաբերյալ բանակցությունները: ԱՄՆ-ն ներգրավված էր 1981 թվականին մեկնարկած Միջին հեռահարության միջուկային ուժերի (Intermediate-range Nuclear Force (INF)) վերացման բանակցություններում, ինչպես նաև 1982 թ. Ռազմավարական սպառազինությունների կրճատման բանակցություններում (Strategic Arms Reduction Talks (START)): Սակայն 1983 թ. այս բանակցությունների ծախսողումը ստիպեց Ռեյգանին շարունակել Արևմտյան Եվրոպայում «Փերշինգ 2» (Pershing II) միջուկային հրթիռներ տեղակայելու ծրագրերը՝ Արևելյան Եվրոպայում խորհրդային «Էսէս-20» (SS-20) հրթիռներին դիմակայելու համար: 1983 թ. մարտին Ռեյգանը մի քայլ առաջ գնաց՝ հայտարարելով Ռազմավարական պաշտպանության նախաձեռնության (Strategic Defense Initiative (SDI)) ծրագրերի մասին, որը ենթադրում էր տիեզերքում տեղակայված հակահրթիռային համակարգ, որը կարող էր խոցել արձակված խորհրդային հրթիռները: Քննադատները ծաղրում էին ծրագիրը որպես «Աստղային պատերազմների» (“Star Wars”) երևակայություն, և նույնիսկ Ռեյգանի խորհրդականները կասկածներ ունեին դրա լրջության վերաբերյալ:

Կոնգրեսը դիմադրում էր. Կոնգրեսի դեմոկրատներն ըստ էության դեմ էին Ռեյգանի քաղաքականությանը, իսկ Կոնգրեսի հանրապետականները, թեև աջակցում էին Ռեյգանի հակակոմունիզմին, զգուշանում էին Կոնգրեսը շրջանցելու վարչակազմի պատրաստակամությունից: 1982 թվականին Ներկայացուցիչների պալատը 411-0 ձայներով հավանություն տվեց Բոլանդի ուղղմանը (Boland Amendment), որն արգելում էր Միացյալ Նահանգներին միջոցներ տրամադրել Կոնտրասին (Contras - contrarrevolucionarios)՝ հակահեղափոխական աջակողմյան ապստամբությանը, որը հակակոմունիստական դիրքորոշում ուներ և պայքարում էր Նիկարագուայի ձախական սանդինիստական (Sandinista) կառավարության դեմ: Ռեյգանը, անտեսելով Կոնտրասի դաժան մարտավարությունը, ողջունում էր հակահեղափոխականների պայքարը՝ նրանց համարելով «հիմնադիր հայրերի բարոյական համարժեքը»: Բոլանդի ուղղումն անտեսելու Ռեյգանի վարչակազմի վճռականությունը հանգեցրեց սկանդալի, որը գրեթե ոչնչացրեց Ռեյգանի նախագահության հեղինակությունը:

նր: Նախագահի ազգային անվտանգության հարցերով խորհրդական Ռոբերտ Մաքֆարլեյնը և Ազգային անվտանգության խորհրդի անդամ Օլիվեր Նորթը հակահեղափոխականներին աջակցելու համար գումար հայթայթեցին՝ Իրանին ամերիկյան հրթիռներ վաճառելով և գումարը Նիկարագուա ուղարկելով: Երբ 1986 թվականին նրանց սխեման բացահայտվեց, Ռեյգանի համար դա չափազանց ամոթալի էր: Նախագահի ենթակաները ոչ միայն խախտել էին Բուլանդի ուղղումը, այլև Իրանին զենք վաճառելով՝ անլրջացրել էին Ռեյգանի խիստ հայտարարությունները իսլամական հանրապետության վերաբերյալ:

Թեև Իրան-Կոնտրա սկանդալը (Iran-Contra scandal) արատավորեց Ռեյգանի վարչակազմի հեղինակությունը, այն չխաթարեց Ռեյգանի ամենակարևոր ձեռքբերումը՝ Խորհրդային Միության հետ լարվածության թուլացումը: Այս ձեռքբերումը անհնարին կթվար Ռեյգանի պաշտոնավարման առաջին ժամկետում, երբ նախագահը կոշտ հռետորաբանություն էր կիրառում խորհրդային առաջնորդների՝ Լեոնիդ Բրեժնևի, Յուրի Անդրոպովի և Կոնստանտին Չեռնենկոյի դեմ: Սակայն 1985 թ. Չեռնենկոյի մահից հետո Խորհրդային Միության ղեկավարությունը ստանձնեց Միխայիլ Գորբաչովը, ով նախաձեռնեց Խորհրդային Միությունը վերափոխելու՝ *Վերակառուցման* (Перестройка) ծրագիրը: Այդ ծրագիրը նպատակաուղղված էր խորհրդային համակարգի վերակառուցմանը և *Հրապարակայնությանը* (Гласность), որը նշանակում էր ավելի մեծ թափանցիկություն կառավարման համակարգում: Գորբաչովը նաև կապ հաստատեց Ռեյգանի հետ՝ ակնկալելով բանակցել սպառազինությունների մրցավազքի ավարտի մասին, որը սնանկացնում էր Խորհրդային Միությունը: 1985 թվականին Ռեյգանը և Գորբաչովը հանդիպեցին Ժնևում (Շվեյցարիա), իսկ 1986 թվականին՝ Ռեյկյավիկում (Իսլանդիա): Գազաթնաժողովներում նրանք չկարողացան հասնել որևէ կոնկրետ պայմանավորվածության, սակայն երկու առաջնորդները զարգացրեցին ԱՄՆ-ԽՍՀՄ հարաբերությունների լարվածության թուլացումը: Այս վստահությունը հնարավոր դարձրեց ստորագրել 1987 թվականի Միջին հեռահարության միջուկային ուժերի մասին պայմանագիրը (Intermediate-Range Nuclear Forces Treaty), որը երկու կողմերին պարտավորեցրեց կտրուկ կրճատել իրենց միջուկային զինանոցը:

Ռեյգանը հաջողությամբ համատեղում էր հակակոմունիստական հռետորաբանությունը և խորհրդային ղեկավարության հետ բանակցելու պատրաստակամությունը: Հատկանշական է 1987 թվականի նրա ելույթը Բեռլինի պատի մոտ, որտեղ նա հայտարարեց. «Գլխավոր քարտու-

ղար Գորբաչով, եթե խաղաղություն եք փնտրում... քանդեք այս պատը»: Այնուամենայնիվ, ԽՍՀՄ փլուզման ամենակարևոր պատճառները հենց Խորհրդային Միության մեջ էին: Արևելյան Եվրոպայում ԽՍՀՄ դաշնակից կառավարությունները սասանվում էին այլախոհական շարժումների և կազմակերպությունների ճնշման ներքո, ինչպիսիք էին «Համերաշխությունը» (Solidarność) Լեհաստանում և «Նոր ֆորումը» (Neues Forum) Արևելյան Գերմանիայում: Արևելաեվրոպական որոշ երկրներում, օրինակ՝ Լեհաստանում, ակտիվ հակակոմունիստական գործունեություն էր ծավալում նաև Հռոմի կաթոլիկ եկեղեցին՝ Հռոմի պապ Հովհաննես Պողոս II-ի օրոք: Երբ Գորբաչովը հասկացրեց, որ չի ուղարկի Խորհրդային բանակը՝ աջակցելու այս երկրների սոցիալիստական վարչակարգերին, 1989 թվականին դրանք մեկ առ մեկ փլուզվեցին՝ Լեհաստանում, Հունգարիայում, Չեխոսլովակիայում, Ռումինիայում, Բուլղարիայում և Արևելյան Գերմանիայում: Սոցիալիստական ճամբարի փլուզումը էլ ավելի թուլացրեց Խորհրդային Միությունը: Գորբաչովի նախաձեռնած բարեփոխումները ներսից ավելի շուտ քանդեցին քայքայվող Խորհրդային համակարգը, քան կայունություն բերեցին: Ի վերջո, 1991 թվականին Խորհրդային Միությունը կազմաքանդվեց:

Ամփոփենք: Ռեյգանի պաշտոնավարման ժամկետն ավարտվեց 1988 թվականին, երբ Սառը պատերազմը թուլանում էր, իսկ ամերիկյան տնտեսությունը ծաղկում: Մինչև 1988 թվականը գործազրկության մակարդակը նվազել էր մինչև 5 տոկոս: Վերականգնվել էր նաև արժեթղթերի շուկան: Այնուամենայնիվ, տասնամյակի տնտեսական բարիքներն անհավասարաչափ էին բաշխվում: 1985-1989 թվականներին աղքատության մեջ ապրող ամերիկացիների թիվը շարունակում էր մնալ կայուն՝ 33 միլիոն: Մեկ շնչին բաժին ընկնող դրամական իրական եկամուտն աճել էր տարեկան ընդամենը 2 տոկոսով, ինչը մոտավորապես հավասար էր Քարթերի տարիների ցուցանիշին: Տնտեսական բաժանումն ու անհավասարությունն առավել սուր էին արտահայտված աֆրոամերիկացիների և լատինամերիկացիների շրջանում, որոնց մեկ երրորդը որակվում էր որպես աղքատ:

Այսպիսով, աջերի հաղթանակն անավարտ էր: Ռեյգանի օրոք պետական աշխատողների թիվը փաստացի աճեց: Եվ քանզի դաշնային բյուջեի ավելի քան 80 տոկոսը հատկացվել էր պաշտպանությանը, պետական պարտքի սպասարկման և բյուջեի դեֆիցիտի վերացման աջերի նպատակը խափանվեց: 1980-1989 թվականներին պետական պարտքը 914 միլիարդ դոլարից հասել էր 2,7 տրիլիոն դոլարի: Չնայած կորպո-

րացիաների և հարուստ խավերի համար հարկերի կտրուկ կրճատմանը՝ ամերիկյան հանրության ընդհանուր հարկային բեռը հիմնականում մնաց անփոփոխ: Ավելին, աշխատավարձի և որոշ ապրանքների վրա, այսպես կոչված, ռեգրեսիվ հարկերը իրականում ավելացրել էին ցածր և միջին եկամուտ ունեցող ամերիկացիների հարկային բեռը: Ի վերջո, թեև Ռեյգանը նվազեցրեց, բայց չկարողացավ հաղթահարել ազատական տնտեսագիտության կեսդարյա ժառանգությունը: Նոր համաձայնության և Մեծ հասարակության ծրագրերի մեծ մասն ամուր արմատավորված էր: Այնուամենայնիվ, անդառնալիորեն փոխվել էր ամերիկյան քաղաքականության տրամասույթը: Պահպանողական քաղաքական գաղափարների գերակայությունը հետզհետե ավելի էր ընդգծվում, նույնիսկ այն ժամանակ, երբ դեմոկրատներն էին վերահսկում Կոնգրեսը կամ Սպիտակ տունը: Ի պատասխան երկրի պահպանողական տրամադրությունների՝ Դեմոկրատական կուսակցությունը հարմարեցրեց և զարգացրեց իր գաղափարաբանությունը՝ ներառելով Ռեյգանի ժամանակաշրջանի հանրապետականների շատ գաղափարներ և նորամուծություններ: ԱՄՆ-ն շարունակեց մնալ աջակողմյան ուղու վրա:

ԳԼՈՒԽ 22

Նոր աշխարհակարգը. XXI դարի մարտահրավերները

Ռեյգանի հեղափոխությունը, որը պահպանողական բնույթի էր, ձգվեց մինչև 1988 թվականի նախագահական ընտրությունները: Արդ, վտանգված էր նոր հզորացած պահպանողական շարժման ժառանգությունը: Պահպանողական շարժումը պետք է շարունակեր իր առաջընթացը Ռեյգանի փոխնախագահ Ջորջ Բուշի առաջնորդությամբ: 1988 թվականի նախագահական ընտրություններում Բուշին մարտահրավեր նետեց Դեմոկրատական կուսակցության թեկնածու, Մասաչուսեթսի նահանգապետ, ազատական Մայքլ Դուկակիսը: Բուշը քննադատում էր Դուկակիսին բարոյական և մշակութային դիրքերից: Բուշը մեղադրում էր, որ Դուկակիսն արգելափակել է Մասաչուսեթսի դպրոցներում Հավատարմության երդման տեքստը արտասանելը, և որ նա Ամերիկյան քաղաքացիական ազատությունների միության (American Civil Liberties Union (ACLU)) «անդամատոմս կրող է»: Միևնույն ժամանակ, Բուշն իր ավագ որդուն՝ Ջորջ Բուշ կրտսերին, որպես իր դեսպան գործուղեց կրոնական աջերի մոտ: Դուկակիսին վարկաբեկելու համար Բուշը նաև հրապարակեց մի տխրահոշակ քաղաքական գովազդ, որում պատկերված էր Մասաչուսեթսում դատապարտված մարդասպան Վիլի Հորթոնն անունով սևամորթ տղամարդու դեմքը, ով Դուկակիսի նահանգապետության օրոք հանգստյան օրերի արձակուրդային ծրագրի միջոցով բանտից արձակուրդ ստանալուց հետո բռնաբարել էր մի կնոջ: Ազատականներն իրենց հերթին մեղադրում էին պահպանողականներին սպիտակ ամերիկացիների ռասայական դժգոհություններն օգտագործելու համար: Այնուամենայնիվ, Բուշը մեծ հաղթանակ տարավ և մտավ Սպիտակ տուն: Բուշի ընտրությունն ազդարարեց ամերիկացիների շարունակական աջակցությունը Ռեյգանի պահպանողական ծրագրին և վկայեց Դեմոկրատական կուսակցության լիակատար խառնաշփոթի մասին: Ամերիկյան լիբերալիզմը Ռեյգանի ժամանակաշրջանում լիակատար նահանջ էր ապրում:

Միակ գերտերությունը և նոր աշխարհակարգը

Ջորջ Բուշի նախագահության օրոք աշխարհը դարձավ միաբևեռ. փլուզվեց Խորհրդային Միությունը: ԻՍԼԱՄ առաջին և վերջին նախագահ Միխայիլ Գորբաչովը թուլացրել էր Խորհրդային Միության խիստ անձնական սահմանափակումներն ու գրաքննությունը (*գլասնոստ*) և ազատականացրել էր խորհրդային քաղաքական մեքենան (*պերեստրոյկա*): Արևե-

լյան Եվրոպայի սոցիալիստական ճամբարի երկրներում տապալվեցին կոմունիստական իշխանությունները: Այնուհետև փլուզվեց Խորհրդային Միությունը: 1991 թվականի դեկտեմբերի 25-ին Գորբաչովը հրաժարական տվեց՝ հայտարարելով, որ Խորհրդային Միությունն այլևս գոյություն չունի: Կրեմլում բարձրացվեց Ռուսաստանի Դաշնության եռագույն դրոշը:

Խորհրդային Միության փլուզումից հետո Միացյալ Նահանգները մնաց աշխարհի միակ գերտերությունը: Համաշխարհային կապիտալիզմը հաղթական էր թվում, և դիտորդ մտավորականներից շատերը մտածում էին՝ արդյո՞ք հասել է պատմության ինչ-որ վերջնական փուլ, արդյո՞ք հին գաղափարաբանական հակամարտություններն անցյալում են մնացել, և խաղաղության ու բաց շուկաների շուրջ ստեղծված նոր գլոբալ համաձայնությունը հարատևելու է: Արևելյան Եվրոպայի նորանկախ երկրներում շուկայական տնտեսությունների հաստատմանը զուգընթաց՝ սկսվեց սեփականաշնորհումների ալիքը: Ընդամին, Հարավարևելյան Ասիայում և Արևելյան Եվրոպայում նոր շուկաներ էին բացվում և աճում: 1991 թվականին Հնդկաստանը ևս սկսեց ազատականացնել իր տնտեսական օրենքները և բացվել միջազգային ներդրումների համար: Չինաստանի տնտեսական վերափոխումները, որոնք առաջ էին քաշվել Դեն Սյաոպինի առաջնորդությամբ և նրա ձեռքով ընտրված իրավահաջորդների կողմից, արագացան՝ սեփականաշնորհումներին և օտարերկրյա ներդրումներին զուգընթաց:

Այնուամենայնիվ, հետսառըպատերազմյան աշխարհը ևս լի էր միջազգային հակամարտություններով: Երբ 1990 թվականին Իրաքը ներխուժեց փոքր, բայց նավթով հարուստ Քուվեյթ, Կոնգրեսը նախագահ Բուշին ռազմական միջամտության իրավասություն տվեց: Օգոստոսին Միացյալ Նահանգները ձեռնարկեց «Անապատի վահան» գործողությունը (Operation Desert Shield)՝ պատրաստվելով ռազմական ներխուժման: 1991 թվականի հունվարին սկսվեց «Փոթորիկ անապատում» գործողությունը (Operation Desert Storm): Վիետնամի մասին հիշողությունները դեռ թարմ էին, և շատ ամերիկացիներ չէին շտապում աջակցել ռազմական գործողություններին, որոնք կարող էին վերածվել երկարաժամկետ պատերազմի: Սակայն Պարսից ծոցի պատերազմում Միացյալ Նահանգները արագ հաղթանակի հասավ: Նոր տեխնոլոգիաները՝ ներառյալ լազերային կառավարվող ճշգրիտ ռմբակոծությունները և գերճշգրիտ խոցման այլ միջոցների կիրառումը, ապշեցուցիչ էին: Մարդիկ այժմ կարող էին հետևել պատերազմին *Սի-էն-էն*-ի (Կաբելային լրատվական ցանց՝ Cable News Network (CNN)) 24-ժամյա ուղիղ հեռարձակմամբ: Իրաքի բանակը ջախ-

ջախվեց ընդամենը 100-ժամյա ցամաքային մարտերից հետո: Նախագահ Բուշը և նրա խորհրդականները նախընտրեցին չարշավել Բաղդադ՝ խուսափելով պատերազմի երկարաձգումից և Իրաքը ռազմակալելու դեպքում հնարավոր ապստամբության վտանգից: Եվ այսպես, պատերազմը հաղթական էր: Նախագահ Բուշը ժողովրդական մեծ աջակցություն ստացավ, որի մասին էին վկայում հասարակական կարծիքի հարցումները:

Թվում էր, թե նախագահ Բուշի ժողովրդականությունն ապահովելու է նրա հեշտ վերընտրությունը 1992 թ. ընտրություններում: Սակայն չնայած պահպանողական արժեքների ջերմեռանդ պաշտպանությանը և հարկերը չբարձրացնելու իր խոստմանը՝ Բուշը դեռևս չէր գրավել Հանրապետական կուսակցության ագրեսիվ պահպանողական թևի՝ «Նոր աջերի» աջակցությունը: Դեռևս 1988 թ. իր նախընտրական քարոզարշավի ընթացքում Բուշը հայտարարում էր. «Կարդացեք իմ շուրթերը. ոչ մի նոր հարկ» (“Read my lips: no new taxes”): Սակայն պաշտոնը ստանձնելուց հետո, առերեսվելով ֆինանսատնտեսական խնդիրներին, Բուշը չկարողացավ լիովին պահել իր խոստումը: Հանրապետական կուսակցության ներսում նախագահի թեկնածության համար նրան լուրջ մարտահրավեր նետեց քաղաքական մեկնաբան, Ռեյգանի և Նիքսոնի օրոք Սպիտակ տան նախկին խորհրդական Պատրիկ Բյուքենենը, ով Բուշին համարում էր չափավոր պահպանողական: Թեև Բուշը հաղթեց առաջադրման մրցապայքարում, Բյուքենենի քննադատությունը բավական վնաս հասցրեց՝ թուլացնելով նրա թեկնածությունը:

Կարծելով, որ Բուշը 1992 թ. ընտրություններում դեռևս անպարտելի կլինի, հայտնի դեմոկրատներից շատերը չօգտվեցին իրենց առաջադրվելու հնարավորությունից, և Դեմոկրատական կուսակցությունն առաջադրեց Արկանզասի նահանգապետ Բիլ Քլինթոնի թեկնածությունը: Չնայած ամուսնական դավաճանության և Վիետնամի պատերազմի ժամանակ զորակոչից խուսափելու մեղադրանքներին՝ Քլինթոնն ընկալվում էր որպես քարիզմատիկ և հմուտ քաղաքական գործիչ: Նա ներկայանում էր որպես նոր դեմոկրատ և կենտրոնամետ, որը բաց էր ազատ առևտրի, հարկերի կրճատման և բարեկեցությանը միտված բարեփոխումների համար: Բուշից 22 տարով երիտասարդ Քլինթոնը քարոզարշավը ներկայացրեց որպես սերունդների ընտրություն: Քարոզարշավի ընթացքում նա հայտնվեց ժամանցային *Էմ-Թի-Վի* (MTV) հեռուստատեսությունում, սաքսոֆոն նվագեց «Արսենիո Հոլլ շոու»-ում (The Arsenio Hall Show) և ընտրողներին ասաց, որ կարող է Միացյալ Նահանգներին նոր ճանապարհ առաջարկել:

Բուշը ընտրարշավում ընդգծում էր իր հարուստ փորձն ընդդեմ Քլինթոնի բարոյական ճախողումների: 1992 թ. ամռանը Հյուսթոնում տեղի ունեցած Հանրապետական կուսակցության համաժողովում ելույթներ ունեցան Պատրիկ Բյուքենենը և կրոնական առաջնորդ Փեթ Ռոբերթսոնը, որոնք դատապարտում էին ամերիկյան կյանքը պատուհասած բարոյական անկումը: Քլինթոնը քննադատվեց որպես ծայրահեղ ազատական, որը կթուլացնի ամերիկյան ընտանիքը և հասարակությունը թե՛ իր քաղաքականությամբ և թե՛ իր անհատական բարոյական հատկանիշներով: Սակայն Քլինթոնը կարողացավ համոզել ընտրողներին, որ իր չափավոր հարավային ազատականությունը ավելի արդյունավետ կլինի, քան Ջորջ Բուշի չափավոր պահպանողականությունը: Բուշի թեկնածությունը, իհարկե, ամենաշատը տուժեց հանկարծակի տնտեսական անկումից: Ինչպես Քլինթոնի քաղաքական թիմն էր հիշեցնում երկրին ընտրություններում կարևորի մասին՝ «Դա տնտեսությունն է, հիմարիկ» (“It’s the economy, stupid”):

Բիլ Քլինթոնը հաղթեց նախագահական ընտրություններում, սակայն Ռեյգանի հեղափոխությունը դեռևս իշխում էր: Քլինթոնը և նրա փոխնախագահի թեկնածուն՝ Թենեսիից սենատոր Ալբերտ Գոր կրտսերը, երկուսն էլ չափավոր հարավցիներ էին և խոստացան բոլորովին այլ ճանապարհ, քան 1970-1980-ական թվականների հին ազատականությունն էր: Քլինթոնը նախանշեց հավակնոտ օրակարգ, որը ներառում էր տնտեսության խթանման փաթեթ, համընդհանուր առողջապահական ապահովագրություն, Բուշի պետքարտուղար Ջեյմս Բեյթեր III-ի նախաձեռնած խաղաղ բանակցությունների շարունակություն Մերձավոր Արևելքում, բարեկեցության համակարգի բարեփոխում և Հյուսիսամերիկյան ազատ առևտրի համաձայնագրի (North American Free Trade Agreement (NAFTA)՝ ՆԱՖՏԱ) վավերացումը, որը վերացնելու էր առևտրային խոչընդոտները Միացյալ Նահանգների, Մեքսիկայի և Կանադայի միջև: Բարեկեցության համակարգի բարեփոխմանը, ազատ առևտրի և ֆինանսական շուկաների ապակարգավորմանն ուղղված քայլերը Քլինթոնի առաջարկած «Երրորդ ուղու» բնութագրիչներն էին՝ դեմոկրատների կողմից պահպանողական քաղաքականության ընդունման ուղենիշը:

Հյուսիսամերիկյան ազատ առևտրի համաձայնագրով Քլինթոնը հակադարձեց ազատ առևտրի դեմ դեմոկրատների երկարատև հակազդեցությանը և բացեց երկրի հյուսիսային ու հարավային սահմանները կապիտալի և ապրանքների ազատ հոսքի համար: Քննադատները, մասնավորապես Միջին Արևմուտքի Արդյունաբերական գոտում (Ժանգի գոտի՝

Rust Belt), դժգոհում էին օտարերկրյա էժան աշխատուժի կողմից ամերիկացի աշխատավորներին դուրս մղելու վտանգների առնչությամբ: Ամերիկյան շատ գործարաններ տեղափոխվեցին և ձեռնարկություններ հիմնեցին Մեքսիկայի հյուսիսում՝ օգտվելով մեքսիկական էժան աշխատուժից: Հազարավոր մեքսիկացիներ շտապեցին օգտվել հնարավորությունից՝ անցնելով սահմանը:

Եթե ՆԱՖՏԱ-ն բացում էր ամերիկյան սահմանները ապրանքների, կապիտալի և ծառայությունների համար, ապա մարդկանց տեղաշարժի խոչընդոտները շարունակում էին պահպանվել: Եվ մարդիկ պետք է հաղթահարեցին ներգաղթի իրավական խիստ խոչընդոտները: Քաղաքականություն մշակողները կարծում էին, որ ազատ առևտուրը կստեղծի աշխատատեղեր և բարեկեցություն՝ կանխելով անօրինական ներգաղթը և նպաստելով, որ մեքսիկացի աշխատավորները մնան իրենց երկրում: Այնուամենայնիվ, բազմաթիվ մարդիկ շարունակում էին հեռանալ և հնարավորություններ փնտրել հյուսիսում: 1990-ականները գործնականում ցույց տվեցին, որ անօրինական ներգաղթի արգելումը, եթե ոչ անհնար, ապա չափազանց դժվար էր: Աղքատությունը, քաղաքական կոռուպցիան, բռնությունը և ավելի լավ կյանքի հույսերը կամ պարզապես ավելի բարձր աշխատավարձերը շարունակում էին գրավել ներգաղթյալներին դեպի Միացյալ Նահանգներ: 1990-2010 թվականներին արտերկրում ծնված անհատների մասնաբաժինը ԱՄՆ-ում 7,9 տոկոսից աճեց մինչև 12,9 տոկոս, իսկ առանց փաստաթղթերի կամ անօրինական ներգաղթյալների թիվը եռապատկվեց՝ 3,5 միլիոնից հասնելով 11,2 միլիոնի: Թեև մեծ թվով մարդիկ շարունակում էին գաղթել դեպի ավանդական ներգաղթային ուղղություններ՝ Կալիֆորնիա, Տեխաս, Նյու Յորք, Ֆլորիդա, Նյու Ջերսի և Իլինոյս, 1990-ական թվականներին նաև աննախադեպ ներգաղթ գրանցվեց դեպի ամերիկյան հարավ:

Ի պատասխան ներգաղթյալների շարունակական հոսքի և հակամիգրացիոն շարժումների վերաբերյալ բողոքների՝ ԱՄՆ քաղաքականություն մշակողները արձագանքեցին այնպիսի նախաձեռնություններով, ինչպիսիք էին «Դարպասապահ» գործողությունը (Operation Gatekeeper) և «Պահպանիր սահմանագիծը» (Hold the Line), որոնք փորձում էին սահմանային անցումն ավելի խստացնել: Նոր ռազմավարությունը ներգաղթյալներին «ուղղեց» դեպի սահմանի վտանգավոր և հեռավոր հատվածներ: Ներգաղթային ծառայության պաշտոնյաները հույս ունեին, որ դաժան բնական լանդշաֆտը կծառայի որպես բնական պատնեշ անօրինական սահմանահատումների դեմ: Սակայն այդպես չեղավ: Մինչև 2017 թվա-

կանը ամեն տարի հարյուրավոր ներգաղթյալներ էին մահանում խեղդվելու, ջրագրկման կամ վտանգավոր սահմանահատումներ կատարելու այլ հանգամանքներում:

Իր պաշտոնավարման առաջին ժամկետում նախագահ Քլինթոնը նաև առաջ քաշեց համընդհանուր առողջապահությունն իբրև իր քաղաքականության հիմնական նպատակ, և առաջին տիկին Հիլարի Քլինթոնը մեծ դեր խաղաց այս նախաձեռնության մեջ: Սակայն ազգային առողջապահական օրենքի ընդունումը ձախողվեց: Նախաձեռնությունը բախվեց պահպանողականների համառ ընդդիմությանը, և ազգային առողջապահական համակարգի հաստատումը կրկին ետ մղվեց:

1994 թվականի միջանկյալ ընտրություններում դեմոկրատները պարտություն կրեցին և 1952 թվականից ի վեր առաջին անգամ կորցրին վերահսկողությունը Ներկայացուցիչների պալատում: Կոնգրեսական հանրապետականները՝ Ջորջիայից կոնգրեսական Նյուտ Գինգրիչի և Տեխասից կոնգրեսական Դիք Արմիի գլխավորությամբ, առաջարկեցին քաղաքականության նոր օրակարգ, որը նրանք անվանեցին «Համաձայնագիր Ամերիկայի հետ» (Contract with America): Հանրապետական թեկնածուները ամբողջ երկրից հավաքվել էին Կապիտոլիումի աստիճանների վրա՝ հավաստելու իրենց հանձնառությունը պահպանողական օրենսդրական նախագծին, որը կընդունվեր, եթե «Մեծ Հին կուսակցությունը» ստանձներ Ներկայացուցիչների պալատի նկատմամբ վերահսկողությունը: Այս ռազմավարությունն աշխատեց: Սոցիալ-պահպանողականները մոբիլիզացվել էին հատկապես Փեթ Ռոբերթսոնի և Ռալֆ Ռիդի գլխավորությամբ գործող Քրիստոնեական դաշինքի ջանքերով: Ռոբերթսոնը ավետարանականության հեռուստատեսային հոգևոր քարոզիչ էր և ձեռնարկատեր, ով լայն ազդեցություն էր ձեռք բերել 1988 թվականի նախագահական ընտրապայքարի ընթացքում: Քրիստոնեական դաշինքը կարողացավ կազմակերպել կրոնական մղումներով ընտրողների ցանցը ամբողջ երկրում՝ ձգտելով ազդել քաղաքականության վրա տեղական և ազգային մակարդակներում:

1996 թվականի նախագահական ընտրություններում սերունդների մրցակցությունը վերսկսվեց, երբ հանրապետականները առաջադրեցին արդեն պատկառելի տարիքի, պատերազմի հերոս, Կանգասից սենատոր Բոբ Դոուլին, սակայն Քլինթոնը կրկին հաղթեց՝ դառնալով առաջին դեմոկրատ նախագահը, ով Ֆրանկլին Ռուզվելտից հետո անընդմեջ պաշտոնավարեց: Նրան մասամբ օգնեց սոցիալական բարեփոխումների օրենսդրության ընդունումը՝ 1996 թ. Անձնական պատասխանատվության

և աշխատանքային հնարավորությունների հաշտեցման օրենքը (Personal Responsibility and Work Opportunity Reconciliation Act), որը նվազեցրեց սոցիալական նպաստները, սահմանափակեց հասանելիությունը և սոցիալական պարտականությունների զգալի մասը փոխանցեց նահանգներին: Քլինթոնն ասում էր, որ դա «կկտրի կախվածության շղթան»: Այս քայլը Քլինթոնի նկատմամբ բարյացակամորեն տրամադրեց պահպանողականների որոշ մասին:

Քլինթոնը նախագահում էր զարգացող համակարգչային տեխնոլոգիաներով սնուցվող աճող տնտեսության պայմաններում: Անհատական համակարգիչների վաճառքը կտրուկ աճել էր, իսկ համացանցը դարձել էր զանգվածային երևույթ: Հաղորդակցությունն ու առևտուրն այլևս երբեք նույնը չէին: Տեխնոլոգիական արագ աճը պայմանավորված էր նաև տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի գործարարության աշխուժացմամբ, որը 1990-ական թվականներին խթանեց նորարարությունների և ձեռներեցության ընդլայնումը: *Մայքրոսոֆթը* (Microsoft) և *Էյփլը* (Apple) դարձան առաջատար համակարգչային ընկերությունները: Սակայն համացանցն էր, որ դարձավ հետարդյունաբերական-տեղեկատվական դարաշրջանի գլխավոր խորհրդանիշը: *Դոթ-քոմ-ի* (Dot-com) վերելքը խթանեց հսկայական տնտեսական աճը և ֆինանսական շահարկումները՝ ստեղծելու հաջորդ *Գուգլը* (Google) կամ *Ամազոնը* (Amazon):

Հանրապետականները, որոնք պարտվել էին 1996 և 1998 թվականների ընտրություններում, այլ ուղիներ էին փնտրում Քլինթոնի նախագահությունը խաթարելու համար: Քաղաքական բևեռացումը խորանում էր: Լրատվամիջոցները քաղաքական սկանդալային պատմություններ էին փնտրում: Հանրապետական Կոնգրեսը հսկայական գումարներ էր ծախսում հետաքննությունների վրա՝ հուսալով բացահայտել դատապարտելի ապացույցներ Քլինթոնի նախագահությունը խորտակելու համար: Քլինթոնի շուրջ միշտ պտտվում էին սեռական անպատշաճ վարքագծի մասին լուրերը: Պատմականորեն մամուլը աչք էր փակում նման մասնավոր հարցերի վրա, սակայն այժմ լրատվամիջոցները լցվեցին Քլինթոնի սեռական սկանդալների մասին լուրերով: Կոնգրեսի հետաքննություններն ուղղված էին այդ մեղադրանքները բացահայտելուն: Քլինթոնը դատարանի առջև և ամերիկյան հանրությանն ուղղված հայտարարությամբ հերքեց Մոնիկա Լևինսկու հետ «սեռական հարաբերությունների» մասին մեղադրանքները: Հանրապետականներն օգտագործեցին ցուցմունքները՝ սուտ վկայության մեղադրանք առաջադրելու համար: 1998 թվականի դեկտեմբերին Ներկայացուցիչների պալատը քվեարկեց նախագահին իմփիչմենթի են-

թարկելու օգտին: Դա խիստ ոչ ժողովրդական քայլ էր: Ամերիկացիների մեծամասնությունը, ըստ «Գեյլափի» (Gallup) հարցումների, այնդուրեք էին, որ հանրապետականները չարաշահել են իրենց սահմանադրական լիազորությունները: Մինչդեռ Քլինթոնի վարկանիշը բարձրացել էր մինչև 78 տոկոս: 1999 թվականի փետրվարին Քլինթոնն արդարացվեց Սենատի քվեարկությամբ, որի արդյունքները հիմնականում համընկան կուսակցական գծերի հետ:

2000 թվականի նախագահական ընտրություններում հակադրվեցին դեմոկրատ փոխնախագահ Ալբերտ Գոր կրտսերը և նախկին նախագահի որդի, Տեխասի հանրապետական նահանգապետ Ջորջ Բուշ կրտսերը: Գորը, զգուշանալով Քլինթոնի վերջին իմփիչմենթից, հեռացավ նախագահից: Փոխարենը նա առաջադրվեց որպես պրագմատիկ, չափավոր ազատական: Բուշն իր հերթին դիրքավորվեց որպես չափավոր պահպանողական՝ այնդելով, որ ներկայացնում էր նոր հավատքի վրա հիմնված քաղաքականություն: Բուշը բացահայտ ավետարանական էր: Նախագահական բանավեճի ժամանակ նա իր սիրելի քաղաքական իմաստասեր հոշակեց Հիսուս Քրիստոսին: Նա խոստացավ եկեղեցական առաջնորդներին կառավարություն բերել: Ավելին, նա խոստանում էր պատիվ, արժանապատվություն և ազնվություն բերել Օվալաձև գրասենյակ՝ հստակ հակադրվելով Քլինթոնին: Քլինթոնի նախագահության բարեկեցության տարիները շեփոհարելու փոխարեն քաղաքական քարիզմայով աչքի չընկնող Գորը իրեն հեռացրեց հաջողության պատմությունից և խամրեց Բուշի հռետորաբանության ներքո:

2000 թվականի նախագահական ընտրությունները ԱՄՆ պատմության ամենավիճահարույց արդյունքներով ընտրություններից էին: Գորը 500,000-ով ավել համաժողովրդական ձայներ էր շահել, սակայն Ընտրիչների կոլեգիայի քվեարկության արդյունքը կախված էր Ֆլորիդայի վիճելի ընտրություններից: Ընտրությունների գիշերը ՋԼՄ-ները հնչեցրին Ֆլորիդայում Գորի հաղթանակի լուրը, բայց հետո հայտարարվեց Բուշի ուշ ստացած քվեների մասին, և ՋԼՄ-ները շրջվեցին՝ Բուշին նշելով հավանական ընտրված նախագահ: Այնուհետև հաշվարկները կրկին հօգուտ Գորի էին: Հաջորդ օրը պարզ չէր, թե ով է ընտրվել նախագահ: Ֆլորիդայի փակ քվեարկությունը հանգեցրեց վերահաշվարկի: Ի վերջո, ընտրական և իրավական խառնաշփոթին միջամտեց ԱՄՆ Գերագույն դատարանը *Բուշն ընդդեմ Գորի* (Bush v. Gore) գործով և 5 «կողմ» ու 4 «դեմ» ձայների հարաբերակցությամբ որոշեց, որ վերահաշվարկը պետք է ավարտվի: Այսպես Բուշը 537 ձայների տարբերությամբ հաղթեց Ֆլորի-

դա նահանգում՝ ստանալով մեծամասնություն Ընտրիչների կոլեգիայում և ընտրվելով նախագահ:

Իր պաշտոնավարման առաջին ամիսներին նախագահ Բուշը պայքարում էր հսկայական հարկային կրճատումների նախագիծն առաջ մղելու համար՝ միտված Ամերիկայի ամենաբարձր եկամուտ ունեցողներին: *Դոթ-քոմ*-ի փուչիկի (Dot-com bubble) պայթյունը ծանրացրեց ֆինանսատնտեսական դրությունը: Շարունակվում էին քաղաքական ու մշակութային հին բախումները: Եվ հետո փլուզվեցին Համաշխարհային առևտրի կենտրոնի աշտարակները:

Բուշի նախագահությունը. ահաբեկչության դեմ պատերազմը

2001 թվականի սեպտեմբերի 11-ի առավոտյան «Ալ-Քաիդա» ահաբեկչական կազմակերպության 19 ահաբեկիչներ ԱՄՆ Արևելյան ափի տարածաշրջանում առևանգեցին չորս մարդատար ինքնաթիռներ: «*Ամերիքան էյրլայնս*» (American Airlines) ավիաընկերության թիվ 11 չվերթի ինքնաթիռն առավոտյան 8:46-ին մխրճվեց Նյու Յորքի Համաշխարհային առևտրի կենտրոնի հյուսիսային աշտարակի մեջ: «*Յունայթդ էյրլայնս*» (United Airlines) ավիաընկերության թիվ 175 չվերթի ինքնաթիռը 9:03-ին մխրճվեց հարավային աշտարակի մեջ: Ժամը 9:37-ին «*Ամերիքան էյրլայնս*» ավիաընկերության թիվ 77 չվերթի ինքնաթիռը բախվեց Պենտագոնի արևմտյան ճակատին: Ժամը 9:59-ին փլուզվեց Առևտրի համաշխարհային կենտրոնի հարավային աշտարակը: Ժամը 10:03-ին «*Յունայթդ էյրլայնս*» ավիաընկերության թիվ 93 չվերթի ինքնաթիռը վթարի ենթարկվեց Փենսիլվանիայի Շենքսվիլի մոտ գտնվող դաշտում ուղևորների ջանքերով, ովքեր ստացել էին ավելի վաղ առևանգումների մասին լուրերը: Ժամը 10:28-ին փլուզվեց Առևտրի համաշխարհային կենտրոնի հյուսիսային աշտարակը: Երկու ժամվա ընթացքում զոհվեցին գրեթե 3000 ամերիկացիներ:

Ուշ երեկոյան նախագահ Բուշը դիմեց ամերիկյան ժողովրդին և վստահեցրեց, որ իշխանությունները փնտրում են և կգտնեն այդ չարաբաստիկ գործողությունների հետևում կանգնած բոլոր մեղավորներին: Ամերիկյան հետախուզական ծառայություններն արագորեն բացահայտեցին հարձակման պատասխանատուին, որը մեծահարուստ սաուդցի Ուսամա բեն Լադենի գլխավորությամբ գործող իսլամական արմատական «Ալ-Քաիդա» խմբավորումն էր: «Ալ-Քաիդան», որը պատասխանատու էր նաև 1993 թվականին Առևտրի համաշխարհային կենտրոնի ոմբակոծության և ԱՄՆ դեսպանատների ու ռազմակայանների վրա ամբողջ աշխարհում

մի շարք հարձակումների համար, պատասպարված էր Աֆղանստանում՝ թալիբների իսլամական կառավարության հովանավորության ներքո: Բեն Լադենի իսլամական արմատականությունը և նրա հակաամերիկյան ագրեսիան գրավել էին համակիրներ ողջ տարածաշրջանում, և մինչև 2001 թվականը «Ալ-Քաիդան» ակտիվ գործում էր ավելի քան 60 երկրներում:

Թեև իր նախընտրական արշավում Բուշը դատապարտում էր արտերկրում ազգաշինության գործընթացներին միջամտությունը, նա իր վարչակազմում նշանակել էր բազմաթիվ նորպահպանողականների, որոնք հաստատապես հավատում էին արտերկրում ամերիկյան ժողովրդավարության արտահանման և ամերիկյան շահերի ընդլայնման անհրաժեշտությանը: Ըստ այդմ՝ նախագահ Բուշն առաջ քաշեց նոր հայեցակարգ, որը հայտնի է իբրև Բուշի դոկտրին (Bush Doctrine): Այս արտաքին քաղաքական հայեցակարգի համաձայն՝ Միացյալ Նահանգներն իրեն իրավունք էր վերապահում միակողմանի և կանխարգելիչ պատերազմ սկսել ցանկացած ռեժիմի կամ ահաբեկչական կազմակերպության դեմ, որը սպառնալիք էր Միացյալ Նահանգների կամ նրա քաղաքացիների համար: Հայսմ՝ Միացյալ Նահանգները պետք է ներգրավվեր Աֆղանստանում և Իրաքում երկարատև հակամարտությունների մեջ:

ԱՄՆ-ն Աֆղանստանում միջամտության փորձառություն ուներ: Երբ Խորհրդային Միությունը 1979 թվականի դեկտեմբերին ներխուժեց Աֆղանստան՝ ճնշելու ապստամբությունը, որը սպառնում էր տապալել Քարուլի կոմունիստական կառավարությունը, Միացյալ Նահանգները ֆինանսավորում և զինում էր հակախորհրդային ապստամբներին՝ մոջահեդներին: 1981 թվականին Ռեյգանի վարչակազմը լիազորեց Կենտրոնական հետախուզական վարչությանը (ԿՀՎ (CIA)) վերապատրաստել և զինել մոջահեդներին՝ ապստամբությունն ուժեղացնելու համար: Հարուստ երիտասարդ սաուդյցի Ուսամա բեն Լադենը նույնպես ֆինանսավորում էր մոջահեդներին և կռվում էր նրանց կողմից: Եվ նրանք սկսեցին մեծ կորուստներ պատճառել խորհրդային զորքերին: Աֆղանստանում Խորհրդային Միության գործողությունները ձախողվեցին և պատերազմական ծախսերը, զուգորդված ներքին աճող անկայունության հետ, ստիպեցին խորհրդային իշխանություններին 1989 թվականին զորքերը դուրս բերել Աֆղանստանից: Ուսամա բեն Լադենը «Ալ-Քաիդան» տեղափոխեց Աֆղանստան այն բանից հետո, երբ երկիրը 1996 թվականին հայտնվեց թալիբների իշխանության ներքո: Բիլ Բլինթոնի օրոք, ի պատասխան Աֆրիկայում ամերիկյան դեսպանատների վրա «Ալ-Քաիդայի» հարձակումների, Միացյալ Նահանգները թևավոր հրթիռներ արձակեց Աֆղանստա-

նում «Ալ-Քաիդայի» ճամբարների ուղղությամբ:

Սեպտեմբերի 11-ից հետո, ունենալով ռազմական ուժի կիրառման լայն լիազորություն, Բուշի վարչակազմը պատրաստվեց «Ալ-Քաիդայի» և «Թալիբանի» դեմ ռազմական գործողությունների: 2001 թ. հոկտեմբերին մեկնարկեց «Հարատև ազատություն» գործողությունը (Operation Enduring Freedom)՝ Աֆղանական պատերազմը, որը պետք է դառնար Ամերիկայի պատմության ամենաերկարատև պատերազմը: Օդային և հրթիռային հարվածներ հասցվեցին բազմաթիվ թիրախների ողջ Աֆղանստանում: ԱՄՆ հատուկ նշանակության ուժերը ներխուժեցին Աֆղանստան՝ հակաթալիբանյան Հյուսիսային դաշինքի ուժերի հետ միասին հաջորդաբար գրավելով բոլոր խոշոր քաղաքները: Նոյեմբերի 13-ին ընկավ մայրաքաղաք Քաբուլը: Բեն Լադենը և «Ալ-Քաիդայի» ուժերը նահանջեցին դեպի Արևելյան Աֆղանստանում գտնվող Պակիստանի սահմանի երկայնքով խորդուբորդ լեռնային շրջանները: Աֆղանստանի ամերիկյան նվաճումը շարունակվեց:

Մինչ ամերիկյան զորքերը շարունակում էին պայքարը Աֆղանստանում թալիբների ապստամբությունը զսպելու համար, Բուշի վարչակազմն իր հայացքն ուղղեց դեպի Իրաք: 1991 թվականին՝ Պարսից ծոցի պատերազմի ավարտից հետո, ԱՄՆ-ն Իրաքի նկատմամբ սահմանել էր տնտեսական պատժամիջոցներ, սպառազինության ստուգումներ և ոչ թռիչքային գոտիներ: Մինչև 1991 թվականի կեսերը ամերիկյան ռազմական ինքնաթիռները կանոնավոր պարեկություն էին անում Իրաքի երկնքում և պարբերաբար հայտնվում էին իրաքյան զենիթահրթիռային մարտկոցների կրակի տակ: Իրաքի երկնքում երկու ոչ թռիչքային գոտիների պահպանման ընդհանուր ծախսերը Միացյալ Նահանգների համար կազմում էին տարեկան մոտավորապես 1 միլիարդ դոլար: Տարածաշրջանում հարակից ռազմական բնույթի գործունեությունը տարեկան ծախսին ավելացնում էր ևս 500 միլիոն դոլար: Մինչդեռ Իրաքի տարածքում սպառազինությունների վերահսկողության գործունեություն էին իրականացնում ՄԱԿ-ի տեսուչները: Իրաքը կասեցրել էր զանգվածային ոչնչացման զենքերի իր ծրագիրը:

1998 թվականին Սադամ Հուսեյնի և ՄԱԿ-ի միջև սպառազինությունների ստուգումների շուրջ ծագած վեճը դրդեց նախագահ Բիլ Բլինթոնին պատժիչ հարվածներ հասցնել և թուլացնել Իրաքի քիմիական զենքի ծրագրին առնչվող թիրախները: 1998 թվականի դեկտեմբերի 16-ին սկսվեցին հարձակումները. ԱՄՆ նավատորմի ռազմանավերը և ռազմաօդային ուժերի Բ-52 (B-52) ուժակոծիչները ավելի քան 200 թևավոր հրթիռներ

արձակվեցին Իրաքի ուղղությամբ՝ թիրախավորելով ենթադրյալ քիմիական զենքի պահեստարանները, հրթիռային մարտկոցները և հրամանատարական կենտրոնները: Օդային հարվածները շարունակվեցին ևս 3 օր. արձակվեցին ընդհանուր առմամբ 415 թևավոր հրթիռ և 600 ռումբ 97 իրաքյան թիրախների դեմ: Իրաքի վրա արձակված ռումբերի քանակը գրեթե կրկնակի ավելի էր 1991 թ. պատերազմի համեմատ:

Ողջ 1990-ականներին և 2000 թվականի սկզբին Միացյալ Նահանգների և Իրաքի միջև հակասությունները շարունակվում էին, երբ Բուշի վարչակազմը սկսեց հանդես գալ «ռեժիմի փոփոխության» (“regime change”) կոչոտ հռետորաբանությամբ: Բուշի վարչակազմը հրապարակայնորեն դատապարտում էր Սադամ Հուսեյնի ռեժիմը և զանգվածային ոչնչացման զենքի ենթադրյալ ծրագրերը: Խեղաթյուրելով իրականությունը և Սադամ Հուսեյնին կապելով միջազգային ահաբեկիչների հետ՝ ամերիկացիների մեծամասնությունը Հուսեյնի մեղքը տեսնում էր նաև սեպտեմբերի 11-ի հարձակումների մեջ: Պատերազմի նախապատրաստությունը ամբողջ թափով ընթանում էր: Բողոքի ցույցեր բռնկվեցին ողջ երկրում և ամբողջ աշխարհում, սակայն ամերիկացիների մեծ մասը պաշտպանեց Իրաքի դեմ ռազմական գործողությունները: 2002 թվականի հոկտեմբերի 16-ին Կոնգրեսն ընդունեց «Իրաքի դեմ ռազմական ուժի կիրառման լիազորություն» (Authorization for Use of Military Force Against Iraq) բանաձևը, որը նախագահ Բուշին իրավունք տվեց պատերազմ սկսել Իրաքում: 2002 թվականի վերջին Իրաքը սկսեց համագործակցել ՄԱԿ-ի սպառազինության տեսուչների հետ, սակայն Բուշի վարչակազմը շարունակեց պատերազմի նախապատրաստությունը: 2003 թ. փետրվարի 6-ին պետքարտուղար Քոլին Փաուելը, ով հանրաճանաչ էր դարձել 1991 թ. Պարսից ծոցի պատերազմի ժամանակ որպես Միացյալ շտաբի պետերի խորհրդի նախագահ (Chairman of the Joint Chiefs of Staff), ՄԱԿ-ին ներկայացրեց իրաքյան զանգվածային ոչնչացման զենքի ծրագրի մասին մեղադրանքները: Բողոքի ցույցերը շարունակվեցին:

2003 թ. մարտի 20-ին ամերիկյան զինուժը սկսեց Բաղդադի ոմբակոծությունը: Մի քանի հարյուրհազարանոց զորքը ներխուժեց Իրաք, և Հուսեյնի ռեժիմը արագ փլուզվեց: Ապրիլի 9-ին Բաղդադն ընկավ: 2003 թ. մայիսի 1-ին, ամերիկյան «Աբրահամ Լինքոլն» (USS Abraham Lincoln) ատոմային ավիակիր նավի վրա՝ «Առաքելությունն ավարտված է» (Mission Accomplished) գրությամբ պաստառի ներքո, նախագահ Ջորջ Բուշը հայտարարեց, որ «Իրաքում հիմնական մարտական գործողություններն ավարտվել են»: Իրաքում զանգվածային ոչնչացման զենքի առկայու-

թյան ապացույցներ այդպես էլ երբևէ չհայտնաբերվեցին: Իսկ մարտական գործողություններն իրականում չէին ավարտվել: Սկսվել էր Իրաքի ապստամբությունը, և Միացյալ Նահանգները հաջորդ տասը տարիներին պայքարելու էր այն զսպելու համար: 2003 թվականի դեկտեմբերի 13-ին հետախուզական ծառայությունների ջանքերով հայտնաբերվեց Սադամ Հուսեյնը՝ իր հայրենի քաղաքի մոտ գտնվող ստորգետնյա ապաստարանում: Իրաքի նոր կառավարությունը նրան մեղավոր ճանաչեց մարդկության դեմ հանցագործությունների մեջ, և նա կախաղան բարձրացվեց 2006 թվականի դեկտեմբերի 30-ին:

Ահաբեկչության դեմ պատերազմը (The War on Terror) 2004 թվականի նախագահական ընտրապայքարի առանցքային դրվագն էր: Գործող նախագահ Բուշին մարտահրավեր նետեց Դեմոկրատական կուսակցության թեկնածու Մասաչուսեթսից սենատոր Ջոն Ֆ. Քերին, ով Վիետնամի պատերազմի հերոս էր և հասարակական գիտակցության մեջ մտավ իր հակապատերազմական հայացքներով: Քերին քննադատում էր Բուշին Իրաքի ապստամբությունը զսպելու անհաջողության, զանգվածային ոչնչացման զենք և Ուսամա բեն Լադենին գտնելու շարունակական անկարողության, ինչպես նաև լուսանկարչական ապացույցներով բացահայտված՝ Բադդադի մոտ գտնվող Աբու Գրեյբ բանտում ամերիկացի զինվորների կողմից բանտարկյալներին բռնության և կտտանքների ենթարկելու համար: Ավելին, Իրաքում և Աֆղանստանում գերեվարված բազմաթիվ թշնամական մարտիկներ անժամկետ «կալանված» էին Կուբայի Գուանտանամո ռազմակայանի բանտում: Գուանտանամոյի բանտը հայտնի դարձավ իր դաժան պայմաններով, անժամկետ կալանավորումներով և բանտարկյալների խոշտանգումներով: Բուշը պաշտպանում էր ահաբեկչության դեմ պատերազմը, և նրա կողմնակիցները քննադատում էին ընդդիմախոսներին՝ «զորքերին չաջակցելու» համար: Սենատոր Քերին քվեարկել էր պատերազմի օգտին, և այժմ նա ստիպված էր քննադատել իր լիազորած գործողությունները: Բուշը հստակ հաղթանակ տարավ ընտրություններում:

Բուշի պաշտոնավարման երկրորդ ժամկետում Իրաքում և Աֆղանստանում պատերազմական դրության շարունակական վատթարացում նկատվեց, սակայն նրա նախագահությանն ավելի մեծ հարված հասցրին Մեքսիկական ծոցի ափին պատուհասած «Կատրինա» ավերիչ փոթորկի ողբերգական հետևանքները: Նոր Օռլեանը տուժել էր փոթորկի ուղիղ հարվածից, և քաղաքի մեծ մասը հեղեղվել էր: Հազարավոր փախստականներ հավաքվել էին քաղաքի Սուպերդոմ (Superdome) մարզադաշտ-

տում, որտեղ մատակարարումները, բժշկական օգնության և տարհանման գործողությունները դանդաղում էին: Բնական աղետի և շոգի պայմաններում բազմաթիվ մարդիկ մահացան կամ անհետ կորան: Հատկապես լքված էին մնացել աֆրոամերիկացիները: «Կատրինան» դարձավ խաթարված վարչական համակարգի խորհրդանիշը, որը Բուշը համալրել էր իր ոչ կոմպետենտ կողմնակիցներով. համակարգը շարունակում էր անտեսել Նոր Օռլեանի տեղահանված աղքատ և սևամորթ բնակիչներին:

Միևնույն ժամանակ, ներգաղթը դարձել էր ավելի խոշոր քաղաքական խնդիր: Քլինթոնի վարչակազմը նախաձեռնել էր մի շարք հակամիգրացիոն քաղաքականությունների իրականացումը, սակայն անօրինական ներգաղթը շարունակվում էր: Բուշն օգտագործեց խնդիրը վերընտրվելու համար, իսկ հանրապետականներն այն օգտագործեցին 2006 թվականի միջնակյալ ընտրություններում՝ երկկուսակցական աջակցությամբ ընդունելով օրենսդրություն, որը նախատեսում էր սահմանային «պարսպի» կառուցումը: Բազմաթիվ ներգաղթյալներ և նրանց կողմնակիցները պայքարում էին դրա դեմ:

Իրադրությունը Աֆղանստանում ու Իրաքում շարունակում էր վատթարանալ: 2006 թվականին թալիբները նորից աշխուժացան, քանզի Աֆղանստանի խիստ կոռումպացված կառավարությունն իր քաղաքացիների համար սոցիալական ծառայություններ կամ անվտանգություն ապահովելու անկարողություն էր ցուցաբերում: Ամերիկյան զորքերի դեմ ապստամբության պայմաններում Իրաքը հայտնվել էր քաոսի մեջ, երբ բազմաթիվ ահաբեկչական խմբեր, այդ թվում՝ Իրաքում Աբու Մուսաբ ալ-Զարկավիի գլխավորած «Ալ-Քաիդան», ռմբակոծում էին խաղաղ բնակիչներին և հրապարակում գլխատումների տեսագրություններ: 2007 թ. գեներալ Դեյվիդ Պետրետուսի հրամանատարությամբ լրացուցիչ 27,000 ամերիկացի զինծառայողներ տեղակայվեցին Իրաքում: Ամերիկյան հրամանատարությունը կիրառեց ավելի բարդ հակաապստամբական ռազմավարություններ և, զուգակցված Իրաքի սուննիների ջանքերի հետ, խաղաղեցրեց Իրաքի շատ քաղաքներ և պայմաններ ապահովեց ամերիկյան ուժերի դուրսբերման համար: 2008 թվականի դեկտեմբերի 4-ին Իրաքի կառավարությունը հաստատեց ԱՄՆ-Իրաք ուժերի կարգավիճակի համաձայնագիրը (U.S.-Iraq Status of Forces Agreement), և մինչև 2009 թվականի հունիսի 30-ը ԱՄՆ մարտական ուժերը դուրս բերվեցին իրաքյան քաղաքներից: ԱՄՆ վերջին մարտական ուժերը լքեցին Իրաքը 2011 թվականի դեկտեմբերի 18-ին: Բռնությունն ու անկայունությունը շարունակում էին ցնցել Իրաքը:

Համաշխարհային տնտեսական ճգնաժամը

Համաշխարհային տնտեսական ճգնաժամը (2007-2010 թթ.) կամ Մեծ անկումը (The Great Recession) հաջորդեց այն բանին, երբ սպեկուլյատիվ փուչիկի պայթյունով սկսվեց ամերիկյան տնտեսական ճգնաժամը: 1990-ական թվականների ողջ ընթացքում և 2000-ական թվականների սկզբին բնակարանների գները շարունակեցին բարձրանալ, և ֆինանսական ծառայություններ մատուցող ընկերությունները ձգտում էին գումարներ ներդնել այս թվացյալ անվտանգ, բայց եկամտաբեր ոլորտում: *Դոթ-քոմ*-ի ֆինանսական պղպջակի պայթելուց հետո ներդրողները փնտրում էին ապահով ներդրումներ՝ հիմնված հստակ արժեքի վրա, այլ ոչ թե նորաձև տեխնոլոգիական շահարկումների (սպեկուլյացիայի) վրա: Ինչը կարող էր առավել ապահով լինել, քան անշարժ գույքը: Սակայն հիփոթեքային վարկային ընկերությունները սկսեցին ավելի ու ավելի ռիսկային վարկեր ձևակերպել, այնուհետև կապակցել դրանք միմյանց և վաճառել դրանք նորից ու նորից, երբեմն այնքան արագ, որ դժվար էր հստակ որոշել, թե ում ինչ է պատկանում:

Ֆինանսական ապակարգավորման տասնամյակների ընթացքում ետ էին մղվել 1930-ականների Մեծ ճգնաժամի ժամանակաշրջանի սահմանափակումներն ու կարգավորումները, ինչը կրկին հնարավորություն էր տվել ռիսկային գործարարությանը գերիշխելու ամերիկյան ֆինանսների աշխարհում: Հիփոթեքային վարկերը այնքան մեծ ծավալներով էին կիրառվել, որ երբ ամերիկացի բնակարանատերերը կամ առանձնատների սեփականատերերը սկսեցին չվճարել իրենց վարկերը, ամբողջ համակարգը փլուզվեց: 2008 թվականին ֆինանսական ծառայություններ մատուցող խոշոր ընկերությունները, ինչպիսիք էին «*Բեար Սթեարնս*» (Bear Stearns) և «*Լեման Բրադերս*» (Lehman Brothers) ներդրումային բանկերը, փլուզվեցին գրեթե մեկ օրում: Ճգնաժամի տարածումը կանխելու համար դաշնային կառավարությունը միլիարդավոր դոլարներ ներարկեց ոլորտի մեջ՝ աջակցելով խարխլված բանկերին: Բանկիրներին այս հսկայական միջոցների տրամադրումը դժգոհության ցնցող ալիքներ բարձրացրեց ողջ երկրում: Աջակողմյան «Թեյախմության» (Tea Party) շարժման պահպանողական անդամները դատապարտում էին Օբամայի վարչակազմի քրոնիզմը (cronyism)՝ կողմնակալ բարեհաճությունը բանկիրներին. Օբամայի վարչակազմը լի էր Ուոլ Սթրիթի նախկին ղեկավարներով: Ձախակողմյան «Գրավիր Ուոլ Սթրիթը» (Occupy Wall Street) շարժումը՝ բաղկացած հիմնականում ծախսական երիտասարդ նյույորքցիներից, քննադա-

տում էր գերազանցապես հոգուտ մեծահարուստ «մեկ տոկոսի» շահերին միտված ամերիկյան տնտեսական համակարգը:

Ֆինանսատնտեսական մեծ ճգնաժամը միայն մեծացրեց արդեն իսկ աճող եկամուտների և հարստության անհավասարությունը: ԱՄՆ-ի խոշորագույն բանկի՝ «Ջեյ Փի Մորգան Չեյսի» (JPMorgan Chase) գլխավոր ներդրումային տնօրենի խոսքերով՝ «շահույթի մարժաները հասել էին աննախադեպ մակարդակների», և որ այդ բարելավման մեծ մասն աշխատավարձերի և նպաստների կրճատումների հաշվին էր եղել: Կոնգրեսի բյուջետային գրասենյակի (Congressional Budget Office) հետազոտությունը ցույց էր տալիս, որ 1970-ականների վերջից ամենահարուստ 1 տոկոսի հարկումից հետո եկամուտները աճել էին ավելի քան 300 տոկոսով, այն դեպքում, երբ «միջին» ամերիկացու հարկումից հետո եկամուտներն աճել էին ընդամենը 35 տոկոսով: Այսպիսով, տնտեսական միտումները անհամաչափ և առարկայորեն շահավետ էին ամենահարուստ ամերիկացիների համար:

Այնուամենայնիվ, չնայած քաղաքական հռետորաբանությանը, ամերիկյան հասարակության հիասթափությունը չվերաճեց սոցիալական խոշոր ցնցումների և անհնազանդությունների. դա եղել էր նախորդ դարերում: Թուլացած աշխատանքային շարժումը և ուժեղ պահպանողական խմբավորումը շարունակում էին խոչընդոտել տնտեսական անհավասարությունները շրջելու կամ նույնիսկ մեղմելու փորձերը: «Գրավիր Ուոլ Սթրիթը» շարժումը կարողացավ խթանել բավականին լուրջ հանրային քննարկումներ սոցիալ-տնտեսական անհավասարության խնդիրների շուրջ, սակայն նրա ազդեցությունը չնչին էր շատ ավելի ազդեցիկ և հարուստ «Թեյախմություն» շարժման համեմատությամբ: Եթե ամերիկյան բանկերը արագ վերականգնվեցին՝ ետ բերելով իրենց կայուն շահույթները, և ամերիկյան արժեթղթերի շուկան նորից վերելք ապրեց, ապա ամերիկացի աշխատավորները շարունակում էին ետ մնալ: Աշխատատեղերի աճը դանդաղ էր, և գործազրկության մակարդակը տարիներ շարունակ համառորեն մնալու էր բարձր, իսկ աշխատավարձերը՝ սառած կամ ցածր: Երիտասարդ ամերիկացիների շրջանում գործազրկության մակարդակը տարիներ շարունակ տատանվում էր ազգային միջինից գրեթե կրկնակի ցածր մակարդակում:

Օբամայի նախագահությունը

Մինչև 2008 թվականի նախագահական ընտրությունները, երբ Իրաքը դեռ քաոսի մեջ էր, դեմոկրատներն արդեն պատրաստ էին որդեգրել հակապատերազմական դիրքորոշում և փնտրում էին թեկնածուի, որը հետևողականորեն դեմ էր Իրաքում ռազմական գործողություններին: Երբ Կոնգրեսը քննարկում էր պատերազմական գործողությունները, Բարաք Օբաման դեռևս Իլինոյս նահանգի սենատի անդամ էր և հրապարակայնորեն դատապարտում էր պատերազմը՝ կանխատեսելով դրա հետևանքները: 2004 թվականին ԱՄՆ Սենատի համար իր ընտրարշավի ընթացքում Օբաման քննադատաբար էր վերաբերվում Իրաք ներխուժմանը: Սենատոր Օբաման սկսեց նախագահի պաշտոնում առաջադրվելու իր պայքարը Վաշինգտոն ժամանելուց գրեթե անմիջապես հետո:

Նախկինում իրավագիտության պրոֆեսոր և համայնքային գործիչ Օբաման դարձավ առաջին աֆրոամերիկացի նախագահի թեկնածուն, ով առաջադրվել էր հիմնական քաղաքական կուսակցության կողմից: Ընտրությունների ժամանակ դեմոկրատ Օբաման շահեց հակապատերազմական ընտրազանգվածի աջակցությունը: Երբ 2007-2008 թվականների ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում փլուզվեց առանց այն էլ փխրուն տնտեսությունը, Բուշի վարչակազմի քաղաքականությունն ավելի լայնորեն էր քննադատվում: Նախագահական մրցապայքարում Օբամայի հակառակորդը՝ հանրապետական սենատոր Ջոն Մաքքեյնը, կապված էր Բուշի քաղաքական գծի հետ, ինչը բացասաբար ազդեց նրա վարկանիշի վրա: Օբաման համոզիչ հաղթանակ տարավ և դարձավ երկրի առաջին աֆրոամերիկացի նախագահը:

Նախագահ Օբամայի պաշտոնավարման առաջին ժամկետը նշանավորվեց ներքին գործերով, հատկապես տնտեսական ճգնաժամի դեմ պայքարի և առողջապահական ազգային օրենսդրության ընդունման ջանքերով: Այս ընթացքում տնտեսությունը շարունակում էր վատթարանալ: Նա շարունակեց իր նախորդի օրոք սկսված բանկերի փրկության ծրագիրը և գործարկեց սահմանափակ տնտեսական խթանման ծրագիր՝ ապահովելու պետական ծախսերի միջոցով տնտեսության աշխուժացումը:

Չնայած Օբամայի համոզիչ ընտրական հաղթանակին՝ ազգային քաղաքականությունը պառակտվեց, և Օբամայի վարչակազմի դեմ արագորեն վեր խոյացավ պահպանողական հանրապետականների ընդդիմադիր պատնեշը: «Թեյախմություն»-ը դարձավ ընդհանրական եզրույթ արմատական պահպանողականների և քաղաքականապես հիասթափված

ամերիկացի ընտրողների տարրալույծ (սփռված) շարժման համար: Թե-
յախմության շարժման ակտիվիստները՝ հիմնականում սպիտակամորթ,
տարեց և միջինից բարձր կենսամակարդակով ամերիկացիները, որոնք
ունենին հարուստ աջակիցներ և կրում էին հիմնադիր հայրերի պատկե-
րագրությամբ հագուստներ, արտահայտում էին իրենց խորը կասկած-
ները դաշնային կառավարության նկատմամբ: 2009 թ. ամերիկյան հան-
րային կյանքում գերիշխում էին այս շարժման բողոքի միջոցառումները,
որի համառ ջատագովները Հանրապետական կուսակցությանն ուղղոր-
դեցին ավելի աջ՝ հաջողություններ արձանագրելով նախնական ընտրու-
թյուններում ողջ երկրում:

Օբամայի ամենահիմնական օրենսդրական ձեռքբերումը ազգային
առողջապահական օրենքն էր՝ Հիվանդների պաշտպանության և մատչե-
լի խնամքի օրենքը կամ «Օբամաքեյրը» (Patient Protection and Affordable
Care Act / Obamacare): Թեոդոր Ռուզվելտի ժամանակներից ի վեր նա-
խագահները փորձում էին ընդունել ազգային առողջապահական բարե-
փոխումների փաթեթ, սակայն այդ ջանքերն ապարդյուն էին: Օբամայի
ծրագիրը՝ «Օբամաքեյրը», հրաժարվեց ազգային առողջապահական
համակարգի ազատական մոդելներից՝ փոխարենը հաստատելով սուբ-
սիդավորվող մասնավոր խնամքի պահպանողական մոդելը. նմանատիպ
ծրագրեր էին առաջադրել հանրապետականներ Ռիչարդ Նիքսոնը, Նյուտ
Գինզբրիչը և 2012 թ. նախագահական ընտրություններում Օբամայի մրցա-
կից Միթ Ռոմնին: Չնայած պահպանողականների հուժկու բողոքներին՝
Օբամայի առողջապահական բարեփոխումը ընդունվեց Կոնգրեսում:
«Օբամաքեյրը» վերացնում էր խնամքի մերժման պատճառ հանդիսացող
նախկին պայմանները, չեղյալ հայտարարում անպետք ծրագրերը, ինչ-
պես նաև նախատեսում էր նահանգային մակարդակում կառավարվող
առողջապահական փոխանակումներ և միջոցներ էր առաջարկում նա-
հանգներին՝ սուբսիդավորելու բժշկական օգնության (*Մեդիքեյդ*՝ Medicaid)
ընդլայնումը: Ըստ այդմ՝ օրենսդրությունը բոլոր ամերիկացիներից պա-
հանջում էր ներկայացնել կառավարության կողմից հաստատված չափա-
նիշներին՝ համապատասխանող առողջապահական ապահովագրության
փաթեթի ապացույց. նրանք, ովքեր չէին գնել փաթեթը, կվճարեին տու-
գանք, իսկ նրանք, ովքեր ի վիճակի չէին ապահովագրվել, կարող էին
ստանալ դաշնային սուբսիդիաներ: Այնուամենայնիվ, չապահովագրված
ամերիկացիների թիվը համառորեն շարունակում էր բարձր մնալ, և պահ-
պանողականները հաջորդ տասնամյակի ընթացքում շարունակում էին
քննադատել օրենսդրությունը:

2009 թ. նախագահ Բարաք Օբաման հավելյալ 17,000-ոց զորք տեղակայեց Աֆղանստանում՝ իբրև հակաապստամբական գործողության մաս, որի նպատակն էր «խափանել, քանդել և հաղթել» «Ալ-Քաիդային» և «Թալիբանին»: ԱՄՆ հատուկ նշանակության ուժերը և ԿՀՎ անօդաչու թռչող սարքերը թիրախավորում էին «Ալ-Քաիդայի» և «Թալիբանի» առաջնորդներին: 2011 թ. մայիսին ԱՄՆ նավատորմի հատուկ նշանակության ուժերը (ԱՄՆ նավատորմի ծովային, օդային և ցամաքային ուժերը՝ U.S. Navy Sea, Air and Land Forces (SEALs)) հատուկ ռազմական գործողություն իրականացրին Պակիստանի խորքում, որի արդյունքում սպանվեց Ուսամա բեն Լադենը: 2011 թ. Միացյալ Նահանգները և ՆԱՏՕ-ն սկսեցին զորքերի փուլային դուրսբերում Աֆղանստանից՝ նպատակ ունենալով դուրս բերել բոլոր մարտական ուժերը մինչև 2014 թվականը: 2013 թ. դեկտեմբերի դրությամբ Աֆղանստանում պատերազմը խլել էր 3397 ամերիկացի զինծառայողի կյանք: Չնայած ռազմական թուլությանը՝ «Թալիբանը» մնում էր քաղաքականապես ազդեցիկ Աֆղանստանի հարավում և արևելքում: «Ալ-Քաիդան» շարունակում էր գործել Պակիստանում, և իր հենակետերն ուներ նաև Եմենում և Աֆրիկայի եղջյուրի տարածաշրջանում:

2012 թվականին Բարաք Օբաման սկսեց իր պաշտոնավարման երկրորդ ժամկետը՝ հաղթելով Մասաչուսեթսի նախկին նահանգապետ, հանրապետական Միթ Ռոմնիին: Այնուամենայնիվ, Կոնգրեսը վերահսկելու դեմոկրատների ու Օբամայի անկարողությունը և «Թեյախնություն» շարժման հանրապետականների վերելքը խոչընդոտեցին բովանդակալից օրենսդրական նախաձեռնությունների ընդունումը: Օբամայի արգելափակված վարչակազմը, ըստ էության, արտահայտում էր ամերիկյան հասարակական կյանքի լճացումը՝ քաղաքականության, տնտեսության և ռասայական հարաբերությունների մեջ:

2008 թ. Մեծ անկումից հետո շարունակվում էր տնտեսության սահմանափակ վերականգնումը: Օբամայի վարչակազմը քիչ ջանքեր էր գործադրում հաղթահարելու տնտեսական ճգնաժամը և, բախվելով կոնգրեսական անզիջողականությանը, քիչ հաջողություններ արձանագրեց այս ուղղությամբ: Եթե կորպորատիվ շահույթն աճեց, իսկ արժեթղթերի շուկաները վերելք ապրեցին, ապա Մեծ անկումից հետո աշխատավարձերը լճացան, իսկ զբաղվածության մակարդակն ընկավ: Մինչև 2016 թվականը միջին վիճակագրական ամերիկացի աշխատավորը գրեթե քառասուն տարվա ընթացքում աշխատավարձի բարձրացում չէր ունեցել: 1973 թ. հունվարի տվյալներով՝ միջին ամերիկացի աշխատավորը ժամում վաս-

տակում էր 4,03 դոլար: Համապատասխանեցնելով գնաճին՝ այդ աշխատավարձը ժամում մոտ երկու դոլարով ավելին էր, քան միջին ամերիկացին վաստակում էր 2014 թվականին: Տնտեսության մեջ եկամուտների մեծ մասը հիմնականում բաժին էր ընկնում հասարակության վերին հարուստ խավերին: Ավելին, 2009-2013 թվականներին Միացյալ Նահանգներում բոլոր նոր եկամուտների 85 տոկոսը բաժին էր ընկում բնակչության վերին 1 տոկոսին:

Եթե փողն այլևս չէր հոսում դեպի ամերիկացի աշխատավորները, ապա այն հոսում էր դեպի ամերիկյան քաղաքականությունը: 2000 թվականին Ջորջ Բուշն իր քարոզարշավի համար հավաքել էր ռեկորդային 172 միլիոն դոլար: Իսկ 2008 թվականին Բարաք Օբաման դարձավ նախագահի առաջին թեկնածուն, ով հրաժարվեց պետական միջոցներից՝ վերացնելով իր ընդհանուր դրամահավաքի համար նախատեսված սահմանաչափերը, և հավաքեց մոտ երեք քառորդ միլիարդ դոլար իր քարոզարշավի համար: Մինչդեռ Ներկայացուցիչների պալատի անդամի միջին քարոզարշավն արժեր մոտ 1,6 միլիոն դոլար, իսկ սենատորինը՝ ավելի քան 10 միլիոն դոլար: Միևնույն ժամանակ, Գերագույն դատարանը վերացրեց քաղաքական ծախսերի խոչընդոտները: 2002 թ. հանրապետական սենատոր Ջոն Մաքքեյնի և դեմոկրատ սենատոր Ռաս Ֆեյնգոլդի նախաձեռնությամբ ընդունվեց Երկկուսակցական քարոզարշավի բարեփոխման օրենքը (Bipartisan Campaign Reform Act)՝ ամրապնդելով քարոզարշավի ֆինանսավորման մասին օրենքները, որոնք ընդունվել էին 1970-ականներին Ութերգեյթի սկանդալից հետո: Սակայն քաղաքական կազմակերպությունները, հատկապես քաղաքական գործողությունների կոմիտեները (political action committees (PACs)), օգտվեցին օրենսդրական բացերից՝ մեծ գումարներ հայթայթելու համար: 2010 թվականին ԱՄՆ Գերագույն դատարանը «Միացյալ քաղաքացիներն ընդդեմ Դաշնային ընտրական հանձնաժողովի» (Citizens United v. Federal Election Commission (FEC)) գործով վճռեց, որ կորպորացիաների, արհմիությունների և շահույթ չհետապնդող հասարակական կազմակերպությունների քաղաքական ծախսերի վրա որևէ սահմանափակում չի կարող դրվել: Փողի ազդեցությունը քաղաքականության մեջ միայն խորացրեց կուսակցական փակուղին՝ արգելափակելով երկկուսակցական համաձայնությունը որոշակի քաղաքական հարցերի շուրջ:

Թրամփի նախագահությունը

2016 թվականին ամերիկացի ընտրողները հոգնել էին փոփոխությունների սպասումից: Այդ տարվա նախագահական ընտրապայքարում հանրապետականները մերժեցին իրենց քաղաքական հաստատութենական կառույցը և առաջադրեցին անշարժ գույքի ոլորտի գործարար և հանրահայտ միլիարդատեր Դոնալդ Թրամփին, ով դատապարտելով քաղաքական բարեգալության բռնակալությունը և իբրև նպատակ հռչակելով «Ամերիկան նորից Մեծ դարձնելը» (Make America Great Again)՝ խոստացավ պատ կառուցել մեքսիկացի ներգաղթյալների հոսքը կանգնեցնելու համար և արգելել մահմեդականների ներգաղթը:

Դեմոկրատները նախ կենտրոնացան Վերմոնտից սենատոր Բեռնի Սանդերսի թեկնածության շուրջ, ով ինքն իրեն բնորոշում էր իբրև սոցիալ-դեմոկրատ, սակայն ի վերջո առաջադրեցին Հիլարի Բլինթոնի թեկնածությունը, ով 1990-ականներին ԱՄՆ առաջին տիկինն էր, այնուհետև 8 տարի եղել էր ԱՄՆ սենատոր և 4 տարի Օբամայի վարչակազմում զբաղեցրել էր պետքարտուղարի պաշտոնը: Թրամփն ու Բլինթոնը չէին վայելում լայն ժողովրդականություն: Ամերիկացիների գերակշիռ մասը չէր համակրում թեկնածուներից որևէ մեկին, և ընտրությունների նախաշեմին երկու կուսակցություններում էլ մեծամասամբ ընդգծում էին, որ իրենք ավելի շատ ստիպված են քվեարկել իրենց մրցակից թեկնածուի դեմ, քան իրենց թեկնածուի օգտին: Ընտրապայքարն ընթանում էր լարված և բռնության կոչերով լի մթնոլորտում, իսկ ընտրողների շրջանում հիասթափությունները միայն լճացման ավելի մեծ զգացում առաջացրին, ինչը խախտեց ավանդական քաղաքական հավատարմությունները: Ի վերջո, չնայած մոտ 3 միլիոն ավելի շատ համաժողովրդական ձայներ հավաքելուն, դեմոկրատ Բլինթոնը չկարողացավ շահել Միջին Արևմուտքի հիմնական նահանգները, որտեղ հիասթափված սպիտակամորթ աշխատավոր դասակարգի ընտրողները տասնամյակների ընդմիջումից հետո աջակցեցին Հանրապետական կուսակցության թեկնածուին: Նախագահի պաշտոնում ընտրվեց Դոնալդ Թրամփը:

Քաղաքական տարածայնություններն ավելի խորացան ընտրություններից հետո: Եկամուտով, մշակույթով, ռասայով, աշխարհագրությամբ և գաղափարաբանությամբ արդեն իսկ խորապես պառակտված ազգը շարունակում էր բաժանվել: Թրամփի նախագահությունը լի էր աղմկահարույց իրադարձություններով, ինչպիսին էր Ռոբերտ Մյուլլերի հետաքննությունը ընտրություններին ռուսական միջամտության անապացույց մե-

ղադրանքների և նախընտրական շտաբի պաշտոնյաների ենթադրյալ դավաճանության վերաբերյալ: Միաժամանակ, նոր քաղաքականությունները բորբոքեցին մշակութային տարանջատումները:

Օբամայի վարչակազմի օրոք սահմանային ձերբակալություններն ու արտաքսումները արդեն իսկ հասել են ռեկորդային մակարդակի, սակայն Թրամին ավելի հեռուն գնաց: Նա նախաձեռնեց սահմանի երկայնքով հսկայական պատի կառուցումը՝ Բուշի վարչակազմի օրոք կառուցված ցանկապատը լրացնելու համար: Նա կարգադրեց արտաքսել այսպես կոչված «երազողներին» (Dreamers)՝ ուսանողներին, ովքեր ծնվել էին այլուր, բայց մեծացել էին Միացյալ Նահանգներում: Ավելին, միգրացիոն ծառայության պաշտոնյաները սահմանին առանձնացնում էին փախստականի կարգավիճակի համար դիմող ծնողներին և երեխաներին: Թրամփի սահմանային քաղաքականությունը աշխուժացրեց նրա հակառակորդներին:

Սակայն մինչ բորբոքվում էին Ամերիկայի տևական մշակութային հակասությունները, 2017 թվականին նախագահ Թրամփը նախաձեռնեց նաև հարկերի կրճատման օրենսդրության ընդունումը, ինչը շարունակեց ամերիկյան հարստության վերաբաշխումը հոգուտ կորպորացիաների և հարուստ անհատների: Հարկերի կրճատումը պայթեցրեց դաշնային բյուջեի դեֆիցիտը և ավելի խորացրեց Ամերիկայի ընդլայնվող տնտեսական անհավասարությունը:

Երդմնակալության ուղերձում Դոնալդ Թրամփը խոստացավ վերջ տալ իր խոսքով «ամերիկյան նախճիրին» (“American carnage”)՝ ազգի ավերմանը. ըստ նրա՝ երկիրը կործանվում էր անօրինական ներգաղթյալների, հանցագործության և արտաքին տնտեսական մրցակցության պատճառով: Սակայն նրա նախագահության օրոք մշակութային և ռասայական բաժանումները, ներքին անկայունությունը և երկրի ապագայի վերաբերյալ աճող անհանգստությունները միայն խորացան: Թրամփը ներկայացնում էր հակալիբերալիզմ և խթանում էր աջակողմյան շարժումները: Նախագահ Թրամփը կոտրեց նախագահության շատ նորմեր՝ ցնցող հայտարարություններ տարածելով թվիթերյան (Twitter) իր անձնական օգտահաշվով: Ի տարբերություն նախորդ նախագահների՝ Դոնալդ Թրամփն իր նախագահության ընթացքում աչքի ընկավ ցնցող հայտարարությունների առատությամբ: Նախագահության վերջին տարիներին ամերիկացիների միայն մեկ երրորդն էր նրան վստահելի համարում:

2020 թվականի նոյեմբերի նախագահական ընտրություններում Դեյվիդ Բերկսթեյնը երկարամյա սենատոր և նախկին փոխնախագահ, դեմոկրատ Ջոզեֆ Բ. Բայդենը հաղթանակ տարավ Դոնալդ Թրամփի նկատմամբ՝

ընտրվելով նախագահի պաշտոնում: Բայդենի կողքին առաջադրվել էր Կալիֆորնիայից սենատոր Քամալա Հարիսը, որը պիտի դառնար երկրի առաջին կին փոխնախագահը: Բայդենը հաղթեց ԱՄՆ համաժողովրդական քվեարկությամբ (4 տոկոսի տարբերությամբ), ԱՄՆ ընտրիչների կոլեգիայում (74 ձայնի տարբերությամբ), սակայն Թրամփը հրաժարվեց ճանաչել ընտրությունների արդյունքները: Նա հայտարարեց, որ ընտրությունների արդյունքները գողացվել են, և որ ձայները կեղծվել են: Հայցերը և ընտրակեղծիքների վերաբերյալ մեղադրանքները հեշտությամբ հերքվեցին:

Սակայն ընտրություններից ամիսներ անց դեռևս բազմաթիվ հանրապետականներ ընտրությունները գողացված էին համարում: Հազարավոր աջակողմյան ցուցարարներ, որոնք տարված էին 2020 թվականի նոյեմբերի նախագահական ընտրությունների քննադատությամբ, 2021 թվականի հունվարի 6-ին հավաքվել էին Սպիտակ տան դիմաց՝ «գողությունը կանգնեցնելու» պահանջով: Միացյալ Նահանգների գործող նախագահը հորդորեց նրանց գնալ Կապիտոլիում և կանխել նոյեմբերյան քվեարկության վավերացումը: Ցուցարարները, զինված մետաղյա խոզովակներով, բեյսբոլի մահակներով, հոկեյի ձողերով և տրավմատիկ զենքերով, երթով շարժվեցին դեպի Կապիտոլիում և հարձակվեցին շենքը պատնեշող ոստիկանների վրա:

Ամբոխը գրոհեց ոստիկանական պատնեշները, ծեծի ենթարկեց նրանց և ներխուժեց ԱՄՆ Կապիտոլիումի շենք: Մոտ 150 ոստիկաններ ստացան տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ: Կապիտոլիումի ոստիկաններից մեկը սպանվեց: Կապիտոլիում ներխուժած ցուցարարներից մեկը Ներկայացուցիչների պալատի նիստերի դահլիճ ներխուժման փորձի ժամանակ սպանվեց Կապիտոլիումի ոստիկանի կրակից: Ներկայացուցիչների պալատը պահպանվեց, բայց խռովարարները կարողացան ներխուժել շենքի հակառակ կողմում գտնվող Սենատի պալատը: Օրենսդիրներն արդեն իսկ տարհանվել էին: Խռովարարները մի քանի ժամ գրավված պահեցին Կապիտոլիումը՝ մինչև երեկոյան Ազգային գվարդիան մաքրեց այն: Կոնգրեսն այդ երեկո մնաց ընտրությունների արդյունքները հաստատելու համար: Եվ այնուհանդերձ, չնայած այն ամենին, ինչ տեղի էր ունեցել այդ օրը, նախագահի պնդումները ընտրակեղծիքների վերաբերյալ պահպանում էին իրենց ազդեցությունը հանրապետական օրենսդիրների վրա: 11 հանրապետական սենատորներ և Ներկայացուցիչների պալատի 212 հանրապետականներից 150-ը առարկություններ ներկայացրեցին ընտրությունների արդյունքների հավաստագրման դեմ: Հաջորդ ամիս նրանք նաև հրաժարվեցին դատապարտել Դոնալդ

Թրամփին իմփիչմենթի երկրորդ գործի ընթացքում՝ «ապստամբություն հրահրելու համար» (“incitement of insurrection”):

Հունվարի 6-ի իրադարձությունները Ամերիկայի պատմության վերջին մի քանի տասնամյակների առաջընթացին զուգահեռ՝ խիստ կուսակցական բաժանման, ռասայական և էթնիկ լարվածության, բողոքի ցույցերի ու զանգվածային բռնությունների, անհավասար տնտեսական աճի և այլ անհավասարությունների ընդլայնման, ինչպես նաև արտաքին ռազմական միջամտությունների ժամանակաշրջանի, Միացյալ Նահանգների ներկայի և ապագայի վերաբերյալ համատարած մտահոգությունների գագաթնակետն էին:

ՔՈՎԻԴ-19-ի համավարակը

2019-2020 թթ. ձմռանը Չինաստանի Վուհան քաղաքում հայտնաբերվեց նոր շնչառական վիրուս: Դա կորոնավիրուսն (թագավարակ) էր, որն իր անվանումը ստացել էր մանրադիտակի տակ նրա ցցուն, թագի նմանվող տեսքից: Նախորդ տարիներին հայտնաբերվել և զսպվել էին այլ կորոնավիրուսներ, սակայն ՔՈՎԻԴ-19-ը (COVID-19) վերածվեց համավարակի: 2020 թ. հունվարին Միացյալ Նահանգներում հաստատվեց առաջին դեպքը: Համավարակը պարառեց ողջ աշխարհը:

Երկրները սկսեցին փակվել վարակի տարածումը զսպելու համար: Օդային հաղորդակցությունը կաթվածահար եղավ: Վիրուսը շատ վարակիչ էր և կարող էր տարածվել մինչև աստանիշների ի հայտ գալը: Վիրուսակիրներից շատերն ասիմպտոմատիկ էին, նրանք ընդհանրապես որևէ աստանիշ չունեին: Վիրուսը հատկապես դաժան հարված հասցրեց տարեցներին և տարբեր հիվանդություններ ունեցողներին: Այն հարվածում էր շնչուղիներին՝ խեղդամահ անելով հիվանդներին: Բժիշկները չգիտեին, թե ինչի դեմ էին պայքարում: Նրանք ձգտում էին ձեռք բերել թթվածին և շնչառական սարքեր: Մահերի թիվը հետզհետե աճում էր: Գարնանը վիրուսը հարվածեց Նյու Յորքին: Հիվանդանոցները լցվեցին: Ապրիլին ամեն օր հազարավոր հիվանդներ էին մահանում: Տասնյակ «շարժական դիահերձարաններ» ստեղծվեցին՝ դիակները պահելու համար: Բժշկական դիմակների պակասի պատճառով ամերիկացիները պատրաստում էին կտորե դիմակներ տնային պայմաններում: Շատ ամերիկացիներ հրաժարվում էին դիմակներ կրելուց: Վարակի բռնկումը չհաջողվեց զսպել, և երկիրն արգելափակվեց: Թռիչքները դադարեցվեցին, փակվեցին ռեստորանները, դպրոցներն ու համալսարանները: Երբ գրասենյակ-

ները փակվեցին, շատերն անցան տնից հեռավար աշխատանքի: Բայց մի զգալի մասի աշխատանքն էլ չէր կարող կազմակերպվել հեռավար ձևով: Մինչև ապրիլ տասը միլիոն ամերիկացի կորցրեց աշխատանքը:

Դիմակ կրելը ևս քաղաքականացվեց: Մայիսին 100,000 ամերիկացի մահացավ: Հուլիսին և օգոստոսին վարակի նոր ալիքը հարվածեց Հարավին՝ գերծանրաբեռնելով հիվանդանոցները տարածաշրջանի մեծ մասում: 2021 թ. ձմռանը վարակի բռնկումը դարձավ համազգային: Հունվար-փետրվար ամիսներին ամեն օր գրանցվում էին հարյուրհազարավոր նոր դեպքեր, և յուրաքանչյուր օր գրեթե երեք հազար ամերիկացիներ էին մահանում: Գարնանը բռնկումը նահանջեց, և դեղագործական լաբորատորիաները, դաշնային դրամական աջակցությամբ, թողարկեցին նոր պատվաստանյութեր: Գարնան վերջին սկսվեցին զանգվածային պատվաստումները: Սակայն շատ ամերիկացիներ, որոնք հետևում էին սոցիալական ցանցերում տարածված դավադրության տեսություններին կամ պարզապես պատվաստումները կապում էին հակաթրամփյան քաղաքականության հետ, հրաժարվեցին պատվաստումներից: Եվ այսպես, համաճարակը դեռ շարունակվում էր, և նոր վարակիչ շտամներ տարածվեցին բնակչության շրջանում: Մինչև 2021 թ. ամառվա վերջը, ըստ պաշտոնական տվյալների, ավելի քան 600,000 ամերիկացի մահացավ ՔՈՎԻԴ-19-ից:

XXI դարի մարտահրավերները. նոր հորիզոններ

XXI դարի առանցքային համաշխարհային մարտահրավերներից է կլիմայի փոփոխության և գլոբալ տաքացման հիմնախնդիրը: 1970-1980-ականներին մասնագետները հիմնավորել էին մարդածին գլոբալ տաքացման տեսությունը: Ի վերջո, 1995 թ. ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության միջկառավարական հանձնախումբը եզրակացրեց, որ գոյություն ունի «մարդկային նկատելի ազդեցություն գլոբալ կլիմայական համակարգի վրա»: Այս եզրակացությունը, ըստ էության, գիտական համաձայնության արդյունք էր: 2007 թվականին Կլիմայի փոփոխության միջկառավարական հանձնախումբն ապացույցները համարեց «միանշանակ» և նախազգուշացրեց, որ, հավանաբար, կլիմայի փոփոխությունը երկարաժամկետ հեռանկարում կգերազանցի բնական, կառավարվող և մարդկային համակարգերի հարմարվելու հնարավորությունները:

XXI դարում կլիմայական փոփոխությունը դարձավ հանրային քննարկման և քաղաքականության մշտական և հիմնական թեմաներից: Կլիմայի

փոփոխության հիմնախնդիրը հանրաճանաչ էր դարձել մեդիա լուսաբանումների և հանրամատչելի վավերագրական ֆիլմերի շնորհիվ, որոնց թվում նշանակալի էր «Անհարմար ճշմարտություն» (An Inconvenient Truth) փաստագրական ֆիլմը՝ հիմնված Ալբերտ Գորի համանուն գրքի վրա: Կլիմայի փոփոխության հիմնախնդրին անդրադարձը դարձավ ամերիկյան ձախերի նշածողը և աջերի ժխտման կետը: Ամերիկյան հասարակական կարծիքը և քաղաքական գործողությունները դեռ շատ հետ էին մնում գլոբալ տաքացման վտանգների վերաբերյալ գիտական համաձայնությունից: Պահպանողական քաղաքական գործիչները, պահպանողական վերլուծական և ուղեղային կենտրոնները, էներգետիկ ընկերությունները ամերիկյան հասարակական կյանքում կասկածներ էին սերմանում և հարցականի տակ էին դնում խնդրի հրատապությունն ու ծավալները: Կլիմայի փոփոխության դեմ պայքարի դիմադրության հիմնավորումը մեծ մասամբ տնտեսական է: Թիկունքում ունենալով առաջանցիկ դիթմով զարգացող Չինաստանին՝ մեծաթիվ ամերիկացիներ հրաժարվեցին զուհաբերել անմիջական տնտեսական աճը երկարաժամկետ բնապահպանական անվտանգության համար:

Դարասկիզբը նշանավորվեց նաև միաբևեռ աշխարհակարգի աստիճանական քայքայմամբ: Թեև Միացյալ Նահանգները շարունակեց մնալ համաշխարհային միակ գերտերությունը, այդուհանդերձ աշխարհին այլևս բազմաբևեռ էր՝ հարդյունս աճող տարածաշրջանային գերտերությունների: Այս համատեքստում Սեմուել Հանթինգթոնն ԱՄՆ-ն բնութագրում էր իբրև «միայնակ գերտերություն»:

XXI դարում ԱՄՆ-Չինաստան հարաբերությունները բնութագրվում են հակասություններով և փոխադարձ կախվածությամբ: Խորհրդային Միության փլուզումից հետո Չինաստանը հանձն առավ արդիականացման ճանապարհը, իսկ տնտեսական առաջանցիկ զարգացումը և բարեկեցության մակարդակի աճը ամրապնդեցին գործող հասարակարգը երկրում: Ազատականացնելով և սուբսիդավորելով իր տնտեսության մեծ մասը և ներգրավելով հսկայական օտարերկրյա ներդրումներ՝ Չինաստանը վերջին մի քանի տասնամյակներին գրանցեց հսկայական տնտեսական աճ: 2000 թվականին Չինաստանի ՀՆԱ-ն ԱՄՆ-ի ՀՆԱ-ի շուրջ մեկ ութերորդն էր: Ընդամենը մեկուկես տասնամյակում Չինաստանի ՀՆԱ-ն մոտեցավ ԱՄՆ-ի ՀՆԱ-ին: Ելնելով աճի տեմպերից և միտումներից՝ վերլուծաբանները ենթադրում են, որ Չինաստանի տնտեսությունը շուտով կշրջանցի Միացյալ Նահանգների տնտեսությանը: Ամերիկյան մտահոգությունները Չինաստանի քաղաքական համակարգի վերաբերյալ պահպանվում են,

սակայն տնտեսական շահը հաճախ ավելի կարևոր է ամերիկացիների համար: Չինաստանը դարձել է ԱՄՆ-ի առաջատար առևտրային գործընկերներից մեկը: Աճել են նաև մշակութային և կրթական փոխանակումները, և ամեն տարի ավելի ու ավելի շատ ամերիկացիներ են այցելում Չինաստան:

XXI դարասկզբի հանրային տրամասույթի մեծ մասը վերաբերում էր նոր «հազարամյակի սերնդին» (“Millennials”) և «Չեթ սերնդին» (“Generation Z”)՝ այն սերունդներին, որոնք հասունացել էին նոր հազարամյակի ընթացքում: Ժողովրդագիրները, ընկերաբաններն ու քաղաքագետները շարունակում էին հետաքրքրվել և մեկնաբանել, թե ինչ է բերելու նոր սերունդը:

Հազարամյա վերաբերմունքի փոխակերպությունը համասեռամոլության և միասեռականների ամուսնության նկատմամբ արտացոլում էր վերջին տարիների հանրաճանաչ վերաբերմունքի ամենադրամատիկ փոփոխություններից մեկը: 2015 թվականի հունիսին ԱՄՆ Գերագույն դատարանը՝ 5-ն ընդդեմ 4-ի, որոշում կայացրեց *Օբերգեֆելն ընդդեմ Հոջեսի* (Obergefell v. Hodges) գործով, որ միասեռ ամուսնություններն ԱՄՆ-ում սահմանադրական իրավունք են: Ամերիկացիների գրեթե երկու երրորդը պաշտպանում էր այդ դիրքորոշումը:

Ազատական ընկերային կեցվածքից գատ, թերևս, ոչինչ այնքան չէր բնորոշում երիտասարդ ամերիկացիներին, որքան տեխնոլոգիաների ընդունումը: Հատկապես համացանցի լայն կիրառումն ավելի շատ փոխակերպեց առօրյա կյանքը և աշխատանքային միջավայրերը: 2007 թվականին «Էյփլ այֆոնի» (Apple iPhone) թողարկումը հանրայնացրեց սմարթֆոնների (խելացի հեռախոս) օգտագործումը. մինչև 2011 թվականը ամերիկացիների մոտ մեկ երրորդը ուներ բջջային հաշվողական սարք, իսկ չորս տարի անց՝ երկու երրորդը: Սոցիալական մեդիայի առաջացման հետ մեկտեղ՝ ամերիկացիներն օգտագործում էին իրենց խելացի հեռախոսներն ու համակարգիչները հին ծանոթների հետ կապի մեջ մնալու, ընկերների հետ գրուցելու, լուսանկարներ տարածելու և աշխարհը մեկնաբանելու, ինչպես նաև նորությունների և տեղեկատվության հասանելիության համար: Հավակնոտ նոր առցանց մեդիա ընկերությունները, որոնք ձգտում էին հաճախումներից և գովազդից ստացվող եկամուտների, ստեղծում էին սադրիչ կամ սկանդալային վերնագրերով դյուրամարս պատմություններ, որոնք կարող էին թվիթերով կամ ֆեյսբուքով լայնորեն տարածվել համախոհների առցանց համայնքներում: Ավանդական մեդիա ընկերությունները, որոնք ստիպված էին կրճատել իրենց խմբագրական

կազմերը, որպեսզի համապատասխանեին կրճատվող եկամուտներին, պայքարում էին իրենց նոր առցանց սպառողներին հարմարվելու համար:

Սոցիալական մեդիա հավելվածների միջոցով պատմություններ կիսելու անհատների կարողությունը հեղափոխեց տեղեկատվական լանդշաֆտը. սմարթֆոնների տեխնոլոգիան և լրատվամիջոցների ժողովրդավարացումը վերափոխեցին քաղաքական բանավեճերը և բարձրացրին քաղաքական նոր հարցեր: Ուղիղ եթերների ու տեսանյութերի նկարահանման հեշտ հասանելիությունը և ավանդական լրատվամիջոցներից դուրս պատմությունների արագ տարածման հնարավորությունը նոր ուշադրություն սևեռեցին քաղաքային ոստիկանության աշխատակիցների և աֆրոամերիկացիների լարված ու հաճախ բռնի հարաբերությունների վրա: 2014 թ. Միսսուրի նահանգի Ֆերգյուսոն քաղաքում Մայքլ Բրաունի մահը բողոքի ցույցեր առաջացրեց և սևեռեց համազգային ուշադրությունը խնդրի վրա: Թերևս դա դարձավ սոցիալական մեդիա հարթակների ուժի վկայությունը, ինչպես, օրինակ, թվիթերյան #blacklivesmatter հաշթեգը դարձավ բողոքի շարժում ցուցարարների, իսկ #alllivesmatter և #policelivesmatter հաշթեգերը՝ նրանց քննադատների համար: Բազմաթիվ տեսանյութեր, որոնք փաստում էին ոստիկանների ձեռքով սևամորթ տղամարդկանց մահերը, շարունակ տարածվում էին սոցիալական ցանցերում: 2020 թ. մայիսի 25-ին դեռահաս Դարնելլա Ֆրեյզերը տեսանկարահանել էր Մինեսոտայի ոստիկան Դերեկ Շովինին՝ ծունկը դրած Ջորջ Ֆլոյդի պարանոցին: «Ես չեմ կարող շնչել», - ասում էր Ֆլոյդը: Չնայած իր և ներկաների խնդրանքներին՝ Շովինը ինը րոպե ծունկը պահել էր Ֆլոյդի վզին: Ֆլոյդը մահացավ, իսկ սարսափելի կադրերը ցնցեցին երկիրը:

Չնայած ՔՈՎԻԴ-19-ի տարածումը դանդաղեցնելու պետական և տեղական արգելափակումներին՝ ինքնաբուխ բողոքի ցույցեր բռնկվեցին ամբողջ երկրում: Հուժկու բողոքի ցույցեր ծավալվեցին ոչ միայն խոշոր քաղաքներում, այլև փոքր քաղաքներում և գյուղական համայնքներում: Ընդհանուր առմամբ, 2020 թ. ամռանը շուրջ 25 միլիոն ամերիկացիներ մասնակցեցին ռասայական արդարության ցույցերին: Եվ այնուամենայնիվ, չնայած բողոքի երթերի ծավալներին, պետական քաղաքականության մեջ լուրջ փոփոխություններ անմիջապես չհետևեցին: «Համակարգը» դիմադրեց «համակարգային ռասիզմին» անդրադառնալու կոչերին: Այնուամենայնիվ, տեղական հաստատությունները որոշ ջանքեր գործադրեցին: Քրեական արդարադատության բարեփոխիչները հաղթեցին շրջանային դատախազների ընտրություններում: Ոստիկանության ստորաբաժանումները պարտավորեցրին իրենց աշխատակիցներին համազգեստնե-

րի վրա տեսախցիկներ կրել: Միևնույն ժամանակ, հարավի դեմոկրատ քաղաքներն ու համայնքները ձերբազատվեցին իրենց Համադաշնության պատկեր-խորհրդանիշներից: Սակայն ամերիկյան հասարակական կյանքում խորապես ներկառուցված անքակտելի ռասայական անարդարությունները, մասնավորապես հարստության, կրթության, առողջության և այլ միջոցների ռասայական անհավասարությունները պահպանվել էին, ինչպես դրանք գոյատևում էին Միացյալ Նահանգներում արդեն հարյուրամյակներ:

Երբ «Սևամորթների կյանքը կարևոր է» (Black Lives Matter) շարժումը գրավեց համազգային ուշադրությունը, առաջացավ սոցիալական մեդիայի մեկ այլ երևույթ՝ «Ես նույնպես» (#MeToo) շարժումը, որը հանդես էր գալիս կանանց իրավունքների պաշտպանության և սեռական ոտնձգությունների դեմ պայքարի կարգախոսներով՝ հաճախ վերածվելով անհանդուրժողականության ու արմատական միջոցների քարոզչության և երբեմն էլ տեղի տալով չարաշահումների ու տղամարդկանց նկատմամբ անհիմն մեղադրանքների: Կանանց իրավունքների խախտումների վերաբերյալ զրոյական հանդուրժողականության այս շարժումը մեծամասամբ բռնկվեց Դոնալդ Թրամփի ընտրության և նախագահության արդյունքում: Թրամփի երդմնակալության հաջորդ օրը մինչև մեկ միլիոն մարդ հավաքվեց Վաշինգտոնում՝ կանանց երթի համար, և միլիոնավորներ բողոքի ցույցերի դուրս եկան ողջ երկրում:

Թրամփի նախագահության ընթացքում ռասայական և գենդերային հարցերից զատ, հանրային տրամասույթը գրավեց մեկ այլ առանցքային քաղաքական խնդիր՝ ներգաղթը: Նույնիսկ եթե հականերգաղթային նախաձեռնությունները, ինչպիսիք էին Կալիֆորնիայի առաջարկը (California's Proposition 187 (1994)) և Արիզոնայի առաջարկը (Arizona's SB1070 (2010)), արտացոլում էին սպիտակամորթ ամերիկացիներից շատերի անհանգստությունը, երիտասարդ ամերիկացիները, որոնք էթնոռասայական առումով արդեն ավելի բազմազան շերտ էին, ավելի բաց էին ներգաղթի և բազմազանության հարցում: 1960-ական թվականներից ի վեր, երբ Լինդոն Ջոնսոնի «Մեծ հասարակության» հայեցակարգը ազատականացրեց ներգաղթային օրենքները, Միացյալ Նահանգների ժողովրդագրությունը փոխվել էր:

2012 թվականին բոլոր ամերիկացիների գրեթե մեկ քառորդը ներգաղթյալներ էին կամ ներգաղթյալների զավակներ: Նրանց կեսը եկել էր Լատինական Ամերիկայից: Միացյալ Նահանգների շարունակվող իսպանականացումը (Hispanicization) և ոչ իսպանախոս սպիտակամորթներ-

րի (non-Hispanic whites) անընդհատ նվազման միտումները գերիշխում էին ժողովրդագրության դիտորդների և փորձագետների խոսույթում: Մինչև 2013 թվականը ԱՄՆ-ի բնակչության 17 տոկոսն իսպանախոս էր (Hispanic): 2014 թվականին լատինամերիկացիները (Latinos) գերազանցեցին ոչ լատինամերիկացի սպիտակամորթներին՝ դառնալով Կալիֆորնիայի ամենամեծ էթնիկ խումբը: Տեխասի Ռիո Գրանդե հովտի մոտ 1,5 միլիոն բնակչության մեծ մասը տանը խոսում է իսպաներեն, իսկ երեք քառորդը երկլեզու է: Տեխասում լատինամերիկյան ծագումով տեխասցիները շուտով կդառնան նահանգի ամենամեծ էթնիկ խումբը: Այսպիսով, քաղաքական մեկնաբաններն ու ընկերաբանները շարունակում են խորհել, թե ինչ քաղաքական փոխակերպումներ կբերեն ժողովրդագրական այս հիմնարար փոփոխությունները, երբ լատինամերիկացիները սկսեն քվեարկել ավելի մեծ թվերով:

Ամփոփենք: Թեև Խորհրդային Միության կազմաքանդման հետևանքով ԱՄՆ-ն մնաց իբրև միակ գերտերություն, և աշխարհը միառժամանակ միաբևեռ էր, սա դեռ «պատմության ավարտը» չէր: Նոր աշխարհակարգը չբերեց ո՛չ համաշխարհային խաղաղություն, ո՛չ էլ կայունություն: 2001 թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչական հարձակումները Միացյալ Նահանգներին ներքաշեցին երկարատև հակամարտությունների մեջ ամբողջ աշխարհում: XXI դարի սկզբին «պատմությունը վերադարձավ» աստիճանաբար աճող բազմաբևեռ աշխարհակարգի և մասամբ էլ արդյունավետ ավտորիտար համակարգերի հաջողությունների տեսքով: 1990-ական թվականներին Ամերիկայի Միացյալ Նահանգներում և Արևմտյան քաղաքակրթության այլ հասարակություններում տիրող լավատեսությունն ապագայի հանդեպ փոխակերպվեց անհանգստության՝ հարափոփոխ աշխարհում ամերիկյան «միայնակ գերտերության» դերի և հնարավորությունների վերաբերյալ: XXI դարը հավակնում է դառնալ «ասիական դարաշրջան»:

Միացյալ Նահանգների ներքին կյանքում տնտեսական անկումը, դանդաղ վերականգնումը, աշխատավորների եկամուտների լճացումը և ընդհանուր հոռետեսությունը ապագայի նկատմամբ վարակեցին ամերիկյան ընկերային կյանքը, իսկ հակասական քաղաքականություններն ու մշակութային բաժանումները վատթարացրին հասարակական ներդաշնակությունը, ինչն էլ ուղղակիորեն հանգեցրեց 2021 թվականի հունվարի 6-ին ԱՄՆ Կապիտոլիումի վրա հարձակմանը:

Եվ այնուամենայնիվ, պատմության հոսքը փոխում է իր ընթաց-

քը. միտումները փոխվում են, հասարակությունները փոխվում են, իրադարձությունները փոխվում են: Նոր սերունդներն իրենց հետ բերում են նոր հեռանկարներ և տարածում են նոր գաղափարներ ու տեսլականներ ապագայի վերաբերյալ: Աշխարհը կանխորոշված չէ: Այն պատմության արդյունքն է՝ ավելի երկար, խորքային ու ընդլայն համաշխարհային պատմության կայացման արդյունական միջավայրը: Այսպիսով, ամերիկյան պատմության նոր գլուխը շարունակում է գրվել ու վերաշարադրվել աճի և անկման, ազգային մարտահրավերների ու պատասխանների, անդրծովյան պատերազմների և նոր սերնդի կայացման գործընթացներում:

SUMMARY

HISTORY OF THE UNITED STATES OF AMERICA TEXTBOOK

This textbook presents the formative periods and perspectives of American history from the colonial era to contemporary times, from the establishment of the thirteen colonies to a global superpower. It proceeds with the origins of American nationhood, presents and comprehensively analyzes the unity and diversity of American society and how differences in international affairs, geography, ethnicity, race, religion, community, class, society, economy, culture, and human experience have shaped the historical comprehension, self-understanding, and collective memory of the United States. Based on a bunch of secondary and key primary sources and formative documents of the history of the United States, the textbook presents how foreign policy doctrines, geopolitics, class and race relations, socio-philosophical ideas and political ideologies, developments of social and economic systems, scientific and technological innovations influenced the course of the American history. Looking at global interactions across time and space within the context of world history, this textbook provides a deeper understanding of the historical, international, geopolitical, cultural, and socio-economic forces that shaped the present United States of America. It provides an opportunity to study the emergence of the American nation and the impulses and stages of its historical development.

The textbook presents the fundamental aspects and structural cycles of American history thematically and chronologically. Nevertheless, history is not just a simple memorization of events, names, and dates. The study of history is an extremely complex task and an extremely dynamic process. Historians pose historical problems, and research questions, weigh the evidence of primary sources, examine and challenge competing interpretations, and argue their conclusions. Therefore, history is also an ongoing discourse about the narratives of the past. Old conclusions are subjected to the scrutiny of new shreds of evidence, new perspectives, new references, new theories, and interpretations. Historical interpretation requires method, rigor, perspective, and reverse perspective. The study of international and transnational processes is extremely important for the understanding of world history. The names of the leaders and the dates of the events may not change, but the weight that scholars give them and the context in which they are formed are constantly evolving.

The other idea, which is reflected in the textbook, concerns the fundamental processes of evolution through revolutions, i.e. the United States managed to evolve stronger due to the accurate assessment of internal and external crises. Unlike other historical environments and entities, the United States has managed to turn those crises into incentives for development. The past and the present of this country unfold as a historical process: from crisis to crisis. And every time after an 'apparent end' it appears in a new historical outfit.

The study of American history enables access to one of the richest repositories of human experience, as the laboratory of American experience and the American nation-building endeavor encompasses the implementation of the most innovative achievements of Western civilizational values and socio-political ideas and intellectual thought. They have a pan-historical significance and content; therefore, they are universal for understanding the historical development paths of societies formed on the basis of republican ideals. Accordingly, the textbook identifies and explains the major historical processes underlying colonialism, the American Revolution, and the creation of the American nation, as well as the major impetuses of Manifest Destiny, the westward expansion, the 'civilizing mission' and the enlargement of the American frontier. The textbook consists of 22 chapters that start with the discovery of the New World, clashing civilizations, colliding cultures, competing empires, and different paradigms of European colonization exemplified with New Spain, New France, and New England. It covers, presents, and interprets the most important events and processes of American history, the main areas of social agreements and disagreements, co-existential convergencies and divergencies, intra-societal fusion and division; the sectional crisis and the deep causes of the Civil War; the Industrial Revolution and Capitalism; the Age of Imperialism and the First World War; the Great Depression and the paradigm for overcoming it; the Second World War and the Cold War; the New World Order and the Old; the only superpower and the lonely superpower; the end of history and the return of it.

Thus, this comprehensive overview offers a deeper understanding of continuity and change, tradition and innovation in American history, and how the United States has transformed from the perspective of the early republic to the present. Hence, the civilizational, socio-economic, and geopolitical heritage of the United States, as well as the impact of intercultural encounters on the transformation of American society is evaluated within the context of world history.

Հանձնարարվող գրականության ցանկ

1. ԱՄՆ անկախության հռչակագիր – 240, Պատմության հարցեր – 4, Տարեգիրք. Խմբագիր՝ Ա. Ա. Ստեփանյան: Երևան: «Զանգակ» հրատ., 2017:
2. Եփրեմյան Տ., Վուդրո Վիլսոնի դոկտրինը և նոր աշխարհակարգը: Հոբելյանական գիտական նստաշրջանի հոդվածների ժողովածու: Երևան: ԵՊՀ հրատ., 2011, էջ 144-151:
3. Boyer, Paul S. *American History: A Very Short Introduction*, Illustrated edition. New York and Oxford: Oxford University Press, 2012.
4. Channing, Edward. *A Short History of the United States*. Pinnacle Press, 2017.
5. Combs, Jerald A. *The History of American Foreign Policy from 1895*, 4th Edition (Routledge, 2012).
6. Corbett, P. Scott at al., *U.S. History*, textbook. Houston, Texas: Rice University, OpenStax, 2021. (<https://openstax.org/details/books/us-history>).
7. *Documents for America's History, Volume 1: To 1877*, Seventh Edition. Ed. by Melvin Yazawa, James A. Henretta, Rebecca Edwards, Robert O. Self. Boston and New York: Bedford / St. Martin's, 2011.
8. *Documents for America's History, Volume 2: Since 1865*, Sixth Edition. Ed. By Kevin J. Fernlund, James A. Henretta. Boston and New York: Bedford / St. Martin's, 2008.
9. *Encyclopedia of American Foreign Policy: Studies of the Principal Movements and Ideas*. 2nd ed. Ed. by Alexander DeConde et al. New York, Scribner, 2002.
10. Ferguson, Niall. *Civilization: The West and the Rest* (New York: Penguin Press, 2011).
11. Foner, Eric. *Give Me Liberty!: An American History*, Full Sixth Edition. New York: W.W. Norton & Company, 2019.
12. Grant, Susan-Mary. *A Concise History of the United States of America*. Cambridge Concise Histories. Cambridge: Cambridge University Press, 2012.
13. Henretta, James A., Rebecca Edwards, Robert O. Self, & Eric Hinderaker. *America: A Concise History*, Combined Volume, Sixth edition. New York: Bedford/St. Martin's, 2014.
14. Hullar, Link and Scott Nelson. *The United States: A Brief Narrative History*,

- 3rd Edition. Wiley-Blackwell, 2011.
15. Kissinger, Henry. *Diplomacy*. New York, Simon & Schuster, 1994.
 16. Remini, Robert V. *A Short History of the United States: From the Arrival of Native American Tribes to the Obama Presidency*. New York: Harper Collins, 2009.
 17. Schlesinger, Arthur Jr. *The Cycles of American History*. New York: Houghton Mifflin Harcourt, 1999.
 18. *The American Yawp: A Massively Collaborative Open U.S. History Textbook*, Vol. 1: To 1877 / Edited by Joseph L. Locke and Ben Wright. Stanford, California: Stanford University Press, 2019. 456 p.
 19. *The American Yawp: A Massively Collaborative Open U.S. History Textbook*, Vol. 2: Since 1877 / Edited by Joseph L. Locke and Ben Wright. Stanford, California: Stanford University Press, 2019. 464 p.
 20. Иванян Э. А., *История США*. Москва: Дрофа, 2004.
 21. Ремонд, Рене. *История Соединенных Штатов Америки*. Москва: АСТ Астрель, 2006.
 22. Согрин В. В., *История США: учебник*. М.: Международные отношения, 2019.

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՄԵՐԻԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

ՏԻԳՐԱՆ ՌՈՒԲԵՆԻ ԵՓՐԵՄՅԱՆ

ԱՄՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Դասագիրք

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. խմբագիր՝ Ա. Հովակիմյան

Հեղինակը հաստատում է, որ ծանոթ է
«ԵՊՀ գրահրատարակչական քաղաքականությանը»,
և գրքում առկա փաստերը, դիրքորոշումները, կարծիքները
շարադրված են հեղինակային իրավունքի և էթիկայի միջազգայնորեն
ընդունված սկզբունքների պահպանմամբ:

Ստորագրված է տպագրության՝ 08.04.2024:

Չափսը՝ 70x100 $\frac{1}{16}$: Տպ. մամուլը՝ 34:

Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.y-su.am



Национальная библиотека
медицины
pubmed.ncbi.nlm.nih.gov